

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

Ելիզավետա Ազարի Միզոբյանը ծնվել է 1954 թ. նոյեմբերի 26-ին, Սյունիսկանկերք քաղաքում:

1971թ. ավարտել է Սյունիսկանկերքի հ. 2 միջև. դպրոցը:

1973-1978թ.թ.-ին սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Միաժամանակ ավարտել է նույն համալսարանի արվեստագիտության բաժինը՝ սրանալով արվեստագետի որակավորում:

1978թ. Կեղևախիսվել է Սյունիսկանկերք եւ աշխատանքի նշանակվել Մուրացուկի անվան քաղաքային գրադարանում՝ որպես գրադարանի վարիչ: Նույն թվականից էթիկա եւ էսթետիկա է դասավանդել Սյունիսկանկերքի Մայրաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանում:

1985թ. աշխատանքի է անցել Սյունիսկանկերքի հ. 2 միջև. դպրոցում որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի: 1985-1989 թ.թ.-ին համաարեղությանը աշխատել է ԱրՊՆ հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում՝ որպես հայոց լեզվի դասախոս:

1997-1998 թ.թ.-ին աշխատել է Սյունիսկանկերքի քաղաքապետարանի կրթության բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ:

2000թ.-ին «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթում մասնակցել է մայրաքաղաքի հայոց լեզվի եւ գրականության լավագույն ուսուցիչ:

2000-2002 թթ.-ին եղել է մայրաքաղաքի «Նայոց լեզվի եւ գրականության» առարկայական մեթոդախաղորման նախագահ:

2002թ.-ից աշխատել է ԱրՊՆ հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում՝ որպես դասախոս: 2005 թ.-ին ՆՂ ԳԱԿ Հր. Անտոյանի անվան Լեզվի ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Կ. Մելիք-Շահնազարյանի սրբապատկերների լեզուն» թեմայով եւ սրացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական ստիպենդիա:

Ղեկնակ է գիտական մի շարք հոդվածների եւ երկու գրքի՝ «Տնրաջի Խոսանի «Զուռնա-Տնրաջի» լեզվական արվեստը» /2007թ., Դիզակ, Սյունիսկանկերք/ եւ «Նայոց լեզու, Գործնական աշխատանքների ձեռնարկ» /2007թ., Դիզակ, Սյունիսկանկերք/:

2013 թվականից աշխատում է ԱՄ Կրթության, գիտության եւ սպորտի նախարարության կրթության պետական կենտրոնում որպես պետական կենտրոնից հայոց լեզվի եւ գրականության մասնագետ:

2014թ.-ին ԱՄ ԿԳՄ նախարարության կողմից պարգևատրվել է «Երկարամյա մանկավարժական գործունեության համար» պատվոգրով եւ հուշամեդալով:

Սույն ձեռնարկը հեղինակի երրորդ գիրքն է:



ԵԼԻԶԱՎԵՏԱ ՄԻԶՈՅԱՆ

ԴԻՏԵԼԻՖԻԵՐԻ ԽԼԶՄԵՐՈՒԿՈՒՄ



ԵԼԻԶԱՎԵՏԱ ՄԻՐԶՈՅԱՆ

**ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ**

Ստեփանակերտ
«Դիզակ պլյուս» հրատարակչություն
2019

ՀՏԳ- 373:378
ԳՄԳ- 74.2+74.58
Մ 763

ՄԻՐՉՈՅԱՆ Ե.

Մ 763 Գիտելիքների խաչմերուկում, Ե.Սիրզոյան.- Ստեփանակերտ:
Գիգակ պլյուս, 2019.- 328 էջ:

Աշխատանքը, որպես ուսումնասովորական ձեռնարկ, հասցեագրվում է հասարակության լայն շրջաններին, կրթության, դաստիարակության խնդիրներով մտահոգված մասնագետներին, ուսուցիչներին, ուսանողներին, դպրոցականներին:

Ձեռնարկում ամփոփված են տարբեր թեմաներին՝ մայրենի լեզվին, գրականությանը, հայրենիքին, հայրենասիրությանը, կրթությանը, դաստիարակությանը, նշանավոր մարդկանց կյանքին ու գործունեությանը, հայ դատին, արվեստի տարբեր ճյուղերին վերաբերող նյութեր, որոնք կկողմնորոշեն ընթերցողին՝ իրեն հետաքրքրող թեմաներից լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ճանապարհին:

ՀՏԳ- 373:378
ԳՄԳ- 74.2+74.58

Մարդու համար ամենաթանկ բանը կյանքն է: Այն նրան տրվում է մեկ անգամ, և պետք է այնպես ապրել, որ տանջալի ցավ չզգաս աննպատակ ապրած տարիների համար, որ մեռնելիս կարողանաս ասել՝ ամբողջ կյանքս ու բոլոր ուժերս տվել եմ աշխարհում ամենահիմնալի բանի՝ մարդկության երջանկության համար:

Ն. Օսպրովսկի

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱԲԵՆ

Աշխատելով որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ապա որպես դասախոս Արցախի պետական համալսարանում՝ ցանկացել եմ ձեռքի տակ ունենալ այնպիսի համապարփակ մի գիրք, որտեղից կարող էի անմիջապես տեղեկություններ ստանալ ինձ հուզող և հետաքրքրող շատ հարցերի և պատասխանների մասին: Տարիներ շարունակ ինձ մտահոգել է այդ միտքը: Անգամ, երբ հրատարակվել են իմ հեղինակած գրքերը՝ «Կոստանդին Մելիք-Շահնազարյանի /Տմբլաչի Խաչան/ «Ջուռնա-Տմբլաչի» լեզվական արվեստը» մենագրությունը և «Հայոց լեզու» գործնական աշխատանքների ձեռնարկը, ես շարունակում էի հետաքրքիր, ոչ հաճախակի շրջանառվող, եզակի փաստեր հավաքել ինձ հետաքրքրող տարբեր թեմաների վերաբերյալ: Այսօր ունեմ նաև տպագրված երկու տասնյակից ավելի գիտական հոդվածներ, բայց կարևորում եմ իմ այս աշխատանքը այն առումով, որ յուրաքանչյուր տողը իմ մեջ հպարտության և հայրենասիրության անափ զգացում է առաջացնում, ես լցվում եմ, իմ երկրի և նրա պատմության, մայրենի լեզվի ու իմ արցախյան բարբառի նկատմամբ աննկարագրելի գորովանքով: Հավատացած եմ, որ այդ տողերը ընթերցող յուրաքանչյուր հայ կունենա նման ապրումներ, կդաստիարակվի այդ զգացումներով, կզգա անչափ մեծ հպարտություն ու պատասխանատվություն իր երկրի, ժողովրդի ու լեզվի հանդեպ: Մի՞թե դա չէ մեր՝ մտավորականության, և յուրաքանչյուր քաղաքացու, ծնողի գերնպատակը. ունենալ այնպիսի սերունդ, որը կլինի ավելի զարգացած, ավելի հայրենասեր, ավելի դիմակայուն ժամանակների փորձություններին: Իմ մեծագույն երազանքն է՝ անշահախնդրորեն այս գիրքը՝ որպես օժանդակ ձեռնարկ, տեսնել առանձնապես յուրաքանչյուր ուսուցչի սեղանի վրա, օգ-

նել, լրացնել նրա աշխատանքը կրթության ու դաստիարակության վեհ ու դժվարին գործում: Աշխատանքի բերումով հաճախ են լինում Արցախի ծայրամասային գյուղերի դպրոցներում, որտեղ դժվար է կազմակերպել ուսումնական գործընթացը՝ աշակերտների սակավակազմ լինելու ու համացանցի բացակայության պայմաններում: Եվ ուզում են ասել. «Ուսուցիչ և յուրաքանչյուր ո՞ք, ով ձեռքը կառնի այս գիրքը, ես ձեզ հետ են, ձեր կողքին»:

Աշխատության մեջ զետեղված նյութերը, տեղեկությունները, չափաձոհ հատվածները, հուշերը, փաստերը շատ տարածված չեն մամուլում: Գրանք պեղվել, անցել են իմ գիտական, մանկավարժական փորձի ու վարպետության բովով ու նոր միայն ներկայացվել ընթերցողին: Իհարկե, 21-րդ դարում համացանցի միջոցով յուրաքանչյուրին հասանելի է ամեն մի տեղեկատվություն, սակայն գիտության ու արվեստի տարբեր բաժիններին, հայրենիքին՝ Հայաստանին ու Արցախին, նրա գրականությանն ու լեզվին, հայ դատին ու նեմեսիսին, հայոց առաջնորդների և նրանց՝ պաշարի կոչող խոսքերին, կրթության, դաստիարակության, բարեկիրթ վարվելաձևին, նշանավոր գործիչների հայրենանվեր գործունեությանը վերաբերող պատրաստի և իրենց տարածվածությամբ եզակի նյութերը ձեռքի տակ ունենալն ավելի են կարևորում:

Գրքի յուրաքանչյուր բաժին ունի իր ենթաթեմաները: Օրինակ՝ առաջին բաժնում խոսվում է մայրենի լեզվի գեղեցկության ու կարևորության մասին: Այստեղ ընդգրկված են հայոց մեծերի, ինչպես նաև այլազգի լեզվաբանների մեծարանքի խոսքերը հայոց լեզվի հարստության մասին: Ներկայացված են առածներ և ասացվածքներ լեզվի մասին, խորհուրդներ, աշակերտական և ուսանողական խոսքի վթարների օրինակներ, բառերի «կենսագրությունից», հայոց տոմարի և գործող ամսանունների, շաբաթվա օրերի անվանումների բացատրություններ, խոսվում է հայերենում գործածվող որոշ օտարաբանությունների ու օտար բառերի հայերեն համարժեքների մասին, խոսքի թերությունների և որոշ բառերի ու արտահայտությունների ճիշտ ու սխալ կիրառությունների, հայերենի ուղղագրության պատմության մասին: Այնուհետև հաջորդում են Արցախի բարբառի փայլի ու գեղեցկության մասին տողերը, տրվում են բարբառային որոշ բառերի բացատրություններ: Այս բաժնում խոսք կա նաև մի շարք մեծանուն լեզվաբանների մասին:

Երկրորդ՝ «Գրողների դիմանկարներ» բաժնում զետեղված են հայ գրողների մասին ասույթներ, գրողների՝ իրենց արվեստի կարևորության մասին նշող տողեր, որոշ գրողների կեղծանունների, շրջասության վերածված անունների, նրանց արտաքինի նկարագրության մասին, հայ գրականության մեջ հայ կնոջ և մոր կերպարի մասին՝ որպես արժեքային համակարգ: Հաջորդում են Կոմիտասի անվան հայ գործիչների, Եռաբլրի պանթեոնի, Խոջիվանքի գերեզմանատան մասին պատմությունները և վերլուծությունները, գրականագիտական որոշ թեմաների պարզաբանումներ:

Գրքի երրորդ՝ «Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես» բաժնում ընթերցողը ծանոթանում է՝ ինչ է հայրենիքը, ինչու է երկիրը կոչվում Հայք, ով է հայը խորհրդածություններին, հայոց պետականության խորհրդանիշներին և համապատասխան չափածո հատվածներին, Հայրենիք-Սփյուռք կապին՝ «Երբ միասին ենք, ուժեղ ենք» կարգախոսով, զինվորների հայրենասիրական թեմայով շարադրություններին, բիրլիական Արարատին նվիրված չափածո հատվածներին, հայկական որոշ տեղանվանումների հետ կապված ավանդություններին, հայոց խորհրդանիշներ ծիրանենու և սոսենու մասին պատմություններին, հայ ժողովրդի հայագգի և այլագգի մեծ բարեկամների բարեգործություններին: Եվ այսպես՝ յուրաքանչյուր բաժին ունի յուրահատուկ կառուցվածք և նպատակ՝ ընթերցողին տոգորելու հայրենասիրությամբ և զինելու զիտելիքների պաշարով:

Դեռևս մանուկ հասակից սիրել են ուսուցչի աշխատանքը, դպրոցական իմ բոլոր շարադրություններում երագել են դառնալ ուսուցիչ, ստացել են ինձ դասավանդած լուսահոգի ուսուցիչներիս օրհնությունը իմ իդձերի իրականացման գործում: Իմ առջև փակելով այլ ճանապարհներ, և հավատարմությամբ, սիրով ու նվիրվածությամբ կրելով իմ մանկական, պատանեկան, հասունացած տարիներիս լուսավոր ջահը, այժմ հպարտությամբ կրում են Ուսուցիչ վեհ կոչումը: Ուսուցչի իմ աշխատանքը ես կատարել են խանդավառությամբ և ստեղծագործաբար: Երբեք չեմ հոգնել, չեմ ձանձրացել, և ասոված ոչ արասցե, չեմ ամսոսացել այս դժվարին մասնագիտությունն ընտրելու համար: Համոզված եմ, որ իր աշխատանքը վերլուծող ուսուցչի մոտ չի կարող չառաջանալ հետաքրքրություն դեպի իր փորձի տեսական իմաստավորումը, ձգտում՝ բացահայտելու աշակերտների զիտելիքների ու իր մանկավարժական

աշխատանքի միջև պատճառահետևանքային կապերը: Մանկավարժական աշխատանքիս տարիներին միշտ հետևել, ուսումնասիրել և կիրառել եմ մասնագիտական, մանկավարժական ու մեթոդական գրականություններում երևան եկած նորը, առաջավորը, օրինակելին: Ունեմ հոդվածներ, բեմագրեր, վիկտորիաներ, գրականագիտական և լեզվաբանական ուսումնասիրություններ: Իմ աշխատանքում առաջնորդվում եմ «Քո ունեցածը նվիրիր մարդկանց, աշակերտներիդ, որովհետև ինչ քաբցնում ես՝ կորած է, ինչ տալիս ես՝ քոնն է» սկզբունքով: Ուսուցիչն ապրում է այնքան ժամանակ, քանի դեռ սովորում է: Երբ մա դադարում է սովորել, նրա մեջ մահանում է ուսուցիչը:

Իմ մանկավարժական գործունեության արդյունքում եկել եմ այն հետևության, որ կյանքում ոչինչ անհետք ու անհետևանք չի անցնում: Եթե մի օր մի տեղ ծառ ես տնկել, տարիներ հետո դու էլ չէ, ինչ-որ մեկը պիտի նստի նրա շվաքին: Իսկ եթե մի օր մի տեղ մի ճյուղ ես կոտրել, աշխարհի երեսից մի բուռ շվաք, մի քիչ սոսափ կպակասի, ու կխաթարվի տիեզերքի հավասարակշռությունը: Ամեն մարդ աշխարհ է գալիս իր ծառը տնկելու, իր ծառի ճյուղը կոտրողի ձեռքը բռնելու, իրենով տիեզերական հավասարակշռությունը պահպանելու: Ամեն մարդ աշխարհ է գալիս՝ իր հոգու կանչի հետևից գնալու: Հոգու կանչ, ասել է թե՛ կոչում: Եվ յուրաքանչյուրը պետք է խորհի՝ կյանքում ամենակարևորի մասին՝ ո՞րն է իմ կոչումը, իմ էության ձայնը, որին լսել պիտի սովորենք: Գրողն ապրում է իր գրքերում, նկարիչը՝ իր կտավներում, այգեպանը՝ իր այգում: Իսկ ուսուցիչը... Նա ապրում է իր աշակերտների հոգում, նրանց արարքների և մտքերի մեջ: Այս է նրա ստեղծագործությունը և անմահության նրա բաժինը:

Հիշենք՝ մարդիկ անընդհատ ինչ-որ նոր բան են հորինում, և այդպես է կյանքն առաջ գնում: Մենք պետք է գեղեցկացնենք աշխարհը, հետաքրքիր ու բովանդակալից դարձնենք կյանքը, մեր իսկ ստեղծած խնդիրները չփոխանցենք հաջորդ սերունդներին: Մեզնից հետո մեր երեխաները պետք է ավելի լավ աշխարհում ապրեն:

Ելիզավետա Միրզոյան

ՄԱՅՐԵՆԻ՝ ԼԵԶՈՒ, ՄԱՅՐԵՆԻ՝ ԲԱՐԲԱՌ

Ամեն ժողովուրդ ունի իր մայրենի լեզուն: Լեզուն շատ մեծ նշանակություն ունի մեր կյանքում: Հայերիս մայրենին հայոց լեզուն է: Հայոց լեզուն աշխարհի ամենահին, քաղցրաբառ լեզուներից է: Այն շատ գեղեցիկ և հարուստ լեզու է, հայ ժողովրդի մեծագույն հարստությունը: Դիշտ է, շատ կարևոր է, որ մարդ իմանա օտար լեզուներ, սակայն միշտ պետք է հիշի, որ հարազատը իր մայրենին է: Պետք է սիրով պահպանենք մեր մայրենի լեզուն: Իսկ լեզուն պահպանվում է գործածելով, պետք է մտածենք, խոսենք, գրենք, կարդանք, երգենք մաքուր հայերենով, չխառնենք մեր գեղեցիկ լեզվին օտար բառեր: Խոսակցության մեջ տարբեր լեզուների բառեր, արտահայտություններ գործածելը մայրենի լեզվին միայն վնասում է: Ուրեմն եկեք խոսենք մաքուր հայերենով, քանի որ հայերեն լեզուն է համախմբում աշխարհի տարբեր երկրներում գտնվող հայերին:

Մայրենի լեզվի նկատմամբ պատասխանատվության շղթայի մեջ մեզանից ամեն մեկն իր խնդիրն ունի:

Հայ գրողը լավ և տաղանդավոր պիտի գրի: Ընթերցողը նրա գիրքը չի կարդա միայն նրա համար, որ հայերեն է գրված կամ նվիրական թեմա է մարմնավորում: Նաև հայ գրողը պիտի կարողանա հայելին դառնալ մեր բարդ ու դրամատիկ ժամանակի և դիմանա գրականության բարձր չափանիշներին: Ուսուցիչը պետք է խոր ու կայուն գիտելիքներ տա մայրենի լեզվից, աշակերտի մեջ ներարկի մեր լեզվի գեղեցկությունը, ուժն ու նրբությունը, կարողանա նրա ձեռքը տալ գրականությունն զգալու, ընկալելու կախարդական բանալին:

Հայ դերասանը պետք է հմայիչ ու մաքուր հայերենը հնչեցնի բեմից, կինոյի և հեռուստատեսության էկրանից:

Հաճախ, անգամ մտավորական մարդիկ, մեր լեզվի ճակատագրի հոգսերից խոսելու պահին իսկ արտահայտվում են խեղճ ու անօգնական հայերենով: Մեր լեզվի համար բարձր պատասխանատվություն կրող մտավորականության շարքում առաջին տեղը պատկանում է ուսուցչին, մասնավորապես, մայրենի լեզվի և գրականության ուսուցչին: Ինչու՞ մասնավորապես մայրենի լեզվի. այդ պատասխանատվությունը կրում են բոլոր առարկաների ուսուցիչները: Առանց բացառության՝ բո-

լորը: Չի կարելի խեղճուկրակ լեզվով քիմիա կամ մաթեմատիկա սովորեցնել, պատմություն, բնագիտություն կամ աշխարհագրություն:

Հայ ժողովրդի համար, սկսած Մեսրոպ Մաշտոցից, հայերենի ուսուցիչը խորագույն հարգանքի և գնահատության առարկա է եղել: Մայրենի լեզվի ուսուցիչները գյուղի կամ քաղաքի կարևոր դեմքերից են եղել, նրանց խորհրդին են դիմել մարդիկ՝ կյանքի կնճռոտ իրավիճակների պահին: Մեր ճակատագրի ամենադժնդակ ժամանակներում անգամ նրանք հավատարիմ են մնացել ուսուցչի իրենց բարձր առաքելությանը: Այդ բանը հաստատող բազում վկայություններից է հետևյալ պատմությունը.

«Մեռավ Տեր-Մինասը՝ գյուղի միակ ուսուցիչը: Գյուղն ու վեց աշակերտները որբացան: Տեր-Մինասը մեռավ դպրոցի շեմին ընկած՝ հարբած ենիչերու թրի հարվածից: Այդ օրը ուսուցիչը այբուբենի վերջին տառն էր սովորեցնում և խնդրեց ենիչերիներին, որ չընդհատեն դասը, մինչև երեխաները սովորեն գրել վերջին տառը: Հարբած ենիչերին չանսաց և խփեց Տեր-Մինասին: Վիրավոր գլխից արյունը հոսեց քարե սալին: Վերջին շնչում Տեր-Մինասը մոտ կանչեց իր Վահրամ աշակերտին, նրա ձեռքը թաթախեց իր արյան մեջ և քարե սալին գրեց մեր այբուբենի վերջին տառը: Բոլորը հավաքվել, նայում են այբուբենի վերջին տառին ու լալիս են: Անձրևոտ մի օր էր:

Գյուղ Ջրասուն, 1827 թիվ»:

Նաև այսպես՝ իր արյունով է հայ ուսուցիչը սովորեցրել մայրենին, և դրա համար մեծարել է նրան ժողովուրդը՝ որպես իր ինքնության պահապանի:

Քո մայր լեզուն չմոռանաս
(շարադրություն)

Գիտե՞ք արդյոք, որ հայերեն են տոկում գրերը մեր, որ հայերեն են պայթում բառերը մեր, որ հայերեն են լռում քարերը մեր, հայերեն են տանջում մեզ ցավերը, որ ձորերը հայերեն են շնչում, որ հավերժը հայերեն են երգում, որ գոհերը հայերեն են ննջում, որ հայերենը ձեռքից ձեռք գնացել ու էլի մեզ՝ հային է մնացել... Իսկ գիտե՞ք, որ նա է ամենամոռը նորերի մեջ, ու հների մեջ՝ ամենահինը, որ մենք նրանն ենք, ու նա էլ՝ մերը, և, առհասարակ, գիտե՞ք արդյոք՝ ի՞նչ է լեզուն... Մեր լեզուն չարենցյան հին սագի ողբանվագ ու լացակումած լարն է, աբովյանական մեկ ազգի պահողն է, հայ ազգին հավիտյան հայ դարձնողն է... Իմ հին հայ լեզու, երբ անունդ եմ տալիս, սրտիս զարկերն են արագանում և այնպես են զարկում, որ ինձ թվում է, թե դրանք Մարգարետունու ձիու քայլերն են, որ ժամ առաջ շտապում են տուն՝ հայտնելու աշխարհին հայոց, թե մեկ անգամ ևս փրկված է ազգը: Իմ սրտաբոլի լեզու, երբ նայում եմ մորս աչքերին, տեսնում եմ մատյաններդ ցավի, հույսի ու երազի, մատյաններդ՝ անկեզ, մատյաններդ՝ անեղծ: Ու ծունկ եմ չոքում քո «այբ, բեն, գիմ»-ի առաջ, որ Մեծն Մաշտոցի հետ դարձան մեզ փրկիչ: Իմ հայոց լեզու, քեզանով եմ ես առաջին անգամ մորս մայր անվանել, երկիրս՝ հայրենիք, իսկ ինձնից առաջ դու դարձել էիր մեր Տիգրան Մեծի կարոտն անանց, Նարեկա վանքի մորմոռն ու Անիի տաճարի չսպիացող վերքը: Իմ սրտաբոլի լեզու, քանի՞ դար ի վեր, քանի՞ ոսոխներ են ասպատակել քո երկիրը հայոց, որ քեզ խլեն, գերեվարեն, պոկեն մանկանց շուրթերից, բայց, օ, հրաշք, դու կարծես ամրակուռ մի արձանագրություն ես՝ դարերի խորքից եկած, դու միշտ հաղթել ես, դու Աստվածատուր ես... Աստվածաստեղծ, Աստվածալույս, Աստվածավեհ: Իմ հին հայ լեզու, մեր թափած արյունն է լճացել քո մագաղաթյա մատյաններում: Եվ, վերջապես, մի՞թե դու չէիր, որ որպես ազատության կոչնակ դողանջեցիր և դարձար Ա՛հ հիմնը: Դու մեր ինքնիշխանության զանգակատունն ես, մեր հոգու եկեղեցին, ճարտարապետը մեր խոհերի, մեր ինքնությունն ու հավատը, մեր վերածնունդն ու երկունքը: Գիտեմ, որ հեշտ չէր հայի անցած ուղին. անհարթ էր այն, փշոտ ու փոշոտ, լեցուն արյունով ու կականով: Եղավ մի պահ, որ մայրենիի գոյությունը վտանգված էր. իսլամագուն յոթ ազգերն իրենց ճանկերն էին առել հայ ազգը, կրոնն ու հայի լեզուն: Ի՞նչ անել, ինչո՞վ փրկել ժո-

դովորդն ու երկիրը, երբ գիր չունի հայոց լեզուն. ո՛չ գիր կա, ո՛չ հայ մատյան: Եվ միշտ անօգնական ժողովրդի գլխավերևում շողշողում ու սպառնում էր թշնամու անպատյան թուրը: Ուշ էր, ավա՛ղ, փրկություն չկար, կործանվում էր հայը, փակվում էր հայի գոյության պատմության վերջին էջը... Սակայն ո՛չ, կարծես ժամանակը կանգ առավ, ամեն ինչ քարացավ, և մի այր եկավ ապացուցելու, թե մի տեղ վերջը դառնում է սկիզբ, սխրանքը սկսվում է, երբ վերջանում է ամեն մի հնար... և ի՛նչ հրաշք... այդպես էլ եղավ: Այդ այրը՝ մարդացած Աստվածը, մեր սրբության սրբոցը, ամենամեծը մեր պատմական հերոսների մեջ, հայ մտքի հացը՝ Մեսրոպ Մաշտոցը, ստեղծեց մոր կաթից էլ քաղցր ու սուրբ հայոց գրերը: Այդ նա էր, որ, ինչպես մեր մեծագույն այրերից մեկը՝ Պարույր Մևակն է երախտագիտությամբ հավաստում, փլատակված մեր հավատի տեղը հաստատեց նոր հավատ, որ մեզ համար հագուստ չդարձավ, այլ մեջքապնդող գոտի: Դու ննջի՛ր հանգիստ, վեհափա՛ռ հանճար: Երդվում եմ ծնունդովս՝ քանի դեռ կա Հայաստանը, հայոց ազգը, մեր սուրբ հավատը, անկում չի ապրի քո քերթությունը և քո սուրբ գիրը, կհարատևի քաղցր ու սրտաբուխ հայոց լեզուն, յուրաքանչյուր մանկան շուրթերին կերգվի քո «այբ, բեն, գիմ»-ը... Տարիների հետ, պայքարների մեջ, մարտադաշտում թրծված ի՛նչ լեզու, քո ամեն մի տառը՝ որպես տաճարում վառվող մի մում, լույսի ու հավատի կրակ է հայի հոգու համար, հավատ, որ լեռները, գրերն ու խաչքարերը մահ չունեն, որ ինչքան էլ դաժան լինի մեր ճակատագիրը, մենք կապրենք ու կմեռնենք հայերեն: Անգամ Դեր-Չորում, անգամ Շուշիի փլատակների տակ, ադրբեջանցիներից մահապուրծ, դու առաջնորդում էիր մեզ՝ որպես ադոթք առ Աստված: ...Թվում է՝ երեկ էր. այլ դողանջներ էին հղում Գանձասարի ու Ամարասի զանգերը, և հողի հիշողությունից վերընձ-յուղվել էր Հայկ Նահապետի ձգված աղեղը: Հողը դարձնենք բերդ...Եվ դուռ չբացենք՝ ինչ թաթ էլ ցույց տան դռան նեղ ճեղքից...Սրբենք մամուռը, բառն ընթեռնենք: Արյուն է կաթում մեր ամեն խոսքից: Մեր հինավուրց լեզուն ու ժողովրդին այս անգամ գերեվարել էր ցանկանում հարևան ադրբեջանցին: Երկար, արյունոտ ու փշոտ էր փրկության ճամփան, բայց մայրենի լեզվով հնչած «մնաս բարով»-ը օրհնանք էր, որ մեր հայրերին ու եղբայրներին ուղեկցեց մարտադաշտում ու դարձավ վերադարձի ճամփա: Հայերենով գրված մանկանց նամակները քամու թևին հասան ռազմադաշտ, գտան հասցեատերերին, թև տվին, «վերադարձիր»-ը դարձավ հաղթանակի երաշխիք...Լեզուն փրկված

էր. այս անգամ ևս, ու ինչպես միշտ, արյան ու տառապանքների գնով...
դրա համար է, որ սրբագործված է ոսկեդէնիկս՝ մաքուր ու անաղարտ:

Աշակերտուհի Քրիստինե Սյրեփանյան

Պատմությունը վկայում է, որ շատ ժողովուրդների այբուբեններ անհետացել են կամ երկար կյանք չեն ունեցել, իսկ մեսրոպյան այբուբենը երկարակյաց է և իր վրա է սևեռում լեզվաբանների ուշադրությունը: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ հայերեն այբուբենն իր մեջ ներառում է բազմաթիվ առավելություններ ու գաղտնիքներ, որոնք ժամանակի ընթացքում աստիճանաբար ի հայտ են գալիս և հետաքրքրում սերունդներին: Աշխարհի շատ մասնագետներ, ուսումնասիրելով ու բացահայտելով մեսրոպյան այբուբենի առավելությունները, հանգել են այն եզրակացության, որ հայոց այբուբենը կատարյալ է:

Հայ գրողների խոսքը հայոց լեզվի մասին

Ներքող մայրենի լեզվին

Դու՝ սեր առաջին, առաջին մորմոք, առաջին աղոթք,
Որ տառապանքով փոխվեցիր բառի ու դարձար լեզու...
Ու երբ «Հայրենիք» անունը տվինք հողին այս քարոտ,
«Մայրենի» դրինք անունը քո սուրբ...
Եվ դու դարեդար մեզ շնորհեցիր կանչը քո արյան,
Համը քո հացի, եռը քո գինու, ցոլը քո հրի,
Տվիր պղնձե այս քարափների կռիւնչը վայրագ
Ու քնքշությունը լացող մամուռի:
Մեզ նավասարդյան առավոտների լույսով օժեցիր
Եվ մկրտեցիր առասպելների ուժ ու զորությամբ,
Աստվածների հետ քո աստվածային լեզվով խոսեցիր,
Ոսոխների հետ՝ որոտով քո բամբ...
Ու մենք դարձրինք քեզ երդում, ոգի, դարձրինք աստված,
Թեև գիտեինք, որ աստվածները զոհ են պահանջում,
Եվ Ավարայրում ընկանք արնաքամ, ընկանք ծվատված,
Բայց չզիջեցինք և ոչ մի հնչյուն...
Եվ հիմա, հիմա անթեղի նման քեզ պիտի տանենք,
Քեզ պիտի տանենք իբրև հրդեհից ազատված մանկան,
Հողմերից փրկված կանթեղի նման քեզ պիտի տանենք

Եվ տանենք իբրև երդում ու պատգամ...
Եվ տանենք պիտի իբրև առաջին հավատ ու աղոթք,
Եվ տանենք պիտի իբրև սրբազան հաց, գինի ու հուր...
Եվ հիշենք, որ երբ «Հայրենիք» ասինք հողին այս քարոտ,
«Մայրենի» դրինք անունը քո սուրբ:

Վահագն Դավթյան

Հայ պատանու երդումը մայրենի լեզվին

Ժամանակի ակունքներից ես գալիս
դու, իմ հա՛յ լեզու,
Դարերի լեռնապարերի վրայով:
Հայկյան նետի սույլ ու շառաչը կա
քո մեջ,
Ավարայրի վրա կանգնած
աղոթք-աղաղակի սաստկությունը:
Դու՝ փիղ ու բաբանի զարհուրանքին
դիմադիր կանգնած՝



Անկործանելի՛ պարիսպ,
Ձվարթնոց տաճարի չեղծված, չավերակված սկզբնապատկեր,
Երդվում եմ՝
Ծնունդովս կամո՛ւրջ դառնալ քո դարեդար անցումին,
Քար դառնալ քո պարսպացյալ ամրությանը,
Աղոթարա՛ր լինել քո սրբազնագույն տաճարին:
Երդվո՛ւմ եմ:
Դո՛ւ գողթան կրակված գուսաններից ի՛նձ հասած
Մոխրաթաթախ անթեղ,
Ժամանակի ժանգը չբռնող՝ ոսկեդարի՛ ոսկի,
Դավթի իմաստուն պայծառություն
Եվ Սիերի իմաստնագույն խռովք,
Նարեկացու տիեզերածավալ ալեկոծում
Եվ Քուչակի վարդաշաղախ սիրերգություն,
Եղիշեից Եղիշե ձգվող անհուն մաքառումի գորավոր սրինգ,
Երդվում եմ՝
Շուրթերովս բորբո՛ք պահել քո վահագնաբոց կրակը,

Շքանշանի՛ պես կրել քո ոսկին,
 Լցվել քո լույսով ու քնքշությամբ, ինչպես վաղորդայնի օդով,
 Ջրահավորե՛լ հոգիս քո արի գեղեցկություններով:
 Երդվում եմ:
 Դու՛ հայրերիս քրտինքին շաղախված՝
 Սևահողի պես ազնիվ հորովել
 Եվ մայրական կաթնաբո՛ւյր մրմունջ.
 Դու՛ բյուրավոր նահատակների վերջին հառաչի հետ
 Ինձ ավանդված պատգամ,
 Օտարության բիրտ ալիքների միջից՝
 Ի՛նձ կանչող, ի՛նձ ապավինող հարազատ:
 Դու՛ հոգեդարձ իմ ժողովրդի նորածնության նվիրական ճիչ,
 Արարման և ստեղծումի աշխարհալո՛ւր դողանջ,
 Երդվում եմ՝
 Պահպանել քեզ որպես սերնդեսերունդ փոխանցած
 Եվ ինձ վստահած՝ տոհմական սրբություն,
 Նվիրումովս լրացնե՛լ քո մասունքանման կորուստները,
 Նորոգել քո մագաղաթյա ազնվականությունը
 Նոր ժամանակների հյութ ու ավիշով.
 Քեզնով արտասանել միայն արդարության՝ խոսքեր:
 Երդվում եմ կրել քեզ շնչո՛վս, արյունո՛վս, այրումո՛վս
 Եվ ինձնով տանել-հաղորդե՛լ զավակներիս
 Քո հավերժական կենդանությունը:
 Երդվում եմ:

Սիլվա Կապուտիկյան

Քո ներկայությունդ բավական է, որ մոռնամ աշխարհը ամբողջ ու գովերգեմ քեզ միայն, քեզ, որ սիրո սյուք ես ու կանչ կարոտի, հառաչ ալևորի ու ճիչ մանկան, քեզ, որ արևածագին հետ արտերու վրա բացվող հորովել ես լուսաշաղախ և դարավոր ծառ ծիրանի, քեզ՝ նաիրյան բարտիներու իրիկնային հսկում արարատյան, մեղեդի կապույտ ու պայծառ երկինք բազմաստեղնյան, քեզ՝ իմ աննման համբուրելի լեզու մայրենի...

Վահան Մամյան

Մեր տառերը

Տեսիլքից են ծնվել տառերը մեր,
Հողմերով են սնվել տառերը մեր,
Ջրդեղվել են, դարձել երկաթագիր,

Քարերին են գրվել տառերը մեր...
Երբ փորձել են ջնջել ու եղձանել,
Կայծակին են տվել
տառերը մեր...

Վահագն Գավթյան

Տաղ հայերեն լեզուին

Քեզ, Հա՛յ Լեզու, կը սիրեմ մրրգաստանի մը նրման...
Մեր անցեալին թանձրախիտ ստուերներուն մէջ կարծես
Մէյ մէկ պըտուղ՝ քու բոլոր բառերդ ինձի կը երեսան,
Որունց մէջէն կը քալեմ ու կը քաղե՛մ զանոնք ես:
Մրգաստանի մը նրման կը սիրեմ քեզ, Հայ Լեզո՛ւ
Մեր հայրենի պալատէն, պարտէզներէն մընացորդ՝
Դալարագեղ դուն պուրա՛կ, որ դիմացար դարերու
Եւ կը մընաս միշտ առոյգ, հին աւիշով կենսայորդ:
Ծառերուդ մէջ հովանուտ կը երթամ խինդով մը անասհման,
Արմատներուդ, ճիւղերուդ վրայ նայելով հիացիկ,
Չարմանալով թէ ի՛նչպէս դուն մընացիր՝ երբ սաստիկ
Քամին քու շուրջըդ փըչեց եւ տապալեց ամէն բան:
Մէյ մէկ պըտուղ գոյնըզգոյն՝ բոլոր բառե՛րըդ ահա,
Հիւթե՛ղ բառերըդ՝ զոր որքա՛ն հասունցուցին արեւներ,
Բառե՛րըդ որքան այս պահուս շրթանցըս վրայ են բռներ,
Բառերըդ, որ քիմքըս կը օժեն եւ կը սփռփե՛ն սիրտս հիմա...

Վահան Թէքեան

Ամեն ոք պետք է իր մայրենի լեզվով խոսի: Պետք չէ, որ բոլոր ազգե-
րը միալեզու դառնան, թեկուզ այդ լեզուն լինի ինձ այնքան հարազատ
հունարենը: Դա նույնն է, ոնց որ աշխարհի բոլոր ծաղիկները ոչնչաց-
նես և թողնես միայն մեկը: Այդ մեկի հոտը հոտի նման էլ չի լինի, իսկ ում
է պետք անհոտ ծաղիկը:

Մովսէս Խորենացի

Գեղեցիկ ստացվեց, որ մի լեզուն տրոհվեց շատ լեզուների: Հունարեննը մեղմ է, հռոմեական լեզուն՝ հզոր, հոներեննը՝ ահաբեկող, ասորերեննը՝ աղերսական, պարսկերեննը՝ պերճ, ալաներեննը՝ գեղեցկազարդ, հնդկերեննը՝ ճովողական, հայերեննը՝ քաղցր, որը կարող է միաժամանակ մյուս բոլոր լեզուների հատկություններն ամփոփել իր մեջ:

Եղիշե

Հայոց վերքի մեծ երգիչ **Խաչատուր Աբովյանը** պատգամել է բոլորիս. «Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, հայոց նորահա՛ս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արևին դուրբան, տասը լեզո՛ւ սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատքը դայիմ բռնեցե՛ք»: «Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վա՛յն էկել ա մեր օրին»:

Մայրենի լեզվի բառերը մենք գգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ հասկանում, սովորում, հիշում:

Մեր լեզուն բարձր լեռներից և խորունկ ձորերից ծնած լեզու է՝ բարձունքների ու խորությունների լեզու:

Լեզուն փոխարինել է և՛ պետությանը, և՛ բանակին, և՛ եղել է բերդ: Հայոց լեզվի մեջ մարմնացած է հայ ժողովրդի հոգին: Ամեն մի բառը նրա հոգու մի կտորն է:

Այդ բառերի մեջ են նյութացած մեր վիշտը, գրկանքները, դառն ու զվարճալի ապրումները, մեր երազները, հույսերը, իղձերը, սերը՝ մեր ողջ ժողովուրդը: ...Նրա համար ծով արյուն են թափել մեր նախնիները:

Դու պետք է ծաղկես, երկիր հայրական,
Քո ոգով, ոճով, և բարձրագլուխ,
Դու պիտի հնչես, հնչես հաղթական,
Իմ հին հա՛յ լեզու, քաղցր ու սրտաբուխ:

Ավետիք Իսահակյան

Օգտվինք եվրոպական լեզուներու նորանոր ու թարմ արտահայտութիւններէն, բայց չմոռանանք գրաբարին հոռոթի շտեմարաններէն օգտվիլ մանավանդ: Ինչու՞ մեր հացը գետին ձգենք ու մուրացիկ՝ ուրիշի հետևէն վազենք:

Միասը Մեծարենց

Ժողովուրդն է միայն, որ կդարբնէ լեզուն կյանքի ամենօրյա սալին վրա...Եվ գրական մարդիկ կհպատակին ժողովուրդի լեզվին և ոչ թե կտիրեն անոր:

Գրիգոր Չոհրաս

Լեզուն իրոք մի գանձ է, որին չի կարող փոխարինել աշխարհի ոչ մի հարստութիւն: Նա է ուրախության պահին բացում մեր սիրտը, իսկ տրտմության պահերին նա է սփոփում մեզ...Ուստի իր մայրենի լեզուն վատ իմացողը կես մարդ է, չիմացողը՝ թշվառ, ծառից ընկած մի տերև, որ տարվում է ամեն մի պատահական քամուց:

Սրբեփան Չորյան

Լսեցե՛ք, սիրակա՛ն հայեր, սուտ է այն լուսավորությունը, որ պիտի լինի օտարի լեզվով, այդպիսի դիպվածում դուք ձեր զավակները օտարացնում եք ձեզանից, նոքա օտարի լեզվով դաստիարակված, անունով միայն կլինին հայ, բայց ձեր թոռները գուցե այդ անունը ևս ավելորդ համարեն կրել յուրյանց վրա: Խելացի եղեք, և ձեր դպրոցների մեջ թող լսվի ձեր մայրենի, կենդանի ու նվիրական խոսքը: Երանի՛՜ ձայնս տեղ հասներ:

Միքայել Նալբանդյան

Եթե բոլոր մայրերը այնքան հայրենասեր և ազգասեր լինեն, որ իրենց զավակների հետ մայրենի լեզվով խոսեն, նրանց սրտի մեջ ազգային պատվասիրություն ձգեն, հայրենիքի սեր, էլ այնուհետև ինչ մահ կարող է սպառնալ մեզ:

Ղազարոս Աղայան

Լեզուն ժողովրդի հոգու, բնավորության արտահայտիչն է: Լեզուն ազգի հոգին է:

Վահան Տերյան

Իբրև մոր նայել և իբրև մոր են պահել իրենց մայրենի լեզուն հայ ժողովրդի մայրասեր և մայրախնամ գավակները՝ սկսած Մաշտոցից ու մեր առաջին թարգմանիչներից մինչև... Վարուժան և Չարենց:

Դու՝ մեր մեծ երթի գավազանակիր,
Եվ մեր պատմության մեծագույն դիվան,
Մեր ազնվության գովասանագիր,
Մեր մտքի պահեստ, հոգու օթևան,
Դու՝ մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով,
Նարեկացիով օծված և յուղված:

Պարույր Սևակ

Քանի լեզու գիտնաս, որդիս, այնքան մարդ ես, իմացի՛ր,
Ամեն լեզվով ամեն ազգի կրծքին վարդ ես, իմացի՛ր,
Բայց մայրենիդ թե անաղարտ սոխակ պահես վարդերում,
Սարերի մեջ ազգիդ համար Արարատ ես, իմացի՛ր:

Հովհաննես Շիրազ

Լսի՛ր, որդի՛ս, պատգամ որպես... Սիրող քո մոր խո՛սքը սրտանց, Այսօրվանից հանձնում եմ քեզ Հայոց լեզո՛ւն հազարագանձ: Պահի՛ր նրան բարձր ու վճիտ, Արարատի սուրբ ձյունի պես, Պահի՛ր նրան սրտիդ մոտիկ, Քո պապերի աճյունի պես,	Ու ոտխի զարկիցը սև Դու պաշտպանի՛ր կրծքով նրան, Ինչպես մո՛րդ կպաշտպանես, Թե տո՛ւր քաշեն մորդ վրան, Ու տե՛ս, որդիս, ո՛ւր էլ լինես, Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս, Թե մորդ անգամ մտքից հանես, ո մա՛յր լեզուն չմոռանա՛ս:
---	---

Սիլվա Կապուպիկյան

Եվ հնչում է որպես աղոթք,
Արքայական քո լեզուն,
Հնչում է միշտ խոր ու պայծառ,
Ե՛վ խոցում է, և՛ այրում:

Վահան Տերյան

Մեր լեզուն ճկուն է և բարբարոս,
Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին
Պայծառ է նա՝ որպես մշտաբորբոք փարոս
Վառված հրով անշեջ՝ դարերում հին:

Եղիշե Չարենց

Այլազգի գրողները հայոց լեզվի մասին

Որպես աշխարհի հնագույն լեզուներից մեկը՝ հայերենն ունի մեծագույն արժեք՝ լեզվաբանությանը հետաքրքրող շատ հարցեր պարզելու համար: Ներկայումս հայագիտական կենտրոններ կան աշխարհի մի շարք երկրներում՝ Իտալիա, ԱՄՆ, Ռեյմանիա, Անգլիա, Ֆրանսիա, Բելգիա, Իրան, Բրազիլիա, ամբիոններ կան մի քանի նշանավոր համալսարաններում՝ Օքսֆորդի, Հարվարդի, Կալիֆոռնիայի, Կոլումբիայի: Դա մեզ օրինական հպարտություն է պատճառում և պարտավորեցնում ավելի սիրել մեր լեզուն, սիրել, փայփայել այն: Հայոց լեզվի ուսումնասիրությամբ զբաղվել և զբաղվում են օտարերկրյա մի շարք գիտնականներ:

Ճոխ է հայոց լեզուն, և առատորեն կվարձատրվի նա, ով կուսումնասիրի այն: Ես փորձում եմ, իմ փորձն առաջ է ընթանում:

Չորջ Բայրոն

Ձեր հնամենի լեզուն ես չգիտեմ, բայց սիրում եմ այն, դրա մեջ Արևելքն եմ զգում, դարերն եմ նշմարում այնտեղ, տեսնում եմ անցյալի խորհրդավոր նշույլի շողարձակումը: Ինձ համար պարծանք է հայերեն քարզմանվելը:

Վիկտոր Հյուգո

Իմ գիտցած լեզուներուն մեջ հայերենը բացառիկ է...նախ՝ որպես զարմանալի տրամաբանական լեզու, ապա նաև՝ իր ճկունությամբ, նոր բառեր կազմելու դյուրություններով:

Ֆրեդերիկ Ֆելդի

Ինչպե՞ս կարելի է կարդալ Նարեկացի և չսիրահարվել Հայաստան երկրին, ունենալ Թումանյան, Իսահակյան, Չարենց, Սևակ և ուրիշ մեծեր ու չապրել հավերժող մշակույթի ժառանգորդի օրինական հպարտությունը: Մնում է, որ դուք, թանկագին հայ ուսուցիչներ, համաշխարհային հնչեղություն ունեցող այդ դասերը, ինչպես հարկն է, փոխանցեք ձեր սաներին, նրանց տոգորեք աշխարհի ամենահարուստ և հմայիչ լեզուներից մեկի՝ հայերենի տիրոջ բարձր զգացումներով, նրա ճակատագրի համար, ընդհանրապես՝ երկրի ճակատագրի համար պատասխանատվության և պարտքի զգացումներով:

Չինգիզ Այրմատով

...Մայրենի՛ լեզու... Ուղղակի հրաշքի է հավասարագոր այն մոլե-
ռանդությունը, այն մոլեգին ուժը, որով մեր ժողովուրդը կապված է եղել
իր պատմության ու ավանդների, իր մշակույթի ու լեզվի հետ՝ հավանո-
րեն բնագորով հասկանալով, որ լեզուն իր գոյության ու հարատևման
ամենից գորավոր գեներն է:

Ըստ երևույթին մայրենի լեզուն...օղի մման է, որի գոյությունը կամ
լինելը կարող են չզգա՞լ ու չնկատե՞լ, բայց և ...իսկույն շնչահեղձ լինել,
եթե նա, աստվա՞ծ մի արասցե, պակասի կամ...չլինի...

Քաղաքացիական կռիվների հայտնի հերոսներից մեկը՝ **հայազգի
Պայը՝ Հայկ Քժշկյանցը**, որն ապրել ու գործել էր Ռուսաստանում և
համարյա առիթ չէր ունենում գործածելու իր արդեն մոռացվող մայրե-
նի լեզուն, Սիմֆիրսկ քաղաքի ազատագրման օրը, գերագույն ոգևորու-
թյան ու հուզմունքի պահին բազմամարդ միտինգում իր զգացումներն
արտահայտել է բոլորին անհասկանալի լեզվով՝ հայերենով, թեև քաջ
գիտեր, որ բազմաթիվ ունկնդիրների մեջ ...ոչ մի հայ չկա...

Վերջապես, ու՞մ հայտնի չէ, որ ծանր ցավի, վտանգի, ծննդաբերու-
թյան ու ծանր վիրահատության ժամանակ մարդը, ինչ տարիքում էլ որ
նա լինի, որ երկրում էլ ապրի և ինչ օտար լեզվով խոսի ու գրի, անկախ
իր կամքից, ենթագիտակցաբար, ցավից ճշում և մորն օգնության է կան-
չում իր մայրենի լեզվով, մայրենի լեզվի՝ հիշողության մեջ մնացած գե՛թ
մի հատիկ խոսքով ու բառով...

Քսաներորդ դարի հայ տաղանդավոր ու ինքնատիպ գրողներից մե-
կը՝ **Կոստան Չարյանը**, վաղ մանկությունից սովորել է միայն ռուսերեն,
ապա, Ֆրանսիայի գիշերօթիկ դպրոցն ընկնելուց հետո, միայն ֆրան-
սերեն...Եվ բանաստեղծություններ է գրել այնպիսի ազնվական ֆրան-
սերենով, որ նրանցով հիացել է Էմիլ Վերհարնը: Չրույցի ընթացքում
իմանալով, որ «ֆրանսիացի բանաստեղծը» ազգությամբ հայ է, Վեր-
հարնը պնդել է, որ նա հիշի, թե ինչ գիտե իր մայրենի լեզվով: Կոստան
Չարյանը երկար ճիգերից հետո հայերեն մրմնջացել է «Հայր մեր» տե-
րունական աղոթքի այն մի քանի տողերը, որ մանուկ հասակում տատի
հետ կրկնում էր եկեղեցում...

Լսելով մեծ հուզմունքով շաղախված այդ բառերը՝ Է. Վերհարնը
ասել է.

- Երիտասարդ, բանաստեղծությունը աղոթքի պես մի բան է, և
ամեն մարդ պարտավոր է բանաստեղծություն գրել այն լեզվով, ինչ լեզ-
վով աղոթել կամ աղոթում է...

Վերհարնի այս խոսքերից ցնցված՝ Կ. Ջարյանը մեկնում է Վենետիկի Սուրբ Դավար կղզին և համառորեն սովորում իր մայրենի լեզուն այնպես ու այնքան, որ դառնում է հայ նշանավոր գրող:

Տարիներ առաջ Երևանում համերգներ էր տալիս Փարիզից եկած հայազգի էստրադային երգչուհի **Ռոզի Արմենը**: Երիտասարդ հայուհին, հայերեն խոսքերը հազիվ կցելով իրար, դիմելով իր հայրենակիցներին, հուզմունքով ու տխրությամբ ասաց.

-Հայրս ռուսահայ է, մայրս՝ թուրքահայ, ես՝ ֆրանսահայ...

Երեք տարբեր տեսակի հայեր՝ մի հարկի տակ՝ օտար հարկի ու օտար երկնքի տակ. ահա 1915 թվականի ողբերգությունը...

Առածներ և ասացվածքներ լեզվի մասին

Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես:

Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա:

Երկար լեզուն կարճացնում է կյանքը:

Անուշ լեզուն մեղրից քաղցր է:

Աշխարհի շինողն ու քանդողը լեզուն է:

Գեշ /վատ/ լեզուն ամելուց սուր է:

Յորեն հաց չունես, ցորեն լեզու ունեցիր:

Քաղցր /անուշ/ լեզուն օձը բնից կհանի:

Լեզուն մեղր, սիրտը՝ լեղի:

Լեզվի կծածին դեղ չկա:

Խոսքն ամենակարող է:

Թուրը մի մարդու սպանեց, լեզուն՝ մի բանակ:

Մի քանի խորհուրդ լեզվի մասին

Մարդուն ճանաչում են իր խոսքով, իսկ այն ինչքան լավ լինի, այնքան հաճելի է:

Անընդհատ հարստացրու բառապաշարդ, որի ամենալավ միջոցը ուշադիր ընթերցանությունն է:

Անժանոթ բառ լսելիս կամ կարդալիս՝ խնդրի՛ր մեծերին, որ քեզ բացատրեն, կամ օգտվիր բացատրական բառարաններից:

Մի՛ գործածիր այն բառը, որի իմաստը չգիտես:

Հայերենում ողջույնի և հրաժեշտի համար գործածվում են հետևյալ բառերը՝ բարի լույս, բարի առավոտ, բարի օր, բարի երեկո, բարի գիշեր, բարի աջողում/բրբ./, բարի գալուստ, ողջույն, ցտեսություն, հաջողություն, մնաս/ք/ բարով:

Աշակերտների, ուսանողների և ուսուցիչների խոսքի վթարներ

Մերոպ Մաշտոցը գրել է գրերի գյուտը:

Մովսես Խորենացին **տիեզերագնաց էր** /փոխանակ՝ տիեզերաօդանավ բառի/:

Անանիա Շիրակացու ժամանակ կառուցվեց **Զվարթնոց օդանավակայանը** / տաճարը/:

Փոքր Սիերը **բերդ է նստում** /փակվում է/:

Ֆրիկի **սրիչը** քննադատում էր իր ժամանակը /փոխանակ՝ սուր գրիչը/:

Նարեկացին իր ամբողջ կյանքը անց է կացրել **Վանա լճում**:

Սայաթ-Նովան մի **հրատապ** սիրահար է /փոխանակ՝ հոյակապ/:

Սայաթ- Նովան Հաղպատի վանքում դարձել է մի **կուսական քահանա** /փոխանակ՝ կուսակրոն/:

Հ. Պարոնյանի հերոսը **կամիթներ է կառուցում**:

Աբխազում աղան **սփյուռքահայ հայրենասեր է**:

Ավետիք Իսահակյանը ծնվել է 1875 թվականից սկսած /թվականին/:

Քազմագգ լուսնի նուրբ շողերին... /փոխանակ՝ բազմած/:

Չարենցը սովորել է Կարսի **հռոմեական** ուսումնարանում /փոխանակ՝ ռեալական/:

Սահականույշը ամուսնանում է Սահակ Սևադայի հետ:

Դասախոսի հարցին, թե ինչ է նշանակում **եռատոն**, ուսանողը պատասխանում է.

-Երեք սենյականոց բնակարան:

Ի՞նչ է **դասակիք** բառի իմաստը՝ **դասական ալիք:**

Ենթական կարող է արտահայտվել ստորոգյալով:

Ըստ նախդիրով բառ կազմեք՝ **սկորըստ:**

Այդ լեզվով խոսող **ժողովուրդը դուրս է եկել հանրապետությունից** /խոսքը մեռած լեզուների մասին է/:

Ուսուցչուհի՝ Հայոց լեզուն շատ նրբություններ ունի, հետևաբար պետք է նրբանկատ լինել...

Ուսուցչուհի՝ **Գիլան դայակի** կերպարը:

Նա իր ամբողջ կյանքը գրել է հայ գրականություն:

Իր ամբողջ կյանքը անց է կացրել հայ գրականության մեջ:

Բաֆֆին ստեղծագործել է 23-րդ դարի մասին:

Բաֆֆու իսկական անունն ազգանունը Ռաֆայել Պատկանյան է:

Չարենցը սովորել է **ռեալիստական դպրոցում** /փոխանակ՝ **ռեալական/:**

Սովորելով մայրենի լեզուն՝ աշակերտը յուրացնում է 3 կարգի լեզվական կարողություններ՝ հնչյունային, բառային և քերականական: Ուսուցանել այդ դասընթացը՝ նշանակում է հոգ տանել, որ աշակերտները տիրապետեն մայրենի լեզվի ճոխ բառապաշարին և լեզվաճական միջոցներին, ձեռք բերեն մտքեր՝ գրական հայերենով արտահայտվելու, բովանդակալից ու կապակցված բանավոր և գրավոր խոսք կառուցելու, արտահայտիչ կարողալու ունակություններ և հմտություններ: Մայրենի լեզվի ուսուցումը՝ աշակերտի խոսքի զարգացումն է, որն իրականացվում է հայոց լեզվի դասընթացի բոլոր բաժիններն անցնելիս:

Ուղղագրության, բառագիտության և ձևաբանության ուսուցման դասընթացում լայն հնարավորություններ կան աշակերտների բառապաշարի հարստացման, իսկ շարահյուսության և կետադրության, ուղղախոսության և ոճագիտական տարրերի ուսուցման ընթացքում՝ կապակցված ու գեղեցիկ խոսք կառուցելու, արտահայտիչ կարողալու հմտությունների և կարողությունների զարգացման համար: Սակայն դա կատարվում է միաժամանակ, զուգահեռաբար: Կապակցված և գեղեցիկ խոսքի մշակման համար անհրաժեշտ է քերականության /խոսքի մասերի որոշում և դասդասում, դրանց կազմության և կապակցման կանոնների կիրառում, բառակապակցությունների և նախադասության կապակցում և փոխակերպում/, ոճաբանության և գրականագիտության, գեղեցիկ բառաձևերի, արտահայտությունների և թևավոր խոսքի ընտրություն, պատկերավորության և արտահայտչական միջոցների օգտագործում, գրական երևույթների մասին գիտելիքի ուսումնասիրություն, գրավոր աշխատանքի նախապատրաստում, փաստագրական նյութի հավաքում, գեկուցման, պատի թերթի ու հոդվածների պատրաստում:

Որպեսզի ուսուցիչը խոսքի զարգացման աշխատանքը կազմակերպի գիտականորեն, մեթոդիկան ճիշտ ուղիով տանի, անհրաժեշտ է ոչ միայն ժամանակակից հայոց լեզվի տեսության կանոններն ու օրինաչափությունները դնել խոսքի զարգացման մեթոդիկայի հիմքում, այլև հաշվի առնել լեզվի և խոսքի, խոսքի և գիտակցության փոխկապակցությունը, խոսքի տեսակներն ու դրանց առանձնահատկությունները:

Խոսքը լեզվի դրսևորումն է: Մարդիկ հաղորդակցվում են ոչ թե լեզվի, այլ խոսքի միջոցով: Խոսքը տվյալ անհատի, ինչպես նաև այն գործածող հանրության հայելին է, արտապատկերը: Ճիշտ և կիրթ խոսելու առաջին նախապայմանը մայրենիի բառապաշարի և քերականական կանոնների հիմնավոր յուրացումն է: Գեղեցիկ խոսել մարդը սովորում է իր ողջ կյանքի ընթացքում: Պերճախոսությունը սովորեցնում է ունկնդրին, պատճառում հաճույք և նրա վրա թողնում մեծ տպավորություն: Խոսքի արվեստը իր արմատներով ձգվում է դարերի խորքը: Խոսքի առաջին դրսևորումները համարվում են միջագետքյան և շումերական պատառիկները: Խոսքի արվեստը ձևավորվել և ծաղկել է Հին Հունաստանում: Սոկրատը, որ մեծ փիլիսոփա էր, իր գեղեցիկ խոսքով գրավում էր մարդկանց, սովորեցնում մտածել: Հնում պերճախոսության մրցույթներին մասնակցել են ոչ միայն անհատ մարդիկ, այլև քաղաքներ, որոնք պարտվելու դեպքում կորցնում էին իրենց ազդեցությունը և վերանում: Հին աշխարհի ճարտասանների ուսմունքները զգալի ազդեցություն են ունեցել հայ խոսքարվեստի զարգացման վրա: Հռետորական արվեստի տեսությունը Հայաստան մուտք է գործել Ք. ա. առաջին դարում (Տիգրան Մեծ, Արտավազդ Բ):

Գրքերը մարդկության հիշողությունը պահող անառիկ ամրոցներ են: Միայն նրանք կարող են ոտք գցել ժամանակի հետ, թե չէ մարդը, ինչքան էլ խուսափի մահից, բոլոր տարիները կցնցելով, մեկուկես հարյուրամյակից այն կողմ չի գնա: Պարզվում է, որ տառերով ոչ միայն գիրք են գրում, այլև զանազան հաշվարկներ կատարում՝ կործանարար զենք ստանալու համար: Տեսնո՞ւմ եք, թե մարդն ինչպիսի բեռ է դրել ազնիվ տառերի ուսերին, թե ինչպես տառը կարող է ակամայից մասնակից դառնալ սպանությանը: Տառերն ամեն տեսակ սխրանք կատարելու ընդունակ քաջ զինվորներ են: Այդ պատճառով էլ չի կարելի նրանց սանձը ամեն մարդու ձեռք տալ: Պիտի զգուշանալ և չթողնել, որ հարբեն նաև տառերը. նրանց գինովությունից կտուժեն աշխարհի մարդիկ:

Հայկական Ք տառը, որ խաչի ձև ունի, խորհրդանշում է Քրիստոսին: Ք-ն մաշտոցյան այբուբենի վերջին տառն է, իսկ ամեն մի եզրափակություն ավարտվում է Քրիստոսին նվիրված բանաձևով. «Եվ Քրիստոսին փառք հավիտյանս, ամեն»:

Բառ

Ուսուցչի զենքը բառն է: Բառը քարի է նման, քարից ավելի համառ է, քարը կարելի է տաշել-տաշտշել, հարմարեցնել. բառը միայն իր տեղն է ուզում: Եվ ի՞նչ բառեր են մեռնում, երբ դրվում են ոչ իրենց տեղում:

Բառեր

Բառերի կյանքը նման է հաճախ
Մարդկային կյանքին.
Ճակատագրով ու բախտի խաղով
Նույնն են ուղղակի...
Բառեր կան՝ ծնվում, ապրում են երկար,
Ապրում են դարեր,
Շողշողում, ինչպես ադամանդը թանկ
Մատանու ակին, շողշողում ինչպես
Մայր հողը հավերժ ջերմացնող արև,
Հուզումով լցնում սրտերն ամենքի:
Ապրում են հավերժ, անցնում շուրթից շուրթ,
Մերնդից սերունդ,
Եվ հոգիների ծարավն են մարում,
Ծարավն անհագուրդ:
Ու բառեր էլ կան՝
Մեռնում են, ինչպես զինվորն է մեռնում...
Զինվորի նման անցնում են իրենց
Ճամփան դժվարին,
Զինվորի նման
Հրակնատներ են կրծքերով փակում,
Մեռնելիս անգամ
Մի անմարելի հուր են բորբոքում:
Իսկ բառեր էլ կան՝
Մեռնում են միայն մահով սեփական՝
Էությունն իրենց
Խառնելով դեռ նոր սերված բառերին:

Մեռնում եմ, սակայն,
Մեռնելիս անգամ
Անմահություն եմ թողնում աշխարհին:
Բառեր կան՝ թեև ամաչում ես դու
Շուրթերիդ առնել,
Բայց պաշտամունքի խոսքեր եմ դառնում ոմանց շուրթերին:
Թեև չպետք է ապրելին նրանք,
Բայց դար ու դարեր
Ապրում եմ, ինչպես բաղեղն է ապրում
Կողքին վարդերի:
Իսկ բառեր էլ կան, բառեր հանճարեղ,
Որ համեստորեն ինչ-որ անկյունում
Ընկած եմ մնում,
Եվ դժբախտաբար նրանց տեղն անգամ
Մենք չենք իմանում:
Կան բառեր, որոնք
Նման են մաշված թղթադրամի,
Հազար ձեռք անցած,
Մի կողմ չքաշված թղթադրամի
Եվ այն ծերունուն,
Որ վաղուց պիտի թռչակի անցներ,
Բայց բախտի խաղով
Դեռ աթոռին է գույգ ձեռքով կառչել
Եվ անգթորեն
Ջահել բառերի ճամփան է փակում
Եվ անմտորեն դեռ ունի իր մեջ
Ուրիշի բախտին իշխելու հակում:
Եվ բառեր էլ կան,
Որ հնչեղ եմ շատ, հուզիչ եմ ու հեզ,
Բայց ամենօրյա գործածությունից
Մաշվում եմ այնպես,
Որ սովորական բառեր եմ դառնում,
Դառնում եմ նման այն ընտիր ճաշին,
Որի մշտական քո ճաշակումից
Միրտդ էլ է խառնում:
Ու ես ողբում եմ և այդ բառերին,

Որ գործածվելով տեղին-անտեղի՝
Կորցնում են իրենց փառքը վաղեմի:

Արշալույս Սարոյան

Քառերի կենսագրությունից

Առավոտ - ավոտ՝ նշանակում է ժամանակ: Գիշերվա հայկական ժամանուններից մեկը կոչվում է շաղավոտ. այսինքն՝ շաղ դնելու ժամանակ: **Առը** Արև աստծու հնչյունափոխված ձևն է: Հետևապես՝ առավոտ՝ նշանակում է արևի դուրս գալու ժամանակը:

Հրաչյա Աճառյանը **արշալույս** բառի արմատը արտածում է **արջալուրջք** բառից, որ կազմված է **արջ՝ սև և լուրջ՝ կապույտ** բառերից: Բառի իմաստը նույնանում է արդի ժողովրդական **մութնուլուսուն** ձևի հետ. արշալույսը օրվա այն ժամանակն է, երբ երկնքի մի մասը կապտում է, իսկ մյուս մասը դեռևս մութ է: /տես ՀԱԲ, հ. 4, Երևան, 1979, էջ 656/:

Չայրանալ բառի արմատն է **այր**, որը հնդեվրոպական հիմք-լեզվի արմատի ձևափոխությունն է. երկու ձայնավորների միջև եղած տ-ն հայերենում դարձել է յ, ե-ն սղվել է: **Ատեր** արմատը նշանակել է **կրակ**: Այդ արմատը պահպանված է մեզ ծանոթ **ատրուշան** /կրակարան/, **ատրճանակ** բառերում /պարսկական փոխառություններ են/: **Այր** արմատից **զ** նախդիր սաստկականով կազմվել է **զայրանալ** բառը, որը նախապես հենց նշանակել է տաքանալ, բորբոքվել. պահպանված է Աստվածաշնչում՝ «Սկսան իշխանք զայրնալ ի գինոյ»՝ Գինուց իշխանները սկսեցին տաքանալ: Չայրանալը փոխաբերաբար նշանակել է **բարկանալ, կատաղել**: Այժմ արդեն փոխաբերական իմաստը դարձել է հիմնական: **Հուր** բառի մրցությունից **այր** արմատը այս իմաստով հայերենում լայն գործածություն չունեցավ: Սակայն նրանով կազմված բաղադրյալ շատ բառեր պահպանվել են՝ **զայրույթ, զայրալի, զայրացկոտ, զայրացուցիչ և այլն**:

Ընկերը հայերենի բնիկ բառերից է և նշանակում է բարեկամ, մտերիմ, գործակից: Ինչպես Հր. Աճառյանն է հավաստում, ընկերը կազմված է **ըն/դ/** նախդիրից և **կեր** արմատից և նախնական իմաստով նշանակել է միասին ուտող, հացակից, ճաշակից: Այդ բառն ավելի քան երկու հազար տարեկան է: Բ.ս. առաջին դարում Հայաստան հասած հռոմեացի զորականները միմյանց անվանում էին **կոմպանիո**, որ նշանակում է՝ միասին ճաշող: Հայերը փոխ չառան այդ օտար բառը, այլ գործածեցին իրենց սեփականը՝ **ընկեր** բառը: **Մտերիմ, գործակից, բարե-**

կամ իմաստով **ընկերը** հրաշալի է կատարում իր դերը և գալիք հազարամյակներում էլ այն կմնա մեր ոստանիկ լեզվի ընտիր բառերից մեկը: Գրեթե հարյուր տարի առաջ ընկեր բառի ուսերին դրվեց մի նոր պարտականություն. այն դարձավ նաև հարգական մակդիր: Սկզբում այս իմաստով կիրառեցին քաղաքական կուսակցությունները, այնուհետև, որպես հարգական դիմելաձև, ավելի լայն կիրառություն ստացավ:

Ընկեր բառից ավելի տարեց է հայկական մի ուրիշ բնիկ բառ՝ **տյարը /տիար/,** որ կազմված է **տի /մեծ/ և այր/մարդ/** բառերից: Հետագայում տիարը **իա** երկհնչյունի հնչյունափոխության հետևանքով դարձել է տեր, որ նշանակել է **մեծ, իշխան, ունեցվածքի տեր մարդ:** Հավանաբար **տյարը կամ տերը** հայերենի ամենահին հարգական կոչական բառն է, որով մեր նախնիները դիմել են աստծուն/տեր աստված/, բազավորին /տեր արքա/, իշխանին /տեր Մամիկոնեից/: **Տիարը** հայերենի տոհմիկ բառերից է, որով կարելի է դիմել պատանուց բարձր արական սեռի բոլոր ներկայացուցիչներին: Հոգնակին կլինի **տիարք:** Իր կազմությամբ տիարին նման է **տիկինը,** որ բառացի նշանակում է **մեծ կին, գերդաստանի ավագ, թագուհի:** Իշխանական կամ արքայական կանանոցը կոչվում էր տիկնունի, նախարարական կամ արքայական գերդաստանի հարգանքի արժանացած իշխանուհին կամ թագուհին՝ **տիկնանց տիկին:** Տիկինը, հոգնակին՝ **տիկնայք կամ տիկիններ,** հայերի մեջ ընդհանրական է դարձել, առանց դասական խտրականության: Իգական սեռի ներկայացուցիչներին անվանել են նաև **տիրուհի:**

Տիար/տեր/ և տիրուհի բառերին զուգահեռ Կիլիկյան Հայաստանում գործածվել է հունարենից փոխառյալ **կիռ** բառը, որ նշանակում է **տեր, տիրուհի.** օրինակ՝ կիռ Մանուել, կիռ Սահակ և այլն: Կիլիկիայի հայոց Լևոն Գ թագավորի /13-րդ դար/ կնոջ անունը Աննա էր: Ժամանակակիցները նրան կոչել են կիռ Աննա: Հետո այդ կիռը միացել է Աննային՝ դարձել Կիռաննա և ժամանակի ընթացքում ձևափոխվել **Կեռանի** անվան: Հետագայում այդ բառը մոռացության տրվեց: Կիլիկյան Հայաստանում է /11-14-րդ դարեր/ ծնունդ առել նաև **պարոն** փոխառյալ բառը: Այն փոխառյալ **բարոն** բառն է, որը իշխանական պատվանուն է և նշանակում է **մեծավոր, իշխան:** Արևմտահայերենի արտասանության օրինակափոխություններով բառասկզբի բ-ն հնչել է պ, և բարոն բառը դարձել է պարոն: Եվրոպայում այդ բառը մնացել է որպես բարձրաստիճան տիտղոս, իսկ հայերի մեջ 19-րդ դարից սկսած դարձել է նաև հարգական մակդիր: Ժամանակի ընթացքում պարոն բառի հարգական իմաս-

տով գործածությունը արևելահայերենում նվազեց, իսկ սփյուռքահայությունը շարունակեց պահել ու գործածել բառը՝ որպես հարգական մակդիր: Բառի իգական ձևը պարոնուհի չդարձավ, այլ փորձեց աղջիկ բառի օգնությամբ արտահայտել համապատասխան իմաստը /օրինակ՝ «Աղջիկ պարոնը տա՞նն է», Հովհ. Թումանյան/, որը եզակի օրինակ է և ընդհանրապես գործածական չէ :

Հավագգիների ընտանիքին պատկանող թոշունի **հավ** անվանումը մեր հին լեզվում՝ գրաբարում, նշանակում էր թոշուն. ահա թե ինչու հավ բառով բաղադրված թոշունների անուններ մեր լեզվում շատ կան՝ դրախտահավ, խլահավ, միրհավ, հնդկահավ, մոշահավ, հավալուսն և այլն: Թոշուն իմաստը պահպանվում է միայն **հավք** բառում՝ Մի հավք զարկի ես մի օր, Թռավ, գնաց վիրավոր... կամ՝ Գարունը եկավ, հավքերը եկան...

Մագապուրծ –մագ+ապուր +ծ /ապրել/ սկզբնապես նշանակել է ճողապրել, ազատվել:

Թացան-կաթնեղեն՝ կաթ, մածուն, թան. թաց արմատից:

Վահագն-վահ՝ բերել, ազն/ի/-կրակ, կրակաբեր /Վահագնի ծնունդը՝ ընդ եղեգան փող բոց ելաներ/:

Վարդապետ՝ ըստ Հր. Աճառյանի՝ **ուսուցիչ, վարժապետ, առաջնորդ** ուսման: Վարժապետ ու վարդապետ բառերը իրանյան միևնույն բառի տարբեր ձևեր են: Վարդ նշանակել է նաև **գործ, աշխատանք**, իսկ դ-ի անկումով՝ **վարպետ**՝ «հին ոճի տնային վարժապետ, արհեստապետ»: Ժամանակակից հայերենում վարդապետ բառի առաջին իմաստն է **կուսակրոն քահանա**, որն ապրում է վանքում, երկրորդ իմաստը՝ հոգևորականին տրվող աստիճան, երրորդ իմաստը՝ ուսուցիչ, որը մեր օրերի համար հնացած է:

Հայերենի հնաբույր բառերից է **օրիորդը**: Նշանակում է՝ չամուսնացած աղջիկ, կույս: Միջնադարյան Հայաստանում օրիորդ նշանակել է ազնվազարմ աղջիկ՝ **օրի /իշխան/ և որդի** բառերից: 19-րդ դարից բառիմաստի դասական այդ խտրականությունը վերացավ, և բոլոր կույս աղջիկներին սկսեցին օրիորդ կոչել:

Ազատ /զենդերեն/ -սրբարան, պաշտելի, ազնվական /Ազատն Մասիս/:

-ապատ /պահլավերենից/ - նշանակում է՝ շեն, բնակելի. օր.՝ Վարդաշապատ, հականիշը՝ անապատ՝ անշեն, անբնակ: /«Անապատս ապատվեց» Հ. Շիրազ: Խոսքը լիքը բալիկներով իր ընտանիքի մասին է/:

Աբրահամ /Եբրայերեն/ - ժողովուրդների հայր
Ադամ /հրեերեն/- մարդ
Ադարծի/Հադարծի/-ընկուզենու շիվ
Ակրոստիքոս- ծայրակերպ
Ամֆիքրաքոս-քողաղոտ
Անկարգել-պարաշյուտ /անկուճը արգելող/
Անկարգեր-ինքնաթիռի կայանատեղ
Առնոս /լեռ/ -առ զ Նոյս
Ավետարան - /հուն./ բարի լուր, ավետիս
Աքերին- պերկես ձուկ
Բաբելոն - խառնաշփոթություն
Գժանավ-ինքնաթիռ փոխադրող մեքենա
Եվա-կյանք
Ինդուլգենցիա-թողութենագիր
Լոշտակ- հայկական ժենշեն՝ կյանքի արմատ
Տրագեդիա-հունարեն՝ այծերի երգ/ տրագոս-այծ և օղե-երգ/
Կոմեդիա-գյուղերում այդ տոնախմբությունը ավելի ուրախ էր
կատարվում, որտեղից և բառը՝ կատակերգություն/կոմե-գյուղ և օղե-երգ/
Կակտոս-կրզի
Հադպատ /ի վանք՝ 10-13-րդ դարեր/- հախ՝ամուր+ պատ
Ճայ- ձկնկլիկ
Մեհմանա - հունարեն նշանակում է՝ հանքի հիմնական երակ
Մյուռոն/մեռոն/- անուշահոտ բույսերով հարստացած ձիթապտղի
յուղ, որ գործածվում է եկեղեցական տոների ժամանակ/ մկրտություն,
օծում/
Նագովրեցի - Նագարեթ քաղաքում ծնված
Նարոտ - գույնզգույն թելերից ոլորած հաստ թել
Նեմեսիս - գիշերվա դուստրը, հատուցման աստվածուհի
Նեցկե- մանրաքանդակ պատկերներով կոճակ՝ ճապոնական նր-
բարվեստի նմուշ
Սատանա /Եբրայերեն/- հակառակորդ, տգեղ, այլանդակ, չարաճճի
Ազազել /ասորերեն/-գազազել, կատաղել
Նեռ /բարբառում՝ նյառ/ փոխառություն է պարսկերենից, նշանա-
կում է արու, գործածվում է՝ 1.գորավոր տղամարդ, 2. աշխարհի դա-
տաստան, սատանա իմաստով: Հր. Աճառյանի կարծիքով՝ Ներոն
բառից:

Միրեններ-կիսով չափ թռչնի, կիսով չափ կնոջ. առասպելական էակներ հին հունական դիցաբանության մեջ:

Պանսիոն - ուսումնադաստիարակչական հաստատություն, որտեղ սովորողներն ստանում են ապրուստի բոլոր միջոցները՝ վճարովի հանրակացարան, հյուրանոց, որի վարձի մեջ մտնում է նաև սնունդը:

Պանսիոնատ- գիշերօթիկ դպրոց, կենսօրենան, հյուրանոց:

Հայերեն **կարպետ**, **սատանա**, **խաչքար** բառերը չեն թարգմանվում:

Շաբաթվա օրերի անունները տարբեր լեզուներում կազմված են կամ երկնային լուսատուների անուններից, կամ թվականներից: Այսպես՝ եվրոպական երկրներում երկնային մարմինների անուններից են Sundau /անգլ./, Sonntag /գերմ./՝ Արևի օր, Mondau, Montag՝ Լուսնի օր և այլն: Հայերենում այդ անունները կազմված են թվականներից. **Կիրակին** շաբաթվա առաջին օրն էր /գրաբարում ունենք **կիրակիի միաշաբաթ** անվանումը/, որը հետո փոխարինվեց հունարենից փոխառված **կիրակի՝ տերունական** բառով, **երկուշաբթի՝** շաբաթվա երկրորդ օր, **երեքշաբթի՝** շաբաթվա երրորդ օր և այսպես շարունակ՝ մինչև **հինգշաբթի: Ուրբաթ** բառն ունի ասորական ծագում և նշանակում է **պատրաստություն**, նախապատրաստություն, որովհետև մարդիկ այդ օրն էին անում բոլոր գործերը, որը չէր կարելի անել շաբաթ օրը՝ այն սուրբ /մաքուր/ պահելու համար: Մեկ այլ կարծիքով՝ ուրբաթ նշանակում է **սուգ, բոթ**, քանի որ այդ օրը Ադամն ու Եվան վտարվեցին դրախտից: Ուրբաթը նաև Քրիստոսի չարչարանքների, խաչելության, մահվան և թաղման հիշատակության օրն է: Ըստ Աստվածաշնչի՝ աշխարհի վեցօրյա արարչագործությունից հետո Աստված յոթերորդ՝ **շաբաթ** օրը հանգիստ առավ. ահա թե ինչու շաբաթ բառի բուն նշանակությունն է **հանգիստ, դադար, խաղաղություն:** Բառը եբրայերենից փոխառությամբ անցել է բազմաթիվ լեզուների:

Հայոց տոմարի ամսանունները

Նավասարդ- Հայոց հին տոմարի առաջին ամիսն է. կազմված է **նավ /նոր/ և սարդ /տարի/** բառերից և նշանակում է **Նոր տարի:** Նավասարդ ամիսը սկսվել է օգոստոսի 11-ին և վերջացել սեպտեմբերի 9-ին: Հին հայերի համար այս ամսվա 1-ը /օգոստոսի 11-ը/ եղել է ժողովրդական խրախճանքների տոն: Բարեբախտաբար, ավանդույթը վերականգնվել է, և Հայաստանում նշում են օգոստոսի 11-ը՝ որպես Ազգային

ինքնուրույն օր: Այդ տոնը 2009 թ.-ին հաստատվել է Խորհրդարանի կողմից:

Հոռի- Հայոց տոմարի երկրորդ ամիսն է՝ սեպտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 9-ը: Այս ամսանունը առնչվում է հոր քառի հետ: Գա հավանաբար կապվում է տարվա այն ժամանակի հետ, երբ մարդիկ իրենց հավաքած բերքը՝ ցորենը, գարին, գինին և այլն, ամբարում էին հորերում: Ըստ ակադեմիկոս Ստ. Մալխասյանի՝ Հոռի նշանակում է ուռի ամիս, այսինքն՝ որթատունկի՝ այգեստանի ամիս:

Սահմի- Հայոց տոմարի երրորդ ամիսն է՝ հոկտեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 8-ը: Ըստ Վանական Վարդապետի՝ սահմի անունը առնչվում է սահմանել բայի հետ, քանի որ այդ ամսում էր սահմանվում ձմռան նախապատրաստական աշխատանքների կատարումը: Ըստ ակադեմիկոս Ստ. Մալխասյանի՝ սահմի նշանակում է սերմանց ամիս:

Տրե- Հայոց տոմարի չորրորդ ամիսը սկսվել է նոյեմբերի 9-ին և վերջացել դեկտեմբերի 8-ին: Այս ամսանվան ծագումը կապում են հայոց դպրության աստված Տիրի անվան հետ:

Քաղոց - Հայոց տոմարի հինգերորդ ամիսը սկսվել է դեկտեմբերի 9-ին և վերջացել հունվարի 7-ին: Այս անունը կապում են քաղել բայի հետ: Հր. Աճառյանը գտնում է, որ Քաղոցը կազմված է «անասնոց խառքն» բառերից.**քաղ նշանակում է նոխազ, արու այծ** և կապված է անասունների զուգավորման ամսի հետ:

Արաց-Հայոց տոմարի վեցերորդ ամիսը սկսվել է հունվարի 8-ին և վերջացել փետրվարի 6-ին: Ըստ Վանական Վարդապետի՝ սա այն ամիսն է, երբ ձյունապատ լեռներով և բլուրներով միայն **արանք** /տղամարդիկ/ կարող են ճանապարհ գնալ:

Մեհեկան /Մեհեկի/-Հայոց տոմարի յոթերորդ ամիսը սկսվել է փետրվարի 7-ին և վերջացել մարտի 8-ին: Վանական Վարդապետը այդ ամսանունը կապում է տարվա այն ժամանակի հետ, երբ տուններն ու բույսերը գտնվում են դեռևս մեռյալ, ձյունաթաղ վիճակում:

Արեգ- Հայոց տոմարի ութերորդ ամիսը սկսվել է մարտի 9-ին և վերջացել ապրիլի 7-ին: Ամսանունն առաջացել է արեգակ բառից: Խոր անցյալում, երբ հայերն իրենց տարեգլուխը՝ Նոր տարին, սկսում էին բնության զարթոնքին՝ գարնան առաջին ամսին, Արեգը եղել է հայոց տոմարի առաջին ամիսը:

Ահեկան- Հայոց տոմարի իններորդ ամիսը սկսվել է ապրիլի 8-ին և վերջացել մայիսի 7-ին: Ամսանունը առնչվում է **կրակ, հուր** բառերի

հետ: Ըստ ստուգաբանության՝ ամսանունը կապվում է գարնան զարթոնքի հետ:

Մարերի - Հայոց տոմարի տասներորդ ամիսը սկսվել է մայիսի 8-ին և վերջացել հունիսի 6-ին: Ըստ Վանական Վարդապետի՝ դա այն ժամանակն է, երբ **մայրիք /ծառերը/** կանաչում են ու տերևակալում:

Մարգաց - Հայոց տոմարի տասնմեկերորդ ամիսը սկսվել է հունիսի 7-ին և վերջացել հուլիսի 6-ին: Անունը կապում են **մարգ** բառի, այսինքն՝ խոտհնձի, խոտհարքի հետ:

Հրոտից - Հայոց տոմարի տասներկուերորդ ամիսը սկսվել է հուլիսի 7-ին և վերջացել օգոստոսի 5-ին: Անունն առաջացել է **հուր** բառից, որովհետև ամիսը համընկնում է տարվա ամենաշոգ ժամանակին:

Ավելյաց - Հայոց տոմարի տասներեքերորդ /տրացուցիչ/ ամիսը ունեցել է 5 օր՝ հասարակ տարիներին և 6 օր՝ նահանջ տարիներին: Սկսվել է օգոստոսի 6-ին և վերջացել օգոստոսի 10-ին: Ավելյաց՝ նշանակում է **ավելացած**՝ տարվա 12 ամսից ավելացած օրերը:

Ենթադրվում է նաև, որ **հայոց ամսանունները դիցաբանական ծագում** ունեն: Որոշ տոմարագետներ գտնում են, որ հայոց տոմարի ամիսները կոչվել են Հայկ Աղեղնավորի 12 ուստրերի և դուստրերի անուններով:

Օրացուցային զարմանալիք

Գրող ու բանասեր Թեոդիկը գրում է. «Բ գիրն ունեցող ամիսներուն ոտքդ ու մարմինդ տաք պահիր, չունեցողներուն՝ ուզածիդ պես վարվե»:/«Ամենուն տարեցույց», 1929, Փարիզ/:

Գործող ամսանունների մասին

/ամսանունները անհոգնական գոյականներ են/

Հունվար ամսանունը ծագել է հին հռոմեացիների Յանուս աստծո անունից: Յանուսը արևի ընթացքի «մուտքի և ելքի», տարվա և ժամանակի աստվածն էր: Պատկերվում էր երկու երեսով՝ ծեր և երիտասարդ. մեկն ուղղված էր անցյալին՝ անցնող տարվան, մյուսը՝ ապագային՝ եկող տարվան: Բառը նույն հնչումով փոխանցվել է եվրոպական լեզուներին:

Փետրվար ամսանունը ծագում է լատիներեն februius բառից, որ բառացի նշանակում է **քավության, մաքրման համար**: Բառը կապվում է էտրուսկների **Ֆեբրուս** աստծո անվան հետ: Հեթանոսական այս աստ-

վածը ստորերկրյա թագավորության տիրակալն էր: Անունը նույն ձևով անցել է եվրոպական լեզուներին:

Մարսը՝ տարվա երրորդ ամիսը, իր անունն ստացել է հռոմեացիների Մարս աստծու անունից: Պատերազմի աստվածը լինելուց դեռ շատ ավելի վաղ Մարսը եղել է դաշտերի ու նախիրների աստվածը: Լատիներենում Մարսի սեռական հոլովը մարտիս է, որտեղից էլ մարտ ձևը փոխանցվում է մյուս լեզուներին:

Ապրիլ անունը ևս ծագում է լատիներենից. Ըստ որոշ լեզվաբանների՝ բառիմաստը բխում է **բացել** բայի հիմքից, մեկ այլ տարբերակով՝ նշանակում է հաջորդ, երկրորդ՝ որպես մարտ ամսվա հաջորդ՝ երկրորդ ամիսը:

Մայիս՝ հռոմեացիները այս ամիսը անվանել են Majus, այսինքն՝ Մայայի ամիս. գարնան, բարգավաճման, առատության աստվածուհին էր:

Հունիս անունը կապվում է լատիներեն Junius բառի հետ, որ նշանակում է Յունոնայի՝ հռոմեական աստվածուհու անունից, որը եղել է Յուպիտերի կինը՝ ամուսնության և ծննդկանների պահպանիչը:

Հուլիսը կապվում է Հուլիոս Կեսարի անվան հետ. այդ ամսին ծնվել է Կեսարը:

Օգոստոս անունը կապվում է հռոմեական Օգոստոս կայսեր անվան հետ. Հուլիոս Կեսարի որդեգիրը այսպես է անվանակոչվել գահ բարձրանալուց հետո միայն: Օգոստոսն էլ ոչ թե անունն է եղել, այլ մակդիր, որ նշանակել է **սուրբ, վսեմ, մեծապատիվ**:

Ներկայումս աշխարհի շատ ժողովուրդներ գործածում են հռոմեական /լատինական/ ծագում ունեցող ամսանունները: Եթե մինչև սեպտեմբեր հռոմեացիները ամիսները կոչում էին աստվածների կամ կայսրերի անուններով, ապա, սեպտեմբերից սկսած, ամիսները մնացին անանուն: Դրանք ընդամենը համարակալվեցին և նշանակեցին՝ սեպտեմբեր-յոթերորդ ամիս, հոկտեմբեր- ութերորդ ամիս, նոյեմբեր-իններորդ ամիս, դեկտեմբեր- տասներորդ ամիս:

Քառակապակցությունները՝ մեկ բառով

Աղավնու արու ձագ-վարուժան, վարուժնակ

Արու այծ-նոխազ, քաղ

Արու արծիվ-կանդ, էգ արծիվ-արծվի

Արու բազե-ճուռակ, բազեի ձագ-գավազ

Արու ոչխար-խոյ, էգ ոչխար-մաքի

Էգ ուլ-ալոջ
Էգ ձի-մատակ, զամբիկ
Երիտասարդ տղա-պարմանի, աղջիկ-պարմանուհի
Հավի Էգ ճուտ-վառեկ
Հեծյալ ազնվական- ասպետ
Հոգևոր երգ-շարական
Մայր գոմեշ-մատակ
Աղվեսների խումբ-ջահուկ
Այծերի խումբ-հորան
Անասունների խումբ-նախիր
Գայլերի խումբ-ոհմակ
Թռչունների խումբ-երամ, տարմ
Խոզերի խումբ-երամակ, բոլուկ, խոզյան
վայրի խոզ-վարագ, կինճ
Կռունկների խումբ-խորդերամ
Ձիերի խումբ-երամակ
Մեղունների խումբ-պարս
Ոչխարների խումբ-հոտ
Ուղտերի խումբ-քարավան
Փղերի խումբ-երամակ, ջոլիր
Օձերի խումբ- վտառ, նքողնակ
Աստղերի խումբ-բույլ
Ծաղիկների խումբ- ծաղկեփունջ
Մարդկանց խումբ-բազմություն, ամբոխ
Նավերի խումբ-նավատորմիդ
Փոքրիկ եկեղեցի-մատուռ
Օրինական կին ունեցող ամուսին-կանամբի
Օրինական ամուսին ունեցող կին-արամբի
Պայտ խփող-պայտար, նալբանդ / Նալբանդյան/
Լավությունը մոռացող-երախտամոռ
Լավությունը գնահատող-երախտագետ
Հորդ անձրև-սելավ, տեղատարափ
Դանակի կտրող մաս-շեղբ
Սարդի ցանց-սարդոստայն
Թագավորանիստ քաղաք-ոստան

Գրական եզրույթներ

Ակրոստիքոս-բանաստեղծության յուրաքանչյուր տողի առաջին տառերով ստացվում է որևէ բառ կամ արտահայտություն: Օր.՝ Չարենցի «Պատգամ» բանաստեղծության յուրաքանչյուր տողի առաջին տառով կազմվել է «Ով հայ ժողովուրդ...» նախադասությունը:

Քեյթ - արևելյան քնարերգության մեջ գործածվող երկտող բանաստեղծության տեսակ:

Պազել- երկու տողանի տներից բաղկացած բանաստեղծություն՝ կրկնության որոշ պարտադիր տարրերով. օր.՝ Վ. Տերյան, «Հրաժեշտի գազել»:

Ներքող / օղա / - փառաբանական, գովասանական չափածո ստեղծագործություն:

Սաղմոս - հոգևոր աղոթք- բանաստեղծություն:

Մոնետ - 14 տողանի բանաստեղծություն, կազմված մաս 2 քառատողից /միասին՝ ութնյակ-օկտավ և 2 եռատողից՝ միասին՝ սեկստեր/:

Քառյակ-արևելյան անվանումը՝ ռուբայի, հոգև.՝ ռուբայաթ:

Օտարաբանություններ

Արագ, «ոտքի վրա» սնվելու տարբեր ձևեր կան: Մենք՝ հայերս, հաճախ բավարարվում ենք հաց ու պանրի բրդուճով: Ուրիշ ժողովուրդներ էլ ունեն իրենց «բրդուճները»: Դրանք իրենց օտար անուններով հայտնվել են մաս մեզանում: Օրինակ՝ **համբուրգերը**. անվանումը ծագում է գերմանական Համբուրգ քաղաքի անունից: Առաջին անգամ պատրաստվել է Ամերիկայում՝ համբուրգցի նավաստիների առաջարկով և հուշած բաղադրությամբ: Գերմանական ծագում ունի մաս **բուտերբրոդը**, որը նշանակում է կարագ ու հաց: Կարագը կարող է փոխարինվել այլ ուտելիքներով ևս՝ երշիկ, պանիր և այլն, բայց անունը մնում է նույնը: Անգլիացիները ուտելիքի այդ տեսակը կոչում են «սենդվիչ»՝ ծովակալ Մենդլիչի անվամբ: Նա ժամերով տարվում էր քրթախաղով, ճաշելու չէր գնում, սեղանին շարում էր հացի կտորներ՝ զանազան մթերքներով և սնվում էր դրանցով: Կարելի է ասել, որ և՛ համբուրգերը, և՛ բուտերբրոդը, և՛ սենդվիչը յուրատեսակ բրդուճներ են: Համբուրգերի նախատիպի՝ հացի արանքում դրված մսի շերտի հեղինակները թաթար մոնղոլներն են եղել: Նրանք մսի բարակ շերտը դնում էին ձիու թամբի տակ, որտեղ երկար մնալով՝ եփվում էր: Դա կոչվում էր յախնի: Այդ

անունը մնացել է նաև հայերենում: Ղարաբաղի բարբառում առանձնապես տարածված է **թաթարյախնի** բառը, այսինքն՝ թաթարի ձիու արագ ընթացքում պատրաստվող: Բառը ժամանակի ընթացքում իմաստափոխվել է և այժմ գործածվում է արագ, շուտ իմաստով:

Լիմոնադ բառը ևս նախապես նշանակում էր լիմոնի /կիտրոնի/ հյութով ընպելիք: Հետագայում լիմոնի հյութի փոխարեն սկսեցին օգտագործել այլ մրգահյութեր, բայց խմիչքի անունը մնաց նույնը. օրինակ՝ «տանձի լիմոնադ»:

Հայերը ասորերենից փոխառել են՝ ասենք՝ **շուկա** բառը, որը նույն իմաստն ունի մեր լեզվում, ինչ և ասորերենում, ասորերենից ունենք նաև Աբգար անունը, սա և՛ ասորիների, և՛ հայերի համար հատուկ անձի անուն է: Բայց հայերենով չենք կարող ասել, թե ինչ է նշանակում Աբգար, մինչդեռ ասորերենում այն նշանակում էր «կաղ»: Այս իմաստը հայերենին չի ազդում, որովհետև Աբգար հատուկ անվան իմաստը չի պահպանվել նաև ասորերենում:

Մի շարք օտար բառերի հայերեն համարժեքներ

«Щелкунчик» балет - «Ընկուզկտորիչ»
аккумулятор-կուտակիչ /մարտկոց/
агрополис-միջնաբերդ
алиби-այլուրեքություն
алитерация-բաղաձայնությ
алтинг-Իսլանդիայի խորհրդարանը
алтруизм-անշահախնդիր այլասիրություն
алфонс-սիրուհու հաշվին ապրող տղամարդ
амфибракор-քողաղոտ
анекдот- հունարենից թարգմանաբար՝ անտիպ,
չտպագրված, խնդուկ
атеросклероз-կարծրերակություն
бадминтон- փետրագնդակ
бакалавр-պսակակիր
бальзам-բալասան
бигуди- մազազանգրիչ, վարսափաթթուկ
блендер-մրգահարիչ
бордюр-մայթի եզրաքար
бра-որմնաջահ, լամպ

брелок-կախազարդ
брефинг-ճեպագրույց
брутто-զտարաշ
булки-նկանակ
буратино-փայտե տիկնիկ
валан-փրփրագնդակ
вафли-փրփրահացիկ
вешалка-կախոցիկ
газон-սիզամարգ
гайка- հեղույս
гарнир-ճաշարաց
гейм-խաղափուլ
глазок-աչիկ
глазур-ջնարակ
глобализация-համահարթեցում
далтонизм-գունակուրություն
дебют-առաջնաելույթ
декада-տասնօրյակ
деликатес-նրբախորտիկ
депрессия-ընկճախտ
десант-գործըջ
джип-ամենագնաց ավտոմեքենա
дизайн-գեղատեսք
дикобраз-փշախոզ
дирижабл-զազաթիռ
дискет-սկավառակ
диск-սկավառակ, պնակիտ
диссонанс-անհամահունչություն
дрель-շաղափ, գայլիկոն
илюминатор-դիտոց
импровизация- հանկարծաստեղծում
интуиция-ներքնրոնում
кабель-մալուխ
кактус-կռզի
каламбур-բառախաղ
карниз-քիվ, վարագուրակալ

каскад-սանդղաջրվեժ
 катаклизм-հեղեղում, հեղեղ, համակործանում,
 համադետ, բնության և հասարակության մեջ կտրուկ շրջադարձ
 кисель-անուշապուր
 клеенка-մոմլաթ
 ковролит -կարպետ
 коктейль-համեմունքներով պատրաստված
 քաղցրահամ խմիչքախառնուրդ
 комитет-ընտրովի ղեկավար մարմին
 коммунизм-ուսմունք՝ տնտեսական հավասարություն
 комплекс-բարդույթ
 компот-չամչարակ
 космополит-աշխարհաքաղաքացի
 кубизм-խորանարդ, երկրաչափական խորանարդների
 համակցություն
 лосьон-հարդաջուր, դիմաջուր
 люк-մտոց
 малахит-դահանակ, մոլորաքար
 мальва-փիփերթ,
 манера-վարվելակերպ
 мелиссия душистая-մեղվախոտ, պատրինջ
 метлах-հախճասալիկ
 мираж- օդատեսիլք
 мифологем-միֆի մասին գրույցների ամբողջություն
 мускатный орех -մշկընկույզ
 наргиле-ջրամորճ
 начинка-խճողակ, խորիզ
 нетто-զտաքաշ
 облепиха-չիչխան
 осетрина-թառափ
 офтальмолог-ակնաբույժ
 панисламизм-համախալանականություն
 парадность-հանդիսամոլություն
 парашют-անկարգել
 пародия-ծաղրանմանակում
 патологоанатом-ախտաբանակազմախոտ

патрон-էլէկտրական կոթան
пемза-չեչաքար, լատ.՝ փրփուր
пингвин-թանձրահավ
пион-քաջվարդ
пипетка-բժշկ. կաթոցիկ
платин-լուսնոսկի
плинтус-շրիշակ
пододеяльник-ծրար, վերմակասավան
подорожник-գաղտիկուր
попынь-օշինդր
похмелье-գարթխում
принтер-պատկերամուտ
пролетар-ընչագուրկ բանվոր
протез-դրանդամ
пряжка, застежка -ճարմանդ
пудинг-լցոնով կարկանդակ
пьедестал -ցատկահարթակ
ражок-կոշկաթի, եղջյուրիկ
распродажа-սպառավանառք
рация- շարժահեռախոս
рейд-ստուգայց
род, порода-ցեղ, ցեղատեսակ
розмарин-ցիտրոն
рубин-սուտակ, լալ
сантиметр-չափերիզ
сендвич-կարագահաց
Сенсация-ցնցադեպ
сертификат-հավաստագիր
серфинг-ջրադահուկ
сечение-հատույթ
сканер-պատկերամուտ
спазм-ջղակծկումներ
спрей дезодорант-ցողաշիթ
старт-մեկնարկ
стенокардия-կրծհեղձուկ
супермаркет- գերխանութ

табуретка-իշտոնուկ
тампон-բժշկ. խձուծ
танкер-բենզին փոխադրող մեքենա
тренажер-մարզասարք, վարժասարք
тролейбус-մարդատար անոնելս էլեկտրաշարժ
трубочка-ըմպածողիկ
фанатизм-լատ.՝ մոլեռանդություն
финиш-եզրագիծ
фисташка-գետնանուշ, պիստակ
флеболог-անոթաբան
флешка/խսկց./-կրիչ
флеш-հիշողություն
фосфор-լուսածիր
хашлама-խաշածո
цикорий-եղերդակ, տերեփուկ
шампиньон-սնկ. ազարիկոն
шансон-ֆրանսիական
шарф-վզնոց
швейцар-բարապան
шлагбаум-արգելափակոց
шпилька-զամասեղ
шуруп-պտտագամ
эйфория-բերկրաթմբիր
экспрессионизм-արտահայտչապաշտություն
энурез-գիշերները տեղում միզելը
этикетка-պիտակ
рысь-լուսան
ополовка -տախտակակաղապար
виски-անգլիական թունդ օղի
ром-ոգելից թունդ խմիչք

Հայերը ձիուն անվանում են նաև **ասպ**:

Հայերենի հարուստ և հյութեղ բառապաշարը մեզ առաջարկում է ձիուն վերաբերող տարբեր բառեր. օրինակ՝ ազնվականի ձի՝ ասպ, սրանից՝ ասպետ, ասպագեն, ասպատակ /ձիու ոտքի տակ զգել/, ասպատակություն և այլն /տես ստորև/:

ասայազեն՝ հեծյալի զգեստ
ասպախումբ՝ հեծելախումբ
ասպասարք՝ լծասարք
ընտիր ձի՝ նժույգ,
արու ձի՝ հովատակ, որձաձի, մատակ,
էգ ձի՝ զամբիկ, ճակ, մատյան կամ սարակ,
հեծնելու ձի՝ ռահվար, երիվար,
բեռնաձի՝ գրաստ,
հարս տանող ձի՝ հարսնաձի,
կառքին լծված՝ վարգաձի,
դեռատի ձի՝ մտրուկ,
ասպարափայլին՝ ճերմակ,
շիկագույնին՝ աշխետ,
մոխրագույնին՝ մողոշիկ,
թխակարմիրին՝ շառատ,
սև ու ճերմակավունին՝ ճանճկեն,
սպիտակ սևախայտ ձիուն՝ ճարտուկ,
սպիտակախայտ ոտքերով ձիուն՝ կոստնտոտիկ,
եզի պես լայն ու տափակ գավակ ունեցողին՝ եզնգավակ,
մերկ, անթամբ ձիուն՝ մերկիկ,
ձիու ձագին՝ քուռակ:

Հայերենի ուղղագրության պատմությունից

Հայերենի ուղղագրական առաջին սկզբունքները մշակվել են Մաշտոցի օրոք: Իհարկե, այդ շրջանում գրությունն ու արտասանությունը առավելագույնս համապատասխանում էին, սակայն կային նաև ուղղագրական որոշակի սկզբունքներ, օրինակ՝ չէր գրվում գաղտնավանկի ը-ն: Այս շրջանի ուղղագրությունը մի շարք անմիօրինակություններով հասնում է միջնադար: 12-13-րդ դարերում կատարվում են մի շարք փոփոխություններ, և այս ուղղագրությունը դարձյալ բազում անմիօրինակություններով հասնում է մինչև 20-րդ դար: 1922 և 1940 թվականներին Խորհրդային Հայաստանում կատարվում են ուղղագրական բարեփոխումներ, որոնց նախագծերի հեղինակը Մանուկ Աբեղյանն է: Հայերենի ուղղագրության պատմության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ուղղագրության զարգացման ընթացքը հնարավոր է բաժանել չորս հիմնական շրջանի: Առաջին շրջանն ընդգրկում է 5-10-րդ դարերը: Այս

շրջանում գրության մեջ գերիշխում է հնչյունային սկզբունքը: Չկային տողադարձի կանոններ:

Երկրորդ շրջանն սկսվում է 11-րդ դարից և հասնում մինչև 1922 թվականը, երբ Խորհրդային Հայաստանում կատարվեց ուղղագրական բարեփոխում: Այս շրջանում հնչյունային սկզբունքի հետ սկսում են գործել նաև ավանդական և ձևաբանական սկզբունքները, կատարվում են ուղղագրական որոշ փոփոխություններ: 12-13-րդ դարերում հայոց այբուբենին են ավելացվում **օ**, **ֆ** տառերը, իսկ ավելի ուշ՝ **և** հավելագիրը:

Երրորդ շրջանն սկսվում է 1922 թվականից և հասնում մինչև 1940 թվականը: Այս շրջանում գործում են ուղղագրական նոր մշակված կանոններ:

Չորրորդ շրջանն սկսվում է 1940 թվականից և շարունակվում մինչև այժմ: 1940 թվականին Խորհրդային Հայաստանում կատարվեց ուղղագրական նոր բարեփոխում, որով մասնակիորեն փոփոխվեցին 1922 թվականին հաստատված սկզբունքները: 1940 թվականից գործող կանոնները որոշ փոփոխություններով շարունակում են գործել մինչև այսօր:

Միյուրքում չտարածվեցին 1922 և 1940 թվականների բարեփոխումները, և որոշ փոփոխություններով գործում են ուղղագրական երկրորդ շրջանից եկող սկզբունքները:

Խոսքի թերություններ

Խոսքային գործունեության հիմնական թերությունը մաքուր, անաղարտ, օտար ազդեցություններից զերծ խոսելու անկարողությունն է: Օտար ազդեցություններ կան թե՛ բառապաշարում, թե՛ քերականական համակարգում: Բառային համակարգում օտարաբանությունները հեշտ են նկատվում, իսկ քերականական, հատկապես շարահյուսական օտարաբան պատճենումները՝ ոչ: Եվ գաղտնիք չէ, որ օտարամոլության դեմ պայքարը հանգեցվում է օտար բառերի դեմ պայքարին, իսկ շարահյուսական երևույթները մնում են, տարածվում, երբեմն էլ՝ օրինաչափություն դառնում: Հաճախակի են նաև բառագործածության, բառաձևի, համաձայնության, հոլովառության և խնդրառության, շաղկապի կամ դերանվան կիրառության սխալներ: Խոսքային կապակցություններում հաճախակի հանդիպող շեղումները բառակազմության կանոնների չիմացության, բառի առանձին բաղադրիչների թյուր

ըմբռնման, քերականական տարբեր օրինաչափությունների չիմացության արդյունք են: Իմաստային շեղումներից խուսափելու համար յուրաքանչյուրը պետք է կարողանա տիրապետել հայոց լեզվի քերականական օրինաչափություններին:

ճիշտ

անունդ ի՞նչ է
բանն այն է
մեզ համար
իր հորը
կարծում եմ, որ
խոստովանեց իր հանցանքը

պատրաստ է
ի վիճակի է
նպատակ ունի

հաշվետու լինել, կամ՝ հաշիվ տալ,
կամ՝ հաշվետվություն ներկայացնել
ոչ մի, կամ՝ հազար ու մի,
կամ՝ որևէ պատճառ
քեզ չի վերաբերում
և այլք /բայց և՛ այլոց/
հանձին քո /բայց՝ հանձինս նրանց/
ամփոփել, կամ ներառնել, կամ՝
պարունակել
հազիվ էր արթնացել կամ՝
նոր էր արթնացել
մինչև անգամ ընկերս կամ՝ ընկերս էլ
փոքրիկ գիրք /թռչուն/ կամ՝
գրքույկ/թռչնակ/
այս ձևով
այն մասին, որ
մանրամասն
մի՛ գարմացիր
տարբեր պատճառներով

սխալ

ինչպե՞ս է անունդ
բանը նրանում է
մեր համար
իրեն հորը
ես գտնում եմ, որ
խոստացավ իր հանցանքը

պատրաստ է
ի վիճակի է
նպատակ ունի

հաշվետվություն տալ
ոչ մի, կամ՝ հազար ու մի,
կամ՝ որևէ պատճառներ
քեզ չի վերաբերվում
և այլոք
հանձինս քո
իր մեջ ամփոփել,
կամ պարունակել
հազիվ նոր էր
արթնացել
մինչև անգամ ընկերս էլ
փոքրիկ գրքույկ/թռչնակ/
այսպիսի ձևով
առ այն, որ
մանրամասն
մի՛ գարմանա
տարբեր պատճառով

այս կամ այն գիրքը մի քանիսը մնացին արժանվույն մեծավ մասամբ կամ մեծ մասամբ ասեկոսե /երկրորդ մասը Թիֆլիսի բարբառածն է. գործածվում է հոգնակիով/ աղյուսակ /յակ-ը հանդիպում է թվական կազմություններում` եռամսյակ, հնգյակ, տասնօրյակ/ դոկտոր կրեզրակացնի չրեզրակացնել դուստրեր /անհնչյունափոխ ձևեր են/ ամիրայություն, ոուս.-ից փոխառնելով` օրենքը գործում է հարթմնի` զգոն, զգաստ վիճակ համակարծիք են քո գաղափարին բավական թվով առաջարկություն «բավականին» բառը գոյականի հետ չի գործածվում բարդույթ բարեպատեհ բռնագաղթածներ կամ բռնի տեղահանվածներ որևէ դիտողություն չկա երևի հասկացավ ժառանգել այսինչին կտակել այսինչին ուզում են գնալ տրամադրվում է զեղչ դավաճանել հայրենիքին էժան ապրանքներ ծանոթանալ Արամի հետ մի՞թե /եթե հետադաս է, ապա առանց հարցական նշանի`	այս կամ այն գրքերը մի քանիսը մնաց արժանի տեղ կգրավի մեծամասամբ աղյուսակ դոկտորը կեզրակացնի չեզրակացնել դստրեր էմիրություն օրենքն աշխատում է արթմնի ես կիսում եմ քո գաղափարը մտասևեռում բարեպահ բռնագաղթվածներ որևէ դիտողություններ չկան երևի թե հասկացավ ժառանգել այսինչից, կտակել այսինչից ուզում են գնամ տրամադրվում են զեղչեր դավաճանել հայրենիքը էժան զներ ծանոթանալ ծրագրի հետ հարցական նշանի` ճշմա- րի՞տ է միթե/
--	--

Օժանդակ բայի ետադաս կիրառումը ոչ մի երանգ չի ընդունում, իսկ ժխտական ձևերը, քանի որ նախադաս են, ընդունում են:

բարև Ձ/ձ/եզ
ցտեսություն
արտահայտում են՝ միտքը, գաղափարը, զգացումը
պատկերում են՝ կյանքը, կենցաղը, երևույթը
նկարագրում են՝ միջավայրը, տեսարանը, արտաքինը
արտացոլում են՝ ներաշխարհը, վիճակը, առօրյան
ներկայացնում են՝ խառնվածքը, հանգամանքները, տիպը...

Ում ինչպես դիմել

Հանրապետության նախագահին՝ մեծարգո նախագահ, Ձերդ
գերազանցություն

Հանրապետության վարչապետին՝ պարոն վարչապետ
Նախարարին՝ պարոն նախարար
Կաթողիկոսին՝ Վեհափառ տեր, գրավոր խոսքում՝ Նորին Սուրբ
Օծություն Տեր Տեր...

Պատրիարքին՝ ամենապատիվ տեր

Արքեպիսկոպոսին՝ գերաշնորհ տեր

Եպիսկոպոսին՝ սրբազան

Վարդապետին՝ հայր սուրբ

Քահանային՝ տեր հայր

Սարկավագին՝ եղբայր

Անձանոթ կնոջը, աղջկան, տղամարդուն՝ տիկին, օրիորդ, պարոն,
երիտասարդ:

Յուրաքանչյուր հայ հայերեն այբուբենի 36 տառերի մեջ իր տառն
ունի:

Ամեն մարդու համար անունը հաս է, հայրանունը՝ աղ, տոհմանունը՝
հանդերձ: Հացից ու աղից հրաժարվել չես կարող, հանդերձդ դեն կզցես,
եթե մաշվի:

Հայկ Խաչատրյան

Արցախյան բարբառ

Արցախի սուրբ, «կոշտ» բարբառը Պահենք նրան աչքի նման,
Եկեք պահենք անարատ, Մեր հոգու պես զգայուն,
Իմաստաշատ բառուբանը Արդար հնչող երգի նման
Դարեր տանենք անաղարտ: Մեր բարբառը՝ մնայուն:

Բարբառը գանձ է, նրանից է իսկական գրականությունը քաղում լեզվական շատ գույներ, ստանում զգալի համ ու հոտ: Բարբառում պահպանված են մեր դասական լեզվի՝ գրաբարի շատ գանձեր: Բարբառը պետք է լավ խախտել օգտագործելուց առաջ, որպեսզի օտարամուտ ու խորթ որոմները գտվեն մաքուր, բնիկ հատիկներից:

Սերո Խանգաղյան

Արցախյան բարբառը հայերենի ամենատարածված, ուսումնասիրված ու դեռ ուսումնասիրության ընդգրկուն դաշտ ունեցող բարբառներից է: Այն ունի հարուստ ու բազմադարյան պատմություն. հայերենի հնագույն բարբառներից է և հատկանշվում է հնչյունական, քերականական ու լեզվաոճական առանձնահատկություններով, ճոխ բառապաշարով, բառապաշարի հնագույն տարրերով, բառիմաստային ուշագրավ իրողություններով: Բարբառի բառապաշարի հարստությունը վկայում է պատմական խոր արմատներ ունենալու փաստը:

Ղարաբաղի բարբառը

Ժայռի նման է այս հին բարբառը,
Ժայռի պես կոշտ է, չըհրդկված
Ու ժայռի պես էլ կարծր է, համառ է,
Չի՛ պոկի նրան ոչ մի հարված.
Շուրթերի վրա այնպես է բառը,
Ինչպես որ ժա՛ռն է հողում խրված...

Սիլվա Կապուպիկյան

Կոստանդին Մելիք-Շահնագարյան

Հայ գրականության պատմության մեջ եզակի անուններ կան, որոնք ստեղծագործել են իրենց մայրենի բարբառով: Այդ անունների մեջ իր

ուրույն տեղն ունի Տմբլաչի Խաչանը (Կ. Մելիք-Շահնագարյան), որի՝ Ղարաբաղի բարբառով գրված ստեղծագործությունը՝ «Ջուռնա-Տմբլա» ֆելիետոնների երկհատոր ժողովածուն, կարելի է ասել, հուշարձան է հարազատ բարբառին:

«Իմ աչքի լուս ըշխարքաս մին փռած նամուս դեյրաթավ Ղարաբաղցիք, իմ յոյսը ծեգ երայ ա, ծեր արուռը օլմիա թա չուր քցիք, դուղի բուղի պեներու հետաւ կենաք, ծեր վեաթանը մոռանաք, ծեր վառ ուջադին երայ ճիւր ածիք, Ղարաբաղին անըմը կոտրիք...» Տմբլաչի Խաչան /Կ. Մելիք-Շահնագարյան/

Հայերենի բարբառների մեջ քիչ չեն հումորով հարուստ բարբառները, խոսվածքները, սակայն արտակարգ հումորով է Ղարաբաղի բարբառն իր ճոխ ու հարուստ բառապաշարով, որն իր արտահայտությունն է գտել Տմբլաչի Խաչանի լեզվում:

Շատ լավ գիտակցելով, որ յուրաքանչյուր լեզվի բառապաշարի զարգացման հիմքը բարբառներն են, որ նրանք են գրական լեզվին շունչ ու կենդանություն մատակարարում, գրողն այնպես ստեղծագործաբար է օգտագործել ժողովրդական խոսքի այդ անսպառ շտեմարանը, որ, թերթելով Սահակ Ամատունու «Հայոց բառ ու բան» (1912թ.) և Հր.Աճառյանի «Հայերեն գավառական բառարանները» (1913թ.), նկատում ենք, որ Ղարաբաղի հարուստ բառագանձից բերված օրինակների մեծ մասը Կ.Մելիք-Շահնագարյանի «Ջուռնա-Տմբլա» Ա և Բ ժողովածուներից են:

Կ.Մելիք-Շահնագարյանը առաջին հայ գրողն էր, որ իր ֆելիետոնների համար ընտրեց Ղարաբաղի ճոխ, կենդանի ու պատկերավոր բարբառը, սկսած 1878թ., երբ սկսեց գրել «Դըլըցե կնանոց պընըփեշակը», հետո՝ «Տնգըբազ», և ապա՝ «Ջուռնա-Տմբլաչի» շարքը, որոնք պարբերաբար լույս են տեսել «Նոր-դարում», ապա՝ առանձին գրքով:

Վարպետ գրողը իր գրքի մեջ որպես գրական կերպար է ընտրել հասարակ մի գյուղացու՝ Տմբլաչի-Խաչան անունով, որը Ղարաբաղի հայ գյուղերից մեկից եկել էր Շուշի (հիշենք, որ Խ.Աբովյանից հետո մեր գրականության մեջ ընդունված էր հասարակ գյուղացուն գրական կերպար դարձնելը) և, որպես թմբկահար, գուռնաչի, մտել տուն առ տուն, ուր կար ուրախություն, նշանդոք ու հարսանիք: Նահապետական գյուղացու սուր աչքը տեսնում է հասարակական կյանքում տեղի ունեցող պախարակելի երևույթները և այդ ամենը երգիծելով՝ հումորով մատուցում է որոշակի հնարներով՝ գուռնա, տմբլա, պարովակիր, արլալենի,

թղրամ, դրամաֆոն, տիլիփոն, որոնց միջոցով իր ժողովրդի «անալաթն» (վիճակը) է հասցնում աշխարհին՝ այդ ընթացքում ծալ-ծալ բացելով մայրենի բարբառի հարուստ շերտերը:

Մելիք-Շահնազարյանը միտումնաբար օգտագործել է Ղարաբաղի բարբառի գրեթե ամբողջ բառաշերտը՝ գիտակցելով, որ ժամանակի ընթացքում քաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման հետևանքով հնարավոր է դրանց մի մասի կորուստը (ինչպես և է), որպեսզի, ինչպես ինքն է նշում, ապագա բանասերը կարողանա ուսումնասիրել և ներկայացնել աշխարհի մի փոքրիկ անկյունում գտնվող այս չքնաղ լեռնաշխարհի անչափ հարուստ բառազանձը: Հետևաբար, նրա նպատակն է եղել կորստից փրկել ժողովրդի ստեղծած, նրա լեզվի պատմության համար կարևոր նշանակություն ունեցող բարբառը:

***Ելիզավեդա Միրզոյան, Տմբլաչի Խաչանի
«Ձուռնու- Տմբլաչի» լեզվական արվեստը***

Քարբառում գործածվող մի շարք բառերի բացատրություն

գիրգյամոտ անել - կիրակի/ մտնել/ լողանալ
գիրդաբիր- խիզար-մեծ սողոց
դարյազ- գերանդի
դիբիրյուգուն- իրիկնադեմ
դըբետ-դեպի ետ
ըրամակ ընգնել-երամակի մեջ ընկնել՝ մարդաշարք մտնել,
ըրըմակեն մարդ- կարգին մարդ
ըրուգուն-երեկոյան
թյունի- տխմար, ապուշ
ժիժիպապա- ժիժի՝ ճպուռ, անվերջ խոսող, նաև՝ ծամածռություն
ծըմըթկեվաթ-ծննդկանին տարվող գավաթ-նվեր, շնորհավորանք
կադին-խոզի համար, տկադին/տկօդին/-մարդու համար, պնդուկ
կըծոխուր-թթվաշ բույս /բարբառիս/
կըծըխրել-թթվել/ մարդու մասին/, դժգոհել, բարկանալ
հաբգյա-երկբերան տոպրակ
հեղիս/ք/- կիսահաս, չհասած ցորեն, ցորենի հասկ, «Քաջաբույս և
կանաչագեղ արտոցն հեղիք ըստ մմանութեան խաղաղածավալ
ծովայինն ալեսց /Ոսկեբերան/: Հինգերորդ դարի եզակի վկայություն է,

գործածվում է Ղարաբաղի բարբառում. այն գործածվում է նաև արմատի կրկնությամբ՝ հիդրհեղեն՝ կիսաեփ իմաստով:

հիշգիդամ-ի^օնչ իմանամ
դօրփեր-հորեղբայր
ճուճուփած ծառ -ճուփ-ճուփի՝ լիովի
մալա-լոսոց
մաշա-ունելի
մաշառ-սոոց
յէխցի- եկեղեցի
յըդօլի-եղան
շըմբել-խծպել
շընրկոտէգյ-շան կոտակ՝ շան ձագ
պալան-պալան-բալան-բալան-քուլա-քուլա
պալանտրակ /բրբ./ - ծառերից պտուղը թափելու ու նետելու
փայտե կարճ ձողիկ
պալտի /պոլի/- գլխարկ. Նա գլխին դրել էր ոսկեթել պալտի:
պախրակով - էգ պախրա
պարիգյում - բարի երեկո
պըրտըտյուս - պորտն ի դուրս
պըրտըյեր- պորտնիվեր
ռըխալի- լի երախով, ամբողջ ուժով, սրտանց
սաք-սաք-սարք-սարք բառից՝ կանոնավոր
տիյեր- դեպի վեր
տիվեր-դեպի վար /վայր/
փիսըվեր / փիսըյեր/ փորն ի վեր
քըլեվ, քըչեվ-կեղև, կճեպ
քըսկարենք-կասկարա՝ եռտանի
օլի - ծուլ
օխտը - յոթ, ուխտընասուն - յոթանասուն
օռնը - թռռան թռը՝ ծռռան որդին:

Քարբառում շաբաթվա օրերի համար ունենք անուններ

Այսօր՝ սօր /ըսօր/, վաղը՝ էքուծ, վաղը չէ մյուս օրը՝ ալօր, կալօր, չալօր, մալօր, փալօր:

Նշանավոր լեզվաբաններ

Հրաչյա Աճառյան

Աշխարհահռչակ գիտնական, հայ անվանի լեզվաբան, ակադեմիկոս, բանասեր Հր. Աճառյանը մոտ 200 աշխատությունների հեղինակ է: Նա ուսումնասիրել է լեզուներ, գիտեր ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, իտալերեն, պարսկերեն, լատիներեն, սանսկրիտ և այլն, և դա այն դեպքում, երբ մանուկ հասակից մի աչքը բոլորովին չէր տեսնում, իսկ մյուս աչքը կիսով չափ կորցրել էր տեսողությունը:

Աճառյան ազգանվան մասին դուստրը՝ Քնարիկ Աճառյանն ասում է. «Պապս՝ Աճառյանի հայրը, եղել է կոշկակար: Երբ Հրաչյան դպրոց գնաց, նրան հետ ուղարկեցին՝ ասելով՝ գնա ազգանուն բեր: Հայրն ասաց՝ գնա գրիր Կառճիկյան: Մեր տոհմի ինչ- որ մի ճյուղը Կառճիկյան է եղել: Դպրոցում նրան ծաղրում էին՝ «կառճիկ-մառճիկ». որոշեց փոխել ազգանունը: Երկար մտածելուց հետո վերցրեց «կռճիկ», որն ականջի կռճիկային մասն է: Դա էլ որ ծաղրեցին, լեզվաբանորեն բացատրեց, թե «կռճիկը» աճառն է: Եվ այդպես՝ մնաց Աճառյանը, որ եզակի ազգանուն է»:

Նրա լեզվաբանական աշխատությունների մեջ ուսումնասիրված են հայոց լեզվի գրեթե բոլոր բնագավառները: Դրանք Մ.Աբեղյանի համարնույթ աշխատությունների հետ միասին դարձան հայերենի ուսումնասիրության գիտական հիմքերը, որոնց վրա զարգանում է հայերենագիտությունը նաև այժմ: Հր.Աճառյանի հետազոտությունների կարևոր բնագավառներից մեկը եղել է հայերենի բառաքնությունը: Դրան նվիրված նրա մեծագույն գործն է վեց հատորից բաղկացած «Հայերեն արմատական բառարանը», որի լիակատար ցանկն է շուրջ 11 հազար հայերեն արմատական բառերը՝ նրանց բացատրությամբ, քերականական տեղեկություններով ու ստուգաբանությամբ: Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության արդյունքները նա ամփոփել է «Հայոց լեզվի պատմություն» երկհատոր աշխատության մեջ (Ա մաս, 1940, Բ մաս, 1951):

Հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությանն է նվիրված նրա «Լիակատար քերականություն» տասը հատորանոց մենագրությունը,

«Հայոց անձնանունների բառարանը», հայ գրերի պատմությանն ու տեսությանը նվիրված աշխատությունները, հայ հին մատենագրությա-

նը, նոր գրականության պատմությանը նվիրված ուսումնասիրությունները՝ որպես Հր.Աճառյանի տքնաջան աշխատանքի արգասիքներ, իրենց հաստատուն տեղն ունեն հայոց լեզվի և խոսքի մշակույթի ուսումնասիրության բնագավառում:

Հր. Աճառյանի անունով են կոչվում ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտը և դպրոց՝ Երևանում:

Մանուկ Աբեղյան

Լեզվաբան, գրականագետ, բանասեր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը հայ նոր բանագիտության հիմնադիրն է: Համակարգել է պատմավիպական ու քնարական ժանրի ժողովրդական ստեղծագործությունները, մշակել դրանց ծագման ու զարգացման տեսությունները: Աբեղյանը նաև արևելահայերենի արդի ուղղագրության հեղինակն է:

Սկզբունքային նշանակություն ունեն Աբեղյանի լեզվաբանական-քերականական աշխատությունները: «Աշխարհաբարի քերականություն» (1906թ.), «Աշխարհաբարի շարահյուսություն» (1912 թ.), «Հայոց լեզվի տեսություն» (1931 թ.) աշխատություններում առաջինն է գիտականորեն համակարգել արևելահայերենի հնչյունաբանությունը, պարզել հնչյունափոխության երևույթները, համակողմանիորեն հետազոտել բառագիտությունն ու բառակազմությունը: Նա կազմել է առաջին «Ռուս-հայերեն բառարանը» (1925 թ.), մասնակցել մի շարք բառարանների ստեղծման աշխատանքներին:

Մ. Աբեղյանի անունով են կոչվում ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտը և դպրոց՝ Երևանում:

Գևորգ Ջահուկյան

Հայ ականավոր բանասեր, լեզվաբան, հայագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, թղթակից անդամ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ:

Գևորգ Ջահուկյանի հիմնարար հետազոտություններից են՝ «Լեզվաբանության պատմություն» (հ. 1, 2), «Հայ բարբառագիտության ներածություն», «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները», «Ընդհանուր և հայ լեզվաբանություն», «Հայերենի համեմատական քերականություն», «Հայոց լեզվի պատմություն, մախազարային շրջան»:

Հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառում ներկայացրել է հայերենի առաջնությունները հնդեվրոպական և այլ ընտանիքների պատկանող բազմաթիվ հին և հնագույն լեզուների հետ, հայտնաբերել հայերենից ուրարտերենին, խեթերենին և այլ լեզուներին անցած փոխառություններ, տվել նոր ստուգաբանություններ:

Հայոց լեզվի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում մշակել է հայերենի պատմության զարգացման շրջանաբաժանումը, առաջին անգամ հայերենի նկատմամբ կիրառել է լեզվաժամանակագրական մեթոդը, բնութագրել է հայերենի պատմության նախագրային, հին, միջին և նոր շրջանների հիմնական առանձնահատկություններն ու հայոց լեզվի կառուցվածքի և բառապաշարի պատմական զարգացումը:

Հայ բարբառագիտության բնագավառում ստեղծել է նոր գիտակարգ՝ վիճակագրական բարբառագիտություն: Պատմահամեմատական լեզվաբանության մեջ առաջ է քաշել նախալեզվի տարբերակայնության գաղափարը, առաջարկել նախալեզվի վերականգնման նոր վարկած:

Ժամանակակից հայերենի տեսության բնագավառում կիրառել է լեզվի կառուցվածքի նկարագրության նոր մեթոդներ, առանձնացրել ու հիմնավորել քերականական նոր կարգեր, ուսումնասիրել է հայերենի իմաստաբանությունն ու բառակազմությունը:

Ստեղծել է լեզվաբանության համընդհանուր տեսություն և կադապար: Հատուկ ուշադրություն է դարձրել հայ լեզվաբանության, մասնավորապես, հայ քերականության պատմության հարցերին:

ԳՐՈՂՆԵՐԻ ԳԻՍԱՆԿԱՐՆԵՐ

Հայ ազգային դպրոց ստեղծելու և նոր սերնդի համակողմանի ու հայեցի կրթությունն ապահովելու ճանապարհին կարևոր նշանակություն ունի հումանիտար առարկաների ճիշտ ուսուցանումը: Հայ գրականությունն առարկան մեծ հնարավորություններ ու միջոցներ ունի սովորողների հայեցի դաստիարակության գործում: Հայ գրականության դասերին է հիմնականում սկզբնավորվում երեխայի աշխարհայացքը հայրենի երկրի ազգային մշակույթի և շրջապատող իրականության նկատմամբ:

Հայ գրականությունը, բացի գուտ գրական երևույթներին ծանոթացնելուց, նպաստում է անհատի հոգևոր և մտավոր զարգացմանը, անձի արժեքային համակարգի, ազգային հոգեկերտվածքի ձևավորմանը, հաղորդակից է դարձնում համաշխարհային արժեքներին, դաստիարակում է մարդասիրական ոգի, բարոյական բարձր հատկություններ՝ բարություն, հայրենասիրություն, ազնվություն, ընկերասիրություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյականային այլ հատկանիշներ:

Աշակերտի և գրողի հանդիպումը տեղի է ունենում ուսուցչի միջնորդությամբ: Եվ ինչ չափով ուսուցիչը ի վիճակի է ներկայացնելու գրողին, նրա մարդկային նկարագիրը, այնքան աշակերտը կամ ընթերցողը խորն է զգում գրողի էությունը, այնքան մոտենում է նրան, հասկանում, անցկացնում իր սրտի ծալքերով. այստեղ արդեն նա չի կարող անտարբեր ունկնդրի դերում լինել: Նա կունենա հարցեր, կարիք կզգա ավելի խորը ծանոթանալ տվյալ անհատականությանը, նրան կդիտի նախ և առաջ՝ որպես մարդ, ապա՝ որպես գրող: Եվ ինչքան ուսուցիչը զինված է բոլոր հարցերի պատասխաններով և մեթոդապես ճիշտ է ներկայացնում այն, այնքան մեծանում է աշակերտների հետաքրքրությունների շրջանակը: Մենք լավ գիտենք, որ գիտությամբ հետաքրքրվող աշակերտը արդեն անցում է կատարում զարգացման հաջորդ՝ ուսումնասիրման փուլը, որն էլ մեր՝ մանկավարժներիս գործունեության երանելի նպատակներից մեկն է:

Մեծերի մասին

Մեսրոպ Մաշտոց

Մաշտոցի կերպարի և հայ գրերի մասին տարբեր դարաշրջաններում հյուսվել են ավանդություններ, բանավոր ստեղծագործություններ, որոնց մի մասի հեղինակը ժողովուրդն է, մյուսինը՝ անհայտ հեղինակներ: Ոչ միայն հայոց եկեղեցին, այլև ժողովուրդը Մաշտոցին դասել է սրբերի կարգը ու երկրպագել նրան: Մովսես Խորենացին այսպես է բնութագրել ուսուցչապետին. «Մտքով՝ ստեղծող, խոսքերով՝ պայծառ, գործերով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, սովորեցնելու մեջ՝ չձանձրացող...»:

Մեսրոպ Մաշտոցի կյանքի և գործի մասին գրել են նրա աշակերտներ Կորյունն ու Մովսես Խորենացին, միջնադարյան մի շարք մատենագիրներ: Հետագայում նրա մասին գրվել են գիտական աշխատություններ, գեղարվեստական ստեղծագործություններ:

Մաշտոցի այբուբենը ժամանակակից գրականության հիմնական թեմաներից է: Սիրո և արդարացված հպարտության հզոր տարերք կա շատ գրողների ստեղծագործություններում:

Դ-ու մի անուն չես Մաշտոց անունով,
Դ-ու ամբողջ ազգ ես՝ լցված անհունով...
Դ-ու սփռված սեր, երդում անկորուստ,
Դ-ու սխրանքների սերունդով հարուստ,
Դ-ու մեզ ուսանող ուսյալ գերագույն,
Դ-ու ազգ կամարող ծիածան անքուն...
Դ-ու միշտ սնվող գետ, դու հորդ, միայն հորդ,
Դ-ու մեր հավատի լուսեղեն շքերթ,
Դ-ու հար ուսուցիչ, մենք հար աշակերտ:

Քեզ ծնեց ազգս,
Որ անմահության առջևից գնար,
Քեզ ծնեց ազգս,
Որ նենգ սրի տեղ
Ունենար արև ու պայծառ քնար:

Լյուդվիգ Գուրյան

Պատյան չունի՝ Թուր – Կեծակի հայոց լեզուն այբբենաթուր...
Մի այնպիսի գորք ծնեցիր, որ ոչ մի պահ չի տրոհվում,
Ոչ մի զինվորդ չի գոհվում ...
Ամեն տառդ հայ ազգապահ մի զինվոր է անմեռական,
Ամեն բառդ՝ հայոց մի գունդ, այբուբենդ՝ բանակն Հայկյան ...
Ո՛վ դու՝ անգույգ մեր գորավար, արյուն չկա քո նիզակին
Ո՛վ ուսուցիչ, ո՛վ ազգապահ, ո՛վ գորավար Այբբենաթուր...
Այն դարերում, երբ յոթնացեղ ասորիքներ անհետ կորան,
Դու չթողիր հայը կորչի, ո՛վ աստըծո այբբենարան ...
Հովհաննես Շիրազ

Ծնվե՛ց, որ ծնե՛նք,
Եղա՛վ, որ լինե՛նք,
Եվ անմահացա՛վ,
Որ անմահանա՛նք...

Պարույր Սևակ

Մովսես Խորենացի

Գանձեր է փրկել բյուրավոր
Իր ազգը սիրող Խորենացին,
Հասցրել դարն այս լուսավոր
Իր ազգը սիրող Խորենացին:

Կկորչեր Վահագնը հուրհեր,
Լայնալիճ աղեղը Հայկի,
Թե լիներ անմիտ ճգնավոր
Իր ազգը սիրող Խորենացին:

Համլեպ Կարճիկյան

«Մովսես Խորենացին բազմագիտակ է... Նա հին աշխարհի ամենանշանավոր հեղինակներից էր... Նա բարձր է կանգնած իր դարաշրջանի մտածողությունից և հայրենի պատմագիտությունը հսկայական քայլերով առաջ է մղել: Կգա մի օր, որ գիտական Եվրոպան նրան կհայտարարի Մեծ՝ իր ապրած ժամանակի համար, կգա մի օր, որ Մովսես Խորենացուն մեղադրողները կարդարացնեն նրան, որովհետև եթե լավ հետազոտեն Խորենացուն, կճանաչեն նրա անկեղծությունը և համաձայն կլինեն անվանելու նրան Հայոց Պատմահայր»:

*Վիկտոր Լանգլուա,
Ֆրանսիացի արևելագետ, հայագետ*

«Խորենացին առաջինը եղավ, որ գրեց հայ ազգի սիստեմական պատմությունը սկզբից մինչև իր ժամանակները... Սա մի ծննդյան վկայական էր մեր ազգի համար, որ մինչև այդ ժամանակ չգիտեր, թե ո՞վ է ինքը և ի՞նչ ծագում ունի: Կապելով հայ ազգի սկզբնավորությունը Սուրբ Գրքի հետ, ծագեցնելով հայերին Հաբեթի ցեղից՝ նա հայ ազգի համար ստեղծեց պատվավոր տեղ մյուս հին ազգերի շարքում»:

Սյրեհան Մալխասյանց

Գրիգոր Նարեկացի

...Բավ է իր մի Նարեկացին, որ ողջ ազգը սրբանա...

Հովհաննես Շիրազ

Նարեկացու մատյանը հայի կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մռնչում է մինչև երկինք:

Հովհաննես Թումանյան

...Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա...

Եղիշե Չարենց

Մատյանը ոչ միայն չի հնանում, չի մոռացվում, այլև գնալով նորանում է՝ համահունչ դառնալով նոր ժամանակների:

Վահագն Գավթյան

Իմ կարծիքով ամբողջ աշխարհը պետք է շատ թե քիչ Նարեկացի իմանա:

Վիլյամ Սարոյան

...Նրա մոտ ամեն ինչ հսկայական է, ամեն ինչ տիեզերքի ու հոգու չափով, որովհետև հոգին ընդգրկում է տիեզերքը:

Լև Օզերով

Թեքվում եմ նրա երգերի գրքին,
Ինչպես թեքվում եմ անդունդի վրա,
Եվ շունչս պահած դողում եմ կրկին
Մարգարեական խոսքերից նրա...

Մարտին Տանկ

Սայաթ-Նովա

Մեր վիթխարի Սայաթ-Նովան մի հոյակապ սիրահար է՝ բռնված ու բռնկված սիրո հրդեհով: Սիրո լույսի տակ էլ նկատում է աշխարհն ու իրերը, զգում է, որ էրվում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ, վեհ ու վսեմ՝ որպես աշխարհի ու մարդու մեծ բարեկամը: Ջայրացավ, բայց երբեք չչարացավ, ցավեց, բայց երբեք չանիծեց:

Խաղով եկավ, ախով գնաց Սայաթ-Նովան,
Երգով եկավ, վերքով գնաց Սայաթ-Նովան,
Սիրով եկավ, սրով գնաց Սայաթ-Նովան,
Սիրով մնաց Սայաթ-Նովան...

Հովհաննես Թումանյան

Ոսկե բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու,
Քեզ միայն քո յարն է վառել, քանի՜ յարեր վառել ես դու
Ո՞ր շահն ունի էսքան գոհար ու անգին քար, Սայաթ-Նովա,
Չի ունեցել քեզ պես շռայլ խալխը նոքար, Սայաթ-Նովա:

Եղիշե Չարենց

Քանի՜ տարի մեջլիսներում տա՛ղ ես ասել, Սայաթ-Նովա,
Քանի՜ տարի դու սրտերի հե՛տ ես խոսել, Սայաթ-Նովա,
Կարո՛տ բլբուլ, ամեն տարի եկել ես դու վարդերի հետ,
Ու սիրելի՛վ ու սիրվելի՛վ՝ մեզ ես հասել, Սայաթ-Նովա:

Ամեն պոետ իր քնարին քո սագից մի լար է ուզում,
Ամեն ջահել քո «գոգալի» նման էշխով յար է ուզում,
Ամեն աղջիկ մտքում թաքուն քեզ պես «սիրահար» է ուզում,
Ուրիշ ո՞վ է քեզ պես սիրել ու երագել, Սայաթ-Նովա...

Սիրվա Կապուպիկյան

Մասիս սարը քեզ քամանչա, ձյունը՝ սաղափ քարեր վրան,
Ոսկի Արագ, արծաթ Ջանգու՝ միշտ հայախոս լարեր վրան...

Հովհաննես Շիրազ

Արքա էր ավելի, քան այն արքաները, որոնց պիտի ծառայեր:

Պարույր Սևակ

Խաչատուր Աբովյան

Նա մի կտոր Հայաստան է, որ իր մեջ ունի նրա ամբողջությունը: Նա վեհ է, ինչպես իրենց լեռները, և խորն է, ինչպես իրենց ձորերը: Նա բարի է անսահման, բայց հաջորդ վայրկյանին կարող է կրակ դառնալով վառվել, միայն թե իր կրակներում այրվի անարդար աշխարհից մի չնչին անարդարություն...

Ֆրիդրիխ Պարրոպ

Ո՛վ մեծ մարգարե, մենք մեր լեզուն պահել-պահպանել ենք և մեր ազգասիրությամբ ու հայրենասիրությամբ, մեր շենք ու շնորհքով, մեր ազատ թռիչքներով մտել ենք աշխարհի քաղաքակիրթ ազգերի շարքը:

«Վերք Հայաստանի» աշխատության մեջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը:

Միքայել Նալբանդյան

«Վերք Հայաստանին» մի ողբ է, ողբ հայրենիքի թշվառության վրա, ողբ հայրենասերի՝ բխած մի զգայուն սրտից... Գեղարվեստական տեսակետից «Վերք Հայաստանին» սրտի խորքից բխած մի բնական ժայթքում է. հեղինակը միտք չի ունեցել իր շենքի գեղեցկության վրա ուշ դարձնելու:

Հազարոս Աղայան

...Աբովյանի մեծ սիրտը... հեղեղեց ու կրակ ու բոց որոտաց և շարժեց հայ ժողովրդի ներաշխարհը բովանդակ, և կայծակի նման ճեղքեց ապագայի մութն ու մռայլը, ցույց տվեց փրկության ուղին...

Չորս գիրք ունի հայ ժողովուրդը, որ, ինչպես չորս բարձր սյուներ, կրել են հայ ժողովրդի ոգին, նրա պայքարի իմաստը, նրա լավագույն ապագայի տենչանքները, նրա իդեալները՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Եղիշեի «Վարդանանց պատերազմը», Նարեկացու խոսքը անմահության ու հավերժության հետ և Աբովյանի «Վերքը...»:

Աղասին իր կապուտակ ձիով դոփելով, փայլատակելով ու զրնգալով քառասմբակ անցել է հայ ժողովրդի հոգու և մեր գրականության արժեքավոր երկերի միջով:

Ավետիք Խասակյան

Աբովյանը հայոց գրերի գյուտի ու Ավարայրի ճակատամարտի շարունակությունն էր նոր ժամանակներում: Սոսկ անհատ չէր նա, ժողովրդի հոգեկան ներքին ուժերի խտացումն էր, որ բռնկվեց, բոցավառվեց և դարձավ մեր պատմության աստեղնային ժամերից մեկը:

Վահագն Գավթյան

Բաֆֆի

Բաֆֆին գեղարվեստական նոր մակարդակի բարձրացրեց հայ գրականությունը, կատարելագործեց գեղարվեստական խոսքի լեզուն և ոճը: Նա նպաստեց հայ գրականության ժողովրդականացմանը ու հասարակական դերի բարձրացմանը, նրանով գրականությունը սկսում է հարգանք ու պատիվ վայելել հայի կյանքում:

Հովհաննես Թումանյան

Բաֆֆին հայ վիպագրության հայրը եղավ, մեր Սքոթը՝ եթե կուզեք, որ կրցավ կենդանի կերպով ոգեկոչել անցյալը և մարգարեանալ ապագան: Բաֆֆին տվավ հերոսներ անցյալի և ապագայի: Հայ մարտական շարժման պատրաստողներն էղավ ան: Չքարոզեց միայն, այլև ծրագրեց հեղափոխությունը: Հայ հեղափոխությունը իրականության վերածեց Բաֆֆին:

Դանիել Վարուժան

Պետրոս Գուրյան

Ապրելու և սիրվելու իրավունքով ծնված բանաստեղծը միայն կյանքի «սև կաթը» ըմպեց, բայց երբեք չդավաճանեց իր քնարն ու վեհ կոչմանը: Իր մեծ նախորդ Սայաթ-Նովայի նման «գայրացավ», բայց երբեք չանիծեց:

Հովհ. Թումանյան

Գուրյանն ամենեն պարզը և իր պարզության մեջ զգացման ամենեն վեհ բարձրությանը հասնող, բուն ժողովրդային հանճարն է ըստ իս:

Գրիգոր Չոիրասյ

Նա է մեր նոր քնարերգության առաջին մեծը և միշտ էլ կմնա վերջինի կողքին, որովհետև նա չի հնանում, ինչպես չեն հնանում ժպիտն ու հառաչը, ծիծաղն ու հեծկլտոցը:

Պարույր Սևակ

Գուրյանի աշխարհում լճակ կա, և ի՛նչ լճակ: Եթե մի չար հրաշքով գոլորշիանան աշխարհի բոլոր լճակները, Գուրյանի «Լճակով» կարելի է վերստեղծել դրանք: Նա մեզ, իր օրինակով, մտերմացրեց այդ «մելամաղձոտ» լճակին, ինչպես նաև սովորեցրեց «գրավիլ, լռել ու խոկալ»:

Պարույր Սևակ

Ների՛ր ինձ, Պետրոս Գուրյան, ների՛ր, որ անցա շիրիմիդ կողքով, բայց չխոնարհվեցի քո հողին, մի ծաղիկ անգամ չդրի: Ների՛ր ինձ, գուցե մի օր կլինի նաև գերեզմանների հայրենադարձություն. դու տուն կգաս, և մենք քեզ կբերենք Հայաստանի բոլոր մեխակները:

Վարդգես Պեպրոսյան

Երջանիկը Թուրքիայում ծնված հայ հանճարներից, որ տապանաբար ունի:

Վարդգես Պեպրոսյան «Կարսից մինչև Տրոյա»

Ղազարոս Աղայան

Կարծես հեքիաթների միջից եկած, մեր իրականության մեջ քայլող գորապետ իշխան լիներ, լեռների քաջ որսկան, աշխարհեաշխարհի կտրող քարավանապետ:

...Առաջին խոսքը պատկանում էր Ղազարոս Աղայանին, որին Նահապետ էինք անվանում՝ Գրականության նահապետ: Նրան հարգում էինք բոլորս և սիրում: Մեր երեկույթներին Աղայանը երգում էր մեր սիրած երգերը: Պարթև հասակով կանգնում էր նա՝ հուժկու ձեռքերը շարժելով, երգում էր բամբ ձայնով:

Ավեգիլ Խաչակյան

Դանիել Վարուժան

Երգում էր հերկերի մասին, դաշտերի մասին ու հողի
Քըրտինքն էր երգում գեղջուկի և նրա վաստակը արդար,-
Բայց փոխվում էր երգը հանկարծ և դառնում աղաղակ,
Եվ մոմե շրթերով քերթողի-սկսում էր նա նգովք կարդալ:
...Արծաթե ափսեի վրա նա տանում էր բոցավառ մի սիրտ,
Որ բոսոր ցուլքեր էր ցանում խավարում այն սիրտ կեղեքող,
Եվ գուլալ, արծաթյա ձայնով երգում էր արևի մասին,
Իր գյուղի՛ արևի մասին, որ մորթել էին ցերեկով...

Եղիշե Չարենց

Միսաք Մեծարենց

Արյուն է եղել աշխարհում: -Եղել է եղեռն ու կռիվ,
Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամեհի ելած իրար դեմ:
Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած,
Արև է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ պատանին:

Եղիշե Չարենց

Երբ մրսում եմ այս աշխարհում, մե՛ծ պատանի, գրկում եմ քո երգերը
և ահա արևը, քո երգած արևը, սուզվում է իմ ցուրտ հոգու մեջ կաթիլ առ
կաթիլ:

Եկար գունատ ու տրտում
Աղոթեցիր ու անցար...
Եվ բուրումներ մնացին
Երիցուկի ու ուրցի:

Ու ասես ցավն աշխարհում
Դարձավ աղոթք մի պայծառ,
Ու ասես մահն աշխարհում
Փոխվեց անմահ գրույցի...

Վահան Թորոյենց

Ավետիք Իսահակյան

Ավ. Իսահակյանը մեկն է հայ գրական այն հսկաներից, որոնց
մասին **Հովհ. Թումանյանը** գրել է.

Բազմած են շուրջս նրանք ամեն օր,
Բոլոր հանճարեղ մեծերն աշխարհի,
Երգում են, պատմում ներդաշնակ ու խոր,
Միտքն ու գաղտնիքը մահի ու կյանքի:

Իսահակյանն առաջնակարգ բանաստեղծ է, թերևս այդպիսի լուսավոր ու անմիջական տաղանդ այժմ ողջ Եվրոպայում չկա:

Ալեքսանդր Բլոկ

Քո երգերն իրենց ինքնություն և պատկերավոր գեղեցկությամբ
անգուգական տեղ են բռնում...

Վահան Տերյան

Ավետիք Իսահակյանը խորապես մարդկային բանաստեղծ է:

Կորնել Չելինսկի

Մեր դարի ճակատը կրում է մի քանի բանաստեղծների պայծառ
անուններ: Անգլիայում՝ Կիպլինգ, Ֆրանսիայում՝ Ապոլիներ և Էլյուար,
Գերմանիայում՝ Ռիլկե, Ռուսաստանում՝ Մայակովսկի և Եսենին,
Հայաստանում՝ Չարենց և Իսահակյան: Ամեն անգամ, երբ մարում է
այդ կանթեղներից մեկը, թվում է, թե աշխարհի լույսը պակասում է:

Լուի Արագոն

Որքան գնում, այնքան խոնարհ,
Այնքան անհուն և այնքան ջերմ
Ես խոնարհում եմ քո առջև
Ե՛վ սեր, և՛ սիրտ, և՛ քնար:
Արդեն ցնորք է անհնար
Ունենալ երգ այդքան նախ,
Որ հմայի երեխային
Եվ ծերունու սրտում մնա:
Սիրտդ կարող է վեհանալ,

Որ անսալով նրա սրտին,
Երգ ես տվել ժողովրդին,
Որ իր երգով անմահանա:
Ա՛խ, կուգեի ես ունենալ
Գոնե մի երգ այդքան ջերմին,
Որ գրեի խուղիս որմին,
Եվ նա հավետ այնտեղ մնար...

Եդիշե Չարենց

Հովհաննես Թումանյան

Մեր թռիչքը Հովհ. Թումանյանի արվեստի գոհարակերտ բարձուն-
քից այն կողմ չի անցել:

Ավ. Իսահակյան

Ինչ-որ գյոթեական բան կա նրա մեջ:

Վ. Տերյան

Թումանյանի պոեզիան Հայաստանն ինքն է՝ հնադարյան և նոր,
հարություն առած և բանաստեղծությամբ արտահայտված՝ մեծ վար-
պետի ձեռքով:

Վալերի Բրյուսով

Կա Մեծարենց, կա Տերյան, և բազում ուրիշ պոետներ կան,
Բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության:

Նա մեծ էր հոգով, արյունով: Արմատներ ուներ նա հողում:
Իր երգերը գեղջուկ նախրցու քրտինքով էր նա ողողում:
Հանճարեղ երգերում նրա իր երկրի արևն է շողում:
Նա մեծ էր հոգով, արյունով: Արմատներ ուներ նա հողում:

Այս հմն'տ, հանճարեղ Լոռեցի
Հոմերի, Գյոթեի հետ մի օր հավասար՝ նստել է քեֆի,
Եվ թաս է բռնել նրանց հետ, մեծարանք տվել ու առել,
Ինչպես իր պապերն են արել՝ իրար հետ խնջույքի նստելիս:

Եղիշե Չարենց

Թումանյանի ճակատին էր գրված լինել հայ ժողովրդի ետմիջնա-
դարյան պատմության կենսագիրը:

Պարույր Սևակ

Վահան Տերյան

...Բայց լեզուն՝ մաքուր գտված է
Եվ արծաթե զանգի պես հնչուն...

Նա (Տերյանը) մի նոր գույնով, մի նոր ձայնով երգեց և՛ սերը, և՛ հայ-
րենիքը, և՛ բնությունը: Նա թարմացրեց հայ պոեզիայի և՛ նյութը, և՛ լե-
զուն: Նրա բանաստեղծություններից անվիճելի մի քանակ կմնան՝ որ-
պես հավերժական արժեքներ բոլոր ժամանակների համար, որպես
մարդկային բյուրեղացած զգացմունքներ ու անխառն գեղեցկություններ:

Ավ. Իսահակյան

Լեզվական բյուրեղյա մաքրությամբ, ինչպես ամենամաքուր
աղամանը, Տերյանի լեզուն արևելյան աշխարհաբարի բարձրակետն
է: Արքայական հայերենի թագակիր Առաջնորդն է նա:

Գավիթ Գասպարյան

Միշտ, երբ կարդում եմ Տերյանը, Ղարսն է հիշում իմ հոգին:
Իմ մանկությունն ու այգին հին, իմ հայրենիքն ու նախրյանը...
Լաց է լինում մեղմ, հոգին իմ, դարձն է տոնում մորմոքի,
Ղարսն եմ հիշում հեռավոր, միշտ, երբ կարդում եմ Տերյանը...

Եղիշե Չարենց

Ուսուցիչը չկա այլևս,- ասում էր Չարենցը, և դա այն դեպքում, երբ նոր ժամանակների Ուսուցիչն էլ էր ինքը, Ուսուցչապետն էլ, Սերմնացանն էլ, Հնձվորն էլ, Առաջնորդն ու Նահատակն էլ...

Միամանրո

Նա հո՞ղ էր հայցում՝ խավարին կարկառած ձեռքով իր քարե,
Եվ լույս էր հայցում խավարից՝ իբրև դեղ աչքերին իր կույր,
Եվ մահու պես գունատ շրթերով շշնջում էր բառեր մարմարե,
Երազում էր խոնջանք ու արև և սիրո աղբյուրներ մաքուր:

Եղիշե Չարենց

Մնաց նրա երգը՝ որպես պայքարի դրոշակ:

Գավիթ Գասպարյան

Նրան վիճակված էր դառնալ աղետյալ հայրենիքի ու ժողովրդի հոգեվարքի և հույսի, ցավի և մաքառման, վրեժի և պայքարի երգիչը: Նրա պոեզիայում միահյուսված են դասական ռոմանտիզմի և սիմվոլիզմի գեղագիտական սկզբունքները:

Արշակ Չոպանյան

Վիլյամ Սարոյան

Արևմուտքի գրողները Սարոյանին անվանում են «անկարգապահ հանճար»:

Արևմուտքի գրականության ջունգլիներում, խլելով բնությունից իրեն սահմանված փառքի մեծ բաժինը, հպարտ և տիրական, մեծքանքար և կորովի, անցավ աշխարհի սրտի միջով՝ մնալով միշտ մարդ, միշտ Վիլյամ, մնալով, մանավանդ, միշտ Սարոյան:

Գուրգեն Մահարի

Ջարմանալիորեն շռայլ է Սարոյանը, ու ինձ միշտ թվում է, թե հայկական հեքիաթներից ելած բարի հսկայի նման աշխարհի ճանապարհներին կանգնել և սեր, կարեկցանք, գութ ու խիղճ է բաժանում մարդկանց:

Վահագն Գավթյան

Նա ի մի բերեց Հայաստան երկրի
Սուրբ երազների արձագանքները,

Գրանցից հյուսեց հուսո, բարության և սիրո գորգեր,
Մարդկանց ջերմացնող տաք, հրե գույներ...

...Կանգ առավ սիրտը...
Էլ չեն հնչելու խոսքերը նրա,
Եվ սակայն միթե
Կարող է իրոք մեռնել այն մարդը,
Որի հավատքը սերն էր, երազը,
Արցունքոտ ծիծաղն ու բարությունը...

*Չարլզ Գարիգուս
Թարգմ.՝ Վ. Գավթյան*

Ակսել Բակունց

Հայաստանում կա մի գրող, որի բառերը զնգում են կոմիտասյան շնչով և փայլատակում են Մարտիրոս Սարյանի կտավների գույներով: Դա Ակսել Բակունցն է:

Ավ. Իսահակյան

Քո Սթնածորում թախիժն է ծորում,
Ու կարոտ՝ մանկութ հարազատ ձորի,
Աշխատիր, սակայն, որ մութ այդ ձորում
Քո պայծառ ուղին անդարձ չկորչի:

Եղիշե Չարենց

Ես չգիտեմ՝ որտեղ է նա թաղված, ես, որ շատ եմ ուզում մի փունջ ալպիական մանուշակ թողնել նրա շիրմին, ուզում եմ շնորհակալ լինել սպիտակ ձիու խելահեղ վագրի, խոնարհ աղջկա, իբրև միրհավ ապրած Սոնայի, ««եղերական տառապանքի», «մարմարյա բառերի» համար: Ուզում եմ շնորհակալ լինել երջանկության համար այն մարդու, որ դեռ նոր է ձեռքն առնելու նրա գիրքը ու կարդալու, կարդալու՝ կարդալու... Ժամանակների արևի տակ, ջինջ արցունքի մման շողշողալով, ապրում է նրա արձակը՝ ապրեցնելով մեզ...

Կորցրած հայրենիքի թեման խորհրդային գրականության մեջ սկիզբ է առել Ակ.Բակունցի «Լառ Մարգար», «Ծիրանի փող» պատմվածքներով: Նա է լուսավոր հանճարը զանգեգուրյան մութ ձորերի, մեզ հետ է իր թողած գրական շողշողուն ժառանգության հավերժական հարստությամբ: Մեզ հետ է նա՝ հայկական լեռնաշխարհի արծիվը, սև

ցելերի վաստակավոր սերմնացանը, մեզ հետ է նա, ինչպես ինքն էր կոչում իրեն՝ Ալեքսանդր Բակունց, որդի Ստեփանի, ի գեղջեն Գորիս:

Գորզեն Մահարի

-Հաղ մի երթամ տեսության մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բանձր սարերին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու, նստիմ անուշ խոտերու վրեն, հանց գառներ մարդիկ նստեն զիմ չորս բուլոր, երգեմ էնոնց խաղաղության զիմ երգեր, մարդիկ հալալ, գուլալ ախարտոց պես գրկեն զիրար, չեղնի ոչ տեր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնություն: Փչեմ զիմ ծիրանի փող, էլման ծուխ բարձրանա երդիկներեն, խմեմ մըր լուս աղբըրներեն, զիմ քրտինք կաթա մըր քարերու վրեն, մըր Մարութա բանձր սարի ամպ թող լիզա զիմ սիվտակ ոսկորներ...

Ակսել Բակունց, Հազրո, «Ծիրանի փող»

Եղիշե Չարենց

...Քո բանաստեղծության մեջ դու ասել ես՝ «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում», որ անհնար է ասել անգլերենով և, եթե արդար լինենք, առհասարակ որևէ լեզվով, բայց դու ասել ես:

...Չայն մինչև այսօր կը նկատեմ մեր երկնքին, մեր հողին, մեր պատմության նվիրված ամենեն գեղեցիկ երգը, գովաբանական աղոթքը: «Հայր մեր»-ին նմանվող աղոթք մը:

Վիլյամ Մարոյան

Ինչի՞ հետ համեմատես «Ես իմ անուշը»: Քիչ կլինի ասել, թե բանաստեղծություն է: Պոեմ էլ չէ, վեպ՝ նույնպես: «Ես իմ անուշ Հայաստանին» ավելի շատ բոլոր մասշտաբներից դուրս պաննո է: Պաննո՞ հասցված ժողովրդական էպոսի աստիճանին: Այդպիսի մի երկ աշխարհ բերելու համար պետք է ամենաքիչը կիսաստված լինել:

Մարգիրոս Մարյան

Գորզեն Մահարի

Որքան շատ էր կյանքը խեղում նրան, այնքան ավելի թանկ էր նա դառնում ինձ: Քանզի ես միշտ պարտվածների հետ եմ, և ոչ թե հաղթածների. հաղթածներն առանց ինձ էլ յուր կզման:

Անդրնինա Մահարի, «Իմ ողիսականը»

Պայծառ է մեր երկրի գալիքը.
Օ, բերրի հերկերի գուսան:
Թող հավետ ապրի այս ծաղիկը
Մեր դաշտերում բուսած:

Եղիշե Չարենց

Մի բանաստեղծ, որից առավել քանքարավոր ոչ ոք չի նկարագրել բարդիները, լուսինը, ջրերի երգեցիկ գրույցը...

Ակսել Բակունց

Չնայած վայրիվերումներին՝ համառ մի բան կա Գուրգեն Մահարու կյանքի ու խառնվածքի մեջ: Ինչքան էլ մակերեսին այս ու այն կողմ տարուբերվեին ալիքներ, այնտեղ՝ խորքում, Մահարին հավատարիմ մնաց իրեն, իր շեշտված անհատականությանը, իր բանաստեղծական տարերքին...

Սիրվա Կապուտիկյան

Մահարին սկզբից մինչև վերջ մնաց նույն լավատես մարդը: Նրա շրթունքները երբեք չընտելացան անեծքի խոսքերին... Նա անմիջապես մտավ կյանքի հորձանուտի մեջ և գրեց իր կյանքի վեպը: Ես խորապես զգում եմ նրա բացակայությունը և խոնարհվում նրա հիշատակի առջև:

Հրաչյա Հովհաննիսյան

Հովհաննես Շիրազ

Հ.Շիրազը հայ ժողովրդի վշտի դարավոր մառախուղից ծագած աստղն է:

Ավետիք Իսահակյան

Շիրազ մեծ տաղանդ մըն է: Անիկա մեծ, մեծ անուն ունի, և մենք շատ կզնահատենք անոր գոյությունը, Շիրազ թանկագին հոգի մըն է, ես շատ կցանկանամ լուրեր առնել անոր գրություններե, լսել անոնք: Ան տաղանդ է, մենք պետք է հպարտ զգանք և մեծ պատիվ համարենք անոր հետ ծանոթ ըլլալ:

Վիլյամ Մարոյան

Նրա մեջ բոցկլտում էր մաշտոցյան լեզվի կրակը, նրա երակներում հոսում էր Նարեկացու և Քուչակի արյունը, իսկ սրտի միջով անցնում էր Խաչատուր Աբովյանի վերքը: Նա տիրապետում էր Մասունցի Դավթի

ուժին, սակայն նրա պոեզիայում ծաղկում էր մոր ծաղիկը, որի անունը քնքշություն է: Նրա քնարը պատվով կրում էր Կոմիտասի կարոտը և Մարտիրոս Սարյանի գույների հարմոնիան:

Շիրազը ոչ միայն բանաստեղծական պատկերի անգերազանց վարպետ է, այլև բանաստեղծության գերազանց կառուցող-ճարտարապետ:

Շիրազի ստեղծագործությունը ոչ թե պատմություն է կամ անցյալի հուշ, այլ բանաստեղծական գալիք, ուր թրթռում է պոեզիայի կենդանի ոգին, աստվածային շունչը:

Մուրեն Աղաբաբյան

Մուշեղ Գալշոյան

Մի տեղ ռանչպար, մի տեղ մաքուր ազնվական, մի տեղ «ծուռ», բայց միշտ անսահման ազնիվ, անկեղծ մարդ:

Համո Սահյան

Գալշոյանը գրականություն բերեց արդեն պատմություն դարձող կենդանի հերոսների կերպարներ: Նրանք բոլորն էլ հողի պարզ աշխատավորներ են, որոնց միավորում է ճակատագրի ընդհանրությունը: Նրանք ապրում են «էրզրի» հուշերով և այնտեղ վերադառնալու երազանքով:

Գալիթ Գասպարյան

Նա եկավ՝ մեզ վերածնելու բարոյապես և զենք ու հայրենիք վստահելու ներկայությանը միայն: Նա գնաց և վշտացրեց:

Հրանդ Մաթևոսյան

Մարութա սարը ամպերն են պատել,
Որ քո թաց վերքին հավերժ հեկեկան...

Հակոբ Սրապյան

Պարույր Սևակ

...Պարույր Սևակի ծնունդը մեր կյանքի, մեր մշակույթի, մեր ներկայի ու մեր ապագայի համար եղավ ճշմարտապես մի «Եղիցի լույս»...

...Պարույր Սևակն այնպիսիներից եղավ, որ պիտի ապրի այնքան ժամանակ, ինչքան ժամանակ պիտի ապրի հայ ժողովուրդը, իսկ հայ ժողովուրդը անմահներից մեկն է աշխարհում...

Վազգեն Առաջին

Դու ընդամենն անհատ էիր, բայց ինչպիսի՜ անհատ: Նման էիր լեռնային մի աղբյուրի, որն իր ուժը բնության ընդերքից է առնում ու բնության ուժն է բերում ժողովրդին: Եվ սիրում էինք քեզ, որովհետև չէինք կարող բնությունը չսիրել... Ժողովուրդը քեզ ծնեց մաքառման գնով, ծնեց ժամանակին, որպեսզի քո միջոցով երգեր իր ցավն ու ուրախությունը: Այդպիսի անհատներ ժողովուրդը հեշտությամբ չի ծնում և չի կարող հեշտությամբ բաժանվել նրանից:

Մարտիրոս Սարյան

Պարույր Սևակը պատարագելիս հայացքը հառում է երկնքին՝ երկնային սրբություններին, Համո Սահյանը՝ հողին՝ հողի սրբություններին՝ Ժայռին, քարին, մացառին, մասրենուն...

Հովհաննես Մելքոնյան

Համո Սահյան

Սահյանը մեծ բանաստեղծ է: Սահյանը այսօրից ավելի վաղվա բանաստեղծ է:

Հրանտ Մաթևոսյան

Դուք խոսքի նկարիչ եք: Բնանկարի մեջ դուք կարողանում եք տալ դիմանկարը, դիմանկարի մեջ՝ բնանկարը: Դուք գույների վարպետ եք:

Լև Օզներով

Սահյանի պոեզիայի արյունատար անոթներից մեկը հիշողությունն է. տոհմի պատմությունը ձուլվում է ազգի պատմությանը, երկուսը միասին՝ քարի պատմությանը, որի գրերը, ահա, նա վերծանում է:

Գավիթ Գասպարյան

Հրանտ Մաթևոսյան

Ինքը բնագրաբար ճիշտ արահետն էր ընտրել, թե՞ ճիշտ արահետն էր նրան գտել: Ինքը պինդ էր, որովհետև գիտեր, որ եղբորը չեն ուրանում, և որ գրասեղանին դրված թուղթը մաքուր պիտի լինի, իսկ գրիչն՝ աներեր:

Եթե գրող էր պահանջվում, ինքը եղավ. եթե ճշմարտախոս էր պահանջվում, ինքը եղավ. ու եթե գոհ էր պահանջվում, էլի ինքը եղավ: Եվ ինքը հաղթեց: Որովհետև էլ որտե՞ղ է վերջանում հազարամյա կոծն ու

պարտաստությունը և սկսվում մեծ աշխարհին հպարտ հայացքով նայելու քաջությունը. գիրը՝ խորակրկիտ, միտքը՝ խրոխտ, ներուժը՝ անչափելի:

Մկրտիչ Սարգսյան

Այստեղ դուք ունիք մեկը, որ մեծ անձնավորություն է համաաշխարհային գրականության մեջ: Ան Հրանտ Մատթեոսյանն է: Որևէ ազգի մեջ իրմե լավ պատմություն գրող չկա: Ուրիշ ազգության մեջ ուրիշ գրող Հրանտ Մատթեոսյանի պես չի կրնար գրել: Ինքը հայության մասին կգրե, և այդ հայությունը այնքան ճիշտ է, որ ես կզարմանամ, կուրախանամ և հպարտ կզգամ: Շատ գրողներ, բանաստեղծներ ունիք, բայց պետք է ներքե ինձի, եթե ըսեմ, որ ան ուժը, որ անհրաժեշտ է, հսկայական, Հրանտ Մատթեոսյանի մեջ է:

Վիլյամ Սարոյան

Շիտակ էր, ծայրեծայր լիքը սիրով: Ամբողջովին սեր էր: Ամբողջովին՝ բարություն: Ինչպե՛ս էր սիրում կյանքը, մարդուն, աշխարհը և հատկապես աշխարհի իր փոքրիկ անկյունը՝ Լոռին: Ինչպե՛ս էր սիրում բառը, բառերի ներդաշնակ խաղը: Բառի պաշտամունք ուներ: Յուրաքանչյուր բառը պիտի հնչեր սեփական ձայնով:

Շռայլ էր: Շռայլորեն տալիս էր ամեն ինչ՝ հոգու ջերմությունը, էներգիան, կյանքի թանկարժեք ժամանակը, գրպանի դրամը: Յուրտ ու դժվար տարիներին նրան դիմողը երբեք ձեռնունայն չէր հեռանում: Տալիս էր անզամ նրանց, ովքեր ստանալուց հետո չէին հապաղում չարախոսել:

Հովիկ Վարդումյան

Վահագն Դավթյան

Վահագն Դավթյանը բազմաշնորհ բանաստեղծ է, նրա բանաստեղծությունները միջնադարյան մեր երգերի խորությունն ունեն և արևմտահայ պոեզիայի շքեղությունը, պոետական կուլտուրան բարձր է, տեխնիկապես կուռ է, հողի բույր ունի, բայց և եթերային է...

Ավետիք Բասակյան

Վահագն Դավթյանի ստեղծագործությունն ամբողջական մի աշխարհ է, ամբողջական մի շենք: Այդ շենքը նման է միջնադարյան վանքի՝ հիմքերը որձաքարե ժայռերի մեջ, զմբեթը՝ երկնքում: Եվ այդ վանքն այնքան է ներդաշնակ իր շրջապատին, այնպես է ձուլված ու խառնված բնությանն ու բնականին, որ շատ հեռուներից է երևում: Տեսնելու և

նրան հասնելու համար պետք է հավատալ որ լինել ու արվեստի ուխտավոր, որպեսզի հաղթահարես ճանապարհի դժվարությունը...

Համո Սահյան

Վահագն Դավթյանը վերջին երակն էր, որ կտրվեց, նա Արևմտյան Հայաստանում ծնված վերջին պոետն էր... Ասում են, որ այդ՝ Ակնա երակից հիմա էլ բանաստեղծներ են ծնվում, երևի թուրք բանաստեղծներ, բայց ով գիտի... Ակնա ակունքը նաև Վարուժան ու Մեծարենց է տվել: Դավթյանն ասում էր, որ ամբողջ կյանքում իր մեջ միայն եղեռնի ժառանգական ցավը:

Ամունքող Սիլվա Յուզբաշյան

Վահագն Դավթյանը իր բանաստեղծություններն այնպես նրբորեն ու հմտորեն է քանդակում, ինչպես հայկական հին վարպետներն էին քանդակում խաչքարը:

Մեծելայրիս

Գրողներն իրենց արվեստի գիտակցումով

Ու թեև որպես մի մահկանացու պիտի վախճանվեմ,
Բայց այս մատյանի հարակալությամբ կմնամ անմահ:

Գրիգոր Նարեկացի

Ֆրիկն հանցեղ պարզ է խօսել, որ ամենայն մարդ իմանայ:

Ֆրիկ

Ամեն մարդ չի կանայ խըմի՝

Իմ ջուրըն ուրիշ ջրըն է.

Ամեն մարդ չի կանայ կարդայ

Իմ գիրըն ուրիշ գրըն է...

Սայաթ - Նովա

Դու չկրցար ինձ հաղթել և մեռցնել զիս, ո՛վ մահ: Ահա իմ անունս անմահ մնացած է երկրի վրա: Ահա իմ մասին կխոսեն, դեռ կպատմեն...

Հակոբ Պարոնյան

Կորուսյալներս փնտռելով կ'երթամ... Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ...
Հոգիս այն վայրն է, ուրկե արյունուշտ լուսին մը բարձրացավ
Ամմեղներու կոտորածեն ծովացյալ դաշտի մը վրա...

Ու այն հողմակոծ անտառն է, որուն ավազաններուն շուրջ,
Օ՛ր, եղբայրական արյունի հեղեղներ կը հոսին...

Միամանրո

Կյանքս արի հրապարակ...

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին:

Քանի՜ ձեռքից եմ վառվել, վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել, լույս տվել, լույս տալով եմ սպառվել:

Հովհ. Թումանյան

Միրոս երկինք է...

Ամեն արարած

Աստղ ունի այնտեղ,

Գահ ունի այնտեղ:

Ավ. Իսահակյան

Մի՞թե վերջին պոետն եմ ես,

Վերջին երգիչն իմ երկրի...

Իմ թախիծը լուսավոր է:

Թեթև էր արվեստն իմ՝ խնդում,

Իսկ կյանքս այնպես դժվարին էր...

Վահան Տերյան

Մահարին իր «Ինքնակենսագրական» պատմվածքը ավարտում է
քնորոշ մի պատկերով.

...եթե այս րոպեին ներս մտներ ահեղ և ամենակարող տերը, նստեր
իմ դիմաց, մի ծխախոտ վառեր և ասեր. «Տալիս եմ քեզ երկրորդ կյանք,
գծիր քո երկրորդ կյանքի ուղին օրորոցից մինչև գերեզման, ինչպես որ
ցանկանաս, և կկատարվի քո կամքը...ինչպե՞ս կուզեիր ապրել»: Ես
նրան կպատասխանեի՝ առանց վարանելու.

-Ճիշտ այնպես, ինչպես ապրեցի:

Գուրգեն Մահարի

Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակիդ շունչը դարձիր:

Քո անունն է Չարենց,
Ասոնանսն է՝ Արև,
Եվ բառն էլ՝ հանճարեղ...
Ինչ ունեցել է ժողովուրդը քո
Հնում, անցյալում, լուսավոր ու վեհ,
Ինչ ունի այսօր, ինչ ցնորք ու խոհ,
Ողջը հավաքել ու տվել է քեզ...

Աչքերս հառել եմ անցյալին՝
Ապագայի նժույզը նստած...

Դեռ ինչ գանձեր՝ անհուն, անծիր,
Պիտի հանես դու աշխարհ...

Թե ուզում ես երգդ լսեն,
Ժամանակիդ շունչը դարձիր:

Ե՛ս եմ հիմա- մի պոետ, և իմ անունը՝ Չարենց,
Պիտի վառվի դարերում, պիտի լինի բա՛րձր ու մեծ:

Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական
Դեպի դարերը նորից՝ դեպի վառվող Ապագան:

Թող ո՛չ մի գոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախադանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն ի՛մ աչքերի մեջ կախվածի,
Ի՛մ բո՛րք երկիր, լուսապսակ քո ապագան:

Եղիշե Չարենց

Թեև գրում եմ անգլերեն և ծնունդով ամերիկացի եմ, բայց ես ինձ համարում եմ հայ գրող: Լեզուն, որով գրում եմ, անգլերեն է, միջավայրը, որ նկարագրում եմ, ամերիկյան է, իսկ ոգին, որ ինձ մղում է գրելու, հայկական է: Ուրեմն, ես հայ գրող եմ և պատկանում եմ հայ գրողների ընտանիքին:

Վիլյամ Սարոյան

Մի կտոր արնածոր տաք միս է հարկավոր
Սեփական ձեռքերով իրենից պոկած...
Ահա մի անպայման պայման՝
Երգ հնչեցնելու համար:

Ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է,
Այս, երանի ես այնպես մեռնեմ,
Որ դու ինձ սգաս...
Ու գալու է մի ժամանակ,
Երբ որ մարդիկ պիտի նաև
Մերպեսներին երկրպագեն
Ոչ կուռքի պես,
Ոչ էլ աստծո, Այլ... հերոսի...

Պարույր Սևակ

Ինձ կհիշեն ամեն անգամ,
Երբ ամպը թաղքի,
Եվ քարափի թամբից կախված
Մասրենին ծաղկի:
Ինձ կհիշեն ամեն անգամ,
Երբ խշշա բարդին,
Երբ քաշաթուխսպն ու չանգը գան
Փաթաթվեն արտին:
Ինձ կհիշեն... և գալիքից
Չեմ ուզում ոչ պարտք,
Ոչ փայլ ու շուք հուշարձանի,
Ոչ հետմահու փառք:

Ես այսքան բարդ ու հասարակ,
Ես այսքան բիրտ, այսքան բարակ,
Ես այսքան հաշտ ու հակառակ...
Առաքինի և անառակ...
Սի տեղ՝ կրտսեր, մի տեղ՝ ավագ...

...Ինձ բացակա չղներ...

Ինձ ճանաչելը մի քիչ դժվար է,
Հասկացեք, էլի, ես մի քիչ բարդ եմ,
Քարի պես պինդ եմ, հողի պես փխրուն,
Ինչպես չլինի՝ դեռ մի քիչ մարդ եմ:

Համո Սահյան

Գրաքննադատ Ս. Աղաբաբյանին նվիրված իր «Թե ով եմ և ինչ» բանաստեղծության մեջ բնապաշտ Սահյանը այսպես է բնութագրում իրեն.
Աչքն ու ականջն եմ ես մայր բնության,
Գիտակցությունը նրա մարմնավոր,
Հասակակիցն եմ նրա հնության,
Եվ ծլարձակումն ու ծաղկումը նոր,
Հավիտենության աղերսանքն եմ ես... «Տոմսի կանչը»

Ս. Կապուտիկյանի «Թափառում ենք փողոցներում» բանաստեղծության նմանությամբ է գրել՝ «Ես քո սիրով, դու՝ ուրիշի» վերնագրով բանաստեղծությունը.

Քո մասին եմ նորից երգում,
Մոռացել ես ինձ երևի,
Թափառում ենք տիեզերքում,
Ես քո սիրով, դու՝ արևի:

Սահյանը «Մասրենին» նվիրել է **Մ. Սարյանին**՝ բնության գույների հրավառությունը գովերգող Վարպետին:

Թումանյանին՝ «Այս ճամփով քաղաք է գնացել Գիքորը...»

Համո Սահյան

Որովհետև երկիրը կենդանի օրգանիզմ է, այլ ոչ մի բուռ ավագ, որը թափվում է մատների արանքից. երկիրը մենք ենք, ու երևի նրան հերթական անգամ փրկելու համար մեզնից պահանջվում էր ավելի շատ կամք ու տղամարդկություն, ավելի շատ սրտացավություն, քան երբևէ, ու ավելի շատ խելք, քան երբևէ: Կամ՝ Թե՞ մենք ունակ չենք նվիրումի, թե՞ մեր տված արյունը բազում աշխարհամարտերի՝ մեր տված արյունը չէր-տուրք էր կեսարներին: Թե՞ մեր ցմրուրս զոհողությունները հպատակի մեր տուրքերն էին օտար տիրակալներին: Թե՞ մարդկային մեր շքեղ շնորհների բացարձակումները այլ ժամանակների ու երկրների ապարանքներում՝ շնորհի բացահայտումն էին՝ ի տես մեզ իշխողների: ...Բայց դուք կմնաք անտեր: Վախենամ, որ կմնաք հովիվը կորցրած ոչ-խարի պես, որին գայլը կուտի:

Հրանդ Մաթևոսյան

Միշտ էլ զգացել եմ, որ պարտք եմ կյանքի ու իմ ժողովրդի պատմության դրամատիզմին: Այս, իմը սեր չէ, որ խոստովանեմ, իմը կրակ է և այրվող արյուն...

Վահագն Դավթյան

Գրողների ասույթներ

Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել նրան:

Քաֆկի

Թե հավերժական սեր լիներ, սիրո մեղրամիս չէր լինի:

Միտո զգացմունքը մարդկային սիրտը քաղցրացնում, նրբացնում է, զարգացնում է գեղեցկության ձգտումն ու ճաշակը:

Մի լինիր կյանքում մեծ ծանրություն, աշխատիր լինել ծանր մեծություն:

Յավը բանաստեղծները համեմատում են չափերով տիեզերքի հետ:

Ամեն ինչ ունայն, երազ անցավոր:

Աստղ էլ որ լինես, պիտի հանգչես մի օր:

Ոչինչ է մարդը. փոշի՝ փոշու մեջ:

Իսկ ցավը, սակայն, տիեզերքից մեծ:

Ավ. Իսահակյան

Ուր որ հայրենի երգեր կլսվին՝ հոն հայրենիքը ողջ է:

Մեր ազգային զենքը պաշտպանական է և ոչ թշնամական:

Ղ. Ալիշան

Ապրել ու մեռնել հայրենիքի համար. ահա խնդիրը, որ իբրև նպատակ՝ ես ընտրել եմ ինձ համար իմ մանկության օրերից:

Դավիթ Անհաղթ

Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել մարդ կոչումի հետ:

Երեք բան երբեք չեն վերադառնում՝ արձակված նետը, ասված խոսքը և անցած օրերը:

Հովհ. Թումանյան

Մեր ժողովրդի մի հատվածը կոտորածներ տեսավ: Լավ է, որ մյուս հատվածը այդ ողբերգությունը չապրեց: Ոչ ոք չի խոսում կոտորածների մասին: Մինչդեռ մեր սրտից արյուն է կաթում, երբ հիշում ենք: Կոտորած, գաղթ, աշխարհով մեկ ցրված ազգ: Որտեղ երկինք, որտեղ լուսին՝ տակը մի հայ կա անպայման: Փոքր ազգի ողբերգական կենսագրություն: Մեր ժողովրդի պատմության անբաժանելի մասն է այդ: Երբեք չի ջնջվի մեր պատմության արյունոտ էջը: Ինձ հուզում են կոտորածները, հանգիստ չեն տալիս: Վեպ եմ գրում: Մինչև չգրեմ՝ հանգիստ չի իջնի

ինձ վրա: Դա իմ հոգու պարտքն է, իմ խոշտանգված էության մի մասը, որ ճշում է, կանչում:

Վահան Թորովենց

...Օ՛, գրքերի աշխարհը- տիեզերք է անեզր...

Չլինե՞ր Հովհաննես Հովհաննիսյանը, Թումանյանը Թումանյան չէր լինի, ոչ էլ Իսահակյանը՝ Իսահակյան: Իսկ եթե չլինեին Հովհաննիսյանը, Թումանյանը, Իսահակյանը, Տերյանը Տերյան չէր լինի: Չլինե՞ր Տերյանը, ես ե՛ս չէի լինի:

Եղիշե Չարենց

Իմ գեները աշխարհի ապականյալ ուժերի դեմ մի անհիշաչար աչք է, մի անկեղծ միտք, մի անբասիր սիրտ և մի խանդավառ ոգի, որը ստիպում է ինձ գրել...

...Եթե մի բան կա, որ ինձ դրդում է գրելու, ասելն է, որ մարդը մարդու եղբայրն է: Ուզածս միակ բանը բոլորին հասկանալի լեզվով խոսելն է՝ մարդկային սրտի լեզվով...

Աշխատիր սիրել յուրաքանչյուր մարդու, ով կհանդիպի քո ճանապարհին...

Փնտրի՛ր բարին ամենուրեք, և թող նա լինի ազատ ու աներկյուղ... Եվ քանի ապրում ես... ոչ մի բան չավելացնես աշխարհի աղետներին ու տխրությանը, այլ ժպտա կեցության անծայր խնդության հանդեպ:

Վիլյամ Մարտյան

Իսկական բանաստեղծություն գրելը ինքնազատագրման պես մի բան պիտի լինի:

Չլինել ժամանակից դուրս, բայց լինել ժամանակից վեր...

Հանդիպումը բաժանումի սկիզբն է հենց...

Պարույր Սևակ

Հաղթի ազնվությամբ ու պատվով, պարտվի արժանապատվությամբ:

Ծերունիները սովորաբար չեն գայթում: Նրանք քայլելու մեջ հասուն փորձ ու մանկան զգուշություն ունեն:

Հրանդ Մաթևոսյան

Բավական չէ, որ գրականությունը ցույց տա միայն այն, ինչ որ կա կյանքի մեջ. պետք է ցույց տա և այն, ինչ որ չկա և ինչ որ ցանկալի է, որ լինի...

Նար -Դու

Գրողների անունների, կեղծանունների և շրջատության վերաձված անվանումների մասին

Գրողների, հատկապես պատմագիրների, միջնադարյան բանաստեղծների և գրական այլ գործիչների ազգանունը կապված է նրանց ծննդավայրերի կամ կենսագրության մեջ կարևոր տեղ զբաղեցնող տեղանունների հետ՝ Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, Եզնիկ Կողբացի, Գրիգոր Նարեկացի և այլն: Ինչո՞ւ Ֆրիկ, Ներսես Շնորհալի, Սայաթ-Նովա, Բաֆֆի, Մուրացան, Վարուժան, Շիրվանզադե, Նար-Դոս, Սիամանթո, Չարենց, Շիրազ, Մահարի, Սևակ...

Հաճախ կոնկրետ անվան փոխարեն գործածվում է նրան համարժեք բառ կամ կապակցություն. ինչպես օրինակ՝ Մովսես Խորենացի՝ քերթողահայր, պատմահայր, Եղիշե՝ Ավարայրի բլբուլ, Գր. Նարեկացի՝ վերածնության ռահվիրա, Խ. Աբովյան՝ հայ մեծ լուսավորիչ, մեծ քանաքեռցի, Ղ. Ալիշան՝ Նահապետ, Պ. Դուրյան՝ Սկյուտարի տխակ, Մ. Մեծարենց՝ հիվանդ, հանճարեղ պատանի, Հովհ. Թումանյան՝ ամենայն հայոց բանաստեղծ, մեծ լռեցի, Ե. Չարենց՝ Հարդագողի ճամփորդ, Վ. Տերյան՝ մթնշաղի երգիչ, Նաիրյան երկրի երգիչ, Ավ. Իսահակյան՝ Վարպետ:

Ֆրիկ

Ֆրիկը բանաստեղծի իսկական անունն է, թե՞ անվան կրճատ ձևը կամ գրական կեղծանունը: Միջին հայերենում «ֆրիկ» բառն ունեցել է «դեռահաս, նոր հասնող ցորեն, որ այրեն ի կրակն» իմաստը: Այսինքն՝ աղանձած ցորեն: Եվ այս իմաստի գործածությունը հանդիպում ենք բանաստեղծի տաղերից մեկում.

Ոչ ծղլիմ, ոչ բուսանիմ, գերդ գաղընձած սերմ եմ գերիս:

Իրեն համարեց աղանձած սերմ, որովհետև մնացել էր անգարմ:

Սայաթ-Նովա

Սայաթ-Նովայի ժամանակ աշուղների համար վաղուց ընդունված կարգ էր օտար մականուն ընտրել: Եթե չլիներ այս անգիր օրենքի թելադրանքը՝ Սայաթ-Նովան կարող էր իրեն մականուն դարձնել իր մայրենի լեզվից մի բառ՝ այժմ, ցավոք սրտի, արդեն համարյա թե անգործածելի, բայց շատ իմաստալից ու պերճախոս և նույնքան էլ անթարգմանելի մի բառ՝ **Ասողիկ**: Եվ կամ՝ **Շնորհալի**, եթե Սայաթ-Նովայից 600 տարի առաջ այդ մականունը կպած չլիներ Ներսես Կլայեցուն, որ նույնպես ոչ միայն բանաստեղծ, այլև մեծ երաժիշտ, երգիչ ու նվագա-

ծու էր, և իր այս շնորհալիությամբ ինքը միայն կարող էր դառնալ Սա-
յաթ-Նովայի հոգևոր հայրը:

Ուրիշ էին ժամանակները, և **Արուֆինն** իրեն վերանվանեց **Սայաթ-
Նովա**, մի մականուն, որ բանասերների կողմից մեկնաբանվել է բազ-
մաթիվ ձևերով, բայց նրա համար դրանցից միայն մեկն է ըստ էության
ամենից վայելուչ. ա՛յն, որ թարգմանվում է իբրև «**երգի և ներդաշնակու-
թյան արքա**»:

Այդ արքան իր կենդանության օրոք մարդկային ներաշխարհներ էր
առնում նաև իր մատներով: Նա բանեցնում էր երաժշտական չորս գոր-
ծիք, որոնց «**նաքազ մարթըն չի կանա տեսի**», ըստ որում՝ բանեցնում
այնպես, որ իր նվագով, ասես, «**անուշահամ գինով**», «**շատին գարթուն
կու լուսացնե, շատին կու քընցնե բանգով**», «**շատ տըխուր սիրտ կու
խնդացնե, կու կարի հիվընդի դողըն**» իսկ իրեն՝ **նվագող-աժողին** «**էր-
կու կու շինե**»:

Բայց Սայաթ-Նովան՝ այս ամենից առաջ ու հետո՝ անցած ու գալիք
ժամանակների դեմ հանդիման կանգնում է իբրև բանաստեղծ: Համալ-
սարանի անուն իսկ չլսած, գուցե ինչ-որ վանքում ինչ-ինչ գիտելիքներ
ստացած այդ պատանին տիրապետեց չորս լեզվի և այնպես ստեղծա-
գործե՛ց, որ մտավ երեք ժողովրդի գրականության մեջ: Ո՛չ թե գրակա-
նության պատմության, այլ գրականության՝ մեջ՝ կենդանի և ապրող,
կարդացվող ու երգվող, միշտ ճարվող, բայց միշտ էլ փնտրվող գրակա-
նության մեջ: Մտավ իբրև աղ:

Սայաթ-Նովան անհատ չէ, այլ ժամանակ լցնող շունչ է, տարածու-
թյուն լցնող օդ, և այդպիսին մնում է մինչև հիմա՝ 200 տարի հետո էլ:
Թաղված է Թիֆլիսի սուրբ Գևորգ եկեղեցու բակում:

Պետրոս Գուրյան

Ենիչեր մը օր մը մտավ դետեխս (պապ) խանութը և մինչ նա **զըմպա-
յով (դուր)** երկաթ թակելու զբաղած է եղեր, կը հարցներ, թե ինչ կըսեին
այն գործիքին, որով երկաթ կը թակվի: Դետես՝ Սարգիս, կը պատաս-
խանե՝ «**Չմպա**»: «**Չմպա, զմպա**» բառերը կրկնելով՝ խանութեն կը մեկ-
նի ենիչերին, և այդ բառը իբրև մականուն կը մնա դետեխս վրա:

Չմպայան էին գրվում նաև Սարգսի գավակները, մինչև որ Պետրո-
սը ճեմարանական բառարանում գտավ **զմպա** բառի հայերենը՝ տոհ-
մական ազգանունը փոխելով Գուրյանի:

Մուրացան

Իսկական անուն-ազգանունը Գրիգոր Տեր- Հովհաննիսյան է: Մուրացանը հնագույն հայկական նախարարական տոհմերից մեկի անունն է, որ հիշատակվում է Մովսես Խորենացու «Պատմության» մեջ: Այդ մոռացված ու վերացած տոհմանունն էլ գրողն ընտրել է իր համար որպես գրական անուն:

Նար -Գոս

Գրողի իսկական անուն-ազգանունը Սիքայել Տեր-Հովհաննիսյան է: Նար-Գոսը գրական անուն է, առաջացել է գծիկով երկու մասի բաժանված նարդոս ծաղկի անունից: Անունը մկրտվել է «Նոր դարի» խմբագրատանը. թերթի քարտուղար Դանգուզյանը /Մուշե վարդապետ/ «Առձեռն բառարանից» ընտրում է այդ անունը. ծաղկի անուն է, ռուս.՝ лаванда:

Ատոմ Յարճանյան /Սիամանթո/

Ծննդյան անունը եղել է Աստվածատուր /կրճատ՝ Ասատուր/, հետո կոչվել է Ատոմ: Դպրոցի տեսուչ, բանահավաք Գարեգին Սրվանձտյանը նրան անվանակոչում է Սիամանթո՝ ըստ իր գրի առած «Սիամանթո և Խջեգարե» ժողովրդական պոեմի: **Վարուժան** նշանակում է **արուքչուն**: Հայտնի է նաև **գրական ֆիդայի** շրջասույթով:

Գանիել Վարուժան

Նրա անունը հայրը դրել է Գանիել մարգարեի պատվին: Նրանց տոհմական ազգանունը Չպուգքյարյան էր՝ չուպուքքյար բառից, որ նշանակում է չիբուխ կրող:

Հովհաննես Թումանյան

Թոթովենցը Թումանյանին առաջին անգամ տեսել է Էջմիածնի վանքի բակում, որտեղ հավաքվել էին մեծ թվով գաղթականներ: Ամեն կետում մարդ էր մեռնում, շատերը սովից կամ հիվանդություններից...

Հանկարծ սկսում է անձրև, որը քիչ ժամանակ անց վերածվում է տեղատարափ անձրևի և հեղեղում է գետինը: Ամեն տեղ լցվեց գաղթականներով, բայց դեռ հազարավոր գաղթականներ դրսում էին, և Թումանյանը ստիպված գաղթականների առաջ բացում է նոր կառուցվող վեհարանը, որը մինչև այդ **անձեռնմխելի էր**:

Դա զայրացնում է կաթողիկոսին (Գևորգ Ե):

Ասում էին, որ երեկոյան Վեհափառը կանչել է Թումանյանին և հանդիմանել նրան այդ «բռնի» գործողությունների համար:

Վեհափառը պատվիրել է, որ Թումանյանն այլևս այդպիսի բան չանի, սակայն Թումանյանը պատասխանել է, որ պիտի անի, եթե անհրաժեշտություն լինի: Հայոց հայրապետը կանգնել է ոտքի և հայտարարել.

-Դուք խոսում եք Ամենայն Հայոց Հայրապետի հետ:

Գրողը նրան պատասխանել է.

-Իսկ դուք խոսում եք Ամենայն հայոց բանաստեղծի հետ:

Ակսել Բակունց

Ակսել Բակունցի անունը Ալեքսանդր անունից չէ. մի ներկայացման մեջ Ակսել անունով պատանու դերը կատարել է Բակունցը:

Թագուհի Մաֆրազբեկյան

Եղիշե Չարենց

Հարցրի «Չարենցի» մասին:

-Դեռ Կարսում մի քանի բանաստեղծություն տպեցի Սողոմոնյան ազգանունով: Մի բժիշկ եկավ մեր քաղաքը, տուն վարձեց, դռան վրա կացրեց. «Բժիշկ Չարենց»: Չարենց. խիստ հավանեցի ու վերցրի...

Պատանեկան տարիների մտերիմները այլ բացատրություններ էլ են տալիս: Ըստ Կարինե Քոթանջյանի՝ բանաստեղծը Չարենց է մկրտվել, որովհետև մանկուց եղել է չար երեխա: Նրան այնքան են չար ասել, որ Չարենց էլ մնացել է: Իսկ Անուշավան Զիդեջյանը (Վիվան) բանաստեղծի կողմից վկայել է, որ Չարենց անունն առաջացել է Ալեքսանդր Պուշկինի «Անչար» ոտանավորի հնչյունական տեղաշարժերի հետևանքով:

Գուրգեն Մահարի

Գուրգեն Մահարի

Գուրգեն Մահարու տոհմական ազգանունը Մուրադխանյան է: Գորգավաճառությամբ զբաղվող նրա նախնիները սերում են Պարսկաստանից: Վանում նրանք կնքվել են Աճեմյան ազգանունով, որ կազմված է «աջեմ կամ աջամ» բառից, որ արաբերեն նշանակում է «օտարածին»: Մահարի կեղծանունը ծագել է «Լքում» բանաստեղծության մռայլ տրամադրությունից՝ մահ, արի: Երբ Լ. Եվանգուլյանը Դիտող ստորագրությամբ հոդված է տպագրում Մահարու բանաստեղծության մասին, որում նա պնդում էր, որ «թուրքահայ որբ գրականությունը որբ մահարիներով պիտի ծաղկի», Մահարին գրում է. «Ես հաշվեցի, որ հնչեց իմ անմահության զանգը և պահեցի այդ կեղծանունը»:

Վիլյամ Սարոյան

Երբ առաջին անգամ դողալով զանգ տվի Բեռնարդ Շոուին, ասանկ բան պատահեցավ. -Պարոն Բեռնարդ Շոու, ձեզի կանհանգստացնե Ուիլյամ Սրոյըն: Այսպես ինձ կըսեին ամերիկացիները, Սրոյըն... Շատ ամնչցա, երբ Բեռնարդ Շոուն ըսավ.

-Որքան գիտեմ, դու ոչ թե Սրոյըն ես, այլ Սարոյան...

Շատ ամնչցա:

Հովհաննես Շիրազի գրական անունը նովելագիր Ատրպետն է տաղանդավոր պոետին տվել, որովհետև «Այս երիտասարդի բանաստեղծությունները Շիրազի թարմ և ցողով ծածկված վարդերի բուրմունքն ունեն» (Շիրազը քաղաք է Իրանում, որը հայտնի է իր վարդերով և պոետներով):

Շիրազի գավակները

Մեծիս անունը Արա Շիրազ է/ Արա Գեղեցիկիս անունն է/, հետո՝ Մասիս Շիրազ /սարիս անունն է/, Սիփան Շիրազ /մյուս սարիս անունը/, Աստղիկ Շիրազ /մորս անունը/, Արաքս Շիրազ /մայր գետիս անունը/, Թաղևոս Շիրազ /հորս անունը/, Անի Շիրազ /քաղաքիս անունը/, Վան Շիրազ /մյուս քաղաքիս անունը/:

Հովհաննես Շիրազը պաշտում էր երեխաներին: Նա նրանց համար մինչև ափերը լցված բարության ծով էր:

Երբ գրկում եմ բալիկներիս,

Ձեզ եմ գրկում, հա՛յ բալիկներ,

Երբ գրկում եմ ձագուկներիս,

Ձեզ եմ գրկում, հա՛յ գալիքներ,

Կուգեմ դառնան տիեզերքիս

Աստղերը ձեզ խաղալիքներ:

Պարույր Սևակի գրական անվան մասին պատմում է Ռուբեն Զարյանը. «Պարույրին առաջարկեցի, որ մի կարգին գրական անուն ընտրենք իր համար... Պարույր Սևակ...»

-Իսկ ինչո՞վ է վատ Պարույր Ղազարյան անուն- ազգանունը: Ինչո՞ւ պիտի ես Ռուբեն Սևակի ստվերում մնամ: Պարույրը չհամաձայնվեց իմ առաջարկին:

Այնուամենայնիվ, օրեր անց, նրա բանաստեղծությունների տակ ես գիծ քաշեցի Ղազարյան ազգանվան վրա և ավելացրի Սևակ գրական անունը»:

Հայ գրողների արտաքինի նկարագրությունը ժամանակակիցների հուշերում

Ղևոնդ Ալիշան

Որքան մեծ եղավ իմ զարմանքը, երբ պարթև, քիկնեղ, վեհաշուք մի ծերունի տեսնելու փոխարեն ես հանդիպեցի փոքրիկ, թեթև մի էակի, որը գետնի վրա սահում էր, քան քայլում, իր թռչնակի վզի վրա կրում էր երկրպագելի գլուխ: Կարծես թե նա ծերացած հրեշտակ էր, որը փախել էր երկնքից և ապրում էր մեր մեջ՝ մի պահ մեր ցավերը անուշացնելու համար, սակայն նա ցանկանում էր վայրկյան առաջ վեր բարձրանալ դեպի իր հեռավոր օդակառույց կապույտ բույնը, որի կարոտն ուներ միշտ:

Արշակ Չոպանյան

Խաչատուր Աբովյան

Աբովյանի առաջին և միակ դիմանկարը վրձնել են Գորպատում՝ ուսանելու տարիներին: Դիմանկարի անձանոթ հեղինակը Լյուդվիգ ֆոն Մայդելն է: Այն փաստը, որ բոլորիս հայտնի նկարում պատկերված անձնավորությունը Խաչատուր Աբովյանն է, հաստատել են շատերը, այդ թվում՝ նրա որդին՝ Վարդան Աբովյանը, աշակերտներ Պ. Պռոշյանը, Ն.Աթանեսյանը:

Երևանի Աբովյան փողոցի «սլանի գլուխ» կոչվող պուրակում տեղադրված բրոնզե արձանի հեղինակն է քանդակագործ Անդրեաս Մարությանը: 2 մետր 20 սմ բարձրություն ունեցող արձանը հայ նոր գրականության հիմնադրին ներկայացնում է կանգնած, աջ ոտքը քիչ առաջ դրած, հենված ձախ ոտքի վրա: Աբովյանը երկու ձեռքերը ծալել է կրծքին, աջ ձեռքում՝ ձախ թևի արմունկի տակ, կողքի վրա պահած ունի «Վերք Հայաստանին»: Նա հագած ունի 1830-40-ական թվականների տարագ՝գարնանային թեթև, բարձր օձիքով երկար վերարկու, որի ներքևի ծայրերն իջել են ծնկներից ցած: Գլխաբաց, մեղմ, մտածկոտ հայացքով Աբովյանը նայում է առաջ՝ դեպի հեռուները: Աբովյանը պատկերված է երիտասարդ, բավական խիտ ու բարձր մազերով: Աչքերի խորությունը, նրա անկյուններում և հոնքերի մոտ կուտակված փոքրիկ և նուրբ ծալքերը, ուղիղ ու խորաթափանց հայացքն ավելի սրում, արտահայտիչ են դարձնում նրա խոհականությունը:

Բաֆֆի

Գրասեղանին քով նստած էր ժամանակակից հայ երիտասարդության ամենասիրելի դեկավարը: Նրա անունը տարածված էր ամենուրեք, ուր կար գեթ մի բուռ հայություն: Ուներ խոշոր, ավելի գիտնականի, քան արտիստի գլուխ, բարձր ճակատ, կարճ խուզած, քիչ ալեխառն մազերով ու փոքրիկ, հիվանդոտ աչքերով. այս էր Բաֆֆին:

Ալեքսանդր Շիրվանզադե

Հակոբ Պարոնյան

Պարոնյան համակրական և խելացի դեմք ուներ. մոխրագույն մեծ աչքեր, կարմիր երակներ հաճախ կը տեսնվեին աչքերուն ճերմակին մեջ: Բարակ սրունքներ, բարակ թևեր, խոշոր գլուխ, աչքերը՝ թեթև մը շիլ: Խոսելիս, գրելիս սովորություն է ունեցել ձախ ձեռքով ճակատը շփել: Նա եղել է երաժշտասեր մարդ, սիրել է ոչ միայն լսել արևելյան եղանակներ, այլև նվագել գործիքի վրա:

Հրանդ Ասպուր

Գրիգոր Չոհրապ

Հայ իրավաբանը, որ պառլամենտական էր և խոշոր գրող, ուռուցիկ այտեր ուներ, լայն ճակատ, հանդարտ նայվածք, որտեղ փայլում էր մտածելու ընդունակությունը: Լայն ճակատից վեր մազերը սանրել էր երկու կողմի վրա, և աջ կողմին մազերը բարձրանում էին վեր՝ կլոր դեմքին մի քիչ երկարություն տալով: Հագնված էր եվրոպացու պես. հագել էր ժիլետ և երբեք բաճկոնը չկոճկեց, այլ թողեց բաց, որպեսզի ժիլետի աջ կողմի գրպանիկի մեջ եղած ժամացույցի ոսկե շղթան, որ հասնում ու մտնում էր ձախակողմի գրպանիկը, միշտ երևա: Պապիոն /թիթեռնաձև/ փողկապն այնպես էր կապում, որ, իրոք, թիթեռ էր հիշեցնում: Նա Ստամբուլում կարող էր մրցել որևէ թուրք իրավագետի հետ բոլոր երկրների օրենսգիտության իմացությամբ և թուրքից լավ էր տիրապետում դատավարական թուրքերենին:

Դանիել Վարուժան

Միջահասակից քիչ բարձր էր, լայնալանջ, գլուխը միշտ բարձր՝ դեպի աստղերը: Մազերը մուգ սև էին և բաժուկով անջատված: Դեմքի գծերը կանոնավոր էին, մորթը՝ անփայլ սպիտակ, մի քիչ մոխրագույնի զարնոդ: Աչքերը թեթևակի շիլ էին, սակայն այդ խումարությունը ոչ միայն չէր խանգարում, այլև ընդգծում էր նրա հայացքի մեկամաղձոտությունն ու խորությունը: Ոլորուն ընչացքը ընդգծում էր նրա քիթը՝ արծվենի ու լայնառունգ՝ ծածկելով կարմիր շրթունքները: Դանիելն ընդ-

հանրապես զուսպ էր ու լրջմիտ, բայց հաճախ դեմքը լուսավորվում էր բարեմույն ժպիտով: Նա բնավորությամբ մեկուսացող չէր, բայց դյուրահաղորդ էլ չէր: Երբ հարցը, սակայն, վերաբերում էր գեղարվեստին և մանավանդ իր դժբախտ երկրին, նա ոգևորվում էր, խանդավառվում՝ իր շուրջը հավաքելով բազմաթիվ համակիրների:

Վահան Թոթովենց

/Ամենից լավ ինքն է բնութագրել իրեն/

Ուրախ, բարձրախինդ-այս է Թոթովենցը,
Թախծոտ ու մռայլ-այս է Թոթովենցը,
Ծիծաղը՝ վարար, մռայլությունն անծիր,
Ամեն չափ անչափ՝ այս է Թոթովենցը:

Հայֆիլմում նրա՝ «Բաց կապույտ ծաղիկներ» պատմվածքի հիման վրա նկարահանվել է «Կտոր մը երկինք» ֆիլմը: Նա եղել է Անդրամիկի գրագիրը և խմբագրել է նրա հրատարակած «Հայաստան» թերթը: 1936 թվականին բռնադատվել է, 1938 թվականին՝ գնդակահարվել: Արդարացվել է 1954թ.-ին:

Վիլյամ Սարոյան

Միջառասակից բարձր և թիկնեղ, տոհմիկ, հայկական դիմագծերով, որոնք վավերացված և հաստատված են ավելի քան տոհմիկ, բուն արևմտահայ բեղերով, լայն, խոհական ճակատ և խաժ ու խորունկ աչքեր, մետաղի զրնգուն ձայն, վարակիչ և կորովի մի ամբողջականություն՝ անկրկնելի ու եզակի իր տպավորությամբ. ահա Վիլյամ Սարոյանը՝ զգայուն, անմիջական, մանկավուն, երբեմն՝ կամակոր, բայց՝ ինքնատիպ ու մեծաշնորհ:

Գուրգեն Մահարի

Գուրգեն Մահարի

Քո կյանքի ճանապարհը ուղիղ չեղավ, ինչպես լարախաղացի ճանապարհը, ոչ էլ միշտ փշոտ ու տատասկոտ, ինչպես մարգարեների ճանապարհը: Հաճախ դու մեղանչեցիր քո դեմ, քո սրտի, հոգու, խղճի դեմ, բայց հավատա, ո՛վ դու, որ նայում ես հայելու միջով տխուր աչքերով, քո ժողովուրդը քեզ կների, որովհետև դու մարդ ես եղել, և այն ամենը, ինչ մարդկային է, խորթ չի եղել քեզ համար... Մեծ ու փոքր ընկերներ ունեցար դու, մեծ ու փոքր սերեր, մեծ ու մանր կրքեր, կորցրեցիր ու գտար, հաճախ, երբ կորցրեցիր՝ ուրախացար, երբ գտար՝ տխրեցիր, բայց դու անկեղծ եղար, քո մոլորությունների մեջ անգամ՝ անկեղծ...

Ո՛վ դու, որ հայելու միջից նայում ես ինձ թափված գանգուրներով, ալե-
հեր մազերով սլակված ճակատով, ու այնուամենայնիվ, ժպիտով: Ես
գիտեմ քո անտանելի բնավորությունը:

Եղիշե Չարենց

Տասներեք թվի ամառը, հունիսին,
Նաիրյան քաղաքի մի փողոցով խաղաղ,
Անցնում էր հոգսը երեսին,
Տասնվեց տարեկան մի տղա:
Վտիտ էր, միջահասակ, ուտերը նեղ,
Գանգուր մազեր ուներ, գանգուր ճակատ,
Հագին՝ սև շապիկ սատինե:

Իսկ հետո... Իմ պատկերացումներում գծագրվում էր հաղթամար-
մին, ամուր ու առնական մի կերպարանք՝ համարյա ատլետիկ կառուց-
վածքով, «մայակովսկիական» հզոր ձայնով և նրա նման յոթնամղոն
քայլերով: Չէ՞ որ հենց այդպիսի արտաքին ունեցող բանաստեղծին օր-
գանապես կպատշաճեր նրա բանաստեղծության ուժն ու բարձրությու-
նը: Բայց իրականում բողբոջվին էլ բարձրահասակ չէր, վտիտ, ֆիզիկա-
պես ոչ ուժեղ, փոքր-ինչ պղտորավուն, բայց կառչող աչքերով և փոքր-
ինչ հեզմանքով ծռված բերանով, փոքր-ինչ կաղին տվող քայլվածքով,
մի փոքր աջ ու առաջ թեքված գլխով, իր աչքերի նետահարող հայաց-
քով և մշտապես գրգռված ձայնով: Նրա մեջ կար նաև իրեն ձգող ինչ-
որ անդիմադրելի բան, անարտահայտելի ձգողական ուժ և ինչ-որ վա-
խեցնող սառնության նման մի բան: Իր հարաբերություններում շատ էր
անհավասարակշիռ գ այսօր սիրալիր ու բացսիրտ կլիներ, վաղը,
առանց առիթի, չոր, պաշտոնական: Կարող էր հայիոյել ամենակոպիտ
բառերով, իսկ հաջորդ օրը խոսել սիրալիր, բարեկամաբար: Շատերը
նրան չէին հասկանում, բայց նրա կրծքում խփում ու թալտում էր շատ
քնքուշ, շատ վիրավոր մի սիրտ...

Տիգրան Հախումյանի հուշերից

...Խոսքը տրվեց Չարենցին: Նա սկսեց խոսել սկզբում ցածր ու հան-
գիստ, աջ ձեռքը թույլ թափահարելով, բայց գնալով նրա ձայնը նկա-
տելիորեն ուժեղացավ: Չարմանալին այն չէր, որ խոսքը էլեկտրական
հոսանքի նման անցավ մեր մարմնով, այլ այն, որ խոսելիս՝ այդտեղ,
բեմի վրա Չարենցը այլևս փոքրամարմին չէր, այլ բարձրահասակ, իսկ

դեմքը, որ մտմագույն էր, դարձավ վարդագույն: Այդ վայրկյաններին նա մեզ թվաց գեղեցիկ մարդ՝ գրավիչ դեմքով և վառվռուն աչքերով:

Արծրուն Բաղդասարյանի հուշերից

Չարենցի էությունը ոչ ոք ավելի խորունկ չի արտահայտել, ինչպես Մարտիրոս Մարյանը: Ավանդական ապոլոնյան քնարի փոխարեն, որով գեղանկարիչները պատկերել են բանաստեղծների ներշնչված ոռոմանտիկական կեցվածքը, Մարյանը կտավի կապույտ ֆոնի վրա, դիմանկարի կողքին, դրել է եգիպտական դիմակ: Հետագայում նկարիչն այդ մասին կգրի. «Որպես ֆոն ծառայող երկնագույն գլխաշորի վրա ես նկարեցի եգիպտական դիմակներից մեկը: Չարենցի հետ մենք սիրում էինք Եգիպտոսից իմ բերած Արևելքի այդ մասունքները: Դիմակի հավերժից եկող սառած աչքերը, կոնտրաստի մեջ մտնելով Չարենցի կենդանի և խորիմաստ աչքերի հետ, ընդգծում են բանաստեղծի աչքերի անհուն խորությունը, հավերժության գաղափարը»: Մարյանական Չարենցի դեմքի վրա դրոշմված է մի անհուն տառապանք, իսկ թափանցող, սուր աչքերը ասես թե նայում են հեռուների ժամանակի ու տարածության խորքը՝ գտնելու կեցության հազար ու մեկ հարցերի պատասխանները:

Մարտիրոս Մարյան

Պարույր Սևակ

Նրա մեջ այրող մի բան կար, բորբոքող, անկասելի ձգող մի բան: Թուխ, լայնաշորթ, լարված, զգայուն խոշոր աչքերում՝ մշտական անհանգստություն, մշտասևեռ վիճակ: Նման էր եթովպացու. նիհար, գանգրահեր, մեծ այտուկներով, աչքերում՝ սև բոց, քիթը՝ լայն, ատամնաշարի ճերմակը մատնող շողշողուն ժպիտով:

Ինչ-որ գերբնական նրբությունը, բնածին տակտն ու հոգու քնքշանքն այդ բռնկվող ու անհաշտ մարդու հատուկ տաղանդն էին, իսկ նրա հմայքը, արտիստականությունը, կրակոտ խառնվածքը, պոեզիայով արբենալը, օրգանական իմաստությունն ու պարզատեսությունը նրան գեղեցիկ ու սիրելի էին դարձնում յուրաքանչյուր միջավայրում:

-Ամեն անգամ, երբ լսում եմ Պարույրի խորիմաստ ու սրամիտ խոսքը, կարդում նրա բանաստեղծությունները, տեսնում նրա կիրթ ու վայելուչ շարժումները, մոռանում եմ նրա հաստ շրթունքները, փլված քիթը և նախանձով մտածում՝ ի՞նչ գեղեցիկ մարդ է Պարույր Սևակը:

Լինելով տգեղ՝ Սևակը շատ գեղեցիկ էր:

Վարդգես Բաբայանի հուշերից

...Պարոդ Պարույրին նայելիս գտա իր նմանակը կենդանական աշխարհում. նա հովազ է՝ ճիլ, բարալիկ, մկանային մագաչափ իսկ ավելորդ բեռ չունեցող մարմին, շարժման արտասովոր ճկունություն, փափուկ քայվածք, թույլ-թույլ պահվածք՝ պատրաստ ամեն պահի լարվելու, ինչպես հովազն է լարվում թռիչքից առաջ...Գեղեցիկ էր Պարույրը որպես սևաթույր հովազ և՛ պարելիս, և՛ փողոցով անցնելիս, և՛ ամբիոնի մոտ խոսելիս՝ գեղեցիկ, արտիստական...

Լևոն Հախվերդյանի հուշերից

Գրական նախատիպեր

Բնիկ տրապիզոնցի Երվանդ Գասպարյանը հայ մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշյանի «Բորժոմ» նավթատար նավի նավապետն էր մինչև 1918 թվականը: Այնուհետև նա գալիս է Հայաստան և դառնում Սևանա լճում աշխատող «Աշոտ Երկաթ» անունով փոքր շոգենավի նավապետը: Կոստան Չարյանի «Նավը լեռան վրա» վեպի հերոսը նույն Երվանդ Գասպարյանն է:

Բաֆֆու «Խենթը» վեպի գլխավոր հերոս Վարդանի նախատիպն է եղել հանդուզն ու քաջ մի հայ երիտասարդ՝ Սամսոն անունով: Նա ծնվել է Աշտարակի Ղարաջորան գյուղում /այժմ՝ Նաիրիի շրջանի Արա գյուղ, ուր դրված է հերոսի արձանը/: Նրա առաջին ուսուցիչը եղել է կաթողիկոս Վազգեն Առաջինը: Նրա գերեզմանը գտնվում է Էջմիածին քաղաքի Գայանե վանքի բակում: Բազալտի վրա գրված է. «Խենթ. Սամսոն Տեր-Պողոսյան, 1846-1911, Վարդան»:

Գ. Մունդուկյանը տասնվեց տարեկան էր, երբ պատահաբար ընկավ երկրորդ հարկի պատշգամբից: Հայ քահանան այդ առթիվ Եփրեմվերդի նայեց և ասաց, որ տղան կապրի 87 տարի: Մունդուկյանը հեռու էր նախապաշարուններից, քայց քահանայի գուշակությանը հավատաց: Հենց որ մտավ 87-րդ տարու մեջ, 1911թ.-ին կազմեց իր նշանավոր կտակը: Նա վախճանվեց հաջորդ տարվա գարնանը:

Գաբրիել Մունդուկյանի «Իմ մահը և թաղումը» կտակից.

«Գերեզմանիս վրա վուչինչ արձան հարկավոր չէ. մե սիվ քար ու իմ ջանը:

Թե սրտով վրես արձան իք ուզում ու արժանի կու համարիք, էտ արձանը, իմ փոխանակ, Պեպոյի համա կանգնեցրեք, վուրդիոր կու սագ գա:

Մաղ բոյով կանգնած ըլի բարձր պատվանդանի վրա՝ իր հաքուս-

տով, գրակը ծածկած, մե ձեռին Արութինի բարաթը, մեկել ձեռով վրեն գրածն ըլի ցույց տալ նրան, վուր գլխաբաց ու սերթուկով սևէրես կանգնած է կշտին:

Տակը՝ պատվանդանի վրա, գրած ըլի մենակ էս խոսքերը՝

Պեպո

Էս քու կոտրած ձեռով չի՞ս գրի...»:

Հայ պատմության և գրականության մեջ հայ կնոջ և մոր կերպարը

Հայ գրականության մեջ հայ կնոջ կերպարը բացահայտվում է և՛ որպես քնքուշ էակ ու սիրող կին, և՛ որպես գորովագութ մայր ու քույր, և՛ հայրենիքի հավատարիմ ու մարտնչող զինվոր, և՛ խելացի ու իմաստուն խորհրդատու:

Կին, որ միաժամանակ փխրուն է և տոկուն, խոնարհ է և ընդվզող, քնքուշ է և առյուծասիրտ, կին, որի մի ձեռքին մանկան օրորոց ու շուրթերին՝ օրորոցային, մյուս ձեռքին՝ սուր ու շուրթերին անեծք է եղել թշնամու հանդեպ:

Հայ գրականության մեջ կերպարներից են Տիգրանուհին /«Տիգրան և Աժդահակ» առասպելից/, Եղիշեի մատյանի «տիկնայք փափկասունք Հայոց աշխարհի», Մասնա դյուցազնավեպի Ծովինարը, Արմաղանը, Խանդութը, արտատեր պառավը, որոնց նոր շուք ու վեհություն հաղորդվեց Գ.Գեմիլիանի «Վարդանանք» պատմավեպում՝ Մեծ տիկին, Խանդութ, Աստղիկ, Անահիտ և այլք, Այծեմնիկը՝ Անիի պաշտպանության քաջարի հայուհին, Փառանձեմ թագուհին, Սոսեն՝ ֆիդայական պայքարի կրակե շապիկ հագած հայուհին, և մերօրյա՝ արցախյան պատերազմում իրենց կյանքը հայրենիքի գոհասեղանին դրած հերոսուհիները, մեր շարքերում քայլող կենդանի լեզենդ դարձածները, և այլն, և այլն: Հայ կանայք բոլոր ժամանակներում կարողացել են պահպանել, զարգացնել ու փոխանցել ազգային մշակույթի ոգին, հավատը, արժանապատվությունը, հայրենասիրությունը: Փառաբանման են արժանի թե՛ Հայոց փափկասուն տիկնայք, թե՛ Արցախյան ու քառօրյա պատերազմի օրերին իրենց արժանապատվությամբ, հերոսությամբ, իմաստությամբ աչքի ընկած կանայք:

Քազմագավակ հայ թագուհին

Հայկական ձեռագրերի բազմաթիվ հիշատակարաններում մեծաբանքով ու գովասանքով է հիշվում բազմագավակ հայ թագուհին՝ Կեռանը /Կիռ Աննա/, ով եղել է Լամբրոնի Հեթում իշխանի դուստրը, Կիլիկիայի հայոց Լևոն Գ թագավորի /1269-1289/ կինը: Ղևոնդ Ալիշանը հավաստում է, որ Կեռան թագուհին թե՛ մեկիկ և թե՛ խեղեղ/ երկվորյակ/ 15 կամ 16 զավակ է ծնել: Նա մասնակցել է երկրի կառավարմանը, հովանավորել է մշակույթն ու արվեստը, պատվիրել ձեռագրեր:

Քաջարի հայուհին

1363 թվականին Կիլիկյան Հայաստանի Ռուբինյան Հեթում սպարապետի կին Ջարմանուհին Սիս մայրաքաղաքի պաշարման ժամանակ կռվում էր իր ամուսնու կողքին և Աղանայի ճակատամարտում իր ձեռքով սպանում է մամլուք զորավար Էոմերին: Ամուսնու դավադրաբար սպանվելուց հետո Ջարմանուհի տիկինը իր Գևորգ զավակի հետ ապաստանում է լեռներում: Հինգ տարի թափառական կյանք վարելուց հետո նրան հաջողվում է իր դրոշի տակ հավաքել 300 խիզախ լեռնականների, որոնց գլուխն անցած հարձակվում է թուրքերի վրա, ազատագրում Կապան ամրոցը և ամրանում այնտեղ: Կիլիկիայում հայկական պետականության վերացումից հետո ստեղծում է նոր հայկական իշխանություն, որը գոյատևում է 65 տարի:

Հայ առաջին բանաստեղծուհին

Մատենագրության մեջ հիշվող հայ առաջին բանաստեղծուհին Սահակադուխտն է, որ ապրել ու ստեղծագործել է 8-րդ դարում: Երաժիշտ բանաստեղծուհին եղել է Գվինի կաթողիկոսարանի ավագերեց Սահակի դուստրը, նշանավոր գիտնական, շարականագիր Ստեփանոս Սյունեցու քույրը: 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ Սահակադուխտը մանուկ հասակում ստացել է «զվարս կուսութեան» և, առանձնանալով Գառնիի ձորի մի քարայրում, ապրել է ճգնակեցությամբ, այդտեղ էլ կնքել է իր մահկանացուն: Հմտացել է երաժշտական ու բանաստեղծական արվեստի մեջ, ունեցել է աշակերտներ, որոնց ուսուցանել է վարագույրի հետևում նստած:

Այլ ժողովուրդների բանաստեղծներ

Ֆիրդուսի

/մոտ 940-1020 կամ 1030/

Աբուլղասիմ Ֆիրդուսին Իրանի մեծ բանաստեղծն է, համաշխարհային գրականության անմահ դեմքերից մեկը: Ծնվել է Խորասանի Թուս քաղաքում: Կրթությունը ստացել է ծննդավայրում: Մոտ 35 տարի աշխատել է իր գլխավոր երկի՝ «Շահնամե» պոեմի վրա, որ ավարտել է խոր ծերության հասակում: Վախճանվել է ծայր աղքատության մեջ: Ֆիրդուսու ստեղծագործությունը սիրվել է ժողովրդի կողմից՝ իր մարդասիրական ու հայրենասիրական բարձր գաղափարների համար:

Այսուհետև ես չեմ մեռնի, միշտ կմնամ կենդանի,

Որովհետև ես ցանեցի սերմը խոսքի հայրենի:

Եվ ամեն մարդ, ով որ ունի խելք ու հոգի, նա կասի

Եվ իմ մահից դարեր հետո. «Կեցցե՛ս, անմահ Ֆիրդուսի»:

«Շահնամե» բառացի նշանակում է շահերի գիրք: Ֆիրդուսին իր հսկայածավալ պոեմում / բաղկացած է մոտ 60000 երկտող տներից՝ բեյթերից/ գովերգել է Իրանի շահերի ու փառաբանված հերոսների գործերն ու սխրանքները: Դա իրանական հնագույն էպոսի գրական մշակումն է: Պոեմը բաղկացած է երեք մասից: Երրորդ մասում, որ կոչվում է պատմական, պատմվում է Սասանյանների թագավորության մասին՝ մինչև 7-րդ դար. հետաքրքիր տեղեկություններ կան նաև Հայաստանի մասին: Պոեմում տեղի ունեցող իրադարձությունների գլխավոր առանցքը Չարի ու Բարու պայքարն է: Չարի մարմնացումը Թուրանն է՝ թուրքերի նախահայրենիքը, բարունը՝ Իրանը: Ֆիրդուսու պոեմի հերոսները հայրենիքին նվիրված դյուցազուհիներ են: Նրանք միաժամանակ սովորական մարդիկ են. ունեն իրենց անձնական վշտերն ու ուրախությունները: Ֆիրդուսու ամենասիրված հերոսներից են Ռոստամը և նրա որդին՝ Սոհրաբը: «Շահնամե» պոեմի երկրորդ մասում նկարագրվում են հանուն հայրենիքի նրանց կատարած սխրագործությունները: Ճակատագրի բերումով հայր ու որդի մենամարտում են / ինչպես հայկական էպոսում/, և հայրը, առանց ճանաչելու որդուն, սպանում է նրան...

Ֆիրդուսին հայ բանաստեղծի աչքերով...

Չեզ եմ հառել աչքերս, ով անցյալի վսեմ քերթողահայրեր...
Եվ քեզ, արեգակնական հանճար, շռայլորեն փարթամ Ֆիրդուսի,
Բազմաբղետ, ինչպես Արևելքը, գանձերով ու արկածներով
հարուստ,

Որ հանճարիդ այնքան անայլայլ և իմաստուն լույսով
Ներբողել ես շահերի սխրանքները սին, իբրև ուղի,
որ տրվում է վերուստ...

Եղիշե Չարենց

Պեյո Յավորով

**(1878, Չիրպան, Բուլղարիա - 1914, Սոֆիա, Բուլղարիա),
բուլղարացի բանաստեղծ**

- Երբ ես գրեցի «Հայերը» եղերերգը, գրչածայրս թաթախում էի ոչ թե
թանաքի մեջ, այլ հայ ժողովրդի վշտերի ու հուզմունքի ծովը... Գրում էի
հուզված՝ այս բազմաչարչար աշխարհում փնտրելով մարդկայնություն
և արդարություն: Այսպես ծնվեց իմ «Արմենցիս», 1899 թ.:

Վտարանդիներ, թշվա՛ռ բեկորներ,
միշտ խիզախ, բայց միշտ տառապա՛ծ ազգի,
ահաբեկված մոր լքվա՛ծ գավակներ,
գոհեր՝ պանծալի ու մե՛ծ սխրանքի.
Օտա՛ր ավերում, մայր հողից հեռու,
ավեր խրճիթում, անտե՛ր ու անսե՛ր,
հարբու՛մ են նրանք, վերքը՝ սրտերում
և երգում այնպե՛ս - լալիս են ասես...

Թարգման.՝ Գևորգ Էմինի

Յավորովն առանց Հայաստանը տեսնելու մեզ համար դարձավ այն,
ինչ Բայրոնն էր Հելլադայի համար:

Գարեգին Նժդեհ

Անկեղծ, մաքուր, բոցաշունչ ու անխոնջ հոգին տաճար է, որի մեջ է
ամենից հեշտ լսել ճշմարտության հայտնությունը:

Մաջինի

Պանթեոն

Պանթեոնը շինություն կամ հատուկ գերեզմանատուն է, որտեղ ամփոփվում են նշանավոր անձանց աճյունները կամ աճյունաստվորները:

«Պանթեոն» (հունարեն նշանակում է բոլոր աստվածների սրբավայր) անունը փոխանցվել է Հռոմի աստվածներին նվիրված տաճարի անվանումից: Այնտեղ թաղված են իտալացի նշանավոր գեղանկարիչ Ռաֆայելը, Միացյալ Իտալիայի առաջին թագավորները և ուրիշներ: Բոլոր երկրներում կան նման առանձնացված գերեզմանատուն-պանթեոններ:

Եվրոպայի ամենահայտնի գերեզմանատունը Փարիզի Պեր Լաշեզն է (հիմնադրվել է 1804 թ-ին՝ Նապոլեոն Բոնապարտի նախաձեռնությամբ): Այստեղ են թաղված համաշխարհային ճանաչման արժանացած գրողներ Մոլիերը, Օնորե դը Բալզակը, Մարսել Պրուստը, Օսկար Ուայլդը, կոմպոզիտորներ ժորժ Բիզեն, Ջոակինո Ռոսսինին և Ֆրիդերիկ Շոպենը, գեղանկարիչներ Էժեն Դելակրուան և Ամեդեո Մոդիլիանին, երգչուհիներ Մարիա Կալասն ու Էդիտ Պիաֆը, պարուհի Այսեդորա Դունկանը, դերասանուհի Սառա Բեռնարը և ուրիշներ: Մինչև 2000 թ. այստեղ էր ամփոփված նաև զորավար Անդրանիկի աճյունը:

Խոջիվանքի գերեզմանատուն - պանթեոն

ՈՒՐ ՀԱՆԳՉՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՄԻ ԱՍՏՂԱԲՈՒՅԼ

Ու ես անցնում եմ իմ սիրած մարդկանց գերեզմանների շարքերի միջով...

Հովհ. Թումանյան

Հայ գրողների և հասարակական գործիչների պանթեոնի մասին Թբիլիսիում քչերը գիտեն, կամ... դեպի պանթեոն ճանապարհն անցնում է Սամեբա տաճարով:

Խոջիվանքի հայկական գերեզմանատունը գտնվում է Վրաստանի Հանրապետության մայրաքաղաք Թբիլիսիի Հավլաբար թաղամասի հյուսիսում: Եղել է Թբիլիսիի ամենահին և ընդարձակ գերեզմանատունը: Գերեզմանատան տարածքում 1995 նոյեմբերի 23-ին սկսվել և 2002 թվականին ավարտվել է Վրաց ուղղափառ եկեղեցու գլխավոր եկեղեցին՝ Սուրբ Երրորդության մայր տաճարի կառուցումը /Սամեբա/:

Խոջիվանքի գերեզմանատան տարածքը հին ժամանակներից պատկանել է Բեհբուքյան հայկական իշխանական տան ներկայացուցիչներին և հանդիսացել վերջիններիս տոհմական գերեզմանոցը: Քարթլիի թագավոր Ռոստոմը (1638-1658), բարձր գնահատելով իր գանձապետ հայազգի Աշխարհբեկ Բեհբուքյանի նվիրվածությունը և ազնիվ ծառայությունը, նրան կոչել է Խոջա Բեհբուք, այսինքն՝ Մեծ Բեհբուք: 1655 թվականին Խոջա Բեհբուքը կառուցել է Սուրբ Աստվածածին եկեղեցին, որին ժողովուրդը տվել է Խոջի վանք, այսինքն՝ Խոջա Բեհբուքի շինած վանք անունը: Ժողովրդի կողմից գործածվող Խոջի վանք անվանումից էլ հետագայում ամբողջ գերեզմանատունը կոչվել է Խոջիվանք:

1936-1938 թվականներին քաղաքային իշխանությունների որոշմամբ և Լավրենտի Բերիայի անմիջական նախաձեռնությամբ սկսվեց ինչպես ամբողջ գերեզմանատան, այնտեղ գտնվող հազարավոր շիրմաքարերի, այնպես էլ նրա կենտրոնում կանգնած Սուրբ Աստվածածին եկեղեցու և մյուս բոլոր մատուռների ու դամբարանների ոչնչացումը:

1962 թվականի մարտի 17-ին նախկին ընդարձակ Խոջիվանքի հայկական գերեզմանատան տարածքից 32 շիրմաքար իրար մոտ հավաքելով՝ հիմնվեց այսպես կոչված «Հայ մշակույթի գործիչների պանթեոնը»: Իրականում պանթեոնի տապանաքարերի մեծ մասը տեղադրված է առանց հողի տակ գտնվող աճյունների:

Թբիլիսիի հայ գործիչների պանթեոնի նախագծի հեղինակն է հայտնի մանկագիր Հակոբ Աղաբաբի ճարտարապետ որդին՝ Ռուբեն Աղաբաբը: Պանթեոնի մուտքի մոտ ներսի կողմից պատերի տակ շարված են մի շարք գերեզմանաքարեր: Փոքրիկ ծառուղին տանում է դեպի բուն պանթեոն: Այստեղ են գտնվում հայ մտավորականների թիֆլիսյան սերուցքի, այդ թվում՝ Մուրացանի, Վանո Խոջաբեկյանի, Ջիվանու, Նար Դոսի, Ղազարոս Աղայանի, Մակար Եկմայանի, Ծերենցի, Պերճ Պռոշյանի, Ալեքսանդր Ծատուրյանի, Գրիգոր Արծրունու, Գեորգ Ախվերդյանի, Սիմոն Չավարյանի, Քեռու, Իվան Լազարյանի, Ալեքսանդր Մանթաշեի, Նաղաշ և Սկրտում Հովնաթանյանների, Գաբրիել Սունդուկյանի, Բաֆֆու, Հովհաննես Թումանյանի, Նիկոլ Դումանի և ականավոր այլ հայ մեծերի տապանաքարերը:

Պանթեոնի կենտրոնում վեհորեն բազմած է հայ ժողովրդի ամենասիրված պատմավիպասան Բաֆֆու հուշարձանը, որը կանգնեցվել է Գեորգ Բաշինջաղյանի էսքիզով, 1907 թվականին: Հուշարձանի պատվանդանին արդեն քանի տարի դրոշմված է անջնջելի այս քառատողը.

Քար է քո սիրտը, և խինդն է մեռած,
Քանի արյուններ, քանի կոտորած,
Տեսար, լռեցիր և դարձյալ պայծառ
Հայ երկրի վրա կապում ես կամար:

Բաֆֆու հարևանությամբ հանգչում է հայ դրամատուրգիայի ամենափայլուն աստղը՝ Գաբրիել Մունդուկյանը, որի ազգանվան կողքին գրված է Համմալ: Դա մեծ դրամատուրգի «Կտակի» վերջին ցանկությունն է:

Ահա և հարագատ մի անուն՝ Նար-Գոս՝ հայ նովելի վարպետը՝ «Մեծ ու փարթամ քաղաքի ծայրամասերից մեկի թաղը: Հավիտենական աղբով ծածկված ծուռտիկ-մուռտիկ փողոցներ, որոնք նեղիկ անցքերով գնում-խաչաձևվում են իրար կամ դեմ առնում մի պատի՝ կույր մուրացկանի պես»:

«Գազարոս Աղայան»- ընդամենը երկու բառ, ծննդյան ու մահվան թվական, որն իր մեջ ամփոփում է ամենաբարի հեքիաթասացի փոթորկուն կյանքը:

Մի քանի քայլ և նորից նվիրական անուն. հայ պոեզիայի ամենաչարքաշ, «պրոմեթեական դարավոր տառապանք» ապրած բանաստեղծի՝ Ալեքսանդր Ծատուրյանի շիրմաքարն է: Մարմարե սալաքարին նրա՝ «Հայ հեղինակի կտակի» նշանավոր տողերն են.

Երբ որ մեռնեմ, աստված սիրեք,
Արձանի տեղ շիրմիս վրա,
Լոկ մի կտոր չոր հաց դրեք,
Վրան գրած՝ «Քաղցից մեռա»:

Ասես խոհերիս կծիկը ցրելու համար իմ առջև բարի ժպիտով կանգնում է պանթեոնի մյուս բնակիչը՝ աշուղ Ջիվանին՝ լավատեսական հանրահայտ երգը շուրթերին.

Աշխարհը հյուրանոց է, Ջիվա՛ն, մարդիկ հյուր են,
Այսպես է կանոնը բնական, կուգան ու կերթան...

Քայլում եմ պանթեոնում ու մտովի ողջունում Թումանյանի շիրմին դրկից, նրա կողքին հանգչող Պողոսյանին ու Մուրացանին, Հակոբ Հակոբյանին ու Ծերենցին, Մակար Եկմայանին ու Օլգա Մանսուրյանին, Գրիգոր Արծրունուն ու Արամ Վրույրին, աշուղ Հազիբին ու Մկրտում Հովնաթանյանին, Վանո Խոջաբեկյանին ու Հարություն Շամշինյանին...

Կոմիտասի անվան գրողների և մշակույթի գործիչների պանթեոն

Կոմիտասի անվան գրողների և մշակույթի գործիչների պանթեոնը հիմնադրվել է 1936 թվականին, երբ Կոմիտասի աճյունը մահից 1 տարի անց Ֆրանսիայից տեղափոխվեց Երևան և ամփոփվեց գերեզմանատանը: Հետագայում այն վերածվեց «Գրողների և մշակույթի գործիչների պանթեոնի» (այժմ՝ Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոն): 1936-57 թ.թ., երբ Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնը (Հին պանթեոնը) «արգելված» էր, նշանավոր մարդկանց աճյունները՝ Փանոս Թերլեմեզյան (1866-1941), Արուս Ոսկանյան (1889-1943), Մանուկ Աբեղյան (1865-1944), Հասմիկ (1883-1956), Արմեն Տիգրանյան (1879-1950), Հրաչյա Աճառյան (1876-1953), Գերենիկ Գեմիրճյան (1877-1956) և ուրիշներ, ամփոփում էին քաղաքային պանթեոնում: Տարիների ընթացքում քաղաքային պանթեոնում հուղարկավորված նշանավոր մարդկանց մոտ սկսեցին թաղել նաև նրանց ընտանիքի անդամներին և հարազատներին:

Երևանի հին պանթեոնում

Մեր պանթեոնը փոքր է ու տխուր,
Իրար հավաքած մի քանի շիրիմ.
Օ, մեծ մահերով հարուստ ժողովուրդ,
Ո՞ր են քո որդոց շիրիմները հին:
Դարեր՝ անուստան ու անհայրենիք,
Քո որդիներին մեծագործ ու զոհ
Ապրելիս՝ չեղա՛վ հայրենի տանիք,
Մեռնելիս՝ չեղա՛վ հայրենական հող.
Օ՛, հիմա օտար շիրմատներում
Որք ու մամռոտած հանգչում են նրանք,
Մեկը՝ Մենայի ափերին հեռու,
Մեկն՝ ամերիկյան խուլ երկնքի տակ.
Եվ քանի՛ մեծեր, օ, անլուր օրհաս,
Մրահար ընկան անապատի մեջ,
Շիրմի փոխարեն՝ տատասկ ու ավազ
Եվ ապրողներիս մորմո՛քը անվերջ.
Մեր պանթեոն՝ նա խուռն ու անշուք

Աշխարհովը մեկ փռված է լռին.
Օրհնա՛նք ու արցունք, օրհնա՛նք ու արցունք
Հեռո՛ւ, հեռավոր մեր շիրիմներին...

Ընկերներս մեկիկ-մեկիկ
Կորան այս լայն ճամփաներին.
Ախ, քանիսը ընկան հանկարծ,
Արձա՛ն դարձան ճամփաներին.
Ապրողները կողքիս չկան,
Ե՞ս, թե՞ նրանք մնացին ետ,
Ու կանգնել եմ այսպես մենակ
Այս խուլ, անձայն ճամփաներին:

Սիրվա Կապուտիկյան

Եռաբլրի պանթոն

Ստեղծվել է 1992 թ.-ին Երևանում՝ Եռաբլուր բարձունքում: Այնտեղ ամփոփվել են Ղարաբաղյան պատերազմում և զինադադարից հետո գրհված ազատամարտիկների ու զինծառայողների, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներ զորավար Անդրանիկի (1865–1927 թ.թ.), Սոսե Մայրիկի (1868–1953 թ.թ.), Հայաստանի Ազգային հերոսներ Ջիվան Աբրահամյանի (1961–1991 թ.թ.), Մոնթե Մելքոնյանի (1957–1993 թ.թ.), սպարապետ Վազգեն Սարգսյանի (1959–1999 թ.թ.) անյունները (մոտ 700): Պանթեոնում է նաև Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի զոհված մարտիկներին նվիրված հուշակոթողը, որի տարածքում տեղադրվել են նրանց խորհրդանշական տապանաքարերը (39):

Եռաբլուրը սրբազան վայր է՝
Մեր բիրլիական Մասսին հավասար,
Լուսեղեն վշտի մեջ հայարտ մայր է,
Արցունքոտ հող է, փառքի ջահել սար:
Ու մեր մշտաբթուն գունդն է անմահաց...

Մանրապատումներ

Հաղթել

Պրկված բռունցքը պետք է հարվածեր... և եկավ ժամը: Հայրենիք, դու կամաց ասիր. «Ելեք ու հո՛ղը փրկեք»:

Հայրենիք, ոչ ոք քեզանից փառք չակնկալեց: Սակայն հերոսները քո վայրկենական մահը հավերժող փառքի փոխարկեցին: Ընկան նրանք՝ նորօրյա մեր ֆիդայիները, ընկան Ավուները, ընկան Աշոտները, Արմեններն ու Դավիթները, ընկան հանուն հայրենի հողի հաղթության, հանուն ապրողների, հանուն Արցախի ապագայի: Արցախցու զենքի ուժը փայլատակեց իրեն յուրահատուկ շքեղությամբ: Նվաճվեց հաղթանակը...ի՛նչ գնով...

... Մանուկների շուրթերից հավատամքի ու երդման խոսքեր են հնչում հայրենիքի հանդեպ սիրո, ակնածանքի, ու չես կարողանում հավատալ, որ այս մանուկները ևս հաղթել են...իրենց ապրելով, իրենց սպասումներով, որբի չոր արցունքներով, որ նրանցից շատերը արդեն տան «տղամարդ» են... Նրանք հավետ ո՛չ կասեն պատերազմին, բայց եթե հայրենիքը պահանջի, կհետևեն իրենց հայրերի օրինակին:

Իսկ այսօր՝ Հիշենք բոլորին անուն առ անուն

Եվ հիշենք ցավով:

Դա զոհվածներին պետք չէ, ես գիտեմ,

Բայց ապրողներին շատ է հարկավոր...

/1995թ./

Մտորումներ՝ վերջին զանգի առթիվ

Վերջին տերևը բաժանվեց ծառից և թռավ հեռու: Քամին՝ իր ասիերի մեջ առած, օրորում էր նրան: Կարոտի վերջին համբույրը, որ բաժանումից առաջ դրոշմել էր մայր ծառը, սառել էր տերևի թախծոտ շուրթերին: Ո՞վ գիտե, հիմա որտե՞ղ հանգրվան կգտնի, ի՞նչ է սպասում նրան, կյանքի ի՞նչ ալիքների կգարկվի...

Գարուն է աշխարհում, պայծառ ու գունագեղ, բայց ես հիշեցի աշնան փոքրիկ տերևին, քանի որ հանկարծ ինքս ինձ զգացի հարազատ ծառից բաժանված մի փոքրիկ տերև: Սավառնում եմ ասես նրա պես՝ էությանս մեջ կրելով մանկությանս բոլոր պայծառ պահերը և վերջին պահն այս բաժանման, երբ, որպես վերջին համբույր, դողանջեցին իմ հոգում հրաժեշտի զանգերը:

Անցած տարիները թվում են այժմ մի հին պատմություն, որը թերթում են ես գգուշորեն ու սրտի դողով՝ ամեն էջում դրոշմելով կարոտ, թախիծ, երախտիք, և կանգ են առնում մի պահ վերջին էջի վրա: Ահա այստեղից է սկսվում կապույտ-կանաչ երազներով, այրվող մայրամուտներով ու բացվող արշալույսներով առաջին մեծ ճանապարհը: «Մնաս բարով, իմ մանկության ոսկե տարիներ», - շշմջում են ու փակում մանկությանս վերջին էջը, ապա դուրս են գալիս ու ձուլվում մեծ, խայտաբղետ աշխարհի անհանգիստ աղմուկին՝ ինձ հետ որպես թախաման տանելով վերջին գանգի հրաժեշտի դողանջները:

Ե. Միրզոյան

Տեքստ, տեքստի կառուցվածքը

Տեքստը, որպես լեզվական միավոր, ունի կառուցվածքային մի շարք հատկանիշներ: Նրանում արտահայտված մտքերը կապակցվում են իրար, տարբեր մասերի հերթականությունն ու իմաստային կապերը ծառայում են ընդհանուր իմաստի ճիշտ արտահայտմանը: Տեքստերը կամ նրանց հատվածները ունենում են վերնագիր, կարող են ունենալ նաև բնաբան:

Պարբերություն

Տեքստի կառուցվածքային միավորը պարբերությունն է. նախադասությունները միավորվելով կազմում են պարբերություններ, պարբերություններից էլ կազմվում է տեքստը: Պարբերությունը՝ որպես միավոր, ունի իր առանձնահատկությունները: Գրավոր խոսքում պարբերությունն առանձնացվում է նոր տողակազմի խորքից գրվելով: Պարբերություններում կարող են արտահայտված լինել նկարագրություններ, թվարկումներ, որոնց միջև կան միաժամանակության կամ հաջորդականության հարաբերություններ: Պարբերություններն առանձնացվում են տարբեր սկզբունքներով: Մի դեպքում հեղինակը կարող է պարբերությունն առանձնացնել՝ որևէ միտք, դեպք, նկարագրություն ընդգծելու համար: Մեկ այլ դեպքում պարբերությունը կարող է առանձնացվել այն պատճառով, որ սկսվում է նոր միտք կամ նկարագրություն, որը չի առնչվում նախորդ պարբերության նյութին: Նոր պարբերության հիմք է դառնում նաև մեջբերվող խոսքը, քանի որ գծիկով գրվող ամեն մի մեջբերվող խոսք առանձնացվում է:

**Բնաբանի դերը գեղարվեստական
ստեղծագործություններում**

Բնաբանը (էպիգրաֆ), որպես գրականագիտական հասկացություն, հուշում է երկի բուն գաղափարը:

Գեղարվեստական ստեղծագործություններում վերնագիրն ունի խորհրդանշող դեր, սակայն հեղինակները երբեմն ցանկանում են ուրվագծել իրենց ստեղծագործության ընդհանուր գաղափարը, ընթերցողին հոգեբանորեն նախապատրաստել տվյալ երկն ընթերցելուն, ուստի վերնագրից հետո դնում են որևէ տեղից քաղված խոսքեր՝ բնաբան: Բնաբան կարող են դառնալ ուրիշ հեղինակների կամ տվյալ հեղինակի ուրիշ ստեղծագործության տողերը, առածներ ու ասացվածքներ, թևավոր խոսքեր ու ժողովրդական իմաստություններ և այլն: Օրինակ՝ Հովհ. Շիրազը «Բիբլիական» պոեմի համար բնաբան է ընտրել հետևյալ տողերը՝

Ցավը տվեց սարերին, Մարերը չտարան...

Ցավը տվեց մարդուն, Մարդը տարավ:

**Առաջաբանի դերը գեղարվեստական
ստեղծագործություններում**

Առաջաբանը նախնական տեղեկություններ է հաղորդում հետագա ասելիքի մասին, ներկայացնում հեղինակ/ներ/ի ընդհանուր մտեցումները, ընթերցողին նախապատրաստում տվյալ տեքստի ընթերցանությանը: Գիտական տեքստերի առաջաբաններում սովորաբար խոսվում է այն սկզբունքների և մեթոդների մասին, որով գրված է աշխատանքը: Կարող է նշվել նաև աշխատանքի կառուցվածքը, այսինքն՝ ինչ մասերից է բաղկացած, ինչ հարցեր են քննվում յուրաքանչյուր մասում: Գիտական տեքստերը մեծ մասամբ ունենում են առաջաբան, իսկ գեղարվեստական տեքստերը կարող են առաջաբան չունենալ: Առաջաբանի փոխարեն կարող են լինել տարբեր սկզբնամասեր, որոնք անվանվում են «Առաջաբանի փոխարեն», «Երկու խոսք», «Հեղինակի կողմից» և այլն: Առաջաբանի փոխարեն տեքստը կարող է սկսվել նաև ներածությունով, որը սովորաբար ավելի երկար է լինում: Չափածո տեքստերում, մասնավորապես պոեմներում, ներածական մասը կոչվում է «Նախերգանք» կամ «Նախերգ», իսկ ավարտական մասը՝ «Վերջերգ»:

Լեզենդ

Լեզենդն ավանդազրույց է, որի հիմքում ընկած է հրաշքը: Հրաշապատումն ընդգրկում է դեպքերն ու հերոսներին: Լեզենդը և առասպելը տարբեր են իրարից: Առասպելի հիմքում ընկած է պատմական որևէ փաստ, ինչը հենց սկզբից ստանում է չափազանցված գերբնական տեսք. ժամանակի ընթացքում այդ իրական հիմքը աստիճանաբար մթազնում է: Լեզենդը սովորաբար ունենում է կրոնական ծագում. այն հյուսվում էր քրիստոնեական եկեղեցու նշանավոր գործիչների սուրբ արարքների՝ տանջանքների ու մահվան շուրջ: Այդպիսի լեզենդներ կան Գրիգոր Լուսավորչի, Գրիգոր Նարեկացու և եկեղեցու շատ սրբերի մասին: Գրավոր և բանավոր ավանդազրույցների ձևով փոխանցվող լեզենդներն ու առասպելները գրողները ենթարկում են գեղարվեստական մշակման /Հովհաննես Հովհաննիսյան, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Հովհաննես Շիրազ և ուրիշներ/:

Բալլադ

Բալլադը քնարավիպերգական բանաստեղծություն է, որի մեջ ավանդական, պատմական կամ այլ թեմայով ստեղծված սյուժեն ծավալվում է հեղինակի հույզերի և խոհերի բացահայտմանը զուգընթաց:

Բալլադը որևէ ժողովրդական ավանդության գեղարվեստական մշակումն է, ունի անսովոր, հերոսական կամ ֆանտաստիկ թեմա, դեպքերի սեղմ ընթացք, քնարական ուժեղ գունավորում, ոչ մեծ ծավալ: Բալլադի հիմքում դրված է որևէ լարված, սուր դրամատիկ, սրընթաց ու արագ զարգացող սյուժե: Բնորոշ է որոշ տողերի ու տների կրկնությունը, երբեմն մեծ տեղ են գրավում երկխոսությունները, որոնց միջոցով էլ հաճախ առաջ է շարժվում գործողությունը: Դեպքերի նկարագրությունը միշտ ենթարկվում է հեղինակի քնարական մտահղացմանը, հուզական ուժեղ տպավորության հասնելու նպատակին: Պատմվում են միայն գործողության հիմնական օղակները՝ առանց կապակցող բացատրությունների:

Ամենից կարևորը պետք է համարել բալլադի բովանդակության անսովոր, հաճախ հերոսական կամ ողբերգական բնույթը:

Հայ գրականության մեջ բալլադի լավագույն օրինակներ են Հ. Թումանյանի «Փարվանան», «Ախթամարը», «Աղավնու վանքը», Ավետիք Իսահակյանի «Հավերժական սերը», «Ժողովրդի քնարը», «Ասպետի սերը», Հովհ. Հովհաննիսյանի «Արտավազդը» և այլն:

Քառյակ

Քառյակը չորս տողից կազմված բանաստեղծություն է: Այն հատկապես մեծ զարգացում է ապրել միջնադարյան պարսկական պոեզիայում: Համաշխարհային հռչակ են վայելում Օմար Խայամի քառյակները, որոնք թարգմանվել են մասնաճյուղային: Թումանյանը ևս մեծ վարպետությամբ հայերեն է թարգմանել պարսիկ բանաստեղծ Խայամի քառյակներից: Միջնադարում են ստեղծվել մասնաճյուղային քառյակները, որոնք կոչվել են հայերեն: Դրանք վերագրվում են Ֆրիկին, Հովհաննես Երզնկացուն, Նահապետ Քուչակին: Հայրենները հայտնի են մասնաճյուղային ժողովրդական ստեղծագործություն. կոչվում են մասնաճյուղային: Հայ գրողներից քառյակներ գրել են Խաչատուր Աբովյանը, Հովհաննես Թումանյանը, Վահան Տերյանը, Գերենիկ Դեմիրճյանը, Եղիշե Չարենցը, Հովհաննես Շիրազը և ուրիշներ: Քառյակը թեև բաղկացած է չորս տողից, բայց ունի իմաստային, փիլիսոփայական, զգացմունքային շատ մեծ խտացում և ընթերցողի վրա արագ ու կտրուկ ներգործելու շատ հզոր ուժ:

ԻՄ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՆԻՔ, ԳՈՒ ՍՐՏԻՍ ՍԵՉ ԵՍ

Հայոց պատմություն

Ես ընկել եմ պագշոտ Շամիրամի նետից,
Հին Հռոմն է զարկել ինձ մահացու խոցով,
Իմ արյունն են ոթել, խառնել Տղմուտ գետին,
Իմ լեզուն են այրել ատրուշանի բոցով:

Խաչ են դաջել կրծքիս բյուզանդական տեգով,
Արաք նժույզների սմբակի տակ գցել.
Ինձ խարույկ են համել մոնղոլների ձեռքով,
Սիրտս օսմանական սվիններին ցցել:

Ինձ հայրենի մեր տան թխկենուց են կախել,
Եվ հոգիս են բանտել շղթաներով երկաթ.
Ինձ զարկել են, խարկել ու կենդանի թաղել...
Բայց ես դեռ կա՛մ:

Հրաշյա Հովհաննիսյան

Հայրենիքի սերը մեր սրտերում է, մեր երակներում, մեր արյան մեջ:
Այն մեզ սերմանել են դարեր շարունակ:

Հայրենիքը միայն հողն ու ջուրը չէ, որ արժանի է և ենթակա պաշտպանության նրա զավակների կողմից: Հայրենիքը նաև մի մեծ տուն է, ընտանիք, որի հետ մարդը պետք է աշխատի և որին պետք է ծաղկեցնի, դեկավարի ու դարձնի բարեկեցիկ և արժանավայել ապրելու տեղ: Հայրենիքը պիտի լինի այն վայրը, որտեղ ապրելը յուրաքանչյուր անձի համար պատիվ լինի:

Սա է իմ հողը, իմ արմատները... Սրա վրա կգոհվեմ արդեն. այդ բանը մենք բավականին ուշ ենք հասկանում: Երբևէ մտածե՞լ ենք այն կապի մասին, որ գոյություն ունի մարդու և հողի միջև: Գոյություն ունի հողի զգացողություն, հողը կանչում է. դա հայրենիքի հասկացողությունն է:

Հողին վրա ուրիշին

Հողին վրա ուրիշին,
Տունը, որ դուրս շինեցիր,
Քար է միայն, հող ու կիր:
Հողին վրա ուրիշին,
Ծառը, որ դուրս տնկեցիր,
Չի տար կյանքի հովանին:
Հողին վրա ուրիշին,

Լույսը, որ դուրս վառեցիր,
Յնորք է լուկ ոսկեծիր:
Հողին վրա ուրիշին,
Սերը, որ դուրս գրկեցիր,
Չի տաքցներ քու հոգին:
Եվ հողին մեջ ուրիշին,
Քու ոսկորներդ անտեր,
Յուրտեն հավետ կմրսին...

Մուշեղ Իշխան

Հայրենիքը բարձր ու սուրբ է,
Ասում ենք մենք, կեցցե կանչում,
Բայց չենք հիշում` նաև նուրբ է,
Ոտքի` տակ է նա կանաչում:

Պիտի այնժամ հպարտանանք
Հայրենիքի սուրբ անունով,
Երբ լավ գիտենք, որ մեզ համար
Հայրենիքը չի ամաչում:

Հրաչյա Հովհաննիսյան

Հայրենիք բառը կազմված է հայր բառից. չէ՞որ հայրենիքն էլ հոր
պես հարազատ է յուրաքանչյուրիս համար: Միաժամանակ` մայրիկի
պես բարի ու հոգատար է իր զավակների հանդեպ. դրա համար էլ
ասում ենք` Մայր հայրենիք:

Հայրենիքը երգ է, որը ոչ թե շուրթերն են երգում, այլ հոգին: Դա փոք-
րիկ աղմկոտ գետ է, գետափի տնակ, բարդիներ, օրորոցի ճռռոց, գա-
ռան մայուն, սրնգի բեկբեկուն նվագ, մեծ մոր քաղցրեղենով լի գրպան,
երեքնուկի թերթին սարսռող կաթիլ, որի մեջ բեկվում է ողջ երկինքը,
արևը և կյանքը:

Ի՞նչ կախարդական բան է այս հայրենիք ասվածը, այս Հայաստա-
նը: Երբ նա մեր կողքին է, մենք չենք զգում, թե որքան գրավիչ է այն, և
թե որքան շատ բանով ենք մենք պարտական նրան: Մենք կորցնում
ենք նրա հետ վարվելու կերպը, նրան բոլորանվեր սիրելու եղանակը:
Իսկ երբ նա կաշկանդված է կամ ստրկության մեջ է, սկսում ենք մորմո-
քել նրա կարոտից: Երբ նա ազատ է, անփույթ ենք դառնում նրա հան-
դեպ, երբ նա գերված է, սկսում ենք ախ ու վախ անել ու տանջվել նրա
համար` ուրիշներին էլ տանջելով մեզ հետ, և ճիգ ու ջանք թափել, որ
ազատենք մեր ձեռքից անզուգույթյամբ փախցրած դրախտահավը:

Սուրբ է հայրենիքը: Նա մեր հացն է, մայրական գիրկը, մեր մանկու-
թյունն է նա, մեր պապերի գերեզմանն է և մեր մանուկների զվարթ

օրորոցը: Նա մեր տարեգիրքն է և մեր հին ու նոր քնարը: Նա հայրական տան ծուխն է, որ մեր հրճվանքն ու վիշտը տանում է աստղերին: Նվիրական է նա, որովհետև մեզ գրկող բազուկներն ու սիրող արտերը հող են դարձել այնտեղ: Հայրենիքը լեզուն է. նա է միացնում անցյալը, ներկան ու ապագան, մեռածն ու ապրողը, նա է հավերժացնում ազգը, շտեմարանում ազգի հոգևոր գանձերը:

Ավ. Իսահակյան

Այս մի բուռ հողը ու մի բուռ քարը քո հայրենիքն են, քո պապերի ու քո տունը, որին կապված ես հազարավոր անտեսանելի, բայց ամուր կապերով: Հանգամանքների բերումով եթե անգամ հայտնվես այս մոլորակի որևէ անկյունում, արյան կանչով կրկին տուն ես դառնալու, որովհետև արմատներդ շատ խորն են խրված այս ժայռեղեն հողի մեջ: Ու որքան էլ շքեղ լինի նոր տունդ, ու բարեկեցիկ՝ կյանքդ, միևնույն է կարոտելու ես քո՝ թեկուզ անշուք, բայց այնքան հարազատ տունը, որովհետև այնտեղ ես արել քո առաջին քայլերը, այնտեղ ես թոթովել քո առաջին բառերը, այնտեղ ես անցկացրել քո ոսկի մանկությունը:

Ուր որ հայրենի երգեր կլսվին՝ հոն հայրենիքը ողջ է:

Մեր ազգային զենքը պաշտպանական է և ոչ թշնամական:

Ղ. Ալիշան

Ապրել ու մեռնել հայրենիքի համար. ահա խնդիրը, որ իբրև նպատակ՝ ես ընտրել եմ ինձ համար իմ մանկության օրերից:

Գալիք Անհաղթ

Հպարտ եմ ես

Հպարտ եմ ես նրա համար,
Որ փառահեղ պատմությունդ,
Եվ անունդ այնքան հին է:
Հպարտ եմ ես նրա համար,
Որ փլվել է թեպետ տունդ,
Բայց չի խախտվել նրա հիմը:
Հպարտ եմ ես, որ քեզ համար
Որդիներդ դարեր ընկան,
Որ սուրբ պահեն քո անունը:
Հպարտ եմ ես, որ քեզ համար
Թանկ է եղել թանաքն այնքան,
Որքան կարմիր քո արյունը:

Հպարտ եմ ես քո մատների
Ճարտարությամբ անհատների,
Քեզ թարգմանող քո գրքերով:
Հպարտ եմ ես անվամբ քո սուրբ,
Լեզվով, որով երբ չես խոսում՝
Նույնն ես ասում քո երգերով:
Հպարտ եմ ես քո անցյալի
Մաքառումով ու պայքարով,
Տոկունությամբ, կամքով համառ:
Հպարտ եմ ես քո պանծալի,
Քո լուսավոր այս ներկայով,
Որ... գալիք է այլոց համար:

Պարույր Սևակ

1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը՝ **Երևան մայրաքաղաքով:**

Եղեռն ապրած հայ ժողովուրդը, թշնամու մահաբեր սպառնալիքի պայմաններում, ուժ գտավ իր մեջ և վերականգնեց հայոց անկախ պետականությունը: Հայաստանի անկախության համար հայ ժողովուրդը պարտական էր ազատագրական իր տևական պայքարին: Ի նշանավորումն այդ իրադարձության՝ Մայիսի 28-ը համարվում է համայն հայության նվիրական տոներից մեկը՝ Առաջին հանրապետության անկախության օրը:

Հայաստանի անկախության հռչակումը շրջադարձային եղավ հայ ժողովրդի քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքում: Սակայն Հայաստանի առաջին հանրապետությունը կարճ կյանք ունեցավ: 1920 թվականի նոյեմբերի 29 -ին Կարմիր բանակը մտավ Հայաստան, իսկ մի երկու օր հետո՝ դեկտեմբերի 2-ին հայ-ռուսական համաձայնագրով Հայաստանը հայտարարվեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Մինչև 1922 թվականի մարտ ամիսը Հայաստանի երկրորդ հանրապետությունն ինքնիշխան պետություն էր: Վարում էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն: Դիվանագիտական և առևտրային կապեր էր հաստատել առաջին հերթին Ռուսաստանի և իր 4 հարևանների՝ Իրանի, Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի հետ:

Հայաստանի երրորդ Հանրապետությունը հիմնվել է 1991 թվականին՝ Խորհրդային Միության փլուզումից հետո:

Այսօր Հայաստանը ՄԱԿ-ի, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության, ԱՊՀ-ի, Եվրախորհրդի, ԱՀԿ և ավելի քան 40 այլ միջազգային կազմակերպությունների անդամ է: 2015 թվականի հունվարի 2-ին Հայաստանն անդամակցել է Եվրասիական տնտեսական միությանը: Հայաստանը աջակցում է Արցախի Հանրապետությանը, որն անկախացել է 1991 թվականին:

Մեր պետականության խորհրդանիշները

Աշխարհի բոլոր պետություններն ունեն իրենց խորհրդանիշները: Բոլոր երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներն են՝ զինանշանը, դրոշը և օրհներգը: **Զինանշանը** առանձնահատուկ պատկեր-նշան է, որ կարող են ունենալ տոհմերը, իշխանությունները, քաղաքները, պետությունները: Այն փոխանցվում է սերնդեսերունդ: Շատ պետությունների զինանշաններ ստեղծվել են վաղուց և ունեն հին պատմություն: Հայաստանի Հանրապետության

զինանշանը նույնպես ստեղծվել է շատ տարիներ առաջ՝ 1918 թվականին. հեղինակներն են՝ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը: Այնտեղ պատկերված են արծիվ և առյուծ, որոնք բռնած պահում են վահանը: Վահանի վրա պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի չորս թագավորությունների /Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների և Ռուբինյանների/ զինանշանները: Վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն: Հայաստանի Հանրապետության զինանշանի հիմնական գույնն է ոսկեգույնը, պատմական Հայաստանի թագավորություններինը՝ կարմիր և կապույտ, իսկ վահանի վրա պատկերված Արարատ լեռը՝ նարնջագույն: Նշված գույները խորհրդանշում են Հայաստանի Հանրապետության դրոշի գույները:

Պրոշը: Հայաստանի Հանրապետության պետական դրոշն ունի երեք գույն՝ կարմիր, կապույտ, նարնջագույն (վերևից ներքև)՝ հորիզոնական հավասարաչափ շերտերով, լայնքի և երկայնքի 1:2 հարաբերակցությամբ: Այն չափերով և գույներով Հայաստանի Առաջին Հանրապետության (1918-1920 թ.թ.) դրոշի կրկնությունն է: Կարմիր գույնը խորհրդանշում է Հայկական բարձրավանդակը, հայ ժողովրդի մշտական պայքարը հարատևման, քրիստոնեական հավատքի, Հայաստանի անկախության և ազատության համար: Կապույտ գույնը խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո: Նարնջագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի արարչական տաղանդը և աշխատասիրությունը: Մեր դրոշի գույները խորհրդանշում են հայ ժողովրդի անցած ուղին, նրա ներկան և ապագան: Մեր դրոշի ջերմ ու պայծառ գույներով է ներկվում մեր պետությունն ամեն տոնի և հատկապես հունիսի 15-ին, երբ նշվում է Հայկական դրոշի օրը: Մենք էլ ճանաչենք, սիրենք և հարգենք մեր երկրի պետական խորհրդանիշը, և թող այն միշտ բարձր ծածանվի կապույտ երկնքում ու ազդարարի Հայաստանի հաղթանակների մասին:

Հայոց դրոշ

Արյունից ծորած երազ մի կարմիր,
Երկնքից պոկված կտոր մի կապույտ.
Հասուն հասկերի շող նարնջագույն
Եվ վեց դարերի խավարի վրա՝ դրոշ եռագույն:

Անդրանիկ Ծառուկյան

Եռագույն դրոշ

Դու հավերժ ծփա, Եռագույն դրոշ,
Քո Կարմիր գույնը մեր արյունն է տաք,
Որով մեր բախտի ծանր ու անորոշ
Քառուղիներում մեր աստղը գտանք:
Քո կապույտ գույնը՝ Նաիրյան մեր հին
Երկնքի գույնն է՝ աստղերով լեցուն,
Որից մշտավա՛ռ մեր երազանքներն
Ու կարոտներն են անվերջ առկայծում:
Նաև քո վրա, սրբազան հացի
Նարնջի գույնն է շողշողում փառքով,
Որ ձեռք ենք բերել Նոյից էլ առաջ
Չորեղ տքնությամբ ու արդար ջանքով:
Եռագույն դրոշ՝ վսե՛մ, հաղթական,
Բոցկլտա այնպես, որ շուրջդ մի օր,
Ոնց Հայկի օրոք՝ հավաքվեն համայն
Աշխարհում ցրված հայերը բոլոր:
Ոնց փողփողացիր Սարդարապատում,
Փողփողա նաև սեզ Արարատին.
Եվ անու՛ն-անուն՝ մեր ողջ տասներեք
Մայր քաղաքների հպարտ ճակատին:
Քո վրա երեք գույներ կան և այդ
Տաք գույներից են՝ բեկո՛ր առ բեկոր
Մարմին առնելու Հայոց Մեծ Երազն
Ու Հայոց կորած գույները բոլոր:

Օրհներգը: Հունարեն այս բառը նշանակում է **հիմն**: Բառը հունա-
րենից անցել է աշխարհի շատ լեզուների: Հայերս այն կոչում ենք օրհ-
ներգ: Դա հանդիսավոր երաժշտական ստեղծագործություն է, որը հն-
չում է կարևոր իրադարձությունների ժամանակ: Հայաստանի Հանրա-
պետության օրհներգի հեղինակն է բանաստեղծ Միքայել Նալբանդյա-
նը, երգահանը՝ Բարսեղ Կանաչյանը: Հանդիսավոր միջոցառումների
ժամանակ, երբ հնչում է երկրի օրհներգը, բոլորը պետք է ոտքի կանգ-
նեն, տղամարդիկ պետք է հանեն գլխարկները, իսկ զինվորականները՝
պատվի առնեն:

ՀՀ օրհներգը

Մեր Հայրենիք՝ ազատ անկախ,
Որ ապրել է դարեդար,
Իր որդիքը արդ կանչում է
Ազատ, անկախ Հայաստան:

Ահա, եղբայր, քեզ մի դրոշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղա,
Արտասուքով լվացի:

Նայիր նրան՝ երեք գույնով,
Նվիրական մեկ նշան,
Թող փողփողի թշնամու դեմ,
Թող միշտ պանծա Հայաստան:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

Խաղաղ օրերին՝ օտար ափերին,
Վտանգի ժամին՝ գալիս-մեկտեղվում,
Սեղմվում են իրար, մի բռունցք դառնում,
Հայոց անկոտրում ոգին է հառնում:
Եվ ազատության սերունդը ջահել,
Որի թիկունքին մանուկ և ահել,
Ելավ ու ծնկի բերեց թշնամուն,
Բայց զոհեր տվինք՝ տղերք քաջանուն:
Հաղթության շառաչ, կորստյան հառաչ...
Մեր ազատ, անկախ կյանքի գինն է դա,
Մեռնել-հառնելը, վրեժն իր առնելը,
Հայի ճակատի հավերժ գիրն է դա:

Ռ. Գրիգորյան

Մեր հայրենիքը Հայաստանն է, իսկ մենք հայեր ենք, հայ ժողովրդի զավակներ: Հին, շատ հին ժողովուրդ է հայ ժողովուրդը: Ծնված օրից սիրել է ազատությունը և իր կյանքը գոհեցնել՝ ջանացել է պաշտպանել այն: Հիշենք Հայկ Նահապետի կռիվը բռնակալ Բելի դեմ, հիշենք Ավարայրի ճակատամարտը, մեր ժողովրդական հերոսներ Սանասարին, Առյուծաձև Սիերին, Մասունցի Դավթին, Ֆիդայիներին և ուրիշ շատ ու շատ հայ քաջորդիների:

Մեզ բաժանել են, որ տիրեն: Մենք գոյատևել ենք մեկս մյուսով: Առանց Մայր հայրենիքի սփյուռքը դատապարտված է ուժացման: Առանց Սփյուռքի՝ հայրենիքը տկար է ու միայնակ: Այսօր մենք ունենք միասին լինելու գիտակցությունը: Իսկ երբ միասին ենք, մենք ուժեղ ենք:

Ո՞վ է հայը: Բարձր, վեհ, ազնիվ, խելացի... Ով հոգում ունի դաջած «Վասն Հիսուսի, վասն հայրենյաց»... Ով ամենամեծ առաքինությունը հայրենասիրությունն է համարում... Ով կարող է ապրել երկրագնդի ցանկացած հողատարածքի վրա՝ դրսևորելով գոյատևելու, հարմարվելու, ստեղծելու, բարգավաճելու աներևակայելի շնորհք ու կամք... Ով աշխարհի «քաղաքացի» է, մարդ՝ ըստ ամենայնի, բայց նաև՝ ինքնատիպ, եզակի, օրինակելի հոգեկերտվածքով, պարզապես՝ հայ...

Հ Ա Յ Ը

Արդյոք մի բան հասկանում եք հայից... Որքան տարօրինակ, հանելուկային արարած: Թվով գրեթե ամենափոքրն է, տառապանքով՝ ամենամեծը, ժամանակով ամենահինն է, վիճակով՝ ամենից անփոփոխը: Ամենից աննպաստը իր երկրի դիրքն է, ինքն ամենից համառ կառչեց նրան: Որքան անհույս է թվում իր ապագան, բայց և որքան հուսացող է նա: Ասենք՝ իր կյանքում երկու բան բնավ չտեսավ. մեկ՝ բախտ, մեկ էլ՝ հուսահատություն: Ինչպե՞ս ճանաչես նրան, ինչպե՞ս չափես: Իր չափը չափազանցն է. զարմանալի հավասարակշռություն, որ ծայրահեղության մեջ է: Հանրօգուտ գործի և ոչ մի գրոշ: Բայց մի օր էլ տեսար՝ մեռավ ու ողջ կարողությունը կտակեց հասարակությանը: Ահա նայիր այս բեռնակրին. որքան ուժ, որքան աշխատասիրություն: Ապա, տարտունդ ծառա: Մարդը իր հացի և գործի տերն է ուզում լինել և ոչ թե սրանրա ծառան: Եվ արդեն Հայ՝ նշանակում է տեր... Բայց տեսե՞լ եք նրան, երբ գաղթական է. ի՞նչ ծուլ մուրացկան: Ամենաձեռնտու գործը տուր, չի ուզի: Ազգը տա՝ ինքը ուտի: Եվ սովից կմեռնի, անխոս, կասես՝ ջգրու: Եվ սա այն գյուղացին է, որ երեկ կատաղած, գազազած՝ հողը քանդում էր, չարչարում, մզում, հոգին հանում: Այնպես է հավաքում բեր-

քը, կարծես հավիտյան պիտի ապրի, կարծես ոչ ոքի բաժին չպիտի թողնե: Բայց գնա իր խրճիթը. հազար գող, մարդ, շուն ու գել նրա հացի վրա են: Ուտում են նրա հացը, ինչպես հայր Աբրահամի սեղանից:

Տեսե՞լ եք նրա բնակարանը. խլուրդի ծակուռ... բայց անցիր նրա երկիրը: Ի՞նչ հիասքանչ վանքեր, հոյակապ աշտարակներ, գողտրիկ խաչքարեր: Հավատալ կարելի՞ է, թե ինքն է շինել այդ բոլորը: Խոսակցությունն էս լսում՝ հայհոյանքի կեսը եկեղեցի ու Աստված է: Լցրել է իր երկիրը եկեղեցիներով, տարին մի անգամ չի մտնում մեջը՝ աղոթելու: Աղոթք էլ չի անում առօրյա կյանքում. իր կրոնը երբեք չի քարոզել ուրիշներին: Եվ հավատալի բան է, որ իր պատմությունը ամենամեծ կրոնական պատերազմների պատմությունն է, և այս չաղոթող ցեղի Նարեկացու շուրթերից թռավ աղոթքի ամենաբարձր թռիչքը առ Աստված...

Տանել չի կարողանում ծես, ձև, աստիճան, քաղաքավարություն: Դիվանագիտության մեջ մի բանումն է շատ հոգածու՝ անկեղծ լինել: Այնքան անկեղծ է և միամիտ, որ անկասկածելի խորամանկի և կեղծավորի տպավորություն է անում: Մինչդեռ իր հարևանները, այս աշխարհի բեմի վրա դեր կատարելով միայն, ցույց են տալիս, թե կացնով հարվածում են դիմացիին, հայր իսկապես կացինը իջեցնում է գլխին: «Ապա ճշմարտությունը», - մտահոգվում է նա:

Դանդալոք է և խոնարհ՝ իր Սասունցի Դավթի նման և անասելի ըմբոստ, հարվածող է նրա պես: /Քծնում է, ստրկանում օտարի ոտի տակ, ինչպես իր Չենով Օհանը/, բայց երբ վրա է հասնում գերագույն վտանգը, հերոսանում է հանկարծ և ծարավում վիշապի նման: Բարի է առհասարակ, շոյիր, և կկողոպտվի, բայց և, առհասարակ, ինքն է բարեկամ քեզ, իսկ քո բարեկամությունը վանում է: Այնտեղ, ուր մի ուրիշ ցեղ ուրիշների միայն սերը կարող է վաստակել, հայր գտնում է հնարը՝ ստելություն առաջ բերելու: Տաղանդ է՝ իր դեմ ստելություն ստեղծելու: Ուրիշի հաջողության մեջ նախանձոտ է, ինչպես վարդապետ: Եթե գժտվեց մեկի հետ, ռիսակալ է, ինչպես ուղտ: Ամեն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է մինչև մահ: Ուր հեղափոխություն, այնտեղ հայություն: Ասենք՝ ամեն հայ մի փոքր շիրակեցի է Դոն-Քիշոտի պես: Կոտորածներից ամենազարհուրելին ինքը տեսավ, և ինքն էր, որ չխրատվեց: Թաթա՞րն էր իր մոտը, սպասեց ռուսին, ռու՞սը եկավ՝ աչքը եվրոպացուն էր: Եկավ անգլիացին՝ դարձյալ ռուսին էր սպասում: Ինչու՞ է այսպես, ինչի՞ց է դժգոհ, ի՞նչ է կամենում... Ինչու է այսպես անհավասար, ներհակ, մաղձոտ (անհավատալի՝ իր ստորության մեջ), անչափելի՝ իր վեհ թռիչքներում:

Հայի ամենամեծ առաքինությունն էս ուզում. ամենաներողամիտ ցեղը աշխարհիս մեջ: Ի՞նչ եղավ իր պատմությունը. զարհուրելի ջարդեր, խոշտանգում, բնաջնջում... Ինձ թվում է, թե շատ մեծ վիրավորանք կա հայի սրտի խորքում, շատ խորը թաղված... Այդպես է հայը: Չի ուզում, որ իրեն դիպչեն, մոտենան, հրեն թեկուզ: Նա մեկուսի է, խստակյաց, բարի և ազատասեր:

Երբ նայում եմ հային, ինձ թվում է, թե նրա վիրավորանքը այն արծվի վիրավորանքն է, որին ցած են բերել բարձր լեռներից: Թայրտում է, ընկնում քարի, աղբի մեջ, կեղտոտվում, թևերը կոտրում: Գերի արծվի խոր վիշտն է իր սրտի մեջ: Սա Հայկն է, որին զրկել են իր կյանքի միակ պայմանից՝ ազատությունից:

«Ոչինչ չեմ ուզում ձեզանից,- ասում է նա իր նեղիչներին, - ձեզ լինի ձեր լուծը, ձեզ լինի ձեր երջանկությունը, գնացե՛ք, ապրեցե՛ք խաղաղ և երջանիկ: Եթե դուք սիրում եք կյանքը, ապա ես սիրում եմ կյանքից ավելի թանկ բանը՝ Ազատությունը...»:

Գերենիկ Գեմիրճյան

...Հայ ժողովուրդը մի զարմանալի ժողովուրդ է: Նրան սպանելը, եթե չասեմ անհնարին, կարող եմ ասել, որ շատ դժվարին է: Նա այն բազմախցան առասպելական վիշապն է, որ կոչվում է Հիդրա, որի յուրաքանչյուր ջախջախված և կտրված գլխի տեղ աճում է նորը և ավելի զորավորը: Դարերի ընթացքում համաշխարհային դարբնոցի սալի վրա հայը այն աստիճան ծեծվեցավ, տաշվեցավ և կոփվեցավ, որ ստացավ երկաթի ամրություն: Նրան ջախջախելը շատ հեշտ չէ, նա չափազանց տոկուն է...

Բաֆֆի

Ինչո՞ւ է այս երկիրը կոչվում Հայք

Մենք կայինք դրանից առաջ և դարեր առաջ. առնվազն Նոյան տապանի էջքից ի վեր... Համաշխարհային խառնամբոխից մենք զատվեցինք Քրիստոսի ծննդից առաջ՝ 2492 թվականին: Պատճառը Բաբելոնի աշտարակաշինությունն էր, առիթը՝ Բելի գոռոզությունը: Մեր անվանադիր նախնին՝ Ադեղնավոր Հայկը, չհանդուրժեց այլասեր ոգին. ազատասեր Հայկը Ք. ա. 2492 թվականի Նավասարդի/օգոստոսի/ 11-ին նետահարեց Բելին և առհավետ պատգամեց իր հետնորդներին՝ կյանքից առավել սիրել ազատությունը, երկրի փոշին ստորադասել երկնքի վեհությանը, պաշտել լույսը, միտքը, գաղափարը, ունենալ Հայրենիք...

Ըստ պատմահոր կարծիքի՝ Հայկը եղավ մեր անվանադիր նախնին, և մեզ նրա անունով կոչեցին հայ, մեր երկիրը՝ Հայք:

Ըստ Աստվածաշնչի՝ Հայկը Նոյի որդի Հաբեթի թոռան թոռն է՝ Թորգոմի որդին: Այդ պատճառով պատմիչները Հայաստանը երբեմն կոչում են Թորգոմա /Թորգոմի/ տուն:

Հույների պատմահայրը՝ Հերոդոտոսը, Հայաստանն անվանել է Արմենիա: Արմեններ կոչվում են ըստ հին հունական գրքերի:

Հայաստան ասում, լեռներ են հիշում,
Գագաթներ՝ կորած ձյուներում հավերժ,
Չորեր՝ ընկղմված ամպի մշուշում,
Ժայռից ժայռ թռչող գետեր գահավեժ:

Միլվա Կապուրիկյան

Այստեղ հայեր են ապրում. սա մեր նախնյաց տունն է: Մեզ ջնջողը նկրտում է ջնջել նաև երկրի անունը: Եվ որպեսզի դա նրանց չհաջողվի, մեր լեռնաշխարհին քարե հայկական հանդերձ ենք հագցրել: Մենք այնքան ենք կառուցել, որ Հայոց աշխարհի ամբողջ տարածքը ստացել է հայկական ճարտարապետությամբ քաղաքակրթված տեսք: Հայ ժողովրդի ամենալավ հատկանիշներից մեկը աշխատասիրությունն է: Հայը սիրել է ստեղծել, կառուցել, քանդակել, նկարել, երգել, ստեղծագործել... Այդ հայը առաջին հայրենական պատերազմն է մղել Ավարայրի դաշտում՝ հանուն խղճի ազատության, որովհետև աշխարհակալ առաջին կայսրությունները հիմնելով հանդերձ՝ առաջին ժողովրդավարն է եղել ու առաջինն է ընդունել քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն: Սակայն թշնամիները դարեր շարունակ հարձակվել են մեր հայրենիքի վրա, կործանել մեր վանքերն ու եկեղեցիները, ամրոցներն ու բերդերը, այրել են գրքերն ու մագաղաթները: Թուրք ջարդարարները փորձեցին աշխարհի երեսից հավիտյան ջնջել հայի անունը: Կոտորեցին մեր ժողովրդի կեսից ավելին, գրավեցին մեր հողերը: Եվ Արևմտյան Հայաստանի հայերը սփռվեցին, ցրվեցին աշխարհով մեկ, և գոյացան Սփյուռքն ու սփյուռքահայությունը:

Ով իսկ է հայ Միփանը՝ անխուղա է, անաստված,
Հայ լեռներից գրկված հայը ձուկ է՝ ծովից դուրս նետված:
Ի՛նչ ժողովուրդ, չի կտրվի քո սիրտը քո Միփանից,
Քո հողն ինձնով քեզ կկանչե քո Գողթանից, քո Վանից:

← ***Շիրազ***

...Քաղցր է քան նռան գինին,
Ա՛խ, իմ հայրենիքի ջուրը...
Ադամա խնամ ջրից է,
Ա՛խ, իմ հայրենիքի ջուրը,
Արդյոք պիտի՞ խմեմ մի օր
Ես իմ հայրենիքիս ջուրը...

Ջիվանի

...Քո ցավը, հայրենի՛ք, կրակե շապիկ է,
Հագնում եմ, վառում է, հանում եմ, մեռնում եմ,
Հայրենի՛ք, ինչ անեմ, քեզնից հեռու եմ,
Քո սերն էլ, հայրենի՛ք, կրակե շապիկ է,
Հայրենի՛ք, չե՞ս լսում, վառվում եմ, մեռնում եմ...

Վ. Պեդրոսյան «Կրակե շապիկ»

Ես Սփյուռքն եմ՝ խոցված մտքերուս մեջ անգամ,
Ես Սփյուռքն եմ՝ գիրք մը՝ իր ավարտին հասնող,
Ե՞րբ պիտի գրվի վերջին էջն այդ տխուր,
Հրաժեշտի զանգը ո՞վ պիտի տա արդյոք,
Եվ ո՞վ պիտի ըլլա վերջին ճամփորդն հայոց...

Գառնիկ Աղաբաբյան

Սփյուռքում հայությունը կորցնում է իր լեզուն, ուրեմն և գրականությունը: Հայ մարդիկ սկսում են գրել և կարդալ իրենց ապրած երկրների լեզուներով: Նորից հիշենք Շ. Շահնուրի ճիշդ.

-Կնահանջե, կնահանջե, կնահանջե լեզուն...

Այս ճիշից արդեն անցել է մեկ դար, բայց հայությունը դեռ կա ու գոյատևում է: Տա Աստված, այդ գոյատևումը հարատև լինի...

Շարադրություններ՝ նվիրված հայրենիքին

Ես մի զարկն եմ քո բազկի

Կապույտ երկնքից կախված վեհապանձ լեռներ:

Նրանցով շրջապատված մի փոքրիկ հողակտոր, ու այդ գողտրիկ հողում ծվարած մի ժողովուրդ՝ խրոխտ արծվի պես այդ լեռներին կառչած:

Մա է իմ հայրենիքը: Այստեղ եմ ծնվել ես: Այս լեռներից հոսող սառնորակ ջրից եմ իմ ծարավը հագեցնում: Այս լեռներից եմ ես ուժ ստանում: Այս բարեբեր հողի քաղցրահամ պտուղն է ինձ սնում: Ասե՛ք, ուրիշ ո՞ր աշխարհում ես ազատ կլինեմ ինքս ինձ հետ: Ո՞ր հողի վրա կանգնելիս կարող եմ ըմբոստանալ թշնամու դեմ, ինչպես Արշակը՝ Շապուհի: Հիշեցի Համո Սահյանի խոսքերը.

Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ գնամ...

Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ:

Այո, իմ Հայրենիքը ե՛ս եմ: Իմ երազանքները, իմ ուրախությունները, իմ տխրությունները, իմ անցյալը, իմ ներկան, իմ ընտանիքը, իմ առաջին թոթովանքը, իմ ընկերները՝ բոլորն այստեղ են՝ այս հողի վրա: Ես իմ նախնայան երկրի սրտից եմ պոկված: Անգամ ուրիշ աշխարհներում էլ լինեմ՝ իմ սիրտը ա՛յս լեռներում է, ա՛յս երկնքի տակ: Այնտեղ՝ հեռուներում, իմ սիրտը հազիվ կթաքտա, ինչպես վանդակն ընկած փոքրիկ թռչնակը:

Պայծառ է իմ հայրենի երկինքը, ջերմ է նրա արևը, ու այդ ջերմությունից սիրտս բոցավառվում է սիրով, գորովանքով՝ հանդեպ իմ հայրենիքը: Դարերի խորքից եկած, իմաստնացած այս ժողովուրդը երբեք չի հոգնի. արարում է, սիրում և, ամենակարևորը, հավատում: Ես էլ եմ հավատում: Հավատում եմ, որ, մաքառելով ու պայքարելով, իմ հայրենիքը պիտի էլի դարեր ապրի, էլի պիտի թշնամիներին դուրս վռնդենք, քանզի ե՛ս եմ զարկը քո բազկի, հայրենի՛ք: Ինձ նման քանի՞ զարկեր հավաքվելով՝ բռնցք են դառնալու քո թշնամու դեմ:

Ես մի ծիլն եմ քո այն արտի, որի հազարավոր ծիլերը պիտի հասկ տան, հասակ առնեն ու դառնան քո ապագան:

Ես և իմ հայրենիքը

Երբ նայում եմ քարտեզին, սիրտս թրթռում է: Մեծ ու հզոր պետությունների կողքին մի փոքրիկ երկիր եմ տեսնում՝ իմ հայրենիքը: Որքան փոքր, այնքան սիրելի ինձ համար:

Ավանդությունն ասում է, որ մի ժամանակ կորուսյալ դրախտն է եղել այստեղ, ուր ապրել է մի խաղաղ ու աշխարհաշեն ժողովուրդ, ապրել է արարելով, մաքառելով և ոչ մի անգամ ոտնձգություն թույլ չի տվել իր հարևանների հանդեպ:

Այս լեռնային երկրում ապրող իմ ժողովուրդն էլ իր լեռների պես հպարտ է, անկոտրում: Նա հողից հաց է քամում իր հորովելաշունչ երգերով, զավակներ մեծացնում աստվածաշնչյան պատգամներով և հույսն իբրև դրոշ առած իր ուսերին՝ շարունակում է ապրել ու տոկալ՝ ամբարելով իր մեջ լավատեսությունն ու հավատը, բարությունն ու ստեղծագործ ոգին: Իմ ոգեշնչման աղբյուրը ժողովրդիս հերոսական պատմությունն է և նրա հերոսների սխրանքները:

Ուզում եմ, որ իրականանա իմ փոքրիկ երկրի մեծ երազանքը, այն է՝ հայրենիք վերադարձած աշխարհասփյուռ հայերը շենացնեն ու հզորացնեն իրենց պապերից ժառանգած հողը հայրենի:

Եվ ո՞վ գիտե, գուցե մի օր էլ մեր որդիները նայեն աշխարհի նոր քարտեզին ու տեսնեն մի մեծ ու հզոր երկիր՝ իր նախկին սահմաններով, իր կորուսյալ դրախտով, ու նորանոր երգեր նվիրեն աշխարհի հնագույն երկրներից մեկին՝ Հայոց աշխարհին:

Արտույտը, վախենալով, որ երկինքը փուլ կգա, պառկեց մեջքի վրա, ոտքերը վեր տնկեց և աշխատեց դեմ տալ երկնքին: Տեսնողները ծիծաղեցին նրա վրա և ասին.

-Այ խելքի ծով ճնճղուկ, դու ո՞նց կարող ես քո ծղոտե ծնկներով պահել երկինքը:

Եվ թռչունը պատասխանեց.

-Ես իմ բաժին երկինքն եմ պահում:

Գրիգոր Մազիսյրոս Պահլավունի

Հայրենասիրությունը գլխարկ չէ, որ ամեն սեզոնի փոխես:

Հայրենիքը սկսվում է այնտեղ, որտեղ դու վազվզել ես անվարտիք...

Էթյուպերի

Քիբլիական Արարատը

Եգիպտացիք գովերգում են Նեղոսը, ճապոնացիք՝ Ֆուձիյաման, ռուսները՝ Վոլգան, հայերը՝ Արարատը: Արարատը կամ Մասիսը՝ Աստվածաշնչով պատգամված բնապատկերը, մտել է ազգային ինքնագիտակցության մեջ, ինչպես Գանգեսը, ինչպես Վոլգան, ինչպես Կիլիմանջարոյի ձյունները, ինչպես Ակրոպոլիսի հնաբույր սյունները: Արարատը 1,5 հարյուրամյակ առաջ նվաճած հայտնի կովկասագետ Հերման Աբիխը Երևանից Վիեննա՝ իր մորը գրում է. «Բոլոր հրաբխային լեռները, որոնք ինձ վիճակվել է տեսնել ցայսօր, խամրում են նրա փայլի առջև: Նույնիսկ Էտնան չի կարող քայլ գցել նրա հետ, Վեգուվը աննշան մի բլրակ է թվում... Էլ ուրիշ որտե՞ղ կարող ես տեսնել երկու գագաթների նման դաշնություն... Որտե՞ղ, եթե ոչ Արարատի վրա կա այդպիսի սրբազան հող, որտեղից մարդկության հիշողությունն է ծավալվում դեպի չորս ծագերը: Ոչ մի տեղ արար աշխարհում»: Արարատի բարձրությունը 5165 մետր է, հավերժությունն է իշխում այնտեղ: Արարատ-Մասիսից հարավ-արևելք վեր է բարձրանում Փոքր Մասիսը կամ Փոքր Արարատը՝ 3925 մ բարձրությամբ: Երկու Մասիսների միջև եղած հեռավորությունը 13 կմ է: Երկու գագաթների միջև եղած գոգավորությունը կոչվում է Թամբ:

Արարատը հայերի համար պաշտամունքի և առասպելաբանության առարկա է: Ըստ Աստվածաշնչի՝ Արարատը եղել է համաշխարհային ջրհեղեղից փրկված Նոյ Նահապետի նավակայանը. այդ պատճառով այն կոչվում է նաև Նոյյան տապանի լեռ: Մասիսը կամ Արարատը հայ ժողովրդի համար սուրբ, նվիրական լեռ է. այն դարեր շարունակ վկա է եղել մեր ժողովրդի բոլոր տառապանքներից, և «վշտից», որպես կնճիռներ, նրա վրա խոր ձորեր ու վիհեր են գոյացել: 1840 թվականին Արարատ լեռը հրաբուխ ժայթքեց և կործանեց իր լանջին եղած Ակոռի գյուղն ու սուրբ Հակոբի վանքը:

Այսօր Արարատը գտնվում է Հայաստանի սահմանի վրա՝ Թուրքիայի տարածքում, սակայն այն մեզանից յուրաքանչյուրի էության մեջ է: Հայ ժողովուրդը չի կորցրել հույսն ու հավատը՝ այն կրկին ունենալու: Արարատը աշխարհի ամենագեղեցիկ լեռն է: Այն նկարել են հայ նկարիչներ Հովհաննես Այվազովսկին, Գևորգ Բաշինջադյանը, Մարտիրոս Սարյանը, Գրիգոր Խանջյանը և շատ ուրիշներ: Արարատով ներշնչվել և նրան բանաստեղծություններ են նվիրել հայ և օտարազգի շատ գրողներ:

Երկնքից առկախ մի լեռնակղզի՝ Հայաստան աշխարհ:
Երկնքից առկախ այդ լեռնակղզու ուղիղ կենտրոնում՝
Երկու զանգ հսկա ու անձեռագործ: Անունն՝ Արարատ:

Պարույր Սևակ

Արարատի ծեր կատարին դար է եկել
Վայրկյանի պես ու անցել:
Հերթը մի պահ քոնն է հիմա,
Դու էլ նայիր սեզ ճակատին ու անցիր:

Ավերիք Իսահակյան

Ախ, այս Մասիսը...
Որից փափկում են սրտերը բոլոր,
Երբ ինքը... քար է,
Որ ջերմացնում է սրտերը մոլոր,
Երբ ինքը... սառն է...

Գևորգ Էմին

Այնպես խաղաղ ես աշխարհին նայում
Եվ այնպես մե՛րն ես, մոտի՛կ, մտերի՛մ,
Ասես չեն բերել քեզ դավ ու արյուն,
Քեզ չեն բաժանել քո որդիներից:
Աշխարհի մեջ ամեն հայի ամեն ծայրից երևում,
Բայց մնում ես հեռու՛, հեռու՛, մնում երա՛զ, Արարա՛տ:

Սիրվա Կապուրիկյան

Արագած

Արագած անվան ծագումը կապում են Հայկի որդի Արամանյակի կամ էլ Արա աստծո անունների հետ (Արագած՝ Արայի գահ):

Ավանդությունը պատմում է, թե հայոց լեռները մի ժամանակ հաղթանդամ ու հսկա եղբայրներ են եղել: Ամեն օր, առավոտ վաղ արթնանալով, նրանք սովորություն են ունեցել նախ կապել իրենց գոտիները և հետո միայն ողջունել իրար: Ժամանակ է անցնում: Եղբայրները ծերանում են, սկսում են ավելի ուշ վեր կենալ: Մի օր էլ արթնանալով՝ նրանք հակառակ իրենց սովորության՝ մոռանում են նախ գոտիները կապել և բարևում են իրար: Աստված տեսնելով այդ՝ բարկանում է, պատժում եղբայրներին: Նրանք քարանում են ու դառնում լեռներ, գոտիները՝ կանաչ դաշտեր, իսկ քարացած եղբայրների արցունքները՝ անմահական աղբյուրներ: Այդ հսկաներից մեծությամբ չորրորդը Արագածն է՝ Մեծ Մասիսից, Մեմբլանից և Սիփանից հետո:

Արագածի մեղմաթեք լանջերը շատ ջրառատ են, բերրի, ծածկված ալպյան մարգագետիններով, արոտավայրերով: Այս տեսակետից Արագածը Մասիսի հակոտնյան է: Իզուր չի ժողովորդը պատմում հետևյալ ավանդությունը:

Ժամանակով Մասիսն ու Արագածը շատ սիրով քույրեր են լինում: Մի օր, ինչպես է պատահում, նրանք կռվում են: Մեկն ասում է՝ «Ես եմ լավը, ավելի բարձրը», մյուսը թե՛ «Ես քեզանից և՛ ավելի բարձր եմ, և՛ ավելի գեղեցիկ»: Վրա է հասնում Մարութա լեռը և փորձում է հաշտեցնել քույրերին: Տեսնելով, որ անկարող է խաղաղություն վերահաստատել, թողնում, հեռանում է և անիծում նրանց: Չարագուշակ էր նրա անեծքը. «Թող Մասիսն ու Արագածն այնպես բաժանվեն միմյանցից, որ էլ երբեք չհանդիպեն»: Իր հերթին Մասիսն Արագածին անիծում է, որ երբեք վիշտը դուրս չգա նրա սրտից, և արցունքը չպակասի աչքերից: Արագածն էլ Մասիսին է անիծում, որ վշտից չորանա, աշխարհի երեսին մարդ չբարձրանա նրա կատարը, վրան մատաղ չմորթվի: Այդպես էլ լինում է: Արագածի գագաթին արցունքից լիճ է գոյանում, փեշերից հազարավոր աղբյուրներ են բխում: Իսկ Մասիսը ցամաքում է, չորանում, ոչ ոք չի բարձրանում նրա գագաթը, ոչ էլ մատաղ է մորթվում այնտեղ: Ժողովորդը մի հիասքանչ ավանդագրույց ունի Արագածի մասին. մթնշաղին, երբ վերջալույսի ցուլերն սկսում են մարել, լեռան վրա, նրա չորս գագաթների միջև, կանթեղանման մի երկար ցուլ է կախվում՝ հայոց հույսի, հայ մարդու երազանքների խորհրդանիշը, ինչի մասին շատ պատկերավոր գրել է **Հովհաննես Թումանյանն** իր «**Լուսավորչի կանթեղը**» բանաստեղծության մեջ: Իսկ **Ավետիք Իսահակյանը** «**Արագածին**» բանաստեղծությամբ ահա այսպես է ներկայացնում լեռը.

Դու, Արագա՛ծ, ալմաստ վահան	Մեզ ժայռերդ՝ արծվի բույն,
Կայծակեղեն թրերի,	Լճակներդ՝ լույս փերուզ,
Գագաթներդ՝ բյուրեղ վրան՝	Առուներդ՝ մեջքիդ փայլուն՝
Թափառական ամպերի,	Պերճ գոտիներ ոսկեհյուս:

Ապարան: Ավանդությունը պատմում է, որ Արագածի չորս գագաթներին առանց պարանի /անպարան/ կախված էր Գրիգոր Լուսավորչի արտասուքով լի կանթեղը: Այդ կանթեղը մշտավառ է, երբեք չի հանգչում: Սակայն այն տեսանելի է ազնիվ ու արդար մարդկանց: Անպարան կանթեղի անունով էլ այդ բնակավայրը կոչվել է Անպարան, որ աստիճանաբար դարձել է Ապարան:

Արզնի: Ասում են, որ ներկայիս Արզնիի տարածքում շատ դարեր առաջ ճակատամարտ է տեղի ունեցել Հայոց թագավոր Արա Գեղեցիկի և Ասորեստանի թագավոր Շամիրամի միջև: Այդ ճակատամարտում Արան զոհվում է: Շամիրամը հրամայում է իր զինվորներին գտնել Արայի դիակը, քանի որ, բացի Շամիրամից, ոչ ոք չէր ճանաչում Արային, զինվորները իրենց գտած դիակները բերում են, որ նա զննի: Ամեն անգամ նրանք ասում են իրենց թագուհուն. «Առ զննի»: Դրանից հետո այդ վայրը սկսեցին կոչել Արզնի:

Սևանա լիճ: Բոլոր հայերի անվանադիր Հայկ Աղեղնավորի ծոռնորդի Գեղամ Նահապետի անունով Սևանա լիճը կոչվել է Գեղամա կամ Գեղարքունյաց ծովակ: Այդ անունը գրեթե չորսուկես հազար տարեկան է: Սևան անվան առաջացման մասին ավանդությունը պատմում է, որ երբ վանեցիները գաղթում են Արևմտյան Հայաստանից և բնակություն հաստատում Սևանի ափերին, որոշում են, թե դա էլ մի Վան է: Սակայն հետո նեղվում են տեղի ցուրտ օդից, կարոտով հիշում իրենց երկրի մեղմ ու տաք բնությունը և սրտի ցավով կանչում. «Սև Վան եկավ մեր գլխին, սև Վան»: Ահա սև Վանն էլ դարձավ Սևան:

Երևան: Բիայնիլի-Վան, Էրեբունի-Երևան...Քանի՞ դար կա այս անցումների միջև... Աշխարհի ցայտօր գոյություն ունեցող քաղաքներից հնագույնը Երևանն է, որ Հռոմից մեծ է 28 տարով... Երևանի հմայքը սոսկ տարիքի մեջ չէ: Այն մեր «դարե կարոտն է», «քարե նազանքը», «մեծ երազանքը»... Մեր ոստանաց ոստանը իր մեծ տեղն ունի յուրաքանչյուր հայի սրտում... Համաշխարհային ջրհեղեղի ժամանակ Նոյը Արարատի գագաթից նայելով շրջակայքին՝ հիացել է լեռներով շրջափակված գոգահովիտով և գոչել՝ «Երևում է»: Ասովաճաշչային լեզենդի համաձայն՝ այստեղից է ծագել ապագա քաղաքի անունը: Հայաստանի 12-րդ մայրաքաղաքը մի երջանկություն է, որ կարող ես շոշափել ձեռքերով: Երևանը մարմնավորված արդարություն է, պատմական արդարություն: Քար և ջուր. ահա այսօրվա Երևանի խորհրդանիշը: Այդ միասնությունը միշտ եղել է հայ ժողովրդի խորհրդանիշը: Ամրության և հավերժության խորհրդանիշը:

Մատենադարան

«Մատենադարան ներս մտնողը ոչ միայն գլխարկը, այլև կոշիկները պետք է հանի»:

Իլյա Էրեմյուզ

«Տասնհինգ դարեր են լուսն այս պատերի մեջ, և ես լսում եմ նրանց լուսությունը»:

Դ. Դեմիրճյան

«Շուկով են խոսում Մատենադարանի սրահներում. հանկարծ չվրդովեն մեծերի անդորրը»:

Պետրոս Էմին

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը հին ձեռագրերի և փաստաթղթերի պահպանման և ուսումնասիրման կենտրոն է, ձեռագրերի պահպանման աշխարհի ամենահարուստ կենտրոններից մեկը: Այստեղ պահպանվում են շուրջ 23000 ձեռագրեր, հմայիլներ, պատառիկներ և 300 000 արխիվային փաստաթուղթ: Այն հայերեն ձեռագիր մատյանների ամենախոշոր պահոցն է, ստեղծվել է 1921 թվականին՝ 5-րդ դարում ստեղծված Էջմիածնի մատենադարանի հիմքի վրա, և եղել է առաջին գիտահետազոտական հաստատությունը Հայաստանում: Մատենադարանը գրանցված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային հիշողության ցանկում: Այն այժմ համարվում է «ազգային հիշողության պահպանման և զարգացման ամենակարևոր վայրերից մեկը»:

Մատենադարան բառը գրաբարում նշանակել է **գրադարան** և համարվել է մի վայր, որին կից գործել է նաև ձեռագրատուն:

Մատենադարանի շինության ճարտարապետն է Մարկ Գրիգորյանը, Մաշտոցի արձանի հեղինակը՝ Դուկաս Չուբարը: Մատենադարանի շքամուտքի վերևի կամարի «Վարդանանք» խճանկարի կերտողն է շնորհաշատ նկարիչ, ճարտարապետ Հովհաննես Խաչատրյանը:

Երևանի Մատենադարանը հին ձեռագրերի հնագույն թանգարաններից է: Ամբողջ աշխարհում հաշվվում են մոտ քսանյոթ հազար հայերեն ձեռագրեր, որոնցից 11000-ը գտնվում է Երևանի Մատենադարանում: Մատենադարանում եղած ամենահին ձեռագիրը 887թ.-ի ավելի հին ձեռագրից մագաղաթի վրա արտագրված Լազարյան ավետարանն է: Այստեղ են պահվում Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Անանիա Շիրակացու, Գրիգոր Նարեկացու և ուրիշների հնագույն ձեռագիր գրքերը: Յուրաքանչյուր գրքերի մեջ ուշադրություն է գրավում փոքրիկ կաշեկազմ մի գիրք, որի վրա պատկերված են մարտի տեսարաններ, հայկական հեծելազորը: Դա 451թ. հայ ժողովրդի՝ պարսիկների դեմ մղած ազատագրական պայքարի պատմությունն է՝ Եղիշեի «Վարդանանց պատմությունը»: 7-րդ դարից մեզ է հասել Անանիա Շի-

րակացու հնագույն թվաբանության գիրքը, որտեղ իբրև թվանշան գործածվել են հայկական տառերը, որովհետև այդ ժամանակ արաբական թվանշաններ դեռ չկային: **Սա թվաբանության առաջին դասագիրքն է աշխարհում:** Համաշխարհային արժեք են ներկայացնում շատ հունական, հռոմեական ու այլազգի հեղինակների գործեր, որոնց բնագրերի մի մասն անհետ կորել է, և պահպանվել են միայն հայերեն թարգմանությունները: Ուշագրավ են այն ձեռագրերը, որոնք ծաղկազարդել են հայ նկարիչներ Սարգիս Պիծակը, Թորոս Ռոսլինը, Մովսիկը և ուրիշներ: Այստեղ է գտնվում ձեռագիր հսկա մի գիրք՝ «Մշո ճառընտիրը», որը բացված վիճակում հագիվ է տեղավորվում սեղանի վրա: Դա աշխարհի ամենամեծ հայերեն ձեռագիրն է, որը գրված է 1205թ.-ին, Մուշում: Կազմված է մագաղաթե 607 մեծադիր թերթերից: Գիրքը մոտ 36 կգ քաշ ունի, զարդարված է մանրանկարներով և զարդանկարներով: Այս ձեռագիրը ունի հուզիչ կենսագրություն: Մատենադարանի ամենափոքրիկ գիրքը, որը բաղկացած է 104 մագաղաթյա թերթիկներից, մի լուցկու տուփից էլ փոքր չափ ունի և կշռում է ընդամենը 19 գրամ: Գրվել է 1443թ.-ին, Թեոդոսիա քաղաքում: Գիրքը ընթերցել կարելի է միայն խոշորացույցով:

Հայկական լեռնաշխարհը բազում մեծ ու փոքր երկրաշարժեր է տեսել: 735 թվականին երկրաշարժից կործանվեց 10 հազար բնակիչ ունեցող Մոզ քաղաքը: Սարսափահար մեր նախնիներն այնքան «Վայ՛ճոր, վայ՛ճոր» ասացին, որ գավառը կոչվեց Վայոց ձոր: 893 թվականի երկրաշարժից կործանվեց մեծահարուստ Գվինը, 1308 թվականի երկրաշարժից՝ Տաթևի վանքը, 1319 թվականի երկրաշարժից՝ շքեղ Անին, 1679 թվականի երկրաշարժից՝ Գառնիի փառավոր տաճարը, 1840թ. հունիսի 20-ի երկրաշարժի հենց առաջին հարվածից Մասիսից պոկված Ժայռի կտորների տակ մնաց Ակոռի գյուղն ու նրա կողքի Սուրբ Հակոբ եկեղեցին՝ ողջ բնակիչներով՝ մոտ 2000 մարդ: Մեծ ջրհեղեղից հետո Նոյ Նահապետը Մասիսի լանջին տնկել էր խաղողի մի ճյուղ, որը հին հայերենում հնչում էր՝ **արկ ոռի**. այդ վայրը և այդտեղ հիմնադրված գյուղը կոչվեց Արկոռի, ապա՝ Ակոռի: Այն կործանվեց երկրաշարժի ժամանակ: Այրարատ նահանգի Մասյացոտն գավառի այս գյուղը Հռոմի երկու չափ տարիք է ունեցել: Գերմանացի ճանապարհորդ ու բնագետ Մորից Վագները այդ երկրաշարժից երեք տարի անց՝ 1843 թ., Խ. Աբովյանի հետ բարձրանում է Ակոռի գյուղի տեղանքը: Նրանց զարմացնում

է մի բան. երկրաշարժն Ակոռիից ոչ մի հետք չի թողել, բայց ահա գյուղի հռչակավոր այգում կանգուն է մնացել... 13 ծիրանենի: «Այսպիսի հրաշք կարող է միայն Հայոց աշխարհում լինել,- զարմացած բացականչել է Մ. Վազները,- ամեն ինչ կործանվել է, համարյա բան չի մնացել, բայց ամենակարող երկրաշարժը չի կարողացել գետնին տապալել հայկական ծիրանենիները: Չէ, Խաչատուր, սա մեծ խորհուրդ ունի: Ծիրանը հայկական երկրի խորհրդանիշն է: Այս կանգուն ծիրանենիները կարծես թե ուզում են ասել, որ ինչ արհավիրք էլ լինի, Հայաստանը հուր- հավիտյան կանգուն կմնա: Խորհուրդ ունի նաև 13 թիվը, որը հավաստում է, թե ոչ մի պատահականություն չի կարող աշխարհի երեսից վերացնել հայ ժողովրդին...»:/Հանրագիտակ օրացույց/

Ով գիտե... Գուցե Նոյ Նահապետի տնկած ծիրանի կորիզներից ծլած ծիրանենիներն էին դրանք, և արևի այդ խորհուրդն է հոգում ունեցել Ակ. Բակունցի հայտնի հերոսը, ով, գաղթի բազում ճամփաներում դեգերելով, կորցրած տուն ու հարազատներ՝ հայրենիք է հասցնում ծոցում պահած ծիրանի կորիզները... Նա դրանք պահ է տալիս հայկական հողում, որ նորից կյանք առնեն, մեծանան ու շարունակվեն հայոց ծիրանենիները՝ փրկված միակ հարազատի՝ թոռնիկի հետ...

Սոսի, Սոսյաց անտառ

Հնում յուրաքանչյուր երկիր ունեցել է իր սրբազան ծառը: Հին հայերը պաշտել են սոսին. այն մեր երկրի հնամենի բնակիչն է: Սոսին միշտ մնում է կանգուն ու կանաչ՝ ասես պահպանելով անցյալի հիշատակները: Լատինացիներն էլ սոսին համարել են պահապան ոգի: Սոսու ճյուղերից հյուսված պսակներ են նվիրել իրար, մտածելով, որ դրանք հրաշագործ ուժ ունեն: Հույները, կելտերը և սլավոնները պաշտել են կաղնին՝ փոթորկի դեմ անասան, գլուխը՝ մռայլ ամպերի մեջ, և իր տեսքով ուժի, արիության, հպարտության տպավորություն է ստեղծում: Հին Հունաստանում կաղնին նվիրվել է արևի, գիտության և արվեստի աստծուն՝ Ապոլոնին:

Սոսին հեթանոսական Հայաստանի խորհրդանիշն էր՝ Մասիսին հավասարագոր: Մովսես Խորենացին գրում է, որ այս անտառին է նվիրվել Արա Գեղեցիկի թոռ Անուշավանը, որի պատճառով էլ ստացել է Սոսանվեր անունը: Պատմիչը հաղորդում է նաև, որ Հայաստանում սովոր էին գուշակություններ անել սոսի ծառերի տերևների սոսափյունով: Սոսյաց անտառը գոյատևել է 2300 տարի՝ մեր թվականությունից առաջ 25-րդ դարից մինչև մեր թվականության 3-րդ դարի վերջը:

Հայոց խորհրդանիշներ են սուսին ու ծիրանին՝ հավերժության, Աստծո հետ հաղորդակցվելու, հայրենի հողի, հայկական բնօրրանի, բերրիության, տոկունության ու համի խորհրդանիշներ:

Հոր նամակը որդուն

-Ինչո՞ւ եմ սիրում իմ հայրենիքը: Ես սիրում եմ իմ հայրենիքը, որովհետև իմ մայրը հայուհի է, որովհետև իմ երակներում հոսող արյունը հայի արյուն է, որովհետև այն հողը, որտեղ թաղված են նրանք, ում սգում է իմ մայրը, և որոնց հիշատակը հարգում է իմ հայրը, հայկական հող է, որովհետև այն քաղաքը, ուր ծնվել եմ ես, լեզուն, որով խոսում եմ, գրքերը, որոնցով սովորում եմ, հայկական են, որովհետև իմ եղբայրն ու քույրը, իմ ընկերները, այն մեծ ժողովուրդը, որի մեջ ապրում եմ ես, հայեր են, որովհետև ինձ շրջապատող սքանչելի բնությունը և այն ամենը, ինչ տեսնում եմ իմ շուրջը, ինչ սիրում եմ ու դիտում, ինչով հիանում եմ, այդ բոլորը հայկական են:

Բայց դու դեռևս չես կարող լիովին զգալ այդ սերը: Դա լիակատար կերպով կզգաս այն ժամանակ, երբ, արդեն հասուն տղամարդ, երկարատև բացակայությունից հետո, վերադառնալով ճանապարհորդությունից, մի գեղեցիկ առավոտ հորիզոնում կտեսնես քո հայրենիքի բարձրաբերձ երկնագույն լեռները: Այդ ժամանակ քնքշանքի մի ջերմ ալիք արցունքով կլցնի քո աչքերը, և հրճվանքի ճիչ կթռչի քո սրտի խորքից: Դու կզգաս այդ սերը որևէ հեռավոր մեծ քաղաքում, օտար ամբոխի մեջ, քեզ անձանոթ մարդու կողքով անցնելիս ականջիդ կհասնի քո մայրենի լեզվով պատահաբար ասված մի բառ: Դու կհասկանաս այդ սիրո ուժը այն ցասունալից ու հպարտ ցավից, որից արյունդ երեսիդ է խփում, երբ լսես, թե ինչպես է օտարերկրացին վիրավորում քո հայրենիքը: Բայց այդ զգացմունքի վսեմությունը մի առանձին ուժով կզգաս այն օրը, երբ թշնամու գրոհով քո հայրենիք կնետվի հրե փոթորիկ, և դու կլսես զենքերի շառաչը, կտեսնես, թե ինչպես են պատանիները լեզիոններ կազմում, ինչպես են հայրերը համբուրում որդիներին՝ ասելով նրանց՝ «Եղե՛ք հերոսներ», և ինչպես մայրերն իրենց զավակներին հրաժեշտ են տալիս՝ գոչելով՝ «Վերադարձե՛ք հաղթանակով»:

Դու այդ սիրո սրբազան հրճվանքը կզգաս, երբ քեզ բախտ կվիճակվի տեսնել, թե ինչպես են հայրենի քաղաք վերադառնում նոսրացած զնդերը՝ հոգնաբեկ, պատառոտված, սարսափելի տեսքով, բայց հաղ-

թանակի վսեմ փայլը աչքերում և գլխից վեր պահած ծվատված դրոշով, իսկ նրանց հետևից՝ վիրակապված գլուխներով ու վզից կախած ձեռքերով՝ քաջերի անվերջանալի շարքը:

Իսկ խանդավառ ամբոխը նրանց ծաղիկներ կնետի, օրհնանքներ կհղի, կգրկի ու կհամբուրի: Այն ժամանակ դու կհասկանաս, թե ինչ է հայրենիքի սերը, կամ թե՛ ինչ ասել է հայրենիք:

Հայրենիքն այնքան մեծ է ու սրբազան, որ եթե ես տեսնեի, թե դու, որ իմ միսն ու արյունն ես ու իմ հոգու կտորը, հայրենիքի համար մղած կռվից վերադառնում ես անվնաս, և իմանալի, որ դու պահպանել ես քո կյանքը, որովհետև կարողացել ես թաքնվել մահից, ապա ես, քո հայրը, որն այդպիսի հրճվանքով է դիմավորում քո ամենօրյա վերադարձը դպրոցից, լաց կլինեի՝ տեսնելով քեզ, և քո նկատմամբ ունեցած իմ ամբողջ սերը կկորչեր, ու մինչ մահ սրտիս մեջ անբուժելի վերք կզգայի:

Մի ոմն իմաստուն զինվոր պատերազմ էր գնում, և նա երկու ոտքով կաղ էր: Եվ զինվորներից մեկը նրան ասաց. «Ո՛վ ողորմելի, ուր ես գնում, քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող»: Եվ նա ասաց. «Ո՛վ անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, կռվելու և հաղթելու»:

Վարդան Այգեկցի

Այն մարդը, ով սիրում է իր ժողովրդին, կռվում է հանուն այն գաղափարի, որից բարձրը և արդարացին չկա աշխարհում, և հավատում է հաղթանակին, նա ամենամեծ կամք ունեցող, ամենաուժեղ և ամենամահադժ մարտիկն է աշխարհում...

«Կա մի ուրիշ մարմին, որ ավելի ու ավելի պաշտելի է, քան մեր սեփականը: Այդ մարմինը հայրենիքն է»:

Մուրացան

«Հայր ոչ մեկ ուրիշ ազգի առջև գլխարկ հանելու պետք չունի»:

Ավետիս Ահարոնյան

«Հայրենասիրություն է նաև հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակն անմար պահելը»:

Հովհաննես Իսակով

Հայ ժողովրդի մեծ բարեկամները և բարերարները

Ալեքսանդր Մանթաշյանը խոշոր վաճառական էր: Նա իրեն գործարանատեր չէր համարում և բոլոր առևտրական գործերը վարում էր անձամբ: Հետևում էր հայ վաճառականության ավանդույթներին և խրատական ճշմարտություններ է թողել «իր սրտին մերձավոր հայ վաճառականների պատվական դասին»: Ահա դրանք. «Հայ վաճառականներ, ձեր փառքի տունը, ուր անմահ կմնաք, ձեր տառապյալ հայրենիքն է: Հայոց կյանքն է այն պանթեոնը, ուր ձեր բարի հիշատակը պիտի պահվի Աստծո և մարդկանց առաջ իր համակ պայծառությամբ: Ուրիշ թանգարաններում ձեզ համար մոռացության փոշի է պահված: Հայ վաճառականներ, դուք ազգի վաստակավոր ձեռքն եք, նրա հաստատություններին սնունդ մատակարարող աշխատավորը, նրա կենդանի գանձն եք ու գանձարանը: Հետևաբար, նրանց հսկելու, կարգադրելու, կարգի բերելու բարոյական իրավատերը: Մի՛ լռեք, մի՛ հեռանաք հայ վաճառականի ավանդական ճանապարհից, մի՛ մերժեք ձեր պարտքերն առ հայրենիք, մի՛ հրաժարվեք ձեր պարտականություններից»:

Նրա իղձն էր՝ Երևանում կառուցել գյուղատնտեսական ուսումնարան և Փարիզի Մեծ թատրոնի նմանությամբ հիասքանչ սրահ: Բայց 1911 թ. վրա հասած մահը խափանեց Մանթաշյանցի ծրագրերը: Ինչպես նշում է Թիֆլիսի մեծահարուստ Արկադի Միլովը. «Անկատար է մնացել Մանթաշյանցի ևս մեկ իղձը՝ մի կտուրի վրա միավորել բոլոր հայերին ու ամենքին դարձնել հարուստ»:

Մանթաշյանցի աճյունը ամփոփեցին Թիֆլիսի հայոց եկեղեցում: 1938 թ. Լավրենտի Բերիայի անմիջական կարգադրությամբ հինավուրց այդ կոթողը հիմնահատակ քանդվեց, և տաճարի հետ հողին հավասարվեցին նաև հայ նշանավոր այրերի, հասարակական անվանի գործիչների գերեզմանները:

Քըրք Քըրքոյան /Գրիգոր Ահարոնի Գրիգորյան/

Ամերիկահայ գործարար, միլիարդատեր, բարերար: Համաձայն ամերիկյան հեղինակավոր «Ֆորբս» ընկերության՝ 2007 թվականին նրա կարողությունը հասնում էր 15 միլիարդ ամերիկյան դոլարի, բացի այդ նա համարվում էր Լաս Վեգասի հայրը: Քըրքոյանը հարյուր միլիոնավոր դոլարներ է հատկացրել Հայաստանին աջակցելու համար: 2004 թվականին հայրենիքին մատուցած բացառիկ ծառայությունների համար շնորհվել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կո-

չում՝ Հայաստանի ազգային հերոս: Սպիտակի երկրաշարժից հետո և շրջափակման տարիներին մեծապես օգնել է Հայաստանին ու Արցախին: Քրոքորյանի հիմնադրած «Լինսի» /իր երկու աղջիկների անուններից /հիմնադրամը 2001թվականից ի վեր 151 միլիոն դոլար է տրամադրել Հայաստանին՝ ճանապարհների վերակառուցման, մշակութային հաստատությունների վերանորոգման, աղետի գոտու բնակարանաշինարարության, իսկ 21 միլիոն դոլար՝ Հայաստանում փոքր և միջին ձեռներեցության զարգացման համար:

Լևոն Գուրգենի Հայրապետյան

Արցախցի բարեգործը ակտիվ մասնակցություն է ունեցել ԼՂՀ հռչակման գործում և համարվում է ամենախոշոր ներդրողը Լեռնային Ղարաբաղի ժամանակակից պատմության մեջ: Նրա ծրագրերն իրագործվել են Ստեփանակերտում, Մարտակերտի շրջանի Վանք գյուղում: Գործարարի միջոցներով 2000-2002 թվականներին վերակառուցվել է հայկական հռչակավոր Գանձասարի վանական համալիրը (13-րդ դար): Զգալի միջոցներ են ներդրվել Վանք գյուղի վանական համալիրի շրջակայքում տեղակայված ենթակառուցվածքների զարգացման գործում: Կառուցվել է փայտամշակման գործարան, չինական խոհանոցով բարձրակարգ հյուրանոց, հանգստյան գոտիներ, դպրոց: Լևոն Հայրապետյանը իր վրա էր վերցրել նաև «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու այն հատվածի շինարարության ծախսերը, որն անցնում է Գանձասարի վանական համալիրի շրջակայքով: 2007 թվականին Լևոն Հայրապետյանը ֆինանսավորեց 2,5 միլիոն մ² տարողությամբ ջրամբարի կառուցումը Մարտակերտի շրջանում գտնվող Խաչեն գետի վրա:

2008թ. հոկտեմբերի 16-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտին մոտ՝ հինավուրց Շուշիում և պատմական Գանձասարում բարերարը կազմակերպել է նորապսակների համատեղ պսակադրություն: Այդ արարողությունը, 700 երիտասարդների մասնակցությամբ, իր տեսակով առաջինն էր ոչ միայն Արցախում, այլև ողջ Հայաստանում: «Մեր նպատակը Ղարաբաղի ժողովրդագրական զարգացման խթանումն է»: Հայրենի Վանք գյուղում հիմնել է հյուրանոցային համալիրներ, բանկեր, հանդիսությունների սրահ, բարեկարգել է Արցախի կենդանաբանական և բուսաբանական այգիները, վերակառուցել է Արցախի բազմաթիվ միջպետական և հանրապետական ավտոճանապարհներ: Հայրապետյանի առաջնային

ծրագրերից էր համարվում նաև Արցախում ռազմական ակադեմիայի հիմնումը, որի նպատակն էր բարձրաստիճան սպայակազմի պատրաստումը: 2012 թվականին Լևոն Հայրապետյանը իրագործեց նախաձեռնությունը և ֆինանսավորեց ռազմական ուսումնարանի կառուցումը:

Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդով

Գրիբոյեդովը առաջին ռուս մեծ գրողն էր, որ պատմական դեպքերի բերումով մոտիկից ծանոթացել է հայ ժողովրդին, ուսումնասիրել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Նրա «Ճանապարհորդական նոթերում» զգալի տեղ են զբաղեցնում Հայաստանը պատկերող հատվածները:

Մեծ է եղել Գրիբոյեդովի դերը հայ և ռուս ժողովուրդների բարեկամության հաստատման գործում: Նրա առաջարկությամբ Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ կետով թույլատրվում էր Շահ Աբասի օրոք բռնի կերպով Պարսկաստան քշված մոտ 50 հազար հայերի գաղթել Արևելյան Հայաստան:

Ի հավերժացումն Գրիբոյեդովի հիշատակի՝ Երևանի Օղակաձև զբոսայգում 1975թ.-ին կանգնեցվել է նրա հուշարձանը:

Ֆրանց Վերֆել

1915 թվականի Եղեռնը հուզում էր աշխարհի բոլոր մտավորականների հոգիները և մղում գրիչ վերցնելու՝ այդ անմարդկային արարքներին արձագանքելու համար: Ավստրիացի մեծ գրող Ֆրանց Վերֆելը, լսելով մուսալեռցիների հերոսական պաշտպանության մասին, որոշում է արձագանքել: «Հայերի մասին գիրք գրելու մտահղացումը իմ մեջ ծնվեց համաշխարհային պատերազմի տարիներին՝ եվրոպական լրագրերը կարդալիս: Գրանց միջոցով ես ծանոթացա հայ ազգի մարտիրոսությանը: Ինձ այնքան էին հուզել հայերի կրած տառապանքները, որ ես երդվեցի մի պատմավեպ գրել նրանց մասին և այն նվիրել մարդկությանը»: Նա ուսումնասիրում է հայոց պատմությունը, կարդում է հայերի ու Հայաստանի մասին և գերմաներեն լեզվով գրում «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը, որը հրատարակվում է Վիեննայում, 1934 թվականին: Հայերեն թարգմանվել է 1935 թվականին, 1957-ին վեպի թեմայով գրվել է համանուն օպերայի երաժշտություն, 1982-ին էկրանավորվել է: Աշխարհն այս վեպի միջոցով ճանաչեց, թե ինչպիսի քաջ ու հպարտ ազգ է հայը:

Հայ ժողովուրդը երախտապարտ է Ֆրանց Վերֆելին և հավերժ պիտի խոնարհվի մեծ գրողի հիշատակի առջև, որն իր գրչով բողոքեց թուրքերի կողմից կատարված ցեղասպանության դեմ և աշխարհին ներկայացրեց ու անմահացրեց փոքրաթիվ, բայց հպարտ ու հերոսական հայ ժողովրդի հերոսական պատմության փառավոր էջերից մեկը: Հավերժ փառք նրա հիշատակին...

Յոհաննես Լեփսիուս

Գերմանացի հասարակական գործիչ, հոգևորական (աստվածաբանության դոկտոր), արևելագետ Յոհաննես Լեփսիուսը, դատապարտելով թուրքական իշխանությունների հայաջինջ գործողությունները, իր երկրի կառավարությունից պահանջել է ազդու միջոցներով դադարեցնել հայերի կոտորածները: Նրա երկերը և դիվանը (պատմական փաստաթղթերի ժողովածու) ապացուցում են, որ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում Առաջին աշխարհամարտի (1914-1918 թ.թ.) ժամանակ կատարվել է Հայոց ցեղասպանություն:

1915 թվականի սեպտեմբերին շվեյցարական թերթում հրատարակել է «Մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը» հոդվածը՝ սկզբնավորելով հայապաշտպան մեծ արշավը:

Առաջին աշխարհամարտից հետո Լեփսիուսը հրատարակել է բազմաթիվ կարևոր փաստաթղթեր Հայաստանի վերաբերյալ, որոնք հաստատում են, որ երիտթուրքերի կազմակերպած հայերի տեղահանությունն ու կոտորածները նպատակ ունեին ոչնչացնելու հայ ժողովրդին, և այդ հանցագործության մեջ մեղքի իր բաժինն ունի նաև Գերմանիան:

Գանիացի հայ մայրիկը

Լսելով Արևմտյան Հայաստանում հայկական ջարդերի ու հայերի կրած տառապանքների մասին՝ դանիացի քսան տարեկան Մարիա Յակոբսոնը որոշում է որպես գթության քույր մեկնել Արևմտյան Հայաստանի Խարբերդ քաղաքը, որպեսզի օգտակար լինի հայ ժողովրդին: Նա և՛ բժիշկ էր, և՛ գթության քույր, և՛ հիվանդապահ: Կարճ ժամանակում սովորում է և հայերենով խոսել: Բեյրութում նա հիմնում է որբանոց, որին տրվում է «Թռչնոց բույն» անունը: Հայ որբուկները իրենց բարերարին կոչում էին Մամա Յակոբսոն, Հայ մայրիկ, Մեծ մայրիկ: Մարիա Յակոբսոնը 58 տարի ծառայել է հայ ժողովրդին. իրեն համարել է հայ ժողովրդի զավակը, վախճանվել է 1960 թվականին, 78 տարե-

կան հասակում: Երախտագետ հայ ժողովուրդը խոր հարգանքով ու սիրով է հիշում մարդասեր ու հայասեր Մարիա Յակոբսոնի պայծառ անունը:

Ֆրիտյոֆ Նանսեն

Նանսենը մեծ գիտնական էր՝ բնագետ, կենդանաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Նա մեծ հումանիստ էր, փոքր ազգերի իրավունքների պաշտպան: Նանսենը վաղ է ծանոթացել հայ ժողովրդին ու նրա պատմությանը և աշխատել է իր նպաստը բերել Հայոց հարցի լուծման որոնումներին: Իր գրավոր և բանավոր ելույթներում նա ձաղկում էր մեծ տերություններին, որոնք խաբել են դաշնակից հայ ժողովրդին և մոռացել են մարդկայնության տարրական պահանջները: Նանսենի մի շարք աշխատություններում ամփոփված է հայ ժողովրդի պատմությունը, հայկական հարցի իրավական ու պատմական արդարացիության վերականգնման հարցը: Նանսենն Ազգերի լիգայում առաջադրել է կոտորածից փրկված և հայրենիքից վտարված հայերին հատուկ անձնագիր տրամադրել: Լիգան ընդունել է նրա առաջարկությունը: Անձնագիրն անվանվել է նրա առաջարկողի անունով՝ Նանսենյան անձնագիր: Երախտագետ հայ ժողովուրդը հիշում ու մեծարում է իր մեծ բարեկամին:

ՀԱՅՐԵՆԻ ԵՉԵՐՔ՝ ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱՂ

Այս հողի ամեն մի թիզը շաղախված է մեր նախնիների ու հերոսների արյամբ ու քրտինքով: Կմեռնենք, բայց մեր պապերի հողը չենք տա թշնամուն...

Ասք Ղարաբաղի մասին

Քեզ որոնեցի մեր սուրբ քերթուքյան մատյանների մեջ,
մեր հայրենախոս տաղարաններում քեզ որոնեցի և
մեր ամրակուռ ու նվիրական ամրոցների մեջ:

Դու մեսրոպյան գիր, դու հայկյան աղեղ, Դավիթ Բեկի սուր,
Սասնա ծո՛ւռ էիր:

Քեզ որոնեցի նահատակների շիրմաքարերին, որդեկորույս մոր
արցունքների մեջ քեզ որոնեցի և խրճիթների սյուները լիզող շեկ բո-
ցերի մեջ:

Դու Կաքավաբերդ, Գայանեի վանք, դու Անահիտի ջարդված
գուռ էիր:

Քեզ որոնեցի մեր հին վանքերի կամարների տակ,
մեր Գանձասարի խորունկ խուցերում քեզ որոնեցի
և Ամարասի արդեն մամռապատ խաչքարերի մեջ:

Դու անխոնջ դպիր, դու հրաշք նաղաշ, մեռոնի բույր ու
խնկի հոտ էիր:

Քեզ մեր հեթանոս աստվածների մեջ ես որոնեցի,
քեզ որոնեցի վաղուց մոռացված մեհյանների մեջ,
բարձր ժայռերի խորհրդավոր ու մութ անձավներում քեզ որոնեցի:

Դու Վահագն էիր մի հրագանգուր, դու գարնան կայծակ ու
որոտ էիր:

Քեզ որոնեցի մեր արցախաբառ հորովելներում, մեր քաջ պապերի
հյուսած ասքերում քեզ որոնեցի

և հեքիաթներում ու լեզենդներում զարմանահրաշ...

Բարձրագագաթ մեր լեռների մեջ քեզ որոնեցի,
քեզ որոնեցի Քիրս ու Մռավի կանաչ լանջերում
և իմ հայրենի սեզ կաղնիների շառաչների մեջ:

Դու ոտխի դեմ միշտ անխոց վահան, անառիկ ամրոց ու մկունդ էիր:
Քեզ որոնեցի պատմությունների քառուղիներում, մեր անցած
ճամփի խաչմերուկներում քեզ որոնեցի և որոնեցի մեր երակներում
հոսող արյան մեջ:

Դու մեր հավատը ու մեր հավատի հավերժ անվախճան
ոսկե հունդն էիր:

Վազգեն Օվյան

Արցախն անվանում են Կովկասյան Շվեյցարիա՝ անկրկնելի ու
զարմանալի բնություն, գառիթափ անտառոտ լեռնաշղթաներ՝ խորը
ձորերով ու լեռնային աղմկոտ գետերի կիրճերով, ալպիական մարգա-
գետիներ, առեղծվածային քարայրեր ու քարանձավներ, գեղատեսիլ
լճեր: Ու լեռնապարեր՝ անկրկնելի, բարձրաբերձ, դյուֆիչ, անվերջ ու
զանազան...

Արցախը հնագույն քաղաքակրթության օջախներից է և հայտնի է
իր հարուստ մշակութային ժառանգությամբ: Այստեղ պահպանվել են
ավելի քան չորս հազար պատմաճարտարապետական հուշարձաններ՝
եկեղեցիներ, վանքեր, ամրություններ, կամուրջներ, խաչքարեր և այլն:

Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտը փոքր, մաքուր և կանաչ
քաղաք է, որի գեղեցկությամբ հիանում է յուրաքանչյուր այցելու: Քա-
ղաքի փողոցներում տեղադրված են բազմաթիվ հուշարձաններ՝ կերտ-
ված քաղաքի վարպետների կողմից:

Արցախը հայտնի է նաև ճարտարապետական հուշարձաններով,
որոնք իրենց մեջ ամփոփում են տարբեր ժամանակաշրջանների գե-
ղարվեստական և պատմական արժեքները:

Ես հայրենիքս գրկած եմ ապրում

Ես հայրենիքս գրկած եմ ապրում
Որ ամենուրեք նրա շունչն զգամ
Իմ դեմքի վրա,
Իմ կրծքի վրա զգամ թրթռուն
Չարկերը սրտի,
Որով հաստատի հավերժությունը
Մեր Գոյատևման...
Ես հայրենիքս գրկած եմ ապրում,
Որ նրա ազնիվ ու տոհմիկ արյան
Կանչը ժառանգեմ՝ ոգու ճիչ որպես:

Որ որպես ազգիս արթուն պահապան
Գ-ուրգուրեն նրան սիրահարի պես...
Ես հայրենիքս գրկած եմ ապրում ...
Մեղսքս

1980 թիվն էր... առաջին անգամ տեսա Արցախը... Ասես Աստծո արարչագործությունը հենց նոր էր ավարտվել, ու դրախտը՝ աննկարագրելի գեղեցկությամբ՝ չքնաղ, օրհնված ու անապական, իր գիրկն էր առել ինձ...

Ես որբ, Ղարաբաղը՝ որբ, գտանք իրար: Ղարաբաղը՝ շքեղ ու մոռացված, լքված ու հպարտ, կորուսյալ եղեմի պես տենչալի:

Մուրբ Ղազանչեցոց եկեղեցի՛ն... դժվար է բառերով պատմել զգացածս. ավերակ, անարգված, լքյալ Հայոց տաճարը: Ծանր լռության մեջ լավում էր միայն թռչունների ծվլոցը՝ աղոթքի պես, օրհնության մման: Արցունքներս հոսում էին: Հանկարծ ինքս էլ չիմացա՝ ինչպես սկսեցի երգել, ու «Մուրբ-սուրբը» պատարագի պես տարածվեց խոնարհված եկեղեցու կամարների տակ: ...Ամարաս տանող աստիճանների գլխին մի ծերունի քամանչայով Սայաթ-Նովա էր նվագում: Նվագում էր վերացած, հուզմունքով: Կրկին երգելու պահանջ զգացի, ցանկացա գորացնել ծերունու քամանչայից պոկվող հնչյունները, զորավիզ լինել: Ծերունին բացեց աչքերը, հետո սկսեց արտասովել... մի ծեր երաժիշտ ու մի հերարձակ, երկարափեշ հայուհի մորմոռում էին կորցրած հայրենիքի ու կիսավեր տան կարոտը: Այն, ինչ տեսա Ամարասում, անհնար էր պատկերացնել: Պատերը դիտավորյալ մրտել էին, ամեն ինչ քարուքանդ արել: Մուրբ Գրիգորիսի գերեզմանի տեղը պղտոր ջրով փոս էր, փորել էին, որ գանձ գտնեն: Ամենուր զգացվում էր օտարի ծանր, բարբարոս շունչը: ...Ծնվեց «Արցախն ինչպես տեսա» շարքը:

Պատերազմի օրերին խիզախության, հայրենասիրության, ոգու և հերոսության այնպիսի պաշար կուտակեցինք, որ դեռ տասնյակ սերունդներ կգրավի, կվարակի մեր հին ու ազնիվ արյունը, կփոխանցվի ժառանգաբար: Մի դրվագ պատմեմ. Մխիթար Թիզյան անունով ազատամարտիկը պատերազմում կորցրել էր երկու ձեռքը, երկու աչքը: Ասում էր՝ Աստված թող ինձ մի հատիկ աչք տա, կրկին ճակատ կգնամ, կկռվեմ: Ասք չէ, ի՞նչ է հապա, դյուցազնավեպ է, լեգենդ է: Մեր ոգու առասպելն այստեղից է գալիս ու երբեք չի ավարտվելու:

Մեղսքս

«Եթե դուք մտածում եք, որ ինչ-որ բան գիտեք հյուրընկալության մասին, ապա դուք պարզապես չեք եղել Արցախում...»:

Բյուզեք Ալեքսանդր Ալիմով

«Ամենից ավելի տպավորված եմ ոչ թե բնական տեսարժան վայրերով, հին պատմությամբ կամ լեռնային վանքերի զարմանալի գեղեցկությամբ, այլ այդ տարածաշրջանի ամենակարևոր արժեքն այնտեղի մարդիկ են: Ես ապշած էի նրանց հյուրընկալությունից, բարեհամբույրությունից ու անկեղծությունից: Արցախի Հանրապետությունը բաց է այն մարդկանց համար, որոնք հարգում են ուրիշներին, հավատում են իրենք իրենց ու հարգալից են վերաբերվում այլ մարդկանց ու պատմությանը»:

Մարգարիտա Տուրչինովա

Արցախյան շարժում: Փետրվարի 20

1988-ի փետրվարին հայ ժողովուրդը ոտքի էր կանգնել. պատմական հայրենիքի մի մասը՝ Արցախը, պետք է կրկին Հայաստանի կազմում լիներ: Այս պահանջով հանրահավաքները Հայաստանի բոլոր բնակավայրերում էին, Ստեփանակերտում և Արցախի այլ շրջաններում: «Արցախյան շարժումն ունի շատ խորը պատմական հիմքեր, և հենց 88-ի փետրվարի 20-ին չի ծնվել. այս շարժումն առնվազն 100 տարվա պատմություն ունի: Այդ ընթացքում պարզապես ամեն ինչ կուտակվում էր, եկել էր գործելու ժամանակը», - ասում է Կոմսանդուր:

Փետրվարի 20-ը հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ անբաժրելից որպես Արցախյան շարժման սկիզբ:

1991 թվականի սեպտեմբերի 2-ին հռչակվել է Արցախի Հանրապետության անկախությունը: Դրանով Արցախի պատմությունը թևակոխել է զարգացման նոր փուլ:

Արցախյան շարժումը շուտով հրապարակներից տեղափոխվեց սահման, կռիվը մոլեգնում էր, պայքարն ամեն օր ավելի էր սրվում: Հայկական բնակավայրերը ձեռքից ձեռք էին անցնում:

Ստեղծված իրավիճակն անսպասելի էր Ադրբեյջանի համար, և 1991 թ. սեպտեմբերի 25-ին Շուշիից առաջին անգամ «Ալազան» տիպի հրթիռներով ռմբակոծվեց Ստեփանակերտը: Սկսվեց Արցախյան գոյամարտը: Պատերազմի հորձանուտում հայերը միացյալ ուժերով ստեղծեցին հայոց ազգային բանակ, որը կազմում էր մոտ 20-25 հազար, Ադրբեյջա-

նի բանակը՝ 75-80 հազար: Մակայն հայերը կարողացան հետ մղել հակառակորդի գրոհը և ազատագրել Արցախը: Ադրբեջանական բանակի նշանառված հարվածներին զոհ են գնում հազարից ավելի հայ խաղաղ բնակիչներ: Հայկական կողմը կորցրեց Արծվաշենը, Մարտակերտի գյուղերից, Շահումյանի շրջանն իր գյուղերով: Հայկական ուժերի վճռական գործողություններին հակառակորդը, չկարողանալով դիմադրել և վախենալով ավելի ծանր կորուստներ կրելու մտքից, զինադադար խնդրեց, որը կնքվեց 1994 թվականի մայիսի 12-ին, և, չնայած խախտումներին, ուժի մեջ է ցայսօր:

Արցախի պետական խորհրդանիշները

ԱՀ պետական դրոշը հաստատվել է ԼՂՀ ԳԽ 1992-ի հունիսի 2-ի որոշմամբ: Եռագույն է՝ կարմիր, կապույտ, մարնջագույն՝ հորիզոնական, հավասար շերտերով, աջ կողմի 2 ծայրերից սկսվող և դրոշի 1/3-րդ հատվածում միմյանց միացող սպիտակ հնգատամ սանդղանման զարդանախշով: Դրոշի լայնության և երկարության հարաբերությունը 1/2 է: Օգտագործվում են տարբեր չափերի դրոշներ՝ պահպանելով այդ հարաբերությունը: Արցախի դրոշը ստեղծված է Հայաստանի դրոշի նմանությամբ, ավելացված է սպիտակ եռանկյունաձև նախշանկար (հայկական գորգի նմանությամբ), որը խորհրդանշում է Արցախի՝ մայր Հայաստանից անարդարացիորեն բաժանումը և անկախության հռչակմամբ վերամիավորումը: Կարմիր գույնը խորհրդանշում է հայ ժողովրդի մշտական պայքարը հարատևման, քրիստոնեական հավատքի, անկախության և ազատության համար:

Կապույտ գույնը խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո:

Նարնջագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի արարչական տաղանդը և աշխատասիրությունը:

ԱՀ պետական զինանշանը /հեղինակ՝ Լավրենտ Ղալայան/ հանրապետության պետական ինքնիշխանության, նրա տարածքում ապրող ժողովուրդների պետական միասնության, կառուցվող ազատ, իրավական պետության խորհրդանիշն է. հաստատվել է ԼՂՀ ԳԽ 1994-ի նոյեմբերի 17-ի որոշմամբ: Ձինանշանի վրա պատկերված է թևատարած արծիվ, գլխավերևում՝ Արտաշիսյանների հարստության թագը, որի շուրջ տարածվում են արևի ճառագայթներ: Կենտրոնում՝ ԼՂՀ



պետական դրոշի և Մեծ Քիրս լեռան համապատկերին, («Մենք ենք, մեր սարերը» («Ղարաբաղցիներ», քանդակագործ՝ Սարգիս Բաղդասարյան) քանդակի պատկերն է: Ներքևում՝ արծվի ճանկերի մեջ, խաղողի վազեր են, թթենու պտուղներ, ցորենի հասկեր: Վերևի կիսաշրջանում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Արցախ» մակագրությունն է:

ԼՂՀ պետական օրհներգը՝ «Ազատ ու անկախ Արցախ» (խոսք՝ Վարդան Հակոբյանի, երաժշտություն՝ Արմեն Նասիբյանի) հաստատվել է ԼՂ Գ.Խ 1994-ի դեկտեմբերի 23-ի որոշմամբ:

Ազատ ու անկախ Արցախ,
Քո տուն-ամրոցը կերտեցինք,
Պատմությունը մեր երկրի
Մեր սուրբ արյամբ մենք սերտեցինք:
Դու բերդ ես անառիկ,
Բարձունք սրբազան, վեհ անուն,
Մասունք աստվածային,
Քեզնով ենք հավերժանում:
Դու մեր լույս հայրենիք,
Երկիր, հայրենյաց դուռ սիրոզ
Այրիք դու միշտ խաղաղ,
Մեր հին ու նոր Ղարաբաղ:
Քաջերն ենք մենք հայկազուն,
Մռավ ենք, Քիրս ենք ու Թարթառ,
Մեր վանքերով լեռնապահ՝
Անհաղթելի մի բուռ աշխարհ:

Հայոց նորագույն պատմության ամենախրաղարձային ու բախտորոշ դրվագը ազգային բանակի ծնունդն էր: Մենք կառուցեցինք մեր հայրենապաշտության տաճարը, արիության դարբնոցը: Մեզ մեր ոգին է պահել, բանակն էլ է ոգով զորանալու:

«Հավերժական կտակ» ստեղծագործության մեջ արցախցի պապը թոռանը կտակում է իր պապից ժառանգած ամենաթանկը՝ Հող հայրենին:

...Կլինես աղքատ, կլինես հարուստ,
Հիշի՛ր, հողն այս մե՛րն է ի վերուստ,
Այս հողի՛ վրա դու ապրի՛ր հպարտ,
Դու միայն այստե՛ղ կլինես անպարտ:

Ռուբեն Գրիգորյան

Հայը միայն իր հողի վրա է հպարտ և անպարտ

Ապրիլյան մարտի ահարկու ճայնից
Միրտս թրթռաց զինվորիս զարկից:
Արմենակ, Քյարամ, Աբաջյան, հայեր,
Ձեր արյան գնով պահիք հողը մեր:

Մարտակերտ, Շուշի ու Ստեփանակերտ,
Պահեք հայ քաջիս կերպարը հավետ:
Թմրացին զենքերն ահարկու կերպով
Քանի որ խփվում էին հայերիս ձեռքով:

Հայոց աշխարհի ամեն բուռ հողում
Քաջ զինվորների արյունն է եռում:
Խրոխտ, հպարտ ու տոկուն երթով
Լցրիք հայ ազգիս անդորրը երգով:

Յնծում է հիմա հայոց հողն անզին,
Ձենքը չդրեց մեր քաջ ֆիդային,
Հայոց պանծալի եռագույնի տակ
Գնացիք, դարձաք հողին նահատակ:

Եվ այդժամ գրվեց կտակ նորօրյա.
«Հայը եղել է, կա ու կմնա.
Անկախ նրանից՝ թուրքն ինչ է ուզում,
Հայ զինվորը միշտ սահմանն է հսկում»:

Հերմինե Գրիգորյան

Չա՛րկ, Արցախ

...Արցախ, մի բուռ Արցախ,
Դու աշխարհի համար մի փշուր հող ես լոկ
Եվ սակայն մեզ համար հսկա զոհասեղան...
Ու թե հնար լիներ կայծակները խաչել,
Ես զոհերիս վրա կվառեի խաչերն այդ հրեղեն
Ու թե հնար լիներ Հարդագողի ճամփան
Ոլորել ու դարձնել հսկա ծաղկեպսակ,
Ես զոհերիս վրա կդնեի պսակն այդ արցունքոտ,
Որ աշխարհին արար տեսանելի լիներ...
Ուրեմն, զա՛րկ, Արցախ, զա՛րկ, իմ զարմանալիդ...
Չկա ուրիշ հնար և ուրիշ ելք չկա,
Այդ լեզուն է միայն, որ հասկանում ճշտիվ
Եվ այդ լեզվից է լոկ,
որ փոխվում է կրկին խուճապահար հոտի...

Վահագն Դավթյան

Ես քո կենդանի սուրն եմ, հայրենի՛ք

/տողեր զինվորների շարադրություններից/

Հերոսներ են բոլոր ազատամարտիկները, սկսած Մամիկոնյաններից մինչև Արցախյան հերոսամարտում ընկած ու այսօր Եռաբլուրում հանգչող հայ կամավորականները, ովքեր խնդումներես ընդունեցին մահը քեզ համար, հայրենի՛ք, քո այս խաղաղ օրվա համար:

Կանգնած հայրենիքի պաշտպանության սահմանագլխին՝ դու քաջ գիտակցում ես, որ աշխարհի պոտոր հեղեղներին կուլ չզնալու համար պետք է աչքի լույսի պես պահպանես այս փոքրիկ, լավաշաչափ հողը, որ Հայաստան ու Արցախ հայրենիք է կոչվում:

...Հոգիդ էրզրում է, հա՛յ զինվոր: Ու մտովի ճշտում ես հայրենիքիդ սահմանները... Կկարողանա՞ս... Այո՛: Հավատա՛ք բազկիդ, հայ նահատակների գերեզմանների վրա սրված սրերի ուժին, հավատա՛ք լսողությանդ, որ տվել ես անցյալիդ, և աչքիդ՝ ապագային հառած:

Ես քեզ հավատում եմ, հա՛յ զինվոր:

Ես այն սո՛ւրն եմ, որից երբեք մայր ու մանուկ չեն ընկել, որը չի խոցել թույլին ու տկարին, որը երբեք չի հարվածել թիկունքից: Ես այն

սուրն եմ, որը երեք զարկից երկուսը բաշխել է, երրորդով մեջտեղից կես արել թշնամուն:

Ես այն սուրն եմ, որը, երբ հանգստացել եմ Հայոց աշխարհի սահմանները, դարձել է գրիչ ու մագաղաթ, մամ ու արոր, երգ ու տաղ, բուրվառ ու հարսնաքող, ցորենի ոսկե արտ ու օրորոց, խաչ՝ մկրտության:

Իմ երակներում ողջ ազգի հպարտությունն է հոսում: Ես պարտավոր եմ ապրել քե՛զ համար, որ դու հարատևես, ես պարտավոր եմ պաշտպանել քե՛զ, որ դու ի՛նձ պաշտպանես:

Ես՝ քո ծաղկած դաշտերի սակրավորը, ես՝ քո խաղաղ երկնքի օդաչուն ու պաշտպանը, ես՝ քո քարքարոտ ճամփեքի հետևակը, ես՝ քո բարձրիկ սարերի հրետանին, ես՝ քո խոր ու մութ ձորերի կապավորը: Ես՝ քո վահանը, քո սահմանների արթուն պաշտպանը, քո հավատը, քո հույսը:

Աշուն էր: Չորակոչ: Տասնութամյա պատանին բանակ էր գնում: Բերկրանքից թաքտում էր մոր սիրտը: Նրա աչքի առաջ հայտնվեցին բոլոր հայ զինվորները՝ Հայկ Նահապետը, Վարդան Մամիկոնյանը, Անդրանիկ Օզանյանը, Հովհաննես Բաղրամյանը, Վազգեն Սարգսյանը... Որքան շա՛տ էին նրանք... Մայրը սթափվեց, հավաքեց իրեն ու հպարտությամբ ասաց.

-Գնա՛, որդի՛ս, պաշտպանի՛ր քո հայրենիքի սահմանները: Գնա՛, որ հայ փոքրիկը հանգիստ քնի: Գնա՛, որ հայ մայրը միայն ուրախությու-
նից լաց լինի: Գնա՛, որ հայոց երկնքում միայն հրավառության ձայնը լսվի: Գնա՛, որ հայոց առավոտները խաղաղ բացվեն:

Աստված քեզ պահապան, հա՛յ զինվոր, թող Աստծո աջը ու մորդ սիրտը միշտ պաշտպանեն քեզ ու քեզ հետ լինեն:

Արցախյան ազատամարտը տվեց ազատաբաղձ քաջորդիների մի ամբողջ համաստեղություն: Նրանք բռուցքվեցին և այդ ամուր բռունցքով զարկեցին արևախում ոտխի գլխին: Անկախ բոլոր քաղաքական համոզմունքներից՝ նրանք միավորվեցին, քանզի գիտակցում էին, որ միայն զենքով կա հայոց փրկություն:

Պետրոս Ղևոնդյան (Պետո), Վարդան Ստեփանյան (Գուշման), Արթուր Ղարիբյան (Թաթուլ), Մինթե Մելքոնյան (Ավո), Կարո Քահքեջյան (Սպիտակ արջ), Աշոտ Դուլյան (Բեկոր), Թաթուլ Կրպեյան, Լեոնիդ Ազգալդյան ... Յավոք, նորից եղավ արհավիրք, և մերօրյա հերոսները համալրեցին հերոս նահատակների շարքերը՝ Ռոբերտ Աբաջյան,

Արմենակ Ուրֆանյան, Զյարամ Մլոյան ... Արցախյան ազատամարտի անվեհեր հսկաներ, հայ դատի ուխտյալ զինվորներ, վրեժի ծարավներ: Նրանք իրենց հայրենանվեր գործով ցմահ կապրեն մեր սրտերում և վառ երագներում: Հենց նրանց միասնական ուժի շնորհիվ էր, որ ճակատագրի հերթական կատաղի փոթորիկներում չկորչեց հայր և, ի հեճուկս դահիճների, շարունակեց գոյատևել:

Գրականություն Արցախյան ազատամարտի մասին

Հայ գրականությունը անմասն չի մնացել արցախյան շարժումին: Այն նոր դրսևորումներ է ունեցել Արցախյան շարժման և պատերազմի, ինչպես նաև՝ զինադադարի հաստատման շրջանում: Արցախյան ազատամարտն արտացոլվել է գրականության մեջ: Դեռ պատերազմի տարիներին գրականության մեջ դարաբաղյան պատերազմի լուսաբանման գեղարվեստական պատկերներում ի հայտ են եկել ստեղծագործական զարգացման նկատելի առանձնահատկություններ, նյութի ընդգրկման որոշակիություն և այլն: Ջինադադարից հետո ստեղծվել են գոյապայքարի տարիները, ազատամարտիկների, բժիշկների, օդաչուների, ուսանողների, կանանց սխրագործությունները, ինքնապաշտպանական և ազատագրական մարտերի առանձին դրվագներ պատկերող վավերագրական, կենսագրական, պատերազմ, իրականությունը բնութագրող գործեր (Հովիկ Վարդումյան, «Գրոհայինների հրամանատարը», 1999, «Աստվածների կանչը», 2004, «Շուշիի ազատագրումը», 2007, «Կանթեղ», 2010, «Բաժանարար գիծ», 2011, Լ. Խեչոյան, «Սև գիրք, ծանր բզեզ», 1999, Արա Նազարեթյան, «Ռազմավար պատմվածքներ», 2001, և այլն): Այս շարքում իրենց տեղն ունեն Մաքսիմ Հովհաննիսյանի, Բակուր Կարապետյանի, Նվարդ Սողոմոնյանի պատմավավերագրական և գեղարվեստական երկերը:

Լևոն Խեչոյան, «Սև գիրք, ծանր բզեզ»

1999 թ. լույս տեսած Լևոն Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ» վեպը հայ գրականության մեջ առաջին և ամենահաջողված արձագանքներից էր Արցախյան հերոսամարտի մասին: Պատերազմի մասին մենք իմանում ենք Օնան զինվորի օրագրային գրառումներից, որոնք չափազանց ժլատ են պատերազմի մասին պատկերացում տալու համար.

«... «Գրադը» ամբողջ գիշեր խփում է շրջկենտրոնին: Վաղը պիտի հարձակվենք: Գյուղում խուլ լռություն է: Սեպտեմբերի երեքին, չորսին,

իննին, տասին, տասնմեկին մեծ մարտեր եղան... Ինչ կավագույն աշ-
ուն է, ինչ փառահեղ ամիս՝ բերքի ժամանակ...»:

Վեպում բոլորովին այլ կերպ է նկարագրվում և բացահայտվում զին-
վորի կերպարը, որն ավանդաբար եղել է հայրենիքի անձնվեր պաշտ-
պան, հայրենիքի համար ինքնակամ կյանքից հրաժարվող հերոս: Խե-
չոյանի զինվորը մեկն է, որ հայտնվել է պատերազմի կիզակետում և
պարտադրված, ակամա շարունակում է ապրել այդ պատերազմի կա-
նոններով՝ առանց կեղծ պաթետիզմի, առանց վերամբարձության:

Խեչոյանի համար սահմանի այս կողմում կռվող զինվորը ոչնչով չի
տարբերվում սահմանի այն կողմում գտնվող զինվորից. նրանք ոչ բարի
են, ոչ չար, դաժան են, երկուսն էլ կյանքի կռիվ են տալիս, երկուսն էլ
սպանում են գերիներին՝ փոխանակելուց առաջ: Հակառակորդի զին-
վորն էլ զինվոր է, նա էլ ապրել է ուզում, նա էլ ունի տուն, գյուղ, որն ու-
նի միայն իրեն հատուկ բուրմունքը, նա էլ փոքր ժամանակ վազել է
գառների հետևից և քերծված ոտքերով տուն վերադարձել, նա էլ ունի
պատմություն և հիշողություն: Խեչոյանը կարողանում է թշնամու մեջ էլ
տեսնել մարդուն:

Հովհաննես Երանյան, «Զինադադար»

Երանյանի վիպակը նկարագրում է հետպատերազմյան շրջանում
Արցախում նոր վերաշենացող մի գյուղակի՝ Կովսականի մասին: Այս
վիպակում ևս բարձրաձայնվում է կեղծ ազատամարտիկների խնդիրը.
մի անգամ պատերազմի դաշտ մտած ինքնակոչ ազատամարտիկները
անխնա թալանում են հայրենիքը՝ պատերազմի անվան տակ:

Իսկական զինվորը պատերազմի դաշտում է մնում, նա կորցնում է
ամեն ինչ՝ ընտանիք, անցյալ, մասնագիտություն, կյանք...

Բոլորովին պատահական չէ, որ վիպակը վերնագրված է ոչ թե «Հրա-
դադար», այլ «Զինադադար», այս խորհրդանշական վերնագիրը ասի-
զանգում է, որ պատերազմը դեռ չի ավարտվել և զգոնության կոչ է անում:

Սուսաննա Հարությունյան, «Քարտեզ առանց ցամաքի և ջրերի»

վիպակում ներկայացվում է պատերազմի ողջ անհեթեթությունը. հերո-
սը անընդհատ հանձնվում է մերթ հայկական, մերթ աղբբեջանական
կողմին՝ փաստաթուղթ չունենալու պատճառով: Երկու կողմերն էլ կար-
ծում են, թե նա հակառակորդ ազգից է: Այստեղ սուր սարկազմ կա նաև
միջազգային մարդասիրական կազմակերպությունների հանդեպ, հե-
րոսը գրանցված է «Կարմիր խաչ»-ում, ուրեմն՝ նրան սպանել չի կարե-

լի, բայց ծեծել՝ որքան ուզես: Ահա այսպես մեկ օրում պատերազմը խեղում է մարդու կյանքն ու ճակատագիրը՝ «դուրս է եկել սեփական ճակատագրից և այլևս չի վերադարձել»:

Հովիկ Վարդումյան, «Կանթեղ»

Վարդումյանի վեպն այս թեմայով ամենաձավալուններից է: Վեպի մեջ միահյուսված են վավերագրությունն ու միստիկան: Այստեղ նկարագրված իրադարձությունները (ցույցեր, միտինգներ, կուսակցական նիստեր, պատերազմ, երկրաշարժ) վավերացվում են «ճշգրիտ» օրով և ժամով. վեպում կարող ենք հանդիպել նաև մեզ շատ հայտնի անուններին՝ Խաչիկ Ստամբուլյան, Արկադի Տեր-Թադևոսյան, Վանո Սիրադեղյան, Լևոն Տեր-Պետրոսյան և այլն: Սակայն այն ունի նաև երկրորդ շերտ՝ միստիկականը, որն արտահայտվում է Ուսուցչի և Մամոնի կերպարներով, Մանուկի ծնունդով: Վեպում ևս շոշափվում է այն ցավոտ խնդիրը, որ իսկական ազատամարտիկները գնահատված չեն:

Արցախյան հերոսամարտի արձագանքները կարելի է տեսնել նաև Արա Նազարեթյանի, Վրեժ Իսրայելյանի, Հրաչ Բեգլարյանի, Նորել Գասպարյանի, Համլետ Մարտիրոսյանի, Արմեն Շեկոյանի, Իգնատ Մամյանի, Լևոն Ջավախյանի, Աշոտ Գաբրիելյանի, Գոռ Հարությունյանի, Էդուարդ Հարենցի, Կարինե Աշոտյանի, Սարգիս Հովսեփյանի, Արտեմ Հարությունյանի, Դավիթ Ասատրյանի և շատ ուրիշների ստեղծագործություններում: Այնպես որ՝ ասել, թե Արցախյան հերոսամարտը մեծ արձագանք չգտավ գրականության մեջ, կնշանակի առնվազն անտեղյակ լինել գրական գործընթացին: Սակայն, ի հակադրություն սպասվածի, այս արձագանքները փառաբանական գրականություն չէին:

Բարձունքը մերն է, տղերքը՝ չկան,
տղերքն ավելի բարձրում մնացին...
Դիպան աստղերին, աստղերը հանգան
ու մրմուռ քավեց մեր ցամաք հացին:
Շահեցի՞ր երկիր, թե՞ կորցրեցիր.
բարձունքը մերն է, տղերքը... չկան:

Ձեր կյանքի հաշվին ո՞նց են ապրելու՝
Մորթապաշտ օրս գինով գրահած,
Ու մթնած հոգուս փշակները խուլ
Ո՞նց բացեմ խինդ ու նվազի առաջ:

Խաչիկ Մանուկյան, «Պոյամարտ»

Հեղինակն ուզում է իր արյունն էլ խառնած լինել մյուսների արյանը և չգիտի՝ ինչպե՞ս ապրել զոհվածների կյանքի հաշվին, այն մարդկանց հաշվին, որոնց ինքն անձնապես ճանաչել է, և որոնք չկան: Սրանք դեռևս Վարդան Մամիկոնյաններ չեն, որ անցյալի հեռվից հիշենք նրանց, այդ հերոսները հեղինակներին ծանոթ, մտերիմ, հարազատ մարդիկ են: Ահա նաև այստեղից է գալիս այս գրականության հաղթանակի, ցնծության և հրճվանքի պակասի պատճառը:

Երկրորդ խմբի բանաստեղծությունների մասին կարելի է ասել, որ դրանք ունեն ընդգծված սոցիալական շեշտ: Ազատամարտիկների չգնահատված լինելու, հետպատերազմյան շրջանում սոցիալական խնդիրների առջև կանգնած լինելու թեման շարունակվում է նաև այս թեմայով գրված բանաստեղծություններում.

Պատերազմի գինն է չեղած ոտքը նրա:
Ստորգետնյա անցուղում նստել,
Հենակները կողքին զենքի նման դրել
Թե ո՞վ կտա մի կում օղու դրամ ...
Իսկ երկիրը նրա կրունկից էր գծվում
Եվ ավարտվում՝ ոտնաթաթի ծայրին:
Բայց կանգնել ու հիմա իր պաշտպանած հողին
Մեկ ոտքի տեղի իրավունքը ունի:

Հուսիկ Արա, «Եվ հենց փողոցում»

Պատմի՛ր, հուշարձան

Քանի՞սը ընկան այս բարձունքներում
և քանի՞-քանի ջահել կտրիճներ մարտից չղարձան:

Պատմի՛ր, հուշարձան:

Քանի՞-քանի օր ու քանի՞ ամիս նետվեցին նրանք ահեղ գրոհի,
և քանի՞ անգամ ընկան ու ելան, սակայն մնացին անընկճելի,
հպարտ, անսասան մնացին դարձյալ:

Պատմի՛ր, հուշարձան:

Ա՛խ , քանի՞ աղջիկ, քանի՞ ջահել հարս, քանի՞-քանի մայր
սպասում էին, որ դառնան նրանք...

Ու հարսանեկան որքա՛ն զգեստներ սնդուկների մեջ փակված մնացին,

ու որքան սերեր մնացին կիսատ, ու որքան հարսներ սգավոր դարձան...

Պատմի՛ր, հուշարձան:

Ձավակներն ինչո՞ւ շարունակում են որոնել նորից իրենց հայրերին, որքա՛ն մանուկներ դեռ հայր չտեսած՝ կյանքում որբացան:

Պատմի՛ր, հուշարձան:

Պատմի՛ր, հուշարձան, պատմի՛ր այն մասին, թե ինչ սարսափներ տեսավ սերունդն իմ և անցավ քանի՛ մազե կամրջով, բայց հպարտ նայեց մահվան աչքերին

ու հավատարիմ մնաց հավիտյան իր հավատամքին...

Պատմի՛ր, հուշարձան:

Պատմի՛ր դարերին այն խիզախների մասին, որ ընկան, սակայն մնացին ապրողաց սրտերում, կյանքի պես անմեռ...

Դարձան ցորենի ծվիացող արտեր, այգիներ դարձան բերքով ծանրացած

և ահեղ բռունցք՝ պատերազմի դեմ:

Պատմի՛ր, հուշարձան:

Արցախցի բանաստեղծների՝ Արցախին նվիրած բանաստեղծությունների փունջ

Վազգեն Օվյաև

Նկարեցի լեռներ
Ու լեռներին՝ կակաչ,
Եվ գագաթներ ձյունե,
Աղբյուրների կարկաչ.
Հայրս նայեց երկար
Ու գլուխը կախեց.
- Թթի ծառը չկա,
Սա ի՞նչ Ղարաբաղ է:

Նկարեցի արտեր
Ու հնձաններ հուռթի,
Հազարագույն վարդեր,

Հրաշք ծառը թթի.
Մայրս նայեց դժկամ
Ու ժպիտը պաղ էր.
- Մռավ սարը չկա,
Սա ի՞նչ Ղարաբաղ է:

Նկարեցի Մռավ՝
Արևն ուսին թիկնած,
Նկարեցի Քիրսը՝
Այգաբացից շիկնած.
Հորեղբայրս եկավ
Նայեց, աչքում ծաղր էր.
- Մեր Թարթառը չկա,
Սա ի՞նչ Ղարաբաղ է:

Նկարեցի Թարթառ
Ու քարակերտ ձորեր,
Շուրջը զմրուխտ անտառ,
Արտույտներ ու լորեր.
Եվ տատա այս անգամ
Հոնքը դարձրեց աղեղ.
- Գանձասարը չկա,
Սա ի՞նչ Ղարաբաղ է:

Փոքր ես դու, սակայն
Մե՛ծ է, մեծ քո ոգին
Որ մաճառդ մնա
Ազնիվ գինու մաճառ,
Արծիվներիդ՝ արծիվ,
Տաճարներիդ՝ տաճար.
Օ՛, տուր ինձ՝ նվաստիս,
Ռաֆայելի վրձին
Ու Սարյանի հանճար:

Ես հասկացա մի բան,
Ղարաբաղ իմ անգին,

* * *

Նկարի՛չ, Արցախ նկարիիր, Արցախ,
Վանքեր նկարիիր ու բերդեր անառ,
Լեռները դարձրու հավերժի արձան,
Գետերը՝ զնգուն տավիղների լար:
Հողմի դեմ կանգնած անտառ նկարիիր,
Ձիեր նկարիիր անթամբ ու անսանձ,
Արծիվներ՝ թառած լեռան կատարին,
Արտույտներ՝ երկնի լագուրով արբած:
Մաշտոցյան անմահ գիրը նկարիիր,
Պատմությունը մեր՝ գրված այդ գրով,
Որ անգոր էին ջնջել սրտերից
Աշխարհակործան յաթաղաններով:
Եվ ծռությունը նկարիիր նաև
Ու մերկությունը ծռված աշխարհի,
Որ ճիշտն ու սխալը իրար է խառնել
Այս պատմությունը երկերեսանի:

Նկարիչ, «ապրեն-չապրեն» նկարիիր՝
Տրորված օտար կրունկների տակ,
Ոգին նկարիիր Մելիք Ավանի
Ու մեր լինելու ձգտումը արդար:

Պատմիր աշխարհին՝ ով ենք մենք, ինչ ենք,
Եվ ովքեր են թույն խառնում մեր հացին,
Բախտի բերումով թեկուզ և քիչ ենք,
Բայց ոչ քոչվոր ենք, ոչ էլ խառնածին:
Որ մենք ենք ահա ու մեր լեռները,
Մեր Գանձասարը, վանքը Ամարաս,
Բաց են միշտ էլ մեր սրտի դռները,
Մաքուր ենք հոգով, շիտակ ենք ո՛ր պարզ:
Նկարի՛չ, Արցախ նկարի՛ր, Արցախ,
Լեռներ՛ նկարի՛ր, հողմաթեք ծառեր,
Մեր կամքը դարձրու հավերժի արձան,
Ոգին՝ անխորտակ, երազը՝ անմեռ:

* * *

Քանի՛ հազար տարի,
Քանի՛ ցեղեր վայրի
Քեզ նեղել են,
Քանի՛ հազար տարի,
Հազար ու մի դավով
Քեզ շեղել են:

Քանի՛ հազար անգամ
Ամուր ձգել գոտիդ,
Դու քո հերկն ես հերկել,
Ազահ ու չարակամ
Գող ու ելուզակից
Դու քո երզն ես փրկել...

Քանի՛ հազար տարի
Եկել ու պղծել են,
Վառել տունդ,
Քանի՛ հազար տարի
Ծռել ու կեղծել են
Պատմությունդ:

Քանի՛ հազար տարի,
Քանի՛ սուլթան ու բեկ
Եկել դուռդ թակել,
Քանի՛ հազար տարի
Քեզ խաբել են այդպես
Եվ թիկունքից զարկել:

Քանի՛ նենգ Փանահ խան
Եկել հացդ կտրել,
Քծնել են քեզ, ջանը՛ս...
Հետո գողի նման
Սուրը բկիդ դրել,
Տիրացել են տանըդ:

Քանի՛ հազար անգամ
Քանի՛ ելուզակ քեզ
Իր հավատով երդվել,
Հետո ջրադացիդ
Ջուրն են կտրել թաքուն
Ու լծկանդ մորթել:

Քանի՛ հազար անգամ
Կառուցել ես, կերտել
Ամրոցներ ու բերդեր,
Քանի՛ հազար անգամ
Արշավել եմ քո դեմ,
Կառուցածդ քանդել:

Հողը քո այս մի բուռ
Դու դարձրել ես եղեմ,
Լույսով ճամփադ հարթել,
Ի ցավ քո թշնամու
Կառուցելով ապրել,
Ապրելով ես հաղթել:

* * *

Հազար տարվա անտառ,
Հազար տարվա ծառեր,
Դեմը բարձրակատար
Հազար տարվա սարեր:

Ժայռի ոտքերի տակ
Հազար տարվա քարեր:

Հազար շանթով վառված
Լեռների մութ կուպեր,
Դաշտեր հազար տարվա,
Ջարդած հազար խոփեր:

Հազար տարվա բերդեր,
Քարանձավներ խավար,
Հազար տարվա երգեր
Ու հաստատուն հավատ:

Հազար տարվա մի վանք
Ժայռի ծերային թառել,

Հազար տարվա բարբառ՝
Հազար հրով անցած,
Եվ ո՞վ գիտե՛ քանի՛
Հազար տարվա Արցախ:

ՂԱՐԱԲԱԳ

Ես՝ քո կամը ու կալը քո,
Ես՝ հոտաղն ու մաճկալը քո,
Ես՝ մամռապատ խաչքարը քո,
Չորությունս դու ես:

Ես՝ քո շաղն ու ծիածանը,
Ես՝ մրգաշատ քո հնձանը,
Ոլոր-մոլոր քո կածանը-
Օդս-ջուրս դու ես:

Ես՝ քո կաղնու լույս սաղարթը,
Ես՝ ստուգված քո հավատը,
Ես՝ կենացի քո գավաթը,
Խորությունս դու ես:

Ես՝ արտույտդ լուսաբացի,
Ես՝ աղբյուրդ ծարավածին,
Ես՝ բույրը քո անուշ հացի,
Թոնրատունս դու ես:

Ես՝ քո հողի համն ու հոտը,
Ես՝ սարերիդ ցուրտն ու տոթը,
Ես՝ ամպերիդ խոլ որոտը,
Դարպաս-դուռս դու ես:

Ես՝ քո տվածն ու թողածը,
Կռվում անհայտ քո կորածը,
Ես՝ քո ծիծաղն ու քո լացը,
Թիկունք-կուռս դու ես:

Ես՝ քո զանգի զիլ դողանջը,
Աղբյուրներիդ ջինջ կարկաչը,
Ես՝ քո երգը ու քո կանչը,
Մաքրությունս դու ես:

Ես՝ քո տառը ու գիրը քո,
Ես՝ հավատի ջրկիրը քո,
Ես՝ շաղախը ու կիրը քո,
Ամբոթյունս դու ես:

Ես՝ բեկորը քո մի ժայռի,
Ես՝ տատրակը քո անտառի,
Ես՝ վտակը քո Թարթառի
Չուլալ հունս դու ես:

Արդ, ես գոհ եմ ինձ տրվածով,
Քո զրնգուն լուսաբացով,
Լեռնաստանում այս աստղացով՝
Տոհմատունս դու ես:

ԼԵՌՆԵՐԻ ԼԵԳԵՆԳԸ

Այս լեռները լեգենդներ են պատմում ինձ,
Դարաբաղցու կամքի մասին աննկուն,
Հին լեգենդներ, որ եկել են դարերից,
Հասել են մեզ ու երգ դառել մեր հոգում:
Այս լեռները եղել են վեմ ու ամրոց,
Ամեն մի ժայռ թշնամու դեմ մի բանակ,
Ծառս են եղել նժույգները սանձակոծ,
Հառաչել է հողը նրանց ոտքի տակ:
Այստեղ ահա՝ Քառասուն կույս սարի մոտ
Հետքն է մնում քաջակորով առյուծի,
Այս լեռներով, կիրճերով այս քարքարոտ,
Արշավել է Դավիթ Բեկի այրուձին:
Ու շաչել են թրերը կեռ, լայնաշեղք,
Շառաչել են այս լեռները անառիկ,
Ինչպես հողմի բերանն ընկած մի տաշեղ՝
Նենգ Կաջարը գլորվել է այս ժայռից:
Այս լեռները լեգենդներ են պատմում ինձ,
Դարաբաղցու կամքի մասին աննկուն,
Հին լեգենդներ, որ եկել են դարերից,
Հասել են մեզ ու երգ դառել մեր հոգում:

Դու անուն չես սոսկ երգելու համար,
Դու հող ես, լեռ ես, երկինք ես, օդ ես,
Անտառ ես կանգուն ու այգի դալար,
Դու սրտերի մեջ սեր ու կարոտ ես:

Դու ձորերի մեջ շաչող Թարթառ ես
Եվ սրնգաձայն զեփյուռ ես սարի,
Դու Ամարաս ես ու Գանձասար ես,
Դու Մռավ սար ես ու մայր ես բարի:

ԱՅՍ ՂԱՐԱՔԱՂՆ Է

Այս Ղարաքաղն է
Հեթանոս ու հին:
Նոյի տապանից թռած աղավնին
Տեղ էր որոնում իջնելու համար,
Եվ տեղն այդ եղավ կատարն այն լեռան,
Ուր Գտիչ վանքը պիտի բարձրանար:
Այս Ղարաքաղն է:
Եվ զգույշ մի քիչ, հրաբուխը հանգած
Կարող է հանկարծ
Քո ոտքերի տակ բորբոքվել նորից,
Դարերով լռած իր խառնարանից
Նետել հուր ու բոց,
Հողմահար անել և բերդ, և ամբոց:
Եվ մի քիչ կամաց. հողն ականջ ունի,
Չայներ է բերում,
Չայներ է տանում,
Մեր պապերն իրենց գերեզմաններից
Կարող են գոռալ.
Այդ ի՞նչ էս անում...
Այս Ղարաքաղն է:
Մեր պատմիչներից մենք արդեն գիտենք,
Որ այր մի Մաշտոց՝ վանքում Ամարաս,
Դպրոց է բացել, հայ մանկանց կրթել
Լինելիության գրերով անմահ...
Սակայն որտեղի՞ց Մաշտոցն իմանար,
Որ այդ գրերով՝ մի հուղայածին
Պիտի գրպարտեր...Մեսրոպ Մաշտոցին:
Այս Ղարաքաղն է՝
Հողը խաղողի ու կենաց հացի,
Եվ զգույշ նայիր քլունգիդ ծայրին-
Մեկ էլ տեսար հայտնաբերեցիր
Գինու կարասը հեթանոս հայի:
Ու՞մ է հարկավոր, որ ապացուցես
Ապացուցածը քո նախորդների,
Երբ պատմությունը խուլ է ինչ-որ տեղ,
Ինչ-որ տեղ՝ կույր ու երկերեսանի...

Գուրգեն Գաբրիելյան

ՂԱՐԱՔԱԳ

Վ. Ս. Գրիգորյանին

Էս հինչ արմանք երգյիր վեղըս,
Էս հինչ վարքար տոն ու տեղըս,
Հինչ անինքյ թա կուճուր-նեղըս,
Կուճուր տեղավ՝ ամեն տեղըս:
Մատաղ ինիմ քու Թըրթառեն,
Մըռավ սարեն, թութե ծառեն,
Ըռանգյ-ըռանգյ մարմար քարեն,
Մին էլ քարետ նախշած տառեն:

Այդ ինչ հեք ու հնար ունես,
Այդ ինչ երգ ու քնար ունես,
Քեզ մեկ անգամ տեսնողն ասես
Քոնն է դառնում քո որդու պես:

Կարոտում է քո Քիրս սարին,
Քո Թարթառին, Գանձասարին,
Քո ջինջ ջրին, քո թանկ հողին,
Քո օջախի բորբոք պողին:

Ես ապրում եմ Ղարաբաղում՝
Իմ պապերի հնո՛ց հողում
Ուր արևի ճամփան կարճ է
Եվ լեռներիս մեջ է շողում:
Ես ապրում եմ Ղարաբաղում՝
Իմ պապերի պահած հողում,
Ուր հավատը միշտ բորբոք է
Եվ ալավ կա ամեն պողում:
Ես ապրում եմ Ղարաբաղում՝
Իմ պապերի պաշտած հողում,

Հարյուր տարեն խաղ ու պար ա,
Քու մին տարեն մի սաղ դար ա,
Ամեն քյունջտ մի բաղ-բար ա,
Ամեն վերթիտ մի մեծ սար ա:
Տու մին արծիվ՝ ես քու ճուտը,
Մեզ պահողը՝ հացեն ճոթը,
Մեր շահ թոթը, սարեն օթը,
Մին էլ արթար պիհին կոթը:
Շատ շեն կենաս, մեր Ղարաբաղ,
Մեր ճիրաքյեն շող ու շափաղ,
Մեր տոն ու տեղ, յուրդ ու յաթաղ,
Հինչու օնինքյ՝ լոխ քեզ մատաղ:

Ու քո մարդկանց՝ սրտները ծով,
Պապենակյան աղուհացով,
Դու՝ երգ ու տաղ, դու՝ բերք ու
բաղ,
Դու՝ մոր պես թանկ, իմ Ղարաբաղ:

Ուր միշտ կանգուն բազուկները
Չար ու շառի խիղճ են թաղում:
Ես ապրում եմ Ղարաբաղում՝
Իմ պապերի հրաշք հողում,
Ուր Սևանի իշխանները
Երազների մեջ են լողում:
Ես ապրում եմ Ղարաբաղում՝
Եվ չեմ ապրի մեկ այլ հողում,
Եվ կմեռնեմ պապերիս պես՝
Արցախացած նրա կողում:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԱՍԵՐ

Ճանաչել գիմաստություն և գիտատ, իմանալ գրանս հանճարոյ:

Առակաց գիրք, Ա, 1-2

Մեր հոյակապ հին վանքերի մութ խուցերում, մենության մեջ,
Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի լույսով անշեջ
Մի նշխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն,
Պատմությունը մեր գրեցին մագաղաթի վրա դժգույն:

Ավեդիք Իսահակյան

Հայ գրականությունն ունի հազարամյակների պատմություն: Ժողովուրդն է եղել առաջին ամենամեծ ստեղծագործողը: Մինչև գրերի գյուտը հայ ժողովուրդն ունեցել է իր բանավոր ստեղծագործությունները՝ առասպելներ, հեքիաթներ, գրույցներ, երգեր: Հայ առաջին պատմիչներն ու գրողները գրի առան ժողովրդական հիասքանչ ստեղծագործությունները, ստեղծեցին հայ գրականության առաջին գրավոր հուշարձանները՝ պատմության մատյաններ, իմաստասիրական երկեր ու բանաստեղծություններ: Սկզբնավորվեց հայ հին գրականությունը, և այդ երկերի շնորհիվ այսօր մենք ճանաչում ենք մեր սկիզբը, դաս առնում հայ ժողովրդի հերոսական անցյալից:

Ոսկեդարյան հայոց մատենագրության մեջ իրենց արտացոլումն են գտել այն բոլոր բաղկացուցիչ տարրերը, որոնցից ձևավորվում է ազգի հոգևոր կերտվածքը: Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» հայ ժողովրդին վերադարձրեց նրա պատմական ճշմարտացի հիշողությունը, Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» ժողովրդին վերադարձրեց պատմական այն դրվագները, որոնք յուրովի էին բեկվել ժողովրդի հիշողության մեջ, Ագաթանգեղոսը տվեց հայոց դարձի պատմությունը, իսկ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» որեց այն հիմքը, որի վրա պետք է հառներ հայկական քրիստոնեության իսկությունն ու ճշմարտությունը: Եղիշեի և Ղազար Փարպեցու՝ Ե դարի 2-րդ կեսի իրադարձություններն անմահացնող գործերը կարծես նախասահմանեցին այն տատասկոտ ուղին, որով պետք է ընթանար հայ ժողովուրդը դարեր շարունակ՝ մարտնչելով հանուն իր ազգային ինքնության պահպանման, հանուն գոյատևման:

Կորյուն: Մոտ 380 – մոտ 450: Կորյուն վարդապետը 5-րդ դարի հայ մատենագրության, կրթական և մշակութային գործի գլխավոր դեմքերից է: Նա Մեսրոպ Մաշտոցի առաջին աշակերտներից է: Ուսանել է Վաղարշապատում, այնուհետև ուսումը շարունակել է Կոստանդնուպոլսում, իսկ Ասորիքում հմտացել հունարենի և ասորերենի մեջ: Հայաստան է վերադարձել 431 թվականին և զբաղվել գրական, քարգմանական գործունեությամբ: Նա սերտ կապերի մեջ էր Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի հետ: «Վարք Մաշտոցի» գիրքը գրել է հայոց վեհափառ հայրապետի տեղապահ Հովսեփ Վայոցձորեցու (Հողոցմեցի) պատվերով՝ 443-451 թվականներին: Այդ գիրքը հայ մատենագրության առաջին երկերից է, այսինքն՝ հայերեն գրված առաջին ինքնուրույն գրքերից մեկը: Կորյունի գիրքը մեզ է հասել 17-րդ դարի ընդօրինակությամբ:

Մաշտոցի ու նրա աշակերտների գործունեությամբ սկզբնավորվել է հայոց ոսկեդարի (V դար) վիթխարի գրական-մշակութային շարժումը:

Տոնացույցում նրա անունը հիշատակվում է 3 շարժական տոներում: Օշականում Մաշտոցի գերեզմանի վրա կառուցված եկեղեցին սրբազան ուխտատեղի է: Մերունդները Մաշտոցին անվանել են Երկրորդ Լուսավորիչ Հայոց, որովհետև Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեացրել է հայ ազգը, իսկ Մեսրոպ Մաշտոցն ազգայնացրել է քրիստոնեությունը:

Մեսրոպ Մաշտոցի բաց արած ճանապարհով հետագա տարիներին ընթացավ ամբողջ հայ գրականությունը, իսկ Մաշտոցի կերպարը մեծարվեց բազմաթիվ գրական ստեղծագործությունների մեջ: Պատմագրությունը, որ այդ տարիներին զուգակցված էր գրականությանը և բանահյուսությանը, ասպարեզ մղեց այնպիսի երևելի անունների, ինչպիսիք են Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Եղիշեն, Ղազար Փարպեցին և ուրիշներ:

Ագաթանգեղոս (IV-V դարեր): Համաշխարհային ճանաչման արժանացած պատմիչ: Նրանից մեզ է հասել «Պատմություն» վերնագրով գիրքը: Ագաթանգեղոս անունը նշանակում է բարի հրեշտակ կամ ավետաբեր: «Պատմության» առաջաբանում Ագաթանգեղոսն իր մասին տեղեկացնում է, որ ինքը ծնվել է Հռոմ մեծ քաղաքում, տիրապետում է լատիներենին, հունարենին, անտեղյակ չէ նաև նշանագրերի (հայոց նախամաշտոցյան այբուբենի) արվեստին, եկել է Արշակունիների արքունիք և Տրդատ Մեծ արքայի հրամանով կոչված է գրի առնել այն ժա-

մանակների դեպքերը: Նա իրեն համարում է ականատես և ականջալուր պատմիչ, ով ամեն ինչ շարադրել է հունական ճարտասանության օրինակով: Խորենացին Ագաթանգեղոսին հիշում է «Տրդատի հաջող քարտուղար» արտահայտությամբ: Ըստ այս տվյալների՝ Ագաթանգեղոսն ապրել է 3-4-րդ դարերում և իր «Պատմություն»-ը գրել է հունարեն: Հայագիտությունն այն կարծիքին է, որ Ագաթանգեղոսն ազգությամբ հայ է, իր գիրքը գրել է հայերեն և ապրել ու ստեղծագործել է 4-5-րդ դարերում: Իրեն Տրդատ Մեծի ու Գրիգոր Լուսավորիչի ժամանակակիցն է համարում՝ խոսքին ավելի վստահություն ներշնչելու նպատակով: Եվ քանի որ այն ժամանակ դեռևս մաշտոցյան այբուբենը չկար, ուստի իրեն համարում է հունագիր:

Եղիշե (410/415–470/475): Հայտնի է «Վարդանի և հայոց պատերազմի մասին» («Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին») պատմագիտական աշխատությամբ, ինչն ունի նաև գեղարվեստական մեծ արժեք: Գիրքը գրված է ծաղկուն, գրավիչ լեզվով, պատկերավոր նկարագրություններով և իմաստալից ասույթներով: Գիրքը Եղիշեն գրել է Մամիկոնյան Դավիթ երեցի պատվերով՝ որպես Մամիկոնյան տոհմի փառաբանություն: Ըստ գրքում թողած իր վկայությունների՝ ինքը՝ պատմիչը, մասնակցել է Ավարայրի ճակատամարտին. «Ես ինքս նույն տեղում պատահեցի և տեսա ու լսեցի...»:

Ավարայրի ճակատամարտը տեղի է ունեցել 451 թ., իսկ Եղիշեն իր պատմությունն ավարտել է 464-ին: Ավարայրի ճակատամարտի մասին գրել է նաև Դազար Փարպեցին: Նա ապրել է ավելի ուշ և օգտագործել է դեպքերին ականատես Եղիշեի պատմությունը:

Եղիշեի մատյանը ոգևորել է շատ գրողների՝ սկզբնաղբյուր դառնալով գեղարվեստական տարատեսակ երկերի համար. այդ թվում՝ Ներսես Շնորհալուն («Նորահրաշ պսակավոր...»), Գևորգ Ալիշանին («Պլպուլն Ավարայրի»), Ռաֆայել Պատկանյանին («Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը»), Հովհաննես Հովհաննիսյանին («Վարդանանց օրը», «Տղմուտ», «Սյունյաց իշխան»), Գերենիկ Գեմիրճյանին («Վասակ», «Վարդանանք») և ուրիշներին:

Դազար Փարպեցի (440/443-6-րդ դարի սկիզբ): Ոսկեդարի վերջին պատմիչն է: Նա ունի ստուգապատում պատմիչի համարում, հայտնի է «Հայոց պատմություն», «Թուրք Վահան Մամիկոնյանին՝ ստախոս արեղանների մեղադրությունը» գործերով: Ծնվել է Արագածոտն գավա-

նի Փարպի գյուղում: Մանկության տարիներից մտերիմ է եղել ապագա մարզպան Վահան Մամիկոնյանի հետ: Նրանք միասին են մեծացել ու կրթվել: Նրանց ուսուցիչը Մաշտոցի աշակերտ և հայտնի հոգևորական Աղան Արծրունին էր: Փարպեցին կրթությունը շարունակել է Բյուզանդիայում: 484-486 թ.թ. ճգնել է Սյունիքի քարայրներում «բոլոր կրոնավորներից ամենից հռչակավոր մի մարդու հետ, ում անունն էր Մովսես»: Ենթադրվում է, որ խոսքը Մովսես Խորենացու մասին է:

Փավստոս Բուզանդ: (4-5-րդ դարեր): Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» աշխատությունն ունի և՛ պատմագիտական, և՛ գրական- գեղարվեստական նշանակություն: Բուզանդը շատ հետաքրքրական պատմող է: Նրա գիրքը գրույցների շարք է, որ վերաբերում է պատմական դեպքերին ու դեմքերին: Փավստոս Բուզանդի կյանքն ու ստեղծագործությունը պատված են առեղծվածներով: Այդ առեղծվածները վերաբերում են նրա ազգային պատկանելությանը, ապրած ժամանակին և գրքի գրության լեզվին: Նրա գրքի գլուխները կոչվում են դպրություններ: Ոմանք նրան նույնացնում են իր գրքում հիշատակված ազգությամբ հույն Փավստոս եպիսկոպոսին: Փաստերն ապացուցում են, որ Բուզանդը ազգությամբ հայ է, գրել է հայերեն և ապրել է 4-5-րդ դարերում: Իրենց աշխատություններում նրան հիշատակել են Խորենացին, Փարպեցին, 6-րդ դարի հույն պատմիչ Պրոկոպիոսը: Նա շարունակել է Ազաթանգեղոսին, ով իրենից առաջ գրել է Հայաստանում քրիստոնեության մուտքի, Տրդատ Մեծ արքայի և Գրիգոր Լուսավորչի գործունեության մասին, մինչև նրանց մահը: Փավստոս Բուզանդի գիրքն ընդգրկում է 319-384 թվականների 65 տարվա պատմությունը՝ Տրդատ Մեծի որդի Խոսրով Կոտակից մինչև Հայաստանի առաջին բաժանմանը հաջորդող տարիները:

Բուզանդի գիրքը պատմական հերոսների մի պատկերասրահ է, իրական դեպքերի հետ միախառնված հրաշապատումի, հեքիաթի մի գրավիչ համաձուլվածք, հաջորդական դիպաշարերի մի ձույլ շղթա: Բուզանդի գիրքն սկզբնաղբյուր է ծառայել նաև մեր հետագա պատմավիպասանության համար: Այն հետագա սերունդների համար թեմաների ու հղացումների անհատնում աղբյուր է: Բաֆֆին իր «Մամվել» պատմական վեպի գաղափարը նրանից է վերցրել:

Նրանից է քաղված Ստ. Ջորյանի «Պապ թագավոր», «Հայոց բերդ», «Վարագդատ» պատմավեպերի նյութը, նրա հիման վրա է գրված «Արշակ Երկրորդ» օպերայի լիբրետոն և այլն:

Պատմաբանը IV դարը քննելիս չի կարող շրջանցել Բուզանդին: Բայց ոչ միայն IV դարը: Բուզանդը իր երկով կարողացել է տալ առհասարակ ավատատիրական միջնադարի պատկերը:

Մովսես Խորենացի (մոտ 410 թ. - մոտ 490 թ.): Ոսկեդարի գրող-պատմիչ, մեկնիչ, բանաստեղծ, թարգմանիչ, իմաստասեր, աստվածաբան, պատմահայր: Նրա «Պատմություն Հայոց» աշխատությունը միջնադարում եղել է ազգային ինքնաճանաչման, քաղաքական-հայրենասիրական դաստիարակության ուսումնական ձեռնարկ: Հայ սերունդները ակնածանքով ու երախտագիտությամբ են հիշում Խորենացուն, մեծարում նրան «Պատմահայր», «Մեծն Մովսես», «Քերթողահայր», «Տիեզերահռչակյալ» և այլ պատվանուններով:

Խորենացու մասին կենսագրական տեղեկությունները քիչ են: Դրանց մեծ մասը հաղորդում է ինքը՝ հեղինակը, իր «Հայոց պատմության» մեջ: Խորենացու «Հայոց պատմություն»-ը հայ ժողովրդի ծննդաբանության, զոյաբանության, ազգաբանության, մշակութաբանության ամենամեծ հուշարձանն է՝ նրա ծննդյան վկայականը: Պատմական իրադարձությունների և հայ մարդու նկարագրի ու կերպարի վերլուծությամբ, կռահումներով ու առաջադրություններով այն ազգային գաղափարախոսության հիմք է և ճանապարհի գիրք՝ բացված հայ ժողովրդի բոլոր սերունդների առջև:

«Պատմություն Հայոց»-ն իր կուռ կառուցվածքով, հստակ ու ճշգրիտ ժամանակագրությամբ, պատմության պարբերականացման սկզբունքով, շեշտված հայրենասիրական ուղղվածությամբ դարձել է անփոխարինելի ազգային արժեք, համաշխարհային պատմագիտական մտքի նշանավոր կոթողներից: Այն մեծապես նպաստել է հայ ազգային մտածողության զարգացմանը և բարոյական ոգու զորեղացմանը: «Պատմություն Հայոց»-ն օրինակ ու չափանիշ է եղել միջնադարյան հայ պատմագիրների համար, բազմիցս ընդօրինակվել է և մինչև XIX դարի կեսերը հայկական դպրոցներում եղել է հայ ժողովրդի պատմության անփոխարինելի դասագիրք:

5-րդ դարի 60-ականներին Վաղարշապատի հարակից գյուղում հյուր էր Ամենայն հայոց Գյուտ կաթողիկոսը: Մեղանակիցները գյուղում որպես օտարական ապրող ծերունուն խնդրում են կաթողիկոսի պատվին բաժակաճառ ասել: Ծերունին շարականի ոճով ճառ է ասում: Բոլորը ցնցվում են: Գյուտ կաթողիկոսը մոտենում ու խոնարհվելով

համբուրում է իր ուսուցչին, որին երկար տարիներ փնտրում էր: Այդ ծե-
րունին Մովսես Խորենացին էր՝ հայ գրավոր մշակույթի Ոսկեդարի մե-
ծագույն գործիչը:

Իսկ երբ նրա համբավը հասնում է Սահակ Բագրատունի իշխանին՝
հայրենասեր մի անձնավորության, նա այցելում է ծեր եպիսկոպոսին:

-Ժողովրդական բանավոր գրույցներից գիտեմ՝ ինչ ծագում ունի
մեր ազգը: Գիտեմ, որ մեր նախահայրերը եղել են Բաբելոնի աշտա-
րակաշինության դեպքերի ժամանակակիցները: Դա մեզ իրավունք է
տալիս դասվելու հնագույն ազգերի շարքը: Գրի՛ր մեր նախնիների
պատմությունը: Հայկի, Արամի, Տիգրանների, Վաղարշակի, Արտաշե-
սի և այլոց քաջության, հայրենասիրության օրինակով ոգևորի՛ր մեզ և
սերունդներին:

Այսպես խոսեց իշխանը և հիացրեց ծերունուն:

-Սա իմ ճաշակին ևս ախորժեղի է և, մանավանդ, իմ սովորություննե-
րին: Ուստի, ուրախությամբ ընդունելով քո խնդիրքը, սիրով կաշխատեմ
կատարել,- պատասխանեց ծերունին:- Հենց այն, որ դու չես բավարար-
վում միայն Բագրատունյաց տոհմի պատմությամբ, արդեն ասում է, որ
վեր ես նեղ անձնական խնդիրներից և ապրում ես համայն ազգի հոգ-
սերով: Ծանր գործ է ասածդ, որովհետև իմ ձեռքի տակ մատյաններ
չկան: Բայց և այնպես կսկսեմ՝ անմահ հիշատակ թողնելով քեզ և հա-
ջորդ սերունդներին, միայն թե մարդիկ շնորհակալ լինեն իմ կրած նե-
ղությունների համար:

Մովսես Խորենացին առաջին խոշոր ու շրջահայաց հայ հայրենա-
սերն է, որ հաղթահարում է օտար ամեն ինչ և ամեն բան տեսնում ազ-
գային շահի տեսանկյունից: Նա մեր առաջին ողջախոհ հայրենասերն
է, որի մտքի թռիչքը չունի ո՛չ կրոնական սահմանափակում, ո՛չ ժամա-
նակային անջրպետ:

Խորենացու «Հայոց պատմությունը», ըստ ամենայնի, ստեղծված է
«Հին կտակարանի» օրինակով: Մի դեպքում «Գիրք ծննդոց», մյուսում՝
«Հայոց մեծերի ծննդաբանությունը»: Ընդհանրությունները շատ են: «Հա-
յոց պատմությունը», կարելի է ասել, մեր «Աստվածաշունչ» մատյանն է:

Մովսես Խորենացին, լինելով իր ժողովրդի նվիրյալը, միաժամանակ
ահավոր ցավով էր տեսնում նրան ժառանգաբար փոխանցված բնավո-
րության կործանարար կողմերը: Եվ ոչ միայն տեսնում էր, այլև հա-
մարձակորեն պատկերում էր իր ժամանակի արատները: Մովսես Խո-
րենացին, Պարույր Հայկազնին դիմելով, ասում է.

-Հելլենամոլությունը Ձեր մեջ այն աստիճան է զարգացել, որ փոխել էք մինչև անգամ Ձեր անունը: Դուք փայլում եք պերճախոսությամբ, բայց վատ եք խոսում այն լեզվով, որով մի ժամանակ խոսում էիք Ձեր ծնողների հետ:

Ձեզ հայրենիքում Պարույր Հայկազն էին կոչում, իսկ այստեղ՝ Պրոտերեսիոս: Մի մոռացեք, որ դուք այն երիտասարդներից մեկն եք, որոնք գիտության առաքելությամբ թողեցին հայրենիքը, ուխտեցին Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի առաջ՝ գնալ աշխարհեաշխարհ պտտել և գիտության պաշար հավաքելով՝ վերադառնալ, հայրենիքը լուսավորել: Այդպես վարվեցին Գավիթ Անհաղթը, Եզնիկը, Դևոնդ Երեցը, Կորյունը: Նրանք իրենց հետ հայրենիք տարան Հայաստանը փրկելու նոր զենք՝ լուսավորությունը: Այդպես պիտի վարվեք և դուք: Ես եկա ձեզ մոտ, որ միասին մեկնենք մեր երկիրը: Գնանք գիտություն և լուսավորություն տարածենք մեր աշխարհում: Դուք այնպիսի գորեղ հանճար ունեք, որ մնալով այստեղ՝ հավատացած եմ, ավելի ևս կբարձրանաք և գուցե առաջինը կլինեք ժամանակի փիլիսոփաների մեջ: Բայց դրանից ի՞նչ օգուտ ձեր հայրենիքին: Դուք անարժան եք Հայաստանի զավակ կոչվելու:

Պարույր Հայկազնը ապրեց մինչև խոր ծերություն, հունաց գրքերի մեջ նա փառավոր անուն թողեց, Հռոմը նրա արձանը կանգնեցրեց հետևյալ փորագրությամբ. «Տիեզերքի թագուհի Հռոմը՝ ճարտասանության արքային», բայց հայ մատենագիրներից ոչ մեկը չխոսեց նրա մասին. հայրենիքի համար նա կորած մարդ էր... Ժամանակի հետ նրա անվան փայլը խամրեց և անհետացավ:

Ըստ Բաֆֆու

Պարույր Հայկազն (լատինացված՝ Պրոտերեսիոս, 276-368), Հռոմում գործած հայ հռչակավոր հռետոր, Աթենքում՝ ճարտասանական դպրոցի ղեկավար, փիլիսոփա: Ծնվել է Կապադովկիայի Կեսարիա քաղաքում: «Պարույր Հայկազն» (1884) վիպակում, պատմական գուգահեռի վրա դնելով Մովսես Խորենացուն և Պարույր Հայկազնին (Պրոտերեսիոսին), Բաֆֆին կոսմոպոլիտիզմը /աշխարհաքաղաքացիություն/ հակադրում է հայրենասիրությանը, հաստատելով, որ փառքի հավերժությունն ու անմահությունն անբաժանելի են հայրենիքի գաղափարից: Գրողի պատմափիլիսոփայության մեկնակետը ազգային միասնության գաղափարն է:

Մատենագիրներ և մեկեմասներ

Մովսես Խորենացի՝ Սահակ Բագրատունի
Եղիշե՝ Մամիկոնյան Դավիթ Երեց
Ղազար Փարպեցի՝ Վահան Մամիկոնյան
Կողյուն՝ Հովսեփ կաթողիկոս
Խորենացու կրտսեր եղբայրը՝ Մամբրեն՝ Վերծանող մականունով,
ճարտասան էր:

Իմաստության շտեմարան

Թեպետ մենք փոքր ածու/ազգ/ ենք և շատ սահմանափակ թվով և
շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես
մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գրելու և հիշատակե-
լու արժանի:

Չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության:

Քաջերի սահմանը նրանց գենքն է. որքան կկտրի, այնքան էլ կտիրի:

Մովսես Խորենացի

Չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահություն:

Լավ է աչքով կույր լինել, քան մտքով:

Եթե թագավորի իմաստնությունն իրեն աթոռակից չունի, չի կարող
իր վիճակի մեջ վայելուչ լինել:

Մի աշխարհ երկու իշխող չի ունենա, ոչ էլ մի արարած՝ երկու Աստ-
ված:

Եղիշե

Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին
կառավարողը միտքն է:

Վախը թերահավատության նշան է:

Ոչ ոքի մի՛ տրտմեցնիր և ոչ ոքից մի՛ տրտմիր:

Ով լավ է /ներքուստ/, նաև զվարթ է երևում/արտաքուստ/:

Դևերը հավաքվում են հարստություն կուտակելիս, իսկ հրեշտակնե-
րը՝ բաշխելիս:

Եզնիկ Կողբացի

Խաղաղության առավոտ ծագեցրո՛ւ մեզ վրա,

Մարդասե՛ր,

Եվ պահպանի՛ր:

Փրկի՛չ,
Քո իմանալի լույսովդ
Լուսավորի՛ր մեր հոգին
Եվ պահպանի՛ր:
Եվ ամեն մի վտանգի դեմ ամրացրո՛ւ մեզ
Քո սուրբ աջի հովանու տակ
Եվ պահպանի՛ր: *Մեսրոպ Մաշտոց*

5-րդ դարում հայ ժողովուրդը կորցրել էր պետականությունը և կանգնած էր ճակատագրական երկընտրանքի առջև՝ ընդունել զրադաշտական կրոնը և տեղի տալ Սասանյանների ձուլող քաղաքականությանը կամ կառչել սեփական մշակույթին և շարունակել գոյատևել որպես ժողովուրդ, բայց արդեն՝ ոչ որպես պետություն: Առաջացել էին ներքին խմբավորումներ: Հենց այս ժամանակահատվածում Հայաստանում տիրող ներքին իրավիճակն է ներկայացրել Խորենացին «Ողբ»-ում, որտեղ արտացոլված են երկրի ընդհանուր դրությունն ու ժողովրդի տարբեր խավերում ու շերտերում տիրող իրավիճակը: Կմտածե՞ր արդյոք Խորենացին, որ իրենից հետո այսքան դար անց «Ողբ»-ը չի կորցնի իր արդիականությունը, և ազատ ու ինքնիշխան Հայաստանում ապրող սերունդը կամա թե ակամա զուգահեռներ կանցկացնի իր և 5-րդ դարի իրականության միջև:

ՈՂԲ

Ողբում են քեզ, Հայո՛ց աշխարհ, ողբում են քեզ՝ բոլոր հյուսիսային ազգերիդ մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ և քահանայդ, խորհրդականդ ու ուսուցանողդ: Վրդովկեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, տգիտությամբ հիմնավորվեց չարափառությունը:

Ինչպե՞ս դիմանամ այս ցավերին, ինչպե՞ս ամրապնդեմ միտքս ու լեզուս և հայրերիս պարտքը հատուցեմ՝ իմ ծնունդի և սնունդի փոխարեն: Նրանք ինձ ծնան և սնուցին իրենց տված ուսումով և ուրիշների մոտ ուղարկեցին կատարելագործվելու: Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեն իմ ամենիմաստ արվեստով և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ Բյուզանդիայից շտապ-շտապ վերադառնալով՝ հույս ունեինք հարսանիքներում պարել և առագաստի երգեր երգել, այժմ այդ ուրախության փոխարեն գերեզմանի վրա ողբեր

են՝ ասում՝ ողորմելի հառաչելով: Նույնիսկ չհասա տեսնելու նրանց աչքերի փակվելը, լսելու նրանց վերջին ձայնն ու օրհնությունը: Այսպիսի վշտով խեղդվում են, մեր հոր կարոտով մաշվում: Ու՞ր է այն քաղցր աչքերի հանդարտությունը ուղիղների համար և ահավորությունը չարերի համար: Ու՞ր է այն զվարթ ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս, ու՞ր է այն բարյացակամ սիրտը, մեր հույսը, նեղություններից հանգստացնողը:

Եվ չգիտեն՝ ինչպես հորինեն իմ ողբը և կամ ու՞մ արտասվեմ: Արդյոք իմ թշվառ մանուկ թագավորի՞ն, իմ հորն ու քահանայապետի՞ն, այն վսեմ միտքը, որով կառավարում էր և բարեկարգում, արդյոք իմ ծնողի՞ն, այն վարդապետության աղբյուրը, որ ռոռգում էր արդարությունը և իբրև հեղեղ՝ դուրս էր քշում ամբարիշտությունը: Արդյոք մեր աշխարհին արդեն եկա՞ծ աղետները, թե ապագայում սպասվածները:

Ուսուցիչները՝ տխմար և ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ աստծուց կոչված, փողով ընտրված և ոչ սուրբ հոգով, ոսկեսեր, նախանձոտ և գայլ դարձած՝ գիշատում են իրենց հոտերը:

Կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամոլ, սնափառ, պատվասեր, քան աստվածավախ:

Աշակերտները՝ սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ՝ փութաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են:

Ջինվորականները՝ անարի, զենք ատող, ծույլ, կողոպտիչ, գինեմոլ: Իշխանները՝ ապստամբ, ազահ, ժլատ, աշխարհ ավերող:

Դատավորները՝ տմարդի, խաբեբա, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անհաստատ:

Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած:

Մովսես Խորենացի

Ողբի ժանրը հայ գրականության հոլովույթներում

Ողբը պոեմի տեսակ է, որ լայն տարածում ուներ հայ միջնադարյան գրականության մեջ: Այն սկիզբ է առել ժողովրդական ողբերից: Առաջին անգամ հանդիպում ենք Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, իսկ իբրև գրականության ինքնուրույն տեսակ՝ Գր. Նարեկացու, Ն. Շնորհալու և ուրիշ տաղերգուների ստեղծագործություններում: Երկրորդ «Ողբը» հայ գրականության մեջ 7-րդ դարի բանաստեղծ Դավթակ Քերթոլի «Ողբ մեծ իշխան Ջևանշիրի մահվան մասին» գործն է. 36 տողից բաղկացած դամբանական բանաստեղծություն՝ գրված հայկական այբուբենը կազմող ծայրակերպով /ակրոստիքոսով/:

Հայ գրականության հաջորդ ողբը Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմն է /1002թ./: Նարեկացին ողբում և աղոթում է ոչ թե իբրև առանձին անձ, մեկ անհատ, այլ խտացնում է իր մեջ ողջ մեղսագործ մարդկությունը՝ առանց տարիքային ու դասային խտրության: «Ես եմ բոլորը, և բոլոր մարդկանց մեղքերն են իմ մեջ», - հայտարարում է նա: Այս է պատճառը, որ նրա ողբն ունի համամարդկային հնչեղություն և միաժամանակ մարդասիրական խոր բովանդակություն, քանի որ բանաստեղծի նպատակն է եղել մաքրել, կատարելագործել ողջ մարդկությունը: Ոսկեդարից և հատկապես պատմահայր Մովսես Խորենացուց սկզբնավորված պատմահայրենասիրական ողբը, անցնելով հետագա պատմիչներին, առաջին անգամ Ն. Շնորհալու «Ողբ Եղեսիո» պոեմի միջոցով մուտք է գործում հայ քնարերգության մեջ: «Ողբ Եղեսիո» պոեմի արժեքը խոր հայրենասիրական բովանդակության մեջ է: Բանաստեղծը մորմոքում է ոչ միայն Եղեսիա հայաքաղաքի, այլև բուն հայկական քաղաքների տխուր վիճակի համար: Շնորհալու ողբն էլ հուսահատ չէ: Նա լավատեսորեն է նայել իր հայրենիքի ապագային՝ հույս ունենալով, որ չարագործները կպատժվեն, և քրիստոնյա աշխարհի օգնությամբ կթոթափվի մահմեդականների ծանր լուծը: Մեր այս առաջին և լավագույն պատմահայրենասիրական ողբի բարերար ազդեցությունը արտահայտվում է հետագա շրջանի գրեթե բոլոր պատմաողբերի վրա: Ն. Շնորհալու աշակերտ Գրիգոր Տղայի «Ողբ Երուսաղեմի» պոեմի նյութը Երուսաղեմի ավերումն է /1187թ./: այն ունի հայրենասիրական բովանդակություն՝ անհրաժեշտ է համախմբվելով ստեղծել անկախ պետություն: Պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի դիմաց Կաթողիկեին» երկում Վաղարշապատի Կաթողիկեին՝ Էջմիածինը ևս, իբրև լքված ու հալածված Թագուհի, ողբում է իր տխուր վիճակը: Հեղինակը Թագուհու անունից կանչում է աշխարհացրիվ հայությանը՝ վերադառնալ հայրենիք, համախմբվել, թոթափել մահմեդականների ծանր լուծը և վերականգնել հայոց թագավորական գահը:

Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» կամ «Ողբ հայրենասերի» վեպը ողբի նոր տարատեսակ բերեց հայ գրականության: Վեպի տխուր վերջաբանը ցույց է տալիս, որ պարսկական տիրապետության վերացմամբ չի վերջանում ողբը, այլ սկսվում է փորձության մի նոր շրջան, որի ընթացքում հայ ազգը կամ անցյալում մեծ փառք ունեցած շատ ազգերի նման կոչնչանա ֆիզիկապես, կամ պիտի ապացուցի իր ինքնուրույն գոյության իրավունքը մարդկության պատմության մեջ:

Հայ միջնադարյան գրականությունը լի է պատմական ողբերով. հայ պատմիչներն ու բանաստեղծները չէին ծնվել ողբասացության համար. ժողովրդի պատմական ճակատագիրն էր մշտապես կենդանի պահում ողբը, իսկ նրա բանաստեղծն էլ ակամա դառնում էր ողբասաց:

20-րդ դարասկզբին գրական այդ տեսակը նորից նորոգվեց՝ կապված ժողովրդին վիճակված նոր փորձությունների հետ: Միամանթոյի «Մահվան տեսիլքով» բացվում է «Հոգեվարքի ու հույսի ջահեր» շարքը. «Կոտորած, կոտորած, կոտորած...»: Տեսիլը հայ միջնադարյան բանաստեղծության տեսակ է, որ, ահա, վերամարմնավորվում է Միամանթոյի ստեղծագործության մեջ: Հայոց ցեղասպանության իրական պատկերն այնքան զարհուրելի էր, անպատմելի, որ վերածվել էր տեսիլքի, նաև՝ մղձավանջային գառանցանքի: 35 տողանոց այս բանաստեղծությունը հագեցած է հայոց ողբերգության արժարժումներով:

Է. Միրզոյան, «Լոգոս», Սրբավրուայո, 2018թ.:

Ո՞վ էր, ի՞նչն էր ստիպում Պատմահորը գրել «Թեպետ և եմք ածու փոքր...»: Ախր այդ ումի՞ց էիր փոքր, Քերթողահայր, այդ քանի՞ազգ ու ազգություն կար աշխարհում, և դրանց ո՞ր մասն էր քեզանից մեծաքանակ կամ քեզանից առաջավոր ու հզոր... Այդ «փոքր» բառը մնաց ոչ միայն քո «Հայոց պատմության» կամ մեր պատմագիտության մեջ իբրև դառնացած մի պահի ասված խոսք, այլև դարձավ հոգեբանություն, անհաղթահարելի մի հիվանդություն, որ ժամանակների մեջ ոչ միայն չբուժվեց, այլև վերածվեց «ստրկախտի»՝ ընդհուպ մինչև 20-րդ դարավերջ... Այդ ումի՞ց ես փոքր կամ փոքրաթիվ... աշխարհում շուրջ 5000 ազգ ու ազգություն կա: Դրանցից միայն 200-ն ունեն պետություն, որոնց աշխարհը ճանաչել և հաշվի է առնում որպես այդպիսին: Դրանց շարքում դու քո բնակչության թվով առաջին հարյուրյակի մեջ ես, տվյալ լեզվով խոսողների թվով 75-րդն ես, իսկ աշխարհում տարածվածության հաշվարկով հայերենը գտնվում է աշխարհում ամենատարածված լեզուների առաջին տասնյակում...

Գագիկ Մինասյան, 100 խմբագրական, Երևան, 2011թ.

Ո՞վ Խորենացի, տես փոքրիկ ածուդ բազմապտուղ և ծաղկալի անդաստան մը դարձած է, ուր քեզի համար այնքան ատելի տգիտությունը իսպառ հաղթահարված է, և ուր հայ հայրենասիրությունը պերճաբարբառ կթնդա փոքրիկ աշխարհի մեկ ծայրեն մյուսը:

Հրանդ Արմեն

Եղիշենն ազատագրական շարժումը դիտում է որպես հայրենիքի և եկեղեցու հարատևումը պահպանող շարժում: Բայց քանի որ ուժերը անհավասար էին, ուստի հայերի ազատագրական պայքարը պետք է դառնար նահատակություն, ասինքն՝ հանուն հավատի զոհաբերություն: Երբ Եղիշենն ասում է՝ գիտակցված մահը անմահություն է, նկատի ունի հանուն հավատի և հայրենիքի իրեն զոհաբերելը, նա գտնում է, որ նախարարների միասնության դեպքում Հայաստանը կարող էր դառնալ հզոր, պահպանել իր անկախությունը, ուստի նա իր ոսկեդեմիկ մատյանում միասնության կոչ է անում, և նշում է, որ միաբանությունը՝ Մայր է բարյաց:

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհի

/հաղված Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» գրքից/

Հայոց աշխարհի փափկասուն տիկիները, որոնք փափուկ կյանքով ու քնքուշ մեծացել էին բազմոցների ու գահավորակների մեջ, շարունակ բոբիկ ու ոտքով էին գնում աղոթատները՝ առանց ձանձրանալու, ուխտելով և խնդրելով, որ կարողանան դիմանալ այդ մեծ նեղությանը: Նրանց մարմինների մորթը սև գույն ստացավ, որովհետև ցերեկն արևակեզ էին լինում և ամբողջ գիշերներն էլ գետնի վրա էին քնում: Մոռացան իրենց կանացի տկարությունը և առաքինի տղամարդիկ դարձան հոգևոր պատերազմի մեջ. կռիվ բաց արին ու մարտնչեցին ծայրագույն մեղքերի դեմ: ...Շատ ձմեռների սառույցներ հալվեցին, գարուն հասավ, և նոր ծիծեռներ եկան. կենցաղասեր մարդիկ տեսան և ուրախացան, բայց նրանք երբեք չկարողացան տեսնել իրենց անձկալիներին: Գարնանային ծաղիկները նրանց միտն էին բերում իրենց հավատարիմ ամուսիններին, բայց նրանց աչքերը կարոտ մնացին նրանց երեսների ցանկալի գեղեցկությունը տեսնելու: Շատ արձաններ էին կանգնեցված նրանց անվանը, և ամեն մեկի անունը նշանակված էր նրանց վրա...

Աստվածաշունչ

Աստվածաշունչը բացահայտում է աշխարհի ծագման և մարդու խորհրդի ու գոյության իմաստը: Դա Մուրբ գրքերի ժողովածու է, որ 1500 տարիների ընթացքում, Մուրբ Հոգով ներշնչված, գրել են մոտավորապես չորս տասնյակ հեղինակներ: Աստվածաշունչը Հին ու Նոր կտակարանների կամ Հին և Նոր Ուխտի գրքերի ամբողջությունն է:

«Աստվածաշունչը» քրիստոնեական կրոնի հիմքն է, Աստծո գոյության և մարդկանց հարաբերության, Աստծո պատգամների և կյանքի մատյանը. այն Աստծո խոսքն է: «Աստվածաշունչը» պարունակում է 75 գիրք. «Հին կտակարանը»՝ 48 գիրք, «Նոր կտակարանը»՝ 27 գիրք: «Աստվածաշունչում» ընդգրկված են Հին Արևելքի, Միջագետքի, ասորաբաբելական, քանանյան, փյունիկյան և եգիպտական աշխարհների գրույցները, առակները, պատմությունները, հոգևոր երգերը, իմաստությունն ու փորձը՝ ձևավորված բարոյագիտական չափանիշներով, բոլոր ժամանակների համար բարձր, առաջադիմական և լուսավոր գաղափարներով: «Աստվածաշունչը» բարոյական սկզբունքների մի հարուստ շտեմարան է, որ հազարամյակներ շարունակ ուղեցույց է հանդիսացել մարդկության և հատկապես քրիստոնյա աշխարհի համար: Այն իր հիմնական բովանդակությամբ մի հին ժողովրդի փոթորկալից իրադարձություններով լեցուն կյանքի բազմադարյան պատմությունն է, նրա հոգևոր և մտավոր կյանքի հանրագիտարանը, գեղարվեստական մտածողության բարձր արտահայտությունը:

«Աստվածաշնչի» ձևավորումից մոտ 250-300 տարի առաջ Բաբելոնի թագավորության վեցերորդ տոհմի / դինաստիայի/ արքա Համուրաբի կազմած օրենսգիրքը, ստեղծված Ք. ա. 1870-1750 թվականներին, հայտնի էր այն ժամանակվա աշխարհին: Այդ օրենսգիրքը բաղկացած էր 282 հոդվածներից, որոնք ընդգրկում էին համարյա այն բոլոր բարոյական, հասարակական, քաղաքական օրենքները, որոնք «Աստվածաշունչ» գրքի միջոցով հետագայում կյանքի կոչվեցին հրեա ժողովրդի առօրյայում:

«Աստվածաշունչ» արտահայտությունը միայն հայերենը ունի, այլ ազգեր չունեն այդ իմաստով բառ. նրանց գործածած բառը՝ բիբլիա, միայն մեկ իմաստ է արտահայտում՝ գիրք կամ սուրբ գիրք:

Առաջին տպագիր գիրքը աշխարհում Աստվածաշունչն է /Գուտենբերգի Աստվածաշունչ, 1452-55թ.թ./:

Կույրերի առաջին Աստվածաշունչը տպագրվել է 84 լեզվով՝ **Բռայլի** տպատառով: Բռայլյան համակարգը 6 կետերի զուգորդումներով կազմված գրության համակարգ է:

Հայ բանաստեղծներից առաջինը, որի գործը լույս է տեսել տպագրությամբ, Գրիգոր Նարեկացին է. «Մատյան ողբերգության» պոեմից մի հատված գետեղվել է հայ առաջին տպագիր գրքում՝ «Ուրբաթագր-

քում» /1512թ./: Առանձին գրքով ամբողջությամբ առաջինը տպագրվել է Ներսես Շնորհալու «Հիսուս որդի» պոեմը /1643թ./: Առաքել Գավրիթեցին առաջին հայ պատմիչն է, որի «Պատմությունը» լույս է տեսել իր կենդանության օրոք /1669թ./:

Շատ բարձր են գնահատում Հռոմի պապի գնահատականը և այն քայլը, որ Հայոց եկեղեցու Սուրբ Գրիգոր Նարեկացուն դասեց Տիեզերական Եկեղեցու վարդապետների շարքը: Սա շատ մեծ գնահատություն է: Վարդապետը Տիեզերական Եկեղեցու ուսուցիչն է, գիտնականն է: Նարեկացին ոչ միայն գեղարվեստի վարպետ էր, այլև խոշորագույն աստվածաբան: Ամբողջ Աստվածաշունչը կա նրա գրքում: Այդ բնագավառում մեր գրականության, հոգևոր արժեքների առջև հիմա շատ մեծ ճանապարհ է բացվում...

Գավիթ Գասպարյան

Հիսուս Քրիստոսի ուսմունքը կոչվում է Ավետարան: Բառը հունարեն է և նշանակում է բարի լուր, ավետիս: Ավետիս այն մասին, որ «Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ով որ նրան հավատա, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»:

Հիսուս Քրիստոսը ծնվել է 1 թվականին Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում: Հայաստանյայց առաքելական եկեղեցին նրա ծննդյան օրը համարում է հունվարի 5-ի լույս 6-ի գիշերը, արևմտյան եկեղեցիները՝ կաթոլիկ, բողոքական և այլն, դեկտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը: Նրա ծննդյան օրը մարդիկ ողջունում են միմյանց՝ «Քրիստոս ծնավ և հայտնեցավ» և պատասխանում՝ «Օրհնյալ է ծնունդը Քրիստոսի» արտահայտություններով:

Չատիկին միմյանց ողջունում են «Քրիստոս հարյավ ի մեռելոց, մեզ և ձեզ մեծ ավետիս» և պատասխանում են «Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի» խոսքերով:

301թ. Սուրբ Գրիգոր Լուսավորչի քարոզչությամբ ու ջանքերով և Տրդատ Գ Մեծ թագավորի հրովարտակով քրիստոնեությունը հռչակվեց որպես պաշտոնական և պետական կրոն: Հայ եկեղեցին կոչվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցի: Առաքելական է կոչվում, որովհետև այն հիմնադրել են Հիսուս Քրիստոսի առաքյալներ Ս. Թադեոսը և Ս. Բարդուղիմեոսը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու առաջին և Մայր եկեղեցին ս. Էջմիածին Մայր Տաճարն է, որը կառուցվել է 301-303 թ.թ.

Վաղարշապատ/ Էջմիածին/ քաղաքում: 302 թվականին Գրիգոր Լուսավորիչը դարձել է եպիսկոպոսապետ՝ կաթողիկոս: Նա հայոց առաջին կաթողիկոսն է:

387 թվականից մինչև իր կյանքի վերջը՝ 439 թվականը, հայոց կաթողիկոս է եղել Սահակ Պարթևը: Նրա անմիջական օգնությամբ և մասնակցությամբ է Մեսրոպ Մաշտոցը իրականացրել իր մեծ առաքելությունը: Մ. Մաշտոցը և Ս. Պարթևը մասնաճյուղի քանադասներն էին:

Հայաստանում հովվապետական աթոռը փոխանցվել է ժառանգաբար՝

1. Գրիգոր Լուսավորիչ /ծնողներ՝ Անակ, Ոգուհի/
2. Վրթանես /Միայնակյաց/
3. Արիստակես
4. Հուսիկ
5. Ներսես
6. Սահակ

Բոլորն էլ ազգությամբ պարթևներ էին: Սահակից հետո ժառանգական գիծն ընդհատվում է, որովհետև Սահակն ուներ մեկ աղջիկ՝ Դուստր անունով, որին կնության է տալիս Համազասպ Մամիկոնյանին, որից էլ սերվում է Վարդան սպարապետը:

Վարդան Մամիկոնյանի Շուշանիկ դուստրը, որը հայտնի էր իր բարեպաշտությամբ և բարեգործություններով, Ավարայրի ճակատամարտից հետո շղթայվեց ուրացող ամուսնու ձեռքով, յոթ տարի ենթարկվեց դաժան ծեծերի ու անարգանքի, 45 տարեկան հասակում մահացավ իր անլույս բանտում՝ չիրաժարվելով հայրենավանդ սրբություններից և Սահակ Պարթև պապից հիշատակ մնացած փոքրիկ Ավետարանից:

Ամենահին կրոնը բուդդիզմն է՝ Ք.ա. 6-5-րդ դարեր, ամենատարածվածը կրոնը՝ իսլամը՝ 7-րդ դար, արաբներ:

Լացի/ողբի/պատ՝ Երուսաղեմի տաճարի արևմտյան պատը, որտեղ հավաքվում են հրեաները՝ ողբալու իրենց տաճարի կորուստը:

Տերունական աղոթք

գրաբար

Հայր մեր, որ յերկինս ես,
սուրբ եղիցի անուն քո:
Եկեսցէ արքայութիւն քո:
Եղիցին կամք քո
որպէս յերկինս եւ յերկրի:
Չհաց մեր հանապազորդ
տուր մեզ այսօր:
Եւ թող մեզ զպարտիս մեր,
որպէս և մեք թողումք
մերոց պարտապանաց:
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա զմեզ ի չարէ:
Չի քո է արքայութիւն
եւ զօրութիւն եւ փառք
յաւիտեանս
Ամէն:

աշխարհաբար

Հայր մեր, որ երկնքում ես,
Քո անունը թող սուրբ լինի,
Քո կամքը թող լինի՝
Ինչպէս երկնքում, այնպէս էլ
երկրի վրա,
Մեր ամենօրյա հացը տուր մեզ
այսօր:
Եվ մեզ ներիր մեր պարտքերը,
Ինչպէս մենք կներենք մեր
պարտապաններին
Ու մեզ փորձության մի տանի,
Այլ փրկիր մեզ չարից,
Քանի որ քունն է
թագավորությունը,
Չորությունը և փառքը
հավիտյանս հավիտենից,
Ամէն:

Աստվածաշնչյան խրատներ

Իմաստությունն ավելի թանկ արժե, քան ոսկու և արծաթի գանձերը:
Մի՛ հապաղիր կարոտյալին բարություն անել, երբ քո ձեռքը կարող է
օգնել նրան:

Չասես, թե՛ գնա, կգաս՝ վաղը կտամ, մինչդեռ կարող ես բարու-
թյունդ անել, քանի որ չգիտես, թե վաղն ինչ է բերելու քեզ:

Հարգիր քո հորն ու մորը, որպեսզի քո օրերը երկար լինեն և քեզ հա-
մար լավ լինի...

Ինչ աղբյուրից մարդ ջուր խմի, էն աղբյուրին քար չի գցի:

Ով երկու հանդերձ ունի, թող մեկը չունեցողին տա: Եվ նա, ով կերա-
կուր ունի, թող նույնը անի...

Այն ամենը, ինչ որ ուզում եք, որ մարդիկ ձեզ անեն, նույնը դուք արեք
նրանց:

Ով մշակում է իր հողը, պիտի կշտանա հացով, իսկ ով դատարկ
սպանում է օրը, նա պակասամիտ է:

Լավության փոխարեն ով որ չարություն հատուցի, նրա տնից չարի-
քը չի հեռանա:

Մարդու հետ զուր տեղը մի՛ վիճիր, եթե նա քեզ շարություն չի արել:
Հեռո՛ւ պահիր ստախոսությունը քո բերանից...

Խելացի՛ եղիր քո կյանքի բոլոր ճանապարհներին:

Մի՛ գնա ամբարիշտների ճանապարհով և մի՛ նախանձիր անօրեն-
ների ճանապարհներին:

Արդարների ճանապարհները նման են ծագող լույսի... իսկ ամբա-
րիշտների ճանապարհները նման են խավարի...

Լավ է խոնարհամիտ լինել խոնարհների հետ, քան թե ավար բաժա-
նել հպարտների հետ:

Բոլորովին մի՛ երդվեք... ձեր խոսքը թող լինի՝ այո-ն՝ այո և ոչ-ը՝ ոչ...

Տուր նրան, ով քեզնից խնդրում է, և ով կամենում է քեզնից փոխ առ-
նել՝ երես մի՛ դարձրու նրանից... Խնդրեցե՛ք և կտրվի ձեզ, փնտրեցե՛ք
և կգտնեք, թակե՛ք դուռը, և այն կբացվի ձեր առջև:

Իմաստուն որդին ուրախացնում է հորը, անմիտ որդին տրտմություն
է հոր համար:

Ծերանաս՝ ծերի դադրը կիմանաս...

Որդին բռունը ձվածեղ էլ անի, մոր ամակի /երախտիք/ տակից չի
կարա դուրս գալ:

Աշխարհում ամեն ինչ կճարվի, բացի հերն ու մերը:

Սողոմոն Իմաստունի պատվիրանները

Աղքատների կողքով անցնելիս մի բան տուր:

Մեծահասակների կողքով անցնելիս՝ խոնարհվիր:

Հարազատների կողքով անցնելիս՝ հասկացիր:

Գիտելիքների կողքով անցնելիս՝ վերցրու:

Խղճի կողքով անցնելիս՝ վախեցիր:

Որբերի կողքով անցնելիս՝ ծախսիր:

Սողոմոն Իմաստունի մատանու վրա գրված էր՝ «Ամեն ինչ կանցնի:
...Սա էլ կանցնի»:

Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական աթոռները

1. Ամենայն հայոց կաթողիկոսություն
2. Աղթամարի կաթողիկոսություն
3. Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսություն
4. Սյունյաց մետրոպոլիտություն
5. Աղվանից /Գանձասարի/ կաթողիկոսություն
6. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն
7. Երուսաղեմի հայոց պատրիարքություն

Ե՞րբ է բեմադրվել Սուրբ Ծննդյան առաջին ներկայացումը

Սուրբ Ծննդյան ներկայացումները մեծ ժողովրդականություն են վայելում քրիստոնյա աշխարհում: Սուրբ Ծննդյան ներկայացումն առաջին անգամ բեմադրվել է 13-րդ դարում՝ Հռոմի Պապի անվանակից Սուրբ Ֆրանցիսկ Ասիզացու կողմից:

Քանի որ այդ դարաշրջանում եկեղեցական արարողությունները կատարվել են լատիներեն լեզվով, և հասարակ մարդիկ չեն կարողացել հասկանալ, Ֆրանցիսկը որոշել է մարդկանց առավել հասանելի ու ինտերակտիվ ճանապարհով պատմել Սուրբ Ծննդյան մասին:

Դեպքի միակ վկան ու գրառողը եղել է նրա օգնականը, ով պատմում է, որ Ֆրանցիսկը ներկայացումները բեմադրել է Իտալական Գրեցիո քաղաքից դուրս գտնվող քարանձավներից մեկում:

Նա օգտագործել է իրական կենդանիներ, մոմե արձան՝ Հիսուսին ներկայացնելու համար, երկու դերասան՝ Մարիամի և Հովսեփի դերի համար: Այս ամենն արվել է, որպեսզի մարդիկ պատկերավոր կերպով տեսնեն և լսեն Հիսուսի ծննդյան պատմությունը:

Ֆրանցիսկը, ով ներկայացումների ժամանակ մեծ ոգևորությամբ պատմել է Սուրբ Ծննդի մասին, երբեք չի նշել Հիսուսի անունը, այլ Նրան անվանել է «Բեթղեհեմի մանուկ»:

«Սուրբ Ֆրանցիսկ Ասիզացու կյանքը» գրքում նրա օգնականը գրում է.«Տղամարդիկ ոգևորությամբ էին լցվել, մարդիկ իրար էին խառնվել, անտառը լցվել էր ձայներով ու բացականչություններով. այդ գիշերը լցված էր շատ լույսերով և փառաբանության սաղմոսներով:

Աստծո ծառան կանգնած էր մսուրի առջև՝ մեծ նվիրումով լցված և արցունքներն ու անսահման ուրախությունն աչքերում...»

Այդ առաջին բեմադրությունը մեծ արձագանք է ունեցել և վարակել Եվրոպայի մյուս քաղաքներն ու գյուղերը:

Ամենուրեք սկսել են բեմադրել այս ներկայացումը և ամեն անգամ զարգացնելով այն՝ ավելացրել նոր կերպարներ՝ իմաստուններին, հովիվներին, հրեշտակներին:

Մինչ օրս Քրիստոսի ծննդի մասին պատմվող ներկայացումներ բեմադրվում են, բայց արդեն ավելի պատկերավոր, հարուստ տեխնոլոգիաներով:

Ամենուր մարդիկ պատմում են. «Որովհետև մեզ համար մի մանուկ ծնվեց, մեզ մի որդի տրվեց, և իշխանությունը կլինի նրա ուսի վրա, և նրա անունը կկոչվի Սքանչելի, Խորհրդական, Հզոր Աստված, Հավիտենականության Հայր, Խաղաղության իշխան» (Եսայիա 9.6):

Տոնածառ

Ծննդյան տոներին տանը զարդարված եղևնի դնելու սովորույթը գալիս է Գերմանիայից: Այս մասին առաջին գրավոր հիշատակությունները վերաբերում են 17-րդ դարի սկզբին: Գերմանական ավանդությունը այս սովորույթը վերագրել է Մարտին Լյութերին, որը ձմռան մի գիշեր անտառով քայլելիս տեսնում է եղևնիների ճյուղերի արանքից վառ փայլող աստղերը: Այդ տեսարանը հիացնում է Լյութերին, և նա որոշում է Ծննդյան տոնին մոմերով զարդարված մի ծառ դնել իր տանը: Այսպես առաջացավ տոնածառը:

Մանտա Կլաուս կամ պարզապես Մանտա, դիցաբանական, լեգենդային, ֆոլկլորային և պատմական արմատների վրա հիմնված գեղարվեստական կերպար, ով, ըստ արևմտյան քաղաքակրթության ներկայացուցիչների, ամեն տարի դեկտեմբերի 24-ի երեկոյան, այսինքն՝ կաթոլիկ Սուրբ ծննդի նախօրեին այցելում է երեխաների տները և նրանց թաքուն նվերներ է բաժանում: Մանտա Կլաուսի կերպարը հիմնված է Սուրբ Նիկողայոսի իրական անձի վրա:

Սկզբնապես եվրոպական երկրներում ընդունված էր դեկտեմբերի 6-ին՝ եկեղեցական օրացույցով Սուրբ Նիկոլայի օրը, երեխաներին տալ նվերներ նրա անունից: Մակայն Ռեֆորմացիայի դարաշրջանում, երբ հավանություն չէին տալիս սրբերի երկրպագությանը, Գերմանիայում և սահմանակից երկրներում այն անձը, որը բաժանում էր նվերներ, դառնում էր մանուկ Քրիստոսը, իսկ նրա ծննդյան օրը դեկտեմբերի 6-ից տեղափոխվեց և դարձավ դեկտեմբերի 24-ը:

Հիսուս Քրիստո՞ս, թե՞ Մանտա Կլաուս

Մանտա Կլաուսն ապրում է Հյուսիսային բևեռում:

Հիսուսն ամենուր է:

Մանտան երթևեկում է սահնակով:

Հիսուսը քայլում է քամիների և ջրերի վրայով:

Մանտան գալիս է տարին մեկ անգամ:

Հիսուսը միշտ քեզ հետ է, երբ դու օգնության կարիք ունես:

Մանտան քեզ նվիրում է գեղեցիկ իրեր:

Հիսուս լրացնում է քո բոլոր կարիքները:

Մանտան քո ծխնելույզով ներս է մտնում առանց հրավերի:

Հիսուսը կանգնած է քո սրտի դռան առջև և թակում է այն, ու քո սիրտ կմտնի այն ժամանակ, երբ բացես դուռը:

Մանտային տեսնելու համար դու ստիպված ես հերթ կանգնել:
Հիսուս քեզ մոտ կլինի այն պահին, երբ կանչես Նրա անունը:
Մանտան թույլ է տալիս քեզ նստել իր ծնկներին:
Հիսուսը թույլ է տալիս քեզ հանգստանալ իր գրկում:
Մանտան չգիտի քո անունը: Նա միայն կարող է քեզ ասել՝ «Ողջո՛ւյն, փոքրի՛կ տղա կամ աղջիկ, ի՞նչ է քո անունը»:
Հիսուսը գիտեր քո անունը նախքան կծնվեիր: Նա ոչ միայն գիտեր մեր անունը, այլև մեր հասցեն, պատմությունը և ապագան: Նա նույնիսկ գիտի, թե քանի մազ կա մեր գլխի վրա:
Մանտան ունի գնդի պես փոր՝ լցված ժելեով:
Հիսուսն ունի սիրով լեցուն սիրտ:
Մանտան ասում է՝ ավելի լավ է չլացես:
Հիսուսն ասում է՝ քո բոլոր հոգսերը տուր ինձ, որ ես հոգամ դրանց մասին:
Մանտայի փոքրիկ օգնականները պատրաստում են խաղալիքներ:
Հիսուսը ստեղծում է նոր կյանք, վերականգնում է վիրավորված սրտերը, նորոգում է կոտրված տները, կառուցում մեր կյանքը:
Մանտան կարող է քեզ ծիծաղեցնել, բայց...
Հիսուսը տալիս է քեզ ուրախություն, որը քո ուժն է:
Մինչ Մանտան նվերներ է դնում տոնածառի տակ,
Հիսուս դարձավ մեր նվերը և մահացավ մեզ համար:
Մենք պետք է հիշենք, թե ում համար է Սուրբ Ծնունդը:
Հիսուս շարունակում է մնալ Սուրբ Ծնունդի պատճառը...

Ճանաչենք մեր ազգային տոները

Ըստ ավանդության՝ Հիսուս Քրիստոսը, Հրեաստանի Բեթանիա գյուղից դուրս գալով, գնում է Երուսաղեմ՝ թագավորություն հաստատելու: Այդ իմանալով՝ ժողովուրդը մեծ խմբերով շարժվում է դեպի Երուսաղեմ: Երբ Հիսուսը ավանակի վրա նստած մտնում է քաղաք, մարդիկ մեծ ցնծություն են ապրում, նրան դիմավորում են անասհման ուրախությամբ: Շատերն իրենց զգեստներն էին հանում ու փռում նրա ճանապարհին, մեծերն ու երեխաները արմավենիների ճյուղեր ու ծաղիկներ էին սփռում նրա ոտքերի տակ: Բոլորը բացականջում էին.

-Օրհնություն նրան, որ գալիս է Տիրոջ անունով...

Այդ կիրակին, ի նշանավորումն Քրիստոսի մուտքի, եկեղեցու տոների շարքն է մտել Ծաղկազարդ անունով:

Հայ մարդը միշտ առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել դեպի ծառն ու ծաղիկը. դրանք դարձրել է պաշտամունքի առարկաներ: Այդպես սկիզբ է դրվել մի տոնի, որ հայտնի է Ծաղկազարդ անունով: Ծառապաշտության օրինակ է Ծննդյան տոներին ու Նոր տարուն եղևինն զարդարելը, նրա շուրջը ուրախ տոնախմբություններ կազմակերպելը: Այդ ուրախ տոնի հետ է կապվում նաև ձու ներկելը՝ որպես զարնան, զարթոնքի, վերածննդի խորհրդանիշ: Ձու ներկելու սովորույթը գալիս է հեթանոսական շրջանից, իսկ հետո այն կապվեց քրիստոնեական մեծ տոնի՝ Չատիկի, Քրիստոսի հարության հետ: Այդ օրերին, որոնք շարժվում են մարտի 21-ից մինչև ապրիլի 26-ը, տեղի է ունենում նաև ծառատունկ:

Մարդկային ոգին և՛ տիեզերքի չափ մեծ է, և՛ մոր սրտի պես փխրուն: Դու կարող ես մի կերպ ապրել՝ լսելով մեկ կամ մի քանի մարդկանց ողբն ու լացը: Բայց դու չես դիմանա, եթե քո սրտին հասնեն բյուր մարդկանց հառաչանքն ու լացուկոծը: Հենց դրանով էլ աստված սեղմել է մարդու լսողության շառավիղը, որ պաշտպանի մարդուն:

Կրոնը կանացի գեղեցկության մեջ տեսել է իր ոխերիմ թշնամուն: Քրիստոնեությունը նրան անվանել է «դժոխքի ծնունդ»: Իսլամը գեղեցկությունը քողարկել է չաղրայի ետևում: Սողոմոն թագավորը հասարակ, դեռատի Սուլամիթայի համար կորցնելով ողջախոհությունը, նրան համեմատել է ամենագեղեցիկ ծաղկի հետ/ «Երգ երգոց»/:

Ժողովուրդների պատմության հին շրջաններում, կայուն **տոմարի** թվականության օգտագործման բացակայության պայմաններում ընդունված էր պատմական անցքերի ժամանակը կապել նշանավոր անհատների, մասնավորապես՝ թագավորների տիրապետության տարեթվերի հետ: Այսպես, օրինակ, հայ գրի ու գրականության սկզբնավորման կոնկրետ ժամանակին վերաբերող առաջին վկայությունը Կորյունն իր «Վարք Մաշտոցի» երկում ձևակերպում է այսպես՝ «...ի վեցերորդ ամի Վռամշապուհից արքային Հայոց Մեծաց»:

Ժողովուրդների մեծամասնության կողմից այժմ ընդունված տոմարն սկսվում է Հիսուս Քրիստոսի ծննդյան թվականով, իսկ մահմեդական տոմարի սկիզբը ճանաչվել է Մուհամեդի՝ Մեքքայից Մեդին փոխադրվելու տարեթիվը՝ մ.թ. 622 թ.:

Հին հույներից շատերն են հեռավոր ճանապարհորդություններ կատարել: Մեզ հայտնի հույն առաջին ճանապարհորդը Հերոդոտոսն է: Նա իր «Պատմություն» նշանավոր աշխատության մեջ շատ տեղեկու-

թյուններ է հաղորդում իր այցելած երկրների ու նրանց բնակիչների սովորությունների, արհեստների մասին: Այդ աշխատության մեջ արժեքավոր տեղեկություններ կան Ք.ա. 5-րդ դարի Հայաստանի և նրա ու Սիջագետքի երկրների միջև կատարվող առևտրի մասին:

Հայերենում Օրիոնի գոտին ունի միայն իրեն հատուկ՝ «Հայկի շամփրուք» կամ «շամփրուք - կշիռք» անվանումը, որը նշանակում է «հավասարակշռության առանցք»:

Պատմության մեջ պահպանվել է մի գեղեցիկ ավանդույթ, որի համաձայն՝ օգոստոսի 10-ի լույս 11-ի գիշերը ժողովուրդն արքայի գլխավորությամբ հավաքվում էր Նպաստ լեռան ստորոտին՝ Արածանի գետի ափին, և սպասում աստղի երևալուն: Տոնակատարությունը շարունակվում էր մի քանի օր և ավարտվում համընդհանուր տոնախմբությամբ:

Նավասարդը տոնում էին Հայկի տարած հաղթանակի պատվին, այդ պատճառով այն նշում էին մ.թ.ա. 2492 թվականից մինչև XVIII դարի սկիզբը, երբ կաթողիկոս Սիմեոն Երևանցու հրամանով Նոր տարվա սկիզբ պաշտոնապես համարվեց հունվարի 1-ը:

2007 թվականի օգոստոսի 11-ին Հայաստանում հին հայկական տոմարով նշեցին 4500 թվականը:

Քրիստոնեության ընդունումից հետո Հայաստանում հին հայկական օրացույցը դուրս եկավ կիրառումից և հետզհետե մոռացվեց: Միջին դարերում Մեծ հայկական օրացույցը, որից օգտվում էին այն ժամանակ, շարժական էր, ինչը շփոթմունք էր առաջացնում տոն օրերի սահմանման հարցում:

«Այս առիթով 1082 թվականին Հովհաննես Իմաստասերին խնդրեցին կարգավորել տոն օրերը և հայկական օրացույցն անշարժ դարձնել: Եվ այդ ժամանակ Իմաստասերը շրջանցեց բոլոր մյուս ամսաքվերն ու Ամանորը սահմանեց օգոստոսի 11-ին»:

Այն ժամանակ բոլորի համար գաղտնիք էր, թե ինչու էր ընտրված հենց օգոստոսի 11-ը: Իմաստասերի՝ Մատենադարանում պահվող մի շարք ձեռագրերի ուսումնասիրությունից հետո գիտնականները եկան այն եզրակացության, որ նա հիմնվել է հին հայերի գիտելիքների վրա, որոնց համաձայն՝ այդ ժամանակ երկնքում որոշակի նշան էր հայտնվում: Այդպիսով, օգոստոսի 11-ը նշանակալի օր էր ժամանակի սկիզբը մատնանշելու համար:

Իսկ ի՞նչ կարող ենք մենք վերցնել գրաբարից՝ այս թեման բացահայտելու համար:

«Աստղի «ասե» արմատը նշանակում է ճշմարիտ, չխեղաթյուրված տեղեկություն պարունակող, այսինքն ճշմարտություն, իսկ «տաղ»՝ վերևից եկող տատանման հաճախականություն: Այդպիսով, աստղ բառի իսկական գաղափարական նշանակությունն է՝ «վերևից եկող ճշմարտություն»:

Ինչո՞ւ ենք մենք անդադար վերադառնում օգոստոսի 11-ին, այն դեպքում, երբ մեր կյանքում իր դիրքերն ամուր հաստատել է հունվարի 1-ը:

Պատասխանը «Նավասարդ» բառի մեջ է, որը մեկնաբանվում է այսպես՝ «նոր ասի ժամանակաշրջան»:

Ի՞նչ է դա նշանակում: Այն, որ երբ Օրիոնի գոտին հասնում է երկնային հասարակածին, վերականգնվում է ոչ միայն տարեկան ցիկլը, այլև Երկրի էներգատեղեկատվական դաշտը: Դա մեծ ազդեցություն է թողնում բնության վրա և, առաջին հերթին, ջրի՝ փոխելով նրա հատկությունները: Մոլորակի ջրային համակարգը կարծես թարմանում է այդ օրերին, յուրովի վերբեռնում է տեղի ունենում (այդ երևույթները գիտնականները քազմիցս արձանագրել են տարբեր սարքավորումների միջոցով):

Այսպիսով՝ օգոստոսի 11-ը պատահական ամսաթիվ չէ, այն տիեզերական-մոլորակային մասշտաբի գործընթացների սկիզբն է:

Գիտնականները համոզված են՝ սա միստիցիզմ չէ: Հակառակը՝ սա գիտություն է, որի ուսումնասիրությունը հանրությանը միայն օգուտ կբերի: Հետաքրքիր է, որ այդ տեղեկությունը գաղտնի չի եղել մեր նախնիների համար, ավելին՝ նրանք այդ մասին պատմել են մյուս ժողովուրդներին:

Ազգային ժողովրդական տոները հին են, որքան հայ ժողովուրդը: Ամեն մի տոն ունի իր պատմությունը... Հնագույն տոներից ամենամեծն ու տարածվածը Նավասարդն է՝ Նոր տարին: Այդ տոնը հին հայերը նշում էին մեծ շուքով և հանդիսավորությամբ. կազմակերպում էին երգեր ու պարեր, խաղեր ու ձիարշավներ: Ընդունված էր դիմակի գործածությունը:

Նավասարդ՝ առաջին ամիս: Նավասարդ անունը պարթև-իրանական ծագում ունի և կազմված է երկու բառից, Հայկական տոմարի՝ նավա-նոր և սարդ-տարի, այսինքն՝ Նոր տարի:

Նավասարդը ամռան վերջին ամիսն է՝ «ոսկե աշնան» նախադուռը: Նավասարդի օրերին հասնում են հայկական հողի ու ջրի բարիքները՝ խաղողն ու տանձը, դեղձն ու ձմերուկը:

Նավասարդ ամիսն ունեցել է 30 օր, սկսվել է օգոստոսի 11-ին և վեր-

ջացել սեպտեմբերի 9-ին: Հին հայերի համար Նավասարդի 1-ը (օգոստոսի 11-ը) եղել է ժողովրդական խրախճանքների տոն:

Հայկական բոլոր ընտանիքներում Նավասարդը դիմավորում էին մեծ խրախճանքով: Այդ օրը յուրահատուկ կերակուրներ և ուտելիք էին պատրաստում: Ճոխ սեղան էին բացում և ընտանիքի բոլոր անդամներն ուրախությամբ էին դիմավորում Նավասարդը:

Կար նաև տոպրակ կախելու սովորությունը: Երդիկներից կախում էին գույնզգույն գուլպաներ, այն ակնկալությամբ, որ դրանց մեջ Նոր տարվա նվերներ կհայտնվեն:

Նավասարդյան օրերը կրում էին փաստորեն ազգային-ժողովրդական բնույթ: Իշխում էին զվարճությունը, տոնահանդեսները, երգն ու պարը: Մեծարում էին Անահիտ ու Աստղիկ աստվածուհիներին, ինչպես նաև Վահագն դյուցազնին, որոնք ժողովրդի մոտ բարի համբավ ունեին:

Նավասարդի օրերին Բագավանը հանդիսավոր տեսք էր ստանում: Տոնակատարությանը ներկա էր լինում թագավորն իր շքախմբով: Դուրս էր բերվում նաև բանակը:

Պատմում են, որ մինչև հարյուր քսան հազար զինվորականներ էին մասնակցում: Այդ օրը Արածանիի ափին կարելի էր տեսնել գույնզգույն վրաններ, գետափն ստանում էր վրանաքաղաքի տեսք՝ տարածվելով դաշտերի և բլուրների վրա: Վրանների մեջ շքեղագույնն էր ոսկեդիպակ վրանը, որը թագավորինն էր, ապա աչքի էին զարնում նախարարների վրանները, որոնք մեկը մյուսից գեղեցիկ էին: Ուխտավորների բազմության մեծ մասը ժամանակը անց էր կացնում ծառերի տակ: Ի դեպ, հնում Բագրևանդը, այդ թվում նաև Բագավանը ծառազարդ են եղել, որը հետագայում կտրատեցին նվաճողները: Ուխտավորները գոհաբերության համար բերում էին խոյեր, աղավնիներ, խոշոր եղջերավոր անասուններ, որոնց եղջյուրները ներկում էին զանազան գույներով: Գիշերները խարույկ էին վառում, որոնց բոցերի վրայով ցատկում էին երեխաները և պատանիները, չար ոգիներից ազատ լինելու համար: Նավասարդյան տոնի առթիվ հավաքված բազմությունը իր հետ բերում էր նաև տարվա պտուղների առաջին բերքը: Այդ ժամանակ կատարվում էին մեծահանդես արարողություններ, տեղի էին ունենում ձիարշավներ, եղջերուների վազք և բաց էին թողնում հազարավոր աղավնիներ: Նավասարդի կամ Ամանորի աստվածը հայ դիցաբանության մեջ համարվում էր պտուղների պահապանը և մարդկանց կերակրողը: Նրա արձանը գտնվում էր Բագավանում, որը հեթանոս հայերի նշանավոր ուխտատեղիներից մեկն էր: Այստեղ կառուցված էր մի առանձին հյու-

րանոց, ուր պատասպարան էին գտնում և կերակրվում օտարական ան-
ցորդները և եկվոր ուխտավորները:

Ամանորը կոչվում է նաև «կաղանդ», որը հունարեն լեզվից է և նշա-
նակում է «ամսագլխի օր», «ամսագլուխ», «ամսամուտ»: Ժամանակի
ընթացքում ամանոր, կաղանդ և տարեմուտ հասկացությունները նույն
իմաստը ստացան:

Նավասարդյան խրախճանքի օրերին ամենահետաքրքիրը երգն ու
պարն էր: Տեղի էին ունենում նաև մրցումներ, ու մարզիկները ցուցադ-
րում էին իրենց բազկի, մտքի ու հոգու կարողությունները:

Նավասարդը մեծ հանդեսով տոնելու հիշատակը մնացել է նաև Ար-
տաշես Ա թագավորին վերագրած այն առասպելում, որը մեզ է հասել
Գրիգոր Մագիստրոսի միջոցով.

Ո՞վ կտա ինձ ծխանի ծուխը

Եվ առավոտը նավասարդյան,

Եղնիկների վազելը և եղջերուների վարգելը,

Մենք փող էինք փչում և թմբուկ զարկում...

Ինչպես օրենքն էր թագավորների:

Նավասարդյան աշխարհախումբ տոնակատարությունները այնու-
հետև շարունակվում էին Աշտիշատում: Այսինքն՝ Բագրևանդ գավա-
ռից տեղավոխում էին Տարոն(Մուշ), ուր գտնվում էին Հայոց «յոթ բա-
զինները» (հայերի մոտ էլ յոթ թիվը դիտվել է որպես նվիրական թիվ: Հե-
թանոս հայերն էլ նախընտրել էին կառուցել «յոթ բազին», այսինքն՝
«յոթ գոհասեղան»՝ նվիրված Արամազդին, Անահիտին, Միհրին, Նա-
նեին, Աստղիկին, Տիրին և Վահագնին: Աշտիշատում ևս մեծ հանդիսա-
վորությամբ էր նշվում Նավասարդի տոնը: Հայ ժողովուրդը այդ ավան-
դական տոնին, թե Բագավանում, թե Աշտիշատում իր դյուցազուններին
և աստվածներին պետք է հաշվետու լինել անցյալ տարվա համար.
Վահագնին՝ քաջության, Անահիտին՝ արվեստի, իսկ Աստղիկին՝ ար-
վեստի, սիրո և բանաստեղծության գործերում: Այսպիսով՝ Վահագնը՝
անվեհեր էր, Անահիտը՝ պահպանող, Աստղիկը՝ պարկեշտ, որոնք մի
տեսակ մարմնավորում էին հայ ժողովրդի առաքինությունները:

Տարին ժամանակի սահմանն է, որը վերցրած է բնությունից: Դա
այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում Երկիր մոլորակը կատարում
է մի լրիվ պտույտ Արեգակի շուրջը: Երկրի կատարած շրջապտույտը
հավասար է 934 միլիոն կիլոմետրի, որն անցնում է մեծ արագությամբ,
եթե հիշենք, որ մեկ վայրկյանում անցնում է 30 կիլոմետր:

Տարվա գաղափարը առաջին անգամ ծագել է Հին Արևելքի մշակութային կենտրոններից մեկում՝ Եգիպտոսում: Այն կապվել է Նեղոս գետի վարարման հետ: Գրանով էր պայմանավորված եգիպտացիների կյանքը, երկրագործական աշխատանքները: Նեղոսի վարարման սկիզբը համընկնում էր Սիրիուս աստղի երևալուն: Եվ ահա այդ աստղի և Նեղոսի վարարման միջև ընկած ժամանակաշրջանն էլ կոչեցին տարի:

Չնայած տարի հասկացությունը ծնվել է Հին Եգիպտոսում, այն էլ այն ժամանակվանից, երբ սկսվեց գոյություն ունենալ թվականություն, բայց տարբեր ժողովուրդներ տարբեր ամիսներ են համարել տարվա առաջին ամիսը, և տարբեր է եղել նրանց նոր տարին:

Այսպես, օրինակ, հին պարսիկների նոր տարին սկսվում էր գարնան օրահավասարից և կոչվում էր «վարդի և գինու» օր: Հետագայում այն ընդունվեց մուսուլմանական աշխարհի կողմից և ստացավ «Նովրուզ» անունը, որը այսօր էլ նշում են մեծ շուքով:

Ռուսները նոր տարին նշում էին սեպտեմբերի մեկին, անգլիացիները՝ մարտի 26-ին, իսկ Ֆրանսիայում այն զուգադիպում էր Չատկի տոնին:

Հայերի մոտ տարվա առաջին ամիսը օգոստոսն էր և կոչվում էր Նավասարդ:

Նման բազմազանությունը ժողովուրդների տնտեսական ու մշակութային փոխհարաբերություններում դժվարություններ էր առաջացնում: Ուստի XVI դարի վերջերից սկսած (1582 թ.) որոշվեց նոր տարվա սկիզբը համարել **հունվարի մեկը**: Տարեգրության մեջ ժամանակի ընթացքում ստեղծվել էին երկու տոմարներ, որոնք հիմնվում էին աստղաբաշխական հաշիվների վրա: Գրանցից մեկը կոչվում էր Հին կամ Հուլյան, մյուսը՝ Նոր կամ Գրիգորյան:

Նոր տոմարը մտցվել է Հռոմի պապ Գրիգոր XIII-րդի կողմից, Հուլյան օրացույցի փոխարեն: Այդ երկու տոմարների միջև եղած տարբերությունը կազմում է տասներեք օր:

Այսպիսով՝ հունվարի մեկը Նոր տարվա սկիզբը համարելը բնավ էլ պատմական իրադրության հետ չի կապվում և ընդունված է պայմանականորեն: Բայց ժամանակի ընթացքում այն ավանդույթի ուժ ստացավ: Այդ օրը, որը այսօր մեզ համար այնքան հարազատ ու անփոփոխարինելի է դարձել, ունի համեմատաբար նոր պատմություն:

Չնայած միջազգային մասշտաբով հունվարի 1-ը պաշտոնապես ընդունված է Նոր տարի, բայց Միջին և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում (Իրանում, Աֆղանստանում, արաբական մի քանի երկրներում) շարունակում են պահպանել իրենց ավանդական նոր տարին:

Նավասարդյան խաղեր

Հին Հայաստանում տարեմուտին կազմակերպվում էին մարզական մրցումներ, որոնք կոչվում էին Նավասարդյան խաղեր: Դրանք նաև համարվում էին տոնախմբություն, որովհետև անց էին կացվում մեծ հանդիսավորությամբ: Նավասարդյան տոնախմբությունները նվիրված էին Ամանոր աստծուն և տեղի էին ունենում օգոստոսի 11-ին: Հին հունական օլիմպիական խաղերի նման Նավասարդյան տոնախմբության ժամանակ կազմակերպվում էին ոչ միայն արվեստի, գրականության, մշակույթի տարբեր ոլորտների ներկայացուցիչների մրցույթներ, այլև բազմազան մարզական խաղերի և տարբեր մարզաձևերի մրցումներ: Տոնախմբությանը մասնակցում էին գուսաններ, բանաստեղծներ, որոնք կատարում էին իրենց ստեղծագործությունները, անց էին կացվում նաև թատերախաղերի, պարերի և երգերի մրցություններ: Մարզիկները մրցում էին վազքից, հեռացատկից, սուսերամարտից, ըմբշամարտից, գնդակախաղերից, ձիարշավից և այլն: Նավասարդի գլխավոր տոնակատարությունը տեղի էր ունենում Բագավանում:

Մրցությունների ժամանակ բանաստեղծը իր հորինած երգն էր արտասանում կամ երգում, երաժիշտը իր բամբիռն էր նվագում, ըմբիշը բազուկների գործույնն էր ցուցադրում, արհեստավորը իր պատրաստած ընտիր գործերը, գյուղացին՝ իր հողի ճոխ բարիքները: Մրցություններում հաղթողներին վարդերից վառվում և պսակներ էին հանձնում և օծում վարդաջրով: Աղավնիներ էին բաց թողնում և իրար վրա վարդաջուր շաղ տալիս: Ընդհանրապես զարդարվում էին վարդերով: Այստեղից էլ՝ **Վարդավառ**, որը նշանակում է վարդերով զարդարվել: Կազմված է վարդ և վառ բառերից: Վառ բառը տվյալ դեպքում գործածվում է փայլուն, պայծառ իմաստով: Մեր հեթանոս պապերից, նավասարդի օրերից մեզ հասավ Վարդավառի ավանդույթը: Հատկապես իրար վրա ջուր շաղ տալու սովորությունը:

Երբ չորրորդ դարի սկզբում Գրիգոր Լուսավորիչը Մեծ Հայքում տարածեց քրիստոնեական կրոնը, հեթանոսական տոներից շատերը փոխարինվեցին քրիստոնեականով: Այսպես, Վարդավառը, որը Աստղիկի տոնն էր համարվում, փոխարինվեց Հիսուս Բրիստոսի պայծառակերպության անունը կրող տոնով: Այդ տոնն էլ բնական պետք է համարվեր Մեծ գատկին և դառնար շարժական: Այսինքն՝ Մեծ գատկից իննսուն օր հետո պետք է նշվեր այն, և բնական է, որ չէր համընկնի հեթանոսական Վարդավառի օրվան: Դրա համար էլ հեթանոսական շրջանից մեզ

հասած Վարդավառը միշտ չէ, որ օգոստոսին է նշվում, երբեմն ընկնում է հուլիսին:

Ինքնին հասկանալի է, որ չորրորդ դարում քրիստոնեության մուտքը Հայաստանում չէր կարող վերացնել ժողովրդի մեջ արմատացած ու դարերով սրբագործված հեթանոսական շատ ավանդույթներ, ժողովրդական շատ տոներ պահպանվեցին, դրանց որոշ չափով տրվեց նոր բովանդակություն: Ժողովուրդը շարունակեց պահել իր խրախճանքները, թմբուկն ու գուռնան, երգն ու պարը: Ջոհին փոխարինեց մատաղը, կրակ վառելու փոխարեն մոմ վառելը և այլ ավանդույթներ:

Այնպես որ ջրի հետ կապված հեթանոսական սովորությունը պահպանվեց ժողովրդի մոտ: Վարդավառին ամենուրեք իրար վրա ջուր են շաղ տալիս: Ինչպես տեսնում ենք, Վարդավառի ավանդույթը ունի շատ վաղ պատմություն և կապված է պատմական Հայաստանում նշվող նավասարդյան աշխարհախումբ տոնակատարության հետ:

Ջրի պաշտամունքի հետ է կապված այն, որ շատ աղբյուրներ սրբագործվել և դարձել էին ժողովրդի համար ուխտատեղի: Հայաստանում գրեթե գավառ չի եղել, որ չունենա իր «Կաթնաղբյուրը» կամ «Լուսաղբյուրը»: Այդպես էին կոչում այն աղբյուրները, որոնց ջուրը ժողովուրդը համարել է մաքրիչ, առողջացուցիչ և զովացուցիչ: Ժողովուրդը այդ տեղերը դարձրել էր ուխտատեղի: Մեզ հայտնի է մաս ժողովրդական էպոսի ավանդությունից այն, որ Սասունցի Գավիթը Կաթնաղբյուրից է ջուր խմել և հզորացել: Ուխտատեղի են դարձել Արևմտյան Հայաստանում մասն շատ գետեր, որոնցից հիշվեց Արածանին (Բագրևանդում), իսկ Կոզովիտ գավառում էլ այդպիսին համարվում էր Գետ-Վարդանը, որի հետ մի գեղեցիկ ավանդություն է կապված: Պատմում են, որ Վարդան Մամիկոնյանը իր բանակով պարսիկների դեմ Ավարայրի դաշտ գնալու ժամանակ, անցնելով այս տեղից, ճանապարհին ջուր չի գտնում: Ամբողջ գորքը ծարավից ուժասպառ եղած, չի կարողանում շարունակել ճանապարհը: Վարդանը ծնկաչոք աղոթում է և այդ աղոթքից աղբյուրներ են բխում ու հագեցնում գորքի ծարավը: Այդ աղբյուրներն էլ միախառնվելով կազմում են գետ, որը հայերը Վարդանի անունով կոչում էին Գետ-Վարդան:

Էպոս

Բանահյուսական ժանրերից խոշորագույնը իր ընդգրկումներով, ծավալով, նշանակությամբ ժողովրդական էպոսն է, վիպերգությունը

կամ էպոպեան, դյուցազներգությունը: Էպոսը ձևավորվում է աստիճանաբար, ժողովրդական երգերից ու գրույցներից, և, ի վերջո, հերոսական երգերն օրգանապես միավորվում, մեկ ամբողջական ստեղծագործություն են դառնում: Այդպիսիք են շումերական, հունական, հայկական, ռուսական, կարելոֆիննական, գերմանական, հնդկական, ֆրանսիական, իսպանական, իրանական, վրացական էպոսները:

«Սասնա ծռեր» էպոսը

«Սասնա ծռեր» էպոսը /դյուցազնավեպ/ ստեղծվել է հեռավոր ժամանակներում և ամբողջացել 8-9-րդ դարերում: Այն արաբ զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի և փայլուն հաղթանակի գեղարվեստական արտահայտությունն է: Ավելի քան հազար տարի էպոսն ապրել է բանավոր կյանքով և ժողովրդական ասացողների կողմից փոխանցվելով դարից դար՝ հասել է նոր ժամանակներին: Էպոսի պատումներից մեկն առաջին անգամ հրատարակվել է 1874 թվականին: Այնուհետև գրառվել ու տպագրվել են բազմաթիվ այլ պատումներ: Դրանց հիման վրա 1939 թ.-ին կազմվել է էպոսի համահավաք բնագիրը: «Սասունցի Դավիթ» կտավի /1922 թ./ հեղինակն է Հակոբ Կոջոյանը:

Հայկական էպոսը համարվում է ամենախաղաղասեր էպոսներից մեկը աշխարհում: Այն բավականին բարձր է գնահատվում միջազգային հանրության կողմից: 2012 թվականի դեկտեմբերի 5-ին «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսի կատարողական դրսևորումները» հայտն ընդգրկվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

«Սասնա ծռերը» բաղկացած է չորս ճյուղից՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Սհեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Սհեր», որոնցից յուրաքանչյուրն ունի իր գլխավոր հերոսը: Այդ հերոսներն օժտված են գերբնական ուժով, ներկայացնում են հորից որդի արյունակցական կապը և մարտնչում են հանուն իրենց երկրի բարօրության: Հայ հերոսական էպոսի լավագույն հատկություններն առավել ընդգծված կերպով ի հայտ են եկել երրորդ ճյուղի մեջ: Իզուր չէ, որ ամբողջ ստեղծագործությունը կրում է այդ ճյուղի և նրա հերոսի անունը՝ «Սասունցի Դավիթ»: Դավիթը ժողովրդի ամենասիրելի հերոսն է: Նրա կերպարով ժողովուրդը մարմնավորել է գեղեցիկի, վեհի, բարու, ազնիվի մասին իր ունեցած լավագույն ձգտումները:

Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունը աշխարհի առջև:

Հովհաննես Թումանյան

Իր անմահ «Սասունցի Դավիթ» վեպի մեջ ժողովուրդը դրեց իր բովանդակ հոգին՝ անվերջանալի պայքարով, և դառնությամբ լի իր պատմության փիլիսոփայությունը, իր փորձը աշխարհի իրերի մասին, իր դարավոր իմաստությունը, իր նվիրական իդեալները:

Ավեգիբ Խասակյան

«Սասունցի Դավիթ» ստեղծագործմանը մասնակցել է ողջ հայ ժողովուրդը. նրա մեջ վառվում է ժողովրդական հանճարի կրակը: Հայ ժողովուրդը ստեղծեց այս էպոսը իր պատկերի նման՝ իր կյանքի ճշմարտությունը դնելով նրա մեջ:

Դերենիկ Դեմիրճյան

Մերի դուռը Հայոց աշխարհի պատմության ընդգետնյա հիշատակարանն էր: Հայկ Նահապետը բռնակալ Բելին սպանել է մ.թ.ա. 2492 թ. Նավասարդի մեկին: Դա սովորական հաղթանակ չէր, հայոց այդ առաջին հաղթանակը համայն աշխարհին ազդարարել է՝ **հայ ազգը ազատ ու ինքնիշխան ապրելու իրավունք նվաճեց բոլոր ժամանակների համար: Հայկի հաղթությունը հայոց ծննդի տիեզերական ճիչն էր:** Հայկը հավաքեց Բելի ու նրա զինվորների բոլոր զենքերն ու բանտեց Մերի դռան ընդգետնյա խորշերից մեկում:

Դա զենք արգելելու կամ բանտարկելու առաջին քայլն էր պատմության մեջ:

Ո՞վ, ի՞նչը ստիպեց քեզ, Փոքր Մեր, որ անհաղթ էիր, անպարտելի ու անմահ, հեռանալ աշխարհից, ինքնակամ գնալ ու փակվել Ազոավաքարում... Այսօր գարին դարձել է հանց մասուր, և Մերը ելել է Ազոավաքարից: Քուռկիկ Ջալալու վրնջյունը լսելի է արդեն, ու Թուր Կեծակին ծիածանվելու է Հայոց աշխարհի բոլոր կողմերում:

Դու արդեն ելել ես Ազոավաքարից ու քայլում ես հայոց հողով: Վկա՞ քո նոր անկախությունը: Այսօր դու վերջնականապես սթափվել ես քո հազարամյա նիրհից ու Վարդանանց ոգով, Նժդեհյան վստահությամբ, արքայական արժանապատվությամբ, քայլ առ քայլ վերականգնելու ես նաև քո Մեծ Հայրենիքը: Քո՛ ստքով, քո՛ ոգով, միայն քո՛ բազկի ուժով, ամբողջությամբ, առանց որևէ զիջումի, որովհետև դու քո բոլոր զիջումներն արել, ապրել ու սպառել ես արդեն հազար տարի:

Մասունցի՛ Գավիթ, որքան ուժեղ, այնքան միամիտ՝ Գավիթ, մինչև Ձենով Օհանը չկանչեց, չելար հորից... Չէի՞ր հավատում, որ հենց քեզ քափ տաս, ելնելու ես հորից, և քո ուժով, որքան էլ որ հորը խոր լինի կամ հսկա քարերով փակված... Եղե՞լ է գեթ մի դեպք, որ օտարից հոգնած՝ ապավինես միայն քո ուժին, ու սխալված ու պարտված լինես: Երբեք: Միշտ սխալվել ու պարտվել ես, երբ հույսդ դրել ես ուրիշի օգնության վրա:

Գագիկ Մինասյան
«Կրթություն», թիվ 18, 26.04.2006թ.

Աշխարհի էպոսները

Աշխարհի բոլոր ժողովուրդներն ունեն էպոսներ.

Հունական՝ «Իլիական», «Օդիսական»

Իսպանական՝ «Երգ Սիդի մասին»

Վրացական՝ «Վազրենավորը»

Հնդկական՝ «Մահաբհարաթա», «Ռամայանա»

Իրանական՝ «Շահնամե»

Ֆրանսիական՝ «Ռոլանդի երգը»

Գերմանական՝ «Նիբելունգների երգը»

Կարելաֆիննական՝ «Կալեվալա»

Էպոսների միջազգային մրցույթը կայացել է 1964-ին. հայկական էպոսը գրավել է առաջին տեղը:

...Եվ որովհետև ամեն մի ազգի ուժն ու ոգին մարմնացած է իր ազգային էպոսի մեջ, ամենայն համարձակությամբ կարող ենք էսպես ասենք, թե ազգերի դյուցազունները՝ սերբական Մարկոն, գերմանական Ջիգֆրիդը, ֆրանսիական Ռոլանդը, անգլիական Բեովուլֆն ու ռուսական Մուրոմցի Իլյան են առասպելների աշխարհից դուրս եկել մեր առաջ, ու մենք հանդիսատես ենք էս հսկաների կովին: Եվ տեսեք, թե ինչքան հարազատ են գծված ու բնորոշված սրանցից ամեն մինը:

Ահա՛ գերմանական հուժկու Ջիգֆրիդը, վեր է կացել՝ ձեռքին չեղած ամրության էն սուրը, որ դարբեն էր աշխարհի անհուն գանձերը մենակ տիրապետելու համար...

Ահա ֆրանսիական քաջարի Ռոլանդը, որոտագին հնչեցնում է իր հսկայական օլիֆանտը (փողը), օգնության է կանչում ֆրանսիական ազգային զորությունը՝ պաշտպանելու չքնաղ Ֆրանսիան...

Ահա սերբական ըմբոստ կտրիճը՝ արքայազն Մարկոն, իր Շարացի վրա, աջ ու ձախ ջարդելով՝ խորը մեխավել է սերբական ազգից շատ ավելի ուժեղ թշնամու բանակը, լողում է արյան մեջ ու աղաղակում է՝ էլ ի՞նչ անեմ, տե՛ր աստված...

Ահա անգլիական ազգային հսկան՝ ծերունի Բեովուլֆը, որ լողալու արտասովոր ընդունակություն ունի և մայրցամաք է դուրս գալիս՝ ժողովուրդներին իր հրեղեն շնչով սպանող վիշապի դեմ՝ նրան խորտակելու և նրա հավաքած անհուն գանձերը իր ազգին տանելու համար...

Ահա վերջապես և ռուսական վիթխարի գյուղացին՝ ծերուկ Իլյա Մուրոմցին, հայրենիքին սպառնացող վտանգի առջև, իշխանավորից գուր տեղը իրեն հասած վիրավորանքը մոռացության տալով, իր հսկայական գուրգն առած, գնում է անմեղ ժողովուրդն ու երկիրն ազատելու վայրագ թշնամու արշավանքից: Գնում է անհոգ, հանդարտ ու բարի, քայց հզոր ու հաստատուն: Գնում է իր «ախպերացուների» հետ:

Ի՞նչ խոսք, որ ցաք ու ցրիվ են անելու գերմանական Ջիգֆրիդի սիրած ինչերն ու տիրապետելու տենչերը, և անգլիական Բեովուլֆը շատ գանձեր է տանելու իր կղզին: Ի՞նչ կասկած, որ էս հսկաների զարկերի տակ մասնատվելու են Եվրոպայի Թուրքիան՝ Ավստրո - Հունգարիան, Ասիայի Թուրքիան, որոնք նույնիսկ էս դյուցազունների շարքում չունեն իրենց ներկայացուցիչը, և շատ բարիքների ու ազատությունների հետ միասին, որ հետևելու են մեծ պատերազմին, վերջնականապես պետք է վճռվի և Տաճկահայկական հարցը, կամ, եթե կուգեք, արդեն վճռված է: Չէ՞ որ Մուրոմցի հսկայի «ախպերացուների» թվում է և մեր Մասունցի Դավիթը, եթե միայն Մարա Մելիքի փորած հորից լուս աշխարհ է դուրս եկել:

Սակայն ավելի մեծը կա: Ժողովուրդների էպոսներն առհասարակ վերջանում են խաղաղության սրբազան խոսքով: Եվ ճշմարիտ որ, էս պատերազմից հետո չտեսնված թափով ու ծավալով է բարձրանալու խաղաղության հարցը, այլև նրա հետ միասին մի ուրիշ մեծ հարց, քաղաքակիրթ մարդու հարցը, կամ ավելի ճիշտ, մարդու հարցը :

Հովհաննես Թումանյան

Ռուսական ազգային էպոս

Ռուսական հերոսական էպոսը բաժանվում է երեք հիմնական մասերի: Ի տարբերություն մեր էպոսի՝ այնտեղ հերոսների մեջ ժառանգական կապ գոյություն չունի: Ռուսական հերոսական էպոսը բաժանվում է ժամանակագրական երեք փուլերի: Առաջինը՝ հնագույն փուլն է, որի հիմնական հերոսներն են Սվյատոգորը, Սամսոնը, Վոլխը, Սիկուլոն և

այլն: Հաջորդը միջին փուլն է, որի վառ արտահայտված կերպարը Իլյա Մուրոմեցն է և նրա եղբայրները՝ Ալյոշան, Գաբրիմյան և մյուսները: Եվ երրորդը, ավելի մեզ մոտ ժամանակագրական առումով, Նովգորոդյան փուլն է՝ Սադկո գլխավոր հերոսով:

Հունական ազգային էպոս

«Ողիսական»-ը ստեղծվել է, հավանաբար, մ.թ.ա. VIII դարում: «Ողիսականի» սյուժեն ոչ թե հերոսական է, այլ հեքիաթային, արկածային և կենցաղային: Պատմում է Իթակե կղզու արքա Ողիսեսի՝ Տրոյական պատերազմից հետո տուն վերադառնալու ճանապարհին տասը տարի տևած արկածների, ինչպես նաև՝ Իթակեում Ողիսեսին սպասող հավատարիմ կնոջը՝ Պենելոպեին բաժին ընկած փորձությունների մասին: «Ողիսականը» բաժանված է 24 գրքերի կամ երգերի: Կառուցվածքի առումով, «Իլիականի» համեմատ, «Ողիսականն» ավելի բարդ է: Պոեմն սկսվում է պատմության կեսից, իսկ նախորդող իրադարձությունների մասին տեղեկանում ենք կենտրոնական երգերից: Գլխավոր հերոսն ավելի վառ է արտահայտված: Տրոյա քաղաք-պետության արքայազն Պարիսը առևանգում է հունական Սպարտա պետության թագավոր Մենելայոսի կնոջը՝ Հեղինեին: Հեղինեն Չեսի դուստրն էր և ուներ առասպելական գեղեցկություն: Հեղինեի առևանգումը դառնում է Տրոյական պատերազմի պատճառ:

Հնդկական ազգային էպոս

«Մահաբհարաթա»

«Մահաբհարաթա»-ն հին հնդկական պոեմ-էպոս է: Այն հին հնդկական գրականության երկու մեծ պոեմներից մեկն է: Մյուս մեծ պոեմը «Ռամայանան» է:

«Մահաբհարաթան» պատմում է Բհարաթա թագավորի ժառանգների մասին: Տասնհինգ գրքերից (փարվա) կազմված պատմագրությունների, առակների, լեգենդների, երկխոսությունների, աստվածաբանական, քաղաքական, իրավական բնույթի դատողությունների, առասպելների, ծագումնաբանությունների, օրհներգերի, ողբերգերի ամբողջություն է: Համարվում է, որ նրա մեջ կա աշխարհի ամեն ինչը: Պոեմում պատմվում է ռաջաների երկու ընտանիքների միջև պայքարի մասին: Հինգ Փանդավ եղբայրներ վաղ տարիքից մնացել էին առանց հոր: Հորեղբայրն ու հորեղբոր որդիները՝ Կաուրավները, նրանց արտաքսեցին հարազատ վայրերից: Փանդավները մեծանալով դարձան հզոր դյուցազուններ:

« Ռ-ամայանա »

« Ռ-ամայանա »-ն հին հնդկական պոեմ-էպոս է: « Ռ-ամայանան » պատմում է արքայորդի Ռ-ամայի անհաջողությունների և հերոսությունների մասին:

Ռ-ամա արքայորդու թշնամիները կարողանում են նրան 14 տարով արտաքսել մայրաքաղաքից: Նրա հետ միասին կամավոր տարագրվում են նրա կինը՝ գեղեցկուհի Սիտան և եղբայրը: Նրանք բնակություն են հաստատում անտառում, իրենց ձեռքով կառուցած խրճիթում: Իրենց ու Սիտային պաշտպանելու համար եղբայրները ստիպված են լինում մարտնչել անտառում ապրող չար դևերի ու հսկաների դեմ:

Պարսկական ազգային էպոս

« Շահնամե »

« Շահնամե »-ում նկարագրվում է Իրանի պատմությունը հնագույն շրջանից մինչև Խոսրով II շահի ժամանակները՝ մինչև մահմեդականության ներթափանցումը երկիր (VII դար): Պոեմը կազմված է 50 « թագավորություններից » (փառիշահ), « թագավորությունները »՝ մեծ ասբերից (դաստաներից)՝ մի քանի տասնյակից մինչև մի քանի հազար բեյթ: Էպոսի ամենանշանավոր դաստաներից են՝ « Չալ և Ռուդաբե », « Ռոստամի յոթ քաջագործությունները », « Ռոստամ և Սոհրաբ », « Սիավուշ », « Իսֆենդիարի յոթ քաջագործությունները », « Ռոստամ և Իսֆենդիար » և այլն:

« Շահնամեում » արտացոլված է Բարու և Չարի պայքարի գաղափարը, որը հաճախ դրսևորվում է արդարության ու անարդարության հակադրությամբ. այն ներկայացված է Իրանի (Բարու աղբյուր) և Թուրանի (Չարի կողմ) անընդմեջ կռիվների գեղարվեստական պատկերներում և արդարամիտ, իդեալական տիրակալի վերաբերյալ Ֆիրդուսու գաղափարները մարմնավորող կերպարներում:

« Երգ Ռ-ոլանդի մասին »

Ֆրանսիական միջնադարյան դյուցազներգություն (1100-1125): Հիմքը կոմս Ռ-ոլանդի անձնուրաց սխրագործությունն է: Սա 778 թվականին մասնակցել է Կառլոս Մեծի Իսպանիա կատարած արշավանքին և լեռնցի բասկերի դեմ մղված ճակատամարտին: Ռ-ոլանդը զոհվել է ֆրանսիական զորքերի վերջապահ գունդը պաշտպանելիս: Էպոսը համաշխարհային դյուցազներգական գրականության գլուխգործոցնե-

րից է, որտեղ հայրենիքի սերը, հավատարմության զգացումն ու խիզախության վեհությունն արտահայտված են զուսպ, քնարական շնչով և համապարփակ ընդհանրացումներով:

Սերբական ազգային էպոս

Թուրքական բանակի դեմ 1389 թվականին մղած ահեղ ճակատամարտում կրելով պարտություն՝ Սերբիայի թագավորությունը կախման մեջ է ընկնում Օսմանյան կայսրությունից: Սերբերը թուրքերի նկատմամբ լցվում են պայքարի վճռականությամբ, ապստամբում են նրանց դեմ, արհամարհում ու մերժում օտար կրոնը: Պատմական այս իրողություններն է արտացոլում սերբական էպոսը, որի կազմում առանձին շարք են ներկայացնում արքայազն Մարկոյին նվիրված վիպական երգերը: Մարկոյի կերպարի մասին Հովի, Թումանյանը գրել է. «Նա սերբ ժողովրդի ազգային նվիրական զգացմունքների ու առաքինությունների մարմնացումն է, նրանց Սասունցի Դավիթը»:

Հայկական և հին հունական դիցարանի աստվածները

Ուրարտական աստվածների պանթեոն-դիցարանը ներկայացրել են մոտ 100 աստվածներ և աստվածություններ: Դրանցից են՝

Խալդի՝ գլխավոր աստվածը, նրա կինը Արուբանին էր,

Թեյշեբա՝ պատերազմի աստվածը, նրա կինը Խուբան էր,

Շիվինի՝ արևի աստվածը, նրա կինը Տուշպեյան էր:

Հայ ժողովուրդը, մինչև քրիստոնյա դառնալը /301 թվ./ եղել է հեթանոս, պաշտել է բազմաթիվ աստվածների: Օրինակ՝ ջրի աստված, պատերազմի, սիրո, գեղեցկության և այլն: Այս ամենը կապված է եղել այդ ժամանակվա հավատալիքների ու մշակույթի հետ: Աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ ունեն դիցաբանություն և դիցաբանական հերոսներ, այդ թվում նաև հայ ժողովուրդը: Աստվածների պատվին հայերը կառուցել են տաճարներ, որտեղ զոհեր են մատուցել՝ հաճոյանալու համար, որպեսզի աստվածները լավ աչքով նայեն իրենց: Այդպիսի մի հեթանոսական տաճար է Կոտայքի մարզում գտնվող, բոլորիս քաջ հայտնի Գառնիի հեթանոսական տաճարը: Տաճարը նվիրված է եղել Միհր աստծուն: Նա եղել է լույսի և մաքրության/արևի/ աստվածը: Հայկական դիցաբանում եղել են բազմաթիվ աստվածություններ: Արամազդն է եղել հայոց գերագույն աստվածը: Արամազդը համապատասխանում է հունական դիցարանի Չևսին:

Հայոց դիցարանը ավելի հին է հունականից, որի գերագույն աստվածը Չևսն է. Չևս՝ ամպրոպի, ուժի, աստվածների հայր՝ Արամազդ, Արես՝ պատերազմի, Պոսեյդոն՝ ծովի, ջրի, Պրոմեթեոս-կրակի- Վահագն (քանի որ Վահագնը մարմնավորում է բնության չորս տարրերը՝ օդը, ջուրը, կրակը, հողը, ուստի նրա մեջ ամփոփված են հունական այս աստվածների հատկությունները), Աֆրոդիտե՝ գեղեցկության-Աստղիկ, Արտեմիս՝ պտղաբերության-Անահիտ, Աիդ՝ ստորգետնյա թագավորության- Սպանդարամետ: Գայրության աստված Տիրը մասամբ է համապատասխանում հունական Հերմեսին, քանի որ Տիրը առանձին աստվածություն է, իսկ Հերմեսը Չևսի սուրհանդակն է:

Վահագնը ռազմի, քաջության և ամպրոպի աստվածն է, որը ծնվել է տիեզերքը կազմող չորս հիմնական տարրերից՝ օդից, ջրից, կրակից, հողից: «Վահագնի երգը» միակ առասպելն է, որ մեզ է հասել Քերթո-ղահայր Խորենացու շնորհիվ. այն աշխարհի հնագույն հիմներգերից է: Հեթանոս հայի կրոնական պատկերացումը վառ երևակայության շնորհիվ դարձել է անգուգական երգ՝ ռիթմիկ, երաժշտական, որն արդյունք է որոշ բառերի և հնչյունների կրկնության. Երկներ- երկին, երկներ-երկիր, ծով- ծիրանի, կարմրիկ-եղեգնիկ, հուր-հեք, աչկունք-արեգակունք. **Ներքին հանգերի և հնչյունների այսպիսի կրկնությունը կոչվում է հանգիտություն:** Դեռևս VII դարում Անանիա Շիրակացին Վահագնի անվան հետ է կապում «Հարդագողի ճանապարհ» համաստեղությունը, որ համարժեք է հունական Ծիր Կաթինին: Երկու անվանումներն էլ կապված են նրանց շուրջ հյուսված առասպելների հետ: Վահագնը ասորի Բարշամից հարդ է գողանում: Երկնքով տանելիս հարող թափվում է և մատնանշում Վահագնի անցած ճանապարհը, իսկ հունական առասպելաբանության մեջ Ծիր Կաթինը Հերայի կրծքից թափվող կաթի հետագիծն է: Հայ ժողովուրդը Վահագնին նույնացրել է Տիգրան Մեծի որդիներից մեկի հետ:

Հայկական դիցարանի աստվածներից են՝

Արամազդ - գերագույն աստված, երկնքի և երկրի արարիչը, բոլոր աստվածների հայրը:

Անահիտ - մայր աստվածուհի, մայրության, բերքի և պտղաբերության սրբազան մարմնացումն է:

Միիր- լույսի և մաքրության՝ արևի աստվածը:

Վահագն կամ **Վիշապաքաղ Վահագն** - ամպրոպի ու կայծակի աստվածն է:

Աստղիկ - հայոց սիրո և ջրի աստվածուհին, որի պաշտամունքը կապված էր Արուսյակ (Վեներա) մոլորակի հետ:

Նանե- պատերազմի աստվածուհի:

Տիրը հին հայերի իմաստությունների, ուսման, գիտության աստվածն էր:

Ամանոր և **Վանատուրը** համաժողովրդական սիրո ու ճանաչման արժանացած աստվածներն էին:

Սպանդարամետը կամ **Սանդարամետը** ստորերկրյա թագավորության աստվածն էր:

Տիր է կոչվել դպրության, պերճախոսության, գիտությունների ու արվեստի աստվածը հին հայկական դիցարանում: Համարվել է հեթանոս հայերի աստվածների հոր՝ Արամազդի ատենադպիրն ու սուրհանդակը, մարդկանց ճակատագիրը գուշակողն ու երագները մեկնողը, նրանց չար ու բարի գործերը գրանցողը: **Տիրին նվիրված գլխավոր տաճարը կոչվել է Երազամույն:** Գտնվել է Վաղարշապատ և Արտաշատ քաղաքների միջև: Տիրին նվիրված տոնահանդեսները կոչվել են Տիրական:

Հայոց ռազմի աստված խաժակն Վահագնի և սիրո աստվածուհի կճափայլ /մարմարափայլ/ Աստղիկի հարսանիքն էր: Աստվածների հայր Արամազդը Աստղիկի ուսին սպիտակափառ մի լավաշ էր գցել: Սակայն փեսայի տուն գնալու ճանապարհին լավաշն ընկավ հարսի ուսից: Վահագնի սիրով արբեցած Աստղիկը չնկատեց դա: Արամազդը զայրացավ և Աստղիկին ասաց.

-Հացը գետնին գցողը չի կարող կին ու մայր դառնալ:

Հարսանիքը խաթարվեց: Այդպես էլ Վահագնին ու Աստղիկին չհաջողվեց ամուսնանալ, և նրանք ամբողջ կյանքում մնացին սիրահարներ:

Այնուհետև Հայաստանում սովորություն դարձավ հարսի ուսին լավաշ գցելը: Հարսները զգուշ են քայլում հարսանիքի ժամանակ, թե չէ լավաշը կսահի նրանց ուսից, և նրանք կընկնեն Աստղիկ աստվածուհու օրը:

Ըստ Հայկ Խաչատրյանի

Վանատուր

Մեզ՝ հայերիս համար հյուրընկալությունը եղել է սրբազան արարողություն: Հյուրին հարգ ու պատվով ընդունելն ու ճանապարհելը մինչև այսօր էլ համարվում է սուրբ պարտականություն: Եվ պատահական չէ, որ հայոց նախնիները դեռ քրիստոնեության ընդունումից շատ ու շատ

առաջ ունեցել են հյուրընկալության աստված, որին անվանել են Վանատուր: Նրա անունն իսկ նշանակում է «օքևան տվող» / **վան արմատը նշանակել է օքևան**, երկրորդ արմատն է **տուր**: Վանատուրը հին հայերի ամենասիրված աստվածներից էր: Նրա պատվին մեծ տոնախմբություններ էին լինում օգոստոս ամսին, երբ շուքով նշվում էր Նավասարդը՝ հայոց Ամանորը: Ի պատիվ Վանատուրի՝ Հայաստանում ոչ միայն տաճարներ, այլև հյուրանոցներ, իջևանատներ են կառուցվել, որպեսզի երկար ճանապարհ գնացող ուղևորները օքևանելու տեղ ունենային:

Հին հունական առասպելներ

Մեր թվագրությունից շատ առաջ հին հույներն ստեղծել են բազմաթիվ առասպելներ, որոնց մեջ արտացոլվել են նրանց կյանքն ու կենցաղը, մտածելակերպն ու ձգտումները, երևակայությունն ու ճաշակը: Այդ առասպելների հիմքում ընկած են այն պատկերացումները, որ հատուկ էին հնադարյան մարդուն: Ըստ այդ պատկերացումների՝ աշխարհում տեղի ունեցող բոլոր երևույթները գերբնական չար ու բարի ուժերի արդյունք են: Ուստի և առասպելներում առանձնապես լայն տեղ ու մեծ դեր է հատկացվում աստվածներին, կիսաստվածներին / հերոսներին/, գանազան հրեշների և մտացածին արարածների: Աստվածները, չնայած իրենց հրաշագործ զորությանը, օժտված են նաև մարդակերպ հատկանիշներով: Նրանք վիճում են կամ բամբասում միմյանց, հովանավորում են կամ պատժում հերոսներին ու հասարակ մարդկանց, դրսևորում կիրք ու խանդ, սեր և ատելություն, ցասում ու գութ, տառապանք ու բերկրանք: Հունական առասպելները երկար դարեր պահպանվել են բանավոր եղանակով, մինչև որ գրերի ստեղծումից հետո իրենց արտացոլումն են գտել հնագույն հեղինակների պոեմներում և հնագույն թատերգությունների մեջ:

Հունական դիցաբանության աստվածները

Համարվում էր, որ աստվածների հայր Չևսը և նրա կին Հերան դեկավարում են կամակոր աստվածների ընտանիքը, որի տունը՝ պանթեոնը, գտնվում է հունական երկրի հյուսիսային սահմանում գտնվող Օլիմպոս լեռան վրա: Այդ ընտանիքի անդամներն էին Ապոլոն, Արտեմիս, Աթենաս-Պալլաս, Արես, Պոսեյդոն, Հերմես, Դիոնիսոս, Դեմետրա, Պլուտոն և Պերսեփոնես աստվածներն ու աստվածուհիները:

Հայկական դիցարանի աստվածներին հունական դիցարանում համապատասխանում են հետևյալ կերպ՝

Արամազդը՝ Չևսին- երկնքի և երկրի արարիչ

Անահիտը՝ Արտեմիսին- աստվածուհի, մայրության, բերքի և պտղաբերության

Վահագն՝ Արեսին կամ Հերակլեսին -ամպրոպի ու կայծակի աստված

Տիրը՝ Ապոլոնին կամ Հերմեսին-իմաստությունների, ուսման, գիտության աստված

Աստղիկին՝ Աֆրոդիտեն- սիրո և ջրի աստվածուհի

Սպանդարամետը՝ Հադեսին- ստորերկրյա թագավորության աստված

Միհրը՝ Հելիոսին կամ Հեփեստոսին- լույսի և մաքրության՝ արևի աստված

Նանեին՝ Աթենասը- պատերազմի աստվածուհի:

Հերկուլեսը Չևսի որդին էր: Նա շատ քաջագործություններ էր կատարել: Երբ Հերկուլեսը հանդիպեց Անթեյին՝ հին հունական դիցաբանության մեջ հսկա հերոս Պոսեյդոնի և Գեայի որդուն, վերջինս ստիպեց նրան մենամարտել իր հետ: Իր ուժը նա ստանում էր մայր հողից, որից ոչ ոք նրան կտրել չէր կարողանում, այսինքն՝ նա անհաղթահարելի էր, երբ կապված էր մայր հողի, այսինքն՝ ժողովրդի հետ: Բայց Հերկուլեսը հաղթեց անպարտելի հսկային՝ կտրելով նրան մայր հողից:

Ավանդագրույցի համաձայն՝ Պարսից Շապուհ II Սասանյան թագավորը խաբեությանը գերել է հայոց թագավոր Արշակ Բ-ին: Շապուհը հայոց հողով ու ջրով նրան ենթարկում է փորձության: Կանգնելով հայկական հողի վրա՝ Արշակը դառնում է համարձակ ու աներկյուղ. հայոց հողը ուժ ու գորություն է հաղորդում նրան: Այս պատկերն ունի առավել խոր ենթատեքստ: Հայոց հողն ու ջուրը խորհրդանշում են հայ ժողովրդի հերոսական ոգին, նախնիների անպարտելի ուժը:

Հայրենի հողն է ուժի և կենսունակության աղբյուրը:

Եվ որպես դաս սերունդներին՝ ով կտրվում է իր ժողովրդից ու հողից, ի վերջո, պարտվում է:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ, ԵՎ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կրթություն

Դարեր ի վեր դպրոցը կոչվել է հոգևոր կյանքի հիմնական օջախ, իսկ կրթություն և դաստիարակություն հասկացությունները՝ մանկավարժություն:

Կրթության նկատմամբ սեր և համապատասխան վերաբերմունք առաջացնելն ու զարգացնելը ամենօրյա կենսագործունեության խնդիր է: Այս խնդրում կարևորվում է ինչպես մանկավարժների ամենօրյա գործունեությունը, այնպես էլ ամբողջ հասարակության վերաբերմունքը:

Առանց գիտելիքների իմացության մարդ չի կարող ապրել, ճանաչել իրեն, աշխարհի ու կյանքի մասին պատկերացումներ կազմել, չի կարող գեղեցիկը տարբերել տգեղից, բարին՝ չարից:

Թումանյանն ավանդում է. «Թանկագին ուսուցիչներ և սիրելի՛ աշակերտներ, դուք կռվում եք այն լուսավոր գաղափարների համար, որոնք պիտի բերեն հավասարություն, լույս, արդարություն: Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը՝ դպրոցի բովանդակությունը: Պետք է կարդալ, միշտ կարդալ, և ամեն մի կարդալը մի բան է տալիս ու աննկատելի կերպով ամբարվում, գիտություն դառնում»:

«...Բազում են կոչյալք, սակայն սակավ են ընտրյալք,- ասում է Աստվածաշունչը: - Դու՛ք եք աշխարհի աղը,- ասում է Աստված,- գնացեք և քարոզեք, Աստծո խոսքը հասցրեք ժողովուրդներին, հոգու լույսը՝ մարդկանց...»: Ուսուցիչներ էին առաքյալները: Ասել է թե՛ ուսուցչին բնութագրելիս կարող ենք նրան կոչել մի բոռ Աստված:

Հայ ուսուցչի երդումը

Ես, ընտրելով մատաղ սերնդի կրթության և դաստիարակության չափազանց պատասխանատու և պատվաբեր ճանապարհը, հանդիսավոր երդվում եմ՝ պատվով կրել Ուսուցչի բարձր և վեհ կոչումը: Երդվում եմ:

Իմ ստացած գիտելիքները, ստեղծագործական ողջ ներուժն ու հոգու ջերմությունն ամբողջությամբ նվիրել երեխաների կրթության և դաստիարակության գործին: Երդվում եմ:

Երդվում եմ՝ լինել արդարամիտ, բարի, իմ գործին նվիրված և այդպիսին էլ դաստիարակել իմ աշակերտներին, ամեն ինչ անել, որպեսզի նրանք մեծ կյանք մտնեն սեփական ժողովրդի և Հայրենիքի հանդեպ պատասխանատվության մեծ զգացումով: Երդվում եմ:

Երդվում եմ՝ ամեն ինչ անել, որպեսզի մեր երկրի համար դաստիարակեմ բարեկիրթ, հայրենասեր, սեփական ուժերին վստահ քաղաքացիներ: Երդվում եմ:

Երդվում եմ՝ բարձր պահել հայ դպրոցի սուրբ անունը: Երդվում եմ:

Ուսուցիչը դպրոցի համար նույնն է, ինչ արևը՝ տիեզերքի: Նա աղբյուր է այն ուժի, որ շարժման մեջ է դնում ամբողջ մեքենան: Վերջինս իր անշարժ քարացման մեջ կժանգոտի, եթե ուսուցիչը չկարողանա նրա մեջ կյանք ու շարժում ներշնչել:

Դիսպերվեզ Ա.

Դարերի ճամփորդին

Դու ճամփա ընկար դժվար մի դարում,
Այբուբենը՝ զենք, հավատո՞ գրահ մեկնած աշխարհին,
Եվ, օ՛, ուրիշ էր, բարձր էր ու վես
Նպատակը քո՝ ուսուցիչ՝ արի:
Քո բառը բարի հունցեցիր փոշով ապառաժ քարի,
Ու խոսքդ դարձավ ամրոց, բերդ ու սյուն,
Չայնոթ թևածեց, ճեղքեց շեկ կուրծքը հրե ամպերի
Ու խոլ ժայռերն իսկ ծնրադիր եղան ոգուդ իմաստուն:
Ճամփան երկար էր, քայլելը՝ դժվար, տոկացիր սակայն,
Դու՝ մեր պատմության սրբազնագույն էջ, հոգու դու մշակ,
Դու՝ լույս խնկարկող ոսկեհուռ գրիչ,
Դարերի ճամփորդ՝ մեր մե՛ծ ուսուցիչ...

Վարդանուշ Թորոսյան

Ուսուցիչ լինելը մեծ բեռ է ու փառք, նաև՝ մեծ պատիվ ու մեծ տառապանք, մեկ Աստված ես դու, մեկ ստրուկ խոնարհ, բայց վերջիվերջո՝ մարդ, որ սխալվելու չունի ճանապարհ: Լինել ուսուցիչ՝ նշանակում է լինել Աստծո մասնիկը՝ աստվածաբար համբերող, բարի, անկաշառ ու ներողամիտ: Լինել երեխայի բարեկամն ու խորհրդատուն, վստահելի ընկերը: Դե , ուրեմն, Ուսուցիչ, քայլի անվարան, և վարդեր բացվեն քո ճանապարհին, լույսի՝ սերմնացան:

Դու, որ քայլում ես լույսի ճամփեքով և մանկանց հոգուց խավարն ես վանում, լուսավորում ես նրանց միտքն ու հոգին, ջախեր ես վառում և սեր վայելում նրանց ջերմ սրտում, որ առատորեն սերմեր ես ցրում և ակնկալում առատ հունձք ու բերք, թող անունդ ոսկե տառերով գրվի մեր հոգու մատյանում:

Մեր ժողովրդի համար նոր ժամանակներում, ինչպես նաև ազգային զարթոնքից հետո, երբ վերածնված Հայաստանում հարյուրավոր դպրոցներ բացվեցին, և ուսուցիչների թիվը տասնյակ հազարների հասավ, իսկ աշակերտների թիվը՝ հարյուր հազարների, ժողովրդի վերաբերմունքը ամենևին չտատանվեց. ուսուցչի դժվարին գործն այսօր էլ արժանանում է ամենայն հարգանքի և գնահատության: Նախկինում ուսուցիչ էին դառնում քչերը, ընտրյալները (մենք այսօր հիշում ենք Ներսիսյան դպրոցի ուսուցիչներին, իսկ քանի՞ Ներսիսյան դպրոց ունեինք) և ապա, երբ ուսուցիչը մեկ-երկուսն է, բնականաբար, արժանանում է շատ ավելի ընդգծված ուշադրության և վերաբերմունքի: Այսօր մենք շատ ավելի հիանալի ուսուցիչներ ունենք, բայց նրանց համար իբրև իսկական ուսուցիչ ընդգծվելը շատ ավելի մեծ տաղանդ, գիտելիք և մտավորականի ավելի բարձր նկարագիր է ենթադրում: Չմոռանանք նաև մեր ժամանակի բարդությունը, տեղեկատվական այն հեղեղը, որ թափվում է աշակերտի գլխին, պատանուն ձգող, նրան ուսուցումից կտրող հմայքները՝ համակարգիչ, համացանց, հեռուստատեսություն, սրճարան և այլն: Չմոռանանք նաև կյանքի սուր հարցերից, կյանքի ստվերոտ կողմերից նոր սերնդի լավատեղյակությունը: Նաև ամեն ինչ քննարկելու նրանց կիրքն ու, հաճախ, կեցվածքը: Չմոռանանք նաև իդեալի և իրականության անհամապատասխանության ոչ քիչ դրսևորումները:

Եվ այս ամենի դեմ հանդիման կանգնում է ուսուցիչը: Կանգնում է ամեն օր: Աշակերտը գիտի նաև իր ուսուցիչների անձնական կյանքը. որքա՞ն է համապատասխանում նրանց քարոզած ճշմարտությունը այն

կյանքին, որով իրենք են ապրում: (Ճշմարտության մասին խոսելն ավելի դյուրին է, ճշմարիտ ապրելն է դժվար): Այս ամենի միահյուսումից է այսօր գոյանում ուսուցչի հեղինակությունը:

Անձնական օրինակն ավելի է ներգործում, քան քարոզը:

Ս. Չոնսոն

Եթե ուսուցիչն իր մեջ գուգակցում է սերը գործի և աշակերտների նկատմամբ, նա կատարյալ ուսուցիչ է:

Լ.Տոլստոյ

Հաջող դաստիարակության գաղտնիքը աշակերտի նկատմամբ տածած հարգանքի մեջ է:

Էմերսոն

Մաները միշտ սիրել են նվիրյալներին: Ժողովրդական պատմությունը հուշում է մանկավարժի վեհության մասին: Գլաճորի համալսարանի վարդապետ Գրիգոր Տաթևացին սիրելի էր իր աշակերտներին: Նրան տեղափոխում են այլ դպրոց: Թովմա Մեծոփեցի պատմիչը պատմում է. «Եկան գիշերը նրա աշակերտները և քնած տեղը գողացան նրան: Մենք լալով, ողբալով հասանք նրանց հետևից և չկարողացանք վերադարձնել նրան»:

Ծանր ու պատվավոր է ուսուցչի աշխատանքը: Լինել ուսուցիչ, ասել է թե՛ լինել մեծատառով մարդ, լինել հոգատար ծնող, անկեղծ ընկեր, լավագույն բարեկամ ու խորհրդատու և մնալ որպես ուսուցանող, դաստիարակող, նաև՝ սեփական օրինակով:

Կրթությունն ինքնավստահություն է տալիս, ինքնավստահությունը՝ հույս, իսկ հույսը՝ խաղաղություն:

Կոնֆուցիոս

Տու՛ր մարդուն մի աման բրինձ, և դու կկերակրես նրան այդ օրը: Սովորեցրու՛ նրան աճեցնել իր սեփական բրինձը, և դու կփրկես նրա կյանքը:

Կոնֆուցիոս

Կրթությունը կրակ բորբոքելն է, այլ ոչ դատարկ տարա լցնելը:

Սոկրատես

Ապրի՛ր այնպես, ասես մեռնելու ես վաղը: Սովորի՛ր այնքան, ասես ապրելու ես հավիտյան:

Մահաբնա Գանդի

Խորհուրդներ ուսուցչին

Ամեն մարդ, ինչպես ապակու փշուր, իր հոգու բեկվածքով որևէ փոքրիկ մասնիկ է արտացոլում՝ առանց ամբողջն ընդգրկելու, բայց ամեն մեկի մեջ թաքնված է իր բոժոժը, իսկ եթե մարդուն հմտաբար թափահարես, բոժոժը կարձագանքի եթե նույնիսկ ոչ վատահ, ապա սիրալիք կերպով:

Մ. Գորկի

Ինչպե՞ս կարելի է աշխատել երեխաների հետ և չճանաչել նրանց: Ուսուցչի համար իր երեխաներին չճանաչելը նշանակում է զրկվել աչքերից և իրեն դատապարտել կուրորեն աշխատելու՝ առանց հաջողության ամենափոքր հույսի:

Ամենագլխավորը աշակերտին հասկանալն է. պատահում է, որ աշակերտի հետ զրուցում ես, դասերին, քննություններին գնահատում ես նրա գիտելիքը, նույնիսկ պատահում է, որ բնութագրում ես նրան, այնուամենայնիվ, նրա մասին դեռ ոչինչ ճշգրիտ չգիտես: Եվ սպասում ես, որսում, հետամտում այն բույսին, այն հաճախ չնախատեսված դեպքեր, որը քո առաջ պիտի բացի մարդու մեջ թաքնվածը: Այդպիսի բույսերին, ինչպես լուսարձակի ճառագայթների տակ, ամեն ինչ լուսավորվում է, հասկանալի դառնում...

Հասկանալով, թե որն է յուրաքանչյուր երեխայի խոցելի կողմը, մանկավարժն իրեն ավելի վատահ է զգում, ինչպես այն բժիշկը, որի խելքին սկզբում փշում է իր հիվանդներին միատեսակ բժշկել բոլոր հիվանդություններից, իսկ հետո հասկանում է, որ աչքը, ականջը, երիկամը, սիրտն ու թոքերը բոլորովին տարբեր բաներ են:

Պետք է դասարան մտնել՝ հաստատ գիտենալով, որ քեզ կսկսեն լսել, հետաքրքրական կլինի նյութը, թե ստիպված կլինեք ձանձրալի սև աշխատանքով զբաղվել: Եթե դասը հետաքրքրիք է, գործի կեսն արված է:

Մեփական արժանապատվության զգացումը թող երբեք չդավաճանի քեզ: Թույլ մի՛ տուր ոչ խոսել քեզ հետ կոպիտ, ոչ վարվել անտակտ, այլպես դու կստորացնես ոչ միայն քեզ, այլև քո պայծառ, շնորհակալ աշխատանքը:

Մի՛ նահանջիր, երբ արդար ես, պահպանի՛ր քո արժանապատվությունը: Չմոռանա՛ս՝ դու ուսուցիչ ես, իսկ նա, ով կրում է այդ անունը, իրավունք ունի դրանով պարծենալու:

Լավ արարքը, պայծառ բնավորությունը, բարձր միտքն արագ են մուտք գործում երեխաների սիրտը. Այնտեղ ցանկություն են ծնում լինել հենց այդպիսին և վարվել հենց այդպես:

Ինչպիսի իսկական, հոգեպես հարուստ մարդ պետք է լինել, որպեսզի տարեցտարի, սերնդեսերունդ առատորեն երեխաներին տաս այն ամենը, ինչ որ լավ է, ինչ որ քո մեջ կա, տաս նրանց քո մտքի և սրտի լավագույն ուժերը:

Ուզում ես դասագրքով, բառ առ բառ սովորեցնել, լրիվ կրավականացնի այն, ինչ գիտես, իսկ եթե պետք է պատասխանել բոլոր ինչուներին և նոր ինչուներ առաջացնել, պետք է առանց հոգնելու կարդալ, փնտրել, չորս կողմը նայել և ամեն անգամ կհամոզվես, որ դու քիչ բան գիտես:

Մի անգամ Մակարենկոյի երկերում կարդացի համատեղ ապրումների մասին, այն մասին, թե որքան կարևոր, որքան անհրաժեշտ են նրանք այն բանի համար, որ ծնվի իսկական կոլեկտիվ: Այժմ ես համոզված եմ փորձով, որ չի կարելի միասին կարդալ Գիքորի մասին, թե ինչպես Գիքորը չկարողացավ դիմանալ դաժան աշխարհում և կործանվեց, չի կարելի բոլորով միասին կարդալ այդ մասին և միմյանց նկատմամբ մնալ նախկին հարաբերությունների մեջ:

Սովխմլինսկու մանկավարժական մտորումներից

Բառի գեղեցկությունը ամենավառ կերպով մարմնավորված է պոեզիայում: Լսելով գեղեցիկ ասմունքը՝ երեխաները կարծես լսում են բառի երաժշտությունը: Լավագույն բանաստեղծության մեջ բանաստեղծական բառը երևան է բերում մայրենի լեզվի նրբագույն երանգները: Դրա շնորհիվ երեխաները ուզում են հիշել բանաստեղծությունը: Երեխան չի սկսում ստեղծագործել ինչ-որ ներշնչմամբ: Ստեղծագործել պետք է սովորեցնել: Երեխան շարադրություն պետք է կազմի միայն այն ժամանակ, երբ նա ուսուցչից լսի բնության նկարագրություն, ասմունք, հուզառատ որևէ պատմություն: Մակայն հազիվ թե երեխան շրջապատող աշխարհի գեղեցկության ներգործության տակ անմիջապես շարադրություն կազմի: Այն պահերին, երբ երեխայի հոգին համակված է բանաստեղծական ոգեշնչմամբ, բառը՝ կենդանի, լիարյուն, ծիածանի բոլոր գույներով շողշողացող, դաշտերի ու մարգագետինների բուրմունք արձակող, մտնում է երեխայի կյանքի մեջ, և նա փնտրում,

գտնում է զգացմունքների արտահայտման միջոցը: Բանաստեղծություն ստեղծագործել սովորեցնել հարկավոր է ոչ թե այն բանի համար, որ աճեցնենք պատանի բանաստեղծներ, այլ որպեսզի ազնվացնենք յուրաքանչյուր պատանու սիրտը:

Տալ երեխային բանաստեղծական ոգեշնչման ուրախությունը, արթնացնել նրա սրտում բանաստեղծական ստեղծագործության կենարար աղբյուրը նույնպիսի կարևոր գործոն է, ինչպես կարողալ ու խնդիրներ լուծել սովորեցնելը: Այն նաև խոսքի մշակույթի բարձրագույն աստիճանն է:

Ընթերցանությունը մի պատուհան է, որտեղից երեխաները տեսնում և ճանաչում են աշխարհը և հենց իրենց: Այդ պատուհանը երեխայի առջև բացվում է միայն այն ժամանակ, երբ ընթերցանության հետ մեկտեղ, նրա հետ միաժամանակ և նույնիսկ ավելի շուտ, քան առաջին անգամ բացված գիրքը, սկսվում է քրտնաջան աշխատանքն այն խոսքի վրա, որը պետք է ընդգրկի երեխաների ակտիվ գործունեության, հոգևոր կյանքի բոլոր ոլորտները, աշխատանքը, խաղը, բնության հետ շփումը, երաժշտությունը:

Ասույթներ դաստիարակության և կրթության մասին

Հեռու է ճանապարհը խրատի միջոցով, մոտիկ է օրինակի միջոցով:
Սենեկա

Ուսուցիչն ապրում է այնքան ժամանակ, քանի դեռ սովորում է: Երբ նա դադարում է սովորել, նրա մեջ մահանում է ուսուցիչը:

Կ. Ուշինսկի

Ուսուցչի ճարտարությունը աշակերտներին տված նրա գիտությունն է:
Դիոգենես

Հույն փիլիսոփաներից մեկի աշակերտը մի անգամ հարցրեց, թե ինչու է նա հավաստիացած, որ շրջապատում անբացատրելի, հանելուկային երևույթները շատ են, իսկ մարդկանց գիտելիքները՝ չափազանց քիչ: Մինչդեռ ինքը՝ աշակերտը, համոզված է, որ առաջիկայում ինքը կարող է բացահայտել բնության բոլոր գաղտնիքները: Իմաստուն ուսուցիչը ներողամտորեն ժպտալով հաստատեց, որ դա, իրոք, այդպես է, մարդ որքան քիչ գիտի, այնքան վստահ է, որ քիչ բան է մնում սովորելու, իսկ, ընդհակառակը, որքան շատ բան գիտի, այնքան խոր է համոզ-

ված, որ իր գիտելիքները չնչին են: Իր ասածը հաստատելու համար փիլիսոփան ձեռնափայտով ավագի վրա երկու շրջանակ գծեց, մեկը՝ փոքր, մյուսը՝ մեծ. «Ահա, - ասաց իմաստուն ուսուցիչը, - այս փոքրիկ շրջանակը քո գիտելիքներն են, մեծը՝ իմը, մնացածը անհայտությունն է: Քո փոքր շրջանակը ավելի փոքր մակերեսով է շփվում անհայտության հետ, այդ պատճառով էլ քեզ թվում է, թե սովորելու բան քիչ է մնացել»:

Հայագիտության նշանավոր կենտրոններն ու դպրոցները

Իր ինքնությունը պահպանելու և այն սերնդեսերունդ փոխանցելու համար հայ ժողովուրդը դիմել է ամենափորձված միջոցին՝ ուսումնական հիմնարկներ ու կրթօջախներ հիմնելուն: Դրանք մեծ դեր են կատարել ժողովրդական կրթության, գիտության ու լուսավորության տարածման գործում: Դրանց մեջ կարևորագույն դեր ունեն և այսօր էլ ունի Մխիթարյան միաբանությունը:

Մխիթարյան միաբանություն

Մխիթարյան միաբանությունը հոգևոր, ուսումնակրթական, գիտական և մշակութային կազմակերպություն է: Հիմնադրել է Մխիթար Սեբաստացին, 1701 թ.-ին, Կոստանդնուպոլսում: 1717 թ.-ին միաբանությունը հաստատվել է Վենետիկի մերձակա Սբ. Գևորգ կղզում. Մխիթարյան է կոչվել Սեբաստացու մահվանից հետո:

Միաբանությունը գործունեություն է ծավալել 2 ուղղությամբ՝ կրոնական-կաթոլիկական և հայագիտական-բանասիրական: Նախապատրաստել և տպագրել են հայագիտական աշխատություններ՝ հայ պատմիչների երկերի քննական բնագրեր, գրաբարի քերականությանը նվիրված ուսումնասիրություններ, արժեքավոր բառգրքեր, դասագրքեր, գեղարվեստական գրականություն:

1732 թ.-ին Սբ. Գևորգում միաբանները հիմնադրել են վարժարան, որի նպատակը միաբանության գործունեությունը շարունակող սերունդ պատրաստելն էր: Այնուհետև Մխիթարյան վարժարաններ են բացվել Պադուայում, Վենետիկում, Կոստանդնուպոլսում, Տրապիզոնում, Ախալցխայում և այլուր: 1883թ.-ին Հյուսիսային Իտալիայի Պադուա քաղաքում սկսեց գործել Մուրատյան, իսկ 1836 թ.-ից՝ Վենետիկի Ռաֆայելյան վարժարանը, որոնք 1873թ.-ին միավորվեցին Մուրատ Ռաֆայելյան վարժարան անունով: 1992 թ.-ից Վենետիկի Մխիթարյանների կրթահամալիր է գործում նաև Երևանում:

Մխիթարյան միաբանության հիմնադրումից ի վեր Սբ. Ղազար են այցելել հազարավոր զբոսաշրջիկներ և գիտնականներ: Հանրաճանաչ այցելումներից են բանաստեղծ Ջորջ Բայրոնը, գրողներ Վալտեր Սկոտը, Ստենդալը, Ալֆրեդ դը Մյուսեն, Ժորժ Սանդը, հայագետ, լեզվաբան Հայնրիխ Պետերմանը, կոմպոզիտոր Ժակ Օֆենբախը, դերասանուհի Էլեոնորա Դուզեն և ուրիշներ:

Միաբանության անդամները սերտորեն համագործակցում են ՀՀ գիտնականների հետ, մասնակցում հայագիտական գիտաժողովների:

«Օտարները Հայոց կղզի կկոչեն. հոն ամեն ինչ հայկական է և հայ անունին համար: Աղոթքի հետ՝ աշխատանք, առաքինության հետ՝ հայրենասիրություն, հավատքի հետ՝ գաղափարական սևեռակետ, և միշտ Հայաստան, ամեն ինչ Հայրենիքին համար, հայ ժողովուրդին համար...»:

Մխիթար Սեբաստացի

«Ոչ մեկ հայկական հաստատություն այնքան խորունկ ու տևական ազդեցություն ունեցած է Հայոց վրա, արևմտյան ոգիին, ճաշակին և ազնիվ բարքերուն մեր մեջ տարածման տեսակետով, որքան Մխիթարի տունը»:

Արշակ Չոպանյան

Գևորգյան հոգևոր ճեմարան

Հայաստանում հիմնված և մինչ օրս գործող ամենահին բարձրագույն ուսումնական հաստատությունը հիմնադրվել է 1874 թվականին, Վաղարշապատ քաղաքի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տաճարի հարևանությամբ: 1866 թ. Գևորգ Գ. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը, հանդիպելով Ռուսաստանի Ալեքսանդր II ցարին, արտոնություն է ստանում հիմնադրելու հոգևոր կրթական հաստատություն:

Ճեմարանի շինարարությունն սկսվում է 1869-ի մայիսի 25-ին. հիմնադրի անունով անվանվել է Գևորգյան Ճեմարան:

2001-2002 թ.թ. ուսումնական տարում Գևորգյան հոգևոր ճեմարանը ստացավ բարձրագույն կրոնական հաստատության կարգավիճակ:

Հաշվի առնելով ուսումնական ծրագրերի թարմացումն ու հարստացումը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը Գևորգյան հոգևոր ճեմարանին շնորհեց Աստվածաբանական համալսարանի կարգավիճակ:

Լազարյան ճեմարան

Լազարյան ճեմարանը հայագիտական և արևելագիտական ուսումնական ու գիտական խոշոր կենտրոն էր: Հիմնադրվել է 1815 թվականին Մոսկվայում, մեծահարուստ Լազարյանների նախաձեռնությամբ և միջոցներով: Սկզբում եղել է տարրական տիպի մասնավոր դպրոց և կոչվել է Հայկական Լազարյան (Դազարյան) ուսումնարան: Սովորել են միայն Լազարյան որդեգիրները: 1827 թվականին վերանվանվել է Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ (հայկական աղբյուրներում ավանդաբար կոչվել է Լազարյան ճեմարան): Լազարյան ճեմարանը իր գոյության ընթացքում պահպանել է հայկական դիմագիծը. հայերեն են դասավանդվել հայագիտական առարկաները, ուսուցչական-դասախոսական կազմի և սաների մեծ մասը եղել են հայեր, դեկավարությունը հիմնականում գտնվել է հայերի ձեռքում: Գեմարանը իրավամբ մեծարվել է «Մայր դպրանոց», «Սերմնացան հայոց դպրոցաց» անուններով: Լազարյան ճեմարանի շնորհիվ հայ դպրոցները, հայ կրթական գործիչները հաղորդակցվել են ռուսական և եվրոպական առաջավոր մտքին: 1921թ.-ին ճեմարանի շենքում ստեղծվել է Խորհրդային Հայաստանի մշակույթի տուն, և շենքը իր ողջ ունեցվածքով հանձնվել է հայ ժողովրդին: Այսօր Մոսկվայի Հայկական նրբանցք կոչվող փողոցում գտնվող Լազարյան ճեմարանի շենքը Հայաստանի սեփականությունն է, և այնտեղ է գտնվում ՌԴ-ում ՀՀ դեսպանատունը:

Ներսիսյան դպրոց

Կովկասում հայկական առաջին միջնակարգ դպրոցը, որը գործել է մեկ ամբողջ դար, հիմնվել է Թիֆլիսում, 1824-ին՝ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցու նախաձեռնությամբ ու ջանքերով: Հետագայում իր հիմնադրի անունով էլ կոչվել է Ներսիսյան դպրոց: Շինության նախագծի հեղինակը պետերբուրգցի ճարտարապետ Լիմկուրն է, իսկ կառուցման ծախսերը հոգացել է հայ մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշյանը: Առաջին տեսուչն է եղել հայ ականավոր գրող և մանկավարժ Հարություն Ալամդարյանը: Իր գոյության 100 տարվա ընթացքում /1824-1924/ դպրոցը հանդիսացել է հայկական մշակույթի փայլուն օջախներից մեկը և շատ կարևոր դեր է կատարել հայ իրականության բոլոր ասպարեզներում: Նրա առաջին շրջանավարտներն են եղել հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր

Արովյանը, «Հյուսիսսփայլ»-ի խմբագիր-հրատարակիչ, հրապարակախոս Ստեփանոս Նազարյանը, հայ նոր թատրոնի ջատագովներից մեկը՝ Գալուստ Շերմազանյանը և ուրիշներ:

Նախախորհրդային ժամանակաշրջանի դպրոցների տեսակները

Ծխական դպրոց՝ մինչ հեղափոխությունը գոյություն ունեցող տարական դպրոց 3 կամ 6 դասարանով. ենթակա էր եկեղեցու հոգևոր իշխանությանը և մեծ մասամբ կից էր տվյալ եկեղեցուն:

Թեմական դպրոց՝ նախախորհրդային շրջանում միջնակարգ հոգևոր երկդասյա դպրոց:

Ռեալական դպրոց՝ ցարական Ռուսաստանում բնական գիտությունների և մաթեմատիկայի ուսուցմանը մեծ տեղ տվող կրթություն:

Գաստիարակություն

Մենք բոլորս գալիս ենք մեր մանկությունից՝ ինչպես մի մոլորակից:

Էրզյուպերի

Յուրաքանչյուր երեխա իր հոգեկան աշխարհով մի խորհրդավոր կղզի է, որը ոչ ոք դեռ չի հետազոտել:

Ամեն մարդու մեջ արև կա, պետք է այնպես անել, որ այն լույս տա:

Սոկրատես

Գաստիարակությունը չի սահմանափակվում դպրոցով:

Մ. Վալերի

Գաստիարակությունը զարգացնում է ընդունակությունները, բայց այդպիսիք չի ստեղծում:

Վոլպեր

Ծնողներ և զավակներ

Մանկությունը մարդու կյանքի ամենաերջանիկ շրջանն է: Հասակ առնելով՝ մարդ միշտ կարոտով է հիշում իր մանկությունը: Մանկական հուշերը կապված են լինում հայրենի տան, մոր, հայրենի բնության հետ:

Մարդ ծնվում է երկու անգամ. առաջին անգամ՝ որպես կենդանի էակ, իսկ երկրորդ անգամ՝ քաղաքացի:

Սուխոմլինսկի

Երեխաներ դաստիարակել՝ նշանակում է զբաղվել ինքնադաստիարակությամբ:

Մի մանկավարժի ծնողը հարցնում է. «Իմ երեխան մեկ տարեկան է, ասացեք խնդրեմ, ե՞րբ պետք է սկսեմ նրա հետ դաստիարակչական աշխատանքներ»:

Մանկավարժը պատասխանում է. «Գուք մեկ տարով ուշացել եք»։ Կյանքում ամենադժվար գործը զավակի դաստիարակության գործն է։ Երեխայի կյանքի առաջին օրվանից պետք է նրան այնպես դաստիարակել, որ նա կարողանա աչալուրջ լինել, աստիճանաբար նրա մեջ կազմավորել վնասակար ազդեցություններից արգելակումներ. Նա պետք է լավ յուրացնի երեք կարևոր պահանջ՝ կարելի է, չի կարելի, պետք է։ Ծնողական ներգործությունը երեխայի վրա կատարվում է անմիջականորեն՝ համոզելով, խնդրանքով, պահանջով, հրամանով։ Այնպես որ, ծնողների ներգրավվածությունը դաստիարակության գործում կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար։ Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները: **Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը՝**

1. ավելի է հասկանում սեփական երեխային.
2. ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.
3. դառնում է ավելի հոգատար, նվազ խիստ երեխայի հանդեպ և ավելի շատ է գնահատում նրա ձեռքբերումները.
4. դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին.
5. ավելի ինքնավստահ է որոշումներ կայացնելիս.
6. ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն/հմտությունների բարձրացմանը.
7. ավելի առաջադիմորեն է օգտագործում այլևայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և երեխայի/ ների/ կարիքների բավարարման համար.
8. երեխային տալիս է հնարավորություն՝ ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնախնդիրները, դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ:

9.ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկություններին և ժամանակին միջոցներ է ձեռք առնում՝ լուծելու նրա խնդիրները:

Եթե մեկի որդին ուշիմ է, ծեծ չի ուտում, իսկ եթե ուշիմ չէ, շատ անգամ նրա առջև ծառային ծեծում են, որ նրան նայի ու դրանով խելոքանա: Իսկ եթե դրանով էլ չի խրատվում, հենց իրեն են ծեծ տալիս:

Եզնիկ Կողբացի

Մեռած է այն հավատը, որին գործեր չեն հետևում:

Ներսես Շնորհալի

Խորհուրդներ ծնողներին

Մայր Թերեզայի խորհուրդները երեխաների դաստիարակության վերաբերյալ.

Մայր Թերեզա՝ Թերեզա Գոնջա Բոյաջիու Կալկաթացի, ապրել է 1910-1997թ.թ.: Թերեզա անունը ստացել է 1931թ.-ին՝ ի պատիվ 1927թ.-ին սրբադասված ֆրանսուհի Թերեզայի (Թերեզա Լիզյեցի), որը հայտնի էր իր բարությանը և գթասրտությանը:

Նրան անվանում էին Մայր Թերեզա: Եվ նա իսկապես դարձավ մայր շատ երեխաների համար, երեխաների, որ անդամալույծ էին, որ ծնող չունեին, որ լքված էին սեփական ծնողների կողմից, երեխաների, որ կարծես ոչ ոքի պետք չէին...

Նա մշտապես չէր խոսում Աստծո մասին, սակայն Նրա մասին վկայում էր իր կյանքով: Նա ուրախությամբ անում էր այն, ինչ, թվում էր, դուրս է մարդկային հետաքրքրություններից. մարդուն, ով ոչ ոքի պետք չէ, ոչնչով աչքի չընկնող աղքատին ու անօգնականին նա ասում էր. «Դու միայնակ չես»:

1.Ուշադիր եղեք այն ամենի հանդեպ, ինչ ասում էք ձեր երեխաներին:

2.Մեծահասակները հաճախ չեն հետևում իրենց արտահայտություններին, երբ խոսում են երեխաների հետ: Եթե երեխային դիմելով՝ նրան անվանում են ծույլ, հիմար կամ անպետք, դրանով մեծահասակները՝ ծնողները և դաստիարակները, կործանում են երեխաներին: Եվ երեխաները, այդ խոսքերի ազդեցության տակ ընկնելով, որոշ ժամանակ անց իսկապես դառնում են անհետաքրքրասեր, ալարկոտ և տկար:

3.Պետք չէ երեխաներին վախեցնել հրեշներով, գայլերով, ոստիկանությամբ: Նման վերաբերմունքը չի դարձնի նրանց ո՛չ խելացի, ո՛չ էլ բարի:

Դաստիարակեք ձեր երեխաներին՝ կատարյալ օրինակ լինելով նրանց համար:

4. Երեխաները չեն սիրում խրատներ և ճառեր, նրանք ցանկանում են տեսնել ձեր արարքները, ոչ թե պարզապես ձեր խոսքերը լսել:

Ցանկացած իրավիճակում փորձեք բարձր լինել ձեր երեխայի աչքերում:

5. Ի ցույց մի՛ դրեք ձեր թուլությունները և բացթողումները: Երբ ծնողները թույլ են տալիս, որ երեխաները տեսնեն իրենց թուլությունները, վերջիններս անհանգստանում են, կորցնում սեփական կողմնորոշումը, որովհետև չունեն մեկին, ում կկարողանան վստահել:

Երեխան, ով իրեն փոքր ու թույլ է զգում, ցանկանում է իր առջև մի անփոփոխ հեղինակություն ունենալ, ով կպաշտպանի իրեն:

Երեխան ծնողներից ակնկալում է ֆիզիկական և հոգեբանական աջակցություն: Եթե տանը երեխան ականատես է լինում վիճաբանությունների, ծնողների միջև կռիվների, տեսնում է խաբեություն և անազնվություն, ապա ինչպե՞ս կարող են ծնողներն ակնկալել, որ իրենց կհաջողվի լավ դաստիարակել իրենց երեխային:

Երբ երեխան տեսնում է, որ իր հայրը կամ մայրը իրենց ոչ ճիշտ կերպով են պահում, նա իրեն կորած է զգում և սկսում է ընդդիմանալ: Եվ դա դառնում է ընտանիքում և հասարակության ներսում շատ ողբերգությունների պատճառ:

6. Ավելի լավ է երբեք չծեծել երեխային: Ծայրահեղ դեպքում միայն, եթե նա արժանի է դրան: Մի թեթև ապտակը չի վնասի նրան, սակայն զգու՛յշ եղեք: Երբեք մի՛ պատժեք երեխային, երբ բարկացած եք: Դուք կթողնեք նրա հիշողության մեջ ատելության, չարության տպավորություն, այլ ոչ թե արդարության: Իսկ ճշմարիտ և լավ դաստիարակությունը պահանջում է, որ երեխան զգա ձեր արդար վերաբերմունքը, որ դուք ճիշտ եք՝ պատժելով իրեն:

7. Հիշեք, երեխային պատժելիս ձեր հայացքը չպետք է արտահայտի չարություն, բարկություն, թշնամություն: Երեխան շուտ կմոռանա ձեր թեթև ապտակը, սակայն ատելությամբ և չարությամբ լի ձեր հայացքը նա երբեք չի մոռանա: Ձեր պատիժը բխում է ոչ թե նրանից, որ ձեր «համբերությունը հատել է», այլ երեխային հասկացնելու ցանկությունից, որ գոյություն ունեն կանոններ, որոնք պետք է պահել, և դա իր բարօրության համար է:

8. Երեխաները պետք է անսահման վստահեն ու հնազանդվեն իրենց ծնողներից: Սա երեխաների դաստիարակության հիմնական կանոններից է ընկերասեր և սիրով լի ընտանիքում:

Մեծահասակ ծնողները դաստիարակվող երեխային դիտում են որպես դաստիարակության օբյեկտ: Մենք ձեզ հետ միասին մասնակցում ենք նրա անձի արարմանը, սակայն, բացի դրանից, երեխան ինքն իրեն է արարում: Երեխան նմանակում է ուսուցչին, հայրիկին, մայրիկին, հարևանին, բայց բոլոր դեպքերում մնում է հավատարիմ ինքն իրեն, և նմանակման մեջ էլ վիթխարի է ստեղծագործական տարրը: Դպրոցը, դաստիարակության սկզբունքները նորություն են մտցնում ոչ միայն երեխայի, այլև ամբողջ ընտանիքի կենցաղում: Ծնողներից է կախված շատ բան, հարաբերությունների այն ամբողջ համակարգը, որի մեջ մտնում է երեխան դպրոց գնալով, վերաբերմունքը ուսուցչի և համադասարանցիների, գնահատականների և գիտելիքների նկատմամբ:

Երեխային սովորեցրեք բառացիորեն պատմել ամեն ինչի մասին, ինչ տեսել է կենդանաբանական այգում, անտառում զբոսնելիս, ռադիոյով լսած հեքիաթի մասին: Եթե դպրոց գնալուց առաջ դուք շտապեցնեք երեխային, փնտրեք չգիտես որտեղ կորած գուլպաները կամ վերջին բոպեին արդուկեք նրա վերնաշապիկը, ապա երեխան կունենա անփույթ վերաբերմունք այդ ամենի հանդեպ: Խնդրում ենք ձեզ այդ բոլորը նախապատրաստել երեկոյան և անպայման երեխայի հետ միասին: Հիշեցեք, որ նրա ամբողջ դպրոցական օրը հաճախ կախված է լինում այն բանից, թե ձեր մանուկն ինչպես է անցկացրել այդ կես ժամը դպրոց գնալուց առաջ, այն խոսքերից, որ դուք ասել եք նրան հրաժեշտ տալիս: Ահա և սկսվում է դպրոցական առօրյան: Ամեն օր դուք երեխային դիմավորում եք նույն հարցով՝ ինչպե՞ս է դպրոցը, որևէ գնահատական ստացե՞լ ես: Բժախնդրությամբ գննում եք տետրում արված առաջին թվանշանը: Հիշեցեք, որ ժամանակին դուք էլ եք դժվարությամբ հաղթահարել այդ կեռիկները: Ահա առաջին գնահատականը: Ընդհանրապես առաջին դասարանի ուսուցիչները աշխատում են իրենց աշակերտներին անբավարար չնշանակել, որ հենց սկզբից նրանց չփատեցնեն: Երեխային չկշտամբեք լավ չհասկանալու, անփութության համար: Ձեզ թվում է, որ եթե դուք չկշտամբեք նրան առաջին վրիպումի համար, ապա երեխան դրան կվերաբերվի որպես բնական երևույթի: Ուղղակի ամբողջ տեսքով պետք է ցույց տալ, որ վշտացած եք, քանի որ ինչ էլ մարդ անի՝ կամուրջ կառուցի, թե գծիկ քաշի, պետք է անի աշխա-

տանքում հոգի դնելով: Դա պետք է բացատրել այնպես, որ նա հասկանա, որ գլխավորը ոչ թե գնահատականն է, այլ այն աշխատանքը, որ ամփոփված է նրանում:

Պե՞տք է արդյոք առաջին դասարանցու հետ միասին դասերը պատրաստել: Ինչպե՞ս պահպանել չափը, ինչպե՞ս կանխել երեխայի մեջ այն սովորությունը, որ որևէ մեկը միշտ պետք է հոգ տանի նրա բոլոր գործերի մասին: Կան ընտանիքներ, որտեղ դասերը պատրաստելուն օգնում են ավագ քույրերը: Այնուամենայնիվ, սկզբնական շրջանում ձեր փոքրիկը կարիք է զգում այն բանի, որ դուք նրան հիշեցնեք դասերի մասին և նույնիսկ նստեք նրա կողքին, մինչև նա դասերը սովորի: Նրա դպրոցական այդ առաջին քայլերը կարևոր են, քանի որ նա կվարժվի աշխատանքի ուժմի՞ն, կսովորի իր գործերը կատարել հստակ և արագ: Հետևեք, որ ձեր փոքրիկը ոչինչ չփնտրի, նրա բոլոր իրերի համար պետք է տրամադրել որոշակի տեղ: Կարևոր է, որ նա ամեն օր միևնույն ժամին նստի դասերը սովորելու: Սեղանի վրա ոչ մի ավելորդ բան չլինի, բացի այն ամենից, ինչ անհրաժեշտ է տնային հանձնարարությունները կատարելու համար: Գրիչը կարգին է, լույսն ընկնում է ձախից: Երեխային պետք է հստակորեն բացատրել, թե ինչ հանձնարարություն են տվել, ասենք, մի տող գլխատառ Ը գրել: Իմաստ չունի ստիպել, որ նախ սևագրության տեսքում փորձի, որովհետև ցանկանում եք, որ ամեն ինչ լավ անի: Գլխավորն այն է, որ նա չշտապի: Երբեմն երեխան շուտ է սովորում կարդալ, շատ է սիրում գրքեր, հիանալի պատմում է, լավ հաշվում է, իսկ, այ, գրում է վատ: Պետք չէ դրա համար շատ կշտամբել նրան: Սովորեցրեք խոշոր, մաքուր գրել, պահպանել լուսանցքներու, նոր տողը շատ կարևոր է: Մարդը ամեն ինչ պետք է անի գեղեցիկ:

Երևի ձեզնից շատերին կհետաքրքրի՝ իսկ ե՞րբ երեխային թողնել, որ միայնակ կատարի առաջադրանքը:

Որքան կարելի է շուտ, հենց որ զգաք, որ նա կարող է գլուխ հանել առանց ձեզ: Պետք չէ դա անել կտրուկ ձևով: Նախ՝ որևէ գործ անելու պատրվակով հեռացեք նրանից, հետո նա կընտելանա ձեր բացակայությանը: Կան երեխաներ, որոնք գրագետ են գրում՝ իրենք էլ չիմանալով, գրում են հենց այդպես և ոչ թե այլ կերպ: Որպես կանոն՝ այդ երեխաների տեսողական հիշողությունը լավ է զարգացած:

Պետք է հասկացնել երեխային, որ իմանա մարդկային համակեցության պարզ ճշմարտությունը. եթե ուզում ես, որ քեզ հարգեն, ինքդ հարգիր ուրիշներին, միայն այն ժամանակ դու կողեկտիվի իրավահավասար անդամը կլինես:

Եթե դու կոլեկտիվի անդամ ես, ուրեմն կարողացիր ենթարկվել ընդհանուր օրենքին, ամուր դրված կանոնին: Առանց դրա կյանքի ամբողջ ընթացքը կխախտվի:

Իտալիայի մասին Գորկու գրած հեքիաթների մեջ կա փորձանքի մեջ ընկած հոր և որդու մասին մի պատմություն. ծովում փոթորիկը վրա է հասնում նրանց: Ալիքները փոքրիկ նավակն անխնա կերպով շարտում են ամեն կողմ, իսկ ափն ավելի ու ավելի է հեռու փախչում: Անխուսափելի մահվան հանդեպ հայրը պատանի որդուն սկսում է պատմել այն ամենի մասին, ինչ սովորեցրել էր նրան կյանքը՝ աշխատանքի մասին, մարդկանց մասին: Որպես ձնկնորս՝ նա ամենից առաջ պատմեց ամենակարևորի՝ իր արհեստի մասին՝ աշխատելով որդուն տալ այն ամենը, ինչ գիտեր ձկների սովորությունների մասին, մարդկային հարաբերությունների մասին: Քամի էր, ալիքները շրմփում էին դեմքին, և ծերունին ստիպված էր բղավել, որպեսզի որդին լսեր նրան:

- Երբեք մի՛ մոտենա մարդուն՝ կարծելով, թե նրա մեջ վատն ավելի շատ է, քան թե լավը, մտածիր, որ նրա մեջ լավն ավելի է, և այդպես էլ կլինի: Մարդիկ տալիս են այն, ինչ որ պահանջում են իրենցից:

Դրանից հետո որդին երկար ապրեց, և ահա արդեն խորին ծերության ժամանակ նա երախտագիտությամբ հիշեց հոր արդարացի և իմաստուն բառերը՝ սիրել, հավատալ, վստահել: Եվ միշտ ամեն մեկի մեջ լավը փնտրել: Սովորեցնել երեխաներին և ինքը սովորել նրանցից: Եվ եթե սիրում ես նրանց, իսկ նրանք սիրում են քեզ, և հավատում են, ուրեմն ամեն ինչ լավ կլինի: Դու կհաղթահարես ամենադժվարինը, կգտնես դեպի ամենահամառ սիրտը տանող ճանապարհը և երջանիկ կլինես, շատ երջանիկ:

Խորհուրդներ աշակերտներին

Սովորելիս բոլոր աշակերտները նժույգի վրա են զգում իրենց, իսկ երբ կյանք են մտնում և փորձում չափ զցել նժույգը, տեսնում են, որ իրենց տակ ոչ մի երիվար էլ չկա, և իրենք պետք է հետիոտն անցնեն ճամփան:

Հենց պատանեկության տարիներին է որոշվում, թե մարդ ինչով ուժեղ կլինի, ինչով թանկ և պիտանի կլինի հասարակության համար: Ես կուզենայի, որ ձեզնից ամեն մեկը նայեր իր ներսը և հարցներ. «Իսկ ես ինչպիսի՞ն եմ: Ինչպիսի՞ն զծեր ես պետք է դաստիարակեմ իմ մեջ, որ-

պետզի կյանքս ապրեն արժանավայել և ազնիվ, որպետզի ուժեղ լինեն ամեն տեսակ փորձությունների ժամանակ, որ կյանքը կդնի իմ ճանապարհի վրա»:

Մի տղա պատահամբ դրամով լի մի քսակ է գտել և վերադարձրել տիրոջը. ի՞նչ ազնիվ, ի՞նչ սքանչելի վարմունք: Բայց ուրիշ ինչ կերպ պիտի վարվեր նա. քսակն իր մո՞տ պահեր, ինչու այն ժամանակ էլ հատուկ շնորհակալություն չհայտնել բոլոր նրանց, ովքեր չեն կռվում, չեն հայհոյում, չեն գողանում: Ինչո՞ւ սովորական, բնական, միակ ճիշտ արարքի մասին խոսվում է ինչպես մի անսովոր բանի մասին: Կարծես թե հոգեկան և մտավոր բոլոր ուժերը պահանջող մի սխրագործություն է ուրիշի իրը չյուրացնելը: Պատահել է՝ երեխաները խորտակման առաջն են առել, մտել են հրդեհվող տան մեջ. Այստեղ համարձակություն է պետք, վճռականություն, պետք է կարողանալ վտանգից չվախենալ, համուն ուրիշների՝ գոհել իրեն: Նման դեպքում՝ շնորհակալություն:

Եթե անձնավորությունը ցանկանում է իրեն դաստիարակել այնպես, որպետզի իր միջից վերացնի բացասական գծերը և իրեն օժտի դրական հատկանիշներով, ապա նա պետք է ոչ միայն հաստատակամորեն գիտակցի իր սխալներն ու թերի կողմերը, այլև իմանա, թե ինչը իրեն չի բավականացնում, ինչ պետք է ձեռք բերել և ինչպես:

Ժամանակին ռուս մեծ գրող Լև Տոլստոյը իր բնավորության վերլուծությունն է կատարել. «Ես հիմար եմ, անճարակ, ուրիշների համար անհետաքրքիր, անհամեստ, անհամբեր ու ամաչկոտ, ինչպես երեխա: Ես գրեթե տոգետ եմ: Ինչ էլ որ գիտեմ, մի կերպ ինքս եմ սովորել ընդհատումներով, անկասպ, անմտորեն և այնքան քիչ: Ես անգուսպ եմ, անվճռական, անկայուն հիմար փառասեր եմ ու բռնկվող, ինչպես բնավորությունից զուրկ բոլոր մարդիկ: Ես քաջ չեմ: Կյանքում կարգ ու կանոն չեմ սիրում և այնքան ծույլ եմ, որ անբանությունը դարձել է իմ անբաժանելի սովորությունը: Ես խելոք եմ, սակայն իմ խելքը դեռևս ոչ մի բանի վրա կանգ չի առել ու չի փորձարկվել: Ես չունեմ ո՛չ գործնական, ո՛չ էլ աշխարհիկ խելք: Ես ազնիվ եմ, այսինքն՝ բարին սիրում եմ, սովորություն եմ դարձրել սիրել այն և, երբ շեղվում եմ, դժգոհ եմ մնում ինձանից ու հաճույքով վերադառնում եմ նրան, սակայն կան բաներ, որոնք ավելի եմ սիրում, քան բարին. դա փառքն է»:

Եվ ի՞նչ եզրակացության է գալիս ապագա մեծ գրողը: Նա կազմում է իր թերությունների վերացման ծրագիրը. «Կյանքում ինձ համար

ամենակարևորը երեք գլխավոր թերությունների վերացումն է. դրանք են՝ կամակորություն, դյուրագրգռություն և ծուլություն»:

Ինքնատիպարակությանը մեծ նշանակություն էր տալիս Ա. Ի. Գերցենը: Նա իր որդուն գրել է. «Կյանքում ձեռք բեր լուրջ հետաքրքրություններ, կայուն գիտելիքներ, ինքդ քեզ դիտարկիր բնախույզի ու բժշկի պես և ձգտիր բանականությամբ ուղղել այն, ինչ անուշադրության է մատնված...»: Հաջորդ նամակում հայրը գրում է. «Չնայած թախժոտ էր նամակդ, բայց ինձ գոհացրեց այն, որ դու վերջապես դժգոհություն ես հայտնում ինքդ քեզանից: Դա առաջին քայլն է պարասպ անորոշությունից դուրս գալու, քո մեջ սկսվում է վախ առաջանալ ապագայի և գրեթե ավստասանք՝ անցածի նկատմամբ: Եթե դու քո մեջ կոփես ուժեղ կամք, եթե դու կարողանաս ցուցաբերել համառություն, դու կսկսես չափահասի կյանք, կդառնաս գիտնական կամ դերասան, քաղաքական մարդ կամ ինչ որ ուզենաս, միայն թե կայուն սկզբունքներով...»:

Մի ծնող իր դժվար դաստիարակվող որդուն մի քանի ամիսների ընթացքում մղում է ակտիվ ուսումնառության: Սկզբում պատանու հայրը նրա ամեն մի վատ արարքի համար տան միջանցքի պատին մեկ մեխ է խփում: Տղան հետևում է այդ ամենին և տեսնում, թե ինչպես օր օրի ավելանում է մեխերի թիվը: Մի օր էլ, երբ հայրը նրա հերթական չարության համար մեխը ձեռքին մոտենում է պատին, նա մեղայական տոնով դիմում է հորը.

-Եթե ես այսօրվանից լավ սովորեմ ու չարություն չանեմ, դու այդ մեխերը կհանե՞ս:

Հայրը պատասխանում է, որ կհանի օրը մեկ մեխ, յուրաքանչյուր լավ արարքի համար: Այդ օրվանից փոխվում է նրա վերաբերմունքն ամեն ինչի նկատմամբ: Իսկ հայրը հանում է օրական մեկ մեխ և երբ վերջին մեխն է հանում որդու ներկայությամբ, վերջինս ուրախացած գոչում է՝ այլևս չկան: Հայրը, դաստիարակչական գործընթացը շարունակելու նպատակով, որդուն ասում է. «Ճիշտ է, մեխերը հանվեցին, բայց տես՝ հետքերը մնացին»:

Մարդն ավելի է ուժեղանում, երբ ուրիշները հարգանքով են նայում նրան:

Մարդուն գովելը շատ օգտակար է նրա անձի համար: Դա նպաստում է նրա ստեղծագործական ուժերի հանդեպ վստահության զարգացմանը:

Մ. Գորկի

Հայրն իր որդիների երջանկությամբ ավելի երջանիկ է լինում, քան իր սեփական երջանկությամբ:

Օ.Քալզակ

Մարդուն չի կարելի սովորեցնել երջանիկ լինել, բայց կարելի է դաստիարակել այնպես, որ նա երջանիկ լինի:

Որքան երեխան փոքր տարիքում հեշտ է ձեռք բերում ուրախություններ, երջանկություններ, այնքան հասուն տարիքում ավելի քիչ է հասկանում իսկական երջանկությունը:

Սուխոմլինսկի

Ոչ ոք ոչինչ պարտք չէ քեզ

/ հոր նամակը դստերը՝ Ծննդյան տոների առթիվ/

«Շուտով Ծննդյան տոներն են, և ես չգիտեմ՝ ինչ նվիրել քեզ: Գիտեմ, որ շատ բան կուզենայիր՝ գրքեր, խաղեր, հագուստ, սակայն ցանկանում եմ մի այնպիսի բան նվիրել, որն ավելի երկար կմնա քեզ մոտ և կհիշեցնի ինձ յուրաքանչյուր տարի այս օրը:

Ուզում եմ քեզ մի ճշմարտություն հաղորդել, որը ես ինքս միանգամից չեմ հասկացել, սակայն եթե դու դա հիմա հասկանաս, քո կյանքն անհամեմատ կբարելավվի, և դու չես բախվի այն խնդիրներից, որոնց բախվում են այս ճշմարտությունը չընդունող մարդիկ:

Քեզ ոչ ոք ոչինչ պարտք չէ: Գուցե դու այժմ չհասկանաս, որ այս արտահայտությունը իրականում փրկում է քո կյանքը: Ոչ ոք չի ապրում քո փոխարեն, յուրաքանչյուր մարդ ապրում է իր համար և հանուն իր երջանկության: Եվ որքան շուտ հասկանաս սա, այնքան շուտ կիրառարվես այն մտքից, որ ինչ-որ մեկը կարող է երջանկացնել քեզ:

Դա նշանակում է, որ ոչ ոք պարտավոր չէ քեզ սիրել, իսկ եթե ինչ-որ մեկը սիրում է քեզ, ուրեմն քո մեջ ինչ-որ յուրահատուկ բան կա, որը երջանկացնում է նրան: Աշխատիր հասկանալ, թե որն է քո յուրահատկությունը և կատարելագործիր այն, որպեսզի քեզ ավելի շատ սիրեն:

Եթե մարդիկ ինչ-որ բան են անում քեզ համար, ապա՝ այն պատճառով, որ այդպես են ուզում, և ոչ թե որովհետև ինչ-որ մեկը ինչ-որ բան պարտք է քեզ:

Դա նշանակում է, որ ոչ ոք պարտավոր չէ հարգել քեզ, իսկ ոմանք նույնիսկ բարի էլ չեն լինի քո հանդեպ: Հենց որ դու հասկանաս, որ մարդիկ պարտավոր չեն բարի լինել քո հանդեպ, կսովորես խուսափել նրանցից, ովքեր կարող են ցավ պատճառել քեզ:

Դու պետք է ձգտես ավելի լավը լինել միայն ինքդ քեզ համար, և այդ դեպքում ուրիշները կձգտեն դեպի քեզ: Երբ հասկանաս, որ շրջապատի հարգանքն ու սերը հարկավոր է վաստակել, դու երբեք չես ձգտի անհնարին և հիասթափված չես լինի:

Մարդիկ պարտավոր չեն քեզ հետ կիսվել իրենց զգացմունքներով և մտքերով, բայց եթե անում են դա, ուրեմն դու արժանացել ես դրան. Ուստի և՛ իրավունք ունես հպարտանալ քո հանդեպ շրջապատի տածած սիրով ու հարգանքով, բայց գնահատի՛ր ունեցածդ, այլապես կարող ես ամեն ինչ միանգամից կորցնել»:

Մայրություն՝ կնոջը վեհացնող շնորհ

Աշխարհում կա ամենից սքանչելի մի էակ, որին մշտապես պարտք ենք: Դա մայրն է:

Նիկոլայ Օսպրովսկի

Յուրաքանչյուր մարդու համար՝ փոքր թե մեծ, երիտասարդ թե տարեց, աշխարհում ամենահարազատ մարդը մայրն է: Մեզանում եղած ամեն բան սկսվում է մորից, որը նվիրել է նաև ամենաթանկագինը՝ կյանքը:

Լույս աշխարհ գալու առաջին իսկ պահից մեզ շրջապատում են մայրական ջերմությունը, հոգատարությունը, փաղաքշանքն ու համբերատարությունը:

Մայրն է երեխայի առաջին դաստիարակը, ընկերը, ղեկավարն ու դաշնակիցը: Նա միակ ու անկրկնելի մարդն է, որի սերը զավակի հանդեպ վեհ ու անշահախնդիր է, զարմանալի՝ իր իմաստնությամբ ու անսահմանությամբ:

Մոր սիրուց անշահախնդիր ոչինչ չկա: Բայց մայրն սպասում է, ամբողջ սրտով արձագանք է սպասում երեխաներից: Ոչ թե որպես շնորհակալություն, այլ որպես իր անդուլ աշխատանքի ու ջանքերի արդյունք: Իսկ երեխաները արդյո՞ք գիտակցում կամ զգում են դա: Երեխաները դեռևս ի վիճակի չեն ըմբռնելու մայրական բարդ ապրումները: Մոր ամենօրյա հոգսերը, տանը նրա բազմազբաղությունը նույնիսկ փոքրիշատե չեն էլ համեմատում սխրանքի հետ: Մխրանքը երեխաների համար տնից հեռու, մեծ աշխարհում կատարվող ինչ-որ անսովոր արարք է: Իսկ այստեղ իրենց սովորական մայրիկն է, որին ամենից հաճախ տեսնում են աչքի չընկնող տնային աշխատանքում, երբեմն փնթփնթացող, ինչ-որ բան պահանջող, ինչ-որ բան արգելող...

Բնականաբար, մինչև չափահաս դառնալը երեխաները շատ ճանապարհ ունեն անցնելու, բայց կյանքի առաջին իսկ տարիներին նրանք մի բարձունքի պարտավոր են հասնել: **Մարդու բարոյական առաջին բարձունքը մոր նկատմամբ հարգանքն է:**

Չսպասելով գիտակցության զարգանալուն, երբ երեխաները կկարողանան գիտակցել իրենց պարտքը, մոր նկատմամբ հարգանքը նրանց պետք է պատվաստել որպես զգացում: Մորը սիրում է ամեն ոք, բայց բոլորը չէ, որ կարողանում և սովորել են խնայել ու գնահատել նրան: Մեծանում են երեխաները: Բոլորն էլ ձգտում են, որքան հնարավոր է, շուտ աչքի ընկնել, ինքնուրույն և ուժեղ դառնալ: Չգիտակցելով, թե ումից է կախված իրենց ինքնուրույնությունը, ուժը, նշանակալից լինելը, երբեմն դադարում են մոր հետ հաշվի նստել. կարող են անփութորեն նետել՝ «Սա քո խելքի բանը չէ» կամ «Դու չես հասկանում» խոսքերը՝ չնկատելով, որ դրանով ևս մեկ կնճիռ են ավելացնում այնքան հարազատ դեմքին: Իսկ հարգանքը թանկ է մոր համար. այն մայրական սիրո պատասխանն է, երախտագիտությունը՝ նրա աշխատանքի: Բայց դա նաև իրենց՝ երեխաներին է հարկավոր. մի՞թե այստեղ չեն սաղմերը շատ ու շատ հատկանիշների, որոնք հետագայում ձևավորում են մարդու հոգեկան կուլտուրան: Այստեղ է նաև ձևավորվում մարդուն գնահատելու կարողությունը, հարազատ և նվիրված մարդկանց դառնություն պատճառելուց խուսափելու ինքնասահմանափակման առաջին ջանքերը: Նաև եսասիրությունը, որ կարող է առաջանալ երեխաների մեջ, իսկ հետո վերջնականապես իր եսամոլությամբ, շրջապատի նկատմամբ սպառողական վերաբերմունքով փչացնել մարդուն:

Մեծ, խոր պետք է լինի մոր նկատմամբ հարգանքը: Այդպիսի հարգանք պետք է սովորեն բոլորը, հատկապես՝ պատանիները: Դա հիշողություն է: Դրա համար ունե՞նք բավականաչափ քաղաքացիական կուլտուրա և մարդկայնություն:

Սովորաբար, երբ մեր կողքին է մայրը, հաճախ ենք նրան մոռանում: Այսպես մարդը կարող է մոռանալ միայն ինքն իրեն: Բավական է կարճատև անջատում կամ ամենասարսափելին՝ հավերժ բաժանում, այդ ժամ ենք միայն զգում այն անտանելի դատարկությունը, որ միայն մայրը կարող է լցնել, ուրիշ ոչ ոք:

Շարունակիր քո մեջ լույս հավաքել
/ մոր նամակը 13-ամյա դստերը/

«Սիրելի՛ս, քո ծնունդից հետո կյանքիս ամեն օրը քո կողքին եմ անցկացրել, բայց ուզում եմ այս նամակով ասել այն ամենը, ինչ չեմ հասցրել ասել դեմ առ դեմ: Մի քանի խորհուրդ, որ քեզ անհրաժեշտ կլինի ապագայում:

Ամենակարևորը՝ ջանք արա, որ լավ մարդ լինես: Գու արդեն լավ մարդ ես, ի՛նչ փոքրիկ: Քո մեջ այնքան բարոթյուն կա, որ սիրտս ներսումս ցնծում է ուրախությունից, և ես ցանկանում եմ, որ դու այդպիսին էլ մնաս ու ավելի՛նը լինես:

Շարունակիր քո մեջ լույս հավաքել: Պարզապես խոստացիր ինքդ քեզ, որ մշտապես կլուսավորես քո շուրջն անփոփոխ կերպով, նման լուսամփոփի, որ ջերմորեն լուսավորում է: Մարդիկ կցանկանան մոտենալ քեզ, որպեսզի իրենց երջանիկ զգան ու ինչ-որ բան կարդան քո ճառագայթների լույսի ներքո: Գու պայծառ փայլելու ես խավարի ու արագորեն իրար հաջորդող հոսանքների աշխարհում, և դա կպահպանի քեզ տազնապներից ու դատարկության մատնող համոզմունքներից, ինչպիսիք են՝ «լինել նորածն», «լինել հաջողակ ուրիշներից» կամ «լինել նիհար»:

Երկրորդը. միշտ հիշիր, որ նյարդային վիճակների 10-ից 9-ի դեպքում դու պարզապես թեյի ու թխվածքաբլիթի կարիք ունես: Գու կզարմանաս, թե որքան հեշտ ենք մենք խառնում մեկը մյուսի հետ:

Հաջորդը. ընկերացիր այնպիսի մարդկանց հետ, որոնց հետ դու կլինես մեկը, ով կաս իրականում կամ ավելի լավը, նրանց հետ, ում կողքին դու քեզ կզգաս այնպես, ասես քո լավագույն զգեստը հագած լինես, անգամ եթե այդ պահին կրում ես մի հասարակ վերնաշապիկ: Երբեք մի՛ սիրիր մեկին, ում, քո կարծիքով, արժե փոխել, որպեսզի ավելի լավը դառնա, կամ մեկին, ով կարծում է, թե դու փոխվելու կարիք ունես:

Ընկերացիր ինքդ քեզ հետ, գոհացիր Աստծուց, որ Նա քեզ ստեղծել է հենց այնպիսին, ինչպիսին կաս: Ժամանակ առ ժամանակ նայիր ոտքերիդ ու գոհացիր, որ նրանք կարողանում են վազել: Գոհացիր, որ մարմինդ փափուկ է ու տաք: Մի՛ հոգնիր հիանալուց այն աշխարհով, այն անհավանական կենդանի ժամացույցով, որ ապրում է քո ներսում, ինչպես անում էի ինքս, երբ կրծքիս տակ կրում էի քեզ ու երագում քո մասին ամեն գիշեր:

Սիրելի՛ս, ջանք արա տեսնելու ավելի շատ արշալույսներ ու մայրամուտներ: Մի՛ մոռացիր երբեմն կանգ առնել ու ճաշակել ճանապարհի եզրերին աճող մեծ վարդերի անուշահոտությունը: Միշտ հավատա, որ կարող ես փոխել աշխարհը, անգամ եթե մի փոքր չափով անես դա, որովհետև այդ «մի փոքր»-ը սպասում է ինչ-որ մեկին, ով այն կփոխի:

Ճամփորդի՛ր կյանքի ճանապարհով: Առատաձեռնությամբ ընդունիր հյուրերին, մի՛ դադարիր սիրել, խոսի՛ր հորդ հետ իմ մասին ամեն օր ու երբեք, երբեք ու երբեք մի՛ ծխիր. դա նման է փոքրիկ ու ծիծաղելի մի վիշապ գնելուն՝ արդյունքում այն կմեծանա ու հրի կմատնի քո տունը: Միրով՝ մամա»:

Աղջկա նամակը մորը

Անգին մայրիկ, ես քեզ սիրում եմ, որովհետև Դ-ու կաս, իմ կողքին ես միշտ լացող աչքերով եմ, թե տաք ժպիտով... Սիրում եմ տիեզերքի չափ՝ անասանման: Իմ գեղեցիկ, իմ քնքո՛ւշ մայրիկ... Առանց քեզ ամբողջ աշխարհը դատարկ կլինի, դու ես իմ ամբողջ աշխարհը: Անկրկնելի են այն պահերը, երբ միայն դու ես կողքիս. սկզբում կրում ես սրտիդ տակ, հետո՝ գրկիդ մեջ, հետո՝ սրտումդ... Երբ նայում եմ կյանքիս ընթացքին, տեսնում եմ, թե ինչպես են մարդիկ գնում, գալիս, բայց դու մնում ես կողքիս, հոգիս հոգուդ մեջ ես դրել ու շոյում ես ինձ, պահում ես ավիդ մեջ. վահանի նման պաշտպան ես ամեն հարվածից... Ամենամեծ ցավն անգամ ինձ համար ոչինչ է դառնում, որովհետև դու ինձ հետ ես: Ի՛նչ աշխարհ, ի՛նչ մայրիկ... Երբ ինձ ուղղված գովեստի խոսքեր եմ լսում, հետ եմ նայում, տեսնում եմ, որ քո շնորհիվ եմ հասել այդ գովասանքին, որ քո տված խրատներն ուղեկից են միշտ: Մեջս ցանկություն է պոռթկում վերհիշելու առաջին քայլերս. բացում եմ հուշերիս գիրքը և թերթում անցյալս: Ահա, մայրիկ, ես եմ քեզ հետ, գրկել ես ինձ, սեղմել կրծքիդ, ամուր պահում ես ջերմ գրկումդ: Մրտիս մյուս էջում գիշեր է ու քար լռություն, իսկ դու արթուն ես ինձ հետ և խնամում ես ինձ: Այնտեղ ժպտում ես ինձ, մեղմ ժպիտդ մի տաքուկ արև է, մի գարնանային զեփյուռ, որն իր հետ երջանկություն է բերում: Ա՛խ, մայրիկ, ինչպե՛ս ես փայլում, երբ ես մի նոր հաջողություն եմ ունենում, և ինչպե՛ս ես փոթորկվում ներսումդ, երբ ինչ-որ խնդիր է ճանապարհիս հանդիպում... Ես այնքան ուրախ եմ, որ մանուկ լինելով՝ հասկացել եմ, որ դու իմ գանձն ես, և լռությունս քո անվամբ է չքացել՝ «մամ»: Առաջին բառը քո անունն է գրել գրին անսովոր ձեռքս՝ «մայրիկ», առաջին քայլը անելիս քեզ մոտ եմ

վազել, իմ մա՛յր, առաջինը քո գրկում եմ արտասովել, քո դեմքի գեղեցիկ ժպիտով ժպտացել... Գարնան քամին ինձ ներկա է բերում, փակում եմ կյանքիս գիրքը, շարժվում դեպի եկեղեցի: Մրտիս խորքից աղոթքս եմ ուղղում Աստծուն. «Տե՛ր, մորս առողջությո՛ւն տուր, թող դժբախտությու՛նն ու քախիծը նրան անձանոթ լինեն, իսկ ինձ ուժ տուր ու մի քիչ էլ բախտ, որ կարողանամ մորս շնորհակալ լինել...ԱՄԵՆ»:

Ն.Հայթով

Վաղը ուշ կլինի

Երբևէ չեմ մտածել, թե ինչու եմ սիրել ու շարունակում եմ սիրել ծնողներին: Որդիական սերը տարբեր է լինում: Օրինակ՝ ես ծնողներին ավելի սրտանց սիրեցի, երբ նրանք արդեն հեռացել էին այս աշխարհից: Բայց ինչո՞ւ: Որովհետև հիմա, երբ արդեն քառասուն տարեկան եմ, նոր եմ իմանում, թե ինչպիսի մարդիկ էին նրանք, թե անձնվիրության ու անձնագոհության գնով ինչեր են արել ինձ համար: Հայրս ծանր հիվանդ էր, երբ որոշեց ծախել մեր միակ եզր և այգին, որպեսզի ինձ դպրոց ուղարկի: Ինքը ծանր հիվանդ էր և այդ դրամով կարող էր սննդաբար ուտելիքներ գնել իր համար: Բայց այդպես չարեց: Ինքն իրեն առողջ էր ցույց տալիս և, ուռած ոտքերը թաքցնելով կարպետի տակ, թույլ չէր տալիս բժշկի և դեղերի համար «ավելորդ» ծախս անել: Ինձ համար, ավելի ճիշտ իմ ուսման համար, նա գրկվեց ամեն ինչից: Մի՞թե առանց ուսումի չէի կարող մնալ: Առանց ուսումի էլ կարող էինք ապրել ե՛ս էլ, հա՛յրս էլ և բու՛րն էլ: Ուղղակի կույր պետք էր լինել չտեսնելու համար հորս խոր հուզմունքը, երբ բաժանվում էր այգուց և միակ եզից, որի հետ տասներկու տարի հերկել էր հողը: Այո՛, այդ ամենը անում էր ինձ համար, իսկ ես նույնիսկ «շնորհակալ եմ» չասացի: Ու մինչև օրս տխուր զգացումները դեմ են առել կոկորդիս, որ հայրս այլևս երբեք չպիտի կարողանա լսել այդ: Ավարտեցի միջնակարգը, սկսեցի հասկանալ հորս գոհողությունը: Մրտումս երախտագիտության զգացում արթնացավ: Որոշեցի առաջին իսկ վաստակովս հորս համար խնձոր գնել: Այսօր կգնեմ, վաղը կգնեմ...Մի օրից մյուսը հետաձգեցի, մինչև որ գարնանային մի օր իմացա, որ հայրս գիշերը մահացել է: Այդ չգնված խնձորներն էլ հորս մահից քսան տարի հետո դեմ են առել կոկորդիս և խեղդում են ինձ:

Մորս հետ էլ նույն ձևով չվարվեցի՞: Նա բախտավոր էր, որ հորիցս ավելի երկար ապրեց, տեսավ ինձ «մարդ դարձած», տուն-տեղ եղած:

Անտառաբույժ էի: Մայրս եկավ անտառ՝ մոտս ապրելու, հետո էլ քաղաք տեղափոխվեցինք: Ծերացած ու փոքրացած, իր ավանդական զգեստները հագին՝ նա նայում էր աչքերիս մեջ և հրճվում իմ համազգեստով: Մակայն ես շատ քիչ էի նայում նրան: Առօրյա պարտականություններով զբաղված՝ չէի զգում, թե ինչպես է անցնում ժամանակը: Չէի կարողանում նստել մորս կողքին ու մտերմիկ զրուցել նրա հետ... Ամո՞թ էի զգում, թե՞ քաշվում էի... Ես էլ չգիտեմ: Սիրում ու հարգում էի մորս, բայց մի օր նրան չդիմեցի «սիրելի մայրիկ» կամ «մայրիկ ջան» բառերով: Այս խոսքերն էլ կոկորդունս մնացին... Եվ ես ցավում եմ, որ այլևս չեմ կարող ասել այդ խոսքերը: Այսօր մտածում եմ, թե ինչ մեծ հաճույքով և սիրով կարող էի արտասանել այդ բառերը, բայց մայրս չկա այլևս:

Ահա թե ինչու բոլոր նրանց, ովքեր դեռ հայրեր ու մայրեր ունեն, ուզում եմ ասել՝ սիրեցե՛ք նրանց, քանի դեռ ողջ են, անպայման ասացե՛ք այն ջերմ բառերը, որոնք այնքան հարկավոր են նրանց: Վաղը գուցե արդեն ուշ կլինի. երախտագիտության ու սիրո խոսքերը, որոնք չեք ասել, պիտի ծանրանան ձեր սրտերին, և աշխարհում ոչ մի բան այլևս չի կարող սփոփել ձեզ:

Հնդկական առակ

Մի մարդ ամեն օր գնում էր շուկա ու առնում էր հինգ հատ հաց: Մի օր հանդիպեց իր ընկերոջը, և սա հարցրեց.

- Ասա, ինչու՞ ես դու հինգ հատ հաց գնում:

Եվ մարդը պատասխանեց.

- Մեկն ինքս եմ ուտում, երկուսը պարտքով եմ տալիս, մյուսներով պարտքս եմ վճարում:

- Չեմ հասկանում,- ասաց ընկերը,- բացատրիր ինձ: - Դե ի՞նչ բացատրեմ. մեկը ինքս եմ ուտում, երկուսը տալիս եմ երեխաներիս, իսկ մյուս երկուսը՝ հորս ու մորս:

Քարեկիրք վարվելաձև

Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել մարդ կոչումի հետ:

Հովհ. Թումանյան

Բարև

Բարև: Շատ սովորական ու միաժամանակ շատ խորիմաստ մի բառ: Բարև՝ այսինքն՝ բարի արև ձեզ, բարին ընդ ձեզ: Բարևը ինքնին ուրախություն է, ջերմություն և վատահություն: Մի պարզ բարևը մարդկանց մերձեցնում է միմյանց, բարեկամ դարձնում: Առավոտ կանուխ բաց ես անում աչքերդ... Շուրջդ հարազատներդ են, և առաջին բառը, որով բացվում են շուրթերդ, «բարևն» է: «Բարև՝ տատիկ, բարև՝ պապիկ», - գրնգուն ձայնով ասում ես դու, և ժպիտը ողողում է նրանց դեմքերը, հարթվում են կնճիռները: Դուրս ես գալիս փողոց: Միրալի բարևի՞ր անցորդին, դռնապանին, այն ընկերոջը, որից մի քիչ նեղացել ես նախորդ օրը: Ժպտալով բարևի՞ր, ու կծպտա նաև քեզ շրջապատող ողջ աշխարհը:

Անկարելի բան աշխարհում չկա՝
Եթե աշխարհում իշխում է բարին,
Որ մեր բերանում դարձել է

-Բարև՝

- Ուրեմն՝ անձնագիր ցույց տալու նման,
Կենսագրություն պատմելու նման
Կամ հարցաթերթիկ լրացնելու պես՝ - Բարև՝,
Քե՛զ ու Ձե՛զ

Ծանոթ-անծանոթ իմ սիրելիներ:

Թո՛ղ անկարելին դառնա կարելի

Աշխարհում համայն,

Ամենքի՛ս համար,

Դառնա կարելի վաղն ու հենց հիմա,

Դառնա կարելի մե՛կ բառով՝

Բարև՝...

Պարույր Սևակ

Գիտե՞ք արդյոք, որ տարբեր երկրներում բարևելու ձևերը տարբեր են: Մինչև օրս Չինաստանի շատ վայրերում իրար հանդիպելիս ողջունում են ոչ թե «բարև» բառով, այլ՝ «Արդյոք այսօր բրինձ կերե՞լ ես» արտահայտությամբ, որը ցույց է տալիս չին ժողովրդի պատմության և կենցաղի յուրահատկությունները:

Ավելի բազմազան են ողջույնի խոսքերին ուղեկցող շարժումները: Եվրոպացիների շրջանում ընդունված է ձեռքսեղմումով բարևելը: Այս սովորությունը գալիս է ասպետական ժամանակներից, երբ ճանա-

պարհները վտանգավոր էին, և մարդիկ պաշտպանվելու համար կրում էին ոչ միայն երկաթե սաղավարտներ, այլև ձեռնոցներ: Իսկ երբ հյուր էին գնում, շեմից ներս չմտած՝ հանում էին ծանր գլխարկները, ձեռնոցները և ձեռքով բարևում էին տանտիրոջը՝ ի նշան վստահության: Ողջունելու այս ձևը հիմա համընդհանուր է ու հասկանալի բոլորին:

Կան ժողովուրդներ, որ իրար ողջունում են՝ խոնարհվելով մինչև գոտկատեղ, մյուսները՝ ծնկաչոք, ճակատը հայելով գետնին, երրորդները՝ ձեռքը դնելով սրտին ու հետո ճակատին:

Կան ժողովուրդներ էլ, որոնք իրար ողջունում են՝ քթերն իրար քսելով, ոմանք էլ պարզապես լեզու են ցույց տալիս:

Ինչքան ժողովուրդներ, այնքան էլ ողջույնի ձևեր, և բոլորն էլ ունեն մի ընդհանրություն. բարևին չպատասխանելը բոլոր ազգերն էլ համարում են մեծագույն անբաղաձայնություն:

Չէ՞ որ գլուխ խոնարհելը և ողջույնի կարճ խոսքերը մեծ ու կարևոր խորհուրդ ունեն. «Մա՛րդ, ես քեզ տեսնում եմ, քեզ ընդունում եմ: Իմացիր՝ ես քեզ հարգում եմ ու ցանկանում, որ դու էլ ինձ հարգես: Ես քեզ մաղթում եմ ամենայն բարիք, առողջություն, խաղաղություն, երջանկություն: Բարին ընդ քեզ»:

Ահա թե որքան իմաստալից է այս մի հատիկ պարզ ու առօրեական բառը՝ «բարև»:

Ամենալավ վկայականը

Մի գիտնական պատրաստվում էր կարևոր ճանապարհորդություն կատարելու: Նրան օգնական էր հարկավոր: Շատ մարդ եկավ՝ գնաց, վերջապես գիտնականը մեկին ընտրեց:

-Ասացեք, խնդրեմ,-հարցրեց մի ծանոթ,- ինչո՞ւ սրան ընտրեցիք, երբ ոչ մի վկայական չուներ: Մինչդեռ մյուսները լավ վկայականներով եկան, բայց Դուք նրանց մերժեցիք:

- Մխալվում եք,- պատասխանեց գիտնականը,- այս երիտասարդը շատ լավ վկայականներ ուներ: Մենյակ մտնելուց առաջ ոտքերը մաքրեց և դուռը ծածկեց առանց աղմուկ հանելու. ուրեմն մաքրասեր է ու կարգապահ:

Իր նստած տեղից անմիջապես բարձրացավ և աթոռ առաջարկեց ներս մտնող մարդուն. ուրեմն՝ հարգում է մեծերին: Դեռ շեմքից ներս չմտած՝ գլխարկը հանեց. ուրեմն քաղաքավարի է: Գիրքը, որ ես դիտմամբ գցել էի հատակին, կռացավ ու վերցրեց. մինչդեռ մյուսները գրքի մոտից անցնում էին անտարբեր. ուրեմն ուշադիր է: Հարցերիս շատ

կարճ, արագ և գրագետ էր պատասխանում. ուրեմն կրթված և ընդունակ է: Հագուստները արդուկված էին, ձեռքերը՝ մաքուր, մազերը՝ սանրած...Ի՞նչ եք կարծում, այս բոլորը ամենալավ վկայականները չե՞ն:

Խորհուրդներ բարեկրթության մասին

Պետք է միշտ հիշել՝ խոսքը մարդու խելքի հայելին է, իսկ գրուցելու կարողությունը՝ բարեկրթության:

Երբեք կարծիք մի՛ հայտնեք մի բանի մասին, որին տեղյակ չեք:

Առանց հրավերի մի՛ խառնվեք ուրիշների գրույցին: Եթե ուզում եք ձեր կարծիքն էլ արտահայտել, ապա դրա համար ընտրեցեք հարմար պահ և խնդրեցեք գրուցողների համաձայնությունը՝ օգտագործելով այս կարգի արտահայտություններ. «Ներեցե՛ք, եթե թույլ կտաք, մի բան էլ ես ասեմ», «Ներեցե՛ք, դուք դեմ չեք լինի, եթե մասնակցեմ ձեր գրույցին» և այլն:

Ջրուցակցի նկատմամբ մի՛ եղեք վերամբարձ:

Աշխատեցեք լսել գրուցակցին, թույլ տվեք, որ նա իր ասելիքն ավարտի:

Երբեք մի՛ ծաղրեք ուրիշի ասածը՝

Խոսքում օգտագործեցեք հարգալից ձևեր, ինչպես՝ «ասացեք, խնդրեմ», «ներեցեք», «երևի ճիշտ չեք» /և ոչ թե՛ «սխալ եք» և այլն:

Ջրուցակցին դիմեցեք հոգնակի թվով /Դուք, Ձեր, Ձեզ, ասացեք, լսեցեք և այլն/: Եզակի թվով կարելի է դիմել միայն մտերիմ մարդկանց:

Կարևոր է նաև ձայնը: Մի՛ գոռացեք, խոսեցե՛ք հանդարտ:

Դիմախաղը և շարժումները /ժեստերը/ հաճախ արտահայտիչ են դարձնում խոսքը, բայց դրանց պետք է դիմել չափավոր:

Ներկաների մասին խոսելիս մի՛ ասա սա, նա, ավելի լավ է անուններ տաս:

Որևէ մեկին դիմելիս ներողություն խնդիր, վերջում չմոռանաս շնորհակալություն հայտնել:

Ազատություն

Ազատ լինել, նշանակում է քաջություն ունենալ դեմ հանդիման նայելու կյանքի ու ապագայի անորոշությանը: Ազատ լինել, նշանակում է քաջություն ունենալ մենակ մնալու, քանի որ ազատությունը միշտ ենթադրում է անհատական որոշումներ, լուծումներ: Ազատ լինել, նշանակում է ընդունել այնպիսի որոշումներ, որոնք չեն սահմանափակում քո իսկ ազատությունը:

Ներքին ազատությունը չի փոխանցվում մեխանիկորեն. այն սեփական մտորումների, սեփական կյանքում հանդիպող հակասական իրավիճակներին պատասխան տալու արդյունքում է ծնվում ու զարգանում: Տարբեր մարդիկ տարբեր ընտրություններ են կատարում. ոմանք ընտրում են ազատությունը, մյուսները՝ հարմարավետությունը: Հավանաբար է լինում, որ ազատությունն ու հարմարավետությունը ուղեկցեն միմյանց, և դա է դառնում ազատությունից փախչելու պատճառ:

Հին հույն մտածող Դիոգենեսի կյանքից պահպանվել են հետևյալ գրույցները:

Ժամանակի բարձր պաշտոնյաներից մեկը մի օր փողոցում տեսնում է Դիոգենեսին և ասում է. «Այ, եթե դու կարողանայիր փոքր-ինչ քծնել ու խոնարհվել, դու ստիպված չէիր լինի հիմա ոսպ ուտել»: Դիոգենեսը հանգիստ պատասխանում է. «Իսկ եթե դու կարողանայիր ոսպ ուտել, դու ստիպված չէիր լինի հիմա քծնել ու խոնարհվել»: Այ. Մակեդոնացին, ձին հեծած, մոտենում է Դիոգենեսին ու հարցնում. «Ով իմաստուն մարդ, ի՞նչ կուզենաս, որ շնորհեմ քեզ»: Դիոգենեսը պատասխանում է. «Նախ և առաջ, մի կողմ քաշվիր ձիովդ ու ինձ մի գրկիր արևի շնորհած լույսից...»: Ազատությունը հարաբերական է. այն մարդու հարաբերությունն է շրջապատող աշխարհի հանգամանքներին: Կա միայն մեկ իրականություն՝ ազատությունը որպես ինքնաազատագրում՝ ազատ որոշում կայացնելու արդյունքում: Իսկ ի՞նչ կապ կա ազատության և երջանկության միջև... Պարզվում է, որ որքան մեծանում է մարդու ազատության աստիճանը, այնքան նա ավելի շատ է ձեռք բերում երջանիկ լինելու կարողություն: Երջանկություն զգալու պատճառները անսահման են... Կյանքը մեզ շռայլորեն պարզևում է դրանք, եթե մենք մեր դժգոհությամբ և պակասության զգացումով չխանգարենք մեզ տեսնել և զգալ այդ ամենը... Պետք չէ երջանկություն որոնել անսովոր, շքեղ հանգամանքներում, ցանկալի է երջանկությունը սովորել տեսնել սովորականի մեջ, այն ամենի մեջ, ինչ ունենք այսօր, այստեղ: Պետք է կարողանալ տեսնել այդ երջանկությունը, այլապես վաղը կարող է ուշ լինել... Ցավոք, մարդիկ հաճախ չեն գնահատում այն, ինչ ունեն, սակայն դրա կորստի պարագայում սուր կերպով գիտակցում են իրենց դժբախտությունը...

Հավատ

Ամեն քայլափոխի մարդիկ ստիպված են լինում հավատալ, վստահել միմյանց: Մենք հավատում ենք, որ մեքենաները փողոցում կպահպանեն երթևեկության կանոնները և վրաների չեն ենթարկի մայթով քայլողներին: Հավատում ենք, որ հացը ճիշտ է թխված ու չի վնասի մեր առողջությանը, հավատում ենք, որ ռեստորանում ճաշի մեջ թույն չի լցված... Իսկ ինչպե՞ս է ծագել կենաց ասելուց հետո բաժակները միմյանց խփելու սովորությունը: Քանի որ սեղանակիցները կարող էին միմյանց բաժակների մեջ թույն լցնել, սկսեցին բաժակները խփել միմյանց, որ գինին լցվի մի բաժակից մյուսը, և խմողները վստահ լինեն, որ բաժակներից ոչ մեկում թույն չկա... Մարդիկ պետք է վստահեն ու հավատան միմյանց... Մա նշանակում է, որ յուրաքանչյուրն իր տեղում պետք է այնպես աշխատի, որ չչարաշահի իր հանդեպ մարդկանց ունեցած հավատը. շինարարը պետք է լավ կառուցի, բժիշկը ճիշտ բժշկի, դատավորը դատի ըստ օրենքի... Յուրաքանչյուրին տրվում է իր հավատի չափով...

Կյանքի իմաստը

Կյանքը մարդուն տրված մեծագույն արժեքներից մեկն է, որի մասին մտորումները ևս հասունացնում են նրան:

Պատմում են, որ կյանքից հիասթափված մի մարդ օրերից մի օր որոշում է վերջ տալ իրեն: Մոտակայքում մի լիճ է լինում: Մարդը որոշում է գնալ լճում խեղդվելու: Լիճ գնալու ճանապարհին հանդիպում է մի կաղ մարդու, որին ասում է իր նպատակի մասին: Կաղը մարդուն խնդրում է առողջ ոտքն իրեն տալ: Մարդուն այն պետք չէր, չէ՞ որ նա, միևնույն է, գնում էր խեղդվելու: Մարդն իր առողջ քայլվածքն առանց ափսոսանքի տալիս է կաղին, ու ինքը կաղալով շարունակում ճանապարհը: Ապա հերթով հանդիպում է համր, կույր, խուլ մարդկանց ու նրանց տալիս իր խոսելու կարողությունը, լսողությունն ու տեսողությունը: Ու այդպես համրացած, խլացած ու կուրացած հասնում է լճափին ու հանկարծ սկսում զգալ, թե ինչ հրաշալի է, որ ինքը կա, որ իրեն տրված է կյանք, տրված են այդ լիճն ու աշխարհը... Ավանդույթն ասում է, որ նա այդպես երկար՝ նստում է լճի ափին՝ մոռանալով, թե ինչու էր եկել այդտեղ...

Նապոլեոնը կյանքում հասավ այն ամենին, ինչին ձգտում են մարդիկ՝ փառք, իշխանություն, հարստություն: Սակայն արտրված լինելով Սուրբ Հեղինե կղզին՝ նա ասել է. «Իմ կյանքում երբեք չի եղել գոնե վեց երջանիկ օր»: Մինչդեռ կույր և խուլ ու համր Էլեն Քելլերը ասում էր. «Իմ կյանքն այնպե՛ս հրաշալի է»:

Ոչ որ չի կարող մեզ հոգեկան հանգստություն բերել մեզանից բացի: Ֆրանսիացի փիլիսոփա Մոնտենն ասել է. «Մարդ տառապում է ոչ այնքան նրանից, ինչ տեղի է ունենում, որքան նրանից, թե ինչպես է գնահատում տեղի ունեցածը»: Իսկ կատարվածի գնահատականը լիովին կախված է մեզանից:

Ուրիշի տխրությունը մարդկանց շատ չի անհանգստացնում՝ ի տարբերություն ժպիտի: Տխրությունը մարդիկ մեծահոգաբար կթողնեն քեզ, ժպիտդ է, որ չեն հանդուրժի և առնվազն կուզեն կիսել:

Մարդկային խմբերի բնութագրություն

Մարդիկ չորս տեսակ են լինում.

1. Ինչ-որ բան գիտեն, բայց չգիտեն, որ գիտեն: Այդ մարդիկ քնած են, հարկավոր է նրանց արթնացնել:

2. Ոչինչ չգիտեն և գիտեն, որ չգիտեն: Այս մարդկանց հարկավոր է օգնել:

3. Ինչ-որ բան գիտեն և գիտեն, որ դեռ շատ բաներ էլ չգիտեն: Սրանք ուսյալ մարդիկ են:

4. Ոչինչ չգիտեն և չգիտեն, որ չգիտեն: Սրանց օգնել հնարավոր չէ:

Ով մա՛րդ, որ ուզում ես ապրել

Եվ սիրում ես երկարակեցությունը.

**Քարին տեսնելու համար լեզուդ հեռու պահիր չարից, ու շուրթերդ՝
նենգ խոսքերից, խույս տուր շարությունից և բարին արա, խաղաղու-
թյուն փնտրիր ու գնա նրա ետևից:**

Մի՛ հավատար ստվերներին, հենվի՛ր միայն քեզ վրա,

Ատելու չափ սի՛րիր մարդկանց, բայց լավություն միշտ արա:

Եվ լայն օրում՝ թե՛ ընկերներ, թե բարեկամ ճանաչի՛ր.

Իսկ նեղ օրում՝ ընկերների ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր:

Խաղերով լի այս աշխարհում խաղող եթե տանուլ տաս,
Զվարթ եղի՛ր, ու այդպիսով բախտի վրա կխնդաս:
Անվախ ու վեհ դեկդ վարե անձանոթին դեմ-դեմի.
Անզղջալի առաջ գնա՛, ինչ որ լինի՛, թո՛ղ լինի:

Ավերիք Իսահակյան

Բարեկիրթ մարդը նա է, ով ունի չափի զգացում և տակտ, որը թելադրում է, թե ինչպես պահել այս կամ այն դեպքում:

Տակտը շրջապատողների նկատմամբ նրբանկատ լինելու ընդունակությունն է: Տակտ ունենալ՝ նշանակում է հանդես բերել այնպիսի վարվեցողություն, որ չդիպչի դիմացինի արժանապատվությանը: Տակտը կենդանի ստեղծագործական ընդունակություն է, որը մարդուց պահանջում է նրբանկատություն և դիտողունակություն:

Այն մարդը, ով սիրում է իր ժողովրդին, կռվում է հանուն այն գաղափարի, որից բարձրը և արդարացին չկա աշխարհում, և հավատում է հաղթանակին, նա ամենամեծ կամք ունեցող, ամենաուժեղ և ամենաանհաղթ մարտիկն է աշխարհում...

Եթե գինվորականի կրծքին շքանշանի ժապավեն ես տեսնում, իմացե՛ք՝ պարտադիր չէ, որ նա անսովոր խիզախություն կատարած լինի, բայց անպայման այդ պատվանշանի տակ թաքնված է կամքը, ամեն ինչ հաղթահարելու կարողությունը, նույնիսկ ամենամեծ դժվարությունները, որոնք մարդու ուժից վեր են թվում:

Ֆելիքս Չերժինսկին 1914 թ. նստած էր բանտում: Ցուրտ էր, քաղց, տխրություն, մենակություն, ձերբակալվածները մեռնում էին թոքախտից, բժավոր ու ստամոքսային տիֆերից: Իսկ Չերժինսկու առողջությունը շատ թույլ էր: Նա գրում է հարագատներին. «Ուզում եմ վերադառնալ, ինչ էլ լինի, կվերադառնամ, որովհետև իմ ֆիզիկական դրությունն այստեղ համարյա ամբողջովին կախված է իմ կամքից, հաստատապես իմ կամքից»:

Քարության և լավության մասին

Լավությունն արա ու ջո՛րը նետիր,
Լավությունն արա ու մի՛ երկմտիր,
Թաքուն մի՛ հուսա հատուցում ու վարձ,
Նետիր գետերը ու նետիր անդարձ,
Գետը կտանի, կխառնի ծովին,
Քո նետած լավը՝ աշխարհի լավին,
Որ ծովը մի քիչ ավել՝ քաղցրանա,
Որ ծովից լավի շոգին բարձրանա,
Որ լավով լցվի ամպը երկնքում,
Ու բարությունը հողին ու հոգուն,
Անձրևի փոխված, տեղա անխտիր:
Լավությունն արա ու ջո՛րը նետիր...

Դու չես սովորում գերազանց, տղա՛ս,
Գովասանագրեր դու տուն չես բերում,
Եվ ծնողական ձեր ժողովներում
Բարի նախանձով չեն նայում վրաս:
Եվ հարևանի կինը սրտնեղում
Աղմուկիդ համար գանգատ է գալիս:
Ուշքդ օրերով գնդակին տալիս,
Նեղում ես, տատիդ հոգու հետ խաղում:
Տխրում եմ անշուշտ...Բայց երբ խնամքով
Ծածկում ես թախտին ննջած տատիկին,
Երբ վշտիս պահին դու աչքի տակով,
Հետևում ես իմ խոսուն հայացքին,
Երբ տան մրգերից բաժին ես տանում,
Մեր դռնապանի փոքրիկ տղային,
Բակում կովելիս պաշտպան ես կանգնում
Ուժեղի ձեռքից տուժած տկարին:
Տեսնում եմ, տղա՛ս, տեսնում եմ խորքից,
Որ այդ խորդուբորդ քո կեղևի տակ,
Կան հանքեր հարուստ ու ոսկու երակ,
Բխում է խորքում մի գուլալ հոգի:

Գուցե չես փայլի դիրքով ու ձիրքով,
Աստղ չես դառնա ոչ մի երկնքում,
Բայց բացվիր, գտվիր ու փայլիր հոգով,
Մարդուն ջերմացրու լույսով քո մաքուր:

Սիրվա Կապույտիկյան

«Մարդը գնացական է, նրա լավ գործը՝ մնացական. ըսել է՝ ինքն է մնացական: Ա՛յ, խոսքի օրինակ, էս շաքարը գցեցիր չալի մեջ, հալավ, կորավ, չկա, բայց չալն անուշցավ: Էնպես էլ լավ մարդը կմեռնի, բայց նրա լավ գործը աշխարհը կանուշցնե: Թե չէ առանց լավ մարդու աշխարհը շա՛տ դառն է, օձի լեղի»:

Ավետիք Իսահակյան

Փ.Աթրե

Մայրիկի հաշիվը

Դինու անունով մի հնդիկ տղա կար: Նրա հայրը նշանավոր բժիշկ էր: Դինուն երբեմն տեսնում էր, թե նա ինչպե՛ս էր դեղեր տալիս հիվանդներին ու հաշիվ գրում: Ու մի օր տղան հարցրեց.

-Հայրի՛կ, ինչ է հաշիվը:

Հայրը վերցրեց սեղանի վրա դրված հաշիվներից մեկը և տվեց որդուն:

Դինուն կարդաց. «Հիվանդ Ջոնը պարտք է ինձ՝ երկու այցելության համար՝ 6 ռուբլի, երեք սրկման համար 9 ռուբլի, դեղերի արժեքը՝ 5 ռուբլի. ընդհանուր գումարը՝ 20 ռուբլի»:

Հայրիկի հաշիվը Դինուին շատ դուր եկավ: Ամբողջ օրը նա այդ մասին էր մտածում:

Հաջորդ օրը Դինուի մայրը հիվանդացավ: Տան բոլոր գործերը մնացին: Հենց որ Դինուն դպրոցից վերադարձավ, անմիջապես գործի անցավ. ափսեները լվաց, փոքր եղբորը խնամեց, խանութ գնաց: Գիշերը, երբ պատրաստվում էր քնելու, որոշեց կազմել այդ օրը մայրիկի համար կատարած գործերի հաշիվը: Մի թուղթ վերցրեց ու գրեց. «Մայրիկը ինձ պարտք է՝ ափսեները լվանալու համար՝ 1 ռուբլի, խանութ գնալու համար՝ 1 ռուբլի, փոքր եղբորս խնամելու համար 2 ռուբլի. ընդհանուր գումարը՝ 4 ռուբլի»:

Հետո նա այդ հաշիվը կամացուկ դրեց մայրիկի բարձի վրա և գնաց քնելու:

Հաջորդ օրը՝ առավոտյան, Գինուն իր բարձի վրա 4 ռուփի գտավ: Ուրախությամբ չափ չկար, որ մայրը վճարել էր իր կատարած աշխատանքի համար: Սակայն նկատեց, որ դրա հետ մի թուղթ էլ կար: Գինուն բաց արեց թուղթը և տեսավ, որ մայրն էլ իրեն էր հաշիվ գրել. «Գինուն ինձ պարտք է՝ մանկությունից մինչև հիմա իրեն պահելու և խնամելու համար՝ ոչինչ, հիվանդ ժամանակ անցկացրած անքուն գիշերների համար՝ ոչինչ, կատարած բազմաթիվ չարությունների ու գժությունների համար՝ ոչինչ. ընդհանուր գումարը՝ ոչինչ»:

Գինուի աչքերը լցվեցին արցունքով: Նա ամոթից կարմրեց և անմիջապես վազելով մոր մոտ՝ փաթաթվեց նրան:

-Սիրելի՛ մայրիկ, աղաչո՛ւմ եմ, ների՛ր ինձ, որ քեզ հիմար հաշիվ էի գրել,- արցունքների միջից ասաց նա և 4 ռուփին վերադարձրեց մորը:

- Հանգստացի՛ր, որդի՛ս, հիմա արդեն իմ հաշիվն էլ փակվեց,- ասաց մայրը՝ համբուրելով իր սիրելի Գինուին:

ՀԱՅՈՑ ՀԱՂԹԱԿԱՆ ԲԱԶՈՒԿԸ

Դարեր ի վեր, սկսած Հայկ նահապետից, հայ ժողովուրդը հարկադրված է եղել իր հաղթական բազուկով պայքարել իր ազատության և անկախության համար: Վճռորոշ պահից առաջ հայ զորականը իր խոսքով միշտ քաջալերել ու հաղթական պայքարի է կոչել զինակիցներին:

«Հայկ և Բել»-ը առասպելական ավանդավեպ է. ստեղծվել է հնագույն ժամանակներում, պահպանվել է Մովսես Խորենացու (V դար) և Սեբեոսի (VII դար) պատմություններում, նաև՝ ժողովրդական գրույցներում: Ավանդավեպի ենթահիմքում լույսն ու գարունը խորհրդանշող աստվածային աղեղնավորի՝ հայ ցեղի նախնի Հայկի պայքարն է ընդդեմ խավարն ու ձմեռը մարմնավորող բռնակալի՝ սեմական ժողովուրդների արեգակի աստված կամ Ասորեստանի թագավոր Բելի:

Այս առասպելի պատմական էությունն իրենց անկախությունն ու երկիրը պաշտպանող հայերի մղած կռիվներն են Ասորեստանի դեմ:

Հայկ նահապետի խոսքը

Այն ժամանակ ուշիմ և խոհեմ հսկան իր զորքին ասում է. «Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի խումն բազմության մեջ, որպեսզի կա՛մ մեռնենք, և մեր ցեղը Բելի ծառայության տակ ընկնի, կա՛մ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի, և մենք հաղթություն տանենք»:

Տիգրան Մեծի պատգամը Արտավազդ որդուն և սերունդներին

-Արտավազդ, աստվածների կամքով շուտով հրաժեշտ կտամ մեր երկրին հայկյան և բոլորիդ: Ինձնից հետո դու երկու զենքով պիտի պահես երկիրը:

-Որո՞նք են այդ զենքերը, հա՛յր:

-Հայոց լեզուն և հայկյան սուրը: Հիշի՛ր, տղա՛ս, դու կարող ես սուրը պատյանի մեջ դնել, վերստին հանել: Կոտրվելու դեպքում՝ նորը կռել: Սակայն եթե սխալվես, և հայոց լեզուն դնես պատյանի մեջ, այլևս չես

կարող հանել և ոչ էլ ստեղծել նորը: Ամեն ինչ կարելի է կառուցել, վերագտնել բոլոր կորուստները, բայց եթե կորցնես մայրենին, կկորցնես և՛ քեզ, և՛ վարքը հայոց մեծաց, և՛ Հայքը համայն, և՛ ապագան մեր ասքանազյան ազգի: Ինձ թաղեք երկրի վրա՝ Հայքին ու հայերին մոտիկ: Իմ հոգին արթուն կմնա աշխարհում և կուղեկցի բոլոր հայերին, որտեղ էլ լինեն նրանք: Ես սիրտս կբաժանեմ բյուր անգամ հազար բյուր մասերի և կվերածնվեմ ամեն հայի հետ: Արթուն կպահեմ հայկյան ոգին մինչև գալիք դարերը և հավիտյան: Իսկ տապանաքարիս վրա ուզում եմ գրված լինի. «Նա այստեղ չէ, փնտրեցեք նրան ամեն հայի մեջ...»:

Ավարայր

Հայ ժողովրդի կյանքում ճակատագրական նշանակություն է ունեցել Ավարայրի ճակատամարտը: Այն տեղի է ունեցել 451թ. մայիսի 26-ին՝ հայոց Արտազ գավառի Ավարայր գյուղի մոտ, Տղմուտ գետի ափին: Հայ ժողովուրդը դուրս էր եկել հայրենասիրական պատերազմի և կյանքի ու մահու կռիվ էր մղում պարսից բռնակալության դեմ: Միմյանց դեմ պատերազմել են հայոց և պարսից բանակները՝ Վարդան Մամիկոնյանի և Մուշկան Նյուսավարտի գլխավորությամբ:

Վարդան Մամիկոնյանի կոչը իր բանակին

«...Աղաչում եմ ձեզ, ո՛վ իմ քաջ նիզակակիցներ, ձեզանից շատերը քաջությամբ ինձնից լավ են, բայց երբ ձեր հոժար կամքով ինձ կարգեցիք ձեզ առաջնորդ և զորագլուխ, թող իմ խոսքերը ախորժալուր և բաղձալի թվան մեծերիդ և փոքրերիդ ականջներին: Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ոչ էլ սրի դեմ թիկունքներս դարձնենք, որպեսզի եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտությունը: Իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»:

Եղիշե /5-րդ դար/

Ավարայրի ճակատամարտը կանխորոշել է Սասանյան Պարսկաստանի դեմ 450–451 թ.թ.-ին հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի ելքը: Այն հայ ժողովրդի՝ հանուն հավատքի մղած առաջին ճակատամարտն է:

Ավարայրի ճակատամարտում զոհված մարտիկները դասվել են Հայաստանյայց առաքելական եկեղեցու տոնելի սրբերի շարքը և կոչվում են

Սուրբ Վարդանանք: Նրանց հիշատակը նշվում է ամեն տարի փետրվար-մարտ ամիսներին՝ Բուն բարեկենդանին նախորդող հինգշաբթի օրը:

Ավարայրի ճակատամարտն արտացոլվել է հայ գրականության մեջ Գերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում և կերպարվեստում՝ Գրիգոր Խանջյանի «Վարդանանք» գորելեում:

«Վարդանանց պատերազմը հայ ժողովրդի կենաց հարատևության արտոնաթուղթը կնքեց»:

Գերենիկ Դեմիրճյան

Ավարայրի ճակատամարտում հայոց նշանաբանն էր՝ «Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»:

Փա՛ռք ոսկեբերան Եղիշեին, որ սերունդներին է ավանդել այս հպարտ մայրենին:

Վարդան Մամիկոնյանի դիմանկարը

Մոսկվայում հայ ուսանողները որոշում են քեմականացնել Վարդանանց պատերազմի պատմությունը: Վարդան Մամիկոնյանի դիմանկարը չէին գտնում: Հայոց պատմությունը լավ իմացող ֆրանսիացի մի նկարիչ երկու ուսանողի դեմքի համադրությամբ, հռոմեական տարագով, սաղավարտով և խաչով ստեղծում է Վարդան Մամիկոնյանի դիմանկարը:

Գևորգ Մարգալետունու կոչը Գառնո ժողովրդին.

«...Հայրենիքը, ժողովուրդը, արքայական և կաթողիկոսական գահերը վտանգի մեջ են...Այժմ դառնում են դեպի ձեզ, ո՛վ Գառնո զինվորք և ժողովուրդ, դառնում են նույն խնդիրքով ու առաջարկությամբ, որ մեր իշխանները մերժեցին: Ով որ ուժ ունի կռվելու, ով որ կարող է հարված տալ թշնամուն կամ մի նետ ուղղել նրա կրծքին և սակայն թաքչում է պարսպի տակ կամ ձեռքը ետ քաշում, նա մի մատնիչ է: Կամենո՞ւմ եք ապրել, կամենո՞ւմ եք կյանք վայելել: Բեշիրը հրոսակների խմբեր է պատրաստում արքայական գավառներն ավարելու համար. մենք դրանց կհանդիպենք և գատ-գատ կջարդենք: Չի անցնիլ մի ամիս, և մեր բանակը կստվարանա: Առաջին հաղթանակին կհաջորդե երկրորդը, երրորդը, և հազարավոր զինվորներ ինքնակամ հոժարությամբ կգան, կժողովվին մեր դրոշակի տակ... Այս փառքը, օ՛հ, գառնեցիք, մենք կարող ենք ժառանգել. օ՛հ , ուրեմն, դեպի գործ...»:

Գևորգ Մարգալեստունու և իր քսան զինակիցների երդումը Մեսրոպ Մաշտոցի շիրմին. «Սիրելի՛ զինակիցներ, այստեղ հանգչում են ամենից առաքինի և ամենից անձնվեր հովվի նշխարները: Գրե՛ք ձեր սրերը այս սրբազան շիրմի վրա և հենց այստեղ էլ երդվեցե՛ք հավատարմություն ձեր ուխտին, որ է՝ այս վայրկյանից իսկ լինել անձնվեր զինվոր և նահատակ հայրենիքի փրկության: Ձեր սրերը թող օրհնե սուրբ Մաշտոցը և ձեր օգտին ու երդման թող վկա լինին նրա նշխարները»:

Գևորգ Մարգալեստունու երդումը

«Երդվում եմ ձեր առաջ, երդվում եմ Հավիտենականի անունով, երդվում եմ իմ հայրենիքի արևով և այս սուրբ գերեզմանով, որ ես չեմ վերադառնալ այլևս իմ ընտանյաց գիրկը, չեմ մտնիլ իմ հարկի տակ, մինչև վերջին հազարացին չհալածեմ հայրենի սահմաններից: Ես պիտի ապացուցանեմ, որ ամբոցների և իշխանական գործության մեջ չեմ ամփոփվում հայրենիքի ուժը, այլ նրա որդիների անձնվիրության մեջ... Օ՛հ, ուրեմն, հառաջ... Հայի Աստվածը մեզ օգնական, հայի խաչը մեզ ապավեն...»:

Խրիսյան Հայրիկի կոչը իր ժողովրդին

Հասարակական-քաղաքական, մշակութային, կրթական և ազատագրական շարժման գործիչ, ամենայն հայոց կաթողիկոս /Սկրտիչ Ա Վանեցի, 1892-1907թ.թ./: Ազգանվեր գործունեության համար ժողովուրդը նրան կոչել է Հայրիկ պատվանունով:

«...Օրհնյալ և սիրելի ժողովուրդ հայոց, գիտեմ, թե ամենքնիդ սրտատրոփ կսպասեք լսել իմ բերնես, թե ինչ արդյունք է ունեցած մեր խնդրանքը Հայկական դատին և 61-րդ հողվածին շուրջը: Մենք կերթայինք Հայկական դատը ներկայացնելու Մեծ պետություններու վեհաժողովին: Սրահին մեջտեղ կանաչ սփռոցով ծածկված սեղանի մը վրա դրված էր հսկա կաթաա մը հարիսայի, ուսկից իրենց բաժինը պիտի առնեին մեծ և փոքր ազգերը: Մի առ մի մտան ամենքը, առին իրենց բաժինը, մտան հետո պուլկարներու ներկայացուցիչները՝ իրենց կողերեն կախված զենքերով, սուրերով: Ատոնք գրավեցին ներկա բազմության ուշադրությունը: Խոսելե և վիճելե ետք, երեք պատգամավորները խոթեցին իրենց սուրերը իբրև երկաթյա շերեփ՝ հարիսայի կաթասայի մեջ և առին իրենց բաժինը: Կարգը եկավ մեր հայ պատգամավորներուն: Ներկայացա Ազգաց ժողովին և տվի ձեռքս եղած Աղերսաթուղթը և աղաչեցի, որ հարիսայեն ինձի ալ բաժին հանեն: Բայց իմ ձեռքս երկաթյա

շերեփի չկար, կար միայն թուղթե գլանիկ մը, և դուք գիտեք, թե երբ հարիսայի կաթսայի մեջ խոթեմ, ինչ կերպարանք կառնե այդ թուղթի կտորը, կը փշրվի, կը լուծվի, անկարելի է անով հարիսային բաժին մը առնել: Կհասկանա՞ք, սիրելի ժողովուրդ... Ոչ խնդրանքով, ոչ լացով, ոչ աղերսաբուրդով ազատություն չի գնվիր: Այլ միայն զենքով, բազուկի օգնությամբ: Իմ թուղթե շերեփը մնաց կաթսայի մեջ, և մեզի ոչ մեկ բաժին ընկավ: Ժողովուրդ հայոց, քու ազատությունը քու ձեռքդ է ամեն բանն առաջ. քու սեփական ուժիդ, քու զենքիդ մեջ»:

1917 թվականի դեկտեմբերի 22-ին հայկական մամուլում տպագրվում է Ջորավար Անդրանիկի՝ հայ ժողովրդին ուղղված «Կոչը», որտեղ նա դիմում էր բոլոր նրանց, ովքեր կարող էին զենք պահել՝ գալ և կռվել հայրենիքի փրկության համար:

«Կոչ կընեմ բոլոր զենքի ընդունակ՝ առանց դասակարգերու խտրության, գյուղացիեն, արհեստավորեն մինչև բարձր դասու մտավորականությունն ու հարուստը: Ես կոչ կընեմ բոլոր չափահաս դպրոցականներուն, որոնք կը բաղձան ծաղկավետ տեսնել վաղվան մշակույթի դաշտը, թող դիմեն զենքի, թող վազեն դեպի ճակատ: Ուղղելով իմ խոսքս մեր բոլոր մայրերուն և քույրերուն՝ կը հորդորեմ, որ չընդունեն իրենց սրբազան հարկի տակ հուղաներն ու դավաճանները, թող թքեն անոնց երեսին և դրկեն դեպի գորանոց: Դավաճան է այն մայրը, որ կքաջալերե իր զավակը, ամուսինը կամ եղբայրը մնալու տունը, իբրև կորովագուրկ, որքացած ազատության սերեն...»:

Հովհաննես Թումանյանը Հայաստանի համար այդ օրհասական պահին հայրենասիրական իր բացառիկ կեցվածքով առաջինն օրինակ ծառայեց բոլորի համար՝ անմիջապես արձագանքելով Անդրանիկի կոչին: Մեկ օր անց նա բաց նամակ ուղղեց Ջորավար Անդրանիկին, որը մեծ արձագանք ունեցավ և ոգևորության ալիք բարձրացրեց հայ հասարակության շրջանում:

Թումանյանի նամակը Անդրանիկին

23 դեկտեմբերի 1917թ., Թիֆլիս.

«Միրելի՛ Անդրանիկ,

Ահավոր մոմենտի առջև ամեն մարդ պետք է ընդհանուր սեղանին բերի ինչ որ ունի և կարող է՝ թե՛ վերահաս վտանգը կանխելու, և թե՛ բաղձալի հաղթությանը հասնելու համար:

Ես չորս տղա ունեմ, չորսն էլ՝ երկրի կառավարության, Ազգային խորհրդի և քո տրամադրության տակ են, իսկ չորս աղջիկս էլ պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքերին՝ ինչի որ ընդունակ կլինեն: Ես էլ, անշուշտ, սրանցից թանկ ոչինչ չունեմ, հետևաբար ոչինչ չեմ խնայի, միայն թե կարողանանք բոլոր ազնիվ ժողովուրդների և ազատասեր հոգիների հետ միասին ետ մղել վերահաս վտանգը և պաշտպանել ամենքիս սրբազան իրավունքներն ու ազատությունները: Ես անասան հավատում եմ Քո՝ շատ փոթորիկների մեջ ձեռք բերած փորձությանը, վառ հայրենասիրությանն ու ազատասիրությանը, այլև բնական մարդասիրությանն ու զինվորական բարձր տաղանդին, և պատրաստ եմ գալու, երբ և ուր կկոչի Քո եղբայրական ձայնը: Համբուրում եմ հերոսական ճակատող, միշտ Քո՝ Հովհաննես Թումանյան»:

Երբ օսմանյան հրոսակները թափանցեցին Արևելյան Հայաստան և հասան մինչև Լոռի, Հովհ. Թումանյանն անցավ Լոռի-Փամբակի շրջանի պաշտպանության գործի գլուխը:

1918-ի մայիսին նա կոչ արեց իր հայրենակիցներին.

«Լոռեցիներ, իմ քաջ հայրենակիցներ.

Փոքրաթիվ թշնամին մեր սարերին է հասել...Լոռեցիներ, այժմ ձեզ է ապավինել հայ փախստական ժողովուրդը, և ամեն տեղից ձեզ է նայում հայ ազգի աչքը...Հավաքվեցե՛ք մեր մութ անտառների նման, կանգնեցե՛ք անասան մեր սարերի նման, կրա՛կ թափեցե՛ք և զարկեցե՛ք մեր սարերի կայծակների նման...»:

Հովհաննես Թումանյանի նամակը Ավետիս Ահարոնյանին

«Ավի՛կ ջան, ես ունեմ 10 երեխա: Եթե իմ յուրաքանչյուր զավակ ինձ պես մտածի, կունենամ 100 թռռ, եթե թռռներս էլ ինձ պես մտածեն, կունենամ 1000 ծոռ: Մի խոսքով՝ 6 սերունդ հետո միայն ինձնից 1000000 հայ կծնվի...»:

Ավա՛ղ...Թումանյանի ընտանիքի ճակատագրում արտացոլվեց հայոց պատմությունը իր հերոսական ու ողբերգական էջերով. առաջին գոհր եղավ Արտավազդը: Արեգը, Համլիկը և Մուշեղը դարձան ստալինյան բռնապետության զոհեր: Մուշեղի կրտսեր որդին՝ Թումանյանի միակ արու թոռը, զոհվեց Հայրենական պատերազմում: 4 տղա և 6 աղջիկ ունեցող Թումանյանի թոռների թիվը իր զավակների թվից քիչ էր:

Անդրանիկի կտակը իր զինվորներին

«Միրելի՛ զինվորներս. երբ օտարներ կփորձեն անվանարկել հայ զինվորին արժանապատվությունը, դուք ձեր քաջությամբ, գործերով և հաղթանակներով արհամարհեցիք զանոնք, բարձր պահեցիք հայ ցեղին արժանապատվությունը: Դուք կրցաք պարտության մատնել թշնամին և հիացում հրավիրեցիք ձեզ վրա: Որովհետև գիտեիք նվիրվիլ ու ծառայել հայրենիքին և անոր ազատության: Մեծ համբերությամբ կրեցիք չարչարանքները և մեծ հավատքով տարիք ձեզի հանձնված գործը: Ես չլսեցի տրտունջքի որևէ բառ, ցավի որևէ արտահայտություն: Մերկ էիք, անոթի էիք և այդպես մնացիք օրերով: Չմռան ցուրտը, բուքն ու քամին, ձյունն ու անձրևը ծեծեցին ձեզի, կարկուտը հարվածեց, բայց դուք արհամարհեցիք, ինչպես թշնամիին զնդակները: Ձեր այս կեցվածքը քաջալերեց զիս, ուրախացուց սիրտս, և մենք կրցանք շահիլ փառավոր հաղթանակներ:

Միրելի՛ զինվորներս, սա մեկ քանի տողերս իբր հարգանքի ու գնահատանքի նշան կթողում որպես կտակ և սրտածոն ապրողներուդ և իբր տապանաքար անթաղ ու անշիրիմ զինվորներուս»:

Ֆրեզնո, հունիս 18, 1924 թ.

Գարեգին Նժդեհի կոչը հայ երիտասարդությանը

«Ո՞ւր եք, գորաւորներ, դուրս եկեք առաջին գծի վրա, ուր ցեղի անունով եւ ցեղի համար պարգուած Եռագոյնը ձեզ է սպասում: Եկէ՛ք բանակելու նրա սրբազան ծալքերի տակ, ուր տկարութիւնը, նահանջն ու վատութիւնը տեղ չունին: Եկէ՛ք, միացէ՛ք մեր մեծ Ուխտին, որի կուռ շարքերի մեջ այնքան պարզ, տիրական ու քաղցր է լսում ցեղի ձայնը:

Թագավորը նա է, ով կարող է: Ես ուզում եմ, որ դու լինես թագավոր սերունդ: Քո վաղվա հաղթանակի և պարտության միջև հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը կա, հա՛յ երիտասարդություն: Ահա թե ինչու պետք է, որ դու հաղթես, քեզ պետք է հաղթանակի լուսապսակ ստեղծել քո ժողովրդի անվան ու ճակատի շուրջ:

Իսկ դրա համար պետք է լինել ավելին, քան հայ մարդ...»:

Գարեգին Նժդեհը, ինչպես և Եղիշե Չարենցը, փրկվելու գրավակա-նը համարելով հայ ժողովրդի միասնական ուժը, գրել է. «Ապրե՞լ ենք ուզում՝ լինենք ուժեղ, ուժեղ ազգովին. ահա՛ հրամայականը: Լինենք ուժեղ այնքան, որ մեր անպարտելիութիւնը առ ոչինչ դարձնի մեզ ծանօթ այն բոլոր դժբախտ պայմանները, որոնք դժարացնում են մեր ցեղի ինքնապաշտպանութեան գործը»:

Մեր երկրագնդի վրա երկու ուժեր չեն հոգնում՝ ժամանակն ու հայրը, մեկը՝ կործանելով, մյուսը՝ վերաշինելով:

Ինքն իրեն հարգող ժողովուրդը Հայրենիքը ընդհանուր աստվածություն է, հայրենասիրություն է, կրոն:

Յեղի հոգին միակ ուժն է, որի առաջ անգոր են բոլոր ուժերը: Ինքն իրեն հարգող ժողովուրդը ինքնապաշտպանության հույսը դնում է նախ իր բազուկի, իր զենքի վրա: Օտարին ապավինող ժողովուրդն արժանի չէ անկախ հայրենիք ունենալու, ազատ ապրելու:

Գարեգին Նժդեհ

- Եղի՛ր այնքան ուժեղ,-խրատում է պատմությունը,-որ թշնամիդ չհանդգնի հարձակվել:

Չգացնել տո՛ւր թշնամուդ, որ ամեն վայրկյան պատրաստ են պատերազմելու, և նա կիրաժարվի զենքի ուժով քեզ անհանգստացնելու մտքից. ահա սկիզբն ու վախճանը քաղաքական իմաստության: Ժողովուրդները իրենք են դարբինը իրենց ճակատագրի: Ժողովրդի ճակատագրի դարբինը մտավորականությունն է:

Իր հողի վրա պարտվելը կրկնակի և աններելի պարտություն է: Իր երկրի սահմաններում **պարտվող** ժողովուրդն իրավունք չունի խոսելու անկախ **հայրենիքի** մասին:

Սարդարապատ -1918

«20-րդ դարի Ավարայր». այսպես է բնութագրվում Սարդարապատի հերոսական ճակատամարտը: Սարդարապատի ճակատամարտը գնահատվում է որպես հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից մեկը: Տարած հաղթանակի շնորհիվ Արևելյան Հայաստանի զգալի մասը փրկվեց թուրքական զավթումից, և հնարավորություն ստեղծվեց պետականության վերականգնման համար: Ի նշանավորումն մեծ հաղթանակի՝ ճակատամարտի վայրում 1968 թվականին բացվել է Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր: Հեղինակներ՝ Ռ.ա.Ֆայել Իվրայեյան /ճարտարապետ/, Ա. Հարությունյան, Ս. Մանասյան, Ա. Շահինյան /քանդակագործներ/:

Ի՞նչ է Սարդարապատը մեզ համար. բացի այն, որ մեր գորական ուժի տարած ամենափայլուն հաղթանակներից մեկն է մեր պատմության ընթացքում, նա նաև վերականգնեց մեր հավաքական ինքնավստահությունը, մեր հավատը սեփական ուժի հանդեպ: Սարդարապատով նաև սկզբնավորվեց Հայկական հարցի լուծման նորագույն փուլը...

1918-2018 հարյուրամյա ժամանակահատվածը՝ Սարդարապատից Ազատ Արցախ, քաղաքական դասի նոր փուլ է. այն է՝ մենք ուժեղ ենք, երբ միասին ենք, և մեր մեծագույն հաղթանակները ձեռք են բերվում միայն մեր բազկի ուժով ու միասնությամբ, և որ մենք ոչ միայն եզակի ենք մեր տեսակով ու ստեղծածով, այլև մենակ ենք մեր ճակատագրով:

Հայոց եղեռնը

Ողբամ մեռելոց, Բեկանեմ շանթեր, Կոչեմ ապրողաց

1915 թվականը հայոց պատմության ամենամռայլ էջերից է: Հինգ հազար տարի հայաբնակ պահպանված Մեծ Հայքի կեսից ավելին հայազրկվեց. կատարվեց ծրագրված ցեղասպանություն, որն իրականացրեց երիտթուրքերի կառավարությունը:

Արևմտահայության սպանողը և թուրք ոճրագործներին դատապարտելու պահանջով հանդես եկան Յոհաննես Լեփսիուսը, Արմին Վեգները, Վալերի Բոյուսովը, Ֆրիտյոֆ Նանսենը, Անատոլ Ֆրանսը և շատ ուրիշներ:

Երևանի Ծիծեռնակաբերդի բարձունքում վեր խոյացած Եղեռնի հուշարձանը XX դարի առաջին ցեղասպանության վկայությունն է: 1967թ. սկսած՝ ամեն տարի, ապրիլի 24-ին, հազարավոր մարդիկ այցելում են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը կառուցվել է ի հիշատակ 1,5 միլիոն հայերի, ովքեր զոհ գնացին թուրքական կառավարության իրագործած 20-րդ դարի ցեղասպանությանը: Ցեղասպանության զոհ դարձան նաև մի շարք հայ գրողներ ու մշակույթի գործիչներ՝ Զոհրապ, Վարուժան, Սիամանթո, Սևակ, Երուխան, Տիգրան Չոկյուրյան, Արտաշես Հարությունյան և ուրիշներ:

Հուշահամալիրը իր մեջ ներառում է ոչ միայն ապրիլի 24-ի օրվա խորհուրդը. հուշարձանի կառուցումով դրվեց ցեղասպանության դատապարտման հիմնաքարը: Ծիծեռնակաբերդի հուշարձան-կոթողը նախագծվել և կառուցվել է 1965-67թ.թ. (ճարտարապետ՝ Արթուր Թարխանյան, համահեղինակ՝ Սաշուր Քալաշյան): 1965-ի ապրիլի 24-ին լրանում էր Ցեղասպանության 50-րդ տարելիցը: Ի պատասխան ժողովրդի պահանջի՝ Հայաստանի կառավարությունը որոշում կայացրեց ցեղասպանության զոհերի հիշատակին Ծիծեռնակաբերդի բարձունքում հուշարձան կանգնեցնելու մասին: Ըստ ավանդության՝ այստեղ եղել է հայոց սիրո աստվածուհի Աստղիկի տաճարը, որի երկրորդ

հարկում ապրող ծիծեռնակները լուրեր էին տանում Աստղիկի սիրեցյալին՝ Վահագն աստծուն (այստեղից էլ առաջացել է անվանումը): Հուշահամալիրը բաղկացած է երեք հիմնական կառույցներից՝ Հավերժության տաճար, «Վերածնվող Հայաստան» հուշասյուն և Հուշապատ: Հավերժության տաճարը բաղկացած է տասներկու սալերից, որոնք ժողովուրդը համարում է Արևմտյան Հայաստանում գտնվող տասներկու (իրականում դրանց թիվը վեց է) խոշորագույն նահանգների խորհրդանիշը. Իրականում տասներկու սալերը ընտրված են՝ ելնելով երկրաչափական օրենքներից: Հուշապատը կառուցվեց կառույցը բնակելի շինություններից անջատելու համար: Հիմա այնտեղ գրված են այն երախտավորների անունները, որոնք սատարել ու խնամել են եղեռնազարկ հայ ժողովրդին: Հուշահամալիրը դարձել է համայն հայության ուխտատեղի: Ամեն տարի ապրիլի 24-ին հարյուր հազարավոր հայեր և օտարազգիներ բարձրանում են այստեղ՝ հարգանքի տուրք մատուցելու 1915 թվականին Օսմանյան կայսրության տարածքում թուրքական կառավարության իրագործած Հայոց Ցեղասպանության գոհերին: Երևանում բազմաթիվ մարդիկ այցելում են Ծիծեռնակաբերդի հուշարձան և ծաղիկներ են դնում հավերժական կրակի մոտ:

Ամեն տարի (սկսած 2010-ից) ապրիլի 24-ին հաջորդող օրերին հարյուր հազարավոր ծաղիկները հավաքվում և վերամշակվում են՝ դառնալով պարարտանյութ և թուղթ, որոնք օգտագործվում են թանգարանի շրջակայքը պարարտացնելու և թանգարանի տպագրության հարցերը հոգալու համար:

Թուրք պատմաբանին կարդալուց հետո

Ով է տեսել, որ քարտեզը կոկորդ սեղմող մի ձեռք լինի,
Կապույտ, կանաչ, դեղին գույնը աչքիդ կարմիր մի վերք լինի,
Ճշմարիտը ստիպումով հազար հանդերձ առնի վրան,
Սուտը այսքան երեսպատռած, այսքան լկտի ու մերկ լինի:
Երբ տասնհինգ են ասում, ես թվական եմ հիշում,
«Արևմտյան» են ասում, ես «Հայաստան» եմ հիշում,
Մեջս իրենց հունն ունեն բառերն էլ՝ ինձնից թաքուն,
«Արդարություն» են ասում, ես որք իմ «Վանն» եմ հիշում:
Մեղմիր ատամդ, դու ամենքի մոտ բացեիքաց
լալու իրավունք չունես,

Թեկուզ վիրավոր, թեկուզ արնաքամ, զենքերդ տալու
իրավունք չունես:

Դու՝ հայ բանաստեղծ, ինչ էլ որ լինի,
Վերջին զինվորն էլ ընկնի հուսահատ,
Քո ժողովրդի հավերժությանը չհավատալու իրավունք չունես:

Միլվա Կապուտիկյան

Սակայն ապրիլին միշտ մայիսն է հաջորդում... Ավարայրին հետևել է Սարդարապատը, Սարդարապատին՝ Շուշին, Շուշիին՝ Քառօրյան... Աստված չանի, որ նոր պատերազմ լինի, բայց ինչ էլ որ լինի, մենք ենք հաղթելու, որովհետև 21-րդ դարը մերն է հաստատ, մե՛ր ժամանակն է: Մե՛ր է մեզանից յուրաքանչյուրը, ու մենք արդեն ելել ենք Ազրավաքարից:

Առաջին աշխարհամարտը մեզ բերեց ցեղասպանություն... Երկրորդ աշխարհամարտում մեր մասնակցությունն ամենաընդգծվածն էր՝ միակ ազգային դիվիզիան Հայկական Թամանյանն էր, որ խորհրդային զորքերի թվում մտավ Բեռլին, ու մենք պարտված Ռայխստագի առջև պարեցինք մեր ավանդական «Քոչարին»... Մայիսի 9-ը հետագայում մեզ համար նշանավորվեց նաև ազգային բովանդակությամբ. 1992 թվականին ազատագրվեց Շուշին, և մեր տոնացույցում ընդգրկվեց Մայիսի 8-ը՝ որպես Երկրապահի օր: Իսկ Մայիսի 9-ի եռատոնը մենք անվանեցինք Հաղթանակի և խաղաղության տոն:

Բայց արդեն բռնցք ենք ի ցույց աշխարհի,
Չսանձվող խորհուրդը հավատքի մեր վարար,
Ու պահանջում ենք այս ուսյալ դարից,
Բզկտված մեր երկրի սպեղանին արդար:
Եվ եթե ընկրկենք շարքերում մեր ազնիվ,
Սրբազան շարքերում մենք հանկարծ երերանք,
Կոառնանք մենք էլի անպատիվ տարագիր,
Մայր հողից առհավետ վտարված:

Վարուժան Խասպուր

ՆԵՄԵՍԻՍ

Հռոմի պապը 100 տարի առաջ հայ ժողովրդի վերապրածը հռչակեց ցեղասպանություն: Գա մեր ցավի հանդեպ համաշխարհային վերաբերմունքի բարձրակետն է: Պատահական չէ, որ անմիջապես դրանից հետո եվրոպական շատ երկրներ փոխեցին իրենց վերաբերմունքը:

«Նեմեսիս»-ը գործողություն է, որի նպատակն էր պատժել 1915 թվականի հայերի ցեղասպանությունը կազմակերպող և իրականացնող Երիտթուրքական պարագլուխներին, 1918 թվականի Բաքվի հայկական ջարդի կազմակերպիչներին և թուրքերի հետ համագործակցած հայ դավաճաններին: Կազմակերպել է Հայ Հեղափոխական Դաշնակցությունը: Ծրագիրը Նեմեսիս է կոչվել հին հունական վրեժխնդրության աստվածուհու անունով:



Գործողության կատարման որոշումը կայացվել է 1919 թվականին Երևանում:

1919 թ. հունվարին Կ. Պոլսում սկսվեց հայոց մեծ եղեռնի կազմակերպիչների դատավարությունը, որը տևեց 6 ամիս: 1919թ. հուլիսի 6-ին հայտարարվեց դատավճիռը, որով մահվան են դատապարտվում Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, դոկտոր Նազըմը: Բայց եվրոպական տերությունները «մոռացան» դատավճիռն ի կատար ածել: Այն իրականացրին հայորդիները, որոնք դարձան արդարահատույցներ:

Դավաճանների սպանությունը

1920 թվականին «Նեմեսիս» գործողության շրջանակներում դատապարտվել և գնդակահարվել են մի շարք հայ դավաճաններ:

1920 թվականին Սողոմոն Թեխլերյանը սպանել է Կոստանդնուպոլսում Թուրքիայի գաղտնի ոստիկանության քաղաքական ղեկավար Սկրտիչ Հարությունյանին:

1920 թվականի մարտի 27-ին Արշավիր Շիրակյանը գնդակահարել է Կոստանդնուպոլսում Վահե Իհսսանին (Եսայան): Իհսսանը թուրքերի համար կազմել էր Կոստանդնուպոլսի հայ մտավորականների ցուցակ, որոնք սպանվեցին 1915 թվականին:

Սողոմոն Թեկերյան

1915 թ. Մեծ Եղեռնի արյունալի ջարդերի զոհ են դառնում միլիոնավոր հայեր, այդ թվում և Թեկերյանի մայրը, եղբայրը, ազգականները՝ 84 հոգի: Հայրենասեր ազնիվ հոգին փոթորկվում էր վրեժխնդրության ծարավից: Եվ նա մտադրվում է թեկուզ մահվան գնով վրեժ լուծել ջարդերի կազմակերպիչներից: Նրան առանձնապես հալածում էր Թուրքիայի ներքին գործերի նախարարի ճիվաղային կերպարը: Թեկերյանը գիտեր, որ նա ծպտված բնակվում է Բեռլինում՝ Ալի Սալիհ բեյ անունով: Երեք տարվա որոնումներից, հետապնդումներից հետո Թեկերյանը ճշտում է, որ Թալեաթը ապրում է Հարդենբերգ փողոցի թիվ 4-ում: Բնակարան վարձելով ճիշտ դիմացը՝ համառ վրիժառուն գիշեր ու գօր պատուհանից հետևում է թուրք մարդասպանի տան անցուղարձին: Եվ ահա 1921թ. մարտի 15-ին նա դեմառդեմ հանդիպում է հայակեր հրեշ-ին և ատրճանակով կրակում ուղիղ ճակատին: 1921 թվականի հունիսին Բեռլինում կայացել է Սողոմոն Թեկերյանի դատավարությունը, և դատարանը արդարացրել է նրան: Դատավարության ժամանակ որպես վկա հանդես է եկել նաև Յոհաննես Լեվիսիուսը և մերկացրել երիտթուրք ոճրագործ Թալեաթ փաշային:

Սան Ֆրանցիսկոյի քաղաքային գերեզմանատանը կանգնած է մի գեղեցիկ հուշակոթող, որի վրա երկաթագիր տառերով դրոշմված է՝ ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԵՐՅԱՆ, 1896-1960:

Արշավիր Շիրակյան (1902-1973)

Հայ վրիժառու, ՀՅԳ անդամ: Կամավոր կերպով ներգրավվել է Հայոց ցեղասպանությունը կազմակերպած և իրականացրած երիտթուրքական ղեկավարների ահաբեկման գործին: 1921թ. Հռոմում ահաբեկել է 1915թ. Օսմանյան կայսրության մեծ վեզիր (կառավարության ղեկավար) Սալիդ Հալիմ փաշային: 1922թ. ապրիլի 17-ին Բեռլինում Արամ Երկանյանի հետ ոչնչացրել է Բեհաէդդին Շաքիրին ու Ջեմալ Ազմիին: 1923թ. հաստատվել է ԱՄՆ-ում, որտեղ ապրել ու գործել է մինչև մահը: Նույն թվի հուլիսի 19-ին Պոլսում վրիժառու Միսաթ Թորոսյանը վերջ դրեց հայակեր Ջիվանջիրի կյանքին, հուլիսի 21-ին Թիֆլիսում Ստեփան Ծաղիկյանի, Պետրոս Տեր-Պողոսյանի, Արտաշես Գևորգյանի կողմից իր պատիժն ստացավ նախարար Ջեմալը: Դատավճռի ցուցակը գլխավորում էին Թուրքիայի նախկին ռազմական նախարար Էնվերը և «Միություն և առաջադիմություն կուսակցության» կոմիտեի գերա-

գույն քարտուղար Նազիմը: 1922թ. օգոստոսի 4-ին Արցախի Մարտունու Խնուշինակ գյուղից սպա Հակոբ Մելքունովի ձեռքով սպանվեց ճիվաղը՝ ռազմական նախարար Էնվերը, Աֆղանստան փախչելիս՝ հենց սահմանագլխին:

Նազիմը Թուրքիայում Քեմալ Աթաթուրքի դեմ մահափորձի համար մահապատժի ենթարկվեց:

Արամ Երկանյան (1895 -1930)

Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի, ՀՅԴ անդամ: 1915թ. Հայոց ցեղասպանության ժամանակ նրան հաջողվում է խուսափել տեղահանումից և անցնել Կովկաս: 1921թ. ապրիլի 17-ին «Նեմեսիս» գործողության շրջանակներում Բեռլինում Արշավիր Շիրակյանի հետ ոչնչացնում է երիտթուրքական գործիչներ Բեհաեդդին Շաքիրին և Ջեմալ Ազմիրին:

Միսակ Թռչակյան

Հայ վրիժառու, ՀՅԴ անդամ: Հայ ազատագրական պայքար է մտել 17 տարեկանում՝ կազմակերպելով մահմեդական լազերի դեմ պայքարող հայ վրիժառուների խումբ, որը զբաղվել է նաև զենք ու զինամթերք հայթայթելով: 1921 թվականի հուլիսի 18-ին Միսակ Թռչակյանը Կոստանդնուպոլսում ոչնչացրել է Ադրբեջանի ներքին գործերի նախկին նախարար Բիհբուք ժիվանշիր Խանին: Թռչակյանի գործընկերներն էին Երվանդ Ֆունդուկյանն ու Հարություն Հարությունյանը: Անգլիական Ռ-ազմական Դատարանը դատել է Թռչակյանին և արդարացրել՝ որպես անմեղսունակ՝ նրա արարքը բնորոշելով որպես արտակարգ հուզմունքի վիճակում կատարված սպանություն:

Ֆիդայիներ

Ճակատամարտը Մեծ Ավարայրի
Շարունակվում է դեռ այս հողի վրա,
Այն ամեն օր ենք ստիպված տալիս՝
Այս էլ՝ քանի դար, ամեն տեղ, անվերջ...
Նորից տազնապի կոչնա՛կ են զարկում
Արարատների զանգերն անընդհատ,
Որ հավերժ ապրի Հայոց մեծ ոգին,
Չա՛ն, ֆիդայիներ, հավիտյան ձեզ փառք:

Կարո Մելիքսեբյան

Ես բողոքում եմ

Ամենայն սրտով ես բողոքում եմ
Մարդու անարդար վճռի համար,
Անիծում եմ ես մարդուն նենգավոր,
Որ նա ընտրել է պղծված ճանապարհ...
Ատում եմ հոգով:
Օրենքները շատ-շատ
Ծանրացել են մարդկանց ուսերին
Եվ ստիպում են կեղծել, քծնել,
Գովել տգետ բարքերին:
Ես բողոքում եմ, իրավունք ունեմ
Գանգատ գրելու ամբողջ աշխարհին,
Որ հայոց հողը ետ վերադարձվի
Եվ տրվի պանդուխտ տառապող հային:
Ես ցանկանում եմ մեկ անգամ տեսնել
Քարտեզը հայոց անձայր երկրի:
Դրանից հետո մեռնեմ էլ եթե
Իմ հոգին ուրախ ու հավերժ կապրի:
Ինչու է հայը պանդուխտի ցուպով
Այսօր թափառում ամբողջ աշխարհում,
Օտարի հողում կծկված ու տանջված
Հեռու հյուսիսում կամ անապատում:
Ինչ է նա կորցրել Սուդանում կիզիչ,
Կամ Հնդկաստանում, հեռու հյուսիսում:
Ինչու է հայը բեկորներ դարձել,
Նա չունի հանգիստ,
Նա չունի դադար:
Խեղճ պանդուխտ հային հող է հարկավոր
Ոչ օտար երկրում, այլ իր սեփական:
Եվ երբ ունենա իր հողը նորից
Դեն կշարտի ցուպն օտարական:
Անհուն բերկրանքով կշտապի հեռվից
Դեպի Դարս,Իգդիթ, Վան կամ Արդահան...
Նորից կլսվի հորովելը հին,
Նորից կծխա ծուխը հայկական,

Օտարի ձեռքից 500 տարվա
Հողերն էլ նորից ետ կգրավենք:
Օրենքն է, ու մենք էլ ենք ասում,
Որ հողը միայն տիրոջն է պատկանում:
Բայց ինչու խոսել ուրիշի մասին՝
Միշտ մոռանալով ցավը սեփական:
Ինչու վաստակել, որ ուրիշն ապրի՝
Մոռանալով քաղցը սեփական մանկան:
Ոչ, բավական է, չպետք է լռել,
Երագել քիչ է, պետք է պայքարել:
Հարյուր տարին է արդեն լրացել,
Հայոց հողերը պետք է պահանջել:
Քարտեզի վրա դեռ շատ անուններ
Մինչև օրս էլ հինն են մնացել,
Նույնն են մնացել քաղաքներ, գյուղեր,
Լճեր ու գետեր և հին ամրոցներ:
Սահմանին թիկնած Արարատն է սեզ
Իր էն լանջերով գմբուխտ կուսական,
Իսկ այն կողմ՝ հեռվում, Բինգյուն է լքված
Սգավորի պես, սեզ ամպերի մեջ
Վանա ու Նազիկ լճերն են նիրհում,
Աղթամարն է դեռ արտասվում անվերջ:
Այս բոլորը դուք տեսնում եք, հայեր,
Եվ այն թողել եք բախտին պատմության:
Լոկ ցանկանալով հարցեր չեն լուծվում,
Այս է միշտ ասում կյանքը այժմյան:
Պետք է պայքարել, պետք է պայքարել,
Չպետք է սոսկալ մահը սեփական:
Մահվան գնով էլ պետք է պայքարել,
Միացյալ տեսնենք հողը հայկական:

Հովհաննես Շիրազ

Հերոսների սերունդները հերոսներ են...

Այս ճշմարտության հավաստիքը մեր ժողովրդի բազմադարյան պատմությունն է, մեր քաջարի նախնիների աննախադեպ հաղթանակների վերակերտումը: Առհավատչյան՝ Արցախյան հերոսամարտը, մայիսյան, ապա նաև՝ ապրիլյան հաղթանակները: Ավարայրից՝ Սարդարապատ, Սարդարապատից՝ Մեծ Հայրենական, բերդաքաղաք Շուշիի ազատագրում, և այդ բոլորը՝ նույն ամսին:

2014 թ. աղբբեջանական դիվերսիան կանխելու ժամանակ գոհված Ազատ Ասոյանի մայրը՝ Մանուշակ Ասոյանը, որդու կորստյան ահավոր ցավն իր սրտում, վճիռ էր կայացրել՝ մի նոր արու գավակ ունենալ: Որդին ի՞ր սիրանքը կատարեց, մայրը՝ ի՞ր: Ազատի գոհվելուց մեկ տարի չանցած՝ Մանուշակը լույս աշխարհ բերեց արու մի մանչ: Նրան Նարեկ կոչեցին: Այս երկտողը հենց կյանքի խորհրդանիշ մանչուկին է ձոնվել.

«Դու աշխարհ եկար՝ մահը հերքելու,

Եղբորդ կիսատ երզը երգելու»:

Հայ մայրը միայն կարող էր նման քայլով լուծել իր հերոս որդու վրեժը:

Խաղաղ օրերին՝ օտար ափերին,
Վտանգի ժամին գալիս-մեկտեղվում,
Սեղմվում են իրար, մի բռունցք դառնում,
Հայոց անկոտրում ոգին է հառնում:
Եվ ազատության սերունդը ջահել,
Որի թիկունքին մանուկ և ահել,
Ելավ ու ծնկի բերեց թշնամուն,
Բայց գոհեր տվինք՝ տղերք քաջանուն:
Հաղթության շառաչ, կորստյան հառաչ...
Մեր ազատ, անկախ կյանքի գինն է դա,
Մեռնել-հառնելը, վրեժն իր առնելը,
Հայի ճակատի հավերժ գիրն է դա:

Ռ. Գրիգորյան

Փոթորկահույզ փետրվարի 30-ամյա դասերը

1988 թվական, փոթորկահույզ փետրվար, պոռթկումի, հավատի, հույսի, փրկության ամիս...Փետրվարը մեկնարկն էր Ղարաբաղյան ազատագրական պայքարի:

Այո՛, այն վճռորոշ սկիզբ եղավ արցախցու և համայն հայության դարավոր երազանքի իրականացման ճանապարհին՝ ապրել ազատ ու անկախ, լինել հայրենի եզերքի տերն ու տնօրենը:

Երեսուն տարիների հեռավորությունից ավելի են իմաստավորվում այդ իրադարձությունները, որոնց հաջորդած հետագա բոլոր դեպքերը գալիս են փաստելու, որ դրանք մեր Շարժման և, հատկապես, նրա քաղաքական փուլի անկյունաքարն են: Արցախ աշխարհը յոթանասունամյա բռնության լուծը թոթափելու համար պոռթկաց՝ ազդարարելով Մայր Հայաստանին միանալու, ազատ ու անկախ ապրելու մասին: Փոթորկվեց Արցախը՝ ընդգրկելով ողջ բնակչությանը՝ համախմբված, միասնական:

1992թ. մայիսի 9-ին պատերազմական թատերաբեմերում կռվախնձոր դարձած հայկական ոստան Շուշին ազատագրվեց, դարձավ հայաշունչ: 27-ամյա հայոց ազատագրված բերդաքաղաքն այսօր վերածնունդ է ապրում, հաղթահարում պատերազմող երկրի ավերված քաղաքին բաժին հասած բոլոր դժվարությունները:

Երեսուն տարիների հեռվից մեր պարտքն է հիշել փետրվարյան փոթորկահույզ օրերի բոլոր մասնակիցներին, մեր արդար պայքարի առաջամարտիկներին, անխոնջ նվիրյալներին:

Հարգենք բոլոր նահատակների սուրբ հիշատակը, թո՛ղ լույս իջնի նրանց շիրիմներին: Հիշենք նրանց տարիներ հետո և դարեր հետո, նրանց, որ ընկան անդարձ, անշիրիմ:

Թո՛ղ հավերժվեն Արցախ աշխարհի լուսաշող առավոտները:

Շուշիի ազատագրումը որակապես փոխեց մեր ժողովրդի հոգեվիճակը

Հայության միակամության, հայ զինվորի անմնացորդ նվիրումի և սխրանքի, հայ հրամանատարի արտասովոր տաղանդի, կորսված հայրենիքը վերատիրելու ուխտի կատարումն էր Արցախ աշխարհի երբեմնի մայրաքաղաք Շուշիի ազատագրումը. այն հայ ժողովրդի պատմության մեջ արձանագրվեց որպես ամենափառահեղ հաղթական էջերից մեկը: Շուշիի ազատագրումը որակապես փոխեց մեր ժողովրդի այն հոգեվիճակը, որը երկար ու ձիգ դարեր ուղեկցել էր հայությանը: Հայը կր-

կին վերականգնեց իր հաղթական կեցվածքը, հավատաց սեփական ուժերին, կրկին եղավ միասնական և կատարեց անհնարինը՝ ազատագրելով անառիկ համարվող բերդաքաղաքը մարդկային նվազագույն կորուստներով և կարճ ժամանակի ընթացքում:

Վազգեն Սարգսյանի պատգամը

Վազգեն Սարգսյանը Հայաստանի իշխանությունների և հանրության լայն հատվածի կողմից ընդունվում է որպես ազգային հերոս: Նրան տրվել է հերոսական Սպարապետ պատվանունը, քանի որ նա մեծ ներդրում է ունեցել Հայաստանի անկախության, անվտանգության և Հայկական բանակի կայացման գործում: Սարգսյանին շնորհվել է Հայաստանի և Արցախի հերոսի կոչում:

«Մեր բանակը ինքնակրթությամբ ստեղծված բանակ է: Մենք չէինք կարող սպասել, որ հեռուներից գեներալները գային և մեզ կռվել սովորեցնեին: Մենք մեր հովվի, արհեստավորի, բանաստեղծի միջից հանեցինք պաշտպանության նախարարին, գեներալին, զինվորին ու կռվեցինք: Մենք պիտի ունենանք մեր ժամանակի լավագույն բանակներից մեկը: Ես երագում եմ ունենալ շատ կենտրոնացված, մարտունակ ու շատ գաղափարական բանակ: Եթե մենք ներսից ամուր եղանք, ունենանք ամուր պաշտպանված պետություն, ոչ մի տեսակի դրսի միջամտություն, ոչ մի տեսակի անակնկալ մեզ համար ցավալի չէ:

Մեր ճակատագիրը մեր ձեռքում է: Յուրաքանչյուր հայ մարդ Մարտակերտից մինչև Նոյեմբերյան ու Լուս Անջելես պիտի իրեն պատասխանատու զգա այս պատերազմի համար ու իմանա, թե հարկ եղած դեպքում ինչ պիտի անի: Մեր հավաքական կամքն ու դիմադրողականությունը պիտի մեծացնենք, փրկությունը դա է»:

Ազգային հերոս Մոնթե Մելքոնյան, քո փառքը մեր սրտերում է՝ ամեն մի Հայի հոգի՝ Հայաստանի կերտման տեսիլքով

Կան մեծություններ, որոնց կորստյան ցավն ազգովին ենք սգում, հիշողությունները նրանց մասին ստիպում են ոչ թե ահով խոնարհվել նրանց առջև, սարսափազդու պատկառմանը կամ վախ զգալ, այլ համակվել անկաշկանդ ու իմաստավորված սիրով՝ համեմված խոր երախտագիտության և հպարտության անկեղծ զգացումներով: Նրանք անմահ են, նրանք մեր ազգի ՀԵՐՈՍՆԵՐՆԵ են: Նման հերոս է մեզ համար Մոնթե Մելքոնյանը, նույն ինքը՝ Ավոն...

Մոնթե Մելքոնյանին հետմահու շնորհվել են «ՀՀ Ազգային հերոս»-ի և «Արցախի հերոս»-ի բարձրագույն կոչումները: ԼՂՀ պաշտպանության բանակի Մարտունու շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, ՀՀ ազգային հերոս, Արցախի հերոս, «Հայրենիքի համար» (ՀՀ), ԱՀ «Ոսկե արծիվ» և «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանների ասպետ, հրապարակախոս, հնագետ, փոխգնդապետ Մոնթե Մելքոնյանի ամենավսեմ պարզևը պատմական հայրենիքի մի բեկորի՝ Արցախի ազատագրումն է:

«Եթե կորցնենք Արցախը, մենք կշրջենք հայ ժողովրդի պատմության վերջին էջը...»

«Ես երդում տված եմ եւ կպատկանամ մեկ մարդու, այդ մարդը հայրենիքի ազատության զինվորն է ... իմ նպատակն է կռվել Արցախի հաղթանակի համար, հանուն որի կյանքս ալ անգամ չեմ խնայե: ... Ես երդում տված եմ... Արցախը իմ առաջին պայքարը չէ, և վստահ եմ, որ վերջինը չի ըլլա...»:

Բեկորի /Աշոտ Ղուլյան/ խոսքերից

«Ղարաբաղը լոկ սկիզբն է, վերջը պիտի լինի Արևմտյան Հայաստանը», - այս խոսքերը պատկանում են մի մարդու, ում անունը անմահ լեգենդի պես ապրում է յուրաքանչյուր արցախցու հոգում՝ որպես անմնացորդ նվիրումի ու հերոսության վառ մարմնացում. նրա մասին զինակիցներն ասում են՝ նրան մենք դեռ էն գլխից ենք ճանաչել որպես հերոս, որովհետև նա ընտրել էր ազգին ծառայելու ամենաճշմարիտ ու ազնիվ բանաձևը... Նրա անունը Աշոտ Ղուլյան է կամ, պարզապես, Բեկոր:

«Եթե զինվորից սկսած մինչև նախարարը բոլորանվեր իրենց գործն անեն, ապա մեր բոլոր ձեռնարկումները կպսակվեն հաղթանակով...», - ասում էր Արցախի լեգենդար հերոսը, որի համար «հայրենասիրությունն ոչ այլ ինչ է, եթե ոչ պարտականությունների բարեխղճորեն կատարում. եթե Ղարաբաղը կործանվի, ապա միայն քաղաքական խաղերի պատճառով է կործանվելու»:

1993 թ. Աշոտ Ղուլյանը հետմահու արժանացել է ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի: 1999 թ. ԼՂՀ նախագահի հրամանագրով արժանացել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչմանը, պարգևատրվել է «Ոսկե արծիվ» շքանշանով: 2002թ. արժանացել է «Շուշիի ազատագրում» շքանշանի:

Լեոնիդ Ազգալոյանը Արցախյան ազատամարտի լեգենդար հրամանատարներից էր, որ իր գործունեությամբ, պայքարով ու նահատակությամբ գրել է մեր ժողովրդի պատմության հերոսական էջերից մեկը: Նրա դեկավարած «Անկախության բանակ» և «Ազատագրական բանակ» կամավորական ռազմական կառույցները նշանակալի դեր են խաղացել Հայաստանի սահմանների և Արցախի պաշտպանության գործում: Արցախի մասին նրա հնչեցրած արտահայտությունը վաղուց մեզ համար դարձել է թևավոր խոսք ու կարգախոս. **«Սա Հայաստան է և վերջ»**: Այս կարճ բանաձևի մեջ խտացված են Լեոնիդ Ազգալոյանի՝ ճշմարիտ հայրենասերի, լուրջ գիտնականի և տաղանդավոր կազմակերպչի ողջ գաղափարախոսությունն ու դիրքորոշումը, նրա իմաստալից կյանքի և իմաստավոր անմահության ողջ ուղին:

2019թ. օգոստոսի 31-ին ԱՀ 28-րդ տարեդարձի կապակցությամբ Լեոնիդ Ազգալոյանին հետմահու շնորհվել է Արցախի հերոս կոչումը և «Ոսկե արծիվ» շքանշանը:

Ապրիլյան քառօրյա պատերազմի իրադարձությունները շարունակում են վերլուծության ենթարկվել ու անհրաժեշտ հետևությունների հիմք դառնալ: 100 ժամ՝ 100 կյանք,- սա այն դառը իրականությունն է, որ աչքի է զարնում ու իբրև ցավալի իրականություն հառնում զավակ, ամուսին կամ հարազատ կորցրած ընտանիքների առաջ: Ժամանակը հոսում է, բայց ցավը չի մեղմանում: Գործված սխրանքի գիտակցությունն է միայն, ստացած դաստիարակությամբ հայրենիքին սպառնացող վտանգին բնական հակադարձումը, որ կորստյան վշտին հպարտություն է խառնում և տրամադրում պատվով տանել անդառնալի կորուստի ցավը: Իսկ ազգը, հասարակությունը ամենատարբեր միջոցներով փորձում է հավերժացնել հերոսների անունները և շուրթից շուրթ փոխանցել նրանց անմահացման պատմությունը...

Ռեքվիեմ

Օ՛յ, պատերազմից այս անսիրտ ու սև,
Չավա՛կս, ասա՛, ե՞րբ ես ետ գալու.
Մայր արծվի նման կտուրամ արագ,
Որ քեզ ազատեմ ցավ ու փորձանքից
Չա՛յն տուր, իմ արյո՛ւն, իմ լո՛ւյս, իմ կրա՛կ,
Ե՛կ, մի՛նուճա՛րս, ե՛տ դարձի՛ր, իմ հե՛զ,

Յորեն հատիկս, տանջանքս, լացս, իմ լուսաբացս...
...Ու մենք հայրենի հողի անունից երդում ենք տալիս,
Կյանքի անունից ու արեգակի,
Երդում ենք տալիս ընկած քաջերին.
Ինչ չհասցրին մինչև վերջ երգել մեր պապերն ընկած,
Մե՛նք պիտի երգենք:
Ինչ չհասցրին մինչև վերջ կերտել մեր հայրերն ընկած,
Մե՛նք պիտի կերտենք:
Հիշեցե՛ք նրանց,
Տարիներ հետո ու դարեր հետո
Հիշեցե՛ք նրանց:
Նրանց, որ ընկան, գնացին անդարձ...
Հիշեցե՛ք նրանց... ու լաց մի՛ եղեք,
Սեղմեք կոկորդում հառաչանքները ձեր տառապանքի,
Արժանի՛ եղեք նրանց սուրբ հողին ու հիշատակին,
Հավե՛տ արժանի:
Մարդի՛կ, քանի դեռ ձեր սիրտն է զարկում,
Հիշեցե՛ք նրանց,
Այդ նրանք էին ձեր բախտը փրկում, այն էլ ի՛նչ գնով,
Հիշեցե՛ք նրանց:
Դուք նրանց մասին ամեն ինչ պատմե՛ք ձեր որդիներին,
Որ նրանց հիշեն:
Եվ որդիներին ձեր որդիների ամեն ինչ պատմեք,
Որ նույնպես հիշեն: Բոլոր դարերում այս անմահ
հողի վրա քայլելիս
Հիշեցե՛ք նրանց...
Եվ պատերազմը սպանե՛ք հավետ,
Հավե՛տ անիծեք, աշխարհի՛ մարդիկ:
Դուք ձեր տենչանքին, երազին գարնան
Կյանք ու շո՛ւնչ տվեք տարիների հետ:
Բայց նրանց, որոնք էլ ետ չեն դառնա,
Աղերսում եմ ես, հիշեցե՛ք հավետ...

Ռոբերտ Ռոժդենսովենսկի

Մասունցիների պարը

Պարե՛ց Մասունն, ու ողջ աշխարհը հիացավ,
Պարե՛ց Մասունն, ու ողջ աշխարհը հասկացավ,
Որ երբ նագում են աղջիկներն ու կռանում՝
Մասնա ձորից ջուր են բերում, արտ քաղհանում.
Երբ ոտքի տակ տղաների հո՛ղն է թնդում,
Հոտաղները Մասնա սարում գա՛յլ են խեղդում.
Երբ խռնվում, կարծես ամպրոպ պայթի սարում,
Այդ ոտխն է նրանց գյուղերը պաշարում.
Երբ միանում՝ բերդ են դառնում շինված քարից,
Այդ ոտխին ե՛տ են քշում Անդոկ սարից.
Իսկ երբ ձեռքը ձեռքին զարկում, ծա՛փ են տալիս,
Մահվան վիհից դեպի կյանքի ա՛փ են գալիս...
Պարե՛ց Մասունն, ու ողջ աշխարհը հիացավ,
Պարե՛ց Մասունն, ու ողջ աշխարհը հասկացավ,
Որ պար չէ սա, այլ՝ մի ազգի քաջ պատմություն,
Որ պարտությունն անգամ ունի հպարտություն,
Եվ չի՛ հաղթի ոչինչ այն հին ժողովրդին,
Որ այս ջանքո՛վ
Ու այս կամքո՛վ
Պարե՛լ գիտի...
Հասկացան ու ասին ի լուր ողջ աշխարհի,
- Հալա՛լ է քեզ,
Մասուն, պարի՛...
Պարի՛,
Դու դեռ երա՛զ ունես կատարելու,
Վրե՛ժ ունես պատմությունից դեռ հանելու.
Պարի՛,
Գազպան դեռ քո ձեռքի՛ն է կարոտում,
Մասնա հողը վար ու հերկի՛ է կարոտում.
Պարի՛,
Մինչև ողջ հայերին դու ամբարե՛ս,
Եվ այս պարը **Մասիս լեռան լանջի՛ն պարես...**

Գևորգ Էմին

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը սկսվում է դպրոցից: Պատերազմի բովում թրծված զինվորականների հետ անմիջական շփումներն ու հանդիպումները, այցելությունները գորամաս, ազգային հայրենասիրական ոգով միջոցառումները բարձրացնում են առանձնապես արցախցի պատանիների ու աղջիկների ռազմահայրենասիրական դաստիարակության մակարդակը: Նման ոգով դաստիարակված աշակերտները պատվով պիտի շարունակեն զինվորականների շարքերը համալրելու ազգանվեր գործը: Մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն է անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար:

ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Ե՞րբ կլինի գերեզմանների հայրենադարձություն...
Վարդգես Պեպրոսյան

Դրաստամատ Կանայան/ Խմբապետ Դրո/

1920-ի ապրիլի 25-ին Թաղավարդ գյուղում հրավիրված Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը որոշում է՝ «Հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը՝ որպես նրա անբաժան մաս»:

Հատված Ղարաբաղի՝ Գ.Կանայանի՝ հայ ազգաբնակչությանը ուղղած կոչից. «Ես եկել եմ այն համոզումով և հաստատ որոշումով, որ, հենված ձեր վճռականության վրա և միացած ձեր քաջարի զինվորներին, պետք է հաղթենք թշնամուն: Ես վճռել եմ մնալ ձեր մեջ, կռվել ձեզ հետ և ազատությունն ու հաղթանակը տոնել այստեղ»:

Դրոյի փայփայած երազը, տարաբախտաբար, չի իրականանում: Ապրիլի 28-ին Ադրբեջանում հռչակվում է խորհրդային իշխանություն: Մայիսի 25-ին Հայաստանի Հանրապետության զորքերը կառավարության հրամանով թողեցին Արցախը: Այսպես՝ բոլշևիկների ճնշման տակ Արցախի ազատագրումը հետաձգվում է 70 տարով:

Նրա վերջին խոսքերն էին. «Ախ, մեզել երգիրս տեսնեի»: Դրոն մահացել է 1956 թվականի մարտի 8-ին, Բոստոնում:

Զինակից ընկերները որոշեցին, որ այն սիրտը, որ ողջ կյանքում տրոփել է Հայաստանի համար, օտար հողում չպետք է թաղվի:

- Բո մարմինը, գորավար, վերջապես իր հանգիստը գտավ Բոստոնի ծայրամասում գտնվող գերեզմանոցում, բայց սիրտդ, հատուկ անոթի մեջ պահվող սիրտդ, դեռ տառապում էր: Հայրենիք մեկնող պատվիրակությունները վերադառնում էին ձեռնունայն: Այն երկիրը, որին դու տվել էիր ողջ կյանքդ, քո սրտի համար մի փոքրիկ անկյուն, անգամ մի ավի հող զլանում էր: Դու զարմանալի հեռատեսությամբ կանխազգացել էիր այդ ամենն ու Հայաստանից հեռանալիս եռագույն փոքրիկ տոպրակով Սարդարապատի հող վերցրել հետդ: Բայց սիրտդ, նույ-

նիսկ բժշկության գերարդիական միջոցներով պահպանվող սիրտդ, չդիմացավ հայրենիքի կարոտին: Հետզհետե թոշնեց, դալկացավ և քսանութ տարի սպասելուց հետո վերադարձավ քո մարմնին: Գ-ա Ամերիկայում երբևէ տեղի ունեցած ամենատարօրինակ թաղումն էր: Գերեզմանոցում մարդկային սիրտ էին թաղում, և քո վիշտը մեղմելու համար Արաքսից բերած ջուր ու Սարդարապատի հող խառնեցին քո սրտի վրա ծանրացող օտար, պաղ հողին: Ննջե՛, մե՛ծ հերոս, ննջե՛, մինչև այն ատեն, երբ գանք ու քեզ փոխադրենք այն երկիրը, որուն համար երկար տարիներ կռվեցար:

Մի՛ վիրավորվիր, ժամանակին հայրենի կառավարությունը Կոմիտասին անգամ դժվարությամբ առավ ներս, իսկ քո ավագ զինակիցը՝ Անդրանիկը, մահից հետո վաթսուն տարի արդեն ճամփա էր ընկել ու դեռ չի հասել Հայաստան: Ձեր տարբերությունը թերևս այն է, որ դու զարմանալի հեռատեսությամբ կանխագագեցել էիր այդ ամենն ու Հայաստանից հեռանալիս եռագույն փոքրիկ տոպրակով Սարդարապատի հող վերցրել հետդ:

Ըստ Գրիգոր Չանիկյանի

2000 թ.-ի մայիսի 28-ին, Հայոց պետականության վերականգնման տոնին և Հայաստանի Առաջին հանրապետության 82-րդ տարեդարձին, հայրենիքում, հուզախառն ցնծության մթնոլորտում կատարվեց Գրոյի աճյունի վերահուղարկավորման ու հայրենի հողին հանձնելու փառաշուք արարողությունը:

Անդրանիկի մահը

Ձորավարը մահվանից որոշ ժամանակ առաջ կնոջն ասել է. «Մահվան համար չեմ ցավիր, կցավիմ, թե որքան ուրախ պիտի ըլլան թուրքերը: Մահս չեմ հոգար, այլ գործս, որ կիսատ մնաց: Եթե այս անգամ ցավը զիս տանի, մարմինս օտար հողի վրա չթողուս, անպայման Հայաստան փոխադրեք: Եթե զիս հայրենիք չընդունին, ձեռքիս ցուցամատը կտրել կուտաս եւ հոն կդրկես, տեղ մը թող թաղեն: Աս մատս շատ աշխատած է հայրենիքի համար եւ շատ հոգնած է, թող հայրենի հողին մեջ հանգստանա: Կուզեմ, որ աճյունս հանգչի Արաքսի կամ Չանգվի ափին, իմ սիրելի ժողովրդի մեջ, որի ազատության համար կռվեցա»:

1927 թ.-ի օգոստոսի 31-ին Ֆրեզնոյի իր փոքրիկ բնակարանում մեռնում էր զորավար Անդրանիկը. «Եթե իմ ժողովուրդը կուզե մահես ետք

պատիվ ընել ինձի, արձանս չեմ ուզեր, փառավոր թաղում չեմ ուզեր: Թող կանգնեցնե ավերակ դարձած Առաքելոց վանքը և հոն հիմնե ուսումնարան հայ մանուկներու համար: Երբ իրիկունը գլուխնիդ բարձին կդնեք, որ քնանաք, քիչ մը մտածեք ձեր ազգին մասին: Մահս չեմ հոգար, այլ գործս, որ կիսատ մնաց...»: Սրանք նրա վերջին բառերն էին:

Ըստ Անդրանիկ Չելեպյանի

Մահվանից մեկ շաբաթ հետո՝ 1927թ.-ի սեպտեմբերի 7-ին, Անդրանիկի զինակիցներն ու ընկերները նրան զինվորական արարողակարգով հողին են հանձնում Ֆրեզնոյի Արարատ գերեզմանատանը: Կալիֆորնիայում թաղման արարողությունից չորս ամիս անց՝ 1928-ի հունվարին, կինն ու զինակիցները ձեռնամուխ են լինում Անդրանիկի աճյունը Խորհրդային Հայաստանում վերահուղարկավորելու աշխատանքներին: Դազադը Կալիֆորնիայից տեղափոխվում է Ֆրանսիա, որտեղից էլ նախատեսվում էր բերել Խորհրդային Հայաստան:

Բայց նոր խորհրդայնացած Հայաստանի իշխանությունները Հայ Օգնության Կոմիտեի միջոցով Անդրանիկի հարազատներին տեղեկացնում են, որ նպատակահարմար չէ Ջորավարի աճյունի տեղափոխումը Հայաստան: Այդ տարիներին խորհրդային քարոզչությունը Անդրանիկին ու ֆիդայական շարժման մյուս դեմքերին ներկայացնում էր որպես ժողովուրդների բարեկամության ու խորհրդային կարգերի թշնամիներ:

Անդրանիկի աճյունը 1928-ի հունվարի 29-ին ամփոփվում է Փարիզի ամենահայտնի՝ Պեր Լաշեզ գերեզմանատանը: Քանի որ Անդրանիկը «Պատվո լեգեոն» շքանշանով պարգևատրվել էր ֆրանսիական կառավարության կողմից, Փարիզը նրան տեղ տվեց Կոմունարների պատի մոտ: Դազադը ուսամբարձ հասավ Պեր Լաշեզ և Մախլուտոյի դամբանականի ու ֆիդայիների պատվո համազարկի տակ իջավ գերեզման: Ավելի ուշ՝ 1945-ին, գերեզմանի վրա տեղադրվում է նրա ձիարձանը՝ ճերմակը /քանդակագործ՝ Լևոն Թոքմաչյան/:

1930-ական թվականներին Նաիրի Ջարյանը Անդրանիկ գորավարի սուրը համարել էր «արնախում»: Տարիներ հետո, Պեր Լաշեզում այցելելով մեծ գորավարի գերեզմանին, նա հրաժարվում է իր անարդարացի վերաբերմունքից և գրում «Ասք Անդրանիկ գորավարի մասին» պոեմը.

Ես նայում եմ ետ՝ խոցված, ամոթահար,
Ձի տարիներ առաջ, երբ ես դեռ խսկ էի, անգետ,

Երբ դեռ այգաբացի մշուշն էր իմ հոգում,
Քո սուրն ինքնապաշտպան ես անվանել եմ «արնախում»:

Անդրանիկի կերպարը ներկայացվում է 1910-ական թվականների Հայաստանի ողբերգական դեպքերի հենքի վրա: Նա Անդրանիկին անվանում է Հայոց տարաբախտ Գարիբալդի:

2000 թ. փետրվարի 18-ին Անդրանիկի աճյունը տեղափոխվում է Երևան: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Կաթողիկոս Գարեգին Երկրորդը հոգեհանգստյան պատարագ է մատուցում: Էջմիածնից դազաղը տեղափոխվում է Եռաբլուր, որտեղ և ամփոփվում է Վազգեն Սարգսյանի գերեզմանի հարևանությամբ:

Գարեգին Նժդեհ

Հայրենական մեծ պատերազմի տարիներին, մտահոգված հայ ժողովրդի ճակատագրով, Նժդեհը 1942թ.-ին մեկնում է Բեռլին: Ճանապարհաձախսի անհրաժեշտ գումար չունենալու պատճառով վաճառում է հայրենասիրության համար 1936 թ.-ին իրեն տված պատվոգրի վրա գետեղված չնչին ոսկին: Բեռլինում հանդիպում է նացիստական կուսակցության առաջնորդներին և իր անհանգստությունը հայտնում գերմանացիների կողմից հակահայկական քարոզչության համար: Նրա այս քայլը դիտարկվեց իբրև թշնամական ակտ Ռուսաստանի դեմ, և մի քանի այլ մեղադրանքների հիման վրա Նժդեհը դատապարտվեց ու աքսորվեց հայրենիքից:

Գեռես 1920 թվականին, դիմելով հայ ժողովրդին, Սպարապետը գրել էր. «Երբ ինձ սպանված տեսնես, դիակս թաղիր Խուստուփի ամենաբարձր կատարին, որ ինձ երևան և՛ Կապանը, և՛ Գինոսպը, և՛ Գողթանը, և՛ Գեղաձորը»:

1983թ.: Մի խումբ նվիրյալներ Նժդեհի աճյունը գաղտնի բերեցին Հայաստան և, նրա կտակի համաձայն, որոշեցին նրա աճյունից մի մասունք հանձնել Խուստուփին՝ այն լեռանը, որն անբաժան է եղել Նժդեհից, լեռ, որ նրա անձեռակերտ հուշարձանն է: Մասունքը՝ Խուստուփի բարձունքներում, բայց Նժդեհի ամբողջական աճյունը դեռ գերեզման չուներ:

Եվ ահա 1989 թ.-ին, լեռների բարձրության վրա թառած Սպիտակավորի սուրբ Աստվածածին եկեղեցու բակում, վերջապես հանգիստ գտան Սպարապետի նշխարները: Շիրմի տակ ամփոփեցին մազադաթազիր՝

հասցեագրված սերունդներին. «Հա՛յ պարմանի, ծնկի՛ եկ այս աճյունի առջև: Նժդեհի հոգին սավառնում է հայկական լեռնաշխարհի վրա, այդ հոգին գալիք ազատագրական կռվում դարձյալ առաջնորդելու է մեզ»:

Ըստ Արցախ Բունիաթյանի

Ղևոնդ Ալիշանը չի ցանկացել հայրենիքը տեսնել թշվառ վիճակում, այդ պատճառով էլ չի եղել Հայաստանում, բայց ամբողջ կյանքում խոնարհ ու ինքնամփոփ ծառայել է հայրենիքին: Ղևոնդ Ալիշանի վերջին ու միակ իղձն էր՝ թաղվել հայրենի հողում:

Ծեր Նահապետիդ տուր կակուղ հողիկ,
Որ քեզ պինդ սիրեց, Հայո՛ց աշխարհիկ:

Կոմիտաս (1869-1935)

Կոմպոզիտոր, ազգագրագետ, գիտնական, մանկավարժ, խմբավար, երգիչ, հասարակական հզոր եռանդի տեր արվեստագետ Կոմիտասին վիճակվեց շրջադարձային դեր խաղալ հայ երաժշտական մշակույթի պատմական զարգացման ճանապարհին:

Կոմիտասը հայ երաժիշտներից առաջինը հայտնաբերեց ազգային արվեստի ինքնատիպության հուսալի ակունքները, գիտնականին հատուկ հետևողականությամբ հետազոտեց և բացահայտեց այդ ինքնատիպության օրինաչափությունները: Կոմիտասը հրապարակախոսին հատուկ կրքոտությամբ պաշտպանեց հայ երաժշտության ինքնուրույնության գաղափարը:

1915թ. ողբերգական իրադարձությունները և աքսորի ճանապարհին կրած անլուր տառապանքները Կոմիտասին հոգեկան ծանր վիճակի հասցրին: 1919 թ. նրան տեղավորեցին Փարիզի մասնավոր հոգեբուժական հիվանդանոցում, ուր մնաց մինչև իր կյանքի վերջը՝ 1935թ. հոկտեմբերի 22-ը:

Մեկ տարի անց Կոմիտասի աճյունը տեղափոխեցին Երևան՝ հայ մշակույթի խոշորագույն գործիչների պանթեոն:

Թումանյանի սիրտը

1923 թ. ապրիլի 15-ին Հովհաննես Թումանյանին հուղարկավորեցին Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը: Սակայն կար մի բան, որի մասին այն օրերին քչերը գիտեին: Բանն այն է, որ դեռ Մոսկվայում՝ դի-ահերձման ժամանակ, բանաստեղծի որդին՝ Արեգը, բժիշկներից խնդրել էր իրեն հանձնել Թումանյանի սիրտը: Եղբորը՝ Համիլկին ուղղված նամակում նա գրում էր. «Ես մի քայլ արեցի... ես հայրիկի սիրտը գողացա: Ճիշտ ա, պետք է շատ հանդուգն լինել, որ գողանալ էն սիրտը, որ գրկում էր ամբողջ աշխարհը, պետք է շատ իրեն կորցնել, որ մոտ գալ, բայց իմ սիրտը չդիմացավ: Գողացա: Գուցե մեղադրում ես: Ոչինչ: Թող իմ սուրբ հոր սիրտը լինի մեր տանը: Ճիշտ ա, նա չի բարախում, բայց չէ՞ որ նա մեզ հետ ա ապրել, չէ՞ որ հայրիկը ամբողջ սրտի մեջ ա, և հայրիկի սիրտը պետք ա մեր տանը լինի...»:

Տարիներ շարունակ հարազատները սիրտը պահում էին գրողի առանձնատանը՝ մի փոքրիկ պահարանի մեջ: Բայց մի անգամ Թումանյանների տուն այցի եկավ Ավետիք Իսահակյանը: Ուշ ժամ էր, և նա մնաց գիշերելու: Որպես հարազատ հյուր՝ նրան օթևան տվեցին Թումանյանի առանձնասենյակում: Երբ լույսը բացվեց, տանտերերը նկատեցին, որ Իսահակյանը չափազանց անհանգիստ էր: Հետո վերջինս խոստովանեց, որ ողջ գիշեր չի քնել, իսկ անքնության պատճառը եղել է Թումանյանի սրտի ներկայությունը: Այդ դեպքից հետո բանաստեղծի սիրտը տեղափոխվեց Երևանի բժշկական ինստիտուտի Անատոմիկումի թանգարան:

Միայն 1994 թվականին ի կատար ածվեց Թումանյանի փափազը: Նրա սիրտը հողին հանձնեցին հայրական տան բակում: Եվ հողը կարոտով ընդունեց սիրտը նրա, ով Ամենայն Հայոց բանաստեղծն էր և Արարատը մեր նոր քերթության:

Լսյո Հովիկ Չարխչյանի

Վահան Տերյան

Ստալինը գտել էր Տերյանից ազատվելու ձևը՝ նրան «գործուղել են Պարսկաստան և Թուրքիա՝ Թուրքեստանով»: «Ժողովուրդների հայրը», ըստ երեսույթին, հաշվարկել էր, որ հիվանդ բանաստեղծը չի կարողանա դիմանալ ճանապարհի դժվարություններին: Չէ՞ որ թոքախտով հիվանդ Տերյանի համար դա իսկական մահվան ճամփա էր, քանի որ իրականում

Թուրքեստան տանող ճանապարհի այդ օրերին գոյություն չունեք, փակ էր քաղաքացիական կռիվների պատճառով, իսկ վագոնները չէին տաքացվում: Այդպես էլ եղավ. 1920 թվականի հունվարի 7-ին Վահան Տերյանը վախճանվեց ճանապարհին՝ ձյունածածկ Օրենբուրգում:

Իմ գերեզմանը թող լինի հեռվում,
Ուր մահացել եմ շշուկ, երգ ու ձայն:
Թող շուրջս փռվի անանց լռություն,
Թող ինձ չհիշեն, թող ինձ մոռանան:

Մեկը միայն այդ ցանկություններից չիրականացավ՝ «Թող ինձ չհիշեն, թող ինձ մոռանան...»: Մեր ժողովուրդը, անկարող մոտենալ նրա հեռավոր գերեզմանին, իր սիրո մագնիսական ուժով հեռվից դեպի իրեն ձգեց ու մոտեցրեց Օրենբուրգում գտնվող «հեռավոր գերեզմանը...»:

1965 թ.-ի ապրիլի 8-ին, Հայոց մեծերի պանթեոնում հայրենի հողին հանձնվեց մի բուռ հող հեռավոր Օրենբուրգի գերեզմանատնից, և Կոմիտասի ու Իսահակյանի գերեզման-հուշարձանների կողքին բարձրացավ մի նորը՝ Վահան Տերյանի գերեզման-հուշարձանը:

Հովհաննես Շիրազ

Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես հավիտյան,
Որպես լեզուն մեր հայոց, որպես սյունը քո հոր տան:
...Ու երբ բերես, իմ բալիկ, սիրտս էլ շիրմից կհանես,
Կբարձրանաս ու սիրտս ազատն ի վեր կտանես
Ու կթաղես իմ սիրտը ձյունների տակ Մասիսի,
Որ շիրմում էլ՝ դարավոր հուր կարոտից չմրսի:

Հ. Շիրազի սիրտը, իր կտակի համաձայն, թաղվել է Արարատ լեռան ձյունների մեջ և ի պահ տրվել օրերին այնքան ժամանակ, քանի դեռ սրբազան սարն ազատագրված չէ գերությունից: Դրանից հետո Շիրազի սիրտը՝ որպես հայության սրտի խորհրդանշան, հանգիստ կառնի և կդառնա հավերժության ճամփորդ:

Պարույր Սևակ

1971 թ.-ի հունիսի 17-ին, Երևանից գյուղ վերադառնալիս, Սևակը կնոջ՝ Նելլիի հետ վթարի ենթարկվեց: Հայաստանի Կոմկուսի ԿԿ-ն որոշեց հուղարկավորել նրան հայրենի գյուղում: Իբր թե այդպիսին էր հանգուցյալի վերջին կամքը: Ժամանակակիցներից շատերն այն ժամանակ համարեցին, թե Պարույր Սևակին միտումնավոր նվաստացրին՝ գրկելով նրան Պանթեոնում թաղվելու իրավունքից: Բանաստեղծի մոտ ընկերը՝ իրավաբան Աշոտ Թադևոսյանը, որոշեց յուրովի վերականգնել արդարությունը: Նա շտապեց դիտարկարան և ծնկաչոք աղերսեց ու ստացավ պաթոլոգոանատոմներից... հանգուցյալ ընկերոջ սիրտը: Բժիշկը ապշել էր նման խնդրանքից... Տա՞լ նրան Սևակի սիրտը, ինչո՞ւ...

Իսկ վերջինս անդադար խոսում էր, թե որքան էր Սևակը սիրում Կոմիտասին, Շոպենի սրտի մասին, որը լեհերը թաղեցին Լեհաստանում, Բայրոնի ճակատագրի մասին, որի աճյունի մի մասը Հունաստանում մնաց, իսկ մյուսը տեղափոխվեց Լոնդոն՝ Վեսթմինսթերյան աբբայություն... Եվ բժիշկը տեղի տվեց: Նա զգույշ տեղադրեց սիրտը ֆորմալինով սրվակի մեջ և հանձնեց այդ խենթ մարդուն: Աշոտ Թադևոսյանը, քողարկելով թանկարժեք բեռը, շտապեց տուն: Տասը տարի Աշոտ Թադևոսյանը պահեց ընկերոջ սիրտն իր տանը, հետո ևս 15 տարի իր աշխատասենյակի սեյֆում: Եվ պահանջում էր, անվերջ պահանջում, որ նրան ըստ արժանվույն հուղարկավորեն Պանթեոնում: Նա դիմեց այն ժամանակվա նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, Ամենայն Հայոց կաթողիկոսին, Գրողների միությանը, քաղաքապետարանին... Ի վերջո, քաղաքապետարանը խղճաց «սրտի գերուն» ու կարգադրեց Գրականության ու արվեստի թանգարանին՝ պահպանության ընդունել այդ «ցուցանմուշը»: Այս պատմության մեջ ինչ-որ միտակցական կա, բայց այն ճիշտ է սկզբից մինչև վերջ: Որտե՞ղ գլուխ խոնարհես մեծ վշտի պահին՝ հարգանքի տուրք մատուցելով բանաստեղծին: Սևակն ու Կոմիտասը, բաժանված լինելով ժամանակի ու տարածության առումով, կարող էին հանդիպել ծառերի ստվերի տակ, ժողովրդական սիրով օծված սուրբ շիրիմում... Ահա երբ կինչի հիշատակի անլռելի զանգը Պանթեոնում... Այնտեղ, ուր հանգչում են Սարոյանն ու Սարյանը, Խաչատրյանն ու Փարաջանովը, ժողովրդի պարծանքը դարձած մյուս

հայորդիները, այնտեղ՝ մեր ազգային պանթեոնում է Սևակի սրտի վերջին հանգրվանը:

Քաց նամակ ամենքին

Բոլորիս հայտնի է, որ ուրիշի նամակներն առանց թույլտվության չեն կարողում. Դա բարեկիրք չէ: Սակայն մենք կարողում ենք նշանավոր մարդկանց՝ գրողների, գիտնականների, մշակութային և քաղաքական գործիչների նամակները, քանի որ դրանք ուղղված են ողջ մարդկությանը և, ուրեմն, պետք է դառնան հանրության սեփականությունը, ուղեկցեն նրան ողջ կյանքի ընթացքում: Դրանք իրենց բովանդակությամբ գրեթե նման են միմյանց. նրանցում հնչում են կյանքը ճիշտ ապրելու, կյանքին ճիշտ նայելու հայրական իմաստուն խորհուրդներ:

Հայ նշանավոր գործիչների՝ իրենց զավակներին գրած նամակների տողերից

Ավետիք Իսահակյանը որդուն՝ Վիգենին

1926, դեկտեմբերի 7, Երևան

Միրելի՛ Վիգեն, ներողություն, որ ահա երկու ամիս է՝ Հայաստանում եմ, բայց քեզ դեռ մի նամակ չեմ գրել: Չկարծես, թե քեզ մոռացել եմ. մայրիկիդ գրել եմ շարունակ և հարցուփորձ արել քո մասին: Միրելի՛ տղաս, լավ աշխատիր, լավ սովորիր: Դու արդեն մեծ տղա ես և ամեն բան հասկանում ես: Աշխատիր մա՛րդ դառնալ, լավ մարդ՝ քաջ, զարգացած, պատրաստված, որ թե քեզ պետք գաս և թե հայ ժողովրդին:

Հայրիկ

Հովհաննես Թումանյանն իր զավակներին

Պոլիս- Թիֆլիս, 1921թ. նոյեմբերի 2

Իմ ջանիկ- մանիկներս, էսքան ժամանակ, որ ինձանից տեղեկություն չունեք, երևակայում եմ, թե ինչքան եք անհանգստացել ու ինչեր եք մտածել: Ստացել եմ երեքիդ նամակն էլ: Դուք իսկի չեք կարող երևակայել, թե ինչքան եմ կարոտել և ինչքան եմ անհանգիստ: Իրիկունները պառկում եմ թե չէ, սկսում եմ ձեր մասին մտածել և ամբողջ

գիշերները քնել չեմ կարողանում: Անդադար երևակայում եմ ճանապարհն ու տուն հասնելը և ձեզ: Նորից ու նորից համբուրում եմ ձեզ ամենքիդ:

Առնո Բարաջանյանի հոր պատգամներից

Եղի՛ր ազնիվ, արդարամիտ, բարի, համարձակ: Երբեք մի՛ նախանձիր մարդկանց, մի՛ ուրախանա ուրիշի վշտով, մի՛ ծիծաղիր ուրիշի դժբախտության վրա: Եվ այդ ժամանակ մարդկային երջանկությունը կայցելի քո տուն: Հիշի՛ր այդ մասին և երգի՛ր դա քո երգերում:

Վիկտոր Համբարձումյանի կտակը

Աշխարհահռչակ գիտնական, աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը թողել է մի կտակ, որը, ըստ երևույթին, եղել է նրա սրտի խոսքը: «...Կտակում եմ. ինձ հաջորդող սերունդներին, թոռներիս, ծոռներիս և այլն, տիրապետել հայոց լեզվին: Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ խոսել հայերեն՝ անկախ նրանից, թե ինչպիսի տոկոս է նրա մեջ կազմում հայկական արյունը: Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ, և այդ գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է:

Այդ կապակցությամբ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է սովորեցնել հաջորդին հայոց լեզուն: Գիտցի՛ր, որ իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է և կմնա, քանի ապրում եմ, հայոց լեզվին տիրապետելը:

Ցանկանում եմ երջանկություն բոլորիդ. դա նշանակում է, որ պետք է լավ տիրապետեք հայոց լեզվին»:

29.8.1997

Մարտիրոս Սարյան

Սփյուռքահայ մանուկներին

Թանկագի՛ն մանուկներ, իմ փոքրիկ հայրենակիցներ. Ողջունում եմ ձեզ մեր քաղաքամայր Երևանից, ձեզ, որ բախտի անարդար ձեռքով ոսկեհատիկ ցորենի պես ցանված եք աշխարհի տարբեր ասիերին; Կյանքում պիտանի եմ նրանք, ովքեր ունեն շատ գիտելիքներ; Իսկ գիտելիքները ձեռք են բերվում հարատև աշխատանքով; Ուրեմն, սիրեցե՛ք աշխատանքը. աշխատանքով են ստեղծվում բոլոր բարիքները՝ հացը, լույսը, արվեստը, երջանկությունը: Մեր տաղանդավոր նախնիների օրինակով սիրեցե՛ք արվեստը. նա կզեղեցկացնի ձեր կյանքը և

ձեր սիրտը կլցնի սիրով բոլոր մարդկանց ու աշխարհի հանդեպ; Ով որ կարող է հիանալ ծաղիկների գույնգգույն տեսքով, երկնքի ջինջ կապույտով, Սևանի ալիքների քնքուշ ծփանքով կամ Մասիսի կատարը պսակող հավերժական ձյան մաքրությամբ, նա բարի և աշխարհին պիտանի մարդ է:

Յոթանասուն տարիներ վրձինը ձեռքիս ես սիրով ու անդադար նկարել եմ մեր հայրենիքը, չքնաղ բնությունը, հայ մեծերին և ազնիվ մարդկանց; Այդ բոլորը ստեղծել ու պահել եմ ձեզ համար, իմ փոքրիկ հարազատներ, որպեսզի մի օր դիտեք դրանք և ինձ պես ջերմորեն սիրեք մեր հնավանդ հայրենիքն ու ժողովրդին՝ չնռանալով հարգել նաև աշխարհի մյուս ժողովուրդներին: Հարգեցեք նաև ձեր ծնողների և ուսուցիչների աշխատանքը; Սիրեցեք նրանց այնպես, ինչպես նրանք են սիրում ձեզ: Այն ժամանակ իմ հոգին պիտի խաղաղվի, որ պիտանի և խոստումնալից զավակներն եք մեր հայրենիքի:

Աբրահամ Լինքոլնի նամակն իր որդու ուսուցչին

Ես հասկանում եմ, որ նա պետք է իմանա, որ ոչ բոլոր մարդիկ են արդար, ոչ բոլորն են անկեղծ: Բայց սովորեցրեք նրան, որ եթե կա սրիկա, կա նաև հեռոս, եթե կա եսասեր քաղաքական գործիչ, կա նաև նվիրյալ առաջնորդ:

Սովորեցրեք նրան այն, որ եթե կա թշնամի, ապա կգտնվի և ընկեր: Սա սովորեցնելու համար երկար ժամանակ կպահանջվի, ես գիտեմ, բայց եթե կարող եք, նրան սովորեցրեք, որ վաստակած մեկ դոլարն ավելի արժեքավոր է, քան գտած հինգ դոլարը:

Սովորեցրեք նրան խաղալ, ինչպես նաև՝ վայելել հաղթանակները: Եթե կարող եք, նրան հեռու պահեք նախանձից, սովորեցրեք մեղմ ծիծաղելու գաղտնիքը:

Թույլ տվեք, որպեսզի նա շուտ հասկանա, որ գոռբաներին հաճոյանալը ամենահեշտ բանն է: Եթե կարող եք, սովորեցրեք նրան հետաքրքրվել գրքերով...

Եվ տվեք նրան նաև ազատ ժամանակ, որպեսզի նա կարողանա խորհել հավերժական գաղտնիքների՝ երկնքում ճախրող թռչունների, արևի շողերում երևացող մեղուների և բլուրի կանաչ ստորոտի ծաղիկների մասին:

Երբ նա դպրոցում լինի, նրան նաև սովորեցրեք, որ շատ ավելի պատվաբեր է համբերատար տանել անհաջողությունը, քան խաբել...

Սովորեցրեք նրան վստահել սեփական գաղափարներին, եթե անգամ կողքիններն ասեն, որ սխալվում է...

Սովորեցրեք նրան մեղմ լինել մեղմ մարդկանց հետ և լինել դաժան դաժանների հետ: Փորձեք իմ տղային ուժ փոխանցել, որպեսզի նա չտրվի և չհետևի հաղթողի կողմն անցած ամբոխին...

Սովորեցրեք նրան, որ լսի բոլոր մարդկանց, միայն թե սովորեցրեք նաև, որ իր լսածը ճշմարտության տեսանկյունից դիտարկի և վերցնի միայն լավը:

Եթե կարող եք, սովորեցրեք ծիծաղել, երբ տխուր լինի: Սովորեցրեք նրան, որ արտասովելն ամոթ չէ: Նրան ցինիկների վրա ծիծաղել սովորեցրեք, ինչպես նաև՝ խույս տալ մարդահաճությունից:

Սովորեցրեք նրան իր ուղեղն ու մկանների ուժը վաճառել ամենաբարձր գնով, բայց երբեք վաճառքի չհանել ոչ սիրտը, ոչ էլ հոգին:

Սովորեցրեք նրան չլսել ոռնացող ամբոխին, բայց նաև սովորեցրեք կանգնել ու պայքարել, եթե կարծում է, որ ինքը ճիշտ է:

Նրա հանդեպ մեղմ վարվեք, բայց առանց ավելորդ քնքշության, որովհետև միայն կրակի միջով անցնելու փորձությունից հետո են բացահայտվում պողպատի լավագույն հատկանիշները:

Թույլ տվեք, որպեսզի նա քաջ լինի, որպեսզի դառնա անհանդուրժող (վատ բաների հանդեպ): Թույլ տվեք, որ նա համբերատար լինի, որպեսզի դառնա խիզախ: Սովորեցրեք, որ նա միշտ ինքն իրեն հավատա, որովհետև այդ դեպքում նա միշտ հավատ կունենա մարդկության հանդեպ:

Դեռևս 18-րդ դարում **Ֆիլիպ Չեստերֆիլդը** /անգլիացի պետական գործիչ, դիվանագետ և գրող/ որդուն ուղղված իր նամակներում գրել է. «Դու անկասկած գիտես, որ խոսքը խախտելը անխոհեմություն է, որովհետև հետո քեզ ոչ ոք չի հավատա, իսկ դա անպատվություն է և հավասար է նաև հանցագործության, որովհետև ճշմարտախոսությունը բարոյականության առաջին պահանջն է, և ոչ ոք չի մտածի, թե իր խոսքը չկատարող մարդն ընդհանրապես կարող է օժտված լինել՝ որևէ ուրիշ լավ հատկությամբ: Ուստի նա իր նկատմամբ ատելություն կառաջացնի, և նրանից մարդիկ երես կթեքեն»:

Չարի Չապլինի նամակն իր դատերը

-Գատրիկս, հիմա գիշեր է: Ծննդյան գիշեր: Ինչքան հեռու եմ քեզանից, բայց թող կուրանան աչքերս, թե քո պատկերը, թեկուզ մի ակնթարթ, հեռանում է աչքիս առաջից: Նա այնտեղ է, իմ սեղանին, այստեղ` սրտիս մեջ: Այդտեղ, հեքիաթային Փարիզում, դու պարում ես փառահեղ թատրոնի բեմահարթակի վրա, Ելիսեյան դաշտերում: Ես դա լավ գիտեմ, և ինձ թվում է` գիշերվա այս լռության մեջ լսում եմ քո քայլերը, տեսնում եմ քո աչքերը, որ փայլում են, ինչպես աստղերը ձմեռային գիշերում: Ես լսել եմ, որ դու այդ տոնական ու շողշողուն ներկայացման մեջ կատարում ես դերը պարսկական գեղեցկուհու, որը գերված է թաթարական խանից: Գեղեցկուհի՛ եղիր և պարիր, ա՛ստղ եղիր և փայլիր, բայց եթե հանդիսատեսի ցնծությունն ու շնորհակալության խոսքերն արբեցնեն քեզ, եթե գլուխդ պտույտ գա քեզ ընծայված ծաղիկների բույրից, ապա քաշվիր մի անկյուն և կարդա իմ նամակը, ունկնդիր եղիր հորդ ձայնին: Ես քո հայրն եմ, Ջերալդինա: Ես`Չարլին, Չարլի Չապլինը: Գիտե՞ս, թե քանի գիշերներ եմ անցկացրել քո մահճակալի մոտ, երբ դու փոքր էիր. քեզ հեքիաթներ էի պատմում և՛ քնած գեղեցկուհու, և՛ մշտաբուն վիշապի մասին... Իսկ երբ քունը իջնում էր իմ ծերացող աչքերին, ես ծիծաղում էի նրա վրա ու ասում. « Հեռացիր, իմ քունը իմ աղջկա երազանքներն են»: Ես տեսնում էի քո այդ երազանքները, Ջերալդինա, տեսնում էի քո ապագան, քո այսօրը. Ես տեսնում էի բեմահարթակի վրա խաղացող մի աղջկա, երկնքում ճախրող մի փերու: Լսում էի` ինչպես մարդիկ ասում են.« Տեսնու՞մ եք այս օրիորդին: Սա այն ծեր ծաղրածուի աղջիկն է: Հիշու՞մ եք` ինչ էր նրա անունը` Չարլի»: Այսօր հերթը քոնն է: Պարի՛ր: Ես պարում էի լայն պատառոտված անդրավարտիքով, իսկ դու պարում ես արքայադստեր մետաքսյա հագուստով: Այդ պարերն ու ծափահարությունների որոտը քեզ երկինք կհանեն: Բարձրացի՛ր: Բարձրացիր այնտեղ, աղջիկս, բայց և վերադարձիր երկիր, դու պետք է տեսնես` ինչպես են ապրում մարդիկ, ինչպես են ապրում այն ծայրամասերի փողոցի պարուհիները. Նրանք պարում են ցրտից և սովից դողալով: Ես այնպիսին եմ եղել, ինչպիսին նրանք են, Ջերալդինա: Այն գիշերները, այն կախարդական գիշերները, երբ դու քնում էիր` օրորվելով իմ հեքիաթներից, ես չէի քնում. Ես նայում էի քո դեմքին, լսում էի քո սրտի զարկերը և ինձ հարց էի տալիս.«Չարլի, մի՞թե այս փիսիկը կճանաչի քեզ երբևէ»: Գու ինձ չես ճանաչում,

Ջերարդինա... ես շատ հեքիաթներ եմ պատմել քեզ այն երկար գիշերներին, բայց իմը, իմ հեքիաթը, չեմ պատմել: Իսկ դա նույնպես հետաքրքիր է. հեքիաթ՝ քաղցած ծաղրածուի մասին, որ պարում ու երգում էր Լոնդոնի աղքատ թաղամասերում, իսկ ապա... ողորմածություն հայցում... Միա նա, իմ հեքիաթը: Ես գիտեմ՝ ինչ բան է սովը, ինչ է անօթևան լինելը: Դեռ ավելին՝ ես ճաշակել եմ ստորացնող մորմոքը այն թափառական ծաղրածուի, որի կրծքի տակ փոթորկվում է հպարտության մի ամբողջ օվկիանոս, և այդ հպարտությունը մեռցնում էին նետած դրամերը... և չնայած այդ ամենին, ես ապրում եմ, իսկ ապրողների մասին սովորաբար քիչ է խոսվում: Քո անվանը, Ջերարդինա, հետևում է իմը՝ Չապլին: Այդ անունով ես ավելի քան քառասուն տարի ծիծաղեցրել եմ մարդկանց: Բայց ես ավելի լաց եմ եղել, քան նրանք ծիծաղել են:

Ես չեմ եղել հրեշտակ, բայց որքան կարողացել եմ, ձգտել եմ լինել մարդ: Փորձիր և դու: Համբուրում եմ քեզ: Չարլի:

Գարրիել Գարսիա Մարկես

Նամակ մահվանից առաջ

Եթե Աստած գեթ մի պահ մոռանար, որ ես միայն կտորե խամաճիկ եմ և ինձ կյանքի մի պատառիկ նվիրեր, այդժամ ես երևի թե չէի ասի այն ամենը, ինչ մտածում եմ, բայց հաստատ կմտածեի այն ամենի մասին, ինչ ասում եմ: Ես իրերը կգնահատեի ոչ թե ելնելով նրանց գնից, այլ նշանակությունից: Ես ավելի քիչ կքնեի, ավելի շատ կերագեի՝ հսկանալով, որ ամեն բոպե, երբ մենք փակում ենք աչքերը, կորցնում ենք լույսի վաթսուն վայրկյան: Ես կքայլեի, քանի դեռ մյուսները կանգնած են, չէի քնի, քանի մյուսները քնած են: Ես կլսեի, երբ մյուսները խոսում են և կվայելեի շոկոլադե պաղպաղակի հիանալի համը:

Եթե Աստված ինձ կյանքի մի պահ էլ պարզներ, ես ավելի համեստ կհագնվեի, կպառկեի արևի շողերի տակ և նրա ջերմությանը ի ցույց կդնեի ոչ միայն մարմինս, այլև՝ հոգիս: Տե՛ր Աստված, եթե ես սիրտ ունենայի, ես կգրեի իմ ամբողջ ատելությունը սառույցի վրա և կսպասեի մինչև դուրս գա արևը: Ես կնկարեի Վան Գոգի երագով Բենեդետտիի պոեմի աստղերի վրա և Սերրատի երգը սերենադի պես կնվիրեի լուսնին: Ես արցունքներով կջրեի վարդերը, որպեսզի զգամ նրանց փշերի ծակոցների ցավը և թերթիկների համբույրը:

Տեր Աստված, եթե ես կյանքի ևս մի պատառիկ ունենայի, ոչ մի օր չէի անցկացնի՝ առանց ասելու իմ սիրած մարդկանց, որ ես նրանց սիրում եմ: Ես կհամոզեի ինձ թանկ յուրաքանչյուր մարդուն իմ սիրո մեջ և կապրեի՝ սիրահարված...սիրուն: Ես կբացատրեի բոլորին, ովքեր մոլորության մեջ մտածում են, թե դադարում են սիրահարվել ծերանալուն գուզընթաց, որ ծերանում են այն ժամանակ, երբ դադարում են սիրահարվել:

Երեխային ես թևեր կնվիրեի, բայց կթողնեի, որ ինքնուրույն սովորի թռչել:

Ծերերին ես կհամոզեի, որ մահը ծերության հետ չի գալիս, այլ մոռացության:

Ես ձեզանից այնքան բան եմ սովորել, մարդիկ, ես հասկացել եմ, որ ամբողջ աշխարհը ուզում է ապրել սարերում՝ չհասկանալով, որ իրական երջանկությունը սարը բարձրանալու մեջ է:

Ես հասկացել եմ, որ այն պահից, երբ նորածինը իր փոքրիկ բռունցքում սեղմում է հոր մատը, այլևս երբեք այն բաց չի թողնի: Ես հասկացել եմ, որ մեկը մյուսին բարձրից նայելու իրավունք ունի միայն այն ժամանակ, երբ օգնում է նրան բարձրանալ:

Այնքան բան կա, որ ես դեռ կարող էի ձեզանից սովորել, մարդիկ, սակայն սովորածս ինձ դժվար թե պետք գա, որովհետև երբ ինձ դնեն այդ ճամպուրակի մեջ, ես, ցավոք սրտի, արդեն մահացած կլինեմ:

Միշտ ասա այն, ինչ զգում ես և արա այն, ինչ մտածում ես:

Եթե ես իմանայի, որ ես այսօր քեզ վերջին անգամ եմ տեսնում քնած, ես քեզ պինդ կգրկեի և կաղոթեի Աստծուն, որ ինձ քո պահապան հրեշտակը դարձնի:

Եթե ես իմանայի, որ այսօր վերջին անգամ եմ տեսնում, թե ինչպես ես դուրս գալիս դռնից, ես քեզ կգրկեի, կհամբուրեի և նորից կկանչեի, որպեսզի ավելին տամ: Եթե ես իմանայի, որ քո ձայնը վերջին անգամ եմ լսում, կձայնագրեի ամենը, ինչ ասում ես, որպեսզի էլի ու էլի լսեմ, անվերջ: Եթե ես իմանայի, որ սրանք վերջին բուպեներն են, որ ես քեզ տեսնում եմ, ես կասեի. «Միբնու՛մ եմ քեզ ու հիմարի պես չէի մտածի, որ դու դա գիտեիր»:

Միշտ կա վաղը, և կյանքը մեզ ամեն ինչ ուղղելու ևս մեկ հնարավորություն է տալիս, սակայն եթե ես սխալվում եմ, և այսօրը այն ամենն է, ինչ մեզ մնացել է, ապա ես կուզեի քեզ ասել, թե ինչքան ուժեղ եմ քեզ

սիրում ու որ երբեք չեն մոռանա քեզ: Ո՛չ պատանին, ո՛չ ծերը չեն կարող վստահ լինել, որ իրենց համար վաղը կգա:

Այսօրը կարող է լինել վերջին օրը, որ դու տեսնում ես սիրելիներիդ: Այնպես որ մի՛ սպասիր ինչ-որ բանի, այսօր արա այն, ինչ մտածել ես, որովհետև եթե վաղը երբեք չգա, դու կափսոսաս այն օրվա համար, երբ ժամանակ չգտար մեկ ժպիտի, մեկ անգամ գրկելու, մեկ համբույրի համար, երբ դու չափազանց զբաղված էիր՝ վերջին ցանկությունը իրականացնելու համար: Ոգևորի՛ր հարազատներիդ, շշջա՛ նրանց ականջին, թե ինչքան պետք են նրանք քեզ, սիրի՛ր նրանց և գուրգուրանքով վարվիր, ժամանակ գտիր, որ ասես՝ կներես, խնդրեմ, շնորհակալություն և սիրո այն բոլոր բառերը, որ գիտես:

Ոչ որ քեզ չի հիշելու մտքերիդ համար: Աստծուց իմաստնություն և ուժ խնդրի՛ր, որ ասես այն, ինչ զգում ես: Յույց տուր ընկերներիդ, թե ինչ կարևոր են նրանք քեզ համար:

Եթե դու չասես այդ ամենը այսօր, վաղը կլինի նույնը, ինչ երեկ: Եվ եթե դու չանես դա երբեք, ոչինչ նշանակություն չի ունենա: Իրականացրո՛ւ երազանքներդ: Այդ պահը եկել է:

ԱՐՎԵՍՏԸ ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔՈՒՄ

Ոչ մի այլ միջոց չի կարող ավելի լավ և ավելի արդյունավետ խրատել կրթությունը և լուսավորությունը, քան գեղեցիկ արվեստները՝ պոեզիան, երաժշտությունը և գեղանկարչությունը:

Խ. Արովյան

Արվեստը հոգևոր մշակույթ է, մարդու ստեղծագործական գործունեության ձևերից մեկը: Այն ծագել ու ձևավորվել է մարդու հետ միաժամանակ՝ որպես մարդու ինքնարտահայտման միջոց: Արվեստը մարդուն հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալու կյանքը, ճանաչելու աշխարհը, զգալու ու տեսնելու գեղեցիկը, արտահայտելու կյանքից ստացած տպավորությունները:

Արվեստը վերարտադրում է կյանքը, իրականությունը, և դա մեզ է մատուցում յուրահատուկ լեզվով, հույզերի ու զգացմունքների միջոցով: Արվեստի յուրաքանչյուր տեսակ ունի իր «լեզուն», որի միջոցով արտահայտում է մտքեր ու զգացմունքներ:

Արվեստն օգնում է ճանաչել աշխարհը, ձևավորում է մարդկանց հոգևոր նկարագիրը, նրանց զգացմունքներն ու մտքերը: Սկզբնավորվելով դեռևս մարդու աշխատանքային գործունեության նախնական շրջանում՝ արվեստը բարենպաստ ազդեցություն է ունեցել նրա զարգացման վրա, հատկապես նրա գեղագիտական պատկերացումների ընդարձակման վրա:

Այսօր ևս շատ կարևոր է գեղագիտական դաստիարակությունը անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար: Իրականության գեղագիտական ճանաչումը իրացվում է արվեստի տարբեր տեսակների միջոցով:

Գեղագիտական երևույթներն ընկալվում են տեսողությամբ, լսողությամբ, ինչպես նաև՝ սինթեզված (միաժամանակ և՛ լսողությամբ, և՛ տեսողությամբ): Դրան համապատասխան՝ արվեստն ունի մի քանի տեսակներ՝ նկարչություն, երաժշտություն, կինո, թատրոն, քանդակագործություն, ճարտարապետություն և այլ ձևեր:

Սակայն արվեստի տարբեր ձևերի միջև սահմանները հարաբերական են, նրանք երբեմն միահյուսվում կամ զուգակցվում են իրար: Իրականու-

թյան գեղարվեստական արտացոլումն ու ճանաչումը բարերար ներգործություն է ունենում մարդկանց գիտակցության, զգացմունքների վրա:

Տերը լինենք մեր ունեցածի, հոգատար հայր, մայր, սրտացավ ուսուցիչ լինենք մեր երեխաների հանար, մեր զավակներին դարձնենք ոչ միայն առողջ ու բարետես, այլև՝ վեհի ու գեղեցիկի կրողներ: Չծուլանանք, շաբաթը զոնե մեկ անգամ նրանց տանենք թատրոն, պատկերասրահ, թանգարան... Թող ճանաչեն Ռաֆայելին ու Միքելանջելոյին, Սարյանին ու Բաշինջաղյանին, Կոջոյանին ու Քոչարին, թող լսեն Մոցարտի ու Բեթհովենի, Վերդիի ու Վիվալդիի ստեղծագործությունները, որ հասկանան ու սիրեն Կոմիտասին... Թող կարդան Շեքսպիր ու Դանթե, Մոլիեր ու Մարկես, Լոնդոն ու Տվեն... Սկսենք մեզանից. կարդանք, որ կարողանանք կարդալը քարոզել, դիտենք, ունկնդրենք, որ կարողանանք դիտելու ու լսելու կարողություն զարգացնել:

Արվեստի գործերը մեծ մասամբ պահվում են պատկերասրահներում և թանգարաններում: Շատ հուշարձաններ ու կոթողներ կանգնեցված են քաղաքների ու բնակավայրերի հրապարակներում, պուրակներում և այլ տեղեր:

Աշխարհում կան շատ թանգարաններ, որոնք պահպանում են մարդկության կողմից ստեղծված մշակույթի անգնահատելի գանձերը: Առավել հայտնիներն են՝

1. Էրմիտաժ՝ Սանկտ-Պետերբուրգ, 1764թ.: Գործում է:
2. Լուվր՝ Ֆրանսիա, 1793թ.: Գործում է:
3. Դրեգդենյան պատկերասրահ՝ Գերմանիա, 1855թ.: Գործում է :
4. Լոնդոնի ազգային թանգարան՝ Անգլիա , 1824թ.: Գործում է:
5. Տրետյակովյան պատկերասրահ՝ Մոսկվա, 1856թ.: Գործում է:
6. Բեռլինյան թանգարան՝ Բեռլին, 1822-1830 թ.թ.: Գործում է:
7. Հայաստանի պետական պատկերասրահ՝ հիմնադրվել է 1921թ.: Գործում է:

Հնադարյան կառույցներ

1. Պարթենոն /447-438թ.թ. Ք.ա/:
2. Պերգամյան / Չևսի/ զոհարան /Ք.ա 170/:
3. Հռոմի կրկես կամ Կոլիզեյ /75-82թ.թ./:

4. Էջմիածնի Մայր տաճար՝ Վաղարշապատ, կառուցել են Տրդատ 3-րդ արքան և Գրիգոր Լուսավորիչը, /301թ./:

5. Չվարթնոց /7-րդ դար/:

Թանգարաններ

Էրմիտաժ - հիմնադրվել է 1764 թվականին, Եկատերինա 2-րդ թագուհու կողմից: Ֆրանսերենով նշանակում է առանձնատուն, ուր մարդ կարող է մնալ ինքն իր հետ: Նկարները գնվում էին Չմեռային պալատի համար, որտեղ Եկատերինա 2-րդը ստեղծել էր պատկերասրահ: Աստիճանաբար ստեղծվեց ճարտարապետական մի ամբողջ համալիր, որն ինքնին արվեստի մի հոյակապ ստեղծագործություն է: Այստեղ են Ռեմբրանդտի «Անառակ որդու վերադարձը» կտավը, Ռուբենսի «Պերսեսն ու Անդրոմեդը», Տիցիանի «Դանայան», Լեոնարդո դա Վինչիի «Լիտտայի մադոննան», Ռաֆայելի «Կոնեստաբլեի մադոննան» և շատ այլ հայտնի կտավներ:

Լուվր - որպես արվեստի թանգարան՝ այն բացվեց 1793 թ.-ին, բայց հիմնադրվել է դեռևս 12-րդ դարում: Լուվրը սկզբում եղել է ամրոց, 16-րդ դարում դառնում է թագավորական պալատ: Այժմ այս ճարտարապետական անսամբլը ֆրանսիական ազգային ճարտարապետության կոթողներից մեկն է: Այստեղ հավաքված են աշխարհի ամենաարժեքավոր, ամենահանրահայտ գործերը՝ Լեոնարդո դա Վինչիի «Տիրամայրը քարայրում», «Մոնա Լիզան» /Չոկոնդան/, Ռաֆայելի, Ջորջոնի, Տիցիանի, Վերոնեզեի, Ռուբենսի, Ռեմբրանդտի և այլ հանրահայտ նկարիչների կտավներ, դիմաքանդակներ, անտիկ արվեստի նմուշներ:

Հնարավոր չէ հաշվել, թե աշխարհում արվեստի ինչքան գործեր կան, որոնք ստեղծվել են տարբեր ժամանակներում, տարբեր ժողովուրդների կողմից: Այդ բոլորից առանձնանում են այնպիսի գործեր, որոնք մտել են համաշխարհային արվեստի ոսկե ֆոնդը ու դարձել համայն մարդկության սեփականությունը:

Մեծ նկարիչները և նրանց հայտնի ստեղծագործությունները

Հովհաննես Այվազովսկի՝ «Իններորդ ալիք»,

Գառզու /Գառնիկ Չուլումյան/, ֆրանսահայ նկարիչ՝ «Լքված նավահանգիստ»,

Էդգար Շահին, ֆրանսահայ նկարիչ՝ «Փարիզուհին կառքում»,

Գևորգ Բաշինջաղյան՝ «Սևան»,

Գրիգոր Խանջյան՝ «Հայոց այբուբեն»,
Հակոբ Կոջոյան՝ «Սասունցի Դավիթ» էպոսի նկարագրում,
Մարտիրոս Սարյան /գույների կախարդ/՝ «Հայաստան»,
Մինաս Ավետիսյան՝ «Խաչելություն»,
Լեոնարդո դա Վինչի՝ «Մոնա Լիզա»,
Ռաֆայել՝ «Միքստինյան տիրամայր»,
Պաբլո Պիկասո՝ «Աղջիկը գնդի վրա»,
Սալվադոր Դալի՝ «Խորհրդավոր ընթրիք»,
Վինսենթ վան Գոգ՝ «Արևածաղիկներ»,
Պոլ Գոգեն՝ « Աստծո օրը»,
Արշիլ Գորկի /Ռստանիկ Ադոյան/՝ «Մայրը»:

Գիմանկարչությունը գեղանկարչության դժվարին ժանրերից է:

Բացի արտաքին նմանությունից, նկարիչը պետք է կարողանա բացահայտել մարդու ներաշխարհը, սոցիալական և հոգեբանական բնութագիրը: Ինչպես՝ Լեոնարդո դա Վինչի՝ «Ջոկոնդա», Ռուբենս՝ «Սպասուհու դիմանկարը», Մարտիրոս Սարյան՝ «Ավ. Իսահակյանի դիմանկարը» և այլ կտավներում:

Լեոնարդո դա Վինչի՝ Վերածննդի իտալացի նշանավոր գիտնական, գյուտարար, նկարիչ, քանդակագործ, ճարտարապետ, երաժիշտ, մաթեմատիկոս, ճարտարագետ, գրող և հայտնի նաև այլ ոլորտներում: Նա առաջինն է բնորոշել Վերածննդի մարդասիրական իդեալը:

Լեոնարդո դա Վինչիի «Ջոկոնդա»-ն աշխարհում առավել հայտնի կտավներից է, որն ստեղծվել է 1503-1505 թվականներին: Հենց այս աշխատանքին է նկարիչը տվել իր հատուկ սերը: Ենթադրվում է, որ նկարում պատկերված է Լիզա Գերարդինին՝ Ֆլորենցիայի մետաքսի վաճառական Ֆրանչեսկո դել Ջոկոնդոյի կինը, սակայն մինչ այսօր այս փաստը մնում է չբացահայտված: Կարծիք կա նաև այն մասին, որ Մոնա Լիզան նման է Լեոնարդոյի մորը՝ Կատերինային: Լեոնարդոն հետագայում հեռապատկերում ավելացրեց երևացող բնանկարը՝ մոր ծննդավայրի լեռները:

Մոնա Լիզայի դեմքի առեղծվածային արտահայտությունը գրավել և հրապուրել է միլիոնավոր մարդկանց: Իսկ նրա ետևի բնապատկերը էլ ավելի խորհրդավորություն է հաղորդում ամբողջ նկարին. այն կարծես թե երևակայության արդյունք է և ոչ՝ իրական վայր: Նկարը ձեռք է բերել Ֆրանսիայի թագավոր Ֆրանսուա I-ը և ներկայումս հանդիսա-

նում է Ֆրանսիայի Հանրապետության սեփականությունը: 1797 թվականից պահվում է Փարիզի Լուվրի թանգարանում:

Հովհաննես Այվազովսկի՝ ծովանկարիչ /1817-1900/

Հովհաննես Այվազովսկին ծնվել է 1817թ.-ին, Թեոդոսիա քաղաքում (Ղրիմ)՝ աղքատ հայ ընտանիքում: Ընտանիքի ազգանունն Այվազյան էր: Նկարչի նկարներից մի քանիսը կրում են «Հովհաննես Այվազյան» ստորագրությունը:

Նա մի քանի պատկեր է նկարել նաև Օսմանյան սուլթանի համար: Այդ նկարները ներկայումս թուրքական թանգարաններում են: Թուրքական սուլթանը շքանշանով պարգևատրել է Այվազովսկուն, սակայն երբ Թուրքիայում 1890-ական թվականներին տեղի ունեցան հայերի կոտորածները, Այվազովսկին թուրքական շքանշանը կապել է իր շան վզին, իսկ հետո տարել և նետել ծովը:

Պատկերել է ծովն օրվա տարբեր ժամերին, տարվա բոլոր եղանակներին: Խորապես զգացել և վերարտադրել է ծովային տարերքի անընդգրկելի վեհությունը, հրավառ արևածագն ու արևամուտը, կեսօրի անդորրը, ալիքների շփման ու նրանց վրա խայտաացող լուսնի լույսը:

«Ապրել՝ նշանակում է աշխատել».-կյանքի այս ուղենիշով գույների կախարդ արքան ստեղծել է 6 հազար կտավ, որից մոտ չորս հազարը ծովանկարներ են:

«Իններորդ ալիք»

Այվազովսկու անունը տալիս մտովի տեսնում ենք ծովային ամենատարբեր տեսարաններ՝ ամեհի փոթորիկներ, նավաբեկություններ, պայծառ արևածագ ու լուսնկա գիշերներ: Ահեղ փոթորիկներ պատկերելիս նա ընդգծել է այդ տարերքի դեմ պայքարող մարդու ուժը՝ ցույց տալով, որ մարդը չի ընկճվի, մարդը կհաղթի:

Այվազովսկին ստեղծել է այս նկարը այն բանից հետո, երբ ինքն է հրաշքով փրկվել սարաափելի փոթորկից: Մի օր նավաստիները պատմել են նկարչին, որ փոթորիկի ժամանակ ալիքները գնալով բարձրանում են, և ամենաուժեղն ու ամենաբարձրը միշտ լինում է իններորդ ալիքը: Հենց այդ ալիքն է խորտակում նավերը: Բայց եթե նավերը կարողանում են այն հաղթահարել, ապրելու հույս է արթնանում, որովհետև հետո ալիքները սկսում են թուլանալ: Ակադեմիան ավարտելուց հետո Այվազովսկին ճանապարհորդել է ամբողջ Եվրոպայով և Իսպա-

նիայի ավերին ուժեղ փոթորկի մեջ է ընկել, որտեղ իր աչքերով է տեսել, թե ինչ է իններորդ ալիքը: Չի հավատացել, որ կարող է փրկվել, բայց ամեն ինչ ավարտվել է բարեհաջող: Նկարիչը հետո հիշել է, թե ինչպես է կյանքը վտանգելով դուրս եկել տախտակամած, որպեսզի մանրամասն հիշի այդ ճակատագրական պահը և զգա մոլեգնող փոթորիկն իր ամբողջ ուժգնությամբ: Այդ զգացողությունները նա արտահայտել է իր ամենահայտնի՝ «Իններորդ ալիք» կտավում: Այն գտնվում է Պետերբուրգի Ռուսական թանգարանում:

«Այվազովսկու նկարի առջև»

Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունը, նվիրված Այվազովսկու վերոհիշյալ կտավին, ձոն է, ապրում, հիացում: Նա բառերի լեզվով անմահացրել է ծովային ահեղ բնությունը ճշմարիտ կերպով պատկերելու ծովանկարչի տաղանդը:

Ելած՝ օվկիանի անգուսպ ալիքներ,
Ծանրը հորձանքով զարկելով դեպ վեր,
Լեռնանում էին, գոռալով ահեղ,
Եվ մըրրիկն ուժգին շընչում էր այնտեղ
Անեզր ու անվերջ
Տարածության մեջ:
-«Կանգնեցե՛ք»,- գոչեց, վրձինը ձեռքին,
Կախարդ ծերունին հուզված տարերքին.
Եվ լուռ, հընազանդ հանճարի ձայնին,
Մութ ալիքները, փոթորկի ժամին,
Կըտավի վըրա
Կանգնած են ահա:

Սիքստինյան տիրամայր

Նկարը Ռաֆայելը վրձնել է մոտ 1516 թվականին, կտավի վրա: Չափերով շատ մեծ (256 x 196 սմ) այս կտավը ստեղծվել է Հուլիոս II պապի պատվերով Պյաչենցի Սուրբ Սիքստինյան կապելլայի խորանի համար:

Իտալական Սան Սիստո վանքում գտնվող կտավը 1753թ.-ին հսկայական գումարով վաճառվեց Գրեգորենյան պատկերասրահին: Քանի որ ռուս ճանապարհորդները սկսեցին իրենց մեծ տուրը հենց Գրեգորենից, «Սիքստինյան Տիրամայրը» դարձավ նրանց համար առաջին

հանդիպումը իտալական արվեստի բարձունքների հետ, հետևաբար, XIX դարում Ռուսաստանում ստացավ խլացուցիչ ճանաչում՝ գերազանցելով Ռաֆայելի բոլոր այլ մադոնաները: Հայրենական մեծ պատերազմից հետո նկարը պահպանվում էր Պուշկինի թանգարանի ֆոնդում, որից հետո 1955 թ.-ին ողջ դրեզդենյան հավաքածուի հետ միասին այն վերադարձվեց ԳՂՀ-ի իշխանությանը:

Ռաֆայելի «Միքստիմյան մադոննա» կտավի բնորոշուհին՝ հրեշտականման դեմքով այդ կինը, ազահ, փողամոլ ու ստախոս էր: Նրա պատճառով 37- ամյա Ռաֆայելը կործանվեց 1520 թ.-ին:

Քանդակագործություն

Քանդակագործությունը արվեստի տեսակներից է: Հին եգիպտական, հունական, հնդկական, հռոմեական քանդակագործության շատ նմուշներ այսօր էլ ապշեցնում են իրենց հմայքով, կատարողական բարձր արվեստով, մեծ բովանդակությամբ: Հին հունական մեծագույն վարպետներ Ֆիդիասի, Պոլիկլետեսի, Միրոնի, Վերածննդի շրջանում Դոնաթելլոյի, Միքելանջելոյի, Ֆրանսիայից՝ Ռոդենի, Ռուսաստանից՝ Կոլոլովսկու, Անտոկոլսկու, Անդրեևի ու Մուխոմաչի, հայ իրականությունից՝ Ստեփանյանի ու Գյուրջյանի, Սարգսյանի ու Քոչարի հրաշալի քանդակները հանճարի փայլատակումներ են և մտել են համաշխարհային արվեստի ոսկե ֆոնդը:

Ազեսանդր՝ «Միլոսյան Աֆրոդիտե»/300թ. մթա/, Լուվր:

Թութնոս՝ «Նեֆերտիտի» /մ.թ.ա., 14-րդ դար, Բեռլինյան թանգարան/:

Ռոդեն՝ «Կալեի քաղաքացիները», Կալե, Կենտրոնական հրապարակ:

Միքելանջելո՝ «Դավիթ», Ֆլորենցիա:

Ֆիլեյսկի՝ «Մահից ուժեղ», Մոսկվա:

Անտոկոլսկի՝ «Իվան Ահեղ», Սանկտ-Պետերբուրգ, Ռուսական թանգարան:

Քոչար՝ «Մասունցի Դավիթ», Երևան:

Երվանդ Քոչար, «Սասունցի Դավիթ» արձանը

Կես դարից ավել է, ինչ Հայաստանի մայրաքաղաք Երևանի խորհրդանիշն է դարձել «Սասունցի Դավիթ» արձանը: Էպոսի հերոսը հզոր և ուժեղ կերպար է, որը դարձել է հայ ժողովրդի անմահության մարմնացումը, մի կերպար, որը երկար ժամանակ ստեղծում էր քանդակագործ Երվանդ Քոչարը: Անսանձ, Վարպետի հոգին զավթած, 1939 թվականից մինչև 1959 թվականը Քոչարին հանգիստ չտվող մի կերպար...

Սասունցի Դավիթ արձանի ճարտարապետը Միքայել Մազմանյանն է, բնորդը՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Վանուշ Խանամիրյանը: Արձանը տեղադրվել է 1959 թվականին Սասունցի Դավիթ հրապարակում, երկաթուղային կայարանի առջև, փոխարինել է 1939 թվականից տեղադրված գիպսե տարբերակին: Դավիթ մարմինը շարժման մեջ է՝ պատրաստ մարտի: Նրա հեքիաթային ձին՝ Քուռկիկ Ջալալին, ծառս է եղել հսկայական բազալտե ժայռի վրա: Մմբակների տակ, ժայռի անկյունում բրոնզե թասն է՝ հայ ժողովրդի համբերության խորհրդանիշը: Քանդակը տեղադրված է 25 մետր տրամագծով ջրավազանի կենտրոնում և պատվանդանի հետ ընդհանուր բարձրությունը 12,5 մետր է:

Հողմի նման սլացող ձին ոսկեգօծ է,

Բաշը քամու հանդիման ծածանվող բոց է:

Էպոսից է գալիս նա, էպոս է գնում,

Այդպես ամեն մանկան հետ Դավիթ է ծնվում:

Միքելանջելո

Իտալական վերածննդի բարձրակետ՝ քանդակագործ, գեղանկարիչ, ճարտարապետ ու բանաստեղծ: Հայտնի են նրա «Դավիթ», «Տիրամայրը», «Մովսես» քանդակները:

Միքելանջելոյի «Դավիթ» մարմարյա ստեղծագործությունը գտնվում է Ֆլորենցիայում: Հինգմետրանոց արձանը Ֆլորենցիայի Հանրապետությունում ընկալվեց ոչ միայն որպես Վերածննդի խորհրդանիշ, այլև մարդկային հանճարի գագաթնակետ: Ներկայումս արձանը գտնվում է Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիայում (Ֆլորենցիա): Երիտասարդ քանդակագործն ընտրեց բիբլիական Դավիթ կերպարը, որը հովիվ էր, երգիչ, բայց և իր երկրի ահեղ պաշտպանը: Արձանը ներկայացնում է մերկ Դավիթին, որը կամքի ահռելի ուժի ու հերոսական պոռթկումի մարմնացում է: Ըստ առասպելի՝ Դավիթը հաղթում է իր ժողովրդի թշնամուն՝ հսկա Գողիաթին: Միքելանջելոն իր հերոսին պատկերել

է մարտի պատրաստվելու պահին. նա լայն բացած աչքերով նայում է հսկային՝ լի վճռականությամբ, հանդարտ ու ահեղ: Երիտասարդը պատրաստվում էր ուժով իրեն գերազանցող թշնամու դեմ մարտին: Նա հանգիստ է և կենտրոնացած, բայց նրա մկանները լարված են: Հոնքերը սպառնալիորեն կիտած են, նրանցում զգացվում է սարսափեցնող ինչ-որ բան: Չափ ուսին նա գցել է պարսատիկ, որի ներքևի ծայրը բռնել է աջ ձեռքով: Թվում է՝ պատանի հայրենասերը ամեն վայրկյան պատրաստ է նետվելու թշնամու վրա:

Միքելանջելոյի ստեղծագործությունն ընդունվեց որպես Ֆլորենցիայի ժողովրդի պայքարի, ազատության և հաղթանակի խորհրդանիշ:

Երեքուկես դար արձանը դրված էր Ֆլորենցիայի կենտրոնական հրապարակում: Սակայն 1873 թվականին տեղումների և քամիների վնասակար ազդեցությունից խուսափելու նպատակով այն տեղափոխվեց Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիայի սրահներից մեկը: Նրա տեղը Սինորիայի հրապարակում 1910 թվականին զբաղեցրեց մարմարից պատրաստված կրկնօրինակը: 2003-2004 թվականներին Միքելանջելոյի բնօրինակը վերականգնողների կողմից մաքրվեց երկար տարիների աղտոտումներից:

Ճարտարապետություն

Ճարտարապետ Թորոս Թորամանյանի խոհերը հայկական ճարտարապետության մասին

Հայերը նախահայրերից ժառանգել են շինարարության արվեստը: Քարաշատ Հայաստանը մեր ճարտարապետներին տվել է անսպառ նյութ: Մեր քարակոփները, որմնադիրները իրենց ձեռքի տակ ունեցել են մի կերպընկալ հլու միջոց՝ հրաբխային քարերը, որոնց հետ խաղացել են և ցանկացած ձևը տվել, կաղապարել նրանց: Ինչպե՞ս է ստեղծվել մեր արվեստը: Դա իր պատմությունն ունի, որ կարելի է պատմել հանգրվան առ հանգրվան, դար առ դար: Մեր ժողովուրդը տակավին իր նախնական վիճակի մեջ ընդունել է նախահայրերից որոշ հիմքեր, խառնել է նրանց հետ իր տարերքից բխած նորություններ, կրել է նաև ազդեցություններ հարևաններից՝ պարսիկներից և Միջագետքից, յուրացրել է, շաղախել իր ունեցածի հետ՝ ավելացնելով նոր տարրեր, նոր զգայություններ: Համաձայնեցրել է շինանյութերի հետ, կլիմայի հետ. ներդաշնակել բնանկարի, ստավոր, հոգեկան, կենցաղային պահանջների հետ:

Եվ այսպիսով՝ ստեղծվել է դարերի ջանքով ու կուտակումով հայկական ոճը՝ ինքնուրույն կնիք, որն այլևս անբեկանելի է:

Անին հայկական մշակույթի հայելին է, մեր ոճի ոգին, այն պարզ է, որովհետև մաղվել է դարավոր մշակույթի միջից, գտվել, թոթափել վրայից ավելորդ բաները, դարձել է բյուրեղ: Ուրիշ ազգերի արվեստների գեղեցկությունը հուզիչ է, հաճախ՝ գրգռող և խռովիչ, իսկ մեր արվեստի գեղեցկությունը անդորրող է, հանգստացնող:

Այս է հայ ճարտարապետական արվեստի էությունը, նրա փիլիսոփայությունը:

Հայ մեծ ճարտարապետներ

Մանուել՝ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցի

Տրդատ՝ Անիի Մայր տաճար

Մոմիկ՝ Նորավանք

Ալեքսանդր Թամանյան՝ Նոր Երևանի հատակագիծը, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենք:

Մեր պատմամշակութային հարուստ ժառանգության բազում հուշարձանները հայության համար ոչ միայն անցյալի, այլև լուսավոր ապագայի կանգուն ու կենդանի ուղենիշներ են: Այսօր փլատակներից հառնել են Գառնիի հեթանոսական տաճարն ու վաղ քրիստոնեության անկրկնելի Տաթևի վանքը...

Էջմիածնի մայր տաճարը

Ըստ ավանդության՝ տաճարը կառուցվել է 301-303 թվականներին, Վաղարշապատ քաղաքում՝ հեթանոսական տաճարի տեղում: Էջմիածնի մասին առաջին տեղեկությունը պատկանում է ուրարտական թագավոր Ռուսա Բ-ին /մթա 570թ./: Հայոց Երվանդ Սակավակյաց թագավորի օրոք նրա փեսա Վարդգես Մանուկը կառուցել է խոշոր ավան և կոչել Վարդգեսավան /Մ. Խորենացի/: Վաղարշ Առաջին Արշակունի արքան /117-140/ այն պարսպապատել է և անվանել Վաղարշապատ: Գրիգոր Լուսավորիչը Տրդատ Մեծի և հավատացյալ ժողովրդի հետ կործանել է հեթանոսական մեհյանը և նրա տեղը հիմնել Կաթողիկե եկեղեցին: Հայաստանն առաջին երկիրն է աշխարհում, որը 301 թվականին՝ Տրդատ Գ-ի օրոք, քրիստոնեությունը ընդունեց որպես պետական կրոն: Ըստ Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» (մոտ 460թ.)՝ գիշերային մենության մեջ, մտորումներով տարված Լուսավորիչը մի

հիասքանչ տեսիլք տեսավ. Աստծու միածին որդին իջավ երկնքից և ոսկե մուրճով հարվածեց գետնին՝ ցույց տալով այն վայրը, ուր պետք է կառուցվեր Էջմիածնի Սուրբ Տաճարը: Այստեղից էլ առաջացել է «Էջմիածին» անունը, այսինքն՝ էջ (գրաբար)՝ իջավ Միածինը: Սակայն Էջմիածին եզրը չի օգտագործվել մինչև 15-րդ դարը: Ավելի վաղ աղբյուրները տաճարը կոչում են Վաղարշապատի Կաթողիկե եկեղեցի: 1945 թվականին Վաղարշապատը վերանվանվեց Էջմիածին: Էջմիածնի Մայր տաճարն ունի հազար յոթ հարյուր տարվա պատմություն: Տաճարը աշխարհի այն հազվագյուտ կառույցներից է, որտեղ մոտ տասնութեղ դար կյանքը շարունակվել է առանց ընդմիջման: 453 թ.-ին Մայր Աթոռը Էջմիածնից տեղափոխում են Գվին, ապա 988 թվին կրկին հաստատվում է Էջմիածնում: Հինգերորդ դարի սկզբին այստեղ բացվել է առաջին դպրոցը:

Տաճարը, շրջակայքի որոշ կարևոր վաղ միջնադարյան եկեղեցիների հետ միասին, 2000 թվականին ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:

Գառնիի տաճարը

Ելնելով ավանդություններից՝ Մովսես Խորենացին Գառնու հիմնադրումը վերագրում է Հայկ նահապետի ծոռ Գեղամին, որի թոռան՝ Գառնիկի անունով էլ, իբրև, կոչվել է Գառնի:

Տաճարը կառուցել է Տրդատ Ա թագավորն իր թագավորության 11-րդ տարում, այսինքն՝ մ. թ. 77 թվականին:

Հատակագծում ուղղանկյունի սրահով տաճարը բոլորեքյան շրջապատված է 24 սյուներով, որոնք խորհրդանշում են օրվա 24 ժամերը: Կապույտ որձաքարի վրա կերտված են նրբանուրբ քանդակներ, նախազգարող խոյակներ: Բայց ինչպե՞ս, ի՞նչ հնարանքով հսկա քարաբեկորները միացնել միմյանց, որ պատերը ամրակուտ լինեն, դիմանան հավերժությանը: Շաղախը այն չէ: Եվ որոշում է ճարտարապետը՝ քարերը միմյանց ամրացնել գամերով և արճիճով:

Այս սրբատեղը խուսափել է ավերածություններից, որոնց ենթարկվել են մյուս հեթանոսական տաճարները քրիստոնեության ընդունման հետ և մտել է թագավորների ամառային գահանիստների համալիրի մեջ, դարձել «Հովանոց», ինչպես Խորենացին է անվանում իր «Պատմության» էջերում:

Շուրջ հազար վեց հարյուր տարի կանգուն մնաց Գառնու հրաշալեբերտը: Դիմացավ քամուն, անձրևին, արևին, կարկուտին: Մի աղետա-

լի օր, սակայն, զոհ գնաց երկրաշարժին: Պատմիչ Չաքարիա Սարկավազի հավաստմամբ՝ 1679 թվականի հունիսի 4-ի երկրաշարժն այնքան ուժեղ է եղել, որ մի քանի տոննա կշիռ ունեցող քարերը դյուրությամբ բեկվել են տաճարից, օդ բարձրացել փետուրի պես և թափվել անդնդախոր ձորը: Դրանից հետո մոտ երեք հարյուր տարի տաճարը մնացել է կիսավեր: Եվ միայն 1969-1975 թվականներին ճարտարապետ Ա.Սահինյանի նախագծով և անմիջական ղեկավարությամբ այդ եզակի կառույցը ստացել է իր նախնական տեսքը: Թեև Գառնիի տաճարը նման է հելլենիզմի դարաշրջանի հուշարձաններին, այնուամենայնիվ, այն մնում է իր ժամանակի հայկական հուշարձանների ճարտարապետության անգերազանցելի օրինակներից մեկը: Դժվար է համաձայնվել այն հետազոտություններին, որոնք այս հրաշքը վերագրում են Հռոմից եկող ճարտարապետների հմտությանը: Ամուր բազալտ օգտագործելու ավանդույթը գալիս է դեռ Ուրարտական ժամանակաշրջանից, մինչդեռ հռոմեացիները սովոր էին մարմար օգտագործել: Բացի դրանից՝ Գառնու կառուցվածքը լի է զուտ հայկական մոտիվներով, ինչպիսիք են նուռը, խաղողը, ընկույզի ծառի տերևները և այլն: Աստիճանների հանդիսավոր վերելքը պահանջում է դանդաղ, վեհապանծ ռիթմ. անհնար է վազել բարձր աստիճաններով, այնինչ, երբ հաշվում ենք դրանք, զարմանում ենք, որ դրանք միայն ինն են: Հին ժամանակների ճարտարապետները լավ գիտեին կառույց ներկայացնելու մեծ գաղտնիքը:

Գառնու տաճարը այժմ կանգուն է: Բուրում է դարերի հնությամբ ու ասես փառքի երգ մրմնջում մեր շինարար նախնիների ու նորօրյա վարպետների մասին:

Գեղարդ

Գեղարդի վանքը գտնվում է Հայաստանի Կոտայքի մարզում: Վանքը, որ անցյալում կոչվել է Այրիվանք, ըստ ավանդության, կառուցվել է Հայաստանում քրիստոնեության ընդունման առաջին տարիներին՝ 4-րդ դարի սկզբին: Ավանդությունն ասում է, որ Լենկթեմուրը, ոտքի տակ տալով աշխարհի կեսը, եկել հասել էր Գառնու ձոր: Ահա և Այրիվանք-Գեղարդը, ուր քարգործ-ճարտարապետ Գալճագը միակտոր ժայռի մեջ քանդակել էր երկու եկեղեցի:

-Հրաշք կառույց է, ժայռակոփ տաճար,- գեկուցեցին արնածարավ Լենկթեմուրին:-Ասում են՝ այստեղ է պահվում Հայոց աշխարհի յոթ ձիարբեռ ադամանդը:

Լենկթեմուրը որոշեց անձամբ հասիչտակել այդ մեծ հարստությունը: Մութ տաճարում հուրհրում էր մի լուսափունջ: Այո՛, այդպես պայծառ կարող է փայլատակել միայն ադամանդը: Նա նետվեց ներս և ձեռքերը տարածեց դեպի լուսափունջը: Ա՛յ քեզ հրաշք. այն անհետացավ: Մի քանի անգամ փորձեց, բայց բան չստացվեց: Եվ Լենկթեմուրն ասաց.

-Մարդ պետք է միայն տեսնի ու անցնի և՛ Հայոց փայլատակող ադամանդը, և՛ ադամանդափայլ այս տաճարը:

Այդ ժամանակվանից էլ Այրիվանք -Գեղարդը օտարներն անվանեցին՝ Տե՛ս ու անցի՛ր: Եվ հիմա քչերը գիտեն, որ հայկական ճարտարապետության եզակի այս հուշարձանախումբը մի ժամանակ կոչվել է ՝ Տե՛ս ու անցի՛ր: 4-13-րդ դարերում կոչվել է Այրիվանք՝ ժայռափոր կառույցների պատճառով: 13-րդ դարից ստացել է իր երկրորդ՝ Գեղարդ անունը, որովհետև այս վանքին էր պահ տրվել սուրբ համարվող գեղարդը/նիզակը/: Իսկ ի՞նչ լուսափունջ էր, որ չկարողացավ բռնել Լենկթեմուրը: Ժայռակոփ տաճարի ճարտարապետ Գալձազը շարժական մի քար էր պատրաստել, որի շնորհիվ կեսօրին ճեղք էր բացվում դեպի դուրս, և արևի ճաճանչները, ներս ընկնելով, մթության մեջ այնպիսի լուսափունջ էին կազմում, որ ասես ադամանդ էր շողշողում: 1679թ. երկրաշարժից այդ քարը տեղաշարժվեց և կորցրեց լուսափունջ արարելու իր հատկությունը:

Գեղարդը միջնադարյան Հայաստանի ճարտարապետական նշանավոր հուշարձաններից է, եղել է հոգևոր ու մշակութային կարևոր կենտրոն: Այստեղ գործել են դպրանոց, հարուստ գրադարան, գրչատուն, ուր ընդօրինակվել ու պատկերագրողվել են բազմաթիվ ձեռագրեր:

Մարդկային հավատի հրաշք՝ ահա թե ինչ է Գեղարդը...

Չվարթնոց

Չվարթնոց տաճարը համարվում է 7-րդ դարի հայ ճարտարապետության պսակը: Անունը ծագում է «զվարթուն» բառից և նշանակում է արթուն, հսկող: Չվարթնոցը կործանվել է 10-րդ դարում՝ ուժեղ երկրաշարժի և թշնամիների ավերածությունների հետևանքով: Այն հայտնաբերվեց միայն 20-րդ դարի սկզբներին: Պարզվեց, որ Չվարթնոցը գտնվում է Երևանից Էջմիածին տանող ճանապարհի եզրին՝ այժմյան Չվարթնոց գյուղի մոտ: Չվարթնոցը կառուցվել է Արարատյան դաշտում՝ Մասիսների հավերժական գագաթների դիմաց, որպես իսկական քարակերտ մի գեղեցկություն: Տաճարի առաջին ուսումնասիրությունը և նրա նախկին ձևերի ճիշտ վերականգնումը 1905 թվականին կատա-

րել է նշանավոր ճարտարապետ Թորոս Թորամանյանը՝ օգտագործելով բնօրինակ քարերը: Տաճարի նոր ծրագիրը ևս կազմել է Թորոս Թորամանյանը: Ջվարթնոցի հատակագիծը կյոր է, կառույցը՝ եռահարկ: Տաճարի արտաքին պատերը զարդարված են եղել զարդաքանդակներով: Կառույցի պատերին պահպանվել են որմնանկարներ: Հայաստանի խաղողն ու նուռը, արծիվն ու եղնիկը շունչ ու արյուն են ստացել այդ պատերի վրա:

Ջվարթնոց տաճարի ճարտարապետությունը հսկայական ազդեցություն է ունեցել հետագա դարերի հայկական ճարտարապետության վրա:

2000 թվականին Վաղարշապատի եկեղեցիները, այդ թվում և Ջվարթնոցի տաճարը ներառվել են Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության շինությունների ցանկում:

Անիի Մայր տաճարը

...1001 թվականի աշնանամուտին ցնծության մեջ էր Անի քաղաքը. Տրդատ ճարտարապետն ավարտել էր Անիի Մայր տաճարի կառուցումը, և Գագիկ արքայի հրավերով եկել էին Հայոց աշխարհի բոլոր իշխանները և հոգևորները՝ մասնակից լինելու տաճարի օծմանը:

Անի քաղաքի հարավային եզրին կանգնած վեհաշուք Մայր տաճարը՝ Սուրբ Աստվածածին եկեղեցին համարվում է Անիի եկեղեցիների թագուհին, իսկ որոշ մասնագետներ այն համարել են Կովկասի ճարտարապետության զարդը: Անիի պաշարման ժամանակ՝ 1064 թվականին, Մայր տաճարը խորհրդանշական նշանակություն է ունեցել. երբ հաղթանակ տարած սելջուկ-թուրքերը պաշարեցին քաղաքը, նրանցից մեկը բարձրացավ տաճարի տանիքը և տապալեց գմբեթի վրայի մեծ խաչը: Անիի Մայր տաճարը հետագայում վերածվում է մզկիթի: 1124 թվականին Մայր տաճարը կրկին վերածվում է քրիստոնեական սրբավայրի, և ըստ արձանագրության, XIII դարում այնտեղ իրականացվել են վերակառուցման աշխատանքներ: 1319 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով վայր է ընկնում եկեղեցու գմբեթը, իսկ մեկ այլ՝ 1832 թվականի երկրաշարժից փլուզվում է գմբեթի թմբուկը: Տաճարի հյուսիսարևմտյան անկյունում առաջացած լայն բացվածքը 1988 թվականի երկրաշարժի հետևանքն է, որը մաս լուրջ վնասել է կառույցի հարավ արևմտյան անկյունը, իսկ մինչև 1998 թվականը մասամբ փլուզվել է տանիքը: Այժմ արևմտյան ճակատը ամբողջությամբ փլուզման վտանգի տակ է:

Սուրբ Սոֆյայի տաճարը

Արծաթի և ոսկու մեջ շողշողում է Բյուզանդիայի փառքը՝ սուրբ Սոֆյայի տաճարը: Կոստանդնուպոլիս գալուց ի վեր Տրդատը քանի անգամներ էր կանգնել տաճարի առջև, դիտել որմ առ որմ, մուտք առ մուտք, հայացքով չափել բարձրությունը և ցավով նայել այն պարապոթյանը, ուր մի ժամանակ եղել էր գմբեթը: Ասես գլխատվել էր հրաշակերտը, որ ոչ հեռավոր անցյալում համարվում էր նոր աշխարհի հրաշալիքներից մեկը: Գմբեթը, որ տաճարի պսակն էր, կառուցումից երկու տասնամյակ անց՝ Տիրոջ 558 թվականին, փլվեց ուժեղ երկրաշարժից: Այդպես մնաց տարիներ, և ոչ մի ճարտարապետ հանձն չառավ վերաշինել:

Գմբեթի վերակառուցման գործը հանձնարարվեց հայ ճարտարապետին:

Ամիսների երկար տքնանքից հետո որմերին ձուլված չորս հզոր մույթերի վրա ճարտարապետը կանգնեցրեց գմբեթը՝ նախկինից ավելի ամուր ու գեղեցիկ: Եվ որպես հայ մտքի հաղթանակ՝ գմբեթն օղակող քարե գոտու վրա հաստատուն տառերով փորագրեց՝ Տրդատ:

Մատենադարան

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր Լուվրը, Էրմիտաժը, Կրեմլը, Վերսալը, Թյուիլրին: Հայաստանում դա Մատենադարանն է՝ իր աշխարհահռչակ հազվագյուտ ձեռագրերով: Այնտեղ մտնում են ինչպես սրբատեղի և խոսում ակնածանքով և շշուկով:

Ահա նա: Վեհասքանչ մոտենում է, աճում որպես բերդ, որպես քարե պատմություն: Լեռան պաստառին նրա ճակատը նման է խորանի, հին ձեռագրերի սկզբնաէջի:

Մատենադարան՝ այսինքն՝ գրադարան, գրապահոց: Այնտեղ տասնվեց հազար ձեռագիր մատյան և պատառիկ կա՝ տասնինը գրամանոցից մինչև ամենամեծը՝ երկփթանոց մագաղաթյա հսկան:

Որքան նման են հայ ժողովրդի և նրա ձեռքով ստեղծված մատյանների ճակատագրերը: Երբ գալիս էին թշնամիները, գրիչը՝ ձեռագրերի ընդօրինակողը, շալակն առած մագաղաթյա ծանր թերթերի կապոցը, թանաքը, ներկերը և ընդօրինակման մատյանը, գնում էր ժողովրդի հետևից: Եվ որտեղ էլ որ դադար առներ, շարունակում էր արտագրել:

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը հիմնադրվել է 1959 թվականին: Շենքը կառուցվել է 1945-1957 թվականներին: Նախագծի հեղինակն է ճարտարապետ Մարկ Գրիգորյանը Նախասրահի «Ավարայրի ճակատամարտը» խճանկարի և աստիճա-

նապատերի «Հայոց պատմություն» եռամաս որմնակարի հեղինակն է Հ. Խաչատրյանը:

Մուտքի առջև դրված է Մեսրոպ Մաշտոցի արձանը /հեղինակ՝ Ղ. Չուբար/: Արձանը տեղադրվել է 1967 թվականին: Մատենադարանի գլխավոր ճակատի միջնապատերի առջև դրված են հայ միջնադարյան գրականության, արվեստի, գիտության գործիչների արձանները՝ Մովսես Խորենացի, Թորոս Ռոսլին, Գրիգոր Տաթևացի, Անանիա Շիրակացի, Մխիթար Գոշ, Ֆրիկ:

Ալեքսանդր Թամանյան՝ 12-րդ մայրաքաղաքի ճարտարապետը ոչ միայն տաղանդավոր էր, այլև ազգային գաղափարին լիովին նվիրված մարդ: 41 տարեկանում նա արդեն ճարտարապետության ակադեմիկոս էր, ձեռք էր բերել տաղանդավոր վարպետի համբավ, ինչի շնորհիվ ուներ արտասահմանում աշխատելու գրավիչ հեռանկարներ, բայց ընտրեց ավերված ու աղքատ Հայաստանը: «Աննկուն ու մշտապես փնտրող»․ այսպես էին Թամանյանին բնութագրում նրան ճանաչող բոլոր մարդիկ: Ալեքսանդր Թամանյանի հեղինակությունն այնքան էր բարձր, նոր Հայաստանի կառուցման մեջ նրա վաստակն այնքան էր մեծ, որ 1926-ի փետրվարին նրան շնորհեցին Հայաստանի ժողովրդական ճարտարապետի կոչում: Մինչև այդ նման կոչում գոյություն չուներ. այն հատուկ Թամանյանի համար էին ստեղծել: Նրա նախագծերով սկսում են կառուցվել Կառավարական շենքը, Անասնաբուժական ինստիտուտը, Անատոմիկումը, Աստղադիտարանը և այլն: 1926 թ. նրան հանձնարարվում է Երևանի Օպերայի և բալետի թատրոնի կառուցման աշխատանքը: 1934թ.-ին նա գրեթե կորցնում է տեսողությունը: Այդ օրերին նրան մեծապես օգնել է Հովհաննես Թումանյանի տասներորդ զավակը՝ ճարտարապետ Թամար Հովհաննիսյանը (1907-1989), ով 1931-1936 թ.թ. աշխատել է Թամանյանի ճարտարապետական արվեստանոցում, մասնակցել Կառավարական տան և Օպերայի և բալետի թատրոնի շենքի նախագծերի մշակմանը: Այս առումով շնորհակալ գործ կատարեց Թամանյանի ավագ որդին՝ Գևորգ Թամանյանը, ով իր ճարտարապետական բոլոր հմտությունները ներդրեց հոր կիսատ թողած գործերն ավարտին հասցնելու համար: Հատկանշական է, որ թե՛ Թամանյանը, թե՛ նրա ժառանգները միշտ էլ ծառայել են Հայաստանին: Ասվածի ապացույցն է նաև այն, որ Թամանյանի թոռը՝ կրտսեր Ալեքսանդր Թամանյանը, 1990-ականների սկզբներին ակտիվորեն մասնակցեց Արցախի ազատագրման գործին:

Ալեքսանդր Թամանյանը վախճանվեց 1936 թ. փետրվարի 20-ին: Երեք օր անց «Խորհրդային Հայաստան» թերթը տպագրեց Եղիշե Չարենցի՝ Թամանյանի հիշատակին նվիրված «Մահվան տեսիլ» բանաստեղծությունը, որի չորրորդ՝ «Նա տեսել է երևի արևային մի քաղաք» տողը դրոշմված է Երևանի կենտրոնում քանդակագործ Արտաշես Հովսեփյանի՝ 1974-ին կերտած Թամանյանի բազալտակոտ հուշարձանին:

Շատ չեն այն քաղաքները, որոնք ժամանակին կառուցվել են միայն մեկ մարդու նախագծով: Երևանը Թամանյանի հանճարի շնորհիվ այդ քաղաքներից է և այն էլ՝ արևային: Նա հատակագծել է քաղաքներ ու գյուղեր՝ Լենինական (Գյումրի), Նոր Բայազետ (Կամո), Կիրովական, Էջմիածին, Հոկտեմբերյան, Ստեփանակերտ և այլն: Ստեղծել է Երևանի վերակառուցման առաջին գլխավոր հատակագիծը: Երևանում կառուցել է Հրազդան գետի հէկ-ը, Սպենդիարյան անվան օպերայի և բալետի թատրոնը, Կառավարության տունը: Ազգային ճարտարապետության կիրառումը ժամանակակից շենքերի նախագծման մեջ հետագայում դարձավ Թամանյանի հիմնական հնարքներից մեկը:

Ըստ Ասատուր Փաշայանի

Մանրանկարչություն

Մանրանկարչությունը նկարչություն է, իսկ ձեռագիր ընդօրինակելը՝ գրչություն: Հայաստանում բուն գարգացում է ապրել մանրանկարչությունը: Պարզապես մեր որմնանկարները, որմ կամ պատ չունեցող անապահով երկրի կիսավեր որմերից ու պատերից իջնելով... մանրացել, մանրանկար են դարձել և ծվարել մեր ձեռագրերի էջերում: Մեզ է հասել հայոց չքնաղ մանրանկարչությունը, որը, դեռևս իտալական վերածննդից ու Ջոտտոյից առաջ, գաղափար ուներ հեռանկարի ու խորության մասին: Ինչքան մռայլ է եղել միջնադարի խավարը, այնքան ավելի շռայլ ու շքեղ են եղել մեր մանրանկարչության գույները: Մի հմուտ Սարգիս Պիծակ, մի բազմաշնորհ Ծերուն Ծաղկող, մի հանճարեղ Թորոս Ռոսլին, հայոց սարերն ու ձորերն ընկած, պտղունց առ պտղունց հավաքել են որդան կարմիրն ու արևի ձուլ ոսկին, հայոց երկնքի կապույտն ու դաշտերի կանաչը և այնպիսի անմահ շունչ են տվել նրանց, որ այսօր էլ այդ մանրանկարները դիտելիս, թվում է, թե նրանց ներկերը քսվել են երեկ. այնքան վառ են նրանք, այնքան թարմ ու կարծես՝ դեռ թաց...

Ըստ Գևորգ Էմինի

Տասներեքերորդ դարի հանճարեղ մանրանկարիչ **Թորոս Ռոսլինը** մեր միջնադարյան մանրանկարչության գագաթնակետն է: Նա ոչ միայն խորանների, գլխազարդերի ու ձևավոր տառերի հմուտ վարպետ էր, այլև...հիանալի դիմանկարիչ, որն իր ստեղծագործության շատ կողմերով նախապատրաստել է եվրոպական վերածնունդը: Հարյուրավոր նկարներ է ստեղծել անմահ արվեստագետը, սակայն դրանցից մեզ հասած միայն յոթի վրա կա Թորոս Ռոսլինի անունը: Այդ յոթից մեկը պահվում է Երևանի Մատենադարանում, մյուսները գտնվում են աշխարհի տարբեր երկրներում:

Ռոսլինը ստեղծել է իր գունաշխարհը: Նա ինքնատիպ է մեկնաբանել ավետարանային թեմաները: Հայ մանրանկարչության մեջ առաջին անգամ Ռոսլինն է պատկերել արքայական տան անդամներին: Ռոսլինի մատյանները կենդանի աշխարհը շարժման մեջ են դրել, դարձրել կրքոտ, բուռն, փոթորկալից: Պսպղում է ոսկին, փայլում լաջվարդը, ծորում են զարդանախշերը:

Միայն որդան կարմիրն է, որ չի գունափոխվում, որովհետև ոչ շոգից է վախենում, ոչ էլ ցրտից:

Խաչքար

Աշխարհում ապրող տարբեր ազգերի բառապաշարում կան բառեր, որոնք հնարավոր չէ թարգմանել և ոչ մի լեզվով: Հայ ժողովրդի կողմից քաղաքակիրթ մարդկությանը հասած այդօրինակ բառերից է խաչքարը:

Ըստ ավանդության՝ Հայկ նահապետը մահից առաջ իր հետնորդներին պատգամ է թողել՝ գեղեցիկ զարդանկարներով զարդարել Հայաստանի քարերը: Եվ հայերը սկսել են հղկել քարերը, նրանցով կառուցել հրաշալի տաճարներ, եկեղեցիներ, ամրոցներ: Բայց թշնամին ավերում էր երկիրը՝ կործանելով նաև այդ հրաշք կառույցները: Եվ հայ մարդիկ որոշեցին՝ գեղեցիկ քանդակներով զարդարել մեծ սալաքարերը և իբրև հուշարձան-կոթող՝ թողնել բաց երկնքի տակ: Այսպես Հայաստան աշխարհով մեկ փռվեցին խաչքարերը՝ հայ միջնադարյան կոթող-հուշարձանները: Իսկ ինչո՞ւ խաչքար...Որովհետև նրանց քանդակազարդ երեսին, կենտրոնում, պատկերված է խաչ՝ քրիստոնեական հավատի խորհրդանիշը:

Քարի մշակման այդ յուրօրինակ բնագավառը՝ խաչքարը, իբրև երևույթ, պատկանում է միայն Հայաստանին և հայ մարդուն: Միմիայն այս բիրյիական հիմնավորց երկրում է, որ խաչը որպես սրբություն, եկեղեցու՝ մոմերի ծխից սևացած ու խնկաբույր սրահներից փոխադր-

վեց նաև քարակոթողի վրա՝ իր շքեղությամբ, հարդարանքի նրբին մանրամասներով ապշեցնելով դիտողին:

Խաչքարը, իբրև հայ մշակույթի ինքնատիպ արտահայտություն, իր կատարելության բարձունքին հասավ սկսած յոթերորդ դարից, երբ ստեղծվեցին մեր ճարտարապետության այնպիսի հրաշալիքներ, ինչպիսիք են Չվարթնոցը և Հռիփսիմեի տաճարը:

Խաչքարն ունի խորանարդաձև պատվանդան, որի վրա բարձրանում է քարե սալ՝ ուղղանկյուն կտրվածքով: Ուղղանկյունու կենտրոնում խաչն է՝ զարդահյուս քանդակներով ու նախշերով: Խաչի շուրջ փորագրված են տարբեր զարդանախշեր՝ հյուսկեն նկարներ, բուսական, գեղարվեստական այլևայլ տարրեր՝ ժանյակագարդ, ուռուցիկ՝ հաճախ իրենց մեջ առած Հիսուս Քրիստոսի, Աստվածամոր պատկերները:

Այս ամենը ամփոփվում է չորս կողմից խաչը երիզող զարդարված խորանարդի մեջ: Խաչքարերի լավագույն նմուշներում մշակված են նաև պատվանդանները՝ զանազան արձանագրություններով:

Սկսած վաղնջական ժամանակներից՝ խաչքարերը կանգնեցվում էին սրբավայրերում, գերեզմաններում, որմնախորշերում՝ դառնալով տվյալ տարածքի կամ շինության ամենաշքեղ զարդը: Խաչքար կերտելու արվեստը փոխանցվում է սերնդեսերունդ: Այսօր էլ հայ վարպետները շարունակում են իրենց նախնիների գործը: Հայ ժողովրդի և ընդհանրապես յուրաքանչյուր քրիստոնյայի համար խաչքարը միշտ սրբություն է եղել: Խաչքարերը, որպես կանոն, կառուցվել են այնպես, որ նայեն դեպի արևմուտք, որպեսզի խաչքարի դիմաց կանգնած մարդը նայի դեպի արևելք:

Հայ ժողովրդի համար արևելքը միշտ էլ կյանքի սկզբնավորման խորհուրդ է կրել. արևը ծնվում է արևելքում և գնում մեռնում է արևմուտքում: Խաչքարն, ինչպես արվեստի ցանկացած նմուշ, իր կատարելագործմանը հասել է ժամանակի ընթացքում: Եթե առաջին խաչքարերն աչքի էին ընկնում իրենց պարզ ոճով՝ միայն խաչն էր քարի վրա, ապա հետագայում արդեն դրանք ավելի գունավորում ստացան, հղկվեցին ու շատացան նախշերը, յուրաքանչյուր նահանգ ունեցավ իրեն բնորոշ ոճն ու պատկերաքանդակները, ճիշտ ու ճիշտ՝ գորգերի ու տարազների նման: Խաչքարերում կենտրոնական խաչի շուրջբոլորը պատկերվել են հայկական խորհրդանիշներ՝ նուռ, խաղող, ծիրան. ամեն ինչ հավասարաչափության սկզբունքով է արվել, ավելորդ ոչինչ չկա:

Խաչքար

Տատասկների, քարերի մեջ,	Կանգնել է նա երկնքի տակ...
Քամիների, արևի մեջ,	Կանգնել է նա արևի դեմ,
Չյունների մեջ, շոգ ու տոթի,	Որպես թախիժ ու խղճի սյուն,
Այսպես մենակ, այսպես ոտի,	Կանգնել է նա դարերի դեմ,
Այսպես խոնարհ, այսպես ըմբոստ,	Որպես խաչված գեղեցկություն...
Այսպես փխրուն, այսպես շիտակ,	
Այսպես խրթին ու այսպես պարզ	Վահագն Գավթյան

Կինո և թատրոն

Հոլիվուդ... Չարլի Չապլին ...Նշանավոր դերասանների ու ռեժիսորների դարբնոց, որտեղ շուրջ կես դարից ավելի տևեց Չապլինի դարաշրջանը: Շատ աստղեր ծագեցին ու մարեցին Հոլիվուդի երկնակամարում, իսկ Չապլինի աստղը շարունակում է շողշողալ անմար հրով... կոտելոկ, քրքրված վիթխարի ոտնամաններ, անճոռնի քայլվածք, և այս ամենի մեջ՝ մեծահոգություն, թերզարգացածություն, թափթփվածություն, չարաճճի խորամանկություն, թեթևամտություն, իսկ ճակատագիրը՝ կայուն ու անողորք...ահա նրա դիմանկարը: Չապլինի հերոսի բախտը միշտ չի բերում. նա շրջմոլիկ է ու գործազուրկ, գիշերում է կամուրջների տակ ու օթևաններում, փողոց է ավլում և կանգնում ժամանակակից հսկա գործարանի հոսքագծի մոտ, բռնցքամարտիկ է և հանրախանութի գիշերապահակ, աշխատում է կրկեսում և բանտ մատում, ոսկի որոնում և գողություն անում... Ինչ հարստություն էլ ընկնի ձեռքը, միևնույն է, պիտի կորցնի և գլուխն առնի գնա...Նա որոնում է ճշմարիտ, պայծառ երջանկություն, նրա սերն անձնվեր է, անշահախնդիր: Չարլին ծիծաղ է ու արցունք, նա մեծ է, համամարդկային...

«Ամբողջ աշխարհը կոմեդիա է խաղում» արտահայտությունը դաջված է Լոնդոնի «Գլոբուս» թատրոնի ճակատին:

Համո Բեկնազարյան՝ հայ ազգային կինոյի հիմնադիր, բեմադրել է 22 գեղարվեստական, 7 վավերագրական կինոնկար, նկարահանվել 43 ֆիլմում:

1925թ.-ին նկարահանում է առաջին հայկական գեղարվեստական կինոժապավենը՝ «Նամուսը»՝ համր կինոյի լավագույն ժապավեններից մեկը: 1934 թվականին Համո Բեկնազարյանը Էկրան հանեց հայ-

կական առաջին հնչյունային կինոնկարը՝ «Պեպոն» (խոսք՝ Եղիշե Չարենցի, երաժշտություն՝ Արամ Խաչատրյանի): Այսօր ապշել միայն կարելի է, թե ինչ սահուն, բնական ու համոզիչ է անցել Համո Բեկնազարյանը համր կինոյի ու հնչյունային կինոյի սահմանը, մի սահմանագիծ, որում բեկվել են XX դարասկզբի մեծ կինոռեժիսորների ճակատագրերը:

Երբ համր կինոն՝ որպես արվեստ, հասել էր գեղարվեստական բարձունքներին, Բեկնազարյանը հայտնվեց այն հազվագյուտ ռեժիսորների շարքում, որոնք նույնքան վառ ու նշանակալի ստեղծագործեցին թե՛ համր, թե՛ հնչյունային կինոյում: 1935թ-ին հայ նշանավոր կինոռեժիսոր, սցենարիստ, կինոդերասան, «Հայ ֆիլմ»-ի հիմնադիր Համո Բեկնազարյանը նկարահանեց առաջին հայկական հնչյունային ֆիլմը՝ «Պեպո»-ն: Այն հիմնված է Գաբրիել Սունդուկյանի համանուն պիեսի վրա: Ֆիլմը ներկայացնում է XIX դարի երկրորդ կեսի հին Թիֆլիսը:

Կինոնկարի կարևոր տեսարանը Պեպոյի երգն է, որը նա երգում է Քուռ գետում՝ նավակում, ձկնորսության ժամանակ: Արամ Խաչատրյանը հիանալի գիտեր երաժշտական Թիֆլիսը, Սայաթ-Նովայի, Ջիվանու երգերի հարուստ աշխարհը: Նա գիտեր և՛ հայկական ժողովրդական երգերը, և՛ եկեղեցական երաժշտությունը: Այդ ամենը մանկությունից էր գալիս: Եվ երաժշտությունը, որ գրվեց կինոնկարի համար, մտավ կյանք ու, անջատվելով էկրանից, ապրեց ինքնուրույն կյանքով: Նման երաժշտությունն ասես հավերժացնում է ֆիլմը:

Պեպոյի երգը

Գամբը ձեռիս աշխատում իմ,	Գամբը ձեռիս ջուրն իմ մտնում,
Հալալ աշխատանքս իմ ուտում,	Ձեռքս ու ոտքս թաց է ըլում,
Վայ էն մարդին, որ աշխարհում	Հալալ արյուն- քրտինք թափում,
Խալխի դատած հացն է ուտում:	Քիրս ու դեղիս լաց ին ըլում:
Հալալ մարդու սիրտը ուրախ,	Լուսնյակը՝ լուս, գիշեր՝ խավար,
Ճակատը միշտ բաց է ըլում,	Առավոտը բաց է ըլում,
Վայ էն մարդին, որ համ գգլում,	Խըրբըլթալեն լոթի ձկներ
Համ էլ անկուշտ լաց է ըլում:	Բազարումը հաց ին ըլում:

Կինոնկարներ հայ գրողների մասին

Սայաթ-Նովա, 1960թ. «Երևան» հեռուստատեսության կինոխմբագրությունում նկարահանված սև-սպիտակ ֆիլմ: Ռեժիսոր՝ Կիմ Արզումանյան: Սայաթ-Նովայի կերպարը մարմնավորում է Բաբկեն Ներսիսյանը, երգիչն է Նորայր Մնացականյանը: «Հայկական կինոյի զարթոնք» կինոկենտրոնի խորհուրդը «Ազգային կինո» մրցանակ է շնորհել ռեժիսոր Անդրանիկ Թորոսյանի «Սայաթ-Նովա. Վերջին աղոթք» մուլտիպլիկացիոն ֆիլմին:

«Նռան գույնը» Սերգեյ Փարաջանովի նշանավոր ֆիլմն է: Այն թողարկվել է 1968 թ և նվիրված է Սայաթ-Նովային: Հեղինակային անունը՝ «Սայաթ-Նովա»:

«Կինոն չգիտեմ ինչ է, էս ֆիլմը չգիտեմ ինչ է, բայց այս մարդը հանճար է: Պինդ բռնեք այս մարդու երկու ձեռքերն ու պահեք Հայաստանում», - «Նռան գույնը» դիտելուց հետո ասել է Մարտիրոս Սարյանը:

Գրիգոր Զոհրապի մասին՝ Վարուժան Ոսկանյան «Շշուկների մատյան», 2014թ. Երևան:

Հայ մեծ բանաստեղծ **Հովհաննես Թումանյանի կյանքի** և գործունեության մասին նկարահանված ֆիլմը կրում է «Ես միշտ ձեզ հետ եմ, ձեր մեջ եմ» խորագիրը: Ֆիլմի սցենարի հեղինակը մեծ բանաստեղծին տալիս է իրեն հուզող հարցերը, որոնց պատասխանները կան բանաստեղծի կենսագրության մեջ, նամակներում, անձնական գործերում:

Վահան Տերյանի մասին վավերագրական ֆիլմը նվիրված է մեծ բանաստեղծի ծննդյան 100-ամյակին (ռեժիսոր՝ Լևոն Սկրտչյան), տեքստը կարդում է Սոս Սարգսյանը: «Վերջին ուղևորությունը» կինոնկարը նկարահանվել է 2012 թվականին: Այն խաղարկային-վավերագրական ֆիլմ է Վահան Տերյանի և նրա կնոջ՝ Անահիտ Շահիջանյանի, նրանց համատեղ կյանքի վերջին օրերի մասին: Բանաստեղծի խոհերն ու գրույցները, որ գրվել են 100 տարի առաջ, թվում է՝ հենց այսօրվա մասին են: Ֆիլմի համահեղինակներն են Հրայր Թամրազյանը և Գայանե Գանիբեյանը: Ազատություն ռադիոկայանի թողարկած այս ֆիլմում Վահան Տերյանի դերում նկարահանվել է Արտաշես Մխիթարյանը, իսկ Տերյանի կնոջ դերում՝ Նարինե Գրիգորյանը: Ֆիլմի ռեժիսորն է Հրայր Թամրազյանը, օպերատորը՝ Լևոն Գրիգորյանը: Ֆիլմը տեղադրված է YouTube ինտերնետային կայքում՝ Վահան Տերյան. «Միտք բանաստեղծ» անվան տակ:

Կինոնկարներ Եղ. Չարենցի մասին՝ «Եղիշե Չարենց, Հայտնի և անհայտ էջեր», սցենարի հեղինակ և ռեժիսոր՝ Լևոն Սկրտչյան, ֆիլմի տեքստը կարդում է Սոս Սարգսյանը:

Ֆիլմում նկարահանվել են Արփենիկ Չարենցը, Գևորգ Էմինը, նկարիչ Ռեզինա Ղազարյանը, երգիչ - բանահավաք Հայրիկ Մուրադյանը և իր բանտի ընկեր Մուրադ Չուլֆիզարովը: Հայկական վավերագրական ֆիլմերի կինոստուդիա, 1987թ.:

Եղիշե Չարենցի մասին պատմող «Մահվան տեսիլ» գեղարվեստական դրաման նկարահանվել է 2012 թվականին, «Ազատություն» ռադիոկայանի կողմից, մեծ բանաստեղծի կնոջ՝ Իզաբելլա Չարենցի հուշերի մոտիվներով: Ֆիլմի հեռուստատեսային պրեմիերան տեղի ունեցավ 2012 թվականի նոյեմբերի 27-ին, Չարենցի մահվան 75-ամյակի օրը:

Ֆիլմի ռեժիսորը և պրոդյուսերն է Հրայր Թամրազյանը, սցենարի հեղինակը՝ Գայանե Դանիելյանը, օպերատորը՝ Լևոն Գրիգորյանը: Ֆիլմի գլխավոր դերերում նկարահանվել են Արա Հարությունյանը (Եղիշե Չարենց), Նարինե Գրիգորյանը (Իզաբելլա Չարենց) և Տիգրան Մացակյանը (ՆԿՎԳ-ի քննիչ): Ֆիլմը թարգմանվել է նաև ռուսերեն՝ Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի դերասանների կատարմամբ:

1976 թվականի Ֆրունզե Դովլաթյանի նկարահանած «Երկունք» կինոնկարում Եղիշե Չարենցի դերը կատարել է Ազատ Գասպարյանը: Ֆիլմը 1920-ական հետպատերազմյան ծանր տարիների մասին է:

Հրանտ Մաքևոսյանի երկերի հիման վրա և նրա սցենարներով Հայֆիլմում նկարահանվել են «Մենք ենք, մեր սարերը» (1969 թ.), «Օգոստոս» (1976 թ.), «Աշնան արև» (1977թ.), «Տերը» (1984 թ.) գեղարվեստական կինոնկարները, բեմադրվել են «Մեծ աշխարհի մեր անկյունը» (ՀՀ Պետական մրցանակ՝ 1983 թ.), «Չեզոք գոտի», «Մեծամոր» և այլ գործեր:

Կինոնկարներ Պ. Սևակի մասին՝ «Հավերժական երգ», 1969թ.:

«Պարույր Սևակ», կինոհանդես, ռեժիսոր՝ Ս. Փոշոտյան, 1971թ.:

«Լույս հավերժության», ռեժիսոր՝ Գ. Բալասանյան, 1982թ.:

«Մի մկրատված կյանք», ռեժիսոր՝ Ս. Գյանջումյան, սցենարը՝ Ս. Բաղդասարյանի, 1991թ.:

Երաժշտություն

Չկա դաստիարակության այնպիսի բնագավառ, որն ավելի մեծ չափով ազնվացնի մարդու սիրտը, իր մեջ զուգորդի գեղեցկությունը, քան գեղագիտական դաստիարակությունը:

Դարեր շարունակ մարդն իր ուրախությունը, վիշտը արտահայտել է երաժշտության միջոցով: Չէ՞ որ երգն ու երաժշտությունը բարուն, գեղեցիկին հաղորդակից դարձնելու ամենանուրբ միջոցն է: Երաժշտության շնորհիվ մարդու մեջ ծնվում է վսեմի, հուզականի և մարդկայինի պատկերացումը:

Երաժշտության մասին կա մի հետաքրքիր պատմություն Աստվածաշնչի առաջին թագավորաց գրքից: Թե ինչպես հովիվ Դավիթը, որ հետագայում դարձավ թագավոր, մեղմում էր չար Սավուղի հոգին, հանում էր նրանից չարությունը: Դավիթի երգը նրա հոգում բարերար ազդեցություն էր ունենում: Երաժշտությունը մեզ տալիս է խաղաղություն, իսկ խաղաղությունն ամենակարևոր բանն է, քանի որ Աստված խաղաղություն է և սեր: Չկա խաղաղություն և սեր՝ չկա Աստված:

Երաժշտության գաղտնիքը նրանում է, որ նա արտահայտման անսպառ աղբյուր է գտնում այնտեղ, որտեղ խոսքը լռում է:

Հոֆման

Մեղեդին երաժշտության միակ ձևն է. Առանց մեղեդու՝ երաժշտությունը աներևակայելի է, իսկ մեղեդին և երաժշտությունը անխզելի են:

Վազներ

Երաժշտությունը լավագույն սփոփանք է տխուր մարդու համար:

Լոնգֆելլո

Ալեքսանդր Սպենդիարյանի անվան Հայաստանի ազգային օպերայի և բալետի թատրոն

Ալեքսանդր Սպենդիարյանի անվան Հայաստանի ազգային օպերայի և բալետի թատրոնը հիմնվել է 1933 թվականին: Գլխավոր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի նախագիծը 1937 թվականին Փարիզում անցկացվող համաշխարհային ցուցահանդեսին արժանացել է ոսկե մեդալի: Արամ Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիայի մեծ դահլիճը գործում է 1963-ից: 2002-ին կատարվել են վերանորոգման աշխատանքներ: 1938 թվականին թատրոնը կոչվել է Ալեքսանդր Սպենդիարյանի անունով: 1957 թվականին թատրոնը ստացել է ակադեմիականի կոչում:

Օպերայի գեղեցիկ և կլորավուն շենքը հանդիսավոր կանգնած է քաղաքի կենտրոնում: Օպերան շքեղ տեսք ունի՝ շնորհիվ մուտքի մոտ գտնվող սյուների և ընդարձակ տարածության: Թատրոնի շենքը շրջապատված է հայ մեծանունների արձաններով: Մեծ համերգասրահի առջև անվանի կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի արձանն է: Շենքի հարակից տարածքում՝ Ազատության հրապարակում, հայ անվանի գրող Հովհաննես Թումանյանի և կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի արձաններն են: Թատրոնի շենքից մի քանի քայլ այն կողմ՝ Կարապի լճի մոտ, տեղակայված է տաղանդավոր երգահան Առնո Բաբաջանյանի արձանը: Այս բոլոր արձանները յուրօրինակ են իրենց ոճով և կարծես ոգեշնչման և էներգիայի աղբյուր լինեն:

Հայկական առաջին օպերան ստեղծվել է 1868 թվականին. դա Տիգրան Չուխաջյանի «Արշակ Երկրորդ» հայրենասիրական օպերան էր:

Օպերայի բեմադրությունը առաջին անգամ տեղի է ունեցել Հայաստանում՝ 1945թ.-ին, Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում:

Արմեն Տիգրանյան՝ հայ երգահան, խմբավար, արվեստի վաստակավոր գործիչ, հայկական ազգային օպերայի հիմնադիր: Նրա առավել հայտնի գործերն են «Անուշ» (1912) և «Դավիթ-Քեկ» (1950) օպերաները:

1908 թ-ին Տիգրանյանն սկսել է գրել իր առաջին՝ «Անուշ» օպերան (ըստ Հովհաննես Թումանյանի), որը հայկական երաժշտական թատրոնում հիմք է դրել ոճական նոր ուղղության:

Օպերայի սիրված երգերից են «Ամպի տակից», «Համբարձում յայլա» խմբերգերը, Անուշի՝ «Ասում են՝ ուռին...» և Սարոյի՝ «Բարձր սարեր» երգերը:

Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի լիբրետոն (ռուսերեն), ըստ Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի, գրել է Սոֆյա Պարնոկը՝ 1917-1918 թվականներին:

«Ալմաստը» Ալեքսանդր Սպենդիարյանի թողած երաժշտական ժառանգության և անցած ստեղծագործական ուղու զարգացման գագաթնակետն է: Հայկական ազգային ինքնուրույն օպերային արվեստի զարգացման գործում «Ալմաստը» հիմնական ու կարևոր փուլերից մեկն է, հայ ժողովրդի հերոսական-ազատագրական պայքարն արտացոլող հոգեբանական-փիլիսոփայական բնույթի երաժշտական դրա-

մա: Առաջին բեմադրությունը՝ 1930-ին, Մոսկվայի Մեծ թատրոնի մասնաճյուղում (Ալմաստ՝ Մ. Մակսակովա): 1933-ին «Ալմաստի» բեմադրությամբ բացվել է Երևանի Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնը:

Բալետը իտալերեն բառ է, նշանակում է՝ **պարում եմ**: Այն ձևավորվել է Իտալիայում, 17-րդ դարում: Բալետում միաժամանակ հանդես են գալիս արվեստի մի քանի ճյուղեր՝ գրականություն, երաժշտություն, պարարվեստ, կերպարվեստ, թատերական արվեստ, մնջախաղ, դիմախաղ /պանտոմիմա/:

Հայկական առաջին դասական բալետը գրել է երգահան Արամ Խաչատրյանը: Բալետը կոչվել է «Երջանկություն» և բեմադրվել է 1939 թվականին: Հետագայում այդ բալետի բովանդակությունը /լիբրետոն/ փոխվել է և բեմադրվել նորովի, իսկ բալետը կոչվել է «Գայանե»: Բալետը բեմադրելիս բեմավարը առաջարկել է բալետի երաժշտությանը նաև տղամարդկանց պար ավելացնել: Կոմպոզիտորը խուսափում էր այդ առաջարկից, բայց մի օր, զայրույթը մեղմելու համար, բարկացած հարվածեց ստեղների: Հանկարծ նա զգաց, որ հարվածները յուրահատուկ հնչեղություն ունեն: Մոլեգնող այդ հնչյունները դարձան ապագա «Սուսերով պարի» սկիզբը:

Ա. Խաչատրյանի հանճարեղ ստեղծագործություններից է «Սպարտակ» բալետը. առաջին անգամ բեմադրվել է 1956թ.-ին, Լենինգրադում /այժմ՝ Մանկա Պետերբուրգ/: 1961 թ.-ին «Սպարտակ» բալետը բեմադրվել է Երևանում:

Մի անգամ Սալվադոր Գալին հրավիրում է Արամ Խաչատրյանին իր տուն: Նշանակված ժամին տաղանդավոր կոմպոզիտորը գնում է նկարչի տուն, իսկ նկարիչը... ուշանում էր: Հանկարծ շատ բարձր հնչում է Խաչատրյանի «Սուսերով պարի» երաժշտությունը, բացվում են դռներն ու ներս է խուժում Գալին՝ ձեռքին մի փայլուն սուսեր: Նա սկսում է, խրոխտ թափահարելով սուսերը, պտտվել սեղանի շուրջը, որի մոտ նստած էր զարմացած կոմպոզիտորը: Երբ երաժշտությունն ավարտվում է, Գալին անհայտանում է այն դռների ետևում, որից մտել էր, իսկ սպասավորը, մոտենալով Խաչատրյանին, ասում է. «Ընդունելությունն ավարտված է»:

Լյուդվիգ Վան Բեթհովեն

Գերմանացի երգահան Լյուդվիգ վան Բեթհովենը վաղ տարիքից նվագել է կլավեսին, երգեհոն, ջութակ, ֆլեյտա: Ոգեշնչվելով ֆրանսիական հեղափոխության գաղափարներով՝ նա գրել է հանրահայտ «Հերոսական սիմֆոնիան», որը նախապես նվիրել էր Նապոլեոնին: Սակայն լսելով վերջինիս կայսր հռչակվելու լուրը՝ պատռել է ընծայագիրը և սիմֆոնիան անվանել «Հերոսական»: 1813-17թ.թ.-ին՝ ստեղծագործական նոր վերելքի շրջանում, Բեթհովենը գրել է իր գլուխգործոցը՝ «Իններորդ սիմֆոնիան»՝ առաջին անգամ այդ ժանրում օգտագործելով խմբերգը՝ որպես վերջամաս: Սիմֆոնիան ամբողջացնում է ազատության և երջանկության համար մղվող պայքարի հերոսականությունը:

1827 թվականի գարնանը Բեթհովենը պառկած էր մահվան մահճում: Հոգեվարք ապրող կոմպոզիտորը բացեց աչքերը, ճիգով բարձրացավ և բռունցք ցույց տվեց երկնքին: Նա հանձնվել չէր ուզում: Հաղթանակ՝ միայն պայքարով: Եվ նա հաղթեց: Մահը ընկրկեց՝ տեղը զիջելով անմահությանը...

Հոգևոր երաժշտություն

Հոգևոր երաժշտությունը մեր հայկական ինքնության, մեր կյանքի գոյության, մեր ժողովրդի զոյատևման և հայ ազգի պահպանության հիմքն է: Այսօր մենք աշխարհին ենք ներկայանում դասական արվեստով, որի հիմքում հոգևոր երաժշտությունն է: Երկար տարիներ պետականություն չունենալով՝ հայի կերպարը հիմնականում պահպանվեց հոգևոր երաժշտության շնորհիվ: Մինչ տառեր ունենալը, մենք ունեինք տաղեր, հոգևոր երաժշտություն: Նույնիսկ մեր լեզուն կապված է մեր հոգևոր երաժշտությանը: Հոգևոր երաժշտությունը մեծ խթան հանդիսացավ հայոց գրերը ստեղծելու գործում:

Հայ հոգևոր երգերը իրենց մեղեդիների գեղեցկությամբ և կառուցվածքի կատարելությամբ վկայում են միջնադարյան Հայաստանում երաժշտական արվեստի բարձր զարգացման մասին: Հոգևոր երգերն իրենց ձևով և բովանդակությամբ տարբեր են լինում՝ շարականներ, տաղեր, զանձեր և այլն:

Դրանց հեղինակներն են հայ եկեղեցու գործիչներ և միաժամանակ երաժիշտ-բանաստեղծներ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևն ու Մովսես Խորենացին /5-րդ դար/, Կոմիտաս Աղցեցին /7-րդ դար/, Ստեփանոս Սյունեցին /8-րդ դար/, Գրիգոր Նարեկացին /10-րդ դար/, Ներ-

սես Շնորհալին /12-րդ դար/ և ուրիշներ, որոնց ստեղծագործությունները, դուրս գալով Հայաստանի սահմաններից, հարստացրել են համաշխարհային երաժշտական մշակույթի գանձարանը:

Բացի թարգմանական գործերից, Մեսրոպ Մաշտոցը գրել է մայրենի լեզվով առաջին հոգևոր բանաստեղծություններն ու երգերը՝ դնելով հոգևոր երգեցողության հիմնաքարը, նաև ճառեր, քնարական բանաստեղծություններ, քարոզներ և ուղերձներ:

Մեսրոպ Մաշտոց

Չոն-աղոթք

Ա - արարիչ	Ժ - ժամանակաց,	Ճ - ճեմարան	Ռ - ուարթի,
Բ - բովանդակ	Ի - իրաց,	Ս - մտաց,	Ս - սրբոց
Գ - գոյութեանց,	Լ - լուսո,	Յ - Յիսուս	Վ - վկայարան,
Դ - դատավոր	Խ - խավարի,	Ն - Նազովրեցի,	Տ - տեր
Ե - երկնից,	Ծ - ծովուց,	Շ - շնորհ	Ր - մեր
Զ - զորավոր	Կ - կենսականաց,	Ռ - ոգեշունչ,	Յ - ցանկալի
Է - եություն	Յ - համայնից,	Զ - չարեաց	Է - ու
Ը - ըստիուն,	Ձ - ձայն	Պ - պատաղիչ,	Փ - փառք
Թ - թագավոր	Ղ - ղողանջական,	Ջ - ջանադիր	Ը - Զրիստոսիդ

Տաղը հնագույն բանաստեղծություն է: Տաղ կոչվող բանաստեղծությունները նաև երգվել են. երգվել են եկեղեցական պատարագներից հետո և այդ պատճառով կոչվել են նաև երգեր: Տաղերի հնագույն օրինակներ են Գրիգոր Նարեկացու «Տաղ վարդավառին», «Տիրամայր» և այլ տաղերը:

Հոգևոր տաղերը, ի տարբերություն շարականների, կանոնավոր երգեր չէին. տոնախմբություններին և արարողություններին կատարվում էին տվյալ իրադարձությանը ավելի տոնական տեսք տալու համար: Ամենահայտնի տաղերից մեկը «Կռունկն» է, որը ստեղծվել է ուշ միջնադարում և պահպանվել է XVII դարի տեքստերում:

Բանքերը /Ն.Շնորհալի/ սուկ ընթերցանության համար ստեղծված բանաստեղծություններ են:

Գանձը հայ միջնադարյան հոգևոր երգարվեստի ժանր է: Որպես երաժշտաբանաստեղծական տեսակ՝ սերում է ժամագրքային հնագույն երգեցիկ քարոզից: Գանձի ձևավորումը կապված է Գրիգոր Նարեկացու ստեղծագործության հետ, որի անվանական ծայրակապ ունեցող և «գանձ» խոսքով սկսվող ներբողները («Գանձ լուսյ...», «Գանձ բաղձալի...», «Գանձ անապական...») ստացել են այդ անունը:

Հետագայում վերանվանվեցին գանձեր՝ սկիզբ դնելով գրական-երաժշտական ստեղծագործության մի նոր տեսակի՝ «Գանձարան», «Տաղարան» կամ «Հորդորակ»:

Շարական - Շնորհալին ամենամեծ շարականագիրն է: Նա հեղինակել է հարյուրավոր օրհներգեր, որոնք հարստացրել են հայ եկեղեցու պատարագների և ժամերգությունների երգասացությունները, խորացրել է հոգևոր երգերի ազգային բովանդակությունն ու հայրենասիրական ոգին, կատարելագործել եղանակները, բարեկարգել և ճոխացրել եկեղեցական պաշտոներությունը: Շնորհալու ամենասիրված ու տարածված հոգևոր երգերից է «Առավոտ լուստ»-ն, որի եռատող տներն սկսվում են հայոց այբուբենի հաջորդական տառերով. «Առավոտ լուստն...» կոչվում է «Երգ աղոթական», այսինքն՝ աղոթքի երգ:

Պատարագ

Առատտ լուսոյ	Գանձո՞ղ ողորմութեան,	Երբեակ միութիւն,
Արեգակն արդար,	Գանձի՞դ ծածկելոյ	Եղելոց խնամող,
Առ իս լո՛յս ծագեա՛:	Գտո՞ղ զիս արա:	Եւ ինձ ողորմեա՛:
Բղխո՛ւմն ի Հօրէ,	Դուռն ողորմութեան	Չարքի՛ր, Տէր, յօգնել
Բղխեա՛ ի հոգւոյս	Դաւանողիս բա՛ց,	Չարքո՛՞ զթմբեալս՝
Բան քեզ ի հաճոյս:	Դասեցո՛ վերնոցն:	Չուարթնոց նմանիլ:

Պատարագը (պահլ. patarag, - նվեր, ընծա) քրիստոնեական գլխավոր արարողությունն է, խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի անձնագրահությունը:

Սուրբ Պատարագի արարողության բուն առանցքը կազմում է Հաղորդության խորհուրդը, որը հաստատվել է Հիսուս Քրիստոսի կողմից Խորհրդավոր ընթրիքի ժամանակ: Պատարագը բովանդակում է Հիսուսի մարդեղության ողջ խորհուրդը և նրա կյանքի դրվագները:

Պատարագի ժամանակ կատարվում է հաղորդություն՝ հավատացյալները ճաշակում են Հիսուս Քրիստոսի մարմինն ու արյունը խորհրդանշող սրբազան հացը և գինին: Դարերի ընթացքում պատարագը կրել է ծիսական փոփոխություններ: Սովորաբար Հայկական Առաքելական եկեղեցին պատարագը կատարում է կիրակի, սրբոց և տերունական օրերին: Պատարագի լեզուն հին հայերենն է՝ գրաբարը: Պատարագը քրիստոնեական եկեղեցու հիմնական ծիսական արարողությունն է: Պատարագը մաս երաժշտական ստեղծագործություն է, որի երգա-

սացությունները հոգևոր երգեր են, որոնք հորինել են միջնադարյան հայ հեղինակները: Մինչև 19-րդ դարի վերջերը պատարագի երգեցողությունը միաձայն է եղել: Հայ կոմպոզիտորական արվեստում պատարագի երգեցողության բազմաձայնեցման օրինակներից նշանավոր են Մակար Եկմալյանի «Հայոց պատարագից»՝ «Քրիստոս ի մեջ մեր հայտնեցավ» և Կոմիտասի «Պատարագից»՝ «Հայր մեր» տերունական աղոթքի մշակումները:

Կոմիտաս

Անգնահատելի է Կոմիտասի հավաքչական ու գիտական աշխատանքը: Նա ժողովրդական երգերը գրառել է ազգագրագետի վարպետությամբ, գեղագետի պահանջկոտությամբ և գիտնականի վերլուծական դիտողականությամբ: Երաժշտական բանահյուսության մի շարք հնագույն և բարձրարվեստ նմուշների հայտնաբերումը (հեթանոս հավատալիքներին առնչվող հորովելների եղանակները, «Մասունցի Դավիթ», «Մոկաց Միրզա» վիպական ասերգերը, անտունիներն ու հոգևոր տաղերը) համարվում է պատմամշակութային խոշոր հայտնագործություն, իսկ հավաքած ավելի քան 4000 գեղջկական երգերը՝ հայ ժողովրդական երգարվեստի անթոլոգիա:

Նրա ստեղծագործությունների մեջ իր անհուն խորությամբ առանձնանում է «Պատարագը», որը կանտատ-օրատորիայի դասական նմուշներից է: Կոմիտասի կերպարին ու ստեղծագործությանն անդրադարձել են մի շարք գիտնականներ, գեղանկարիչներ, քանդակագործներ, երաժիշտներ, գրողներ: Կոմիտասին է նվիրված Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմը, որը պատկերազարդել է գեղանկարիչ Գրիգոր Խանջյանը:

Դու՝ խազերի մեր քերական,
Դու՝ հոգևոր մեր շարական.
Դու՝ սրբազան մի ավազան,
Որ մեր հոգին ախտահանեց.
Դու՝ բիրիական մի գավազան,
Որ ուր դիպավ՝ աղբյուր հանեց.

Դու մեր կարոտ ու մեր մորմոք,
Մեր տաղի քուրմ,
Մեր խաղի մոգ,
Մեր մշտահունչ ու մշտաբթուն,
Անլռելի զանգակատուն:

Պ. Սևակ

Ոչ պակաս ողբերգական ճակատագիր ունեցավ նաև Կոմիտասի հսկայական ժառանգությունը: Նրա ձեռագրերից շատերը ոչնչացան կամ ցրվեցին աշխարհով մեկ...

«Հայ ժողովուրդը կոմիտասյան երգին մեջ գտավ, ճանաչեց իր հոգին, իր հոգեկան ինքնությունը: Կոմիտաս վարդապետը սկիզբ է, որ վախճան չունի: Նա պիտի ապրի հայ ժողովուրդով, հայ ժողովուրդը պիտի ապրի նրանով, ինչպես այսօր, այնպես էլ հավիտյան»:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա

«Հորովել» երգի պատմությունը. մի պատահիկ Կոմիտասի կյանքից

Մի անգամ Կոմիտասը Լոռի է մեկնում երգահավաք առաքելությամբ: Գտնելով հորովելի կատարումով հայտնի գյուղացու տունը՝ խնդրում է, որ նա երգի: Գյուղացին կտրականապես հրաժարվում է և անդրդվելի մնում իր դիրքորոշման մեջ: Ոչ գյուղապետի առաջարկը և ոչ էլ հոգևորական Կոմիտասի խնդրանքը դեր չեն խաղում: Առավոտյան գյուղացին հորովելի կատարումով եզր դուրս է հանում գոմից: Կոմիտասը շտապ նոտայագրում է երգը և հետո հարցնում, թե ինչու երեկ հրաժարվեց երգել: Գյուղացին բացատրում է, որ երեկ երեկոյան եզր հոգնած վերադարձել էր դաշտից և, եթե երգեր, եզին կթվար, թե արդեն առավոտ է և հասել է գործի մեկնելու ժամը:

Ժողովրդի ոգու ձայնն է երգը, որ արտահայտում է նրա պատմությունը, նիստուկացը, սիրտն ու միտքը, ուժն ու եռանդը, հույսն ու հավատը, ծեսը ու գոյության խորհուրդը:

Կոմիտաս

Հորովել

Հ'ն, հորովել, հ'ն, հ'ն, հո', հորովել,
Լուսը բացվեց, բարին բացվեց,
Հ'ն, եզո' ջան, հորովել, հո', եզո' ջան,
Քաշի'ր, քաշի'ր, ուսիղ մատաղ,
Հորի' լորի', լորո, լորի' լորի' հորովել, հո,
Հորովել հո':
Վար-վար արա', ակոս արա', եզո' ջան, ախպե'ր ջան,
Հո', հորովել, հորի լորի', լորո լորի հորովել,
Հորի լորի, լորո լորի ջան:

Քաշի՛ր, քաշի՛ր, ուսիդ մատաղ, եզո՛ ջան, ախպե՛ր ջան,
Հո, հորովել, հորի լորի, լորո լորի հորովել,
Հորի լորի, լորո լորի ջան:
Յորենն ինձի դարմանը՝ քեզ, եզո՛ ջան, ախպե՛ր ջան,
Հո, հորովել, հորի լորի, լորո լորի հորովել,
Հորի լորի, լորո լորի ջան:
Հորովել հո՛...

Կռունկ

Կռունկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս.
Մի՛ վազեր, երամիդ շուտով կը հասնիս.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:
Թողել եմ ու եկել մըլքերս ու այգիս,
Քանի որ ա՛խ կանեմ, կու քաղվի հոգիս,
Կռունկ, պահ մի կացի՛ր, ձայնիկդ ի հոգիս.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:

Կանչե կռունկ

Ըստ Կոմիտասի

Կանչե՛, կըռո՛ւնկ, կանչե՛, քանի գարուն է,
Ղարիբներու սիրտը գունդ-գունդ արուն է:
Կըռո՛ւնկ ջան, կըռո՛ւնկ ջան, գարուն է,
Կըռո՛ւնկ ջան, կըռո՛ւնկ ջան, գարուն է,
Ա՛խ, սիրտս արուն է:
Կանչե՛, կըռո՛ւնկ, կանչե՛, քանի արոտ է,
Աշխարհն է արեգակ, սիրտս կարոտ է:
Կըռո՛ւնկ ջան, կըռո՛ւնկ ջան, արոտ է,
Կըռո՛ւնկ ջան, կըռո՛ւնկ ջան, արոտ է,
Ա՛խ, սիրտս կարոտ է:
Կանչե՛, կըռո՛ւնկ, կանչե՛, քանի արև է,
Աշնան կերթաս երկիր, յարիս բարևէ:
Կըռո՛ւնկ ջան, կըռո՛ւնկ ջան, արև է,
Կըռո՛ւնկ ջան, կըռո՛ւնկ ջան, արև է,
Ա՛խ, յարիս բարևէ:

«Կռունկ» - գրված է միջին հայերենով /13-րդ դար/, տեքստի ու երաժշտության հեղինակը հայտնի չէ, մշակել ու ձայնագրել է Կոմիտասը:

«Կռունկ Հայաստանի»- Միջագի

«Կռունկ, բարով դառնաս» - խոսք՝ Գ, Էմինի, երաժշտ.՝ Ալ. Հեքիմյանի:

Գևորգ Էմին

Երգ կռունկի մասին

Կռունկ, Հայոց մոխիրը կար քո թևերին,
Երբ չվեցիր.

Թրջված էր քո աչքը Հայոց արցունքներից,

Երբ չվեցիր.

Ասիր,-Չե՛մ գա էլ Հայաստան. մահ է այնտեղ,

Եղեռն, ավա՛ր...

Մեր երկրի պես ավեր բույնդ անտեր թողիր

Ու չվեցիր:

Ո՛ւր չվեցիր՝ Հայոց վշտի անծայր բանտից

Դու դուրս չեկար.

Ամեն ջրում, ամեն հողում՝ վտարանդի

Հայի տեսար.

Ականջ դրիր մեկի հարցին, մեկին թողիր

Անպատասխան

Եվ աշխարհում, ինչպես նրանք, քո բնի պես

Բույն չտեսար:

Ո՛ւր գնացիր՝ մոխիր դարձավ բույնդ նորից,

Թռար եկար.

Հազար հրի միջով անցար, հազար սրից

Փրկված եկար.

Ասիր,-թե մահ կա աշխարհում, լավ է մեռնեմ

Իմ հին բնում...

Աչքդ հառած Արարատի սեզ կատարին՝

Թռար, եկար:

Եկար, տեսար անապատում՝ նոր ջրանցքի

Հուն է բացվել,

Վարդ է բացվել քարի վրա, քարը կրկին

Տուն է դարձել

Եվ նախանձից Մասիսն անգամ թեքվել է, որ

Արագն անցնե,

Ծուխ է ելնում ամեն տնից. հավքն իր նախկին
Բույնն է դարձել:

Եկար մեզ մոտ, քո թևերին պանդուխտների
Վի՛շտը բերիր.

Նրանց կարոտը հայրենիքի ու դարերի
Ի՛ղձը բերիր.

Եկար, նորոգ բույնդ գտար ու չվում ես
Ափերն օտար,

Որ ազատե՛ս Սև զուլումից ու ձուլումից
Քո ձագերին:

Գնա՛, կռո՛ւնկ, Հայոց արտից ծի՛լ տար կանաչ՝
Պանդուխտների՛ն,

Մի նշխար ձյուն՝ Արարատից, ջո՛ւր Սևանա՝
Պանդուխտների՛ն.

Ականջիդ մեջ՝ մեր երգն ուրախ, աչքերիդ մեջ՝
Մեր լույսը նոր՝

Մի բուռ հող տար՝ մահից փրկող սուրբ մանանա՝
Պանդուխտների՛ն:

Գնա՛, շրջիր երկրերկիր ու ե՛տ դարձիր,
Բարո՛վ դառնաս.

Կանչիր բոլոր պանդուխտներին ու ե՛տ դարձիր,
Բարով դառնաս.

Դարձիր այնպե՛ս, որ ոչ մի տեղ, ոչ մի պանդուխտ
Քեզ չսպասի,

-Կռունկ, ուստի՞ կու գաս,-չասի՛ ու չլացի՛...
Բարո՛վ դառնաս...

«Ղարաբաղի հորովել» - խոսք և երաժշտություն՝ Գուրգեն Գաբրիելյանի: Բանաստեղծ- երգահան Գուրգեն Գաբրիելյանի «Ղարաբաղի հորովել» երգը հաստատուն տեղ ունի արհեստավարժ և ինքնուս երգիչների երգացանկերում: Ղարաբաղյան կյանքի ու կենցաղի բազմաբնույթ կողմերն են արտացոլված նրա «Խնեցուն երգը», «Կալին երգը», «Ըրկանքեն երգը», «Հրսրնքեն կնանեքը» և այլ երգերում: «Արցախյան նվազարան»-ում հավաքված են Գ. Գաբրիելյանի՝ տարբեր տարիների հրատարակած ստեղծագործությունների լավագույն մնուշները:

Ղարաբաղի հորովելը

Իրիքնակը տուսա եկալ,
Տանս յրա լուսա եկալ:
Սոր մին կորե, վեր վար անիմ:
Գիդա սրտես լուս ա եկալ:

Հո արա, հո,
Ապան մատաղ,
Ապուն դալուն կուճիր հոտաղ:
Հո արա, հո, հո, հո, հո, հո, հո:

Հոնե ապան մինակա իլալ,
Գարդը սրտեն տենակա իլալ:
Էտ հիբ բուրդան բոյ քշեցեր,
Գարդը սրտան տեն քշեցեր:

Հո արա, հո,
Ապան մատաղ,
Ապուն դալուն կուճիր հոտաղ:
Հո արա, հո, հո, հո, հո, հո, հո:

Իրիքնակը մար կփռնե,

Սարեն քամեն պար կփռնե:
Տոն կքինանք եզնխառնը
Հանդեն թողած օրեն դառնը:

Հո արա, հո,
Ապան մատաղ,
Ապուն դալուն կուճիր հոտաղ:
Հո արա, հո, հո, հո, հո, հո, հո:

Քշերիհանավ պենչմ կերալ,
Չանթեն մաչին հացընք պերալ:
Թաթախ կանինք ճիրին մաչին,
Փրթուշ կանինք ախպերվաչի:

Ճուվարան կանե հետես ապեն,
Կախ կտա էն լծեն կապեն:
Վեր իմ բալան նստե մաչին,
Ասե հո, հո, խումար, Լաչին:

Ծերքետ ճպատը ճապկեյա,
Կամաց թխե եզանը:
Բուրդան մաշկեն ցավ կտա,
Էտա պահում խեզանը:

Անտունի՝ հայ հին ժողովրդական երգի տեսակ՝ հորինված մեծամասամբ պանդխտության, մասն` սիրո և այլ թեմաներով:

Անտունիները սկզբնապես ստեղծվել են միջին հայերենով և շատ տարածված են եղել հատկապես Արևմտյան Հայաստանի Ակն գավառում: Շատ անտունիներ առաջացել են հայրեններից՝ պահպանելով նրանց տաղաչափական առանձնահատկությունները:

Սիրոս մման է էն փլած տներ,
Կոտրեր գերաններ, խախտեր է
սներ,
Բուն պիտի դնեն մէջ վայրի
հավքեր:

Երթամ՝ ձի թալիմ էն ելման գետեր,
Ըլնիմ ձկներու ձագերացն կեր:
Ա՛յ, սո լա՛ճ տնավեր:

Սև ծով մը եմ տեսե, սիպտակն էր
բոլոր,
Ալին կզարներ, չէր խառնի հիրոր:
Էն ո՞րն է տեսե մեկ ծովն
երկթավոր,

Անտունի սիրոն է պղտոր ու մոլոր:
Ա՛խ, իսկի մի՛ լնիք սրտիկ սևավոր:
Ա՛յ, սո լա՛ճ տնավեր...

Ժողովրդի սիրած երգեր

- «Արաքսի արտասուքը»- խոսքը՝ Ռ. Պատկանյանի, երաժշտությունը՝ մասնագիտությամբ ճարտարապետ, պոլսահայ Սարգիս Պողոսյանի /Պայան/: Մարմինն ամփոփված է Սկյուտարի գերեզմանոցում՝ Պետրոս Գուրյանի շիրիմի կողքին:
- «Ծիծեռնակ»- խոսք՝ Գևորգ Գողոթյանի, գրված է 1854թ., Գորպատի /Էստոնիա/ համալսարանում ուսանելու տարիներին, երաժշտ. մշակումը՝ Կոմիտասի:
- «Մաճկալ ես, բեգարած ես»- խոսք՝ Ավ. Իսահակյանի, երաժշտությունը՝ Շուշվա թեմական դպրոցի 6-րդ դասարանի աշակերտ Եգոր Առստամյանի:
- «Գարդս լացեք» - խոսք՝ Ավ. Իսահակյանի, երաժշտությունը՝ աշակերտ Հնայակ Սիքյան:
- «Սիրեցի, յարս տարան» - խոսք և երաժշտությունը՝ Ավ. Իսահակյանի:
«Բինգոյոլ» - խոսք՝ Ավ. Իսահակյանի, երաժշտությունը՝ բանվորուհի Վալյա Սարգսյան, 1950թ.:
- «Գու անմեղ ես, քո աչերն են մեղավոր» - Արարատ Դարիբյան, լեզվաբան:
- «Ով սիրուն, սիրուն»- խոսք՝ Լ. Միրիջանյանի, երաժշտ.՝ ժողովրդական:
- «Կարմիր ծաղիկ մը գարունի»-խոսք Մ.Մեծարենցի, երաժշտ.՝ Ռ. Ամիրխանյանի:
- «Այգեպան» /Շամբը բուրաստան չի լինի/- գուսան Շիրին:
«Ծիրանի ծառ», «Չախորդ օրեր», «Խելքի աշեցեք», «Ընկեր», «Մայրիկ» /Ձուխտակ շամամներդ.../ - Ջիվանի:
«Անդրանիկին» /Իբրև արծիվ .../, «Պարտեզում վարդ էր բացված», «Գալիս եմ դուռդ» - գուսան Շերամ:
«Գարնան ծաղիկ ես» - գուսան Հավասի:
«Սյունյաց սարեր»- գուսան Աշոտ:
«Նաիրյան դալար բարդի»- խոսք՝ Հ. Սահյանի, երաժշտություն՝ գուսան Շահենի:
«Լերլերիջների խմբերգ» - խոսք՝ Թ. Նալյանի, երաժշտություն՝ Տ. Չուխաջյանի:
«Ծովակ»-խոսք՝ Բաֆֆու, գրառումը՝ Կոմիտասի:
«Երագ» - խոսք՝ Սմբատ Շահագիզի, գրառումը՝ Կոմիտասի:

«Օրորոցի երգը»- խոսք՝ Ռ. Պատկանյանի, երաժշտությունը՝ Բ. Կանաչյանի:

«Ախ, ի՞նչ լավ են սարի վրա»-խոսք և երաժշտությունը՝ Հովհ. Թումանյանի:

«Վարդը» -խոսք՝ Գյոթեի, թարգման.՝ Հ. Թումանյանի, երաժշտություն՝ Ռոմանոս Մելիքյանի:

«Քույր իմ նազելի» - խոսք՝ Ավ. Իսահակյանի, երաժշտություն՝ Դ. Ղազարյանի:

«Գետակի վրա», «Օտար, ամառի ճամփեքի վրա»- խոսք՝ Ավ Իսահակյանի, երաժշտություն՝ Ա. Մարյանի:

«Բարձր սարեր» «Անուշ» օպերայից, «Ախ իմ ճամփես ոլոր,մոլոր», «Սև աչեր»- Հ. Թումանյան, երաժշտություն՝ Ա. Տիգրանյանի:

«Դու նորից եկել ես» -խոսք՝ Դևի, երաժշտություն՝ Ն. Գալանտերյանի:

«Արդյոք ո՞ր ես», «Մոռանալ»- խոսք՝ Վ. Տերյանի, երաժշտություն՝ Ն. Գալանտերյանի:

«Ես իմ անուշ Հայաստանի» -խոսք՝ Եղ. Չարենցի, երաժշտությունը՝ Աշոտ Սաթյանի:

«Մարտիկի երգը» -խոսք՝Գ. Սարյանի, երաժշտությունը՝ Աշոտ Սաթյանի:

«Իմ Հայաստան» /Ամեն հայի սրտի համար/- խոսք՝ Գ.Սարյանի, երաժշտությունը՝ Ա. Սաթյանի

«Խնջույքի երգը» /Մեղանն է առատ/ -խոսք՝ Սարմենի, երաժշտ.՝ Կ. Չաքարյանի:

«Չքնաղ երագ» /Դու ինձ համար սիրո աղբյուր/-խոսք՝ Ա. Սահակյանի, երաժշտ.՝ Ա. Բաբաջանյանի:

«Լեռներ հայրենի» /Ախ, ինչքա՛ն, ինչքա՛ն կարոտել եմ ձեզ/-խոսք՝ Վ. Ամատունու, երաժշտ.՝ Ա. Մերանգույանի:

«Աղավնի» /Ճերմակ աղավնի, սիրուն.../-խոսք՝ Սարմենի, երաժշտ.՝ Ստ. Ջրբաշյանի:

«Ասում են, թե մոռացել ես» /Այնպես անփույթ.../ -խոսք՝Ս. Կապուտիկյանի, երաժշտ.՝ Խ. Ավետիսյանի:

«Երևանի գիշերները» -խոսք՝ Ա. Գրաշի, երաժշտ.՝ Ա. Դոլուխանյանի:

«Երևան- Էրեբունի»- խոսք՝ Պ. Սևակի, երաժշտ.՝ Է. Հովհաննիսյանի:

«Կարուսել» -խոսք՝ Վ. Տերյանի, երաժշտ.՝ Ալ. Հեքիմյանի:

«Գիշերն եկավ, գով հովն ընկավ» -խոսք՝ Ավ. Իսահակյանի, երաժշտ.՝ Ալ. Հեքիմյանի:

«Յասամանի ծառի տակ», «Անուշ Հայաստան», «Երգիր ինձ համար»,
 «Իմ սիրտը» /Ես իմ սիրտը քեզ եմ տալիս/, «Բարի արագիլ»-
 խոսք՝ Ա. Գրաշու, երաժշտ.՝ Ալ. Հեքիմյանի:
 «Կուզե՞ս լինեմ վշտի ցողեր»- խոսք՝ Ավ. Իսահակյանի, երաժշտ.՝
 Գ. Չիթչյանի:
 «Հայի աչքեր» / Սիրուն աչքեր.../-խոսք՝ Սարմենի, երաժշտ.՝ Ռ. Ամիր-
 խանյանի:
 «Հայոց աղջիկներ» - խոսք՝ Գ. Սիրիմանյանի, երաժշտ.՝ Մ. Փրիդոնյանի:
 «Էստոնական երգ» - խոսք՝ Վ. Տերյանի, երաժշտ.՝ Վ. Հովսեփյանի:
 «Դու անմեղ ես, քո աչերն են մեղավոր»- խոսք՝ Ար. Ղարիբյանի,
 երաժշտ.՝ Հ. Ենգիբարյանի:
 «Գանձասար»- խոսք՝ Արմեն Հովհաննիսյանի, երաժշտությունը՝
 Գ. Գաբրիելյանի:
 «Գետաշեն», «Պատերազմ եք գնում», «Հայեր, միացեք» - գուսան
 Հայկազունի:

Տերյանի բանաստեղծությունների խոսքերով գրվել են բազմաթիվ երգեր (երգահաններ՝ Նիկոլ Գալանտերյան, Էդգար Հովհաննիսյան, Ռոմանոս Սելիքյան, Տիգրան Մանսուրյան և ուրիշներ):

«Կարուսել», «Գարունը այնքան ծաղիկ է վառել», «Կապույտ աղ-
 ջիկ», «Յրտահար, հողմավար», «Կարծես թե դարձել եմ ես տուն»,
 «Արդյոք ո՞ր ես», «Աշնան երգ», «Ինձ թաղեք», «Անանց կարոտ»,
 «Երբ կհոգնես, կգազազես աշխարհից», «Ես չգիտեմ ուր եմ տա-
 նում...», «Իմ խաղաղ երեկոն է հիմա», «Դու կգաս ու կրկին կդյու-
 թես», «Մոռանա՞լ, մոռանա՞լ...» և էլի...

Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների խոսքերով գրվել են բազմաթիվ երգեր /ավելի քան 150/՝ «Մաճկալ», «Իմ այրող վշտից», «Կուզես լինեմ», «Տարիներ հետո», «Հեյ, Արագած», «Քույր իմ նազե-
 լի», «Գետակի վրա», «Օտար, ամայի», «Ախ, իմ ճամփես», «Սև աչեր», «Սև-մութ ամպեր», «Դարդս լացեք», «Սիրեցի, յարս տարան», «Որսկան ախպեր», «Մայրիկիս», «Բիճալ», «Հովերն առան» և էլի...

Մեծ բանաստեղծ **Պարույր Սևակի** 10 բանաստեղծությունների՝ «Արգելանոց», «Պատահաբար եմ հանդիպում կյանքում», «Քո պատ-
 ճառով», «Մարդ էլ կա, մարդ էլ», «Ինքս ինձ հերքում», «Ծնվել եմ»,
 Մեռնել», «Երազում եմ», «Գժվել եմ», «Հանգստանում եմ» խոսքերով երգեր է գրել Լոս Անջելեսում ճանաչված նրբաճաշակ կիթառիստ և

հանրահայտ երգերի անգուգական կատարող Ժիրայր Բարսամյանը: Նա ինքնու երաժիշտ է՝ օժտված հիանալի ձայնային տվյալներով, երաժշտական նուրբ լսողությամբ:

Հովհաննես Թումանյանի խոսքերով՝ «Ա՛խ ինչ լավ է», «Ասում են՝ ուռին», «Կաքավի երգը», «Կոտ ու կես», «Համբարձում-յայլա», «Դեղնաձ ղաշտերին», «Սիրտս ցավում է», «Աղջի, բախտավոր», «Ամպի տակից», «Ինձ մի խնդրիր» և էլի...

Չարենցի ամենահայտնի սիրո խոստովանությունն ուղղված է իր հայրենիքին: Խոստովանությունն այնքան գեղեցիկ էր, այնպիսի ճշգրիտ և մեղեդային բառեր էին ընտրված, որ երաժիշտները չդիմացան գայթակղությանն ու ակամայից երգի վերածեցին «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը: Կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի երաժշտական մեկնաբանումը կարելի է անվանել Չարենցի բանաստեղծության ամենաեպիկը: Ամենահայտնի երաժշտական մեկնաբանության հեղինակն է Արամ Սաթյանը: Շատերն են կատարել Սաթյանի ու Չարենցի համատեղ ստեղծագործությունը, սակայն ամենասիրվածը Հովհաննես Բաղայանի կատարումն է:

Հայ անվանի երգահաններ

Նիկոլ Գալանտերյան՝ քաղաքային ժամանակի հիմնադիր: Գալանտերյանի երգերը գրված են քաղաքային ժողովրդական երգերի ոճով՝ Վահան Տերյանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի, Միսաք Մեծարենցի, Դևի և այլոց բանաստեղծությունների հիման վրա: Գալանտերյանը մեծ ժառանգություն է թողել՝ 1000-ի հասնող ստեղծագործություններ՝ սիրերգեր, սոնետներ, ժողովրդական երգերի մշակումներ, մանկական երգեր, խմբերգեր, պիեսներ ջութակի, թավջութակի, դաշնամուրի համար ... Նա օպերայի է վերածել Վահան Միրաքյանի «Լավարի որսը», Հովհաննես Թումանյանի «Փարվանան», Վրթանես Փափագյանի «Լուր-դա-լուրը» (երեք արարով այս օպերան անվանվել է «Հովիվ»):

Գրել է նաև մանկական օպերաներ՝ «Չարի վերջը», «Պողոս-Պետրոս», «Ծաղիկների երգը», «Պապն ու շաղգամը», «Կնունք-կնունք», «Ծիծեռնակի գալուստը», «Երեք արջեր», «Ուլիկ»:

Ալեքսեյ Գուրգենի Հեքիմյան՝ խորհրդային ներքին ծառայության գեներալ-մայոր, երգահան: Առավել հայտնի են՝ «Բարի արագիլ»,

«Կռունկ, բարով դառնա», «Երգիր ինձ համար», «Լարաբաղի եղ-
նիկ», «Իմ Հայաստան», «Լարաբաղ» երգերը:

Տիգրան Եղիայի Մանսուրյան՝ հայ կոմպոզիտոր, ժողովրդական
արտիստ: Հեղինակ է նվագախմբային, կամերային, երգչախմբային և
վոկալ գործերի, որոնք կատարվել են ամբողջ աշխարհում: Նա գեղար-
վեստական նոր հիմքի վրա վերածնել է կոմիտասյան սկզբունքները:
Մանսուրյանի ստեղծագործությունները հայկական երաժշտարվեստի
և ժողովրդական ավանդույթների հետաքրքիր միահյուսություն են՝
իրենց լուսապայծառ, արտասահայտիչ մեղեդիներով և տպավորապաշտ,
բարձրաճաշակ ու ընտիր հնչերանգներով:

Գրել է «Չյունե թագուհին» /ըստ Հանս Քրիստիան Անդերսենի/ բա-
լետը, սիմֆոնիկ երկեր՝ «Պարտիտե» «Պրեյլուդներ», «Գիշերային
երաժշտություն», կոնցերտներ՝ թավջութակի և նվագախմբի, երգեհոնի
և լարային նվագախմբի, ջութակի և լարային նվագախմբի (1981), ալ-
տի և կամերային նվագախմբի (1995), «Արվեստ Քերթության» երգ-
չախմբի համար վոկալ շարքեր /խոսք՝ Եղիշե Չարենցի/, 4 հայրեն Նա-
հապետ Քուչակից, «Մայրամուտի երգեր» /խոսք՝ Համո Սահյանի/,
«Երկիի Նաիրի» /խոսք՝ Վահան Տեղյանի/, «Գարնան երգեր» /խոսք՝
Հովհաննես Թումանյանի/, խմբերգեր, կինոնկարների /Մերգեյ Փարա-
ջանովի «Նռան գույնը», Սիբայել Վարդանովի «Հայկական հողի գույ-
նը», «Կտոր մը երկինք», «Մենք ենք, մեր սարերը», «Սգավոր ձյունը»,
«Հին օրերի երգը», «Մեր մանկության տանգոն» /և թատերական /
«Ջոն արքա», «Մեծ լռություն» և այլն/ երաժշտություն: Մանսուրյանի
կինոերաժշտությունն առանձնանում է մեղեդայնությամբ, քնարակա-
նությամբ և մեծապես նպաստում է ֆիլմի գեղարվեստական նկարագ-
րի ամբողջացմանը: Կոմպոզիտորի ստեղծագործությունները կատար-
վել են Լոնդոնի, Փարիզի, Հռոմի, Սիլանի, Բեռլինի, Վիեննայի, Մոսկ-
վայի, Նյու Յորքի, Լոս Անջելեսի և այլ քաղաքների խոշորագույն հա-
մերգային դահլիճներում:

«Տիգրանով իմ սերունդը իր խոսքն է խոսում նորոգ ու նորօրյա մշա-
կույթի տաճարում: Առանց Տիգրանի՝ իմ սերունդը միայն համր ուխտա-
վոր էր լինելու»:

Հրանդ Մաթևոսյան

Գուսան Հայկազուն / Գագիկ Ստեփանի Նազարյան/, հայ գուսան, երգահան, երգերի հեղինակ, «Հայկազունք» երաժշտական համույթի գեղարվեստական ղեկավար, Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, Արցախյան պատերազմի մասնակից, «Երկրապահ» կամավորների միության անդամ: Ըստ նրա՝ Գուսան Հայկազուն մականունը նշանակում է, որ ինքը Հայկ Նահապետի ժառանգն է: Առաջին օրերից միանալով Արցախյան շարժմանը՝ մեկ շաբաթվա ընթացքում գրել է իր առաջին՝ «Հայե՛ր, միացե՛ք» երգը: Գրել է և կատարում է ավելի քան հարյուր երգ, որոնցից ավելի քան 10 երգ ՀՀ Պաշտպանության Նախարարությունը ընդունել է որպես բանակային քայլերգ՝ «Հայե՛ր, միացե՛ք», «Գետաշեն», «Հպարտ գնացե՛ք», «Մուսա լեռան», «Վերականգնվի՛ր, Կիլիկիա», «Պիտի գնանք», «Մաղավուզի Կարոյի երգը» և այլն: Գուսանը ծանոթ չէ նոտաներին, չունի երաժշտական կրթություն, չի նվագում ոչ մի երաժշտական գործիք:

Սասուն Պասկեիչյան՝ Չարենցից երգի է վերածել 7 բանաստեղծություն, բոլորն էլ «Տաղարանից»՝ «Երազ տեսա», «Սայաթ-Նովեն մոտս եկավ...», «Կուգեմ հիմի փչե գուռնեն», «Ամեն տեսակ երգ երգեցի», «Հիմի շատ են երգիչները», «Շրթերդ կրակով լիքը», «Էսօր մեր փողոցով անցար», «Իմ մահվան օրը կիջնի լռություն»: վերջին երեքը առայժմ չեն կատարվել և ոչ էլ ձայնագրվել: Պարույր Սևակից՝ յոթ բանաստեղծություն, որոնցից ձայնագրված է միայն «Դու՛ երկու տառ» երգը: Երգերի են վերածվել Շիրազի, Կապուտիկյանի, Մետաքսեի, Սլավիկ Չիլոյանի, Լևոն Բլբուլյանի, Կորյուն Առաքելյանի, Իշխան Նազարյանի և ուրիշ բանաստեղծների գործեր:

Երգեր, որոնք ցեղասպանության մասին չեն, բայց վերագրվում են ցեղասպանության հիշատակին

Ծիրանափողի մեղեդու ուղեկցությամբ հնչող ժողովրդական դարձած «**Դ-լե յաման**» երգը գրառել է երաժշտագետ, հոգևորական և հայ դասական երաժշտության հիմնադիրներից մեկը՝ Կոմիտաս Վարդապետը: Կարծիք կա այն մասին, որ երգի ծագման, լեզվական և բառակազմական ուսումնասիրության արդյունքում «Դ-լե յաման» երգը Խանդութ Խանումի և Սասունցի Դավթի սիրո պատմության երգն է և հայ էպիկական երգարվեստի ու «Սասնա Ծռեր» էպոսի բաղկացուցիչ մասը:

Ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում միացնում են «Դլե յաման» և «Գարուն ա» երգերը, սակայն դրանք ցեղասպանության մասին չեն:

Միգուցե բավականին հարուստ և խորը երաժշտությունը, որն իր մեջ պարունակում է ողբերգություն, ստիպել է մարդկանց դա վերագրել ցեղասպանությանը: Բայց այդ երաժշտությունները սիրային թեմայով են. ողբերգություն կամ սիրո ողբերգություն են, երևի թե այդ պատճառով էլ եղեռնին նվիրված միջոցառումների ժամանակ կատարում են նշված երգերը:

Դլե յաման

Քամին էկավ կրակի պես,
Վա՛յ, դլե յաման,
Էկավ, հասավ չոր ծովու կես,
Յաման, յաման:
Դլե յաման,
Մեր տուն, ձեր տուն իրար դիմաց,
Վա՛յ, դլե յաման,
Մենք սիրեցինք առանց իմաց
Յաման, յաման:
Դլե յաման,
Արև դիպավ Մասիս սարին,

Վա՛յ, դլե յաման,
Կարոտ մնացի ես իմ յարին,
Յաման, յաման:
Դլե յաման,
Քամին էկավ երան-երան,
Վա՛յ, դլե յաման,
Գյամին հասավ ծովու բերան,
Յաման, յաման:
Դլե յաման,
Քամին էկավ, առավ բերդին,
Վա՛յ, դլե յաման,
Քո սեր կաթավ մեջ իմ սրտին,
Յաման, յաման:

Գարուն ա

Գարուն ա, ձուն ա արել
Վա՛յ, լե, լե, վայ, լե, լե,
Վայ, լե, լե, լե, լե,
Իմ յարն ինձնից ա սառել,
Ա՛խ, չորնա, վա՛խ, ա՛յ յար,

Չար մարդու լեզուն:
Քամին փչումա պաղ-պաղ,
Լերթ ու թռչս անում ա դաղ:
Յար, ինձ բեմուրազ արիր:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ

Հայոց արքա Արտավազդ Երկրորդը, ըստ Պրոտարքոսի վկայության, դրամատուրգ էր և հելլենիստական մշակույթի ու թատրոնի մեծ սիրահար: Դեռևս սրանից երկու հազար տարի առաջ Արտաշատում թատրոն է եղել, ու այնտեղ բեմադրվել են հույն և հայ հեղինակների գործերը, և այդ գործերից մեկի բեմադրության ժամանակ բեմ է հանվել հռոմեացի նշանավոր գորավար Կրասոսի գլուխը: Խիզախ գլադիատոր Սպարտակին կրկես տանող գոռոզ Կրասոսը «Հնձեց այն, ինչ ցանել էր»՝ թատերական բուտաֆորիա դառնալով հեռավոր Հայաստանի մայրաքաղաքում, որին հռոմեացիները, նրա անառիկության պատճառով, «հայկական Կարթագեն» էին կոչում: Արտաշատի այդ ներկայացումը պատմության մեջ հիշատակված առաջին թատերական ներկայացումն էր Հայաստանում, որը տեղի է ունեցել մեր թվարկությունից առաջ, 53 թվականի մայիսի 7-ին:

Իսկ հայոց Արտավազդ Երկրորդ թագավորին /որը նաև հայոց առաջին գրողն էր/ տարիներ անց Կրասոսին հաջորդած Մարկոս Անտոնինոսը գերեվարեց և, Եգիպտոս տանելով, նվիրեց Կլեոպատրա թագուհուն: Նա կարող էր արքայավայել ապրել թագուհու պալատում, բայց գերադասեց գլխատվել, քան ապրել որպես որևէ մեկի գերին:

Քչերը գիտեն, որ Վենետիկի Սան Մարկո հրապարակի սյան վրա կանգնած առյուծը, որը դարեր շարունակ խորհրդանշում է Վենետիկը, իրականում հայոց վերջին թագավորության՝ Կիլիկիայի առյուծն է, որն ի պահ էր տրված Վենետիկին՝ մեր արքայության կործանումից հետո: Հայոց արքայական խորհրդանիշների ընդունման արարողությունը, որի համար դուքսը մեծ շքախմբով, նավակներով դուրս էր եկել ծով, հայ պատվիրակներին հանդիպելու համար, վերածվեց հետո աշխարհահռչակ վենետիկյան կարճավալի, որի իրական շարժառիթն արդեն վաղուց մոռացել են և՛ Վենետիկում, և՛ Հայաստանում: Մնացել է միայն դուքսի ծխական ելքը նավակով բաց ծով, որպես կարճավալի մեկնարկի նշան, և ոսկե մատանին՝ ծովի մեջ զցելու ավանդույթը, իբրև հայոց թագի և խորհրդանիշների հետ փոխանակման պատասխան նվերը՝ ծովին, քանի որ Կիլիկիան այլևս չկա:

Ձիու ցատկի համաշխարհային ռեկորդ

Վանի քարաժայռերի և Վարազա լեռների միջև գտնվող հարթավայրում, որը ծառայել է և որպես ձիարշավարան, պահպանվել է Մենուա արքայի թողած հետևյալ արձանագրությունը. «Հենց այս տեղից նժուգը՝ Արծիբե անունով, Մենուայի տակ ցատկեց քսաներկու կանգուն»։ Կանգունը երկարության չափ է, որը հավասար է 51,8 սմ։ Այս հաշվով Մենուայի նժուգը ցատկել է 11մ 39 սմ։ Ուրարտական Արծիբե նժուգի ցատկը մնացել է չգերազանցված մինչև 1975թվականը, երբ գերմանացի Կ. Բերգմանը իր Սվինգեր նժուգով ցատկել է 12մ 16սմ։

Հայկական առաջին օրացույցը, որը կոչվում էր «Պարզատունար», լույս է տեսել 1513 թվականին, Վենետիկում՝ Հակոբ Մեղապարտի ստեղծած հայկական առաջին տպարանում։

13-րդ դարում Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» ապօրինի կերպով ծառ կտրելու համար տուգանում էին այլ կերպ, ավելի խիստ, քան ձերբակալելը։ Եթե որևէ մեկը զայրույթի պահին զնա և կտրի ուրիշի պտղատու ծառը, ապա օրենքը պահանջում է, որ ստիպեն նրան նորից ծառ տնկել... Ինչպիսի տոն և տակտ կա օրենքի մեջ։ Օրենքը գրված է մարդու համար և ոչ թե մարդու դեմ։ Տեքստի մեջ հարգանք կա մարդու հանդեպ։

Մշո դաշտի առաջին բնակիչը, ըստ ավանդության, եղել է Սիմ նահապետի սերունդը, որը ջրհեղեղից հետո բնակություն է հաստատել Մշո թիկունքի լեռներից, որոնք նրա անունով կոչվեցին Սիմ։ Սիմ նահապետի կրտսեր որդի Տարբանին բաժին ընկավ այդ լեռների առաջ տարածված հարթությունը, որն էլ նրա անունով կոչվեց Տարբանի կամ Տարոնի դաշտ։

Կոստանդնուպոլիսը՝ երբեմնի հզոր Բյուզանդիայի մայրաքաղաքը, 324 թ. հիմնել էր Կոստանդին Մեծը։ Դարերի ընթացքում պարսիկների, արաբների, ռուսների, խաչակիրների և թուրքերի կողմից ասպատակությունների ենթարկվելով՝ Բյուզանդիան բաժան-բաժան էր եղել, և 15-րդ դարում նրա տարածքն այնքան էր փոքրացել, որ ամփոփվել էր լոկ մայրաքաղաքի մեջ։ Երբեմնի հզոր երկիրը դարձել էր քաղաք-պետություն։ 1453 թ. ապրիլի 5-ին սուլթան Մահմուդը գրավեց Կոստանդնուպոլիսը։ Հաջորդ օրը դիակների բլուրների մեջ գտնում են արևելահռոմեական կայսրության վերջին տիրակալի դիակը։

Օրվա երկրորդ կեսին, երբ ջարդն ու թալանը ավարտվել էին, սուլթան Մահմուդը հպարտ, բավարարված ու ինքնագոհ, շրջապատված թիկնա-

պահների ու գորապետների շքախմբով, մտավ քաղաք: Նա նմույզն ուղղեց դեպի սուրբ Սոֆյայի տաճարը՝ վայրագ հայացքն ուղղած նրա շողշողուն և անմատչելի գմբեթին: Հիացումով ու հուզումով նա դիտեց հոյակերտ շինությունը, ապա կանչեց իմամին՝ քրիստոնեական տաճարում առաջին անգամ հնչեցնելու թուրքական նամազը... Հաջորդ օրը հանվեց սուրբ Սոֆյայի հսկա խաչը, որի ընկնելու տխուր ձայնը ասես արձագանքեց ողջ քրիստոնյա աշխարհում՝ ազդարարելով ավերիչ գործության մուտքը Եվրոպա: Ավերիչ գործություն, որ դարեր շարունակ պիտի դառնար մարդկության չարորակ ուռուցքը:

Ահա թե ինչպես թուրքերը Եվրոպայի հաշվին ընդարձակեցին իրենց տիրույթները, իսկ Կոստանդնուպոլիսը վերանվանեցին Ստամբուլ, որը թուրքերենով նշանակում է իսլամ բուլ-իսլամի քաղաք:

«Մարսելեզ»

Օրհներգի խոսքի և երաժշտության հեղինակը Ռուժե դե Լիլն է, ով գրել է այն մի քանի ժամում, 1792թ ապրիլի 25-ին: Այն դարձել է Ֆրանսիայի ազգային հիմնը: Մարսելցիները, այդ երգը երգելով, Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ օգնության հասան Փարիզին: Պատերազմական հիմն է, որ կոչ է անում կռվի դուրս գալ ժողովրդի և հայրենիքի թշնամիների դեմ: Թափորը միացավ երգող տղային, և երգը կրկնվեց մեկ, երկու, բազում անգամներ: Դա բավական էր, որ հաջորդ օրը ամբողջ Մարսելը երգեր, ու աննշան երաժիշտ Ռուժե դը Լիլի ստեղծագործությունը դառնար մարսելյան կամավորների քայլերգը և, ի պատիվ քաղաքի, անվանվեց «Մարսելեզ»: Հուլիսի 30-ին կամավորների զնդերը միավորվեցին Փարիզում: Նրանց հետ մայրաքաղաք հասավ «Մարսելեզը»: Երկու-երեք ժամից ողջ Փարիզը երգում էր նմանը չունեցող ազատության հիմնը: Այնուհետև ոչ մի հանդիսություն, տոնակատարություն, ճակատամարտ չէր սկսվում առանց «Մարսելեզի»: Ամենուրեք, ուր մարտնչում էր Ֆրանսիան, թևածում էր հեղափոխության հիմնը: Մինչդեռ անհայտ ու անանուն Ռուժե դը Լիլը ջանասիրաբար գծում էր խրամատների և ամրությունների գծագրեր: Ամբողջ Ֆրանսիայում ոչ ոք չէր խոսում ինժեներական գործերի կապիտանի մասին: Աննախադեպ փառքը բաժին էր ընկնում միայն երգին: Այն այնքան աստվածային էր, որ ոչ ոքի մտքով չէր անցնում վերագրել որևէ անհատի: Հեղափոխական քայլերգ գրող կապիտանն ինքը ամենևին էլ հեղափոխական չէր: Ընդհակառակը, մոլի միապետական էր, հեղափոխության անհաշտ թշնամի և պատրաստ էր ուժերը տալ հանուն Բուրբոնների գահի

ամրության: Եվ երբ մարսելցիները, Փարիզի հասարակայնությունը և Ֆրանսիայի առաջադեմ մարդիկ կործանում էին Թյուրլըի պալատն ու գահընկեց անում թագավորին, Ռուժե դը Լիլը կանգնում է միապետության կողմնակիցների կողքին: Իր իսկ ստեղծած երգը դուրս էր եկել իր դեմ, խենթացրել ամբոխներին, սասանել գահը, կործանել հինը: Ռուժե Դը Լիլը և «Մարսելյեզը» ատում էին իրար: Նրանք հակառակորդներ էին: Մենության մեջ էլ 1836 թ. նա մեռավ: Նրա անունը երկար մնաց անհայտության մեջ, և միայն առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ «Մարսելյեզը» վաղուց արդեն դարձել էր Ֆրանսիայի հիմնը, կառավարության հրամանով Ռուժե Դը Լիլի աճյունը տեղափոխեցին Փարիզ և ամփոփեցին Նապոլեոն Բոնապարտի կողքին: 220 տարի առաջ աշխարհը լսեց «Մարսելյեզ»-ը՝ Ֆրանսիայի պետական օրհներգը, որը, հավանաբար, բոլոր ժամանակների ամենահայտնի հայրենասիրական երգն է:

Ավելի քան 200 տարի է՝ աշխարհը ընդունում է «Մարսելյեզ»-ը ոչ այնքան որպես ռազմական, որքան հեղափոխական երգ: Հայրենիքում այն 2 անգամ արգելվել է՝ մինչ վերականգնվելը որպես պաշտոնական օրհներգ: Ֆրանսիան առաջին պետությունն է, որ ստացել է պաշտոնական օրհներգ:

Ֆրանսիայի խորհրդանիշը Էյֆելյան աշտարակն է, ԱՄՆ-ի խորհրդանիշը՝ Ազատության արձանը՝ կնոջ տեսքով, Հայաստանինը՝ Արարատ լեռը, Հնդկաստանինը՝ Թաջ Մահալ դամբարանը /նշանակում է թագի պալատ, ունի 74 մ բարձրություն/, Չինաստանի խորհրդանիշը՝ Չինական մեծ պարիսպը /երկար. 6700կմ, այսօր պահպանվում է մի փոքր հատված/:

«**Օսկար**» մրցանակը ԱՄՆ-ում շնորհվում է լավագույն ֆիլմերի դերակատարներին, ռեժիսորներին և սցենարիստներին: Հատուկ մրցանակի համար պատրաստված փոքրիկ արձանիկը առաջին անգամ տեսնելով՝ կինոյի ամերիկյան գրադարանավարուհի միսիս Մարգարետը բացականչեց. «Ի՞նչ նման է իմ հորեղբայր Օսկարին»: Եվ այդ անունով էլ կնքվեց մրցանակը:

1902 թ. Մարտինիկա կղզում ժայթքել է Մոնպեյե հրաբուխը: Շիկացած ամպը ծածկել է Մեն-Պիեռ քաղաքը, որը 30000 բնակիչ ուներ: Բոլորն էլ մնացել են լավայի տակ:

Մեր թվականության 79 թվականի օգոստոսի 24-ին ժայթքեց Վեգուվը, և Պոմպեյ քաղաքը իսպառ ջնջվեց երկրի երեսից:

Մահմեդականությունը առաջացել է 7-րդ դարում: Մեքքան դարձել է Մուհամմեդի հետևորդների սուրբ քաղաք. այստեղ գտնվում է իսլամական աշխարհի ամենամեծ կառույցը՝ Արգելված մզկիթը. այս մզկիթն այցելողներին անվանում են հաջի:

Նեֆերտիտին եգիպտոսի չէ: Նրա ամուսինը Ամինհուսեփ Երրորդն է, իսկ հետո՝ Չորրորդը: Նա ունեցավ 6 աղջիկ և, քանի որ տղա չունեի, ամուսնուն առաջարկեց ամուսնանալ իր 3-րդ աղջկա հետ: Նեֆերտիտիի ձախ աչքը կույր էր:

Կլեոպատրան Ալ. Մակեդոնացու ամենամտիկ զինակից Պտղոմեոսի դուստրն էր: Ենթարկվելով եգիպտական սովորությանը՝ հոր մահից հետո 16-ամյա Կլեոպատրան ամուսնացավ 13-ամյա եղբոր՝ Պտղոմեոսի հետ:

Արաբ վաճառականները, այցելելով ժամանակի համար հայտնի գրեթե բոլոր երկրները՝ Իսպանիայից մինչև Հնդկաստան, Չինաստան ու Ճապոնիա և Սկանդինավյան թերակղզուց մինչև Մադագասկար, նպաստեցին աշխարհի մասին նոր գիտելիքների ձեռքբերմանը: Արաբների շնորհիվ եվրոպացիներին հայտնի դարձան հնդկների և չինացիների նվաճումները: Օրինակ՝ արաբների միջոցով են մեզ հասել արաբական թվանշանները, մինչդեռ իրականում դրանք ստեղծել են հնդիկները: Հնդիկներին է պատկանում նաև շախմատի գյուտը: Իսկ թղթի, թղթադրամի, վառողի, շաքարի, կողմնացույցի, մետաքսի, ճենապակու, երկրաշարժը գրանցող սարքի, գրատպության գյուտերի հեղինակը չինացիներն են համարվում: Եվ պատահական չէ, որ հայերենում ամենայն զեղեցիկն ու յուրահատուկը անվանում են չնաշխարհիկ, այսինքն՝ «չին աշխարհից բերված»:

Թևալոր խոսքերի աշխարհում. «Կոլումբոսի ձու»

Կոլումբոսի աներևակայելի հաջողությունը նրան սկզբնական շրջանում մեծ փառքի ու մեծարանքի արժանացրեց: Բայց հետագայում աստիճանաբար սկսեցին թերագնահատել նրա գործը: Մի օր, երբ Կոլումբոսը ճաշի էր հրավիրված կարդինալի մոտ, խոսք է բացվում Ամերիկայի հայտնագործման մասին: Հյուրերից մեկն ասում է, թե դա այնքան էլ մեծ գործ չի եղել: Սեդանին խաշած ձու է դրված լինում: Կոլումբոսը ներկաներին առաջարկում է ձուն ծայրի վրա կանգնեցնել: Բոլորը փորձում են, բայց ոչ ոք չի կարողանում: Կոլումբոսը վերցնում է ձուն, ծայրը խփում, տափակեցնում և կանգնեցնում է ամանի մեջ: «Պահ, այդպես հո մենք էլ կանեինք», - ձայն են տալիս ներկաները: Կոլումբոսը ժպտալով պատասխանում է. «Գիտեմ, որ դուք էլ կարող էիք, բայց տարբերությունն այն է, որ ես առաջինը արեցի»:

Լեոնարդոյի հայելային գիրը

Լեոնարդոյի գլխում անընդհատ նոր մտքեր ու գյուտեր էին ծնվում: Նա սովորություն ուներ իր բոլոր մտահղացումները գրի առնել ու գծանկարել օրագրերում: Միայն թե նրա գիրը սովորական չէր: Նա վախճանում էր, որ իր մտքերը կգողանան և խուսափելով դրանից՝ գրառումները կատարում էր աջից ձախ, դրանք քողարկելու համար օգտագործում իր իսկ ստեղծած ծածկագրերն ու թվագրերը: Միայն հայելին է, որ հնարավորություն է տալիս կարդալ դրանք հակառակ, այսինքն՝ ճիշտ շարադրությամբ:

Մեծ խտլացին շուրջ 7000 էջ կազմող գաղտնագրված ձեռագրեր է թողել, որոնց վերծանումից պարզվել է, որ Լեոնարդոն այցելել է Հայաստան և այդ ճամփորդության մասին մտադիր է եղել մի ամբողջ գիրք գրել...

«Չոկոնդա» կամ «Մոնա Լիզա» նկարը նման է Լեոնարդոյի մորը՝ Կատերինային, որը շատ նման էր իրեն, այդ պատճառով շատերը կարծում էին, թե դա ինքն է: Լեոնարդոն հետագայում ավելացրեց հեռապատկերում երևացող բնանկարը՝ մոր ծննդավայրի լեռները:

Հեռաքրքիր դեպքեր և բացատրություններ

Մարդիկ շատ վաղուց ականատես են եղել սուր ծայրեր ունեցող մարմինների՝ նիզակների, եկեղեցիների խաչերի, մարդու մագերի, ծառերի ճյուղերի, թռչունների կտուցների ծայրերին կամ լեռների սուր գագաթների բռնկվող վառ կապտավուն բոց ունեցող կրակների առաջացմանը: Դարերի ընթացքում այս կրակների մասին տարբեր ժողովուրդների մոտ ստեղծվել են ավանդազրույցներ:

Ըստ հայկական ավանդության, երբ Գրիգոր Լուսավորիչը գնում է Արագածի կատարին «նարեկ քաղելու»՝ աղոթելու, մի անպարան կանթեղ նրան լույս էր տալիս /հիշենք Հ. Թումանյանի «Լուսավորչի կանթեղը» լեզենդը/:

«Էլմայի կրակները» տարբեր ժամանակներում հայտնի են եղել տարբեր անուններով: Այս անվանումը առաջ է եկել միջին դարերում, այն պատճառով, որ հաճախ այն երևացել է Իտալիայի Սուրբ Էլմայի եկեղեցու գմբեթի խաչի ծայրերին: Գիտական բացատրությամբ այդ կրակները պարպման հետևանքով առաջացած կայծեր են:

«Սօս»

Անգլերենում նշանակում է՝ «Փրկեցեք մեր հոգիները»: 1784 թ.-ին ճապոնական մի նավ է խորտակվում Խաղաղ օվկիանոսում, իսկ նրա վրա գտնվող 40 նավաստիները ապաստան են գտնում մի անծանոթ

կղզում: Նավաստիների՝ օգնության կանչող շիշը ճապոնական ափ հասավ միայն 150 տարի հետո՝ 1935 թվականին: 1906 թ.-ին, ռադիոյի հայտնագործումից հետո, հաստատվեց ադետի միջազգային ազդանշանը՝ «սօս», որի օգնությամբ առաջին անգամ 1912թ.-ին փրկվում են վթարի ենթարկված «Տիտանիկ» նավի 712 ուղևորներ:

Գիտական որոնումներ

Գիտական որոնումները միշտ ավելի շատ բան են տալիս, քան ծրագրված է լինում որոնել: Այսպես՝ Կոլումբոսը Հնդկաստան տանող ճանապարհին հայտնաբերեց Ամերիկան, Գալվանին դիտարկեց գորտի վրա կատարված փորձերով հիմք դրեց հոսանքի քիմիական աղբյուրների տեսությանը, Գալիլեյը Պիզայի մայր եկեղեցու առաստաղից կախված ջահերի ճոճումներից հանգեց ժամացույցի գաղափարին: Խնձորի ընկնելը հիմք ծառայեց, որ Իսահակ Նյուտոնը ստեղծի տիեզերական ձգողականության տեսությունը, դոկտոր Յունգը լույսի բեկման հիանալի գյուտը կատարել է օճառի գույնզգույն պոպոզակների դիտարկումից:

Ծաղիկների մասին

Հնդկական դիցաբանության մեջ բերքատվության աստվածուհին լոտոսի ծաղկի վրա լողում-անցնում է օվկիանոսը: Ըստ դիցաբանության՝ լոտոսի ծաղիկները փրկարար նավ են օվկիանոսում խեղդվողի համար:

Եգիպտական հին առած կա՝ եթե շատ են լոտոսները ջրում, բերքառատություն կլինի: Եգիպտոսում լոտոսը սուրբ ծաղիկ է համարվել: Եգիպտոսի խորհրդանշանը լոտոսի ծաղիկն է: Հին Հունաստանում ջրաշուշանը գեղեցկության ու պերճախոսության խորհրդանիշն էր: Սլավոնները ջրաշուշանը համարում էին ջրահարսի ծաղիկ, հավատում էին, որ այն օգնում է ճանապարհորդին, պահպանում փորձանքից:

Ամեն գարուն մենք մանուշակի փնջեր ենք նվիրում մեր սիրելի մարդկանց, բայց միջնադարում այդ ծաղիկն անբարյացակամության նշան էր, զանգակածաղիկը՝ շատախոսության, կակաչը՝ հպարտության, վարդը՝ սիրո, տատասկափուշը՝ նեցուկի, բարդին՝ վախկոտության, եղինջը՝ անվճռականության, անմոռուկը՝ հարատևության, հավամբզին՝ միայնության: Որոշակի նշաններ էին ծաղիկների գույները՝ կարմիրը՝ սիրո, կանաչը՝ հույսի, դեղինը՝ դավաճանության, երկնագույնը՝ հավատարմության, սևը՝ տխրության: Հին Հունաստանում, եթե մեկին արմավենու ոստ էին ուղարկում, շնորհավորում էին նրա հաղթանակը կամ ուրախացնում հաղթանակի լուրով: Չիթենու ոստը խաղաղություն էր ավետում, կաղնու ոստը հերոսության նշան էր, դափնու ոստը՝ փառքի:

Ծաղիկների թագուհին

Վարդերի 6 հազար տեսակ կա աշխարհում, նախահայրը մեկն է՝ վայրի մասրենին... Հնդկական հին ասքն ասում է, որ գեղեցկուհի աստվածուհի Լակշմին ծնվել է վարդի կոկոնից: Հռոմեացի զինվորները սահավարտի փոխարեն վարդի պսակներ էին հագնում, Ֆրանսիայում հին սովորություն կա. ամեն տարի երկրի ամենագեղեցիկ աղջկան ընտրել վարդի թագուհի: Նրանք գլխարկի պես հագնում էին հատուկ վարդե պսակ, որ կոչվում էր **շապել**: Այդ բառից է ծագել ֆրանսիական շապո, հետագայում և ռուսերեն **շլյապա** բառը՝ **գլխարկ**:

Արևի ծաղիկը

Նայում է արևին ու նրա հետևից պտտում իր ոսկեվարս գլուխը: Հին Մեքսիկայում ոսկուց արևածաղիկ էին ձուլում և խոնարհվում նրան: Այն հնում միայն հողի ու արևի խորհրդանիշ էր, գեղեցկություն, և մշակվում էր իբրև դեկորատիվ բույս: Հետո պարզվեց, որ արևածաղիկի սերմերից կարելի է ստանալ բուսական յուղ:

Կարկաղե թեյը ստացվում է հիբիսկուս բույսի չորացրած ծաղկաբաժակներից: Հիբիսկուսի ծաղիկը Հայիթի կղզի-պետության խորհրդանիշն է: Մալագիայում համարում են, որ սերտաճած ծաղկաթերթերը խորհրդանշում են իսլամի հինգ պատվիրանները, հնդիկները հյուսում են ծաղիկը հարսանեկան պսակի մեջ: Բույսի տարածվածության մասին են վկայում այլ անվանումները՝ «փարավոնների ըմպելիք», «Սուդանի վարդ», «Վենետիկի տուղտ», «կարմիր ավելուկ» և այլն:

Ըստ «Ֆենշույ» ուսմունքի՝ շինական վարդը լցնում է բնակարանը դրական էներգիայով, ամրացնում է ամուսնական կապերը: Հիբիսկուսը խթանում է ֆիզիկական և մտավոր ակտիվությունը, տրամադրում ստեղծագործ աշխատանքի: Հայտնի է, որ բույսերը հաղորդակցվում են միմյանց հետ որոշակի հաճախականություն և երկարություն ունեցող էլեկտրամագնիսական ալիքների և ֆիտոնցիդների միջոցով: Հետաքրքիր է, որ գրեթե անհոտ ծաղկի կողքին թույլ, հիվանդ բույսերը կարծես վերակենդանանում են, ինչը վկայում է, որ բույսն ունի հզոր ատրա՝ բարենպաստ դրական դաշտ

Ոսկե խնձորը

Մի ժամանակ մարդիկ պոմիդոր չէին գործածում. համոզված էին, որ թունավոր է և աճեցնում էին ոչ թե բանջարանոցում, այլ արևկող սենյակում, պալատներում՝ որպես դեկորատիվ բույս: 100 տարի առաջ մարդիկ գլխի ընկան, թե ինչքան համեղ ու օգտակար են այդ բույսի պտուղները: Եվ գեղեցիկ անուն տվին՝ **պոմոդորո**, որ իտալերեն նշանակում է

նսկե խնճոր: Ահա մի բույս, որը նախկինում դեկորատիվ է եղել և համարվել է թունավոր:

Կարտոֆիլի ծաղիկը՝ թագուհու մազերի մեջ

Ժամանակին իր մազերը կարտոֆիլի ծաղիկներով է զարդարել մի իսկական թագուհի: Կարտոֆիլի հայրենիքը Ամերիկան է: Երբ դեռ ոչ մի եվրոպացի այդ բույսը չէր տեսել, Ֆրանսիայի թագուհի Մարի-Անտուանետան, վարսերը կարտոֆիլի ծաղիկներով պճնված, դուրս եկավ պալատական երեկույթի: Եվրոպայում կարտոֆիլն առաջին անգամ սկսեցին մշակել ոչ թե գեղջուկի բակում, այլ արքայական պալատի առաջ, ծաղկաթմբերում, որպես դեկորատիվ բույս:

Մոխը՝ գրահ

Տյան-Շանի լեռներում այնքան ծաղիկ է աճում, որ չինացիներն այդ լեռն անվանում են Ջունգ-լին, որ իրենց լեզվով նշանակում է Մոխի լեռներ: Հնեաբան գիտնականները եզրափակում են բուրգերի վրա արված փորագրությունների մեջ սոխ են նկատել: Նշանակում է՝ մարդիկ այդ բույսը մշակել են դեռևս 5 հազարամյակ առաջ: Մոխը շատ օգտակար է, այն գործածում են նաև որպես սպեղանի: Միջին դարերում այն հրաշագործ են համարել: Հին Հունաստանի և Հռոմի բանակներում զինվորների ճաշի մեջ առատորեն սոխ էին լցնում՝ մտածելով, որ այն ուժ, հերոսություն ու եռանդ է ներշնչում: Նույնիսկ երկաթե գրահ հագած զինվորները իրենց կրծքի վրա սոխ էին պահում՝ համոզված, որ սոխե գրահը իրենց կփրկի նետի ու սրի հարվածներից:

Հին Հռոմում ամեն անգամ, երբ Կեսարը պատրաստվում էր Ծերակույտի /Սենատի/ շենք մտնել, նրա գլխին դափնեպսակ դնողը ինչ-որ բան էր շնչում Կեսարի ականջին...Հետո, երբ նրան հարցնում են՝ ինչ ես քչփչում Կեսարի ականջին, դափնեպսակ դնող ստրուկը պատասխանում է.

- Ես Կեսարի խնդրանքն եմ կատարում...
- Կեսարի՞...- զարմանում են հետաքրքրվողները.
- Կեսարը ի՞նչ կարող էր խնդրել ստրուկից.

-Ամեն անգամ դափնեպսակը նրա գլխին դնելիս, նրա ականջին շնչում եմ,- հիշի՛ր, դու սովորական մահկանացու ես, Աստված չես...

Այդ հիշեցումն էր խնդրել Կեսարը ստրուկից:

Հայտնի մարդկանց տարօրինակությունները

Ասում են՝ հանճարները պարտադիր պետք է մի փոքր խելագար, տարօրինակ լինեն:

Օնորե դը Բալզակ

Բալզակն իր կյանքը չէր պատկերացնում առանց սուրճի: Գրողն օրական խմում էր մինչև 50 բաժին սուրճ՝ առանց շաքարի և կաֆի: Հաշվել են, որ «Մարդկային կատակերգությունը» գրելու ընթացքում Բալզակը խմել է մոտ 15000 բաժակ սուրճ:

Լև Տոլստոյ

Ռուս գրողը սիրում էր ինքնուրույն հնձել խոտը, փայտ ջարդել: Սակայն դա արել է ոչ միայն գյուղական կյանքի հանդեպ սիրո համար: Կենսագիրները նշում են, որ առանց ֆիզիկական աշխատանքի գրողը զիջերը դառնում էր նյարդային և չէր կարողանում քնել: Բացի այդ, նա սիրում էր երկարաճիտ կոշիկներ կարել՝ նվիրելու համար:

Չառլզ Դիկկենս

Անգլիացի գրողն ունեցել է հալյուցիանացիաներ, նա «շփվում» էր իր ստեղծագործությունների հերոսների հետ: Եվ եթե նրանք իրեն ձանձրացնում էին, սպառնում էր, որ այլևս չի գրի իրենց մասին: Բացի այդ, Դիկկենսը սիրում էր շատ ժամանակ անցկացնել դիակլիզարաններում: Հայտնի է նաև, որ նրան 1858-ին «գերհոգնածության» համար նշանակել են հատուկ սննդակարգ, որում կարևորվել է հատկապես յուրաքանչյուր օր ժամը 15.00-ին 0.5 լ շամպայն խմելը:

Ալեքսանդր Պուշկին

Նա շատ էր սիրում լիմոնադ: Այդ ըմպելիքը նրան ամենից լավ էր թարմացնում: Իսկ աքսորավայրում սիրում էր ատրճառակով կրակել պատին: Եվ նա դա անում էր մերկ՝ անկողնու վրա պառկած:

Գի դը Մոպասան

Ֆրանսիացի գրողը տանել չէր կարողանում Էյֆելյան աշտարակը: Սակայն ընթրում էր այնտեղ՝ բացատրելով, որ դա միակ վայրն է, որտեղից չի երևում աշտարակը:

Ջորջ Բայրոն

Անգլիացի ռոմանտիկ պոետն այդքան էլ ռոմանտիկ չի եղել: Նրա սիրառատությունը դեռևս կենդանության օրոք լեզենդ է դարձել: Պատմում են, որ Վենետիկում անցկացրած մեկ տարվա ընթացքում նա հասցրել է երջանկացնել 250 կնոջ: Բայրոնը շատ էր բարկանում սովորական աղամանի տեսքից:

Նիկողայ Գոգոլ

Թեև տարօրինակ լինելու «փառքին»՝ Գոգոլը ոչ մի հոգեկան խանգարում չի ունեցել: Սակայն առանձնահատկություններ ունեցել է: Նախ՝ նա շատակեր է եղել: Ժամանակակիցներին «վախեցրել» է նրա ուտելու ձևը՝ ագահաբար, ափսեի վրա թեքված: Նրա գրպաններում միշտ եղել է քաղցրավենիք: Գոգոլը սիրում էր նաև կերակուր պատրաստել: Գոգոլը վախենում էր ամպրոպից, մարդամոտ չէր և սիրում էր ինքնուրույն վերանորոգել իր հագուստը: Նա վախենում էր ողջ-ողջ թաղված լինելուց: Քնում էր նստած վիճակում: Հայտնի է նաև, որ գոգոլը երբեք հարաբերություններ չի ունեցել կանանց հետ: Դա եղել է նրա գիտակցված ընտրությունը:

Նորբերտ Վիներ

Կիբեռնետիկայի հայր Նորբերտ Վիները հայտնի էր իր աննախադեպ մոռացկոտությամբ: Մի անգամ, երբ նրա ընտանիքը տեղափոխվում է նոր բնակարան, կինը թղթի վրա գրում է իրենց նոր հասցեն և դնում այն Վիների դրամապանակի մեջ՝ վստահ լինելով, որ ամուսինն անպայման կմոռանա նոր տան ճանապարհը: Չնայած դրան, երբ աշխատանքի ժամանակ նրա գլխում հերթական հետաքրքիր միտքն է ծագում, Վիները դրամապանակից հանում է հասցեով թուղթը, վրան մի քանի բանաձև գրում, ապա հասկանալով, որ դրանք սխալ բանաձևեր էին, թուղթը գցում է աղբարկղը: Երեկոյան նա, առանց եկար-բարակ մտածելու, գնում է իր նախկին տան հասցեով: Հին բնակավայր հասնելուն պես Վիները հասկանում է, որ այնտեղ էլ ոչ ոք չի ապրում, հանճարեղ մաթեմատիկոսն այլայլված դուրս է գալիս փողոց՝ չիմանալով, թե ինչ պետք է անի: Հանկարծ նրա ուղեղում միտք է փայլատակում. նա մոտենում է փոքր-ինչ հեռվում կանգնած աղջկան և հարցնում. «Ներեցե՞ք, հնարավոր է՝ Դուք ինձ հիշում եք, ես պրոֆեսոր Վիներն եմ: Իմ ընտանիքը մի քանի օր առաջ տեղափոխվել է այստեղից այլ բնակարան: Դուք չէի՞ք կարող ասել, թե կոնկրետ ո՞ր ենք մենք տեղափոխվել»: Պրոֆեսորին ուշադիր լսելուց հետո աղջիկը պատասխանում է. «Այո՛, հայրիկ, մայրիկն այդպես էլ կարծում էր, որ դու կմոռանաս»:

Ալբերտ Էյնշտեյն

Ալբերտ Էյնշտեյնը սիրում էր Չարլի Չապլինի ֆիլմերը և մեծ հավակրանք ուներ նրա ստեղծած հերոսի նկատմամբ: Մի անգամ Չապլինին ուղարկած նամակում նա գրել է. «Ձեր «Ոսկե տեղ» ֆիլմը հասկանալի է աշխարհում բոլորին, և Դուք մեծ մարդ կդառնաք: Էյնշտեյն»: Սրան Չապլինը պատասխանում է. «Ես Ձեզնով ավելի եմ հիանում: Ձեր

հարաբերականության տեսությունն աշխարհում ոչ ոք չի հասկանում, իսկ Դուք, այնուամենայնիվ, դարձաք մեծ մարդ: Չապլին»:

Հատվածներ մեծերի սիրային նամակներից

... Նամականին օգնում է ճանաչելու մարդկային կերպարը, աշխարհայացքն ու աշխարհընկալումը, ճանաչելու գրողի, արվեստագետի փոխհարաբերությունների շրջանակը, բացահայտելու այն սկզբունքները, որոնցով ղեկավարվում է մարդկային հարաբերություններում շատ արժեքներ գնահատելիս: Գրողի նամակները օգնում են գնահատելու նրա ստեղծագործության մի շարք կողմերը, գտնելու նրա ստեղծագործական աշխարհը սնող տրամադրությունները, որոնք նամակների մեջ արձակ շարադրանք են՝ բանաստեղծական մտապատկերների բովանդակությամբ: Սերը միայն զգացմունք չէ, այլ նաև արվեստ է... Կնոջ հետ հաղորդակցվելու մեծ արվեստ...զարմանալի շնորհ, որին տիրապետել են բազմաթիվ տղամարդիկ...

Բառեր... Բառեր... Բառեր... Սիրահարված տղամարդկանց քնքուշ խոստովանություններ , որոնք խելքամաղ կանեն ցանկացած կնոջ, բառեր, որոնց առջև հալվում է կինը՝ պատրաստ ներելու...համբերելու...արդարացնելու... Բառեր, որոնք նրան պարզապես ապրելու ուժ են տալիս ... և ապրեցնում են...

Իսահակյան՝ Շուշանիկ Մատակյանին

Իսահակյանի սիրո քնարը ուսումնասիրելիս անհրաժեշտ է ծանոթությունը նրա՝ Շուշանիկ և Աննա Մատակյաններին ուղղված նամակներին: Միայն այդ դեպքում հնարավոր է հասկանալ այն մեծ տառապանքն ու տանջանքը, սիրո մորմոքն ու ցավը, որը ապրել է մեծ բանաստեղծը: Նամակներից տեղեկանում ենք, որ Իսահակյանը մեծ սեր է տածել Շուշանիկ Մատակյանի հանդեպ, սակայն վերջինս, չնայած փոխադարձ սիրուն, մոր հորդորով ամուսնացել է ուրիշի հետ: Հոգին վեհ ու լուսե երազներով լի՝ բանաստեղծն ապրում է խորը հիասթափություն, սիրո ցավից հոգին մորմոքող թախիծը անվերջ տանջում է նրան, հոգին պարուրում կյանքի դառնության գորշ մրուրով: «Դու մերժեցիր ինձ, չկանչեցիր ետ: Եվ անցան տխուր տարիներ տխուր. Եվ հեռվից վախժով հույսերից թափուր, Նայում էի քեզ, մենակ վշտիս հետ...»:Սակայն բարդ է մարդկային հոգին, առավել քան արժանապատվությունը ու ինքնասիրությունը տրորված տղամարդու հոգին... Ամուսնական առազաստում երջանկություն չգտնելով՝ երեք երեխաների մայր Շուշանիկը վերադառնում է Իսահակյանի մոտ՝ նրանից չմարած սիրո քնքշանք խնդրելով: Տասներեք տառապանքով ու չմարող ցավով լեցուն տարիներ, անհազ

որոնումի ու անդարձ կարոտի դառն զգացողության տարիներ, հույսերի և հույզերի, կարոտի և սպասման անգութ տարիներ...

«Ա՛խ, ամբողջ տասներեք տարի դու նստել ես ու բռնել իմ ողջ ուղեղը, հոգին ու սրբապղծել իմ ողջ երկինքը... Այժմ դառնաս իմ կինը, ես իսկույն կփախնեմ քեզնից. դառնաս հին Շուշիկը, ես կսպանեմ ինձ՝ չտեսնելու համար տանջանքների այն ծանր շղթան, որ տարիներ ի վեր ինձ կաշկանդեց... Բայց լալիս եմ հիմա, և սրտիցս արյուն է կաթում. Գնա՛, Շուշիկ, Աստված քեզ հետ, ապրիր քո երեխաների համար, ինձ մի՛ անիծիր, իմ անունս երբեք, երբեք մի՛ հիշիր և ոչ մի տեղ, ոչ մի մարդու մոտ, աղաչում եմ քեզ, ինձ թաղիր քեզ համար հավիտյան, ինձ երբեք մի՛ նայիր, ազնիվ խոսք տուր այդպես վարվելու. Ես թող բոլորովին չեղած, չծնված մարդ լինեմ քեզ համար հավիտյան... Պետք չէ հիշել այն տաճարում մի ուրիշ Աստծո անուն, որին այդ տաճարը չի պաշտում, չպետք է այդ տաճարում ուրիշ ձոնի սեղան ու պատկեր դրվի, քո հոգու տաճարից թող ես լինեմ դուրս. ես օտար, չճանաչված Աստված եմ այդտեղ»:

Պարույր Սևակ՝ Սուլամիթային

«Ես համատարած վերք եմ: Եվ սրանք բառեր չեն, այլ փաստ: Ես ամբողջությամբ ճիչ եմ. «Սուլասաա»։ Ես անդիմադրելի լաց եմ: Իմ հոգում թախիծ է: Դե օգնիր ինձ, ախր ես քո հարազատն եմ: Ինձ համար այնպես ծանր է, որ ուզում, ամբողջ սրտով միայն մի բան եմ ուզում. մեռնել: Անկեղծ ասեմ, և ծանրակշիռ. ուզում եմ մեռնել... Դու ինքդ էլ չգիտես, թե որքան թանկ ես ինձ համար, թե որքան եմ սիրում ես քեզ»:

«... Իմ վերջին սեր: Երբեք մի մոռացիր, որ ես քեզ հետ եմ, ես քոնն եմ: Ես սիրում եմ քեզ Մեծ սիրով: Եթե դու Այն ես, ում անվանում եմ Ինքը, ապա իմ սիրո համար ոչինչ չի նշանակում, թե դու ում կսիրես, ում հետ և ինչպես կամուսնանաս, քանի երեխա կունենաս և այլն: Միայն թե մնա այն, ում ես սիրեցի և սիրում եմ ու երբեք մի մոռացիր, որ ես քոնն եմ, որ ես քեզ հետ եմ լինելու, թեկուզ հեռվից, թեկուզ անջատված: Դու գիտես, որ մեզ վիճակված չէ ապրել միասին: Ես գիտեմ, որ կլինեմ քեզ հետ. ահա այս դիվեման է հենց մեր ճակատագիրը: Ընդունիր նրան՝ այդ ճակատագրին ու ապրիր այդպես՝ դժվարին, բայց լուսավոր, սարսափելի, բայց հարուստ, խեղճ, բայց նախանձելի կյանքով: Ես նույնիսկ չեմ հարցնում.

- Դու համաձա՞յն ես: Ես միայն ասում եմ Նրան (Աստծուն).

- Բարեգութ եղիր, թող ամեն բան այնպես, ինչպես կա, երևի մենք նրա հետ ավելիի համար ուժ չգտնենք: Եվ ես ժպտում եմ քեզ, ժպտում եմ այնպես, կարծես թե քեզ համար ցավալի չէ և ինձ համար ցավալի չէ: Քանզի երկու երկնեկ միաժամանակ չի լինում՝ կամ միասին, կամ Մեծ

սեր՝ բաժանման մեջ... Բոլոր դեպքերում, չնայած այս ամենին, ես երջանիկ եմ, քանի որ ունեմ ամենամեծը, ամենակարևորն ինձ համար՝ Սեր: Ես պատրաստ եմ ցանկացած տառապանքի, միայն թե չլինի մի բան՝ հիասթափություն: Եթե հարկ է, խաբիր ինձ, միայն թե մի՛ արա այնպես, որ ես կորցնեմ քեզ՝ հիասթափվեմ»:

Օնորե դը Բալզակ՝ Էվելինա Հանսկայային

«Որքան եմ ուզում անցկացնել օրս քո ոտքերի մոտ...դնել գլուխս ծնկներին քո...անրջել գեղեցիկի մասին...երանության ու զմայլանքի մեջ հաղորդակից անել Ձեզ իմ մտքերին... Իսկ երբեմն՝ ոչինչ չխոսել...լռել՝ սեղմվելով շուրթերով Ձեր հագուստի եզրին...»

Օ՛, իմ սեր, Եվա, ուրախություն իմ կյանքի, իմ լույս գիշերի, իմ հույս, իմ հիացմունք, իմ սեր, իմ անգին, ե՞րբ կտեսնեմ Ձեզ... Թե՞ դա պատրանք է... Արդյո՞ք տեսել եմ ես Ձեզ... Օ,՛ աստվածներ...որքան եմ սիրում հազիվ նկատելի Ձեր հնչերանգը... Ձեր շուրթերն այնքան նուրբ են, զգացական. թույլ տվեք ասել դա Ձեզ, իմ հրեշտակ սիրո ...

Ես աշխատում եմ օր ու գիշեր, որ կարողանամ գալ ու մնալ Ձեզ հետ երկու շաբաթ դեկտեմբերին... Ճանապարհին կտեսնեմ ձյունով ծածկված Յուրյան լեռներն ու պիտի մտածեմ Ձեր ձյունաճերմակ ուսերի մասին... Ա՛խ, շնչել բույրը քո վարսերի, բռնել ձեռքդ, սեղմել գրկիս մեջ-ահա որտեղից եմ ես ոգեշնչվում... Իմ անպարտելի կամքի ուժը զարմացնում է ընկերներին... Ա՛խ, նրանք չգիտեն իմ սիրեցյալին, նրան, որի մաքուր պատկերը սրբում է բոլոր դառնությունները նրանց մաղձոտ հարձակումների...Մեկ համբույր, իմ հրեշտակ, մեկ դանդաղ համբույր...և բարի գիշեր...»:

Բեթովեն՝ Հավերժական սիրեցյալին

«Իմ հրեշտակ, իմ կյանք, իմ երկրորդ «ես»... Կգրեմ այսօր մի քանի բառ, այն էլ՝ քո նվիրած մատիտով... Ինչի՞ համար է վիշտն այսքան խորը անխուսափելիության առաջ...Մի՞թե սերը կարող է գոյատևել առանց զոհողությունների...առանց անձնագոհության... Դու կարո՞ղ ես անել այնպես, որ ես ամբողջովին քեզ պատկանեմ... Դու՛ ինձ... Աստվա՛ծ իմ, դու նայիր գեղեցիկ բնությանն ու հնազանդվիր անխուսափելիությանը... Սերը պահանջում է ամեն ինչ և ունի դրա իրավունքը. այս առումով ես զգում եմ այն, ինչ որ դու... Միայն դու շատ հեշտ ես մոռանում, որ ես պիտի ապրեմ երկուսիս համար՝ քեզ համար ու ինձ համար... Եթե ամբողջովին միասին լինեինք, այսքան չէինք տառապի՝ ոչ դու ...ոչ էլ ես...մենք հավանաբար շուտով կտեսնվեինք, և ես այսօր չեմ պատրաստվում կրկնել քեզ իմ մտորումները կյանքիս վերաբերյալ... Եթե մեր սրտերը տրո-

փեհն միասին, նրանք, հավանաբար, մտքովս էլ չէին անցնի... Լի է հոգիս այն ամենով, ինչ ուզում եմ ասել քեզ...

Ա՛խ, լինում են պահեր, երբ ինձ թվում է, որ լեզուն մեր անգոր է:

Ուրախացիր: Առաջվա նման եղիր իմ անփոխարինելին, միակ գանձը, ինչպես ես եմ քոնը... Մնացածի մասին, որը պիտի լինի մեզ հետ և կլինի, թող հոգ տանեն աստվածները... Քեզ հավատարիմ՝ Լյուդվիգ»:

Հյուզոն՝ Ջուլիետին

«Այո՛, ես գրում եմ քեզ... Ինչպե՞ս կարող եմ չգրել... Եվ ի՞նչ կլինի ինձ հետ գիշերը, եթե չգրեմ քեզ այս երեկո... Իմ Ջուլիետ, ես սիրում եմ քեզ: Միայն դու կարող ես որոշել իմ ապրել-մեռնելու ճակատագիրը... Միթիր ինձ... Ջնջիր սրտիցդ այն ամենը, ինչը կապված չէ սիրո հետ... որպեսզի նա դառնա նույնը, ինչպիսին իմն է... Ես երբեք չեմ սիրել քեզ ավելի շատ, քան երեկ... և դա ճիշտ է... Ներիր ինձ... Ես խանդից ու սիրուց գլուխս կորցրած արհամարհելի ու հրեշավոր խելագար եմ... չգիտեմ, թե ինչ եմ արել ես, բայց գիտեմ, որ քեզ էի սիրում...»:

Ջուլիետը՝ Վիկտոր Հյուզոյին

«Ես սիրում եմ քեզ, ես սիրում եմ քեզ, իմ Վիկտոր... Ես չեմ կարող չկրկնել այն կրկին ու կրկին, որքան բարդ է բացատրել, թե ինչ եմ զգում... Ես քեզ տեսնում եմ ամեն գեղեցիկի մեջ, որն ինձ շրջապատում է... Բայց դու ավելի կատարյալ ես... Դու յոթ պայծառ ճառագայթներով պարզապես արևային սպեկտր չես ... դու ինքդ արև ես, որը լուսավորում է, ջերմացնում, վերածնում կյանքը... Այս բոլորը դու ես, իսկ ես՝ խոնարհ կին, որը պաշտում է քեզ: Ջուլիետ»:

Նապոլեոնը՝ Ժոզեֆինային

«Միրելիս, խնդրում եմ, հաճախ մտածիր իմ մասին... Գրիր ամեն օր... Դու կամ լավ չես զգում քեզ, կամ չես սիրում ինձ... Մի՞թե կարծում ես, որ իմ սիրտը մարմարից է... Մի՞թե իմ տառապանքները քեզ համար միևնույնն են... Ակնհայտ է, որ դու լավ չես ճանաչում ինձ... Ես չեմ կարող հավատալ դրան... Դու, որին բնությունն օժտել է բանականությամբ, քնքշությամբ, գեղեցկությամբ... Դու՝ միակ թագուհին իմ սրտի... Դու, և դա, իհարկե, քեզ լավ հայտնի է, թե ում իշխանությունն է ինձ վրա անսահման...»: «Չի եղել մի օր, որ ես չսիրեմ քեզ, չի եղել մի գիշեր, որ չսեղմեմ քեզ գրկիս մեջ... և չի եղել դեպք, որ չանիծեմ իմ պատվախնդրությունն ու փառքը, որոնք ինձ հեռու են պահում իմ կյանքի սրտից... ստիպում են լինել հեռու քեզանից...»: «Այն օրը, երբ դու կասես. «Չեմ սիրում քեզ այլևս», կդառնա իմ սիրո կամ իմ կյանքի վերջին օրը... Եթե իմ սիրտը լիներ այնքան անարգ ու չնչին, որ համարձակվեր սիրել քեզ առանց

փոխադարձ սիրո...ես կիրամայեի պոկել նրան ինձանից...Ա՛խ, Ժոզեֆինա...Ժոզեֆինա...»: «Հիշում ես բառերն այն, որ ասացի քեզ մի օր... Բնությունը օժտել է ինձ ուժով, աներեր ոգով...

Մնաս բարով... Ա՛խ, եթե դու դադարել ես սիրել ինձ, նշանակում է դու երբեք էլ չես սիրել ինձ... Ու ես ավստասպու շատ բան կունենամ...»:

«Եթե դու ինձ այլևս չես սիրում... ապա ես այլևս անելիք չունեմ այս աշխարհում... Եթե ինձ հարցնեն, թե լավ եմ քնել, մինչ այդ հարցին պատասխանելը ես կսպասեմ քո հաղորդագրությանը, որ դու լավ ես... ու, եթե դու լավ ես, ուրեմն ես էլ լավ կլինեմ...»: Իմ պահապան հրեշտակը, որն ամենադժվար պահերին հովանավորել է ինձ, թող պահպանի քեզ... Ավելի լավ է, ես մնամ անպաշտպան... և թող նա քեզ պաշտպանի միայն... «Իմ միակ Ժոզեֆինա, հեռու քեզանից ողջ աշխարհն ինձ անպատ է թվում, որտեղ ես մենակ եմ... Դու տիրացել ես իմ ամբողջ հոգուն: Դու իմ միակ միտքն ես, երբ ինձ զգվեցնում են ձանձրալի արարածները, որոնք մարդիկ են կոչվում ... ու երբ ես պատրաստվում եմ անիծել կյանքը... ձեռքս դնում եմ սրտիս, ուր քո նկարն է... նայում եմ նրան... ու սերն ինձ համար անսահման պայծառ երջանկություն է թվում՝ մթագնած միայն քեզ հետ բաժանումով...»:

1822թ.-ին **Գյոթեն** ծանր հիվանդություն տարավ, բայց հիվանդությունն անցավ հանկարծակի. նա մեկնեց Մարիենբախ և ապրեց իր երկրորդ երիտասարդությունը. նրա սիրտը գերել էր Ուրիկա ֆոն Լևեցովը. 74-ամյա ծերունին պատանու նման սիրահարված էր 19-ամյա աղջկան: Ծնվում է «Մարիենբախյան գիշերերգ» ստեղծագործությունը:

Ալեքսանդր Պուշկին՝ Նատալյա Գոնչարովային

«Այսօր այն օրվա տարելիցն է, երբ ես առաջին անգամ տեսա Ձեզ: Որքան ավելի շատ եմ մտածում, այնքան ավելի եմ համոզվում, որ իմ գոյությունը չի կարող առանձնացվել Ձեր գոյությունից. ես ստեղծված եմ, որպեսզի սիրեմ և հետևեմ Ձեզ, իսկ իմ մյուս բոլոր մտահոգությունները սխալներ են և խելագարություն: Ձեզնից հեռու ինձ հետապնդում են երջանկության մասին ավստասքներս, որը ես չկարողացա վայելել Ձեզ հետ: Վաղ թե ուշ, ես, այնուամենայնիվ, պետք է ամեն ինչ մի կողմ նետեմ և ընկնեմ Ձեր ոտքերի առաջ ...»:

Լև Տոլստոյ՝ Սոֆյա Անդրեևնային

«Իմ վիճակը գնալով անտանելի է դառնում: Երեք շաբաթ անընդմեջ, ամեն երեկո, ինչպես և հիմա, ես քրքրում եմ անցյալը, տառապում եմ և ասում, թե ինչու ես չասացի. ինչպես ասեի, ինչ ասեի: Ես վերցնում եմ

ինձ հետ այս նամակը, որպեսզի այն Ձեզ տամ կամ էլ կրկին անգամ այնքան համարձակություն չեմ ունենա, որ ասեմ Ձեզ ամեն ինչ: Ձեր ընտանիքի սուտ հայացքները կայանում են նրանում, որ կարծում են, թե ես սիրահարված եմ Ձեր քույր Լիզային: Դա անարդար է: Ձեր գրած պատմությունը խրվել է իմ գլխին, այն կարդալուց հետո ես համոզվեցի, որ երևի չպետք է երագեմ երջանկության, Ձեր՝ սիրո մասին ունեցած գերազանց բանաստեղծական պահանջների մասին, ... որ ես չեմ նախանձում և չեմ նախանձի նրան, ում Դուք կսիրեք ... Ասա՛ ինձ, որպես ազնիվ մարդ, Դուք ուզո՞ւմ եք լինել իմ կինը... Ի սեր Աստծո, հարցրեք ինքներդ ձեզ և լավ մտածեք: Ես վախենում եմ լսել «ոչ» բառը, բայց ես կարող եմ ուժեղ գտնվել և ընդունել այդ ամենը...»:

Սալվադոր Դալի՝ Գալային

/ մեծ ու տարօրինակ սիրո պատմություն /

Այս խենթ ու հանճարեղ սիրո պատմությունը 20-րդ դարի ամենագեղեցիկ, ամենատարօրինակ, ամենաաղմկոտ և ամենաազդեցիկ պատմություններից մեկն է:

Սալվադոր Դալին սիրահարված էր ազգությամբ ռուս Գալային. Առանց Գալայի նա չէր պատկերացնում իր կյանքը: Այս գույգին անհնար էր պատկերացնել իրարից առանձին: Սալվադոր Դալին և Գալան հավերժացել են ժամանակի մեջ իրենց սիրո շնորհիվ: Նրանք լրացնում էին մեկը մյուսին իրենց խենթությամբ, տարօրինակություններով. ջանք չէին խնայում իրար և աշխարհին սուր զգացողություններով ասպահովելու, ցնցելու, խոցելու, հոգու լարերը միշտ ամենաբարձր նոտաների վրա պահելու համար: Կռիվներ, սիրո բարձրագույն դրսևորումներ, ամենացավոտ և ամենասիրառատ արարքներ: Դալին չափազանց անկազմակերպ էր, ոչ երկրային, երես առած: Նրա ֆինանսական և ստեղծագործական-կազմակերպչական գործերով Գալան էր զբաղվում: Դալին զգացմունքային և խոցելի էր, Գալան՝ սառը և հաշվարկող կին: Նա ամուսնու տաղանդից փող էր ստեղծում: «Ես սիրում եմ Գալային մոռիցս շատ, հորիցս շատ, Պիկասոյից շատ և անգամ փողերից շատ»:

Դալին իր նկարները հաճախ ստորագրում էր «Գալա-Սալվադոր Դալի»՝ ընդգծելով մուսայի մեծագույն կարևորությունն իր ստեղծագործության մեջ: «Շուտով դու կլինես այնպիսին, ինչպիսին ես ուզում եմ տեսնել քեզ, տղաս,- մայրաբար ասում էր Գալան «որդուն»:

1982թ. Գալան մահացավ 88 տարեկան հասակում: Նրա անունը շուրթերին՝ կոտրված և հուսալքված, 7 տարի հետո՝ 1989 թ.-ին, մահացավ նաև Լեզենդը, Հանճարը, Խենթը, տարօրինակն ու միակը՝ Սալվադոր Դալին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Աբրահամյան Ա.**, Հայոց լեզու, Բառ և խոսք, Երևան, Լույս, 1978թ.:
- Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, 2, Եր., Հայաստան, 1976թ.:
- Աճառյան Հր.**, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, 2, Եր., Պետհամ., 1941, 1950 թ.թ.:
- Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան /վերահրատ./, Եր., Համալս. հրատ., հ.1-4, 1971-79 թ.թ.:
- Ասատրյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., Համալս. հրատ., 2004թ.:
- Գյուրուղադյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., Համալս. հրատ., 1985թ.:
- Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն.**, Հայոց լեզու, Եր., Միտք, 1999թ.:
- Համացանց**
- Հանրագիտակ**, օրացույց, 1990, Երևան:
- Հանրագիտակ**, օրացույց, 1991, Երևան:
- Ժամանակակից** հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, ՀԽՍՀ ԳԱ հր. Եր., 1969-80թ.թ.:
- Հարությունյան Հ. Ա.**, Հետաքրքրաշարժ հայոց լեզու, Եր., 1976թ.:
- Ղաջոյան Հռ., Ղասարյան Ռ.**, Կենդանի դասագիրք, Եր., Հայաստան, 1964թ.:
- Մինասյան Գ.**, Կրթություն, 2006թ., Երևան:
- Մինասյան Գ.**, 100 խմբագրական, 2011թ., Երևան, 2011թ.:
- Մարության Ա.**, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., Նաիրի, 2000թ.:
- Միրզոյան Ե.**, Տնփառի Խաչանի «Չուռնա-Տնփառի» լեզվական արվեստը, Ստեփ., Դիզակ պլյուս ՍՊԸ, 2007թ.:
- Չախուկյան Գ., Խլղաթյան Ֆ.**, Ոճաբանություն, Եր., Փյունիկ, 1998թ.:
- Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1964թ.:
- Սուրխաթյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., 2003թ.:
- Սուրխաթյան Ա., Գալստյան,** Գարձվածաբանական բառարան, Եր., Համալս. հրատ., 1975թ.:
- Փարսադանյան Ա.**, Գիտելիքների շտեմարան, Եր., ՎՄՎ-Պրինտ, 2003թ.:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ..... 3

ՍԱՅՐԵՆԻ՝ ԼԵԶՈՒ, ՍԱՅՐԵՆԻ՝ ԲԱՐԲԱՌ 7

ԳՐՈՂՆԵՐԻ ԴԻՍԱՆԿԱՐՆԵՐ53

ԻՄՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՆԻՔ, ԴՈՒ ՍՐՏԻՍ ՄԵՋ ԵՍ.....103

ՀԱՅՐԵՆԻ ԵՋԵՐՔ՝ ԱՐՅԱԽ-ՂԱՐԱԲԱՂ131

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ.....151

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ,
ԵՎ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ191

ՀԱՅՈՑ ՀԱՂԹԱԿԱՆ ԲԱԶՈՒԿԸ227

ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐ251

ԱՐՎԵՍՏԸ ՍԱՐԳՈՒ ԿՅԱՆՔՈՒՄ.....267

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ.....309

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....326

**ԵԼԻՉԱՎԵՏԱ ԱԶԱՏԻ ՄԻՐՉՈՅԱՆ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ**

Խմբագիր՝	Գ.Գրիգորյան
Սրբագրիչ՝	Ե.Սիրգոյան
Էջադրումը՝	Ժ.Ավանեսյանի
Շապիկի ձևավորումը՝	Մ.Սայիյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84/16:
Ծավալը՝ 20.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ. Հակոբյան 25, Ստեփանակերտ - 2019